

ԼՐԱԲԵՐ

**ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

**ВЕСТНИК
ОБЩЕСТВЕННЫХ
НАУК**

**НАУЧНО-ОБЩЕСТВЕННЫЙ ЖУРНАЛ
ԼՐԱԲԵՐ ԱՏԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

**2(653)
ՄԱՅԻՍ-ՕԳՈՍՏՈՍ
МАЙ-АВГУСТ**

**ՔԱՌԱՄՍՅԱ ՀԱՆԴԵՍ, ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1940 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻՑ
ЖУРНАЛ ВЫХОДИТ 3 РАЗА В ГОД, ИЗДАЕТСЯ С НОЯБРЯ 1940 ГОДА**

**Գլխավոր խմբագիր՝ ՊԱՎԵԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ
Խմբագրի տեղակալ՝ ԱՐՍԵՆ ԲՈԲՈՒՅԱՆ
Պատասխանատու քարտուղար՝ ԳԱՅԱՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Խմբագրական խորհուրդ

ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍՅԱՆ, ԱՐԾՐՈՒՆ ԱՎԱԳՅԱՆ, ՀԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ,
ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ, ԱԼԲԵՐՏ ԽԱՌԱՏՅԱՆ, ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ,
ՌՈՒԲԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ՎԱԶԵ
ՀՈՎԱԿԻՄՅԱՆ, ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ԳԱԳԻԿ ՂԱԶԻՆՅԱՆ,
ԱՇՈՏ ՄԵԼԿՈՆՅԱՆ, ԳԵՎՈՐԳ ՊՈՂՈՍՅԱՆ, ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ,
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ

Главный редактор – **ПАВЕЛ АВЕТИСЯН**
Заместитель редактора – **АРСЕН БОБОХЯН**
Ответственный секретарь – **ГАЯНЭ АРУТЮНЯН**

Редакционная коллегия

АРЦРУՆ ԱՅԱԿՅԱՆ, ԱՐԱՐԱՏ ԱԴԱՏՅԱՆ, ՎԼԱԴԻՄԻՐ ԱՐՍՏՅԱՆ,
ԴԱՄԼԵՏ ԴԵՎՐԻԿՅԱՆ, ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ, ԴԱԴԻԿ ԿԱԶԻՆՅԱՆ,
ՐՍԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ, ԱՇՈՏ ՄԵԼԿՈՆՅԱՆ, ՎԱՇԵ
ՕՎԱԿԻՄՅԱՆ, ՆԻԿՈԼԱՅ ՕԴԱՆԵՏՅԱՆ, ԴԵՎՐԻԿ ՍՈՍՅԱՆ, ՐՍԵՆ
ՏԱՖՐԱՏՅԱՆ, ՅՐԻԻ ՏՍՎԱՐՅԱՆ, ԱԼԲԵՐՏ ԽԱՐԱՏՅԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Խառատյան Ա.Ա. – Հայ կաթոլիկները Զմյուռնիայում և կից բնակավայրերում (XVIII դ.).....	12
Մարության Հ.Տ. – Հայոց ցեղասպանության տարիներին հայերի իրական և կեղծ փրկության խնդրի շուրջ.....	30
Սվազյան Հ.Ս. – Քրիստոնեության տարածման առաքելական (երուսաղեմյան) շրջանի քարոզիչների գործունեությունը Մեծ Հայքում, Բուն Աղվանքում և Չորա երկրում.....	61
Կարապետյան Ռ.Կ. – Հայաստանի Հանրապետության և արաբական պետությունների լիզայի համագործակցության պատմությունից.....	78
Սարգսյան Ս.Թ. – Հայ ժողովրդական կուսակցության մամուլի օրգանները. «Ժողովրդի ձայն».....	84
Մատինյան Լ.Վ., Աբրահամյան Հ.Մ. – Գորբաչովյան վերակառուցումը և զարգացման փուլերը (1985-1990 թթ.).....	94
Պողոսյան Ն.Բ. – Ղրիմի հայ գրավոր մշակույթը XVII դարում.....	103
Կեսոյան Գ.Է. – Պետական և կուսակցական վերահսկողության մարմինների վերակազմակերպումը ՀՍԽՀ-ում (1922-1924 թթ.).....	117
Պապիկյան Ք.Վ. – Նոր Զուղայի վաճառականները՝ որպես Իրանի և Արևմտյան Եվրոպայի միջև առևտրի միջնորդներ.....	129

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Հովհաննիսյան Ս.Հ., Սաֆարյան Ա.Ա. – Փիլիսոփայական գաղափարները գեղարվեստորեն շարադրելու առանձնահատկությունների մասին.....	142
Փիրումյան Տ.Ա. – Հանդուրժողականության հիմնախնդիրը ազատական-ժողովրդավարական արժեքների համակարգում.....	150

ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

Գալստյան Մ.Վ. – Աշխատանքային միգրացիայի սոցիալ-տնտեսական հետևանքները ՀՀ-ում.....	159
Ստարչենկո Ռ.Ա., Կարապետյան Ռ.Ս., Օստապենկո Լ.Վ., Սուբոտինա Ի.Ա. – Հայաստանի և Ռուսաստանի երիտասարդության սոցիալ-ժողովրդագրական և էթնոմշակութային կողմնորոշումները..	170

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Ղարաբյոզյան Գ.Լ. – Ժան Դարդելի «Հայաստանի ժամանակագրության» հեղինակային մտահղացումը.....	182
Աղաջանյան Զ.Խ. – Խոսքի մշակույթի հիմնաբաղադրատարրերը և դրանց դերը նորմավորման գործընթացում.....	195
Ռամազյան Ս.Մ. – Վաճառականի կերպարը «Քյոռոզլի» էպոսում և դրա պատմականության հիմքերը.....	205
Կարազույան Հ.Պ. – Գոյափիլիսոփայությունը XX դարասկզբի ֆրանսահայ արձակում.....	220
Ջիլինգարյան Ե.Կ., Խաչատրյան Ս.Ա., Խաչատրյան Վ.Ք. – Հայերը և Հայաստանը Լոպե դե Վեգայի պիեսներում.....	231
Պետրոսյան Վ.Զ. – Ե.Դ. Պոլիվանովի զուգամետատարամետային հնչյութաբանական հայեցակարգը.....	251
Մկրտչյան Լ.Հ. – Հայաստանում համաժամանակյա թարգմանության հարցերի շուրջ.....	260

ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Բերդյան Ն.Է. – Մերկությունը և թատերայնությունը.....	273
Կիրակոսյան Ս.Մ. – Նյութի և ձևի հարաբերակցության խնդիրը հայ ժամանակակից վավերագրական կինոյում.....	284

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ավետիսյան Պ.Ս., Բոբոխյան Ա.Ա. – «Սարդարապատի ճակատամարտի հնագիտություն». ռազմական լանդշաֆտի պատմական ձևափոխումները Արարատի և Արագածի միջև.....	296
Ժամկոչյան Ա.Ս. – IX-X դդ. ջնարակած խեցեղենի ուսումնասիրությունը պատմաաշխարհագրական համատեքստում.....	310

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Առաքելյան Մ.Ա. – Օժտված պատանիների գենդերային առանձնահատկությունները անձնային գծերի և սոցիալ-հոգեբանական հարմարման համատեքստում.....	325
---	-----

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կարապետյան Ա.Ա. – Հայ պարբերական մամուլի պատմություն. 1900–1922.....	334
Արտեմյան Լ.Ռ. – <i>Աննա Ասապրյան. Հայաստանի կոմպոզիտորների միություն</i> – 85.....	338

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

Տօնապետեան Ա.Ա., (Ֆրանսիա, Փարիզ), Սամուէլեան Վ.Կ. (Ֆրանսիա, Փարիզ), Դալալեան Տ.Ս. (ՀՀ, Երևան) – Մէլադա Ադաբէկեանի (1939-2015) կենսամատենագիտութիւնը. հայերէնի համեմատական ուսումնասիրութեան հարցեր.....	344
Բաղդասարյան Ռ.Ա. – Կարեն Միքայելյանի «Ոսկեփորիկ» ժողովածուն (գրականագետի ծննդյան 135-ամյակին).....	353
Հովսեփյան Ռ.Ա. – Գիտաժողով՝ նվիրված թաղման ծեսին.....	357

ՄԵՐ ՀՈՐԵԼՅԱՐՆԵՐԸ

Ղարիբջանյան Ս.Գ. – Հայրենական գիտության լուսատուի՝ Վիկտոր Համբարձումյանի ծննդյան 110-ամյակի առթիվ.....	362
Դալալյան Տ.Ս. – Սարգիս Հարությունյան. արդի հայ բանագիտության նահապետը.....	364
Մարտիրոսյան Ռ.Մ., Հարությունյան Վ.Լ. – Ականավոր գիտնականը և մանկավարժը (Յուրի Սուվարյանի ծննդյան 75-ամյակի առթիվ).....	368
Գիտնականի ուղին (Վահան Բայբուրդյանի ծննդյան 85-ամյակին).....	371

ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ

Պողոսյան Ս.Հ. – Հայ նշանավոր ազգագրագետը. Արմենուիի Ստեփանյան.....	374
---	-----

СОДЕРЖАНИЕ

ИСТОРИЯ И ПОЛИТОЛОГИЯ

Харатян А.А. – Армяне – католики в Смирне и окрестных населенных пунктах (XVIII в.).....	12
Марутян А.Т. – К проблеме действительного и мнимого спасения армян в годы геноцида.....	30
Связян Г.С. – Деятельность проповедников апостольского (иерусалимского) периода распространения христианства в Великой Армении, Алуанке и стране Чор.....	61
Карапетян Р.К. – Из истории сотрудничества Республики Армения с Лигой Арабских стран.....	78
Саргсян С.Т. – Органы периодики Армянской Народной партии: “Жоговрди дзайн” (“Голос народа”).....	84
Матинян Л.В., Абраамян Г.М. – Сущность Горбачевской перестройки и этапы ее развития (1985-1990 гг.).....	94
Погосян Н.Б. – Армянская письменная культура Крыма в XVII в.	103
Кесоян Г.Э. – Реорганизация государственных и партийных органов контроля в ССРА (1922-1924 гг.).....	117
Папикян К.В. – Купцы Новой Джуги как посредники в торговле между Ираном и Западной Европой.....	129

ФИЛОСОФИЯ И ПРАВО

Оганесян С.Г., Сафарян А.А. – Об особенностях изложения философских идей в художественной форме.....	142
Пирумян Т.А. – Проблема толерантности в системе либерально-демократических ценностей.....	150

СОЦИОЛОГИЯ

Галстян М.В. – Социально-экономические последствия трудовой миграции в РА.....	159
Старченко Р.А., Карапетян Р.С., Остапенко Л.В., Субботина И.А. – Социально-демографические и этнокультурные ориентации молодежи Армении и России.....	170

ФИЛОЛОГИЯ

Карагезян Г.Л. – Авторский замысел "Хроники Армении" Жана Дарделя.....	182
Агаджанян З.Х. – Основные компоненты культуры речи и их роль в процессе нормирования.....	195
Рамазян С.М. – Персонаж купца в эпосе "Кероглы" и основы его историзма.....	205
Карагулян А.П. – Экзистенциализм в армяноязычной французской прозе начала XX века.....	220
Чилингарян Е.К., Хачатрян С.А., Хачатрян В.К. – Армения и армяне в пьесах Лопе де Веги.....	231
Петросян В.З. – Конвергентно-дивергентная фонологическая концепция Е. Поливанова.....	251
Мкртчян Л.Г. – Вопросы синхронного перевода в Армении.....	260

КУЛЬТУРА И ИСКУССТВОВЕДЕНИЕ

Бероян Н.Э. – Нагота и театральность.....	273
Киракосян С.М. – Проблема взаимосвязи между веществом и формой в армянском современном документальном кино.....	284

АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ

Аветисян П.С., Бобохян А.А. – "Археология Сардарapatской битвы": исторические трансформации военного ландшафта между Араратом и Арагацем.....	296
Жамкочян А.С. – Исследование глазурованной керамики IX-X вв. в историко-географическом контексте.....	310

ПСИХОЛОГИЯ

Аракелян М.А. – Гендерные особенности одаренной молодежи в контексте личностных черт и социально-психологической адаптации.....	325
--	-----

РЕЦЕНЗИИ

Карапетян А.А. – История армянской периодической печати: 1900-1922.....	334
Артемян Л.Р. – <i>Анна Асатрян</i> , Союз композиторов Армении-85...	338

НАУЧНАЯ ХРОНИКА

Тонапетян А.А.(Франция, Париж), Самуелян В.К. (Франция, Париж), Далалян Т.С. (РА, Ереван) – Биобиблиография Мелады Агабекян (1939-2015): вопросы сравнительного изучения армянского языка.....	344
Багдасарян Р.А. – Сборник “Воскепорик” Карена Микаэляна (к 135-летию со дня рождения литературоведа).....	353
Овсепян Р.А. – Научная конференция, посвященная погребальной церемонии.....	357

НАШИ ЮБИЛЯРЫ

Гарибджанян С.Г. – К 110-летию со дня рождения светила отечественной науки Виктора Амбарцумяна.....	362
Далалян Т.С. – Саркис Арутюнян: патриарх современной армянской фольклористики.....	364
Мартиросян Р.М., Арутюнян В.Л. – Выдающийся ученый и педагог (к 75-летию со дня рождения Юрия Суваряна).....	368
Путь ученого (к 85-летию со дня рождения Ваана Байбурдяна).....	371

СЛОВО ПАМЯТИ

Погосян С.Г. – Видный армянский этнограф – Арменуи Степанян.....	374
---	-----

CONTENTS

HISTORY AND POLITICAL SCIENCE

A. Kharatyan – Catholic Armenians in Smyrna and the Neighboring Areas (XVIII c.).....	12
H. Marutyan – On the Issue of the True and False Rescue of Armenians during the Armenian Genocide.....	30
H. Svazyan – The Activity of the Preachers of the Apostolic (Jerusalem) Period of the Spread of Christianity in Great Armenia, Aluanc and the Country Chor.....	61
R. Karapetyan – From the History of Cooperation between Armenia and the League of Arab States.....	78
S. Sargsyan – Periodicals of the Armenian People’s Party: “Zhoghovrdi Dzayn” (“Voice of the People”).....	84
L. Matinyan, H. Abrahamyan – The Essence of Gorbachev’s Reconstruction and Stages of its Development (1985-1990).....	94
N. Poghosyan – Armenian Written Culture in Crimea of the 17 th Century.....	103
G. Kesoyan – Reorganization of State and Party Control Bodies in SSRA (1922-1924).....	117
K. Papikyan – Merchants of New Juga as Mediators in Trade between Iran and Western Europe.....	129

PHILOSOPHY AND LAW

S. Hovhanisyan, A. Safaryan – Towards the Artistic Realization of Philosophical Ideas.....	142
T. Pirumyan – The Problem of Tolerance in the System of Liberal-Democratic Values.....	150

SOCIOLOGY

M. Galstyan – Social-Economic Impacts of Labour Migration in the Republic of Armenia.....	159
--	-----

R. Starchenko, R. Karapetyan, L. Ostapenko, I. Subbotina – Social-Demographic and Ethnocultural Orientation of the Armenian and Russian Youth.....	170
---	-----

PHILOLOGY

G. Gharagyozyan – Author’s Intention of “Chronicles of Armenia” by Jean Dardel.....	182
Z. Aghajanyan – Main Components of Culture of Speech and their Role in the Process of Rationing.....	195
S. Ramazyan – The Personage of the Merchant in the Epic of “Koroglu” and the Basis of its Historism.....	205
H. Karagulyan – Existentialism in the Armenian French Prose at the Beginning of the 20 th Century.....	220
Y. Chilingaryan, S. Khachatryan, V. Khachatryan – The Armenians and Armenia in the Plays of Lope de Vega.....	231
V. Petrosyan – E. Polivanov’s Comparative-Divergent Phonemic Concept.....	251
L. Mkrtchyan – On the Questions of Simultaneous Translation in Armenia.....	260

CULTURE AND ART HISTORY

N. Beroyan – The Nudity and the Theatricality.....	273
S. Kirakosyan – The Problem of the Relationship between Substance and Form in Armenian Contemporary Documentary Cinema.....	284

ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

P. Avetisyan, A. Bobokhyan – “Archaeology of Sardarapat Battle”: Historical Transformations of the Military Landscape between Ararat and Aragats.....	296
A. Zhamkochyan – Investigation of the 9 th -10 th cc. Glazed Pottery in Historical and Geographical Context.....	310

PSYCHOLOGY

M. Arakelyan – Gender Differences of Gifted Adolescents in the Context of Personal Traits and Psychosocial Adaptation.....	325
---	-----

LITERARY REVIEWS

A. Karapetyan – The History of the Armenian Periodical Press: 1900-1922	334
L. Artemyan – <i>Anna Asatryan</i> , Composers Union of Armenia-85.....	338

SCIENTIFIC CHRONICLE

A. Tonapetyan (France, Paris), V. Samuelyan (France, Paris), T. Dalalyan (RA, Yerevan) –Biobibliography of Melada Aghabekyan (1939-2015): Problems of Comparative Investigation of Armenian Language.....	344
R. Bagdasaryan – Collection “Voskeporik” of Karen Mikaelyan (Towards the 135 th Anniversary of the Philologist).....	353
R. Hovsepyan – Conference on Burial Ritual.....	357

OUR JUBILEES

S. Gharibjanyan – Viktor Hambardsumyan: Towards the 110 th Anniversary of the Luminary of the National Science.....	362
T. Dalalyan – Sargis Harutiunyan: The Patriarch of the Modern Armenian Folkloristics.....	364
R. Martirosyan, V. Harutyunyan –The Honored Scientist and Pedagogue (Towards the 75 th Anniversary of Yuri Suvaryan).....	368
The Way of the Scientist (Towards the 85 th Anniversary of Vahan Bayburdyan).....	371

WORD OF MEMORY

S. Poghosyan – Armenuhi Stepanyan: The Devotee of Armenian Ethnography.....	374
---	-----

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅ ԿԱԹՈՒԼԻԿՆԵՐԸ ԶՄՅՈՒՌՆԻԱՅՈՒՄ ԵՎ ԿԻՑ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ (XVIII Դ.)

ԽԱՌԱՏՅԱՆ Ա.Ա.

Հայ կաթոլիկների՝ նշանակալի քանակով գաղթը դեպի Էգեյանի առափնյակ ծայր է առնում Նախիջևանից, XVIII դ. 40-ական թթ.: Ինչպես և Սյունիքից եկած գաղթականները, նախիջևանցի կաթոլիկները գաղթը սկսեցին կազմակերպված և աննախընթաց մարդաշատ բազմությամբ՝ իրենց հոգևոր ու աշխարհիկ առաջնորդների ծրագրած երթով ու հանգրվանների հաշվարկումներով: Գաղթի միանշանակ պատճառը Նադիր շահի (1732-1745) ժամանակ սաստկացած տնտեսական և կրոնական բռնություններն էին Արևելյան Հայաստանում և Հարավային Կովկասի մյուս մասերում: Իր նվաճողական հանդուգն ծրագրերն իրականացնելու համար շահը նյութական վիթխարի պահանջները ձգտում էր բավարարել ոչ միայն գրավված վայրերի թալանով, այլև բուն պարսկաբնակ ժողովուրդների հարկային լծի անօրինակ ծանրացմամբ: Թե ինչ ամայացնող մեթոդներով էր կատարվում հարկահանությունը, հուսահատ տողերով է ներկայացնում Վ. Օձնեցին իր «Պատմութիւն Հայոց» շարադրանքում. «Ի ժամանակս Նատիր շահին, - գրում է նա, - որպէս աւանդեն մեզ տարեգրութիւնք եւ աւանդութիւնք հինաւուրց արանց, այնքան մեծացաւ յաշխարհիս Հայոց հարկապահանջութիւն մինչեւ չմնալ առ մեծատունս հարստութիւն ընչից յորոց փոխառեալ ամենեցուն՝ տային հարկապահանջից. ապա ի տեղի դրամոց եւ այլ կահ ու կարասեաց, զորս վճարեալ էին՝ տանէին զերիտասարդս եւ զմանկամարդս զորս դուլ ծառայ անուանէին, այսինքն սեփական ծառայ արքունի»¹:

Չդիմանալով օրինական հռչակված կեղեքումներին և դրանց ուղեկցող այլ անողորմ չարաշահումներին՝ Արևելյան Հայաստանի բնակչության

¹ Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ (այսուհետև՝ Մատենադարան), ձեռ. 4331, էջ 51:

մի զգալի մասը բռնեց ապահով վայրեր խույս տալու՝ ավանդական դարձած գաղթերի, մյուսները՝ զինված ընդհարումների և ապստամբությունների ճանապարհը: Տարածաշրջանում ստեղծված իրադրության առթիվ ռուսական զորահրամանատար Մ.Մ. Գոլիցինը 1747 թ. մարտի 15-ին Մուղանից գրում էր. «Պարսկական նահանգի շատ տեղերում այժմ վտանգավոր իրադրություններ և մեծ խառնակություններ կան Գենջե, Իրևան, Նախչևան և Թիֆլիս քաղաքներում. նրանց վրա դրված դրամական տուգանքների անչափելի գումարների պատճառով: Գրեթե բոլոր բնակիչները՝ մեծից մինչև փոքր և իրենք էլ, այդ քաղաքների կառավարիչները, ապստամբեցին, և հավաքելով իրենց ինչքն ու անասունները, հեռացան լեռներ»²:

Նախիջևանից գաղթի իրողության և ժամանակի վերաբերյալ արդեն շատ որոշակի տեղեկություններ է տալիս մի Հայսմավորքի ժամանակակից գրիչը. «Թուահաշուէն Հայոց ՌՃՂԶ (1747) ամսեան ապրելի ԺԱ-ին (11) որ էր ի ժամանակն Պարսից անագորուն եւ անոպա Նադր շահին զոր յոյժ նեղութիւն ունէին Պարսից իշխանութեան ենթակայ] ժողովուրդքն թող զանիրաւ հարկապահանջութիւն զոր առաւել էր քան զառաջինսն յաւել եւս չար ի վ[երայ] չարեաց եւ վէրք ի վ[երայ] վիրաց զոր Նախիջեանայ երկրին վերայ ճըգեալ էին ԼԵՌ (35 հազար) թում[ա]ն եւ Երեւանու երկիրն ԽՌ (40 հազար) թում[ա]ն որ բազումք հանդերձ տամբք մեծաւ տառապանօք եղեալ ի տանց եւ ի հայրենեաց փախան երկիրն օսմանցոց»³:

Ուշագրավ է, որ այստեղ «երկիրն օսմանցոց» են փախել կամ գաղթել առհասարակ Նախիջևանի և Երևանի բնակիչները՝ առանց դավանանքի կամ ազգության որևէ տարբերակման, ավելին, խոսքը, պետք է մակաբերել, վերաբերում է ընդհանրապես պարսից ենթակայության տակ գտնվող տարածքների բնակիչներին: Հայերի պարագայում՝ նաև Սյունիքի և Ղարաբաղի բնակիչներին, որոնք, ինչպես տեսանք, ճիշտ նույն ժամանակներում՝ 1740-ականին և հետո հայտնվել էին Զմյուտնիայում և կից տարածքներում: Գաղթերի այս տեղաշարժական ընթացքը շարունակվելու էր ամբողջ XVIII դարում, թեև խնդիրն այն է, որ այդ ժամանակահատվածում գաղթական ամենամեծ հոսքը տեղի է ունեցել հենց Նադիր շահի իշխա-

² Арунова М.Р., Ашрафян К.З. Государство Надир-шаха Афшара, М., 1958, с. 224.

³ Աճառեան Հ., Ցուցակ հայերէն ծեռագրաց Նոր Բայազետի (Հանդէս ամսօրեայ, 1913, N 10, էջ 630): Գրեթե նույն շարադրանքն ենք տեսնում Խաչատուր արեղա Ջուղայեցու «Պատմութիւն Պարսից» աշխատության մեջ՝ մասնավորեցված նաև Նոր Ջուղայի հայերին հարկային ահաբեկչության ենթարկելու փաստերով:

նության վերջին տարիներին: Նաղիրի անօրինակ հարկապահանջության պատճառը Խաչատուր Զուղայեցին բացատրում է նրանով, որ նա կասկածում էր հայերին՝ վրացի ապստամբների հետ համագործակցելու մեջ⁴:

Հ. Քոսյանը կարծում է, որ հայ կաթոլիկները Ջմիտունիա են անցել 1730-1740-ի միջոցներին⁵, նկատի ունենալով նրանց գաղթը Նախիջևանից: Այս գաղթականությանը բավական ուշադրություն է դարձրել Ղ. Ալիշանը՝ պարզաբանելով և գաղթի պատճառները, և հանգամանքները: Ըստ այդմ, Նախիջևանի կաթոլիկների ու նրանց վանքերի վրա դրված ծանր հարկերն ու դրանք վճարելու համար արված պարտքերը թեթևացնելու համար դեռևս 1843 թ. Վենետիկ էր մեկնել նրանց պատվիրակը՝ տեղի բանկերից նրանց ավանդները Նախիջևան տեղափոխելու մտադրությամբ⁶: Գաղթը կազմակերպելու գործում եռանդուն ջանքեր էր գործադրել դոմինիկյան հայր Թովմաս Իսավերդենցը՝ ունիթորների հոգևոր առաջնորդը, որի գործողությունները պարսիկները կասեցրին՝ բանտարկելով նրան: Հավանաբար, միջամտել են ֆրանսիական կամ պապական դիվանագետները, որոնք մշտապես առնչվում էին կաթոլիկների հետ Նախիջևանում, կամ վերջիններիս ներկայացուցիչներն էին շփվում նրանց հետ Վենետիկում, որտեղ վաղուց ի վեր առևտրական կապեր ու հարաբերություններ ունեին նախիջևանցի վաճառականները: Համենայն դեպս, մահվան դատապարտված Իսավերդենցը ոչ միայն ազատվում է բանտից, այլև կազմակերպում է բազմաթիվ մարդկանց ելքը Նախիջևանից, այսինքն, անարգել շարունակում է գաղթի ծրագիրը. «Այլ յաջողեաց նմա ոչ միայն զերծ անել, այլև զերծունել բացի սակաւուց ոմանց զամենայն մնացեալսն՝ տկարս, զծերս եւ զմանկունս եւ զկանայս եւ եռամսեայ դժուարակիր եւ տառապագին ուղեւորութեամբ հատանել անցանել ընդ բովանդակ Մեծ եւ Փոքր Հայս եւ հասուցանել ի ծագ Փոքուն Ասիոյ ի Ջմիտունիա քաղաք ոգիս աւելի քան զհազար, ընդ որս եկին եւ սակաւ ոմանք ի հարց մնացեալ վանորէից», - գրում է Ղ. Ալիշանը⁷:

Այն, որ հայերի գաղթը նախապես կշռադատվել և ծրագրվել էր նախիջևանցի գլխավորների կողմից, անհերքելի է դառնում այն փաստով, որ

⁴ Խաչատուր Զուղայեցի, Պատմութիւն Պարսից, Վաղարշապատ, 1905, էջ 269:

⁵ Քոսեան Յ., Հայք ի Ջմիտունիա եւ ի շրջակայս, Կ. Ա, Վիեննա, 1899, էջ 301-302:

⁶ Ալիշան Ղ., Սիսական, Վենետիկ, 1893, էջ 406:

⁷ Նույն տեղում:

ջահկեցիների բազմությունը տեղափոխելուց առաջ Իսավերդենցը «նախ զմեծատունս ընչիւք նոցին հեռացոյց ի բաժին օսմանեանց», կարելի է կարծել, դարձյալ Զմյունիա:

Ոչ Հ. Քոսյանը և ոչ էլ Ղ. Ալիշանը որոշակիորեն չեն նշում նախիջևանցիների ելքի ժամանակը: Հ. Քոսյանը, ընդամին, նկատում է, որ այդ անցումը տեղի է ունեցել 1730-1740-ի միջոցներին, այսինքն, Նադիր շահի օրոք⁸: Բայց խնդիրն այն է, որ Զմյունիայում կաթոլիկ նախիջևանցիներ են ապրել և մահացել նախքան Իսավերդենցի կողմից կազմակերպված գաղթը, այսինքն՝ մինչև 1747 թվականը: Հ. Քոսյանի վկայակոչած տապա-նագրերը, իսկապես, այդ թվականից ավելի հին են, այսինքն, այստեղ հայտնվել են հայ կաթոլիկներ, նախքան մեզ արդեն հայտնի՝ 1747 թ. բազմամարդ գաղթը: Այդպիսիք են Իսավերդենցի համագյուղացի՝ Խոշկաշի-նեցի Գալուստի որդի Դավթի, որ «փոխեցաւ ՌէՃԼԴ» (1734), Խոշկաշնեցի Նահապետի որդի Աստվածատուրի՝ ՌԶԽԵ (1745) մահվան թվականները կրող տապանաքարերը⁹:

Հ. Աճառյանը կարծում է, նկատի առնելով 1730-1740-ական թթ. առ-հասարակ գաղթականական տեղաշարժերը Արևելյան Հայաստանից, որ կաթոլիկ հայերը Թովմաս Իսավերդենցի գլխավորությամբ Զմյունիա են անցել 1730-ական թթ.¹⁰: Իր շատ ուշագրավ աշխատության մեջ Մ.-Կ. Սմիրնելիսը այս հարցում չի խախտում վերը նշված տասնամյակի ժամա-նակահատվածը՝ նշելով, որ կաթոլիկ հայերի մի մասը Զմյունիա է անցել դոմինիկյան հայր Թ. Իսավերդենցի առաջնորդությամբ¹¹:

Այսուհանդերձ, կարելի է որոշ մանրամասներ ավելացնել գաղթի ժա-մանակի խնդրին: Գաղթը իրականացվել է 1747 թ., ինչը տեսանք վերը նշված՝ Նոր Բայազետի Հայսմավորքում, որտեղ ՌԶՂԶ (1747) ապրիլի 11-ը աներկբայորեն վերաբերում է կաթոլիկների՝ հայրենի Նախիջևանը լքելու տարվան ու ամսաթվին, իբրև հետևանք իր ծանրությամբ աննախ-ընթաց հարկահանության: Սկզբնաղբյուրներից օգտվելու իր առավելությո-

⁸ **Քոսեան 3.**, նշվ. աշխ., էջ 304:

⁹ Նույն տեղում, էջ 311: Պետք է նկատի ունենալ, որ նախիջևանցի կաթոլիկները դամբանագրերում գործածել են հայկական այբուբենի զուտ թվային արժեքը՝ առանց 551-ի հավելման:

¹⁰ **Աճառյան Հ.**, Հայ գաղթականության պատմություն, Ե., 2002, էջ 552:

¹¹ **Smyrnelis M.-C.** Les Arméniens catholiques de Smyrne aux XVIIIe et XIXe siècles. Revue du Monde Arménien, Paris, 1995-1996, p. 29.

յամբ Հ. Քոսյանը իր հերթին հավելում է, որ Ջմյունիայում հանգրվանած նախիջևանցիները 1748 թ. դիմել են տեղի օսմանյան իշխանություններին՝ մատուռի շինության խնդրանքով¹²: 1747 թ. ապրիլին գաղթականները մեծ բազմությամբ և «մեծաւ տառապանօք» վտանգավոր ու հեռավոր ճանապարհ կտրելով՝ այստեղ կարող էին հասնել յոթ-ութ ամիս անց և բնակության նոր վայրում փոքր ի շատե հարմարվելուց հետո միայն կարող էին մատուռի շինության հարց հարուցել, որ միանգամայն համընկնում է 1748 թվականին:

Դեպի Ջմյունիա գաղթելու մտադրությունը բավականաչափ հասկանալի է դառնում Նախիջևանի հայ վաճառականության՝ էգեյանի առափնյակի հետ ունեցած դարավոր առևտրական կապերի հետևախորքում: XVII դ. առաջին քառորդին ևս նախիջևանցիներ կարող էին հայտնվել Ջմյունիայում՝ զուտ առևտրական առնչությունների շնորհիվ և այս դեպքում՝ առանց դավանական տարբերակման: Դրա ամենևին էլ ոչ հեռավոր արձագանքը կարելի է համարել Բերգամայի ձեռագրերից մեկի հիշատակարանը. «Գրեցաւ... ի երկրին ասիացոց ի վիճակս սբ. Յովհաննու Ավետարանչի ի քաղաքս Պերկամա ի թուիս Հայոց ՌՃԻԴ (1675): Ես գաղցի Գրիգոր էրէցս որ եմ ի յերկրէն Նախչուանու ի գեղջէն որ յայժմ կոչի Գաղ»¹³:

Մինչև խնդրո առարկա գաղթը Ջմյունիայում հայ կաթոլիկների ներկայության մասին է փաստում գրիչ Հովհաննես Զահուկեցու կողմից 1738 թ. (այսինքն՝ Թ. Իսավերդենցի կազմակերպած 1747 թ. գաղթից գրեթե մեկ տասնամյակ առաջ) ընդօրինակված՝ Հովհան Քոնեցու (XIV դ.) «Գիրք ի վերայ երկուց բնութեանց» շարադրանքը¹⁴: Հովհան Քոնեցու՝ դոմինիկյան այդ նշանավոր քարոզչի և ունիթորների առաջնորդի գործի ընդօրինակումը վկայում է, որ գրիչ Հովհ. Զահուկեցին ունեցել է իր պատմիրատուն կամ համախոհ հայրենակիցները Ջմյունիայում: Նույն եզրակացությանն է առնչվում դարձյալ 1738 թ. Ջմյունիայում գրչագրված մի ձեռագրի պարագայում. ձեռագիրը՝ «Վիճաբանութին աստուածաբանութեան» վերնագրով, հիշեցնում է նախիջևանցի ունիթորների ներկայությունն այստեղ՝ իր բացատրությամբ. «ի լաթիներէն ի հայ բարբառ թարքմանեցեալ ի

¹² Քօսեան 3., նշվ. աշխ., էջ 306:

¹³ Մատենադարան, ձեռ. 4669, էջ 211/բ:

¹⁴ Մատենադարան, ձեռ. 842, էջ 142/ա:

Թումաս վարդապետէ ազնիւ Զուղայ քաղաքէն Ճահուկեցոյ ի սրբազան կարգէն քարոզողաց»¹⁵ (իմա՝ դոմինիկյան քարոզիչների):

Չի բացառվում, ի դեպ, որ այս գործի թարգմանիչը լինի հենց ինքը՝ Թովմաս Իսավերդենցը («Թումաս վարդապետը»), որի աշխատանքի արգասիքը հետագայում Ձմյուռնիայում կարող էր ընդօրինակվել (կամ հայտնվել) այստեղ գործող իր ազգական Իսավերդենց եղբայրների ազդեցիկ առևտրական ընկերության պատվերով: 1830-ական թթ. տպագրած իր երկհատոր աշխատության մեջ անգլիական դիվանագիտական ներկայացուցիչ Ֆ. Հերվեն գրում է, որ զմյուռնաբնակ «հույները և հայերը կապ են հաստատել Լոնդոնի, Փարիզի, Մարսելի, Տրիեստի և Եվրոպայի այլ մասերի հետ: Այն ժամանակ, երբ ես բնակվում էի այնտեղ (Ձմյուռնիայում-Խ. Ա.), Իսավերդենց ընկերությունն իր առևտրական գործարքներն իրականացնում էր ամենալայն թափով կամ, առևտրական լեզվով ասած՝ առավելագույն չափերով էր գլուխ բերում իր գործերը: Ձեռնարկը տնօրինում էին հայերը, թեև ներկայումս նրանք իրենց ֆրանկ են համարում: Բայց եղբայրները (Իսավերդենց եղբայրները-Խ.Ա.) շատ չանցած առանձնացան, գործը բաժանվեց երկու տարբեր ընկերությունների միջև»¹⁶:

Նկատենք, որ ջահկեցիները և Նախիջևանի մյուս կաթոլիկները հազիվ թե ցանկություն ունենային, այն էլ հոծախումբ, Կ. Պոլիս անցնելու: Օսմանյան մայրաքաղաքում ավանդական բնույթ էին կրում ընդհարումներն ու երկպառակությունները, մի կողմից, հայ առաքելականների և կաթոլիկամետների միջև, մյուս կողմից, իշխանությունների անհանդուրժողականության պոռթկումները ազգային եկեղեցուց դիմաշրջված կամ կաթոլիկական դավանանքին հարած հայերի դեմ: 1730-1740-ական թթ., դրությունը բարդանում էր նրանով, որ Կ. Պոլսի կաթոլիկ հոգևոր վերնախավն ու սրան մշտապես սատարող ֆրանսիական դեսպանատունը հարուցում էին կաթոլիկ եկեղեցու հայ հետևորդների համար անջատ եկեղեցի ստեղծելու խնդիրը: Բանը հասել էր նրան, որ հայ կաթոլիկները Կ. Պոլսում սկսել էին բացահայտորեն խախտել օտար եկեղեցիներ հաճախելու պետական արգելքը: Դեռևս XVII դ. գործողության մեջ դրված այս արգելքը բխում էր պե-

¹⁵ Մատենադարան, ձեռ. 842:

¹⁶ Armenians in the Ottoman Empire. El. Editor Ghazarian V. Mayreni Publishing Waltham, Massachusetts, 1997, p. 270. Իսավերդենց տոհմից էր ծննդյամբ զմյուռնացի, Վենետիկի Մխիթարյաններից Հակոբոս Վ. Իսավերդենցը՝ «Բազմավեպի» խմբագիրներից մեկը (տե՛ս Բազմավեպ, 1902, N ԺԱ, էջ 496):

տության շահերից՝ թույլ չտալու հայ միլեթի դավանական փլուզումը հոգուտ կաթոլիցիզմի, ասել կուզի՝ ֆրանսիական կամ ավստրիական ազդեցության ընդլայնմանը Թուրքիայում: Մ. Օրմանյանն ընդգծում է այս հարցում լատին եպիսկոպոսի և քարոզիչների եռանդուն գործունեությունը 1730-ական թթ.՝ առավել խորացնելու նրանց հայ հետևորդների և առաքելական եկեղեցու միջև եղած սեպը: Օսմանյան կառավարությունը, գրում է նա, «Չէր կրնար ներել օտարներու հետ մտերմութիւնը և անոնց հպատակութիւնը, ուստի փոխադարձաբար զգուշութիւններ և նոր արգելքներ հրամայեց, որով օտար եկեղեցի յաճախողները ձերբակալուեցան, բայց տուգանքով թողուեցան»¹⁷:

Նույն գայթակղություններն ու գրգռությունները ջրի երես դուրս եկան նաև հաջորդ տասնամյակին, երբ կաթոլիկները Կ. Պոլում սկսեցին բացել իրաց խոսել Սամաթիայի Ս. Գեորգ և Ղալաթիայի Ս. Լուսավորիչ եկեղեցիները իրենց ենթակայությանը, իբր, հանձնելու մասին: Դարձյալ կառավարությունը չհապաղեց միջամտել: Հետևեցին բանտարկություններն ու պատիժները. «Միւս կողմէն, - հարում է Մ. Օրմանյանը, - փոխադարձ թշնամութիւններ ալ ասպարէզ կը գտնեն եւ մատնութիւնք, նեղութիւնք եւ տառապանք ազգին մէջ կը յաճախեն»¹⁸:

1730-1740-ականներին նշված խնդրի շուրջ ստեպ պոռթկացող գծությունները ավելի հիվանդագին որակների չվերաձվեցին, մի կողմից, Կ. Պոլսի հայոց պատրիարք Հովհ. Կոլոտի, ապա նրան հաջորդած Հ. Նալյանի լայնախոհության և, մյուս կողմից, ֆրանսիական դեսպանների զգուշավորության շնորհիվ: Ավելացնենք, որ պատժիչ գավազանը միշտ գործադրելու հակամետ օսմանյան կառավարությունը 1750-1770-ական թթ. անցավ էլ ավելի անհանդուրժող քաղաքականության՝ հայրենի եկեղեցուց դիմադարձ հանդուգն հայերին պատժելու համար: Ժամանակի թուրքական պատմագիր Ջեվդեթ փաշան հանրագումարի էր բերում կառավարության այս ուղեգիծը, երբ գրում էր, որ «Օսմանյան պետության հպատակներից մի փոքր հասարակության (հայ հանրության-Իս.Ա.) այդպիսի մի օտար եկեղեցու հպատակությունը քաղաքական խռովություն է համարվում»¹⁹:

¹⁷ Օրմանեան Մ., Ազգապատում, հ. Բ, Էջմիածին, 2001, էջ 3325:

¹⁸ Նույն տեղում, էջ 3392:

¹⁹ Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, կազմ. Ա.Իս. Սաֆրաստյան, Ե., 1961, էջ 238: Այսուհանդերձ, կաթո-

Բավականաչափ շրջահայաց Թովմաս Իսավերդենցը՝ Նախիջևանի Խոշկաշեն բնակավայրից, դոմինիկյան մյուս հայրերի հետ միասին չէր կարող այսպիսի պայմաններում նոր բնակության վայր համարել դավանական հակասությունների խառնարան ներկայացնող Կ. Պոլիսը: Զմյուռնիան այս տեսակետից անհամեմատ հանգստության և ապահովության հույսեր էր ներշնչում. այստեղ չկար ոչ մահմեդական պահպանողականություն, և ոչ էլ, ըստ այդմ, իշխանությունների վերահսկողական անխափան գործառույթ, որ ձգտում էր տնօրինել ամեն ինչ: Չկար նաև դավանական պատրաստի առարկությունները ձեռքին ազգային եկեղեցին՝ պատրաստ ըմբերանելու կաթոլիկամետ ազգակիցներին, իսկ եթե կար՝ ապա ամենևին էլ ոչ վարչական այնպիսի հնարավորություններով, ինչպիսին ուներ պոլսահայ հոգևորականությունը, որովհետև Զմյուռնիան և փոքրասիական մյուս հայ համայնքները Էջմիածնի տերունի թեմն էին՝ Կ. Պոլսի պատրիարքության հետ ունեցած գրեթե աննշմար կապերով ու հարաբերություններով, որոնք չէին կարող խանգարել հայ կաթոլիկների՝ սեփական դավանական հարմարավետության վերաբերյալ պատկերացումներին: Կար նաև ամենակարևորը՝ Զմյուռնիայի եվրոպական ազատամիտ համայնքը՝ իր կաթոլիկներով, բողոքական այլևայլ ճյուղավորումներով ու անհիվանդագին համակեցությամբ, որտեղ եթե բախումներ ենթադրվեին, այն էլ միայն առևտրական հրապարակներում, որոնց տարածքում իրեն այնքան ինքնավստահ կարող էր զգալ նախիջևանցի ունիթորների աշխարհիկ վերնախավը: Օսմանյան իշխանություններն այստեղ մտորելու տեղիք տվող չափերով զուսպ էին՝ միջազգային այդ նավահանգստի բազմազգ և բազմակրոն շուկայում, ուր անտեսանելի թելերով ավելի շուտ վե-

լիկ հայերին ի նպաստ գործեց ավստրիական դեսպանն այն բանից հետո, երբ 1772 թ. պատրիարքական աթոռին հայտնված Զաքարիա Կաղզվանցին ուժգին հալածանք սկսեց կաթոլիկ հայերի դեմ և ապա, այդ պատճառով, պաշտոնազրկվեց: 1782 թ., վերստին բազմելով պատրիարքական աթոռին, Զաքարիան հարկադրված էր շատ ավելի զգուշավոր գործել կաթոլիկ հայրենակիցների դեմ և անգամ տեղի տալ առաքելական եկեղեցի չհաճախելու վերաբերյալ նրանց պահանջներին, անշուշտ, ոչ առանց Բ. դռան համաձայնության: Զաքարիան, գրում է Ավ. Պերպերյանը, «Արար ժողով ի պատրիարքարանին եւ օրինադրեաց զի Հայք մի արասցեն խնամութիւն ընդ հռովմեական հայոց եւ մի ազգականութիւն եւն, այսպէս որոշեաց զսոսա իբրեւ զազգ մի (առանձին ազգ - Ի.Ա.), որոց ուրախացեալ ընդ այս առաւել եւս վստահացան որոշումն իրեանց եւ սկսան յայնմիետէ՝ չերթալ երբեք եկեղեցիս հայոց, այլ միայն եկեղեցիս լատինացոց» (**Պէրպէրեան Ա.**, Պատմութիւն Հայոց, Կ. Պոլիս, 1871, էջ 3):

րահսկում էին եվրոպական հյուպատոսները՝ թեկուզ և պայմանականորեն հաստատված իրենց իրավասությունների սահմաններում: Հիրավի, այստեղ ամեն ինչ պատրաստ էր անհիվանդագին, արագ ու խաղաղ ծովման համար, որի մասին նախապես չէին էլ կարող պատկերացնել պարսկական սարսափները ճաշակած նախիջևանցիները՝ գաղթի մտադրությունը հղանալու և իրականացնելու պահերին:

Գայթակղիչ էր նաև ֆրանսիական հյուպատոսի՝ սերտ առնչություններից մինչև քաղաքական հովանավորություն մատուցելու հնարավորությունը հատկապես կաթոլիկամետ կամ կաթոլիկ դարձած հայերի, հույների և այլ տարադավան խմբերի ու անձանց նկատմամբ: Ջմյունաբնակ եվրոպական համայնքն ինքնին վայելում էր եվրոպական հյուպատոսների խնամակալությունը, որ լռելյայն հարգվում էր օսմանյան իշխանությունների կողմից: Վարչաքաղաքացիական իմաստով, հետևաբար, իրենց պաշտպանված էին զգում ոչ միայն հյուպատոսարաններին կապված տեղաբնակ դրագոմանները, այդ թվում և հայկական միջավայրից, այլև ամենատարբեր զբաղմունքի տեր մարդիկ: XVIII դ. հովանավորչության այս շատ տարածված երևույթը շարունակվում էր նաև հաջորդ դարի երկրորդ կեսին, ըստ էության, մի հայտնի չափով ամրացնելով օտարերկրյա դեսպանատների և հյուպատոսարանների քաղաքական դիրքն ու ազդեցությունը Օսմանյան Թուրքիայում: Այս տեսակետից հետաքրքրական է Ջմյունիայում և կից շրջաններում (Էջմիածնի նախկին տերունի թեմ) Մայր աթոռի սեփականությունների գործակալ Թ. Չելիկի նամակը (1852, 16 մայիսի) կաթողիկոս Ներսես Աշտարակեցուն, որը բավականաչափ լույս է սփռում այս խնդրի վրա: Չելիկի տողերից հայտնի է դառնում, որ 1825 թ. ի վեր, տերունի թեմը կորցնելուց հետո, իր կալվածքներն այստեղ այլևս չվերահսկող Էջմիածինն իր սեփականատիրական իրավունքները վերականգնելու հնարավորություն կարող է ունենալ միայն ռուսաց հյուպատոսի հովանավորությամբ, որ կարող էր նա ցուցաբերել իրեն՝ Չելիկին, եթե սա դատական գործ հարուցեր իր օգուտ Էջմիածնի իրավունքների: Այդ դեպքում, գրում է Չելիկը, «պաշտպանութիւն եղիցի ինձ ի վսեմափայլ ընդհանուր հիւպատոսէ ռուսաց, որ ի քաղաքիս, քանզի անշուշտ պատահել ունեն դէպք յայս առ անվնաս պահելով զօգուտ Սրբ. Աթոռոյն պարտաւորեցայց գուցէ դիմել ի դատաստան տեղական կառավարութեան, վասն որոյ պէտս ունիմ հզօր

պաշտպանութեան միոյ, զի իբրեւ գործակալ Ս. Աթոռոյն կարողացայց յառաջ տանել զիրաւունս Սրբոյ գահին:

Ի տեղեկութիւն ձերոյ վեհափառութեան ասեմ՝ զի գործակալն և թարգմանն հռոմեական աթոռոյն եւս պաշտպանութիւն ստանա աստ (Զմյուռնիայում-Խ.Ա.) ի գաղղիական հիւպատոսէ քանզի այսպէս է սովորութիւն ի կողմանս յայտոսիկ»²⁰:

Մ.-Կ. Սմիրնեյիսն ուշադրութիւն է դարձնում այս յուրահատուկ հովանավորության իրավական նշանակությանը՝ միանգամայն տարբերակելով այն կրոնական հովանավորությունից: Բայց այնչափով, որչափով հովանավորյալը կարող էր օգտվել արտասահմանյան տվյալ երկրի (եվրոպական, ռուսական) հպատակի իրավունքներից, չվճարել գլխահարկ (խառաջ, ջիզյե) և անգամ իր միւլթի (համայնքի) հարկերը²¹, իշխանությունների հետ մտնել դատաիրավական գործընթացների մեջ, իրավական հովանավորությունը, կարծում ենք, մեքենաբար և անխուսափելիորեն գերաճում էր կրոնական հետևանքների: Այդ էր պատճառը, որ, ինչպես նկատում է այս հետազոտողը, համայնքները և պետությունը շահագրգռված չէին հովանավորյալների թվաքանակի մեծացմամբ²²:

Նախիջևանցիները Զմյուռնիայում համեմատաբար դյուրավ հիմնավորվեցին և ձեռք զարկեցին վաճառականության, առևտրի ու արհեստների՝ դոմինիկյան հայրերի շնորհիվ արժանանալով նաև ֆրանսիական հովանավորությանը²³ XVIIIդ. առաջին քառորդին այստեղ հաստատված կաթոլիկ հայրենակիցների աջակցությամբ ևս:

Թ. Իսավերդենցի առաջնորդությամբ, եթե նկատի առնենք նրա կազմակերպած երկրորդ գաղթը, Զմյուռնիա են անցել ավելի քան 1000 մարդ²⁴, բայց եթե հիշենք, որ դրանից առաջ էլ նա հաջողել էր ապահովել որոշ հոգևորական հայրերի և մեծահարուստների ելքը («նախ զմեծատունս ընչիւք նոցին»²⁵), բնականաբար, իրենց ընտանիքներով, այդ թիվը

²⁰ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 167, վավ. 448:

²¹ **Smyrnelis M.-K.**, նշվ. աշխ., էջ 34:

²² Նույն տեղում, էջ 35: Ավելի ուշ շրջանի՝ 1822 թ. հովանավորյալների թվում Մ.-Կ. Սմիրնեյիսը հիշում է պարսկահայ կաթոլիկներից երկու Ժերիսյանների (հավանաբար, Երիցյանների), Անդրե Բալադյուրին (կարելի է կարծել՝ Բահաթյան), երկու Իսավերդենցների (դոմինիկյան առաջնորդի տոհմից) և այլն (նույն տեղում):

²³ **Քութան Յ.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 307:

²⁴ **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 406:

²⁵ Նույն տեղում:

շատ ավելին պետք է լիներ: Էգեյականի ափերն հասած գաղթականները, սակայն, ցրվել են ոչ միայն մերձակա քաղաքներում, այլև Կ. Պոլիս, Իտալիա և այլուր, իսկ Իսավերդենցը 1762 թ. մեկնել էր Անկոնա և այլևս չէր վերադարձել: Համենայն դեպս, 17 տարի անց Ջմյունիայում նորաբնակ ունիթորներից մնացել էր 700 մարդ, ինչպես գրում են նրանք Հռոմի Ս. Ժողովին ուղղած իրենց խնդրագրում (1764 թ. ապրիլի 15), «վասն մեղաց մեռոց բազմացան նեղիչք մեր (Նախիջևանում-Իս.Ա.) որ ոչ կարացաք տանել. Վասն այսորիկ թողաք զհայրենի յերկիրն մեր եւ բնակութիւնն մեր, եկաք աստ ի քաղաքն Իզմիռ եւ մասն մի ի քաղաքն Թիրադիր (Թիրատիր) որ եմք թվով 700 անձինք... Այժմ որք մնացաք մեք եւ առանց հոգետոր մխիթարութեան...»²⁶:

Խնդրարկուները թախանձում էին վերադարձնել իրենց քարոզչին՝ Իսավերդենցին, որին այլևս վիճակված չէր հովվել իր ժողովրդին: Դատելով խնդրագրի հեղինակների կողմից նրան տրված անառարկելիորեն դրական բնութագրից, որի կարևորությունը ընդգծված է այդ շարադրանքում, դրան խանգարել էին կաթոլիկական հայրերի տարածայնությունները իր գործունեությունը դադարեցրած Դոմինիկյան միաբանության շուրջ: Իսկ նախիջևանցիների թվաքանակը հետագայում, մինչև դարավերջ, գնալով նոսրանում էր: 1790-ական թթ. անգամ Անկյուրիայից, Թոքատից և այլ վայրերից եկած նոր գաղթականներով հանդերձ, Ջմյունիայում հայ կաթոլիկների թվաքանակը նոսրանում էր, նրանք ծուլվում էին կաթոլիկական զանգվածի մեջ: XIX դ. վերջին, որպես այդպիսին, հայ կաթոլիկների թիվն այստեղ հասել էր 150-200 մարդու՝ ըստ Հ. Քոսյանի, և 300 ընտանիքի՝ ըստ «Արարատ» ամսագրի հեղինակի²⁷:

Նախիջևանցիները Ջմյունիայում պետք է վերջնականապես խզեին իրենց կապերը ազգային եկեղեցու և կրթության հետ, կարելի է կարծել, 1772 թ., Զաքարիա պատրիարքի կողմից հայ եկեղեցու դռները նրանց

²⁶ Նույն տեղում, էջ 407: Հայերի մեջ, այդ թվում և փոքրասիական շրջաններում կաթոլիկական հավատի տարածման գործը վերահսկելու համար Հռոմի Ս. Ժողովը նախապես լատին հայագետ կրոնավորներ, ապա ուրբանյան դպրատան շրջանավարտներ, իսկ XVIII դ. նաև մխիթարյան հայրերի ու լիբանանյան անտոնյան միաբանների էր առաքում (տե՛ս **Գալէմքեարեան Գր.**, Կենսագրութիւն Սարգիս արքեպիսկոպոս Սարաֆեան, Վիեննա, 1908, էջ 257):

²⁷ **Քոսեան Յ.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 33: **Հովիւ**, Մի տխուր պատկեր հռովմեական հայոց կեանքէն (Արարատ, Էջմիածին, 1896, N 6, էջ 175):

առջև փաստորեն փակելու անխոհեմ որոշումից հետո, որին անդրադարձանք վերը (տե՛ս հղում 19): Հայերեն խոսող Իսավերդենցից կամ մի որոշ ժամանակ նրան փոխարինողից հետո ազգային լեզուն դուրս մղվեց այդ հանրության հաղորդակցությունից, որն իր հերթին մեծապես նպաստեց ազգային ծեսերի ու արարողությունների վերացմանը նրանց մեջ և անառարկելի անցմանը կաթոլիկական պաշտամունքին: Պաշտամունքն արդեն կատարվում էի լատին կապուչինների կողմից՝ միանգամայն խորթ ազգային բարքերին ու սովորույթներին: Այդ արդեն կաթոլիկ հայերի ուծացումն էր նշանակում: Վերոհիշյալ Խոշկաշեն գյուղից կամ բնակավայրից սերած կաթոլիկների դամբանագրերը, որ վերարտադրել է Հ. Քոսյանը, ցույց են տալիս առհասարակ զմյուռնաբնակ հայ կաթոլիկների օտարվելու աստիճանական ընթացքը: 1744 և 1741 թթ. (նախքան մեծ գաղթը՝ 1747 թ.) դամբանագրերում մահվան տարին նշված է հայերեն թվատառերով (թեև ոչ հայկական, այլ գրիգորյան տոմարով)՝ Խօշկաշինեցի Գալուստի որդի [Դ]ավիթ, որ փոխեցաւ ՌԺԼԴ (1744), Խօշկաշինեցի Նա[հապե]տի որդի Ա[ստված]ատուր, ՌԶԽԱ (1741), Խօշկաշինեցի Ումիտի որդի Ակոբ (1757) և այլն (բոլորն էլ ոչ հայկական տոմարով)²⁸:

1760-ական թթ. սկսած, մինչև 1790-ական թթ. տապանագրերը արդեն գրված են միայն արաբական թվանշաններով՝ եվրոպական ձևով. Խօշկաշինեցի Մանասի դուստր Անաստաս՝ 1761, Արարենցի Յովհաննէսի որդի Մաթոս՝ 1760, սրա որդի Անդրեաս՝ 1763, մյուս որդին՝ Պողոսը, 1770, Թոխատցի Ըստեփանի որդի Պետրոս՝ 1795 և այլն²⁹:

Վերոհիշյալ օրինակները ինչ-որ չափով անդրադարձնում են նախնականների կողմից ավանդության՝ տապանագրերին հայկական տառանիշեր (թվանշաններ) դրոշմելու սովորությունը թողնելը և դրանց եվրոպական համարժեքներին անցնելը: Դրանից առաջ էլ, Զմյուռնիայում տեղավորվելուց ի վեր նրանք կապ չեն ունեցել հայկական գերեզմանատան հետ և իրենց ննջեցյալներին թաղել են Ս. Պոլիկարպոս երբեմնի հայ կաթոլիկական եկեղեցու գավթում կամ շուրջը: Խնդիրը, սակայն, միայն թվանիշերը չէին և ոչ էլ անգամ հուղարկավորության համար առանձին վայր տնօրինելը: Կարևորն այստեղ այդ և նման գործոնների բազմապատկումն էր, այն, որ հայ կաթոլիկները եվրոպական բարքերին ու սովորույթներին

²⁸ Քօսեան 3., նշվ. աշխ., հ. Ա, էջ 311:

²⁹ Նույն տեղում, էջ 312-313:

են անցել արդեն 1760-ական թվականներից, բնականաբար, ոչ միայն այդ տասնամյակից, այլ մինչև դարավերջ և դրանից հետո, աստիճանաբար, որ գահավիժման չափ արագացել է և որակական ծավալներ ստացել 1831 թ. Օսմանյան Թուրքիայում առանձին հայ կաթոլիկական համայնքի ճանաչումից հետո: Այդ գործոնների մեջ Հ. Քոսյանը իրավացիորեն առանձնացնում է մայրենի լեզուն չափապանելը, ամբողջովին օտար կրթության անցնելը և տոհմային սովորույթների մոռացությունը, որոնց հիմքում անխուսափելիորեն ընկած էր հայ համայնքից ու եկեղեցուց անջատ ապրելու իրողությունը³⁰:

1894 թ. մեզ արդեն ծանոթ Հովիվը, արձանագրելով Ջմյուռնիայի կաթոլիկ հայերի սերունդների ամբողջովին ծուլումը եվրոպական ազգերին, կշտամբում էր այդ անկումը չկանխող հայ եկեղեցուն՝ անտարբերության համար, ընդգծելով այդ խնդրում լատին եկեղեցու հույժ ակտիվությունը, որ հասցրել էր դավանափոխների կողմից իրենց սեփական ազգային արմատները կտրականապես մերժելու մտայնությանը. «Դաւանափոխք ոչ միայն իրենց անուն փոխած են, այլ նաեւ մականուն, տոհմանուն... աւելի կը սիրեն ասել, թէ իրենք սերած են աճեմներէ (պարսիկներէ), քան թէ հայերէ»³¹:

Կաթոլիկական եկեղեցին Ջմյուռնիայում, իսկապես, ամենայն հոգածությամբ ձեռնամուխ եղավ հավատափոխներին իր փարախը վերջնականապես քաշելու գործընթացին՝ նույնիսկ տարբեր միաբանությունների սուր

³⁰ Նույն տեղում, էջ 310:

³¹ **Հովիվ**, նշվ. աշխ., էջ 175: Հիրավի, կարծես տեղի տալով ազգության կամ ծագումնաբանական անցյալի վրա խաչ քաշելու և անգամ իրենց պարսկական ծագում վերագրելու Նախիջևանի կաթոլիկների բուռն ցանկությանը՝ Մ.-Կ. Սմիրնելիսը իր վերոհիշյալ աշխատության մեջ այդ դավանափոխներին, թեկուզ և չակերտների մեջ, ամենուրեք անվանում է պարսիկներ: Պետք է նկատել, սակայն, որ Պարսկաստանի տիրապետության ներքո գտնվող Արևելյան Հայաստանի քաղաքների ու բնակավայրերի բոլոր հայ վաճառականները դեռևս XVII դ. և թերևս, ավելի վաղ ժամանակներից ճանաչված էին «աճեմ պագրկյաններ» ընդհանուր անվամբ (ջողայեցիներ, նախիջևանցիներ, սյունեցիներ, ագուլեցիներ, երևանցիներ և այլն), որը ոչ մի կապ չունի պարսիկների հետ (բացի պարսկական տիրապետության տակ գտնվելու իրողությունից): Նրանց այդպես էլ անվանում է Ավետիք պատրիարքն իր կենսագրության մեջ (1709): Հռոմ մեկնելու պատրաստվող Եղիազար Այնթափցուն, ըստ նրա, տարիամոգում են հոգևոր և աշխարհիկ հեղինակավոր անձինք՝ հետ կանգնելու իր մտադրությունից և անցնելու Էջմիածին՝ զբաղեցնելու վախճանված Հակոբ կաթողիկոսի աթոռը. «Իզմիրու եղեալ աճեմ պագրկեան վաճառականքն եւս յոյժ աղաչեցին», - գրում է նա [Կենսագրութիւն Աւետիք պատրիարքի հայոց (Արարատ, Էջմիածին, 1874, N 1, էջ 75)]:

մրցակցության գնով: Հարուստ նախիջևանցիներին իրենց ծխերում տեսնելու անդիմադրելի ցանկությունը տևական տարածայնությունների ասպարեզ դարձավ ֆրանցիսկյան միաբանության և կապուչինների գլխավորների միջև, որն ի վերջո, ավարտվեց ֆրանսիական դեսպանության և միաբանությունների փոխադարձ համաձայնությամբ, որի համեմատ ծխերը բաժանվեցին ըստ համապատասխան աղոթատեղիների³²: Ծխերի շուրջ և դրանք վերահսկելուն ուղղված հակասությունները շարունակվեցին նաև հետագայում, երբ հայ կաթոլիկները Ջմյունիա ապաստանած նոր գաղթականների համալրմամբ ավելի մարդաշատ էին դարձել: Հ. Քոսյանն այդ գաղթը բացատրում է զուտ տնտեսական իրողություններով, երբ (XVIII դ. վերջերին) «բաւական թուով կաթողիկեայ հայ գաղատիացի վաճառականներ իրենց բախտն այլուր փորձելու համար թողած են իրենց ծննդյան վայրը եւ տնով-տեղով դիմած են Ջմյունիա»³³:

Կարելի է կարծել՝ ոչ միայն առևտրական բախտը փորձելու գայթակղությունը, այլև սոցիալական ու դավանական տեսակետից Ջմյունիայի անհամեմատ ապահով՝ կաթոլիկական և եվրոպական խնամարկություն խոստացող միջավայրում:

Այստեղ ևս հարկ է նկատել, որ անկյուրացիները (գաղատացիները) մինչ այդ էլ և ծանոթ առևտրական ուղիներով դրանից շատ ավելի առաջ էին հայտնվել Ջմյունիայում, ընդամին, բավական թիվ ներկայացնելով: Սարգիս Սարաֆյան վարդապետը, որ Ջմյունիայում մի տևական ժամանակ զբաղված էր կաթոլիկ քարոզչության աշխատանքով, 1754թ. հունիսին և ոչ առանց ներքին բավարարվածության, գրում էր Վենետիկ, Ստեփանոս (Մելքոնյան) արքեպիսկոպոսին. «Բայց քեռչէ - պուճախ քրթմնջեն ոմանք ի ծածուկ՝ գաղատացիք ամենայիմարք, բայց գտանին նոցա ըմբերանօղք բազումք, որոյ վասն եւ գլխաւորք նոցին գան եւ գնան առ իս եւ մեր շահեմք զնոսա բարոյականաբար...»³⁴:

Գաղատացի ընդդիմախոսների նկատմամբ քամահրանքը ինքնին խոսում է քարոզչի վրիպումների մասին, սակայն այստեղ կարևորն այն է,

³² Smyrnelis M.-K., նշվ. աշխ., էջ 31-32: Ղ. Ալիշանը նկատում է, որ 1850-ական թթ. Ջմյունիայում գործում էին կաթոլիկական Ս. Պոլիկարպոս և Լազարյան միաբանության Հիսուսի սիրտ եկեղեցիները (տե՛ս Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 345):

³³ Քութան Յ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 320:

³⁴ Տայեան Ղ., Մայր դիան Մխիթարեանց Վենետկոյ ի Ս. Ղազար 1707-1773, Վենետիկ, 1930, էջ 163:

որ նրան առարկել են զմյունաբնակ գաղատացիները, հնարավոր է՝ ազգային եկեղեցու հետևորդներ, որոնց վրա ձգտել է «բարոյականաբար» ներգործել Ս. Սարաֆյանը: Ջմյունիայում բնակվող գաղատացիները ևս կարող էին պահպանել իրենց կապերը Գաղատիայի իրենց հայրենակիցների հետ և վերջապես, XVIII դ. 90-ականի գաղթից դեռ շատ առաջ էլ գաղատացի հայ կաթոլիկ վաճառականներ նույնպես կարող էին լինել Էգեյանի առափնյա շրջաններում: Հետևաբար, բնավ պատահական չէր կարող լինել այն իրողությունը, որ իբրև գաղթի վերջնական մեկնակետ, գաղատացիներն ընտրեին Ջմյունիան և շրջակայքը: Հ. Քոսյանը գրում է, որ Այդընում բնակվող 10-15 տուն հայ կաթոլիկները 1856 թ. համալրվեցին չորս տուն գաղատացի ընտանիքներով (Ջմյունիայից՝ երեք, Պիլեհիկից՝ մեկ ընտանիքով)³⁵: Այստեղ ևս նկատվում է ներքին տեղաշարժը, ինչպես ունիթորների հոտի պարագայում՝ Ջմյունիա հասնելուց հետո նրանց մի մասն անցավ, ինչպես տեսանք, Թիրե, անշուշտ, նաև Այդըն և այլուր: Հատկապես Այդընում էին կենտրոնանում, մինչև 1890-ական թթ., կաթոլիկ հայերը՝ ամենից առաջ տեղափոխվելով փոքրասիական մյուս մասերից: Դրա շնորհիվ Այդընը պետք է դառնար կրոնավարչական կենտրոն՝ իրականացնելու վիլայեթի կաթոլիկ հայերի հոգևոր սպասարկումը: Այս գործին նպաստեցին հատկապես Վիեննայի Մխիթարյանները՝ դեռևս 1840-ական թթ. սկզբներից: Նրանց ներկայացուցիչը ամեն տարի այցելում էր Այդըն, Մելես, Քուշադա, Սյոքե և այլուր՝ վերոհիշյալ առաքելությամբ, իսկ 1850 թ. Ջմյունիայի արքեպիսկոպոս Մուսաբինին Այդընի առաքելությունը հանձնում է Վիեննայի Մխիթարյաններին՝ նրանց հետ ընդունաձ պայմանների համաձայն³⁶: Չնայած հայ կաթոլիկ համայնքի և Մխիթարյանների որոշ տարաձայնություններին, Այդընում 1850 թ. հետո նրանց հաջողվել էր ձեռք բերել ոչ մեծ մի մատուռ և գերեզմանատան տարածք:

Շատ ավելի փոքրաթիվ էին, Այդընի կաթոլիկների համեմատությամբ, Թիրեի, Բայանդըրի, Քուշադայի և Սյոքեի նրանց դավանակիցները՝ մեկից մինչև մի քանի ընտանիք³⁷: Գաղատիայից եկած հայերը մինչև 1831 թ. կաթոլիկական առանձին համայնքի պետական ճանաչումը, իրենց կրոնական ծեսերն ու արարողությունները կատարում էին Հայ առաքելա-

³⁵ Քոսեան Յ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 40:

³⁶ Նույն տեղում, էջ 35-37:

³⁷ Նույն տեղում, էջ 40:

կան եկեղեցիներում, և բաժանումից հետո էր, որ նրանք անցան լատին արքեպիսկոպոսի իրավասությանը: Այս իմաստով հարկ է նկատի առնել Մխիթարյանների կողմից օտար դավանանքին նպաստող նրանց գործունեությունը, այլև դրան հակասող իրական ջանքերը՝ ազգային լեզուն պահպանելու (պաշտամունքի, աղոթքի լեզուն նրանց այդ գործառույթի շնորհիվ մնում էր հայերենը), հայալեզու վարժարաններ ստեղծելու ասպարեզում: Այդընում նրանց հիմնած վարժարանը (1853 թ.³⁸) ըստ ամենայնի նպաստեց նաև թուրքախոս հայ հանրության մեջ հայախոսության տարածմանը, որի բազմաթիվ օրինակները կարող ենք գտնել Զմյուռնիայի շրջակայքում բնակվող հայերի մեջ: Անշուշտ, այդ ամենը թույլ պատվար էր ի վաղուց անտի հռոմեադավանությանը հարած հայ կաթոլիկների ուժացումը կանխելու համար, բայց այստեղ հույժ կարևոր է այն ճշմարտությունը, որ Մխիթարյանները, իրենց գործունեությունը պայմանավորելով կաթոլիկ եկեղեցու ինքնությամբ և գործելով նրա հովանու ներքո, ազգի գաղափարին կամ նրա պահպանությանը նպաստող գործոնների մեջ ամենևին էլ առաջնային նշանակություն չէին տալիս եկեղեցուն, այլ կարևոր էին համարում ազգային լեզուն, բարքերը և սովորույթները, որոնք պետք է ի սպաս դրվեին այդ նույն՝ ազգի գաղափարին: Օսմանյան Թուրքիայում ի սկզբանե գործառում էր միլիթների՝ կայսրության մեջ ապրող հպատակ ազգերի կրոնադավանական փակ շղթան կամ համակարգը, միլիթից դուրս մարդը ոչինչ էր, նա կարող էր գոյատևել իր միլիթում, անգամ փոխել իր միլիթը, սակայն դրանից հետո նրա իրավասությանը ենթարկվելու, այլ կերպ ասած՝ իր կրոնը և ազգությունը փոխելու պայմանով: Դրա վրա հենված՝ օսմանյան վարչատնտեսական, իրավական ու հարկային հարաբերությունները դեռևս երկար պետք է պահպանվեին, նույնիսկ թանգիմաթից շատ հետո, XIX դ. երկրորդ կեսին, իսկ դրանց վերապրուկները՝ մինչև կայսրության գոյության ավարտը, էլ ուր մնաց՝ մեր քննարկած ժամանակաշրջանում՝ XVII-XIX դդ. առաջին կեսը: Մխիթարյանների երախտիքն այն է, որ նրանք փորձում էին լուծել ազգ-եկեղեցի փոխադարձ պայմանավորվածության մեջ առաջացած հիմնախնդիրը ազգապահպանության այլ, մասնավորապես կրթության և լուսավորության բնագավառում, որպիսին տեսանք Զմյուռնիայի հայ կաթոլիկ հանրության հետ նրանց առնչվելու

³⁸ Տե՛ս Հ.Յ.Ք.[**օսեան**] Յիսնամեայ յոբելեան հանդէս հաստատութեան Մխիթարեանց որ յԱյդըն (Հանդէս ամսօրեայ, 1903, N 6, էջ 180-187):

պայմաններում: Սակայն ազգային եկեղեցուց դուրս և նրանից անկախ ազգության գաղափարը, որ հասարակական գիտակցության այլ ասպարեզներում (կրթություն, լուսավորություն, գիտություն) միանգամայն կարող էր ցուցադրել իր հաջողությունները, կենսունակ չէր կարող լինել առաքելական եկեղեցուց ազգության օտարման պայմաններում: Այդ էր պատճառը, որ վերջնականապես կտրվելով ազգային եկեղեցուց, Ջմյուռնիայի հայ կաթոլիկները կտրվեցին նաև ազգությունից: Իր ժամանակին դավանանքի և խղճի ազատության գաղափարը կրոնական համոզմունքին համադրած մտայնությունը, որով առաջ էր ընթանում Եվրոպան, ուշացած դուրս եկավ հայ ազգություն-եկեղեցի հարաբերություններում:

Այդընի վիլայեթում առանձին համայնք կազմելու իրավունք ստանալուց՝ 1831 թ. հետո սակավամարդ հայ կաթոլիկ ընտանիքները սկսեցին ցրվել՝ ձգտելով գործել Կ. Պոլսում կամ Եվրոպայում խմբված իրենց դավանակիցների շրջանում: XIX դ. վերջին այս կերպ չքացան Այդընի, Նազիլի, Դենիզլի, Թիրեի և այլ բնակավայրերի հայ կաթոլիկ ընտանիքները՝ տարրալուծվելով Ջմյուռնիայի և Օսմանյան Թուրքիայի իրենց դավանակիցների զանգվածի մեջ:

АРМЯНЕ – КАТОЛИКИ В СМирНЕ И ОКРЕСТНЫХ НАСЕЛЕННЫХ ПУНКТАХ (XVIII В.)

ХАРАТЯН А.А.

Резюме

В 1847 г. во главе со своим духовным лидером Товмасом Исаверденцем армяне-католики мигрировали из Нахиджевана в Смирну (более 1000 чел.). Причиной миграции послужило ужесточение экономических и религиозных гонений на всей территории Восточной Армении в период правления Надир-шаха. Часть мигрантов обосновалась в Смирне, отдельные группы, со своими семьями рассеявшись по окрестным городам и поселкам – Айдын, Тира, Байандыр, Кушада – занялись торговлей, ремеслами и земледелием. Выбор католиками г. Смирны в качестве конечной точки миграции объяснялся тем, что именно здесь было сосредоточено значительное число населения, имеющего европейское происхождение, и в их среде мигранты могли себя чувствовать сравнительно комфортно. Помимо этого, данный регион был особенно привлекателен для мигран-

тов тем, что здесь активно действовали европейские консульства. В особенности Айдын стал для католиков Нахиджевана духовно-административным центром под покровительством католических конгрегаций. В Эгейском регионе армяне-мигранты из Нахиджевана с течением времени утеряли национальные традиции, ими были забыты язык, обычаи и обряды, благодаря которым они сохранили национальную идентичность на родине – в Нахиджеване. В последующие десятилетия и особенно в XIX в. все это ускорило их ассимиляцию с католиками в городах Османской Турции и Европы.

CATHOLIC ARMENIANS IN SMYRNA AND THE NEIGHBORING AREAS (XVIII c.)

A. KHARATYAN

Abstract

In 1847 Catholic Armenians (more than 1000) headed by their religious leader Tovmas Isaverdentsi migrated from Nakhijevan to Smyrna. This migration was motivated by the severe economic and religious persecutions common in the whole territory of Eastern Armenia during the rule of Nadir Shah. Some migrants settled in Smyrna, while others with their families scattered around the neighboring cities and settlements like Aydyn, Tira, Bayandyr, Kushada and became engaged in trade, handicrafts, and agriculture. The Catholics' choice of Smyrna as a final point of their destination can be accounted for by the fact that a large number of population of European descendance was concentrated there and the migrants would feel relatively comfortable among them. Moreover, the given region was appealing to migrants because of many European consulates actively working there. Particularly Aydyn, under the auspice of Catholic congregations, turned into a religious-administrative center for the Catholics of Nakhijevan. In the Aegean region, the Armenian migrants from Nakhijevan lost their national traditions in the course of time, forgot their mother tongue, habits and rituals, owing to which they had managed to keep their national identity in their homeland – in Nakhijevan. In the successive decades, particularly in XIX century, all these factors brought about their rapid assimilation with the Catholics that lived in the cities of Ottoman Turkey and Europe.

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ ՀԱՅԵՐԻ ԻՐԱԿԱՆ ԵՎ ԿԵՂԾ ՓՐԿՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ

ՄԱՐՈՒԹՅԱՆ Հ.Տ.

Հարյուրամյա Հայոց ցեղասպանության ժխտողականությունը նույն-պես հարյուր տարեկան է: Այն ունեցել է տարբեր դրսևորումներ, հղկվել է տասնամյակների՝ պետականորեն ուղղորդվող քաղաքականության հետևանքով: Ցեղասպանության 100-ամյակին նախորդող տարում արտաքինապես «փափկել»¹, սակայն մեկ տարի անց² վերահաստատել է իր շարունակականությունը:

Վերջին դարի ընթացքում ժխտողականությունը դրսևորվել է տարբեր հարցերում, տարիներ շարունակ «ամրապնդել» է իր դիրքերը զանազան տեսական հիմնավորումների փորձերով: Շրջանառվող հարցադրումների թվում մարդասիրական արժեքների տեսանկյունից կարևորվում է հայ մարդկանց փրկության խնդիրը Հայոց ցեղասպանության ժամանակ: Նման հարցադրումը նոր չէ, սակայն վերջին ժամանակներս դրա շուրջ շեշտադրումները և անընդհատ քննարկումների տեղիք տալը գուցե թե ինչ-որ չափով պայմանավորված է նաև տարիներ առաջ Թուրքիայի արտաքին գործերի նախարար (ժամանակ անց՝ վարչապետ) Ահմեդ Դավութօղլուի «արդար հիշողության» տեսության առաջ քաշումով, որով, փաստորեն, նույն նժարի վրա են դրվում ցեղասպանության ոճրագործներն ու զոհերը³:

¹ Հմմտ. Turkish Prime Minister Mr. Recep Tayyip Erdoğan published a message on the events of 1915. http://www.mfa.gov.tr/turkish-prime-minister-mr_-recep-tayyip-erdogan-published-a-message-on-the-events-of-1915.en.mfa.

² Turkey eclipses centenary of Armenian massacre by moving Gallipoli memorial. <http://www.theguardian.com/world/2015/apr/16/turkey-armenia-1915-centenary-gallipoli-massacre-genocide>; World leaders join Gallipoli commemoration in Turkey <http://www.aljazeera.com/news/2015/04/world-leaders-remember-gallipoli-centenary-150424060036088.html>.

³ Հարցի շուրջ տե՛ս, օրինակ, **Demoyan H.** “Yes, Mr. Davutoğlu, but...,” available at Museum-G Brief, March 12, 2010. http://www.genocide-museum.am/eng/g_brief_11.php; Akcam T., What Davutoglu Fails to Understand. <http://armenianweekly.com/2010/0519/akcam-davutoglu/>: Հարցի հաջորդող արձարծումներից տե՛ս, օրինակ, “A Just Memory

Այդ գաղափարախոսության շրջանակում շատ «փափուկ» կերպով առաջ է քաշվում այն միտքը, որ թուրքերը (կամ, լայն առումով՝ Հայոց ցեղասպանության իրագործման մեջ ներգրավված մարդիկ) նաև *փրկել են* հայերին: Ու, հետևաբար, առնվազն անհրաժեշտ է շեշտադրումների փոփոխություն՝ քննադատականի կողքին նաև լավը, դրականը մատնանշել: Հարցը, սակայն, այն է, որ այդ կերպ շեշտը հաճախ դրվում է հենց միա՛յն թուրքերի կողմից հայերին փրկելու խնդրին, ա՛յդ երևույթը քարոզելուն:

Ասվածի վերջին դրսևորումներից է «Եվրոպական ինտեգրացիա» հասարակական կազմակերպության (վարչության նախագահ՝ Կարեն Բեքարյան) և «Արմեդիա» տեղեկատվական, վերլուծական գործակալության ուժեղով Միացյալ Թագավորության արտաքին գործերի և համագործակցության երկրների նախարարության օժանդակությամբ՝ «Թուրքը, որ փրկեց ինձ» ծրագիրը⁴ և դրա շրջանակում հավաքված 47 պատմությունները, որոնք հրատարակվել են հայերեն⁵, անգլերեն և թուրքերեն: Ինչպես նշվում է գրքի առաջաբանում, «Ծրագրի նպատակն է որոշակի նպաստ բերել հայ և թուրք ժողովուրդների միջև երկխոսության զարգացմանն ու փոխադարձ վստահության կառուցմանը»⁶: Եվ այդ ճանապարհին Ծրագրի թուրք գործընկերը մի քանի նուրբ դիտարկումներով հարցն ասես տեղափոխում է «արդար հիշողության» հայեցակարգային ծիր. «Ինչևիցե, այս պատմություններն իրականում խոսում են այն բանի մասին, թե ինչպես են նրանք [կենդանի մնացածները-Մ.Հ.] վերապրել ցեղասպանությունը՝ առանց դիվականացնելու թուրքերին: Սա ճանապարհ է հայերի համար՝ ասելու, որ նրանք չունեն նախատրամադրվածություն [կանխակալ կար-

For All”, Article by H.E. Ahmet Davutoğlu, Minister of Foreign Affairs of Turkey, 4 May 2014. http://www.mfa.gov.tr/a-just-memory-for-all-article-by-h_e_-ahmet-davutoglu_-minister-of-foreign-affairs-of-turkey.en.mfa; Davutoglu A., Turkish-Armenian Relations in the Process of De-Ottomanization or “Dehistorization”: is a “Just Memory” Possible? – Turkish Policy Quarterly, Spring 2014, vol. 13, number 1, pp. 21-30; Libaridian G., Commentary on FM Davutoglu’s TPQ Article on the Armenian Issue. <http://turkishpolicy.com/debate-article/Commentary-on-FM-Davutoglu-TPQ-Article-on-the-Armenian-Issue-1>; Khachatourian A., ‘Just memory’: Davutoglu Urges Armenians to Deny the Genocide. – <http://asbarez.com/124462/just-memory-davutoglu-urges-armenians-to-deny-the-genocide/> (June 26, 2014).

⁴ Մանրամասն տե՛ս **Kalafat H.** Story Project Aims to Face the Genocide Without Prejudice, <http://bianet.org/english/minorities/159489-story-project-aims-to-face-the-genocide-without-prejudice> (October 27, 2014): Հմմտ. նույն հեղինակի խոսքը:

⁵ 1915-2015. 100 տարի... Իրական պատմություններ, Ե., 2014:

⁶ Նույն տեղում, էջ 3:

ծիք, նախապաշարմունք - Մ.Հ.] այլ էթնիկական ինքնության նկատմամբ և արտահայտում են իրենց վիշտը: Ես կարծում եմ, որ նրանք, ովքեր իրագործել են [սպանդը - Մ.Հ.] և ովքեր եղել են անտարբեր դիտորդների դերում այս ցեղասպանության նկատմամբ, ունեցել են նույնքան տրավմա, որքան նրանք, ովքեր ենթակա են եղել ցեղասպանության: Այս տրավման վնասել է այս հողի [տարածքի, երկրի-Մ.Հ.] մարդկանց այն աստիճան, որ մենք չենք կարողանում ապաքինվել 100 տարվա ընթացքում»⁷: Նրանից հետո չի մնում Ծրագրի հայկական կողմի պատասխանատուն, որը «արդարություն» և «հիշողություն» հասկացությունները նույնպես քննարկում է «արդար հիշողություն» հայեցակետի շրջանակում⁸:

Հայազգի հետազոտողների մոտեցումները

Թուրքերի կողմից հայերի իրական կամ կեղծ փրկության հարցերին անդրադարձել են տարբեր հետազոտողներ⁹: Եթե փորձենք խմբավորել նրանց վերլուծությունները, ապա դրանք հանգում են հետևյալներին. Ա) «երախտավոր թուրքեր» հասկացության առկայությունն իսկ Հայոց ցե-

⁷ Kalafat H., նշվ. աշխ.:

⁸ Բեքարյան Կ., Ներածական խոսք (100 տարի... Իրական պատմություններ, էջ 5-6):

⁹ [Shirinian G.] Turks Who Saved Armenians: An Introduction. <http://www.zoryaninstitute.org/dialogue/Turks%20Who%20Saved%20Armenians.pdf>; Sarkissian G., The Centennial Commemoration Is About Truth, Memory and Justice, Not Hatred, January 5, 2015 <http://hyetert.blogspot.com/2015/01/the-centennial-commemoration-is-about.html>; Մարության Հ., Հայոց ցեղասպանության և Հրեաների հոլոքոստի հիշողության կառուցվածքային առանձնահատկությունները. [Պատմաբանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), 2011, N 2, էջ 29-30]; Marutyan H. Trauma and Identity: On Structural Particularities of Armenian Genocide and Jewish Holocaust (International Journal of Armenian Genocide Studies, vol. 1, no. 1, 2014, p. 58); Kuciukian P. Why Armenians Should Honour the “Righteous” of the Armenian Genocide, Études arméniennes contemporaines, 2013, N 2, pp. 117-124; Դեմոյան Հ., Արդար թուրքեր. ովքե՞ր են նրանք և ինչո՞ւ են նրանք կարևոր (Museum G-Brief. Electronic Periodical of the Armenian Genocide Museum-Institute, Vol. 8, No. 2), http://www.genocide-museum.am/arm/g_brief_15.php; Shirinian G. Turks Who Saved Armenians: Righteous Muslims during the Armenian Genocide, Genocide Studies International 9, no. 2 (Fall 2015), pp. 208-227; Գրիգորյան Հ., Չանգվածները և զանգվածային բռնությունները. Օսմանյան կայսրության մուսուլման բնակչության մասնակցությունը Հայոց ցեղասպանությանը, Ե., 2017, էջ 172-204: Խնդիրը քննարկված է նաև հետևյալ հրապարակախոսական հոդվածներում, Ջաքոյան Հ., 1915-ին ոչ մի թուրք որևէ հայ երեխայի չի փրկել. նա պարզապես «մարդկային մի խմբից մյուսին երեխաների բռնի հանձնում» է կատարել (Ձայն Համշենական, 2011, N 9-10, սեպտեմբեր-հոկտեմբեր) (<http://www.dzaynhamshenakan.org/pdf/n8687.pdf>): Պապյան Ա., «Թուրքը որ փրկեց ինձ» ծրագիրը կամ Ամեն չնորթված դեռ փրկված չէ (Անդին, 2015, N 1) (goo.gl/PyLP6W).

ղասպանության իրողության համար լրացուցիչ վկայություն է (Ջ. Շիրինյան, Գ. Սարգսյան, Հ. Դեմոյան), Բ) ցեղասպանության քաղաքականությունը պաշտպանել են ոչ բոլոր թուրքերը, Գ) հայերին փրկելու պատմությունները առհավատյան են արիության և առաքինության մարդկային ներուժի (Ջ. Շիրինյան), Դ) առկա են հայերի փրկության համեմատաբար քիչ փաստագրված օրինակներ (Ջ. Շիրինյան), Ե) «երախտավորների պատմություններին ծանոթանալը թուրքերին կօգնի առերեսվելու ցեղասպանության մասին ճշմարտությանը (Ջ. Շիրինյան, Գ. Սարգսյան), Զ) Հայոց ցեղասպանության պարագայում, ի տարբերություն հրեաների հետ առնչվող իրողության, հայ մարդկանց կյանքի փրկության հարցում *անշահախնդիր* լինելու հանգամանքը էապես քիչ էր հանդիպում (Հ. Մարության¹⁰, Ա. Պապյան, Հ. Գրիգորյան), Է) «փրկվածներին», որպես կանոն, կամ առաջարկում (մահվան սպառնալիքի տակ՝ ստիպում) էին մուսուլմանություն ընդունել, կամ կնության էին վերցնում, կամ ենթարկում էին շահագործման՝ որպես աշխատանքային լրացուցիչ ձեռք, կամ օգտագործում էին այլ, բայց գերազանցապես շահադիտական նպատակներով (Հ. Չաքրյան, Հ. Մարության, Ա. Պապյան, Հ. Գրիգորյան), Ը) խնդիր է դրվում Թուրքիայում կազմակերպել հանդիսավոր արարողություն, վերցնել մի բուռ հող թուրք երախտավորների գերեզմաններից և բերել Հայաստան: Խթանելով թուրքական ազգային հպարտության վերաշինումը բարու, օգտակարի հիշողության վրա՝ այդ կերպ պայմաններ են ստեղծվում երկու ժողովուրդների միջև երկխոսության համար (Պ. Քյուչուքյան), Թ) հայերի փրկության դեպքերի վրա չափազանց կենտրոնանալու պարագայում նկատելի է, որ գործ ունենք Հայոց ցեղասպանության բուն թեմայից շեղելու՝ դեպի երկրորդական թեմա տանելու հստակ մարտավարության հետ: Նման շեշտադրումները նպատակ ունեն իրագործված ցեղասպանության թեմայի համատեքստում փրկության պատմությունները դարձնելու գերակա և առաջնային (Հ. Դեմոյան), Ժ) այն դեպքերը, երբ հայերի կյանքը փրկել են վերջիններիս շահագործելու, նրանց ունեցվածքը բռնագրավելու, կրոնափոխ անելու և այդ կերպ ինքնությունը ոչնչացնելու համար, չեն կարող համարվել փրկու-

¹⁰ Խնդրին անդրադարձել ենք մի շարք գիտաժողովներում ներկայացրած զեկուցումներում (Ինդիանայի համալսարան, 4-5 ապրիլի 2014 թ., Նեբրասկա-Լինքոլնի համալսարան, 19-20 մարտի 2015 թ., ՀՀ ԳԱԱ, 15-16 ապրիլի 2015 թ., Բուդապեշտի Պազմանի Պիտեր կաթոլիկ համալսարան, 19-21 ապրիլի 2017 թ.):

թյան դեպքեր. դրանք ցեղասպանական գործողություն են՝ համաձայն ՄԱԿ-ի՝ Ցեղասպանության կանխարգելման և դրա համար պատժի կոնվենցիայի դրույթների (Հ. Դեմոյան, Ա. Պապյան), ԺԱ) իրական փրկության օրինակ է այն դեպքը, երբ թուրք անհատը կամ մի ողջ թուրք ընտանիք, ընդդիմանալով հայերին բնաջնջելու պետական ծրագրին, վտանգի տակ դնելով սեփական կյանքը, հայերին թաքցրել կամ նրանց փրկել է տեղահանությունից կամ անշահախնդիր օգնել է փրկվելու անխուսափելի մահից (Հ. Դեմոյան), ԺԲ) Մեծ եղեռնի տարիներին այնքան մեծ էր բռնի իսլամացած հայերի («փրկվածների») թիվը, որ Սևրի պայմանագիրն առանձին՝ 142-րդ հոդվածով անդրադարձել է բռնի հավատափոխ արված հայերին և հռչակել, որ 1914 թ. նոյեմբերի 1-ից հետո կատարված հավատափոխությունները պետք է դիտարկել անվավեր և անօրինական (Ա. Պապյան), ԺԳ) հայերին փրկողների մեջ առանձնացվում են յոթ խմբեր (Ջ. Շիրինյան), ԺԴ) հայերին փրկելու դրդապատճառների մեջ առանձնանում են ընկերությունը, աստվածավախությունը, մարդասիրությունը, այլասիրությունը, քաջությունը (Ջ. Շիրինյան):

Գիտական առումով հարցին ավելի քան երկու տասնամյակ առաջ ընդարձակ *ուղենշային* հոդվածով անդրադարձել է պրոֆ. Ռիչարդ Հովհաննիսյանը: Նրա աշխատանքը շարադրված է ցեղասպանության ականատես-վերապրողների պատմությունների՝ ինչպես քանակական, նույնպես և որակական տվյալների վերլուծության վրա¹¹:

«Փրկություն» բառեզրի յադվաշեմյան մեկնաբանությունը

Բնավ դեմ չլինելով այն իրողությանը, որ ոչ քիչ թվով թուրքեր/քրդեր փրկել են հայերին՝ նախ և առաջ նպատակահարմար է անդրադառնալ հենց *փրկության*, որպես երևույթի, խնդրին՝ հարցը դիտարկելով *ավելի համակարգված*, տվյալ պարագայում՝ առաջնորդվելով մեկ, որոշակի, այն է՝ *համեմատական մեթոդաբանությամբ*: Ուստի անհրաժեշտություն է առաջանում հասկանալ, թե ի՞նչ է նշանակում «փրկություն» բառեզրը, ի՞նչ ընդգրկում ունի այն: Նկատենք, որ ամեն մարդ յուրովի է մեկնաբանում այս բառը: «Փրկություն» կարող է որակվել «սպասվող կոտորածի մասին տեղեկացնելը», «չսպանելը», «մյուսներին սպանելը, բայց կոնկրետ

¹¹ **Hovannisian R.** Intervention and Shades of Altruism during the Armenian Genocide. In: The Armenian Genocide: History, Politics, Ethics (ed. by Richard G. Hovannisian), New York, 1992, pp. 173-207.

որևէ մարդու ձեռք չտալը», «ստիպմամբ, հաճախ մահվան սպառնալիքի տակ կրոնափոխ լինելը ու, այդպիսով, մահվանից խուսափելը», «սեռական բռնությունների ու շահագործման ենթարկվելը ու կենդանի մնալը», «հարազատներին սպանողի կամ նրա ժառանգի հետ ամուսնանալը և երեխաներ ունենալը», «ծառայությունը ոճրագործի տանը ու մի կերպ գոյությունը պահպանելը», «ոճրագործի տնտեսությունում ամիսներ-տարիներ աշխատելը և նրա համար տնտեսական շահ ապահովելը», «մոտալուտ մահվան պատճառով երեխային օտարներին «նվիրելը» և այլն: Այսպիսով, իրոք որ խնդիր է, թե ինչպես որակել «փրկություն» երևույթը: Ո՞րն է այն մաղը (մաղերը), որը թույլ կտա տարանջատել «իսկական» փրկությունը «կեղծ» փրկությունից: Նախ, խնդրին անուղղակիորեն անդրադարձ է կատարված «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» 1948 թ. դեկտեմբերի 9-ի կոնվենցիայում, մասնավորապես նրա երկրորդ հոդվածում, որտեղ նշվում է, որ՝ «Սույն Կոնվենցիայում ցեղասպանություն նշանակում է հետևյալ գործողություններից ցանկացածը՝ կատարված ազգային, էթնիկական, ցեղական կամ կրոնական որևէ խմբի, որպես այդպիսին, լրիվ կամ մասնակի ոչնչացման մտադրությամբ. (ա) այդ խմբի անդամների սպանությունը, (բ) այդ խմբի անդամներին մարմնական լուրջ վնասվածքներ կամ մտավոր վնաս պատճառելը, (գ) որևէ խմբի համար կյանքի այնպիսի պայմանների միտումնավոր ստեղծումը, որոնք ուղղված են նրա լրիվ կամ մասնակի ֆիզիկական ոչնչացմանը, (դ) այդ խմբի միջավայրում մանկածնությունը կանխելուն միտված միջոցների իրականացումը, (ե) երեխաների բռնի փոխանցումը մարդկային մի խմբից մյուսին»¹²: Այս հոդվածի երկրորդ և չորրորդ կետերը լրացուցիչ մեկնաբանություն ստացան 2008 թ. հունիսի 19-ին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1820-րդ բանաձևում, որտեղ նշվում էր, որ ռազմական բախումների ու ցեղասպանությունների համատեքստում իրականացվող բռնաբարությունները և սեռական այլ բռնությունները կարող են համարվել պատերազմական հանցագործություն, հանցագործություն մարդկության դեմ կամ ցեղասպանության իրականացման բաղկացուցիչ գործողություն¹³:

¹² http://www.un.org/res/un%20Treaties/III_1.pdf.

¹³ “Rape and other forms of sexual violence can constitute war crimes, crimes against humanity, or a constitutive act with respect to genocide”. United Nations Security Council, Resolution 1820 (2008), Adopted by the Security Council at its 5916th meeting, on 19 June

Երկրորդ, խնդրի լուծման ուղիների մասին հուշում կա պրոֆ. Հովհաննիսյանի վերոնշյալ հոդվածում: Նա գրում է. «Հետագա հետազոտությունը կարող է թույլ տալ որոշ սրբագրումներ իրականացնել դրդապատճառների կատեգորիաներում և օգնել ընդլայնելու առարկայի մասին մեր իմացությունը: Օգտակար կարող են լինել, օրինակ, դիսկը, բեռը, և հայերին թաքցնելու [թաքստոց տրամադրելու] արժեքները գնահատելը: Բարոյական լուրջ խնդիրներին նույնպես պետք է անդրադառնալ: ...Համեմատական մոտեցումը, անկասկած, կարող է օգտակար լինել այս հաշվարկներն իրականացնելու համար, քանի որ արդեն Հոլոքոստի կապակցությամբ էապես նշանակալի նյութ է մշակվել [ընդգծումը մերն է–Մ.Հ.]»¹⁴:

Իսկ ի՞նչ է հուշում հրեից փորձը: Հայտնի է, որ Հրեից հոլոքոստի թանգարան և հետազոտական կենտրոն Յադ Վաշեմը հիմնադրվել է Հոլոքոստի զոհ 6 միլիոն հրեաների մասին հիշողությունը հավերժացնելու նպատակով: Յադ Վաշեմի սկզբունքային պարտականություններից մեկը Իսրայել պետության և հրեա ժողովրդի երախտագիտության փոխանցումն է այն ոչ-հրեաներին, որոնք վտանգեցին իրենց կյանքը՝ փրկելու համար հրեաներին Հոլոքոստի ժամանակ: Այս առաքելությունը որոշված է Յադ Վաշեմի հիմնադրման օրենքով: 1963 թ. թանգարանի Հիշողության (Հիշատակման) իրավասու մարմինը ձեռնամուխ եղավ համաշխարհային ընդգրկում ունեցող մի ծրագրի իրագործմանը, որը կոչված էր «Ժողովուրդների (մարդկանց) միջի երախտավորի» տիտղոսը շնորհելու այն քսերին, որոնք հրեաներին օժանդակեցին նրանց պատմության ամենադժնդակ տարիներին¹⁵:

Այդ տիտղոսը շնորհելու հիմնարար պայմաններն են՝ 1. փրկողի *ակտիվ ներգրավվածությունը* մեկ կամ մի քանի հրեաների մահվան կամ մահվան ճամբարներ աքսորվելու վտանգից փրկելու գործին, 2. *փրկողի կյանքը, ազատությունը կամ պաշտոնը վրանգելը*, 3. երբ առաջնային շարժառիթը հետապնդվող հրեա անհատին օգնելու միտումն է, այսինքն,

2008. St'u Security Council Demands Immediate and Complete Halt to Acts of Sexual Violence Against Civilians in Conflict Zones, Unanimously Adopting Resolution 1820 (2008). <http://www.un.org/press/en/2008/sc9364.doc.htm>. St'u նաև Rape: Weapon of War, <http://www.ohchr.org/en/newsevents/pages/rapeweaponwar.aspx>.

¹⁴ Hovannisian R., նշվ. աշխ., էջ 197-198:

¹⁵ The Righteous Among the Nations: About the Program <http://www.yadvashem.org/yv/en/righteous/program.asp>.

օգնություն *ոչ թե վճարի կամ որևէ այլ պարգևի (հատուցման) դիմաց*, որպիսին կարող է լինել, օրինակ, փրկված անհատի կրոնափոխությունը կամ որդեգրումը և այլն, 4. օգնություն ստացած մարդկանց *վկայության կամ էլ դրան հավասարազոր փաստաթղթերի առկայությունը*, որը հաստատում է փրկության բնույթը և դրա իրականացման դրդապատճառները¹⁶:

Արդյո՞ք հրեաներին փրկողներից բոլորն էին ստանում «Մարդկանց (ժողովուրդների) միջի երախտավորներ» տիտղոսը: Ո՛չ: Հրեաների փրկությունն ունի բազմաթիվ ձևեր և ներգրավվածության և ինքնազոհաբերության դրսևորումներ: «Երախտավորի» տիտղոսը նրանց համար է միայն, ովքեր ակտիվորեն վտանգում էին իրենց կյանքը կամ ազատությունը՝ հրեաներին փրկելու հալածանքից կամ մահվան սպառնալիքից: Առկա է մարդկանց ավելի լայն շրջանակ, որոնք օժանդակում էին հալածված հրեաներին, սակայն նրանց օժանդակությունն իր մեջ ռիսկի գործոն չէր կրում: Այդ մարդասեր մարդիկ վայելում են հրեա ժողովրդի գնահատանքը, և նրանց գործերը փաստաթղթավորված են հենց հրեաների կողմից: Այնուամենայնիվ, նույնիսկ եթե նրանց օգնությունը որոշիչ էր հրեա մարդկանց գոյատևման համար, *ռիսկի գործոնի բացակայության պայմաններում*, նրանց գործունեությունը չի գնահատվում «երախտավորների» ինստիտուտի շրջանակում¹⁷:

Արդյո՞ք Յադ Վաշեմը «երախտավոր» է համարում *բոլոր* նրանց, ովքեր իրենց կյանքները վտանգի ենթարկելով՝ փրկել են հրեաներին Հոլոքոստի ժամանակ: Ո՛չ: «Ժողովուրդների (մարդկանց) միջի երախտավորները» *միայն ոչ-հրեա մարդիկ են*, որոնք իրենց կյանքը և ազատությունը ռիսկի տակ են դրել և փրկել են հրեաներին Հոլոքոստի ժամանակ: *Տիտղոսը չի տրվում, եթե փրկության շարժառիթը, հրեա մարդու փրկությունից զատ, այլ բան է:* Նման շարժառիթներ կարող են լինել՝ ա) ֆինանսական օգուտը, բ) փրկված անձանց կրոնափոխության ցանկությունը կամ արդեն իսկ կրոնափոխված հրեաների պաշտպանությունը, քանի որ նրանք դիտվում են իբրև քրիստոնյաներ, և փրկողները գիտակցում են, որ պետք չէ նրանց դիտել, նրանց հետ վերաբերվել իբրև հրեաների, գ) հրեա երեխայի փրկությունը՝ նրան որդեգրելու նպատակով, դ) փրկությունը՝ իբրև դիմադրական

¹⁶ The Righteous Among the Nations: FAQ <http://www.yadvashem.org/yv/en/righteous/faq.asp>.

¹⁷ Նույն տեղում:

կամ ռազմական գործողության արդյունք, որը նպատակաուղղված չէր հենց հրեաների փրկությանը¹⁸: «Երախտավորի» տիտղոսը չջնորհելու մեկ այլ պատճառ կարող է լինել այն, որ *մեկ կամ մի քանի հրեաներ փրկող անձը ներգրավված է մարդասպանությունների, պատերազմական հանցագործությունների մեջ կամ վնաս է պատճառում այլ մարդկանց*¹⁹:

Կարծես թե ամեն ինչ շատ հստակ է: Կա որոշակի մեթոդաբանություն, այն կիրառվում է ավելի քան կես դար, այսինքն՝ փրկության հետ կապված բոլոր պատմություններն անցնում են այս «մաղով»: Այս ժամանակահատվածում «Ժողովուրդների (մարդկանց) միջի երախտավորների» պատվավոր կոչումը ստացել է ավելի քան 26.500 մարդ: Եվ այս համակարգը ընդունելի է ոչ միայն հրեաների համար, այլ նաև ճանաչվում է աշխարհի կողմից:

Եթե հրեից պարագայում գործում են այս ինստիտուտի դրույթները, ապա ինչու՞ դրանք չեն կարող գործել հայոց պարագայում: Հիշենք, որ Հայոց ցեղասպանության (1915-1923) ավարտից ընդամենը տասը տարի անց սկսվեց Հրեից հոլոքոստը (1933-1945), որն իր գաղափարախոսական և տնտեսական դրդապատճառներով, իրականացման մեխանիզմներով շատ ընդհանրություններ ուներ XX դ. առաջին ցեղասպանության հետ:

«Երախտավորների» ինստիտուտի բացակայությունը հայոց մեջ. հնարավոր պատճառները

Սակայն հայոց պարագայում դեռևս բացակայում է «Ժողովուրդների (մարդկանց) միջի երախտավորի» ինստիտուտը: Պատճառները, թերևս, մի քանիսն են: Բանն այն է, որ ԽՍՀՄ-ում ու Խորհրդային Հայաստանում Հայոց ցեղասպանության իրողության նկատմամբ քաղաքականությունը չի եղել միագիծ, այլ փոփոխվել է ժամանակի ընթացքում: Այսպես, խորհրդային կարգերի հաստատվելուց հետո Հայաստանում եղեռնի մասին խոսակցություններն աստիճանաբար լռեցին, ընդհանրապես հայ-թուրքական հակամարտությունը հիշելը ոչ միայն չէր խրախուսվում, այլ նաև հետապնդվում էր: Ստալինյան բռնապետության տարիներին եղեռնի կամ Արևմտյան Հայաստանի մասին բարձրաձայն արտահայտված մտքերը, որպես կանոն, որակվում էին իբրև ազգայնականության դրսևորումներ ու պատժվում բանտարկությամբ, աքսորով կամ գնդակահարությամբ: Իրավիճակն սկսեց

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ Նույն տեղում:

աստիճանաբար փոխվել 1950-ական թթ. երկրորդ կեսից՝ պայմանավորված խրուշչովյան «ձնհալով», որի բարձրակետն էին 1965 թ. ապրիլի 24-ի՝ Հայոց ցեղասպանության 50-ամյակը նշելու ժամանակ Երևանում տեղ գտած զանգվածային ելույթները: Այդ ելույթները, ինչպես և դրանց նախորդող ու հաջորդող՝ գրականության ու արվեստի մեջ ցեղասպանության թեմայի նկատմամբ հետաքրքրության կտրուկ աճը վկայում են, որ ցեղասպանության հիշողությունը, չնայած այն լռության մատնելու պաշտոնական քաղաքականությանը, շարունակում էր ապրել մարդկանց հոգիներում և գիտակցության մեջ: Սակայն այդ հիշողության մեջ հայերը բացառապես ներկայացվում էին որպես անմեղ զոհ, որը կորցրել է իր պատմական հայրենիքի մեծ մասը և կարիք է զգում կարեկցանքի, այսինքն՝ այս կամ այն կերպ շեշտադրվում էր լոկ ցավի, կորստի, զոհի հիշողությունը: Ձոհի, որին վերջնական ոչնչացումից փրկեց բուլնիկյան կուսակցությունը (Կարմիր բանակը), այն է՝ Խորհրդային Ռուսաստանը: Համեմատաբար ինքնուրույն ներքին և արտաքին քաղաքականություն վարելու հնարավորություն Հայաստանն ունեցավ միայն անկախության նվաճումից հետո: Եվ անգամ այս վերջին քառորդ դարի ընթացքում նման հարցադրում չարվեց: Պատճառներից կարևորագույնը թերևս այն է, որ առ այսօր ցեղասպանություն իրականացնող պետության իրավահաջորդները չեն ընդունում իրենց մեղքը, ավելին, պետակա՛ն մակարդակի վրա է դրված Հայոց ցեղասպանության ժխտումը: Մի քաղաքականություն, որը շարունակվում է գրեթե մեկ դար: Եվ ցեղասպանությունն ուսումնասիրող հայ գիտնականների մի զգալի մասը զբաղված է Հայոց ցեղասպանության իրողությունը աշխարհին *ապացուցելով*²⁰:

Նման պայմաններում բնական է թվում, որ հետազոտողների կողմից լուրջ և հետևողական քայլեր չեն ձեռնարկվում հայերին փրկող թուրք երախտավորների ինստիտուտ ստեղծելու ուղղությամբ: Գրվում է առանձին օրինակների մասին, սակայն երևույթի համակարգային, քննական դիտարկումը բացակայում է: Պատճառներից մեկն էլ, թերևս, այն է, որ հայկական իրականության մեջ, Հոլոքոստի համեմատությամբ, շատ ավելի

²⁰ Հարցի շուրջ մանրամասն տե՛ս **Marutyan H.** Museums and Monuments: Comparative Analysis of Armenian and Jewish Experiences in Memory Policies (*Études Arméniennes Contemporaines*, N 3, Juin 2014; **Juifs**, Arméniens: un siècle d'État, p. 67, ինչպես նաև **Մարության Հ.**, Թանգարան և հուշարձան (հայոց և հրեաների փորձառության համեմատական վերլուծություն) (ՊԲՀ, 2014, N 3, էջ 67-68):

քիչ են պատշաճ կերպով հավաքված ու ժողովածուների ձևով հրատարակված Հայոց ցեղասպանության ականատես-վերապրողների պատմությունները²¹։ Բացառություն են կազմում Վերժինե Սվազյանի կողմից 1955թ. հետո հավաքված պատմությունները պարունակող ժողովածուները²²։ Ընդամենը վեց տարի առաջ էր, որ հրատարակվեցին 1916-1917 թթ. հայ գաղթականության մեջ իրականացված փաստահավաք աշխատանքների շնորհիվ իմի բերված շուրջ 600 վկայությունները²³։ Սրանք առանձնապես կարևորվում են, քանի որ արձանագրված են 1915 թ. զանգվածային կոտորածներից ու տեղահանությունից անմիջապես հետո և վերապրողների պատմություններում ֆիքսված են շատ իրողություններ, որոնք ժամանակի ընթացքում երբեմն կորցնում են իրենց կարևորությունը, թվում են մանրուքներ ու ոչ պատշաճ կերպով են հրամցվում բանահավաքներին։ Ներկա հոդվածը պատրաստելիս օգտվել ենք հենց այս վերջին հրատարակության մեջ տեղ գտած նյութերից։

Ինչպես վերը նշվեց, Հայոց ցեղասպանության պարագայում դեռևս բացակայում է «ժողովուրդների (մարդկանց) միջի երախտավորների» ինստիտուտը, ինչը, սակայն, բնավ չի խանգարում, որ *գործեն այդ ինստիտուտի դրույթները*, որոնց կիրառմամբ կարող է հստակեցվել հայերին փրկած

²¹ Ոչ ամբողջական մատենագիտությանը կարելի է ծանոթանալ հետևյալ, ցայսօր շարունակվող հրատարակության մեջ՝ **Իսկահատեան Յ.**, Վկայարան հայկական ցեղասպանության, գիրք Ա-Զ, Պեյրուֆ, 2010-2016: Բնութագրական է, որ Ռիչարդ Հովհաննիսյանի հետազոտության համար հիմք ծառայած 527, ապա դրանցից ընտրված 183 պատմությունները նույնպես չեն հրատարակվել (Տե՛ս **Hovannisian R.**, նշվ. աշխ., էջ 175-176, 196-197):

²² Տե՛ս **Սվազյան Վ.**, Մեծ եղեռն. արևմտահայոց բանավոր վկայություններ, Ե., 1995, **նույնի՝** Հայոց ցեղասպանություն. ականատես վերապրողների վկայություններ, Ե., 2000, **նույնի՝** Հայոց ցեղասպանություն. ականատես վերապրողների վկայություններ (երկրորդ, համալրված հրատարակություն), Ե., 2011: Վերջին աշխատության մեջ իմի են բերված ականատես-վերապրողների 315 պատմություն, որոնցից երկուսը գրանցված են 1915-1922 թթ. միջակայքում, ևս երկուսը՝ համապատասխանաբար 1940 և 1947 թթ.:

²³ Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ: Փաստաթղթերի ժողովածու (զլխ. խմբ. Վիրաբյան Ա.), Հայաստանի ազգային արխիվ, հ. 1-3, Ե., 2012 (այսուհետև՝ ՀՅԹՎՎՓԺ): 2005 թ. հրատարակվել էր փաստաթղթերի փոքր մասը: Տե՛ս նաև Վշտապատում: Հայոց մեծ եղեռնը ականատեսների աչքերով, Ե., 2005, The Armenian Genocide by Ottoman Turkey, 1915. Testimonies of Survivors. Collection of Documents (editor in chief Virabyan A.), Yerevan, 2013; Геноцид армян в Османской империи. Свидетельства выживших очевидцев: сборник документов (сост. Вирабян А., Авакян Г.), М., 2014.

երախտավորների շրջանակը՝ եթե ոչ անվանապես, ապա գոնե ընտրության սկզբունքները որոշելու իմաստով: Եվ վերը նշված ժողովածուները լավագույնս կարող են օժանդակել այդ խնդրի լուծմանը, քանի որ դրանցում հավաքված պատմությունները ընտրված չեն որևէ սկզբունքով, դրանք ընտրելիս բացակայել են թեմատիկ ուղղորդումները, ինչպես որ արվել է, օրինակ, «Թուրքը, որ փրկեց ինձ» ծրագրի պարագայում:

Հասկանալի է, որ վերապրողների պատմությունները այնպես գրված չեն, որ հարյուր տարի անց ուղղակիորեն պատասխանեն նյութի որոշակի դասակարգմամբ հետաքրքրված հետազոտողների հարցերին²⁴: Որոշ դեպքերում մեր եզրակացություններն արվում են՝ ելնելով տվյալ պատմության կամ այդ նույն բնակավայրում առկա իրավիճակի ընդհանուր ենթատեքստից: Շատ դժվար է հստակ որոշել պատմություններում նշված միջամտությունների ընդհանուր քանակը, քանի որ կան պատմություններ, որոնց մեջ նկարագրվում են մի քանի՝ մեկը մյուսին հաջորդող և մեկը մյուսից տարբեր ուղղվածության միջամտություններ: Փորձ է արվել հետևել պրոֆ. Հովհաննիսյանի առաջ քաշած «փրկության» շարժառիթների ձևակերպումներին, այն է՝ *սեռական, տնտեսական շահագործում, կրոնական, հումանիտար բնույթի* (բոլորը՝ ենթաբաժիններով), սակայն իրականացվել են նաև որոշ խմբագրական միջամտություններ, որոնք միտված են հստակեցումների:

Զգուշացումներ սպասվող կոտորածի մասին

Պատմություններում հանդիպում են շուրջ 30 միջամտություն, երբ *սպասվող կոտորածի մասին տեղեկատվության* շնորհիվ մարդիկ են փրկվել: Տեղեկատվությունը հաղորդում են գայմագամից սկսած մինչև հարևանուհի: Սակայն, ինչը առաջարկվող մոտեցման համատեքստում ամենակարևորն է, դրանցից և ոչ մեկը կարծես թե չի պարունակել *ոխկի գործոն* առնվազն տեղեկատվություն հաղորդողի կյանքի կամ ազատությամբ

²⁴ Ինչպես նկատել է պրոֆ. Հովհաննիսյանը, «Հայոց ցեղասպանության ժամանակ տեղ գտած այլասիրության դրսևորումների որոնումներում, հակառակ Հոլոքոստի հետազոտության, առկա են որոշ անհաղթահարելի խոչընդոտներ: Քանի որ ի պաշտպանություն հայերի որոշակի քայլերի դիմած մարդիկ արդեն այն ժամանակ հասուն տարիքում էին, որպես կանոն, 40-60 տարեկանի միջև, նրանցից և ոչ մեկն այլևս կենդանի չէ: Այսինքն, որևէ հնարավորություն չկա հարցնել նրանց՝ հայերին փրկելու իրենց շարժառիթների մասին... Հետևաբար, մենք պետք է ամբողջությամբ վստահենք [ապավինենք] հենց վերապրողների փոխանցած տեղեկատվությանը, որոնց մեծ մասը 1915 թվականին երեխաներ էին (Hovannisian R., նշվ. աշխ., էջ 174):

յան համար, նաև բացակայում են ակնարկներ, որ այդ տեղեկության համար (թեկուզ հայտնված գաղտնի կամ անուղղակի) այդ մարդը կարող էր վտանգել իր պաշտոնական դիրքը: Հետևաբար, նման տեղեկատվությունները, չնայած դրանց շնորհիվ մարդիկ են փրկվել, «երախտավորների» ինստիտուտի չափանիշներով չեն համարվում փրկություն: Բերենք մի քանի օրինակ. «Առեղցի [գյուղը Վանի գավառում է] Միրզա Ռաշիտի կին Սիսեն կոտորածէն երկու ամիս առաջ նոյն գիւղացի Աբրահամ Գասպարեանին ըսաւ (մարտի 15-ին). «Ինչո՞ւ գարի կը ցանես, որոշում կայ՝ ձեզ պիտի կոտորեն, ձեր գլխու ճարը տեսէք, ի զուր մի՛ աշխատիք»: Այսպէս զգուշացուցեր է հայերը նոյնպէս նոյն գիւղացի քրտուիին՝ Դատոյի կին Կուդրաթը»²⁵, «Մայիսի 15-ի գիշերը մեր գիւղը պաշարեցին: Պաշարողներէն մի քանի քիւրտեր իրենց բարեկամներին իմաց տուին, որ փախչեն, կոտորածից ազատուեն: Այսպէս Քունջօ անունով քիւրտը մեզ յայտնեց, որ ժամ առաջ փախչենք, քանի գիւղին մէջը չեն թափած...: Կոտորեցին 50 անձ, որոնք չկարողացան գաղտնի փախչիլ»²⁶:

Հանդիպում են պատմություններ, երբ նախօրոք արված զգուշացումների շնորհիվ տղամարդիկ (այդ թվում և երբեմն էլ զինված, ինքնապաշտպանության պատրաստ տղամարդիկ) փրկվում են (կամ որոշ ժամանակ անց սպանվում, որին հաջորդում են զինված ներխուժումը գյուղ և անգնե բնակչության կոտորածը²⁷: Այսինքն, վաղօրոք փոխանցված տեղեկությունը սպասվող կոտորածի մասին, մտածված կամ ոչ, սակայն գուցե նաև, որոշ դեպքերում, նպատակ էր հետապնդում չեզոքացնել հայերի հնարավոր ինքնապաշտպանությունը, ապահովել կոտորածի «անվտանգությունը» այն իրականացնողների համար:

Փրկության խոստումներն ու դրանց իրականացման ձևերը

Պատմությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ էական գործոն է դառնում «փրկության խոստումը»: Դրանց մեջ առանձնանում են հետևյալ տիպի գործողությունները. ա) փրկության խոստում, դրա իրականացում շատ կարճ ժամանակով, ապա դրժում, որին հաջորդում են բռնություններ (թալան, բռնաբարություն, սպանություն), բ) փրկության խոստում, դրա իրականացում որոշակի ժամանակահատվածում, և ապա, «փրկողների»

²⁵ Վանի գավառի Առեղ գյուղ (ՀՅԹՎՎՓԺ, հ. 1, էջ 154):

²⁶ Բիթլիսի գավառի Մցու գյուղ (ՀՅԹՎՎՓԺ, հ. 2, էջ 79):

²⁷ Տե՛ս, օրինակ, ՀՅԹՎՎՓԺ, հ. 1, էջ 65-66, 80, 82, 340:

համար դիսկի գործոնի մեջտեղ գալու պարագայում դրա դրժում, որին հաջորդում են բռնություններ (թալան, բռնաբարություն, սպանություն), գ) «փրկության» պայմանավորումը փոխադարձության սկզբունքով («մենք փրկում ենք ձեզ՝ պայմանով, որ հետո էլ դուք եք փրկում մեզ»), որն ինչ-ինչ պատճառներով չի իրականացվում, դ) փրկության խոստում դրամի/կաշառքի դիմաց, որին հաջորդում է սպանություն, ե) փրկության խոստում դրամի դիմաց, որին հաջորդում է փրկությունը, ինչը, սակայն, չի համարվում փրկություն՝ «երախտավորների» ինստիտուտի չափանիշներով: Այսինքն, փրկության գործոնի խաղարկումը դառնում է միջոց կոտորածի համար, «լավագույն» դեպքում՝ «փրկողների» հարստանալու միջոց:

Պատմություններում արձանագրվել է 30 միջամտություն, երբ հայերը, հավատալով թուրք, քուրդ կամ չերքեզ հարևանների, ծանոթների, ընկերների, բարեկամների խոստումներին, որ իրենց կփրկեն՝ գնացել են նրանց մոտ պատսպարվելու, սակայն այդ «բարեկամները» խոստումները դրժել ու սպանել են իրենց մոտ թաքնված հայերին: Որոշ դեպքերում այդ խոստումները հնչեցվել են բեկերի (որոնց հարկատու էին տվյալ գյուղի հայերը), որոշ դեպքերում՝ տեղական կառավարական իշխանությունների կողմից: Այսինքն, եթե առաջնորդվենք Ռ. Հովհաննիսյանի առաջարկած եզրութաբանությամբ, եղել են միջամտություններ՝ ուղղված փրկությանը կամ կեղծ փրկությանը, փրկել են մի քանի ժամով կամ օրով, որին, սակայն, հաջորդել է «փրկվածների» սպանությունը: Բերենք համեմատաբար բնութագրական օրինակներ.

Փրկության խոստումներ անհապնների կողմից, դրանց դրժում, «փրկվողների» սպանություն. «Այդ օր մինչև երեկոյին մեր գիւղէն սպաննեցին 70 տղամարդ, 10 հատ կին և վեց հատ ալ կին իրենց երեխաներով ձգեցին կրակի մէջ և այրեցին, ինչպէս Նազօն, Անթառամը, Մարիամը և այլն: Պազա քիւրտերէն մէկը Ռզկօն եկաւ մեր տունը, հայրս կանչեց և ըսաւ. «Երթանք մեր տուն, ես քեզի կը պահեմ, անհոգ եղիր»: Խաբեց հայրս, տարաւ իրենց գիւղը և սպաննեց»²⁸: *Փրկության խոստումներ գյուղական և շրջանային ղեկավարության կողմից կամ անունից, դրանց դրժում, «փրկվողների» սպանություն.* «Մեր գիւղը կը բաղկանար 40 տուն զուտ հայերէ: Մեր գիւղին կոտորածը սարքեց շէյխ Նասըր՝ Բագիջան գիւղացի, Աւետման օրը: Ոչ մի դիմադրութիւն չեղաւ, որովհետև շէյխը խաբեց մեզ՝ ըսելով, թէ՛

²⁸ Վանի գավառի Աստվածածին գյուղ (ՀՅԹՎՎՓԺ, հ. 1, էջ 120):

եկէ՛ք իմ գիւղը, ձեզ կը պաշտպանեն: Երբ ամէնքս անոր քովն ապաստանեցանք, նա կոտորեց տղամարդիկը (ճիշտ թիւը չգիտեմ), իսկ կանայք թողեց անտէր»²⁹:

Այս 30 միջամտություններից բերենք այն դեպքերի բնութագրական օրինակները, որոնք դրսևորվել են *փրկության խոստումի՝ ինչ-ինչ ձևերով իրականացման ընթացքում, երբ «փրկողների» համար մեջտեղ է գալիս ռիսկի գործոնը, և դրան հաջորդում է խոստման դրժումը, որն ուղեկցվում է բռնություններով՝ թալան, բռնաբարություններ, սպանություններ*. «Մեր դրացի քիւրտերը, իրանց տուած պայմանի համաձայն, պաշտպանում էին մեզ, որ մենք էլ ռուսերի դէմ նրանց պաշտպանէինք, իսկ երբ տաճիկ կառավարութիւնը մտադրեց հայերիս կոտորել և այր մարդիկ գիւղից հեռացան, այն ժամանակ նրանք դաւաճանեցին մեզ՝ գրաւելով մեր ստացուածքը ու գեղեցիկ կանանց իրանց մէջ բաժանելով»³⁰, «Վարդավառի օրը... Տեսանք, որ Մուշ քաղաքի հայկական թաղը վառում է: Վառուեցին նոյնպէս հարևան Խասգիւղ և Մկրագոմ գիւղերը: Այդ միևնոյն ժամանակ հարևան Դեղձ գիւղի քիւրտերը թափուեցին մեր գիւղ և յայտնեցին, որ՝ հայեր, հրամայուած է բոլորիդ բնաջինջ անել: Եթէ ցանկանում էք ազատուիլ, եկէ՛ք մեր գիւղը և մենք կը պաշտպանենք ձեզ: ...Ստիպուած էինք գնալու, ու անմիջապէս մեր գերդաստանով տեղափոխուեցինք Դեղձ: Հետևեալ օրը նոյն քիւրտերը ասացին՝ «Հայե՛ր, Մշոյ կողմից տէրութեան զօրքը հայերին սպաննելով, այրելով գալիս է, մանաւանդ տղամարդկանց: Տղամարդիկդ փախէ՛ք լեռները, պահուէ՛ք, իսկ կանանց և երեխաներին կարող ենք պաշտպանել»: Երբ տղամարդիկ գիւղից հեռացան, այդ գիւղի գինուած քիւրտերն էլ նրանց ետևից գացին ու սկսեցին տմարդօրէն կոտորել նրանց... Գեղեցիկ կանանց ու աղջիկներին բռնաբարեցին, իսլամացրին և իրանց կին դարձրին»³¹:

1915 թ. գարնանը ռուսական զորքերը և հայկական կամավորական ջոկատները մեծ հաջողություններ էին գրանցում Արևմտյան Հայաստանի տարածքում: Այդ իսկ պատճառով մի շարք հայկական ու քրդական և չերքեզական հարևան բնակավայրերի միջև ձեռք են բերվում *նախնական պայմանավորվածություններ, որ քրդերը կպաշտպանեն հայերին մյուս*

²⁹ Վանի գավառի Դիլան գյուղ (ՀՅԹՎՎՓԺ, հ. 1, էջ 244):

³⁰ Բիթլիսի գավառի Մուշեղեն գյուղ (ՀՅԹՎՎՓԺ, հ. 2, էջ 75):

³¹ Մուշի գավառի Երըշտեր գյուղ (ՀՅԹՎՎՓԺ, հ. 2, էջ 241-242):

քրդերից և թուրքերից, իսկ ռուսների՝ իրենց տարածքները գրավելու պարագայում՝ հայե՛րը կպաշտպանեն իրենց հարևան քրդերին ռուսներից, սակայն ոչ թե զենքով, այլ, թերևս, բարեխոսելով: Յավոք, որպես կանոն, քրդերն ու չերքեզները նման պայմանավորվածությունները խախտում են, կամ առանց որևէ պատճառի, կամ իրենց անվտանգության համար ռիսկի գործոնի ի հայտ գալու պարագայում: Դրան հետևում են հայերի նկատմամբ իրականացվող բռնությունները: Բերենք մեկ օրինակ. «1915 թուի մայիսին, Համբարձման տոնին, երբ Փրխուսի շրջակայ գիւղերը կը սկսին կոտորուիլ, Փրխուսի ամբողջ հայ բնակչութիւնը քիւրտերու հրաւերով կ'երթայ յիշեալ գիւղէն 2 ժամ հեռու Խիարտանք՝ հայ և քիւրտ բնակիչներով գիւղը: Քիւրտերը հայերուն կըսեն. «Մենք ձեզ բերինք մեր գիւղ, կը պաշտպանենք, որպէսզի երբ ռուսերը գան և մեր գիւղերուն տիրեն, դուք ալ մեզ պաշտպանէք»: Հինգ օր անօթի ծարաւ կը պահեն գիւղին մէջ: Երբ գիւղացիք կ'երթան հաց գտնելու, քիւրտերը կը խաբեն, դրամնին ձեռքերէն կ'առնեն և ճամբու կը դնեն: Հինգ օրէն յետոյ փրխուսցի տղամարդոց բոլորը կը հաւաքեն և կ'ըսեն. «Եկէ՛ք, գացէ՛ք ձեր գիւղին մէջ սպաննուածներուն դիակները թաղեցէ՛ք»: Երբ գիւղացիք կը մօտենան իրենց անբնակ գիւղին, քիւրտեր կը կապեն բոլորին թևերը և կու տան գնդակի առջև: Իսկ կիներէն զեղեցիկները բոլորն ալ իրենց ամուսիններուն աչքին առջև բռնաբարելէ յետոյ՝ հետերնին կը տանին իսլամացնելու, իսկ տգեղ կիներուն և երեխաներուն մեծ մասը սպաննեցին, իսկ մնացեալներն ալ հոս ու հոն փախչելով, ազատուեցան»³²:

Պատմությունների մեջ առկա է 15 միջամտություն, երբ *փրկության համար «փրկողը» գումար է վերցրել ու խոստումը դրժել՝ սպանել կամ գումարը տվողին, կամ նրան, ով պետք է փրկվեր այդ գումարով*: Ահա մի քանի բնութագրական օրինակներ. «Մահմատ աղայի տղան՝ Մուսթաֆա աղան, Ռասուլի աքրամով [Մուհամեդի պատվով-Մ.Հ.] երդուեց, որ եթե [Տէր Յարութինը-Մ.Հ.] իր դրամական հարստութիւնը իրեն յանձնէ, Տ[էր] Յարութինի կեանքը պիտի խնայուի: Քահանան մեծ աման մը օսմանեան ոսկիով լեցուն բերաւ, Մուսթաֆա աղային յանձնեց: Ադին նոյնպէս ունեցած արծաթ դրամը: Բայց աղան իր խոստումը կատարեց միայն մի ժամուայ համար, այնուհետև քահանան տարաւ գիւղին վերևը եղած առուի վրայ, շարիթը [պարանը] վիզը ձգեցին, քաշքշեցին, մինչև լուսաբաց չար-

³² Բիթլիսի գավառի Փրխուս գյուղ (ՀՅԹԹՎՎՓԺ, հ. 2, էջ 60):

չարեցին: Քահանան նստեցուցին, թոյնը ձեռքը տուին, մեզ՝ ողջ մնացածներու, կը դառնային և կ'ըսեին՝ նայեցէք տէրտէրը, մեծ ու փոքրը, ցոյց կու տայ, թէ ով է իշխանաւոր, ով ոչ, և այսպիսի հեգնանքներ: Յետոյ Տ[էր] Յարութինի լեզուն կտրեցին, թոյնը բերնին տուին և գնդակահարեցին: Տ[էր] Գէորգին ալ երկու մարդ ձեռքերէն բռնած տնէն դուրս հանեցին և գնդակահարեցին»³³:

Վեց դեպքում ակնարկվում կամ ուղղակիորեն ներկայացվում է, որ *մարդիկ փրկվել են վերահաս մահից կաշառքի միջոցով*, ինչը, ինչպես վերը նկատվեց, սկզբունքային անհամապատասխանություն ունի «երախտավորների» ինստիտուտի ներկայացրած պահանջների հետ. «Տղամարդիկը և երեխաները սպաննել է վերջ դարձան մեզ վրայ և բոլորիս մէկ խումբ շինեցին ու սկսեցին մեզ կողոպտել: Այն կինը, որ փող ուներ, զարդարանք ուներ, կ'առնէին և ազատ կ'արձակէին, իսկ անոնք, որոնք որևէ բան չունէին, անմիջապէս կը սպաննէին: Այսպէս մօտաւորապէս 100 կին սպաննեցին»³⁴:

«Փրկվածների» տնտեսական շահագործումը

Վերջին մեջբերման վերջին պարբերության օրինակով անցում կատարենք «փրկության» առավել տարածված մոտիվներից մեկին՝ *«փրկվածների» տնտեսական շահագործմանը*: Արդեն իսկ վերը նշվեց, որ «երախտավորների» ինստիտուտի հատկանիշը թույլ չի տալիս նման ճանապարհով փրկած մարդկանց դասել «երախտավորների» շարքում: Եվ դա անկախ այն ձևակերպումներից, որոնք օգտագործում են իրենց պատմություններում՝ «փրկության» նկարագրություններում, իրենք՝ վերապրողները:

«Փրկվածների» տնտեսական շահագործման մասին պատմությունները միմյանցից տարբերվում են թերևս միայն ձևակերպումների հստակության աստիճանով. մի պարագայում դրա մասին ասվում է ուղղակիորեն, մեկ այլ դեպքում դա հասկացվում է ենթատեքստից, երրորդում տնտեսական շահագործումը դրսևորվում է պատմություններում հիշատակվող «ծառա» և «գերի» ձևակերպումներում: Հաճախ տնտեսականն ուղեկցվում էր սեռական շահագործումով (բռնաբարությամբ), թուրքացման և/կամ կրոնափոխման փորձերով:

³³ Վանի գավառի Դերո գյուղ (ՀՅԹՎՎՓԺ, հ. 1, էջ 216):

³⁴ Վանի գավառի Իշխանիզոմ գյուղ (ՀՅԹՎՎՓԺ, հ. 1, էջ 159):

Կրկին նկատենք, որ «փրկվողների» պատմությունները յուրօրինակ ողիսականներ են հիշեցնում, երբ իրավիճակների փոփոխությունները հաճախ տեղի են ունենում օրերի, անգամ ժամերի տարբերությամբ, այնպես որ դրանց՝ որպես «միջամտություն» բնութագրումը հնարավորություն չի տալիս հստակ թվային հաշվարկներ կատարել: Ինչևէ, կարելի է ասել, որ հաշվվել ենք շուրջ հինգ տասնյակ միջամտություններ, որոնք պարզապես «փրկվածների» *տնտեսական շահագործման* դրսևորումներ են: Ներքոբերյալ պատմությունում «փրկվածները» *դառնում են իրենց փրկիչների ծանաները՝ գերու կարգավիճակով*. «Քաղաքից շատ քիչ էինք հեռու, երբ մի զինուած քիւրտ հանդիպեց մեզ, որը մեզ ոչխարների պէս քշեց տարաւ ճանապարհի վրայ մի քիւրտ գիւղ: ...Մեզ տեսնելով՝ դուրս թափեցան քրդերը իրանց տներէն ու սկսեցին մեր շապիկն ու վարտիքն իսկ հանել մեր վրայից: Գեղատեսիլ հարսներին ու աղջիկներին ջուկեցին մեզնից ու տարան. սրանք Ծղակ ու Կծկակ գիւղերիցն էին՝ մօտ 5-7 հոգի, որոնց ես չէի ճանաչում: Մնացեալներս էլ բաժանեցին իրանց վրայ իբրև գերի՝ պահելու, ուր աշխատում էին մերոնք չարաչար կերպով իբրև սպասուհիներ, օր[ինակ]՝ իմ մայրը հաց էր թխում, բայց նրան հաց չէին տալիս ուտելու: Մենք համարեա խոտով էինք ապրում: Այդ անսնդութեան չդիմանալով՝ եղբայրս Նահոն (4տ.) մահացաւ սովածութիւնից: Նրանց մեզ տուած հացերը այնքան վատ էին, որ չէինք կարող ուտել: Երկու շաբաթ համարեա խոտ ուտելով ապրեցանք»³⁵:

Տնտեսական շահագործման և դրան ուղեկցող գերու կարգավիճակով «փրկության» դեպքերը բազմազան են: Անգամ այն ժամանակ, երբ «փրկիչները»՝ ռուսական բանակի մոտենալու պարագայում, պետք է որ «փրկված» հայերին ազատություն տային, որպեսզի նրանք ապավինեին գոնե իրենց ֆիզիկական գոյությունը ապահովող ռուսական բանակի և հայ կամավորների պաշտպանությանը, վարվում էին այլ կերպ: Որպես կանոն՝ *նահանջող «փրկիչներն» իրենց «փրկած» հայերին տանում էին իրենց հետ. չէ՞ որ հայերը փաստացի գերիներ էին, որոնք պետք է շարունակեին արածացնել իրենց տերերի ոչխարների հոտը կամ կախարեին այլ ծառայական պարտականություններ «փրկիչների» տնտեսությունում*: Եվ իրենց իսկ ազգակիցների՝ հայերի կյանքի նկատմամբ կատարվող ոտնձգություններից «փրկելու» պատճառը ոչ թե հայ մարդկանց կյանքի փրկությունն էր,

³⁵ Վանի գավառի Խնձորգին գյուղ (ՀՅՕԹՎՎՓԺ, հ. 1, էջ 366):

այլ իրենց գործավորներին փրկելը. չէ՞ որ նրանք տնտեսական շահ են բերում իրենց տերերին: Ընդհանրացնելու պարագայում ակամա առաջ է գալիս հետևյալ եզրակացությունը. *որպես կանոն՝ եթե տարբերակ կար հայերին չկոտորելու, նրանց չէին կոտորում ոչ թե հայերի կյանքը փրկելու, այլ իրենց համար հայկական աշխարհում օգնությամբ տնտեսական շահ ապահովելու կամ պարզապես թալանելու նպատակով*: Ահա, օրինակ. «Մի շաբաթ այդպես մնալուց յետոյ մեր գիւղի քիւրտերը, որոնք տակաւին ապրում էին գիւղում, ասեցին իմ մօրը, թէ. «Քանի որ ձեր այսքան տաւարն ու ոչխարը մեզ մօտ են [իրականում, ամենայն հավանականությամբ, բռնագրավված էին], քո տղան ուղարկիր մեզ մօտ օգնելու մեզ, մենք խօսք կը տանք նրան ապահով պահելու»: Վստահելով նրանց խօսքին՝ դուրս եկայ այրից ու գնացի նրանց մօտ ու մնացի այնտեղ ապահով, մինչև իրենց նահանջը: Երբ Համազասպի խումբը մօտեցաւ Ոստանին, քիւրտերը նահանջեցին, ինձ էլ իրանց հետ վերցնելով տարան մինչև Խիզանի Սմբէտն գիւղը: ...Այնտեղ երկու շաբաթ մնալուց վերջ մի օր, երբ ինձ դաշտ ուղարկեցին տաւարները արածեցնելու, փախայ եկայ Յաղթ գիւղը (Կառկառի շրջան), ուր գտայ կամատրական խմբեր, որոնք ինձ հաց տուին»³⁶:

Կար ևս մի բնութագրական հանգամանք. բավականին հաճախ քուրդ/թուրք համագյուղացիները կամ հարևան գյուղերի բնակիչները հայ հարևաններից, ուղղակիորեն կամ անուղղակիորեն, «վերցնում էին» հնարավոր թալանը՝ հետևյալ տիպի «հիմնավորումներով». «*քանի որ ձեզ միևնույն է, ամենայն հավանականությամբ, թալանելու/կոտորելու են, ավելի լավ է մե՛նք նախօրոք ձեզանից վերցնենք/բռնագրավենք ձեր անասունները. ինչու՞ դրանք մնան ուրիշներին, միթե՞ ավելի լավ չէ, որ դրանք մնան մեզ՝ ձեր հարևաններին*»: Այսինքն, հայազգի հարևանների հետ համատեղ փրկության ուղիներ որոնելու կամ գոնե խոսքի մակարդակով օժանդակելու ցանկության մասին խոսք անգամ չկա, կարծես թե միակ խնդիրն է օր առաջ օգտվել հայերի անպաշտպան վիճակից: Հայերին թալանելու հարցում առաջնության համար կողմերը կարող էին անգամ կռվել միմյանց հետ: Մեջբերենք երկու օրինակ. «Ընտևեալ օրն էլ քիւրտերն և ոստիկանները 7 զէնք առած հեռացան գիւղից, այնտեղ թողնելով 4 նէօպէթներ (պահապան), որոնց պարտականութիւնն էր ուշադրութիւն անել, որ հայերի ջարդերից յետոյ, ապրանքներն ուրիշ քիւրտեր չտանին: Սրանք ամէն

³⁶ Վանի գավառի Թիմար գյուղ (ՀՅԹՎՎՓԺ, հ. 1, էջ 337):

որ գիտլից տանում էին ոչխարներ, նաև ձու և այլն, և այլն և ապրում էին քէֆի ու խրախճանքի մէջ»³⁷, «Շէկօ աշիրէթի պետեր Խալիլի Ճէմիլ և Հապէի Եուսուֆ 915 թ. մարտին հայերին յայտարարում էին, թէ՛ կառավարութիւնից մեզ հրահանգել են, որպէսզի հայերին մեզ մօտ չպահենք և առհասարակ նրանց պաշտպանութիւն և բարեացակամ վերաբերմունք ցոյց չի տանք, որովհետև գերման թագաւորին որոշմամբ՝ հայերին պիտի կոտորենք 2-3 տարի շարունակ, մինչև որ ի սպառ կ'ոչնչացուի նրանց սերունդը. հետևաբար, ո՛ր քրտի մօտ որ գտնուի հայ, պիտի սպաննուի, կախաղան հանուի այդ քուրտը: Մինչ այդ հայերի հետ հաշտ ապրող քիւրտերն սկսեցին օր ցերեկով թալանել հայերին, տանել նրանց անասուններն ու ապրանքները: Ասում էին՝ քանի որ ձեզ պիտի կոտորեն, լաւ է ձեր ապրանքը օր առաջ մենք տանենք, քան թէ այլ մարդիկ: 915 թ.-ի մարտին, երբ դեռ ոչ մի տեղ ջարդի շշուկ չկար, քիւրտերն տարան բոլոր վերոյիշեալ հայ գիւղերի տաւարը, ոչխարն ու կահ-կարասիքը: Ասում էին՝ եթէ ողջ մնաք, կը վերադարձնենք, եթէ մեռաք՝ մեզ կը մնայ, թուրքը չի տանի»³⁸:

Այս իմաստով, բնութագրական է մի այլ իրողություն. *անգամ հակառակ բնոյթի միջամտությունների պարագայում (երբ հայերն են փրկում քրդերին), միևնույն է, փրկվածները, առիթը բաց չթողնելով, թալանում են իրենց փրկիչներին*, ինչպես, օրինակ, «Երբ ռուսերը սկսան յառաջանալ Ալաշկերտի հովիտին մէջ, քիւրտերն ու թուրքերը Ալաշկերտէն թափուեցան Բուլանլիսի դաշտի հայ գիւղերը: Քաքառլու գիւղը [ուներ 300 տուն հայ բնակիչ, վեց տուն էլ՝ քուրդ] կ'ապաստանին 30 տուն քիւրտեր՝ 200 անձով և իրենց ոչխար-տաւարներով (500 գլուխ): Գիւղացիք 1914-ի դեկտեմբերէն մինչև 1915-ի մարտը կը պահեն իրենց տուններուն մէջ բոլորին ալ, թէ՛ մարդիկը և թէ՛ անասունները միանգամայն կերակրելով: Երբ 1915-ի ապրիլի վերջերը (ապրիլ 28) ռուսերը գրաւեցին Մանազկերտը, գիւղը ապաստանած քիւրտերը կը կողոպտեն գիւղացոց, կը տանին անոնց ունեցած ամբողջ շարժական կայքն ու ոչխար-տաւարը և փախան դէպի Մուշ ու Պիթլիս»³⁹:

³⁷ Մուշի գավառի Վարդենիս գյուղ (ՀՅԹԹՎՎՓԺ, հ. 2, էջ 268):

³⁸ Մուշի գավառի Փիրշենք գյուղ (ՀՅԹԹՎՎՓԺ, հ. 2, էջ 289):

³⁹ Մուշի գավառի Քաքառլու գյուղ (ՀՅԹԹՎՎՓԺ, հ. 2, էջ 213-214):

«Փրկվածների» կրոնափոխությունը

Ֆիզիկական փրկության ձևերից մեկը *կրոնափոխությունն* էր, ավելի ճիշտ՝ ստիպմամբ մուսուլմանություն ընդունելը, բռնի կամ իրականացված կյանքի նկատմամբ իրական վտանգի առկայության դեպքերում: Բռնի կրոնափոխություն երևույթը, այդ քայլին դիմած մարդկանց պատճառելով «մտավոր լուրջ վնաս», ինքնին տեղավորվում է «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայի հոդված 2-ի մեջ, այսինքն՝ ցեղասպանության իրականացման ձևերից է: Դրանից զատ, ինչպես վերն արդեն շեշտվել է, այն չի համապատասխանում «երախտավորների» ինստիտուտի առաջադրած պայմաններին:

Նման իրավիճակում տեղ գտած կրոնափոխությունն ունենում էր առնվազն երկու բնույթի արդյունք. ա) կրոնափոխները փրկվում էին, և այդպիսով, ի վերջո, կա՛մ իսլամանում-թըքանում էին, կա՛մ, իրավիճակի արմատական, իրենց համար բարենպաստ փոփոխության հետ կապված, վերադառնում էին քրիստոնեական հավատքին, բ) կրոնափոխներին, այնուամենայնիվ, կոտորում էին: Կրոնափոխության պահանջներին ընդդիմացողներին, որպես կանոն, կամ կոտորում էին, կամ միառժամանակ սպասում, ապա ձեռնարկում արմատական քայլեր:

1915 թ. իրականացվող ցեղասպանության պայմաններում բռնի մուսուլմանացման երևույթի վերլուծության և ընդհանրական գնահատման փորձ է առկա Գևորգ Ե կաթողիկոսին բուլղարահայ թեմի առաջնորդ Ղևոնդ Եպիսկոպոս Դուրյանի նամակներում (1915 թ. հուլիս, օգոստոս, սեպտեմբեր): Եպիսկոպոսը գրում է. «Զանազան տեղերէ իսլամացումներու լուրեր ալ կը հասնին մեզի. կ'երևի, թէ ժողովուրդը իր կեանքը փրկելու տարբեր միջոց չունի»⁴⁰, «Շատ տեղեր հայ ժողովուրդը իր կեանքը փրկելու համար իսլամութեան դիմեց, բայց նախորդ մեծ կոտորածի ատեն եղածին պէս այս անգամ դիւրութեամբ չընդունուեցան այս դիմումները: Սեբաստիոյ մէջ իսլամանալու դիմողներուն սա պայմանները առաջարկուեցան. մինչև 12 տարեկան իրենց զաւակները յանձնել կառավարութեան, որ որբանոցներ տրուին, և իրենք յանձն առնեն իրենց տեղէն ելլելով, կառավարութեան ցոյց տուած տեղը բնակիլ: Խարբերդի վիլայէթին մէջ այրերու իսլամանալը չէ ընդունուած, իսկ կիներուն իսլամութեան դիմելու ատենը զինքը ամուսնութեան առնող իսլամի մը պատրաստ գտնուիլը պայման

⁴⁰ ՀՅԹԹՎՎՓԺ, հ. 2, էջ 304:

դրուած է: Բազմաթիւ հայ կիներ իրենց ծծկեր մանուկներով ինքզինքնին Եփրատի ալիքներուն հանձնած են կամ իրենց իսկ տուններուն մէջ ինքնասպան եղած են: ...Սև ծովի եզերքի քաղաքներուն մէջ Տրապիզոն, Սամսոն, Կիրասոն և այլն իսլամացողները անմիջապէս հեռացուած են ներքին զուտ իսլամաբնակ վայրեր: ...Վերջապէս Սամսոնէն սկսեալ մինչև Սղերդ և Տիգրանակերտ, այսօր ոչ մէկ հայ մնացած է. մեծագոյն մասը՝ ջարդուած, մէկ մասը՝ առևանգուած և փոքր մաս մը՝ իսլամացած»⁴¹:

Բերենք երկու օրինակ վերը նշվածը լուսաբանելու համար. «Հագիւ թէ հանգստացած էինք, մեզ [17 հոգով] կանչեցին պէյի ներկայութեան, որտեղ նստած էր մոլլա մը: Առաջարկեց պէյն՝ իսլամութիւն ընդունենք, մենք մերժեցինք: Որովհետև գիւղապետ Յովհաննէսը իր տղաներով ընդունած էին մահմետականութիւնը, ամէնից առաջ սոսկալի տանջանքներով ու դաշոյնով անդամները մէկ-մէկ կտրելով՝ սպաննած էին: Նաև հակառակեցաւ մոլլան. «Որովհետև, – ըսաւ, – իրենց կեանքերը փրկելու համար ամէն միջոցի կը դիմեն, հետևաբար վախի ազդեցութեան և նման պարագաներու մէջ Ղուրանը հակառակ է այդպիսիներու իսլամացման», ընդհատելով խօսքը՝ գնաց, իսկ մենք դարձեալ առաջնորդութեանք ախտոր: [մի քանի օրից բոլորը, պատմողից զատ, կոտորվում են]»⁴², «Դեռ ձմեռուան (1914 թ.) մեր գիւղացիներէն Թաթէոս, Երեմիա և Փոխիկ անունով մարդիկ ջոկեցին և տարան, որ պիտի սպաննէին, բայց սոքա վերջէն իրենց ընտանեաց անդամներով իսլամացան՝ ազատելով իրենց կեանքերը»⁴³:

Կրօնական գործոնով պայմանավորված՝ մարդկանց փրկության գործն ունենում է նաև մեկ այլ դրսևորում ի դեմս *թվացյալ, կեղծ «աստվածավախության»*: Այսպես, որոշ դեպքերում հիշվում է, որ Ղուրանն արգելում է մարդկանց կենդանի այրել: Թե ի՞նչ է դրան հետևում, և թե ի՞նչ է լինում դրանից հետո փրկության հոյս ունեցողների հետ, և արդյո՞ք դա կարելի է անվանել «փրկություն», հարցերի պատասխանը լավագույնս հուշում են ականատեսների վկայությունները: Որոշ դեպքերում էլ ասես նախախնամությունն է օժանդակում անհատին կենդանի մնալու, փրկվելու, սակայն այն գինը, որը վճարվում է դրա դիմաց, շատ մեծ է, և շատ դժվար է,

⁴¹ Նույն տեղում, էջ 309-310: Մեկ այլ օրինակ՝ «Կեսարիոյ մէջ ...Չափահաս աղջիկներուն և երիտասարդ կիներուն միայն իսլամութիւնը ընդունեցին», էջ 314-315:

⁴² Վանի գավառի Քյոշք գյուղ (ՀՅԹՎՎՓԺ, հ. 1, էջ 190):

⁴³ Հաքյարի գավառի Փական գյուղ (ՀՅԹՎՎՓԺ, հ. 1, էջ 420):

եթե ոչ անհնար, նման «փրկությունը» իրապես փրկություն որակել: Բերենք մեկ բնորոշ օրինակ. «Մեր տղամարդիկը, երբ ռեսին սպաննուիլը տեսան, ալ փախչելու ուրիշ ճար չկրնալով գտնել, ամէն մէկը փախաւ մէկ քիւրտի տուն մտաւ ազատուելու յոյսով: Բայց խուժանը մտաւ քիւրտերու տներ և պահուած հայերը մէկիկ-մէկիկ դուրս հանին և փողոցին մէջ կին և երախաներու առջև սպաննեցին, որոնց մէջ նաև սպաննեցին իմ ամուսին Մովսէսը... մեզ՝ բոլոր կիներս լեցուցին Թումոյի տան մէջ՝ վառելու, տան չորս կողմը խոտ լեցուցին և սկսեցան կրակ տալ տներուն, կին և երախաներու ողբ ու կոծին արդէն չափ չկար, անոնց ընկերներէն մէկը չկրնալով դիմանալ այս տեսակ արարքներուն, մօտեցաւ Եախկուպին [գյուղը կոտորելու գործը ղեկավարողն է] և ըսաւ՝ դուք ամէն տեսակ չարչարանքի ենթարկեցիք ասոնց, բայց Ղուրանին մէջ մարդ վառելու մասին որևէ բան չկայ, ընդհակառակը, թո՛ղ տուէք և ղրկեցէ՛ք դիմացի լեռը, հոն թող անօթութիւնից մեռնին և ոչնչանան: Այդ խօսքին վրայ մեզ բոլորիս դուրս արին տունէն, մեզ հաւաքեցին մէկ տեղ և բոլորիս էլ մերկացուցին և սպաննեցին ամէն անոնք, որոնց էրիկները գիւղին պարագլուխներն էին..., իսկ միաները բռնաբարելէ և կողոպտելէ վերջ բաց թողուցին»⁴⁴:

«Փրկվածների» սեռական շահագործումը

Ցեղասպանության տարիներին հայոց նկատմամբ մեծ ծավալներ ընդունեց *սեռական շահագործումը*՝ ի դեմս կանանց, աղջիկների, երեխաների բռնաբարությունների: Հարցին անդրադարձ կա մասնագիտական գրականության մեջ, և հարկ չենք համարում ծանրանալ երևույթի վերլուծության վրա⁴⁵: Ոչ քիչ դեպքերում բռնաբարությունը մեկանգամյա գործո-

⁴⁴ Վանի գավառի Կղզի գյուղ (ՀՅԹՎՎՓԺ, հ. 1, էջ 167):

⁴⁵ Տե՛ս, օրինակ, **Vahakn N. Dadrian**, The Armenian Genocide: an Interpretation. In: America and the Armenian Genocide of 1915 (edited by Jay Winter). Cambridge, New York, Melbourne, 2003, pp. 83-86; Katharine Derderian, Common Fate, Different Experience: Gender-Specific Aspects of the Armenian Genocide, 1915-1917 – Holocaust and Genocide Studies, vol. 19, N 1, Spring 2005, pp. 1-25; **Matthias Bjørnlund**, 'A Fate Worse Than Dying': Sexual Violence during the Armenian Genocide, In: Herzog, Dagmar (ed.), "Brutality and Desire: War and Sexuality in Europe's Twentieth Century (Genders and Sexualities in History)", Basingstoke [England]; New York, 2009, pp. 16-58; **Հասմիկ Գրիգորյան**, Ոճրագործների վարքային դրսևորումներն Օսմանյան կայսրությունում հայերի դեմ իրականացված կոտորածների ու ցեղասպանության ընթացքում. սեռական բռնություններ: Հայ ժողովրդական մշակույթ, հ. XVI, Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում: Դերենիկ Վարդումյանի ծննդյան 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., 2014, էջ 342-349:

ղություն չէր, այն ուղեկցվում էր ֆիզիկական բռնությամբ, շարունակվում էր օրեր, երբեմն և շաբաթներ ու ամիսներ, աղջիկը կամ կինը վեր էր ածվում հարճի, կորցնում էր իր մարդկային կերպարանքը: Սեռական շահագործմանը երբեմն հետևում էր *բռնի՝ սպիտակամոր ամուսնությունը մուսուլման տղամարդու հետ*: Այդ կերպ կնոջ կամ աղջկա կյանքը փրկվում էր: Բռնաբարությունները, սակայն, դրան ենթարկված խմբի անդամներին պատճառում էին «մարմնական լուրջ վնասվածքներ կամ մտավոր վնաս», ինչը համապատասխանում է «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայի հոդված 2-ի (բ) կետին: Դրանից զատ, բռնաբարությունների զանգվածային լինելը հանգեցնում էր հոր կողմից ոչ հայ երեխաների զանգվածային ծննդի և, այդ կերպ, սպառնում էր խմբի (տվյալ դեպքում՝ արևմտահայության) վերարտադրման շարունակականության ապահովմանը, այլ կերպ ասած՝ ֆիզիկական գոյությանը, ինչը համապատասխանում է Կոնվենցիայի նույն հոդվածի մեկ այլ դրույթին՝ (դ) այդ խմբի միջավայրում մանկածնությունը կանխելուն միտված միջոցների իրականացումը:

Այսպիսով, հայոց պարագայում բռնաբարություններով ուղեկցվող «փրկությունները» իրական փրկություններ չէին, այլ՝ ցեղասպանական ակտերի դրսևորումներ: Այսինքն, նման գործողությունների դիմած մարդիկ չեն կարող համարվել փրկիչներ, առավել ևս՝ չեն կարող տեղ գտնել «երախտավորների» ցանկում: Բռնաբարություններով ուղեկցվող միջամտությունները դիտարկվող պատմությունների մեջ շատ մեծ քանակ են կազմում. մենք դրանք պարզապես չենք հաշվել:

Իրական փրկություններն ու դրանց առանձնահատկությունները

Քիչ չեն *իրական փրկությունների* դեպքերը, որոնց դրդապատճառները երբեմն հստակ են, երբեմն՝ ոչ այնքան: Տվյալ համատեքստում կարևորն այն է, որ դրանք որոշ դեպքերում են ռիսկի գործոններ պարունակել փրկողների համար, չեն ուղեկցվել (համենայն դեպս, պատմություններում դրա մասին խոսք չկա, իսկ ճշտումներ անելն անհնարին է) սեռական և տնտեսական շահագործման դրսևորումներով կամ կրոնափոխման պարտադրանքով: Ահա այս պատճառով էլ ներքոբերյալ փրկության պատմությունների հերոսներին (հաճախ՝ անանուն) կարելի է դիտել իբրև երախտավորների: Նրանք, որպես կանոն, եղել են համազրույցիներ, հարևաններ, բարեկամներ քրովաներ, պարզապես ծանոթներ, գործընկերներ, երբեմն

նաև անձանոթներ: Փրկությանն ուղղված գործողությունների հիմնական շարժառիթը եղել է մարդասիրությունը, ինչպես նաև խղճահարության, համակրանքի, բարոյականության, գուցե նաև այլ գործոնները: Իրական փրկությունների բնութագրական գծերից մեկն էլ այն է, որ դրանց ճնշող մեծամասնությունը վերաբերել է կանանց ու երեխաների փրկությանը, տղամարդկանց կամ ամբողջական ընտանիքների՝ երախտավորների կողմից փրկություններ շուրջ 600 պատմությունների մեջ գրեթե չեն արձանագրվել: Եվս մի փոքր նրբերանգ. ոչ քիչ դեպքերում կոտորածի ենթարկված գյուղերից երախտավորների օգնությամբ փրկվածների կամ պարզապես կենդանի մնացածների թիվն այնքան քիչ էր, որ վերապրողներն իրենց պատմություններում հստակ նշում են այդ քանակը, անգամ՝ այդ մարդկանց անունները: Փրկողները եղել են տարբեր ազգությունների ներկայացուցիչներ՝ թուրքեր, քրդեր, չերքեզներ, եզդիներ:

«Երախտավորներին» բնորոշ գործողություն պարունակող պատմությունները բաժանել ենք մի քանի խմբերի, որոնց հիմքում ընկած են վերապրողների բնութագրումները: Եվ այսպես, «Երախտավորները»՝ ա) հարևաններ, բ) համագյուղացիներ, գ) ծանոթներ, դ) իշխանավորներ, զինվորականներ են: Ընդ որում, եղել են դեպքեր, երբ փրկել է հարևանը, սակայն համագյուղացիները, հարմար առիթի պարագայում, դիմել են բռնությունների: Պատմություններում արձանագրվել են նաև փաստեր, երբ «Երախտավորներն» իրենց կյանքի գնով են հատուցել հայերին փրկելու համար:

Մեջբերենք այդպիսի օրինակներ:

Հարևանները՝ երախտավորներ. «Աղասափ գիւղի մէջ կային միայն երկու տուն հայեր և 20 տուն քիւրտ: Կիները կը հարցնեն քիւրտ կիներուն, թէ «ի՞նչ կայ», վերջիները կը պատասխանեն. «հրաման եկած է, որ ամբողջ հայերը կոտորեն»: Գիւղի մէջէն Ռաշիտ աղայի կին Ֆաթէն իր տղային՝ Նուրի Մեհմէտին գէնքեր կու տայ և կըսէ «Զինուի՛ր, գնա՛, հայերու մէջ երեք տղամարդ կայ (Համբարձում Յարութիւնեան, Մովսէս Մուրատեան, Մանուկ Եկմալեան), տա՛ր զանոնք յանձնէ՛ ռուսերուն, չ՛ըլլայ թէ քիւրտերը զանոնք սպաննեն»: Եւ այս կերպով ալ կըլլայ: Մեհմէտը երեք տղամարդոց գիշերանց գաղտնի կերպով գիւղէն դուրս կը տանի և անոնք կը յաջողին անցնիլ ռուսական բանակը: Գիւղի երկու տան հայերը (կին ու երախայ), կը մնան քիւրտերու ձեռքը, բայց շնորհիւ Ֆաթէին, ապահով կը մնան: Երբ

հայ կամաւորները կը յառաջանան, Ֆաթէն կը փախչի և իր պաշտպանութեան տակ գտնուած կին-երախան կը մնան քիւրտերու ձեռքը, որոնք առանց սեռի խտրութեան կը բռնաբարեն ու կառնանգեն թէ՛ կիներ, աղջիկներ (նոյնիսկ 8-10 տարեկան) և թէ՛ նոյն տարիքի (8-10) մէջ գտնուած բոլոր մանչերը: Այս վիճակը կը տևէ ինը օր, մինչև որ ռուսերը կը մօտենան, կը փախչին (հայերը)...»⁴⁶:

Համագլուղացիները՝ երախտաւորներ. «Կտրած քար գիւղը կը պաշարեն: Գիւղի տղամարդիկ՝ մօտ 40 հոգի, կը հաւաքուին գիւղին մէջ ապրող Մուրատ աղայի (թիւրք) սենեակը՝ յուսալով, թէ թիւրքը պիտի պաշտպանէ զիրենք: ...Քիւրտերը կու գան, աղայի տան մարդիկը բոլորին ալ դուրս կը հանեն սենեակէն, թւերնին կը կապեն և գիւղէն դուրս հանելով՝ կը տանին գիւղին մօտիկ գետակի՝ Դալիչայի ափը, ուր բոլորին ալ կը մերկացնեն, յետոյ կը սկսին հրացանազարկ ընել: Մինչ տղամարդոց հետ այսպէս սարսափելի կերպով վարուեցան, միւս կողմէ գիւղի Մուրատ աղան անմիջապէս իր դռները կը բանայ սարսափահար օղլուշաղ՝ կին ու երեխայի առջև, բոլորն ալ կը հիւրընկալէ իր տանը մէջ: Զանոնք կը կերակրէ և շատ լաւ կերպով կը խնամէ: Ոստիկաններն ու համիտիէները յաճախ կը սպառնան աղային, որ չըլլայ, թէ տղամարդ պահած ըլլայ, ապա թէ ոչ իր տունը կ'այրեն և իրեն կը սպաննեն: Այս բանին վրայ աղան կը վախճայ և ինչոր (մի քանի հոգի) տղամարդ պահած էր, զանոնք կը յանձնէ ոստիկաններուն, որոնք անխնայ կը սպաննեն ձեռք ընկածին: Մուրատ աղան երկու շաբաթ շատ սիրով կը խնամէ գիւղի օղլուշաղը (մօտ 200 կին ու երեխայ) և զանոնք կ'ազատէ քիւրտերու քմահաճոյքէն, որոնք միշտ աղայէն գեղեցիկ կիներ և աղջիկներ կը պահանջէին: Աղան յաճախ, դուրս գալով, ըսած էր. «Ինծի սպաննեցէ՛ք, ո՛չ մի ընտանիք ձեր ձեռքը չեմ տար»: Երկու շաբաթ յետոյ՝ մայիսի վերջերը, ռուսերը կը մօտենան Կտրած քար գիւղին: Աղան, տեսնելով ռուսերը, կը սարսափի՝ կարծելով, որ ռուսերը պիտի սպաննեն իրեն: Կը դիմէ իր ազատած կիներուն և կ'ըսէ. «Ես ձեզ երկու շաբաթ ապահով կերպով պաշտպանեցի քիւրտերու հանդէպ, այժմ ալ դուք ինձ պաշտպանեցէ՛ք, որ ռուսերը չսպաննեն»: Երբ ռուսերը կը մօտենան, կիներ ու երեխաները աղան կը շրջապատեն և կ'երթան ռուսերուն առաջ և կը խնդրեն, որ աղային չսպաննեն: Ռուսերը թուղթ մը կը գրեն, կու տան

⁴⁶ Վանի գավառի Աղասավ գլուղ (ՀՅԹԹՎՎՓԺ, հ. 1, էջ 235):

աղային, որպեսզի ուրիշներ չսպաննեն»⁴⁷, «Դարապէկ գիւղին կոտորածը: Համագիւղացի թիրքերը նախապէս պատրաստուած կը լինեն կոտորածը սկսելու, Ասպարածնի դէպքը [որտեղ արդեն կոտորել էին հայերին-Մ.Հ.] առիթ կը լինի: Կազմուած խուժանը Ասպարածին լմնցնելէ յետոյ երկու մասի կը բաժնուի՝ մէկ մասը կը գնայ Դարապէկի վրայ ու միանալով գիւղացի իսլամ բնակչութեան հետ, կը սկսի կոտորածը: Ոչ մէկ դիմադրութիւն չի լինիր, կսպաննուի մօտ 30 տղամարդ, ինչպէս և բաւական թուով կին ու երեխայ: Նախապէս ազդարարուած կը լինի, որ թիրք-քիւրտերէն ոչ ոք հայերու չպահէ, բայց հակառակ պատուէրին, երբ դարապէկցի քիւրտ մը կը պահէ երկու հայ, կիմանան ու նախ քիւրտին կը սպաննեն և ապա հայերուն»⁴⁸:

Ծանոթները՝ երախտավորներ. «Երբ այդ բոլոր դէպքերը տեղի ունեցան մեր գիւղում [կենդանի այրեցին 360 հոգու, սպանեցին ևս 16-ին], կանայք բոլորն էլ, ով ինչ կարող էր, վերցրեցին իրենց հետ և փախան սարերը, որ իրենց պատին ազատեն: Փախել էինք և մենք սարերը: Իմ եղբայրը, որը փախել էր սար և դեռ կենդանի էր, այդ ժամանակ իմաց էր տուել մեր ծանօթ ալճաւազցի թիրք Եբոյին, որ նա գայ մեզ գտնէ և տանէ իր մօտ մինչև պատերազմի վերջը մեզ պահէ: Թիրքն էլ եկաւ և մեզ սարում գտաւ: Մենք 7 հոգի էինք, մեզ հետ միացան և իմ երկու հօրեղբայրներիս կանայք, ընդամենը 9 հոգի և տարաւ մեզ Ալճաւազ (Արծկէ): Ան ուղիղ երեք ամիս մեզ պաշտպանեց, մեզ կերակրում էր մեր տանից վերցրած ցորենով և միւս թաքցրած մթերքներով: Ան մեզ չէր նեղացնում, նորա թիրք հարևանները նոյնպէս մեզ չէին նեղացնում: Մնացինք նորա մօտ մինչև ռուսների գալը: Երբ լուրեր եկան, թէ ռուսը մօտենում է, նա հաւաքեց իր մալ և ունեցածն ու իր ընտանիքը, թողեց մեզ համար մի փոքր պաշար և ինքը փախաւ գնաց: Միւս օրը ռուսը եկաւ և մենք դուրս եկանք լոյս աշխարհ»⁴⁹, «Հայերը ճմրան գացին ծանօթ քիւրտերի մօտ և տակաւին իրենց մօտ եղած փողն ու զէնքը յանձնելով նրանց, խնդրեցին պաշտպանութիւն: Քիւրտերն ամէն տեղ ընդունեցին նրանց և պահեցին մինչև գարուն: Միայն Ղաբըլճոգում զօրքերն իմանալով, որ քիւրտերի մօտ հայ կայ, բռնի տարին 100 հայերին ու սպաննեցին: Մի քուրդ ցեղապետ՝ զպոտուն աշիրի

⁴⁷ Վանի գավառի Կորած քար գյուղ (ՀՅԹԹՎՎՓԺ, հ. 1, էջ 246-247):

⁴⁸ Վանի գավառի Դարապէկ գյուղ (ՀՅԹԹՎՎՓԺ, հ. 1, էջ 110):

⁴⁹ Վանի գավառի Խոռանց գյուղ (ՀՅԹԹՎՎՓԺ, հ. 1, էջ 287):

վեզիրը և Ջկօն ու Տերվիշ եղբայրները ընդունեցին հայերին՝ մօտ 1500 անձ, պահեցին և մինչև այժմ էլ նրանց մօտ են: Քանի անգամ զօրքը գնաց՝ սպաննելու հայերին, բայց Տերվիշը կռիւ արաւ նրանց հետ և մի քանի զօրք սպաննելով հեռացրեց»⁵⁰:

Իշխանավորները, զինվորականները՝ երախտավորներ. «Գիւղին բէկը՝ Աբդուլլահը չթողնեց, որ գիւղում տեղի ունենան ծեծ, թալան ու բռնաբարութիւն: Նա պաշտպանեց գիւղը ոստիկանների ու ջարդարարների դէմ՝ մինչև ռուսերի գալը: ... Այս գիւղում ինչպէս և շրջանի այլ գիւղերում շնորհիւ տեղական ազդեցիկ քիւրտերի ո՛չ ջարդ, ո՛չ էլ ծայրայեղ բռնութիւններ ու կեղեքում տեղի չունեցաւ: Գիւղին մեծաւորը՝ Աբդուլլահ բէկ, թուրքերի նահանջի միջոցին զինեց իր մարդկանց և չթողնեց, որ նահանջող խուժանը մտնի գիւղ և ջարդի: Նա մնաց հայերի մէջ նոյնիսկ Մանազկերտի՝ ռուսերից գրաւուելուց յետոյ: Վերջը հայերի պաշտպանութեանը չվստահանալով, թողնեց և գնաց Տաճկաստան: Ռուսների գալու միջոցին հայերի բոլոր շարժական և անշարժ ստացուածքն մնացել էր անվնաս: Ռուս կոզակներն ու զինուորներն անթիւ բռնութիւններ արին գիւղում»⁵¹:

Այսպիսով, փորձեցինք Հայոց ցեղասպանության ժամանակ արձանագրված և հաճախ որպէս «փրկություն» մեկնաբանվող դէպքերի քննարկումը դուրս բերել մեր օրերում քարոզվող «արդար հիշողության» ժխտողական տեսության տիրույթի և դրան ուղեկցող հրապարակախոսության ոլորտից և տեղափոխել միջազգային պրակտիկայում տասնամյակների ընթացքում քննություն բռնած մեկ այլ, այն է՝ Հոլոքոստի տարիներին տեղ գտած «փրկությունների» հիմամբ «Երախտավորների» ինստիտուտի առաջարկած պահանջների հետնախորք: Այս կերպ, ինչպէս մեզ է թվում, անհամեմատելիորեն նեղանում է կողմնակալ հենք ունեցող՝ կամայական գնահատականներով առաջնորդվելու հնարավորությունը: Այսինքն, միջազգային չափանիշներով «իրական» որակվող փրկությունները, ուզում ենք դա, թե ոչ, չափազանց քիչ են եղել, և մեր օրերում դրանց վրա արվող շեշտադրումները հետապնդում են միայն քաղաքական, քարոզչական նպատակներ:

Իրավամբ կարող է հարց առաջանալ, թե կա՞ն արդյոք տարբերություններ Հայոց ցեղասպանության ժամանակ հայերին և Հոլոքոստի տա-

⁵⁰ Մուշի գավառի Փիրշենք գյուղ (ՀՅՕԹՎՎՓԺ, հ. 2, էջ 291):

⁵¹ Մուշի գավառի Ակներ գյուղ (ՀՅՕԹՎՎՓԺ, հ. 2, էջ 124):

րիներին հրեաներին փրկելու ձևերի ու հնարավորությունների միջև: Այս հարցին լիարժեք պատասխան տալու համար անհրաժեշտ է շատ ավելի մեծ քանակությամբ աղբյուրներ ուսումնասիրել, մինչդեռ մենք դիտարկել ենք ընդամենը 600 պատմություն, որոնցից ոչ բոլորում են արձանագրված եղել «փրկություն» ձևակերպմանը հավակնող դեպքեր, նույնիսկ հակառակը, մեր գնահատմամբ՝ «իրական» փրկություններ եղել են լոկ մի քանիսը: Պետք է նկատել, որ մեր դիտարկած պատմությունների մեջ գրեթե բացակայում են ցեղասպանության իրականացման մի ամբողջ կատեգորիայի՝ «մահվան երթերի» նկարագրություններ, որոնց ժամանակ վստահաբար եղել են իրական փրկության դեպքեր: Բայց և այնպես, մեր հետազոտած պատմությունները նույնպես թույլ են տալիս որոշ տարբերություններ նկատել:

Առաջին և կարևորագույն իրողությունն այն է, որ գյուղի կամ տարածքով համեմատաբար փոքր շրջանի ղեկավարները, պաշտոնյաները կամ պարզապես ազդեցիկ մարդիկ օսմանյան կանոնավոր բանակի ստորաբաժանումներից կամ հարևան քրդական ցեղերից երբեմն *բացեիբաց*, երբեմն *զենքի ուժով* պաշտպանել են իրենց գյուղի կամ շրջանի հայերին: Մի բան, որ բացակայում էր Հոլոքոստի ժամանակ: Այս երևույթը, մեր համոզմամբ, խոսում է լոկ օսմանյան պետության թուլության դրսևորումների և, մասնավորապես, տեղական իշխանությունների ուժեղության մասին: Որոշ ղեկավարների նման պահվածքը իր դրական դերն է ունեցել նաև այն առումով, որ նրանց հպատակները նույնպես չեն համարձակվել ձեռք բարձրացնել իրենց «տերերի» պաշտպանությունը վայելող հայերի վրա: Նկատենք, որ զենքի ուժով տեղերում սեփական իրավունքների պաշտպանության փորձեր (ոչ քիչ դեպքերում՝ հաջողությամբ պսակված) հազվադեպ երևույթ չէին Օսմանյան կայսրությունում: Եվ հայերին ա՛յդ կերպ պաշտպանելը կարելի է դիտել հենց նման համատեքստում:

Տարբերություններից էր և «փրկիչ» Մուրատ աղայի դեպքը, երբ մարդասպաններին զոհաբերվում են նրա «փրկած» տղամարդիկ, բայց ոչ՝ շուրջ 200 կանայք և երեխաներ. թերևս դեր է խաղացել այն հանգամանքը, որ կանանցից ու երեխաներից իրական վտանգ չէր կարելի սպասել, և այդ պատճառով է, որ նրանց չեն կոտորել: Նման սեռային խտրականության դեպքեր, որքան մեզ հայտնի է, բնութագրական չեն եղել Հոլոքոստի պարագայում:

Նշվում են դեպքեր, երբ գյուղական վայրերում հարևաններն իմացել են մեկ այլ հարևանի կողմից հայերին իրենց տներում պահելու մասին, սակայն չեն տեղեկացրել իշխանություններին: Թերևս այս պարագայում գործել է ոչ այնքան հայերին չվնասելու ցանկությունը, որքան ամուր հարևանական հարաբերությունների գործոնը:

Նկատենք, որ հողվածը չի հավակնում վերջնական պատասխանի դերին: Ցեղասպանության տարիների մասին հետագայում գրանցված հիշողությունները հազարներ են, և դրանց վերլուծությունը մեր առաջարկած տեսանկյուններից սպասում է իր հետազոտողին: Ներկայում մենք ականատեսն ենք այլ իրողության. շատ նյութեր, աստիճանաբար նաև հետազոտություններ են մեջտեղ գալիս այն հարցի վերաբերյալ, թե ի՞նչ եղավ իրապես փրկված, սակայն թուրքական-քրդական հասարակության մեջ մնացած հայերի՝ «թրից պրծածների» ու նրանց սերունդների հետ: Մարդկանց, որոնք կարծես թե իրապես փրկվեցին, որդեգրեցին, նրանց հետ ամուսնացան, ընտանիքներ կազմեցին, այսինքն, առաջին հայացքից, նրանք դարձան թուրքական պետության իրավահավասար քաղաքացիներ: Իրականում, ինչպես վկայում են մամուլի հրապարակումները, մարդկանց հուշերը, վերջապես հետազոտությունները՝ ամեն ինչ այնքան էլ հարթ չէ: Իրական, ֆիզիկական փրկությունը շատ հաճախ բերում է հոգեբանական բարդույթների, շրջապատի կողմից «օտար» նկատվելու և դրա անընդհատ շեշտադրումների: Այսպես թե այնպես, ցեղասպանության պատճառած ցավը անգամ հարյուր տարի անց շարունակում է գոյատևել «փրկվածների» սերունդներում:

К ПРОБЛЕМЕ ДЕЙСТВИТЕЛЬНОГО И МНИМОГО СПАСЕНИЯ АРМЯН В ГОДЫ ГЕНОЦИДА

МАРУТЯН А.Т.

Резюме

В последнее время, на фоне попыток урегулирования армяно-турецких отношений, большое внимание уделяется вопросу спасения армян со стороны турок в годы геноцида. В свете научного рассмотрения проблемы необходимо уточнить понятие “спасение”. С точки зрения методологии ос-

новополагающим становится сравнение с институтом “Праведники народов мира” Яд ва-Шема, в частности, с формулировкой понятия “праведник”. Сравнительный анализ, проведенный под этим углом, приводит к заключению, что, по международным меркам, реальных фактов спасения было очень мало. Их акцентирование в настоящее время преследует лишь политико-пропагандистские цели.

ON THE ISSUE OF THE TRUE AND FALSE RESCUE OF ARMENIANS DURING THE ARMENIAN GENOCIDE

H. MARUTYAN

Abstract

Recently a great attention is devoted to the issues of rescue of Armenians by Turks during the Armenian Genocide on the background of attempts of regulation of Armenian-Turkish relations. When discussing the problem in the scholarly dimension, the necessity of clarification of the term “rescue” is emerged. In an effort to accomplish this, the Jewish experience is taken into consideration, drawing upon the principles found in the concept “Righteous Among the Nations”, as articulated by Yad Vashem nearly six decades ago. The examination of question from that standpoint allows to transference the issue from a more subjective to a more objective plane. It becomes obvious, that “true” rescues, based on internationally adopted measures, were much more less and the current accentuation of “rescue” stories carries only political goals.

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ (ԵՐՈՒՍԱՂԵՄՅԱՆ) ՇՐՋԱՆԻ ՔԱՐՈՁԻՉՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԾ ՀԱՅՔՈՒՄ, ԲՈՒՆ ԱՂՎԱՆՔՈՒՄ ԵՎ ՉՈՐԱ ԵՐԿՐՈՒՄ

ՍՎԱԶՅԱՆ Հ.Ս.

Քրիստոնեության տարածումը Մեծ Հայքում, Բուն Աղվանքում և Չորա երկրում ծավալվում էր միևնույն ժամանակահատվածում և, ըստ էության, մեկ ընդհանուր գործընթացի առանձին փուլեր էր ներկայացնում: Նրա ներմուծումը նշված երկրներ կրոնականից զատ ուներ նաև գործնական նշանակություն: Բնութագրելով այն՝ Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը գրում է. «Յիսուսի Քրիստոսի աւետարանական քարոզութիւնը եւ սորվեցուցած վարդապետութիւնը լոկ տեսական կերպով ասանդուած սկզբունքներ չէին, այլ գործնական կանոններ»¹: Սկզբնական շրջանում նորածագ վարդապետությունն հիշյալ երկրներ էր հասնում Հիսուս Քրիստոսի աշակերտների կամ, ինչպես ընդունված է ասել, առաքյալների, իսկ վերջիններիս մարտիրոսվելուց հետո՝ նրանց առաքելաշավիղ հաջորդների քարոզներով, ինչն էլ թույլ է տալիս այդ ժամանակաշրջանն անվանել «առաքելական»: Տվյալ ժամանակահատվածում քրիստոնեությունը խնդրո առարկա երկրներ էր թափանցում Քրիստոնյա Արևելքի խոշորագույն կենտրոն Երուսաղեմից, որի հիման վրա սույն փուլը հավասարապես կարելի է կոչել նաև «երուսաղեմյան»: Այս շրջանը, որը քրիստոնեության՝ Բուն Աղվանք ներթափանցման առաջին փուլն է, սկիզբ է առել II դ. վաղ տասնամյակներին Թադեոս առաքյալի աշակերտ ս. Եղիշայի քարոզներով և տևել մինչև III դ. վերջերը՝ մինչև Գրիգոր Լուսավորչի ասպարեզ իջնելը, երբ քրիստոնեությունն սկսում է Աղվանք և հարակից կողմեր մուտք գործել Մեծ Հայքից՝ կազմելով նշված երկրներ ներթափանցման երկրորդ՝ մեր բնորոշմամբ, «Լուսավորչական» փուլը:

¹ **Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան**, Ազգապատում (այսուհետև՝ Ազգապատում), Կ. Ա, Ե., 2001, էջ 1:

Մինչ քրիստոնեությունն իր նախնական քայլերն էր անում հիշյալ վայրերում, Մեծ Հայքում այն արդեն գործող դավանանք էր: Եկեղեցական ավանդությունը՝ որպես Մեծ Հայքի առաջին լուսավորիչներ ընդունում է Ղեբեոս, «որ Թադեոս մականունանեցալ»² և Բարդուղիմեոս առաքյալներին, որոնք լինելով Քրիստոսի տասներկու «քրիստոսագունդ և խաչակիր»³ աշակերտներից⁴, Երուսաղեմից ուղարկվել էին Մեծ Հայք՝ այստեղ ևս Տիրոջ խոսքը ավետարանելու առաջադրանքով: Աստվածաշնչյան այս ավանդությամբ ներշնչված ս. Թադեոսին և ս. Բարդուղիմեոսին Հայոց աշխարհի առաջին լուսավորիչներ են համարում նաև միջնադարյան հայ պատմիչները՝ Մովսես Կաղանկատվացին⁵ և նրա հաջորդները, որոնցից մասնավորապես Ստ. Օրբելյանը գրում է. «Սուրբ, անբիծ, անարատ եկեղեցիս հայոց՝ անբասիր անշաղախ հարսս երկնաւոր փեսային, անկեալս ու հիմնադրեալս է սրբոց առաքելոցն Թադէոսէ և Բարդղղիմէոսէ»⁶: Ավանդությունը տեղ է գտել նաև եկեղեցական գրականության մեջ⁷: Ըստ այդմ, Ղեբեոս-Թադեոսը, «աշակերտօքն հանդերձ» գալով Երուսաղեմից, մտնում է Միջագետք, հանդիպում Եդեսիայի հայոց թագավոր Աբգար Զ-ին (72-92)⁸, բժշկում, հավատի բերում նրան ու նրա ժողովրդին, եկեղեցիներ կառուցում, դրանց սպասավորման համար քահանաներ ու սարկավազներ նշա-

² Ավետարան ըստ **Մատթեոսի**, Ժ, 3 (տե՛ս Աստվածաշունչ Մատեան Հին և Նոր Կտակարանների, Թեհրան, 1989, էջ 1096: Այսուհետև ավետարանիչներից արվող հղումները՝ Աստվածաշնչի սույն հրատարակությունից: Որ Թադեոսը Ղեբեոս է կոչվել, նշում են նաև Միքայել Ասորին (Ժամանակագրություն **Տեառն Միխայէլի ասորոց եպիսկոպոսի** (այսուհետև՝ Միքայել Ասորի) Երուսաղեմ, 1871, էջ 32) և Վանական Վարդապետը [Այլ բան է ասացեալ **Վանական Վարդապետին**. տե՛ս Գիրք թղթոց (այսուհետև՝ Գիրք թղթոց), Թիֆլիս, 1901, էջ 536]: Սուրբ Թադեոսը հայ մատենագրության մեջ հայտնի է նաև Թադե կրճատ անվամբ (տե՛ս **Մովսէս Խորենացի**, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը և ներածութիւնը Մ. Աբեղեանի եւ Ս. Հարությունեանի, Ե., 1991, էջ 151, 152 և հաջ.):

³ **Ագաթանգեղայ** Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը՝ Գ. Տեր-Մկրտչեանի եւ Ստ. Կանաեանցի, Ե., 1983, էջ 322:

⁴ **Մատթեոս**, Ժ, 3, նաև **Աւետարան ըստ Ղուկասի**, 2, 13-14, **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտոյ**, Պատմութիւն Հայոց, Ե., 1996, էջ 8:

⁵ **Մովսես Կաղանկատուացի**, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը եւ ներածութիւնը՝ Վ. Առաքելեանի, Ե., 1983, էջ 10:

⁶ Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Միւնեաց (այսուհետև՝ Օրբելյան), Թիֆլիս, 1910, էջ 450:

⁷ **Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան**, Հայոց եկեղեցին (այսուհետև՝ Օրմանյան, Հայոց եկեղեցին) Ե., 1993, էջ 23:

⁸ **Հայ ժողովրդի պատմություն**, հ. I, Ե., 1971, էջ 766:

նակում, ապա սկսած գործը շարունակելու նպատակով, արքունիքի Ադդե անունով կերպասագործին եպիսկոպոս ձեռնադրելով ու իր փոխարեն այստեղ թողնելով՝ ինքը մեկնում է Մեծ Հայք⁹: Թադեոս առաքյալի կողմից Ադդեին Ուռհա քաղաքի եպիսկոպոս ձեռնադրելու մասին, միմյանց կրկնելով, հայտնում են նաև Միքայել Ասորին ու Վանական Վարդապետը¹⁰: Միանգամայն պարզ է, որ այս գործառույթով մեծ առաքյալը դնում է միջագետքյան քրիստոնեական աթոռի հիմքերը:

Գալով Հայաստան, որտեղ այդ ժամանակ թագավորում էր Աբգարի քեռորդի Սանատրուկը (88-109)¹¹ և հաստատվելով թագավորական ամառանոցավայր Շավարշան (Արտագ-Մակու¹²), գյուղաքաղաքում¹³, որը Մեծ Հայքի Վասպուրական նահանգի գավառներից էր¹⁴, նա հաջողությամբ առաջ է տանում Ավետարանի քարոզչությունը և շատերին, այդ թվում և թագավորի մանկամարդ դստերը՝ գեղեցկուհի Սանդուխտին¹⁵ ու, անգամ, թագավորին¹⁶ դարձի բերում: Աղբյուրների հավաստմամբ, սուրբ Թադեոսը եղեսպալի աթոռի նման մի աթոռ էլ հաստատում է Կեսարիայում և ոմն Թեոփիլոսի կարգում նրա աթոռակալ: Միքայել Ասորին գրում է. «Թեոփիլոս առաջին ձեռնադրութիւն Թադէոսի ի Կեսարիա Հայոց ի Կապադովկիա»¹⁷: Բառացիորեն նույնն է ասում և Վանական Վարդապետն իր հերթին գրելով. «Թեոփիլոս՝ առաջին ձեռնադրածն Թադէոսի ի Կեսարիայ հայոց ի Կապադովկիայ»¹⁸: Մեր մյուս պատմիչներից Վարդան Արևելցին ևս սույն հանգամանքով է բացատրում Գրիգոր Լուսավորչի որդու՝ Արիստակեսի ձեռնադրումը Կեսարիայում: Ըստ նրա, Մեծ Գրիգորիսը որդուն ձեռնադրվելու է ուղարկել Կեսարիա «Վասն առաջին ձեռնադրութիւն անդ

⁹Պատմութիւն Թադէոսի առաքելոյն եւ Սանդխտոյ կուսին [Սոփերք Հայկականք (այսուհետև՝ Սոփերք), հ. Ը, Վենետիկ, 1853, էջ 59-60]:

¹⁰ Միքայել Ասորի, էջ 33, Գիրք թղթոց, էջ 536:

¹¹ Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ 766:

¹² Խորենացի, էջ 157:

¹³ Սոփերք, հ. Ը, էջ 61:

¹⁴ Աշխարհացոյց Մովսիսի Խորենացոյ Յաւելուածովք նախնեաց (այսուհետև՝ Աշխարհացոյց), Վենետիկ, 1881, էջ 32, նաև Աշխարհացոյց Վարդանայ Վարդապետի, Բարիզ, 1960, էջ 40:

¹⁵ Սոփերք, հ. Ը, էջ 61:

¹⁶ Լիակատար վարք եւ վկայաբանութիւն սրբոց, հ. Դ, Վենետիկ, 1813, էջ 17, Դրասխանակերտցի, էջ 38:

¹⁷ Միքայել Ասորի, էջ 33:

¹⁸ Գիրք թղթոց, էջ 536:

առնելոյ Թադէոսի առաքելոյն և արկանելոյ հիմունս եկեղեցւոյ և անուն եպիսկոպոսապետին՝ զոր արար անդ սուրբ առաքեալն՝ Թէոփիլոս կոչի»¹⁹:

Թադէոս առաքյալի բեղուն գործունեությունն ընդհատվում է նրա նահատակությամբ: Սանատրուկ արքան, որ սրբի քարոզների ազդեցության ներքո քրիստոնեություն էր ընդունել, երկյուղելով նախարարներից՝ հրամայում է սպանել նրան: «Եւ թագաւորն,- գրում է վարքագիրը,- բարկացեալ հրամայեաց փութալ սպանել զառաքեալն: Եւ կատարեցաւ ի նմին ժամու սրով»²⁰: «Սա (Թադէոսը-Ս.Հ.)- արդեն գրում է Կաղանկատվացին,- եկեալ ի Հայս յԱրտագ գաւառ անդ առնու վախճան մարտիրոսութեան ի Սանատրկոյ արքայէն Հայոց»²¹: Հիշյալ արքայի կողմից Թադէոսի սպանության մասին հայտնում են նաև այլ հեղինակներ, որոնց համաձայն, առաքյալի նահատակությունը տեղի է ունեցել նշված նահանգի Արտագ (Մակու) գավառում²²: Օրեր անց նույն ճակատագրին է արժանանում նաև Սանդուխտ կոյսը²³:

Ավելի ընդգրկուն էր Բարդուղիմեոս առաքյալի քարոզչության ոլորտը: Նա նույնպես դուրս է գալիս սուրբ քաղաքից ու «գբանն կենաց» քարոզելով՝ անցնում է Պարթևաց (Պարսից), Մարաց (Ատրպատական), Եդեմացվոց «որ էր մերձ ի սահմանս Հնդկաց»²⁴ և գերմանացվոց երկրներով, մտնում «ի վիճակ Թադէոսի», այն է՝ Հայոց աշխարհի և «ըստ հրամանի Հոգւոյն»²⁵ ձեռնամուխ է լինում ավետարանական լույսի քարոզչությանը՝ այն սկսելով Սյունիքի գավառներից: Ստ. Օրբելյանի վկայությամբ, «ի դառնալն Բարդուղիմեոսի ի պարսից անցեալ ընդ Ատրպատական՝ գայ իւրովք աշակերտօքն, և անցեալ ընդ գետն Երասի՝ մտանէ ի սահմանս Սիսակաւնու և սկիզբն արարեալ քարոզչութեան յՈրդվատ գետը և յԱրևիս գաւառ և ի տունն Բաղաց և ի գողթն»²⁶:

¹⁹ Հաւաքումն պատմութեան **Վարդանայ Վարդապետի** (այսուհետև՝ Վարդան Արևելցի), Վենետիկ, 1802, էջ 41:

²⁰ Սուփերք, հ. Ը, էջ 61:

²¹ **Կաղանկատվացի**, էջ 10:

²² Լիակատար վարք..., էջ 17, **Խորենացի**, էջ 157, **Դրասխանակերտցի**, էջ 38, **Վարդան Արևելցի**, էջ 34:

²³ Սուփերք, հ. Ը, էջ 61:

²⁴ Վկայաբանութիւն սրբոյն Բարդուղիմէոսի առաքելոյ եւ Ս. Ոսկեանց եւ Սուքիասաց (Սուփերք հայկականք, հ. ԺԹ, Վենետիկ, 1854, էջ 6:

²⁵ Նույն տեղում, էջ 24:

²⁶ **Օրբելյան**, էջ 21:

Մտնելով Հայոց աշխարհ՝ սուրբ Բարդուղիմեոսը քարոզչական եռանդուն աշխատանքներ է տանում և զանազան բարեգործություններ կատարում, որոնց շնորհիվ մարդիկ հետ են կանգնում իրենց սնտի հավատալիքներից և նոր վարդապետությունն ընդունում: Այս աշխատանքները խթանելու նպատակով, նա իր աշակերտներից շատերին վերակացուներ է կարգում և տեսուչներ ու քահանաներ ձեռնադրում²⁷: Նրա գործունեության մեջ խորհրդանշական էր եկեղեցիների կառուցումը, որը նա իրականացնում էր քարոզչական աշխատանքների հետ մեկտեղ: Սյունյաց տան պատմիչի հաղորդմամբ, ս. Բարդուղիմեոսը մի եկեղեցի կառուցում է Գողթնում՝ այն կոչելով «Տեռնընդառաջ»²⁸, մի եկեղեցի՝ Մաղարթում²⁹ և մի մատուռ՝ Վանանդ գյուղում Լուսիկ անունով իր վախճանված աշակերտի շիրմի վրա, որը վերածվում է սրբավայրի³⁰, բացի նորերը կառուցելուց, Բարդուղիմեոսը եկեղեցիների էր վերափոխում նաև գործող հեթանոսական տաճարները և դրանք կոչում սրբադասված քրիստոնյա գործիչների անուններով: Նրա մի այդպիսի ձեռնարկի մասին պատմում է Ստ. Օրբելյանը, նշելով, որ Վանանդում կար «բագին մի», պատմիչն ավելացնում է, որ Բարդուղիմեոսը այն կործանեաց և շինեաց ի տեղին խրթին եկեղեցի և կոչեաց յանուն սրբոյն Թովմայի»³¹:

Լուսավորելով սյունեցիներին՝ Բարդուղիմեոսն իր աշակերտներից Կումսի անունով մեկին իր փոխարեն թողնելով Սյունիքում, մեկնում է Արտաշատ³², որտեղ հանդիպում է Հուդա Թադեոսին (Հակոբոսին), որը նույնպես տասներկու առաքյալներից էր³³ և նրա հետ միասին մի գիշեր անցկացնում է Արտաշատի բլրի վրա գտնվող օթյակում³⁴: Եկեղեցական ավանդությունը, որպես դա հաստատող փաստ, մատնանշում է մի վայր տվյալ

²⁷ Սուփերք, հ. ԺԹ, էջ 24:

²⁸ Օրբելյան, էջ 21:

²⁹ Նույն տեղում, էջ 341:

³⁰ Նույն տեղում, էջ 22:

³¹ Նույն տեղում:

³² Սուփերք, հ. ԺԹ, էջ 25: Նրա կյանքի այս դրվագի մասին պատմում է նաև Ստ. Օրբելյանը, սակայն, Արտաշատի փոխարեն մատնանշում է Դվինը (Օրբելյան, էջ 22): Կարծում ենք, որ Դվինի՝ իբրև Հայոց մայրաքաղաքի հիշատակումն այստեղ վրիպակ է, քանի որ այն Հայոց մայրաքաղաք էր դարձել միայն IV դ. 30-ական թթ., Հայոց Խոսրով Գ թագավորի օրոք (330-338) և քրիստոնեության տարածման առաքելական շրջանում չէր կարող Հայոց ոստանը լինել:

³³ Ղուկաս, 2, 13-16, Սուփերք, հ. ԺԹ, էջ 25, Միքայել Ասորի, էջ 32:

³⁴ Սուփերք, ԺԹ, էջ 25:

բլրի վրա, որը, ի նշան այդ հանդիպման, կոչվում է «Օթեաց խաչ»³⁵: Եթե իրոք տեղի է ունեցել նման հանդիպում, ապա կարելի է ենթադրել, որ առաքյալները այդ ժամանակ իրենց հետագա քարոզչական աշխատանքների համար աշխարհագրական վայրերի տեղաբաշխում են կատարել: Ասվածի հավանականությունն ավելի է մեծանում աղբյուրների այն հավաստիացումներով, որ Արտաշատից Հուդա Թադեոսը մեկնում է «յիւր տեղիսն», իսկ Բարդուղիմեոսը՝ «ի Հեր և ի Զարեանդ գաւառ Հայոց»³⁶, որոնք Մեծ Հայքի Պարսկահայք նահանգի գավառներից էին³⁷: Վերջինիս քարոզչության տարածքում էր գտնվում նաև Հայոց Ուրբիանոս (Արեբանոս³⁸) քաղաքը³⁹: Բարդուղեմիոսի քարոզչական գործունեությունը նշված վայրերում նույնքան արդյունավետ էր, որքան և Սյունիքում: Շատերն են ունկնդիր լինում նրան և դարձի գալիս: Նրա քարոզներով նոր դավանանքին են հարում և այն ժողովրդի մեջ տարածելու աշխատանքներում ընդգրկվում նաև թագավորական ընտանիքի անդամներն ի դեմս Սանատրուկի քոյր Ոգուհու: «Լուսավ ի նմանէ (Բարդուղիմեոսից - Ս.Հ.),- գրում է վարքագիրը,- Ոգուհի քոյր թագաւորին Սանատրկոյ, որ էր որդի քեռ Աբգարու, և եկն առ նա ի ծածուկ, և լուեալ ի նմանէ զբանն կենաց՝ հաւատոց ի տէր մեր Յիսուս Քրիստոս ինքն և բիւրքն ամենայն... և աշակերտեալ առաքելոյն շրջէր զհետ նորա»⁴⁰: Առաքյալի քարոզներով հավատի է գալիս և հենց իր՝ Բարդուղիմեոսի կողմից մկրտվում նաև երկրի հազարապետ Տերենտիոսը, որը թագավորի հրամանով եկել էր Ոգուհուն սպանելու⁴¹: Որքան էլ հաջողություններն ուղեկցում էին Քրիստոսի ընտրյալին, այնուամենայնիվ, նա ևս չի կարողանում խուսափել առաջին լուսավորիչներին վիճակված ճակատագրից: Իմանալով նրա գործունեության մասին՝ Սանատրուկ արքան հրամայում է սպանել նրան՝ բրածեծ անելով: «Եւ տանջեալ զսուրբ առաքեալն քքօք իբրև ժամ մի արք վեց» սպանում են նրան⁴²: Թագավորական հրամանով սպանվում են նաև առաքյալի գործակիցները՝ Ոգուհին

³⁵ Ազգապատում, հ. Ա, էջ 13:

³⁶ Սուփերք, հ. ԺԹ, էջ 25:

³⁷ Աշխարհացոյց, էջ 32:

³⁸ **Խորենացի**, էջ 15:

³⁹ Սուփերք, հ. ԺԹ, էջ 26:

⁴⁰ Նույն տեղում:

⁴¹ Նույն տեղում, էջ 26-27:

⁴² Նույն տեղում, էջ 28:

ու հազարապետը, բայց, ի տարբերություն ս. Բարդուղիմեոսի, նրանց սպանությունը կատարվում է սրով: «Իսկ զերանելի Ոգուհի և զհազարապետն, պատմում է վարքագիրը, - սպան սրով և զայլս բազումս ընդ նոսա»⁴³: Ըստ Խորենացու, Բարդուղիմեոսի նահատակությունը տեղի է ունենում Հայոց Արեբանոս քաղաքում⁴⁴, որին «օտարներ ավելի մերձավորությամբ Ալբանոս կամ Ալբանոպոլիս կը գրեն»⁴⁵: Ելնելով նշված քաղաքին տրվող լատինական այս հնչողությունից՝ Մ. Օրմանյանը այն նույնացնում է Պաշքաղե քաղաքի մոտակայքում ընկած Աղբակ վայրի հետ և որոշում, որ սրբի նահատակությունը տեղի է ունեցել այստեղ, որտեղ գտնվում է նաև ս. Բարդուղիմիոսի անունով հայտնի մի վանք և նրան վերագրվող գերեզման⁴⁶:

Եկեղեցական ավանդությունը, որպես Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների գործունեության տարիներ, Մեծ Հայքում մատնանշում է համապատասխանաբար՝ 35-43 և 44-60 թթ.⁴⁷: Մ. Բարխուտարյանցը, իր հերթին, անդրադառնալով այս հարցին, գրում է. «Հայոց հոգևոր լուսաւորութիւնն սկսած էր փրկչական 34-ին Թադեոս և Բարդուղիմեոս Ս. Առաքեալների ծնունդով Ս. Աւետարանի քարոզչութեամբ»⁴⁸: 2001 թ. կազմված Հայոց հայրապետների ցանկում Թադեոս առաքյալի համար նշված են 43-66 թթ., իսկ Բարդուղիմեոս առաքյալի համար՝ 66-68 տարիները⁴⁹: Սակայն այդ թվականները, մեր կարծիքով, ճշգրտման կարիք ունեն: Բանն այն է, որ հիշյալ սրբերի մասին խոսող աղբյուրները նրանց միաբերան ներկայացնում են իբրև Հայոց Սանատրուկ թագավորի ժամանակակիցներ, որի հրամանով էլ նրանք նահատակվել են: Հայ պատմագիտությունը որպես «առաքելասպան»⁵⁰ այս թագավորի իշխանության տարիներ համարում է 88-109 թթ.⁵¹, ինչն ուղղակիորեն լույս է սփռում նաև առաքյալների քարոզչական գործունեության ժամանակաշրջանի վրա: Հիմք ընդունելով պաշտոնապես ճանաչված այս թվականները՝ վստահաբար կարծում ենք, որ նրա

⁴³ Նույն տեղում, էջ 30:

⁴⁴ **Խորենացի**, էջ 158:

⁴⁵ Ազգապատում, հ. Ա, էջ 15:

⁴⁶ **Օրմանյան**, Հայոց եկեղեցին, էջ 23, Ազգապատում, հ. Ա, էջ 15:

⁴⁷ **Օրմանյան**, Հայոց եկեղեցին, էջ 24, Ազգապատում, հ. Ա, էջ 19:

⁴⁸ **Բարխուտարեանց Մ.**, Պատմութիւն Աղուանից, հ. Ա, Վաղարշապատ, 1903, 1902, էջ 56:

⁴⁹ Հայոց եկեղեցի, նվիրապետական աթոռներ, թեմեր, Ե., 2001, էջ 215:

⁵⁰ **Փաւստոսի Բյուզանդացոյ Պատմութիւն Հայոց**, Ե., 1987, էջ 12:

⁵¹ Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, էջ 766:

Ժամանակակից առաքյալներն իրենց լուսավորչական աշխատանքները Մեծ Հայքում ծավալել են ոչ շուտ, քան I դ. վերջերին և II դ. սկզբներին: Ասվածը իրական է հնչում նաև այն առումով, որ այդպիսով հերքվում է տարածված այն թյուր տեսակետը, թե մեր առաջին լուսավորիչները Մեծ Հայքում հաջորդել են իրար, այն դեպքում, երբ աղբյուրների հավաստմամբ, նրանք գործել են միաժամանակ⁵²:

Այսպիսով, Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալներն աստվածային գիտության խոսքը Հայոց աշխարհում սկսել են քարոզել I և II դարերի սահմանագլխին՝ հարավարևելյան նահանգներում՝ Վասպուրականում, Պարսկահայքում ու Սյունիքում, և դրա համար հատուցել են կյանքով:

Ս. Թադեոս և ս. Բարդուղիմեոս առաքյալների նահատակությամբ, սակայն, նոր վարդապետության քարոզչական աշխատանքները չեն դադարում. շարունակում են նրանց աշակերտները, որոնք անտեսելով մշտական հետապնդումներն ու դարանակալած մահը՝ անվարան առաջ էին տանում իրենց ուսուցիչների գործը մինչև Հայաստանի ամբողջական դարձը Գրիգոր Լուսավորչի ձեռքով: Այդ աշակերտների մեջ առաջիններից էին Զաքարիա հայրապետը, որը դեռևս Թադեոսի կենդանության օրոք դարձել էր նրա «լծակիցը»⁵³, և Կումսին՝ Հայոց մյուս լուսավորիչ Բարդուղիմեոսի աշակերտը, որ ձեռնադրվում և Սյունյաց Աթոռի գլուխ է կանգնում, անձամբ իր՝ Բարդուղիմեոսի կողմից⁵⁴: Մ. Օրմանյանը նշվածներից տեր Զաքարիային համարում է Հայոց առաջին հայրապետը և նրան, քառամյա հովվապետության շրջան վերագրելով⁵⁵, դասում սրբերի շարքը: «Չվարանեցանք, - գրում է նա, - **Սուրբ** անունով վերածայնել մեր եկեղեցւոյ առաջին հայրապետը»⁵⁶: Տեր Զաքարիան առանձնապես հայտնի է դառնում նրանով, որ եղել է Թադեոս առաքյալի ունկնդիրը և գրի առել նրա սահմանած կանոնները⁵⁷: «Զայս արինադրութիւն,- գրում է նա այդ կանոններ-

⁵² Հմմտ. Ազգապատում, հ. Ա, էջ 13-14:

⁵³ Սուփերք, հ. Ը, էջ 53, 72, 54, նաև Միքայել Ասորի, էջ 33:

⁵⁴ Օրբելյան, էջ 22:

⁵⁵ Ազգապատում, հ. Ա, էջ 28:

⁵⁶ Նույն տեղում, էջ 29 (ընդգծ.՝ Մ.Օ.):

⁵⁷ Սահմանք կանոնաց սուրբ առաքելոյն Թադէոսի ի քաղաքին Ուռհայ ի լուսաւորել զնոսա (տե՛ս Կանոնագիրք Հայոց, հ. Բ, աշխատասիրությամբ՝ Վազգեն Հակոբյանի, Ե., 1971, էջ 19-40):

րի վերջաբանում,- ես՝ Զաքարիա, աշակերտ առաքելոյն Թադեոսի գրեցի որպէս լուայ ի նմանէ»⁵⁸:

Տեր Զաքարիան, իր քրիստոնեական ընթացքով նմանվելով առաքյալներին, մահով էլ չի տարբերվում նրանցից: Մ. Օրմանյանի դիտարկումով, նրա նահատակությունը ևս այն «նոյն հալածանքների շարունակությունն էր, որուն զոհ գացած էին առաքելները»⁵⁹:

Նույն ժամանակներում Սյունյաց Աթոռը գլխավորում էր վերոհիշյալ Կումսին, ինչն հաստատում է Ստ. Օրբելյանը՝ գրելով. «Կացուցանէ (Բարդուղիմեոսը-Ս.Հ.) նոցա (սյունեցիներին-Ս.Հ.) տեսուչս, զի մի վերստին մոլորեցին ի կռապաշտութիւն, զոմն յաշակերտաց իւրոց Կումսի անուն, ձեռնադրեալ զնա եպիսկոպոս: Եւ ինքն յանձն արարեալ զնա Սուրբ Հոգւոյն՝ գայ ի Վանանդ»⁶⁰: Մ. Օրմանյանը, սակայն, Սյունյաց առաջին եպիսկոպոս է համարում Եվստաթեոս անունով մի սրբի, որը Թադեոս առաքյալի աշակերտներից էր «եւ անոր կողմանէ Սյունյաց եպիսկոպոս ձեռնադրուած»⁶¹: Առաքելաշափող այս սուրբը երկար տարիներ քարոզել է նահանգում, այդ ընթացքում ապրել Տաթևի վանքում, իսկ վախճանվելուց հետո ամփոփվել վանքի բակում և, այդպիսով, իր անունը թողել վանքի վրա⁶²: Վանքը երկար տարիներ լինելով եպիսկոպոսի նստավայրը՝ ստացել է նաև «Եւստաթէոսի աթոռ» անվանումը: Վարդան Վարդապետը գրում է. «Մեծ Սիւնիս և Փոքր Սիւնիս ուր կայ աթոռն Եւստաթէի առաքելոյն, որ կոչի Տաթև»⁶³: Նրա մասին այլ տեղեկություններ չկան, բայց արդեն իսկ այն հանգամանքը, որ նա հիշատակվում է որպես աթոռի անվանադիր, թույլ է տալիս կարծելու, որ նա այն երևելի քարոզիչներից էր, որոնք առաքելական շրջանում իրենց մեծ ներդրումն են ունեցել Մեծ Հայքում քրիստոնեության տարածման գործում: Այնուհանդերձ, հիմք ընդունելով Ստ. Օրբելյանի վերոբերյալ հաղորդումը Կումսիի մասին՝ գտնում ենք, որ ս. Բարդուղիմեոսը Սյունիքից հեռանալիս իր փոխարեն թողել է հատկապես իր այս աշակերտին: Անհայտ է վերջինիս հետագա ճակատագիրը: Ստ. Օրբելյանը, որ Կումսիին հիշատակող միակ պատմիչն է, նշելով

⁵⁸ Նույն տեղում, էջ 40:

⁵⁹ Ազգապատում, հ. Ա, էջ 28:

⁶⁰ Օրբելյան, էջ 22:

⁶¹ Ազգապատում, հ. Ա, էջ 25:

⁶² Նույն տեղում:

⁶³ Աշխարհացոյց Վարդանայ Վարդապետի, էջ 12:

Բարդուղիմեոսի կողմից նրան Սյունյաց եպիսկոպոս կարգելու փաստը՝ առանց մանրամասնությունների մեջ խորանալու, անմիջապես գուժում է նրա մահը: «Յետ այսորիկ (Բարդուղիմեոսի հեռանալուց հետո-Ս.Հ.) վախճանեցաւ Կումսի», - գրում է նա⁶⁴, ինչից կարելի է եզրակացնել, որ Կումսին իր մահկանացուն կնքել է խաղաղությամբ:

Զաքարիան և Կումսին առաքելական շրջանի վերջին քարոզիչները չէին: Նրանց հաջորդները, միմյանց փոխարինելով հաստատուն են պահել քրիստոնեական հավատը: Նրանք էին, որ, Ստ. Օրբելյանի բառերով արտահայտված, «զկեսնս իւրեանց վարէին զբազումս ուսուցանելով յոլով ժամանակօք՝ մինչ ի գալ մեծի լուսաւորչին ի Հայս և ի լուսաւորելն զամենայն աշխարհս Հայոց»⁶⁵: Մ. Օրմանյանը հավաքել և կազմել է մինչ Լուսավորչի ասպարեզ իջնելը հովված հայրապետների ցանկը, որի համաձայն, նրանք քսանչորսն էին՝ ներառյալ նաև առաքյալները⁶⁶, և իրենց գործունեությամբ ապահովում էին առաքելական հավատի շարունակական գոյությունը: Հիշյալ ցանկում, սակայն, տեղ են գտել առաքելական շրջանի սուկ այն գործիչները, որոնք քարոզչական աշխատանքներ են տարել երկրի հարավարևելյան կողմերում՝ արդեն նշված Վասպուրականում, Պարսկահայքում և Սյունիքում: Մինչդեռ նույն շրջանում լուսավորչական լայն գործունեություն էր ծավալվել նաև Հայոց հյուսիսարևելյան կողմերում կամ հայկական Ուտիք և Արցախ նահանգներում, ընդ որում, այն քարոզիչների կողմից որոնք ավանդաբար համարվում են յոթանասնից խմբից և աշակերտել էին Թադեոս առաքյալին: Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Հայոց հյուսիսարևելյան կողմանց նահանգներում քարոզած այդ գործիչներից անվանապես հիշատակվում են Թադեոսի աշակերտներ Եղիշա, Խադ և Դարդիում կամ Դադո եպիսկոպոսները, որոնք իրենց գործունեությամբ մնացել են պատմության ծալքերում և հավերժացվել իրենց նվիրված սրբավայրերով: Նշված խնդրում առանձնապես մեծ է Եղիշայի դերը, որն իր ծավալուն և արդյունավետ քարոզչական աշխատանքների համար սրբադասվել է և դիտվել նաև որպես առաքյալ: Ընդարձակ էր ս. Եղիշայի գործունեության աշխարհագրությունը. մինչ

⁶⁴ Օրբելյան, էջ 22:

⁶⁵ Նույն տեղում, էջ 23:

⁶⁶ Ազգապատում, հ. Ա, էջ 30: Հայոց կաթողիկոսների ամբողջական ցանկը, ավանդական հայրապետներով հանդերձ (Հայոց եկեղեցի, նվիրապետական աթոռներ..., էջ 25-29):

Հայոց Արևելից կողմերում հայտնվելը, նա նոր վարդապետության սերմերը տարածել էր Բուն Աղվանքում և Չորա երկրում, դարձել այդ երկրների առաջին լուսավորիչը:

Սուրբ Եղիշան սկզբնական շրջանում Թադեոս առաքյալի հետ միասին քարոզչական աշխատանքներ է տարել Մեծ Հայքում Ուսուցչի նահատակվելուց հետո, ապա վերադառնում է Երուսաղեմ և Տեառնեղբայր Հակոբոսի կողմից եպիսկոպոս ձեռնադրվելով՝ կրկին ուղարկվել Հայաստան⁶⁷: Ստանալով նոր նշանակում՝ Թադեոսի աշակերտը, դուրս գալով սուրբ քաղաքից, Պարսկաստանի վրայով, շրջանցելով Հայաստանը, մտնում է Չոդա երկիր և, օգտվելով ընձեռված հնարավորությունից, սկսում առաքելությանն հարիր քարոզչական գործունեությունը: Այստեղ նա, Կաղանկատվացու տեղեկատվությամբ, «զբաղումն աշակերտեալ ծանոյց զփրկութիւնն»⁶⁸: Աշակերտներ ուսուցանելով ու տեղում քրիստոնեության տարածման համար նվիրյալ հետևորդներ պատրաստելով, Եղիշան Չոդից ուղևորվում է Հայոց Արևելից կողմեր, ուր տանող ճանապարհին անցնում էր Աղվանքի տարածքով: Ուստի ս. Եղիշան, շարժվելով այդ ուղղությամբ, հընթացս մտնում է Աղվանք և համանման գործունեություն ծավալում: Որ Եղիշան եղել է Աղվանքում և քարոզչական աշխատանքներ տարել նաև այնտեղ, ցույց են տալիս նրա անվան հիշատակումներն Աղվանից հայրապետների ցանկերում⁶⁹, նրան տրվող առաքելական հավատի հիմնադիր և Աղվանքի լուսավորիչ որակումները⁷⁰, Բուն Աղվանքում նրա պատմին կանգնեցված պատմաճարտարապետական հուշարձանները՝ «Եղիշ-Առաքյալ» անուններով եկեղեցիները, վանքերը, մատուռներն ու այլ կրոնական շինություններ⁷¹:

⁶⁷ Կաղանկատվացի, էջ 10, 274, տե՛ս նաև Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատությամբ՝ Կ.Ա Մելիք-Օհանջանյանի, Ե., 1961, էջ 192-193:

⁶⁸ Կաղանկատվացի, էջ 10:

⁶⁹ Նույն տեղում, էջ 342, Գանձակեցի, էջ 192, Մխիթար Գոշ (տե՛ս Կաղանկատվացի, Յանելուած Բ, էջ 350), նաև Հայապատում, պատմիչք և պատմութիւնք Հայոց, յ'օրինեալ եւ հաւաքալ ի Հ. Ղեւոնդեայ Մ Ալիշան (այսուհետև՝ Հայապատում), Վենետիկ, 2001, էջ 384, Մխիթարոյ Այրիվանեցոյ Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860, էջ 19:

⁷⁰ Կաղանկատվացի, էջ 300, 342, Գանձակեցի, էջ 192:

⁷¹ Բարխուտարեանց Մ., Աղուանից երկիր եւ դրացիք (Միջին Դաղստան), Թիֆլիս, 1893, էջ 218, 236, 248, Կարապետյան Ս., Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը, գիրք 1, Ե., 1997, էջ 39, 42, 87, 95:

Այսպիսով, լինելով Աղվանքում, Երուսաղեմի պատվիրակը, ինչպես դժվար չէ կռահել, զբաղվել է բեմասացությամբ, շատերին հավատի բերել, մկրտել և ծագող վարդապետության հիմքերը գցել:

Նշված գործերով Աղվանքում քրիստոնեության մասին առաջին պատկերացումները սերմանելուց հետո ս. Եղիշան, իր առաքելությունն այստեղ համարում է ավարտված և երեք աշակերտով գալիս է Հայոց Արևելից կողմեր և, մտնելով Ուտիք, նույն ջանադրությամբ շարունակում քարոզչությունը: Ուտիքում նրա քարոզչության վայրեր են դառնում Սահառն քաղաքը, Գիս ավանը, Հոմենք վայրը, դիցամուլ կռապաշտների բնակավայրերը և հեթանոսական խմբերի այլ կենտրոններ⁷²: Ինչպես վկայում է Կաղանկատվացին, ս. Եղիշան Գիսում է կառուցել այս կողմերի առաջին եկեղեցին, պատարագ մատուցել, զարկ տվել եկեղեցաշինությանը և տարածաշրջանի լուսավորության սկիզբը դրել⁷³: Նրա ձեռնարկումները, սակայն, հարուցում են տեղի քրմերի և մոլեռանդ ամբոխի զայրույթը, և սրանք խոշտանգելով սպանում են քարոզչին, դին գցում Ջերգոնի կոչվող դաշտում գտնվող հատուկ մահապարտների համար նախատեսված փոսը⁷⁴: Ինչպես ցույց են տվել ուսումնասիրությունները, ս. Եղիշայի նահատակությունը տեղի է ունեցել մ.թ. II դ. առաջին տասնամյակներին⁷⁵:

Աբ. Եղիշան իր գործունեության շրջանում, սակայն, հասցնում է լուսավորել ընդամենը «զմասունս ինչ արևելից հիւսիսոյ, այլ ոչ զամենեսեան»⁷⁶: Մինչդեռ Երուսաղեմի նպատակը ողջ Մեծ Հայքի քրիստոնեացումն էր, ուստի, Եղիշայից բացի, նույն կողմերն է ուղարկում նաև այլ քարոզիչների, որոնց մեջ հիշատակության արժանի անուն են թողել Խադ, «որ ասորի անուն մ' է»⁷⁷ և Դադդիում (Դադի-Դադո) անուններով եպիսկոպոսները: Եկեղեցական ավանդության համաձայն, վերջիններս ևս Թադեոս առաքյալի աշակերտներից էին՝ յոթանասնից, և նրա կողմից Եղի-

⁷² Կաղանկատվացի, էջ 10:

⁷³ Նույն տեղում:

⁷⁴ Նույն տեղում, էջ 11: Չողա երկրում, Աղվանքում և Հայոց Արևելից կողմերում Եղիշայի վարած գործունեության մասին ավելի մանրամասն, տե՛ս **Սվազյան Հ.Ս.**, Սուրբ Եղիշան Հայոց Արևելից կողմանց, Չողա երկրի և Աղվանից աշխարհի լուսավորիչ (Լրաբեր հասարակական գիտությունների, 2000, N 2, էջ 55-65):

⁷⁵ **Սվազյան Հ.Ս.**, Քրիստոնեության Աղվանք ներթափանցման ուղիներն ու ժամանակաշրջանը (Պատմա-բանասիրական հանդես, 2002, N 2, էջ 131-141):

⁷⁶ Կաղանկատվացի, էջ 14:

⁷⁷ Հայապատում, էջ 47:

շայի հետ միասին ուղարկվել էին Հայոց Արևելից կողմեր՝ քրիստոնեություն տարածելու համար: «Եւ Եղիշէ և Խադայ, - գրում է Վանական Վարդապետը - յեթանասնիցն և գնացին ի կողմանս Աղուանից (իմա՝ Հայոց Արևելից կողմեր-Ս.Հ.) հրամաւ Թադէոսի և անդ կատարեցան»⁷⁸:

Եղելության նույն պատկերն է ցույց տալիս նաև Դադիում եպիսկոպոսի մասին իր տեղեկություններով: Ըստ դրանց, «Դադիում՝ յեթանասնիցն որ գնաց հրամանաւ Թադէոսի ի Մեծն Հայք և ի կողմանս հիւսիսոյ, և լուեալ զմահն Աբգարու դարձեալ եմուտ ի Փոքր Սինիս (Արցախ-Ս.Հ.) և կրօնաւորեալ անդէն ծածկաբար վախճանեցաւ և տեղին շինեցաւ վանք, և յանուն նորա կոչեցաւ»⁷⁹: Անշուշտ, հենց նրան նկատի ունի Միքայել Ասորին, որը նույն իրադարձությունների շուրջ խոսելիս, Արցախ ուղարկված քարոզչին կոչում է Թադէոս, որը, ամենայն հավանականությամբ, Դադիում անվան ուղիղ ձևն է: «Թադէոս,- գրում է նա,- մի յեթանասնիցն, որ գնաց հրամանաւ Թադէի ի Մեծն Հայք, և ի կողմանս հիւսիսոյ, և լուեալ զմահն Աբգարու, դարձաւ և եմուտ ի Փոքր Սինիք և կրօնաւորեալ անդէն ծածկաբար վախճանեցաւ և տեղն շինեցաւ վանք և յանուն նորա կոչեցաւ»⁸⁰: Վանքը, որ հիշատակում են պատմիչները, անկասկած, Դադի վանքն է, որը գտնվում էր Արցախի Խորածոր կոչվող վայրում՝ ներկայիս Արցախի Հանրապետության Քարվաճառի շրջանում: Նրա այս տեղը մատնացույց է անում Մովսես Կաղանկատվացին, որ պատմելով Հայոց Արևելից կողմերում IX դարում ծագած ներտոհմական խռովությունների մասին՝ գրում է. «Վարազ Տրդատ և զորդի իւր Ստեփաննոս Ներսէսի ի Փիլիպեան ազգակիցն իւրեանց սպան ի միում ժամու ի Խորածորն, որ կոչի Դադիի վանք»⁸¹: Ուրեմն, ինչպես պարզորոշ երևում է վկայակոչված քաղվածքներից, ուսումնասիրվող ժամանակներում, այն է՝ մ.թ. II դ. առաջին տասնամյակներին, քրիստոնեությունը սկսում է տարածվել նաև Արցախում, որը նույնպես իրականացնում էին Երուսաղեմից ուղարկված քարոզիչները, մասնավորապես, Խադ և Դադիում եպիսկոպոսները⁸²: Որ վերջիններիս գործունեության ոլորտը եղել է Արցախը,

⁷⁸ Հայապատում, էջ 47, Գիրք թղթոց, էջ 536:

⁷⁹ Գիրք թղթոց, էջ 53, Հայապատում, էջ 57:

⁸⁰ Միքայել Ասորի, էջ 33:

⁸¹ Կաղանկատվացի, էջ 340:

⁸² Կարծիք կա, թե նրանք Հայոց Արևելից կողմերում գործել են Մանուկ Գրիգորիսից հետո (տե՛ս Ուլուքաբյան Բ., Հայոց Արևելից կողմանց եկեղեցին և մշակույթը, Ե.,

ցույց են տալիս նաև այն ձեռակերտ հուշարձանները, որոնք կերտել է հավատավոր ժողովուրդը նրանց հիշատակը հավերժացնելու նպատակով: Այստեղ՝ Տրտու (Թարթառ) գետի հովտում են գտնվում հիշյալ քարոզիչների անունները կրող Խադավանք կամ Խաթրավանք ու Դադիվանք կամ Խութավանք վանական համալիրները, որոնք հայ ճարտարապետության գոհարներ և մինչև օրս գործող սրբավայրեր են⁸³:

Դատելով Խադ. և Դադիում եպիսկոպոսների մասին մեզ հասած ժլատ տեղեկություններից՝ առաջին քարոզիչները մշտական հետապնդումներից ու հալածանքներից խուսափելու համար, գործել են խիստ գաղտնի պայմաններում՝ «ծածկաբար», ինչն էլ, թերևս, պատճառ է դարձել, որ Արցախում նրանց ծավալած քարոզչության մասին գրավոր աղբյուրները շատ մանրամասնություններ չեն հաղորդում: Բայց նրանց անունները, որպես քարոզիչների, մնացել են գրավոր մատյաններում ու եկեղեցական շինությունների վրա: Այդ փաստն անվերապահորեն խոսում է այս եպիսկոպոսների իրականացրած լայնածավալ ու բարեհաջող գործունեության մասին:

Արդյունավետ էր քրիստոնեության առաքելական կամ երուսաղեմյան շրջանի քարոզողների գործունեությունը: Հայոց Արևելից կողմերում և հարակից Աղվանից աշխարհում ու Չոլա երկրում: Նրանց անդուլ ջանքերի շնորհիվ նշված վայրերում շատերն են հեռանում հեթանոսական սո-

2001, էջ 28), որն ընդունելի չէ, քանի որ այն կազմվել է աղբյուրների հաղորդումների հակառակ, որոնցում, ինչպես տեսանք, Խադը հիշատակվում է Եղիշայի հետ կողք կողքի, այսինքն՝ որպես նրան ժամանակակից գործիչ, և Դադիումի հետ միասին դասվում Թադեոս առաքյալի յոթանասուն աշակերտների թվում. նրանք իրենց ուսուցչի հրամանով են մեկնել Հայոց Արևելից կողմեր, մինչդեռ հայտնի է, որ Մանուկ Գրիգորիոսը նշված մարզեր և Աղվանք է ուղարկվել Գրիգոր Լուսավորչի կողմից, իրենց իսկ՝ աղվանացիների խնդրանքով, սուկ IV դ. սկզբներին: Հետևաբար, ավելի շատ Մանուկ Գրիգորիսն ինքն է նրանցից հետո ասպարեզ իջել և գործել պատմականորեն բոլորովին այլ ժամանակաշրջանում, քան հակառակը:

⁸³Այս վանքերի մասին հանգամանորեն տե՛ս **Բարխուդարեանց Մ.**, Արցախ, Բագու, 1905, էջ 203: **Մկրտչյան Շ.**, Լեռնային Ղարաբաղի պատմա-ճարտարապետական հուշարձանները, Ե., 1980, էջ 33 և հաջ., էջ 44 և հաջ., Դիվան հայ վիմագրության, պր. V (Արցախ), կազմեց Բարխուդարյան Ս.Գ., Ե., 1982, էջ 121, 197, **Ուլուքաբյան Բ.**, Հայոց Արևելից կողմանց եկեղեցին և մշակույթը, էջ 302 և հաջ., էջ 410 և հաջ., **Կարապետյան Ս.**, Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, Ե., 1999, էջ 81 և հաջ.:

վորություններից և հավատով լցվում նոր կրոնի հանդեպ: Այս շրջանում են հիմնվում կրոնական առաջին պարզ կազմավորումները՝ համայնքները, կառուցվում առաջին եկեղեցիները, ծիսակարգեր են սահմանվում ու քրիստոնեության հետագա ընթացքի համար հիմքեր ստեղծվում: Սույն ժամանակաշրջանում են հաստատվում նաև եկեղեցական-նվիրապետական աթոռները, որոնք հիմնադրվելով Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների կողմից, իրենց ընդհանրական դերով, հայկական միջավայրում տիեզերական աթոռների նշանակություն են ստանում: Հետևելով իր ուսուցչի օրինակին՝ նմանօրինակ մի աթոռ է հիմնադրում նաև ս. Եղիշան Ուտիքի Գիս ավանում, որտեղ եկեղեցի էր կառուցել՝ այս կողմերի առաջին եկեղեցին, պատարագ մատուցել ու վայրը վերածել «արևելայց եկեղեցեացս մայրաքաղաքաց և լուսավորութեան տեղի»⁸⁴: Նոր աթոռի հանդես գալով՝ Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների հիմնադրած Եդեսիայի (Ուռհա), Կապադովկիայի (Կեսարիա-Մաժոք), Արտագ-Մակուի և Սյունյաց (Գողթն) աթոռների կողքին ավելանում է նաև Եղիշայի՝ նշված կողմերի առաջին լուսավորչի հիմնած սույն աթոռը, որն հաստատվում է Հայոց Արևելից կողմերում, մասնավորապես, Ուտիքի Գիս ավանում: Ուտի այն, ամենայն իրավամբ, կարող է կոչվել «Եղիշայի աթոռ», ինչպես անվանակոչվել են տարածաշրջանի առանձին վանքեր ու մատուռ-սրբավայրեր⁸⁵:

Այս խմբին, նույն ցանկերում⁸⁶, հաջորդում է արդեն 30-ական թվականներին նշված տարածաշրջանում կրոնավորած մանուկ Գրիգորիսը, որի գործունեության ժամանակաշրջանը համընկնում է Գրիգոր Լուսավորչի հանդես գալով սկզբնավորված նոր՝ Լուսավորչական փուլի հետ և այլ ուսումնասիրության մաս է կազմում:

⁸⁴ **Կաղանկատվացի**, էջ 10:

⁸⁵ Առաքելաշավիղ այս գործչի անունով «Եղիշե առաքյալի վանք» է կոչվել Մռավ սարի ստորոտում գտնվող Զրվշտիկ վանքը, որտեղ, ավանդության համաձայն, ամփոփված են եղել նրա նշխարները (**Կաղանկատվացի**, էջ 12): Սրա ու ս. Եղիշայի անունով կոչվող մատուռ-ուխտատեղիների մասին մանրամասն տե՛ս **Քարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 234-239, **նույնի՝** Աղուանից երկիր եւ դրացիք (Միջին Դաղստան), էջ 218, 236, 248, **Մկրտչյան Շ.**, Լեռնային Ղարաբաղի..., էջ 64-66, Դիվան հայ վիմագրության, պր. V (Արցախ), էջ 194, 195, **Կարապետյան Ս.**, Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը, Ե., 1997, էջ 42:

⁸⁶ Ցանկերի հանգամանալից վերլուծությունը տե՛ս **Սվազյան Հ.Ս.**, Աղվանքի հոգևոր առաջնորդները նախակաթողիկոսական շրջանում (Պատմա-բանասիրական հանդես, 2004, № 3, էջ 189-198):

ДЕЯТЕЛЬНОСТЬ ПРОПОВЕДНИКОВ АПОСТОЛЬСКОГО (ИЕРУСАЛИМСКОГО) ПЕРИОДА РАСПРОСТРАНЕНИЯ ХРИСТИАНСТВА В ВЕЛИКОЙ АРМЕНИИ, АЛУАНКЕ И СТРАНЕ ЧОР

СВАЗЯН Г.С.

Резюме

В Великую Армению, Алуанк и страну Чор христианство проникло из Иерусалима и получило распространение благодаря апостолам Христа и его последователям. В частности, в Алуанк и сопредельные ему страны христианское учение проникло в первые десятилетия II в. Здесь его проповедниками были ученики апостола Фаддея. Это был первый – апостольский, или иерусалимский период проникновения новой религии в эти страны. В этом историческом отрезке главными проповедниками были св. Егише и епископы Хад и Дадум (Дади), которые успешно проповедовали в Чоре, Алуанке и Северо-Восточных краях Великой Армении – Утике, Арцахе.

Первыми духовными отцами этого периода были Матеос, Саак, Мовсес, Панд и Лазарь, еще до Григория Просветителя способствовавшие укреплению христианской веры в названном регионе. С проповеднической деятельностью Григория Просветителя начался просветительский период проникновения христианства в Алуанк и соседние с ним края.

THE ACTIVITY OF THE PREACHERS OF THE APOSTOLIC (JERUSALEM) PERIOD OF THE SPREAD OF CHRISTIANITY IN GREAT ARMENIA, ALUANC AND THE COUNTRY CHOR

H. SVAZYAN

Abstract

Christianity penetrated in Great Armenia, Aluanc and Chor from Jerusalem and was spread by the apostles of Christ and his followers. In particular, in Aluanc and its neighboring countries, the Christian doctrine penetrated in the

first decades of the II century. Here his preachers were disciples of the apostle Thaddeus. This was the first, the Apostolic, or Jerusalem period of the penetration of the new religion into these countries. In this historical period, the main preachers were St. Yeghishe and bishops Khad and Dadum (Dadi), who successfully preached in Chor, Aluanc and the Northeast regions of Great Armenia-Utik and Artsakh.

The first spiritual fathers of this period were Mateos, Sahak, Movses, Pand and Lazarus, who even before Gregory the Illuminator contributed to the strengthening of the Christian religion in the region. With the preaching work of Gregory the Illuminator, the Enlightenment period of the penetration of Christianity into Aluanc and the neighboring regions began.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԱՔԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԻԳԱՅԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Ռ.Կ.

2004-2008 թվականները կարելի է բեկումնային համարել Հայաստանի և Արաքական աշխարհի համագործակցության համար:

Արաքական պետությունների լիգայի /ԱՊԼ/՝ որպես արաքական աշխարհը համախմբող միակ և ամենագլխավոր կառույցի հետ կապերը մշտապես կարևորվել են ՀՀ-ի բազմակողմ համագործակցությունների համատեքստում: Կահիրեում ԱՊԼ-ի կենտրոնակայանի գտնվելու հանգամանքը դյուրացրել է շփումներն այդ կազմակերպության հետ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այնտեղ է տեղակայված Աֆրիկյան մայրցամաքում ՀՀ-ի միակ դեսպանությունը:

2001 թ. ԱՊԼ գլխավոր քարտուղարի պաշտոնում Ամր Մուսայի¹ ընտրությունից հետո այդ կազմակերպությունն սկսեց առավել մեծ ուշադրություն դարձնել ոչ միայն աշխարհաքաղաքական կենտրոնների, այլև տարբեր պետությունների հետ համագործակցությանը: Ստեղծվեցին ԱՊԼ-Չինաստան, ԱՊԼ - Լատինական Ամերիկա, ԱՊԼ - ԵՄ և համագործակցության այլ խորհուրդներ:

Օգտվելով վերոնշյալ բարենպաստ պայմաններից՝ Եգիպտոսում ՀՀ դեսպանությունը ակտիվ աշխատանքներ նախաձեռնեց ԱՊԼ-ի հետ համագործակցությունն ամուր իրավական հիմքերի վրա դնելու ուղղությամբ:

Որպես առաջին քայլ՝ 2004 թ. սկիզբ դրվեց ԱՊԼ-ի և ՀՀ ԱԳՆ-ի գործուն շփումներին ու քննարկումներին՝ կիրառելով տարբեր բազմակողմ համաժողովների շրջանակները: Այդ հանդիպումների, ինչպես նաև Եգիպտոսում ՀՀ դեսպանության աշխատանքների շնորհիվ 2005 թ. հունվարին

¹ Ամր Մուսան Եգիպտոսում մեծ հեղինակություն վայելող քաղաքական և հասարակական գործիչ է, վաստակաշատ և հմուտ դիվանագետ: Նա որպես ԱՊԼ գլխավար քարտուղար պաշտոնավարեց մինչև 2011 թ., իսկ մինչ այդ զբաղեցնում էր Եգիպտոսի Արաքական Հանրապետության արտաքին գործերի նախարարի պաշտոնը /1991-2001 թթ./:

ՀՀ ԱԳ նախարար Վ. Օսկանյանի՝ Եգիպտոս կատարած պաշտոնական այցի ընթացքում հանդիպում կազմակերպվեց ԱՊԼ գլխավոր քարտուղար Ամր Մուսայի հետ, որի ընթացքում փոխըմբռնման հուշագիր ստորագրվեց ՀՀ ԱԳՆ-ի և ԱՊԼ-ի միջև, ինչը նոր փուլի սկիզբ դարձավ հայ-արաբական հարաբերությունների զարգացման և արաբական աշխարհի հետ ՀՀ քաղաքական համագործակցությունը արդյունավետորեն համակարգելու համար:

Ստորագրված փաստաթղթի շնորհիվ Եգիպտոսում հավատարմագրված հայ դիվանագետները հնարավորություն ստացան մասնակցելու ԱՊԼ-ում տեղի ունեցող գազաթափողվների բացման հանդիսավոր արարողություններին, կազմակերպվող մամուլի ասուլիսներին ու տարբեր հարցերի վերաբերյալ քննարկումներին: ՀՀ դեսպանությունը ներգրավվեց ԱՊԼ-ի ղեկավարության և միջազգային այդ կազմակերպությունում հավատարմագրված դեսպանների ու դիվանագիտական կորպուսի ակտիվ շփումների մեջ: Սկսեցին Կահիրեից Երևան ուղարկվել հեռագրեր ու վերլուծականներ միջարաբական և տարածաշրջանային ընթացիկ կարևորագույն խնդիրների, արաբական տարբեր երկրների դիրքորոշումների ու վարած քաղաքականության մասին, ինչը հնարավորություն տվեց ՀՀ ԱԳՆ-ին առավել ճշգրիտ ու թիրախային դարձնել թե՛ տարբեր արաբական երկրների նկատմամբ քաղաքականության մշակման և թե՛ երկկողմ համագործակցության ընթացքի ուղղորդման գործընթացները:

2007 թ. ապրիլին ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի պաշտոնական այցը Եգիպտոս կարելի է գնահատել որպես պատմական՝ Հայաստան-Արաբական աշխարհի հարաբերությունների զարգացման առումով: ՀՀ դեսպանությունը, հայ-եգիպտական երկկողմ հանդիպումներից բացի, կազմակերպեց ՀՀ ղեկավարի առաջին այցելությունը Արաբական պետությունների լիգայի կենտրոնակայան, որտեղ տեղի ունեցավ առանձնազրույց այդ կազմակերպության գլխավոր քարտուղարի հետ, հանդիպում կազմակերպվեց Լիգայում հավատարմագրված բոլոր 22 արաբական երկրների դեսպանների հետ: Այդ հանդիպման սկզբում ՀՀ նախագահը հատուկ ընդգծեց Հայաստանի պատրաստակամությունը ավելի խորացնելու և զարգացնելու ավանդական բարեկամական հարաբերությունները արաբա-

կան աշխարհի հետ²: Հանդիպման ընթացքում անդրադարձ կատարվեց Պաղեստինյան հիմնախնդրին, Իրաքում ստեղծված իրավիճակին, ահաբեկչության դեմ պայքարին, Մերձավոր Արևելքում հայկական կազմակերպված համայնքների ու հայ անհատների շոշափելի ներդրմանը՝ արաբական երկրների զարգացման և առաջընթացի գործում: Նշվեց այն մասին, որ՝ «Երբ հայ ժողովուրդը ցեղասպանության ենթարկվեց Օսմանյան Թուրքիայում, արաբական երկրներն առաջինն էին, որ օգնության ձեռք մեկնեցին՝ ապաստան տրամադրելով և հնարավոր աջակցություն ցուցաբերելով հարյուր հազարավոր մարդկանց: Հայ ժողովուրդը երբևիցե չի կարող մոռանալ արաբ ժողովրդի նման վերաբերմունքը, և դա իր արտացոլումն ունի նաև Հայաստանի արտաքին քաղաքականության մեջ: Անկախության ձեռքբերումից ի վեր Հայաստանի Հանրապետությունը հետևողականորեն զարգացրել է իր հարաբերություններն արաբական երկրների հետ և մշտապես իր համերաշխությունը հայտնել մերձավորարևելյան խաղաղ գործընթացում արաբական դիրքորոշմանը»³: Հանդիպման ընթացքում շոշափվեցին նաև ՀՀ արտաքին քաղաքականության, տնտեսության առանձնահատկությունների ու առաջնահերթությունների, մշակութային համագործակցության, քաղաքակրթական երկխոսության, ԼՂՀ հիմնախնդրի կարգավորման գործընթացի հետ կապված հարցեր:

ԱՊԼ-ում հավատարմագրված դեսպանների առջև ունեցած իր պատասխան ելույթում կազմակերպության գլխավոր քարտուղար Ամր Մուսան հատուկ շեշտեց. «Մեզ համար մեծ պատիվ էր Հայաստանի նախագահին հյուրընկալել այստեղ, քանի որ հայերի և արաբների միջև առանձնահատուկ հարաբերությունները պատմականորեն ջերմ են մինչև այսօր»⁴:

Այնուհետև ողջույնի խոսքով հանդես եկան Սաուդյան Արաբիայի /որպես դուայեն/, Սիրիայի, Լիբանանի, Իրաքի, Եգիպտոսի, Քուվեյթի դեսպանները: Արաբ դեսպանները վերահաստատեցին հայ ժողովրդի հանդեպ իրենց տածած հարգանքն ու խոր ակնածանքը, որը «տարածվում է նաև հայկական պետության վրա»: Նրանք հատկապես շեշտեցին հայ և

² Մինչ այդ Եգիպտոս այցելած ԱՊՀ-ի կամ Արևելյան Եվրոպայի որևէ երկրի ղեկավար ԱՊԼ-ում հավատարմագրված դեսպանների հետ հանդիպում, ինչպես նաև ԱՊԼ կենտրոնակայանում ելույթ չէր ունեցել:

³ Եգիպտոսում ՀՀ դեսպանության հաշվետվությունը՝ ՀՀ նախագահի պաշտոնական այցի վերաբերյալ, 20.IV.2007:

⁴ Նույն տեղում:

արաբ ժողովուրդների միջև պատմական կապերի բացառիկությունը, հայերի շոշափելի ներդրումը իրենց երկրների զարգացման ու առաջընթացի ապահովման գործում:

ԱՊԼ-ում տեղի ունեցած այդ հանդիպումն ու ելույթները ուղիղ եթերով հեռարձակվեցին արաբական տարբեր երկրներում, այնուհետև լայնորեն լուսաբանվեցին արաբական ամենահեղինակավոր ԶԼՄ-ների միջոցով:

Վերոհիշյալ այցելությունը հզոր լիցք ու էապես նոր բովանդակություն հաղորդեց մեր համագործակցությանը ԱՊԼ-ի հետ: Ի կատարումն ձեռք բերված պայմանավորվածությունների, այցից անմիջապես հետո ՀՀ ԱԳ նախարարը պաշտոնական նամակով դիմեց ԱՊԼ գլխավոր քարտուղարին՝ Եգիպտոսում ՀՀ դեսպանին արաբական այդ հեղինակավոր կազմակերպությանը հավատարմագրելու առաջարկով:

Սկսվեց դիվանագիտական լարված աշխատանք ոչ միայն ԱՊԼ քարտուղարության, այլև առանձին երկրների հետ՝ նրանց աջակցությունը ԱՊԼ-ում ապահովելու նպատակով: Օրինակ, Սաուդյան Արաբիայի հետ ՀՀ դիվանագիտական հարաբերությունների բացակայությունը՝ նկատի առնելով նաև այն հանգամանքը, որ Սաուդյան Արաբիան այդ կազմակերպության հիմնական դոնորներից է և ունի վճռորոշ ծայն, ամենալուրջ խոչընդոտներից մեկն էր Հայաստանի համար:

Սաուդյան Արաբիայի երկու դեսպանների /Եգիպտոսում և ԱՊԼ-ում/⁵ հետ ծավալված ակտիվ շփումների շնորհիվ ապահովվեց Արաբական Լիգայում Էռ-Ռիադի բարյացակամ դիրքորոշումը ՀՀ խնդրանքի նկատմամբ:

Դիվանագիտական նպատակասլաց աշխատանքի արդյունքում 2008 թ. մարտի 3-ին Արաբական պետությունների լիգայի 22 անդամ-երկրների արտաքին գործերի նախարարների խորհուրդը միաձայն համաձայնություն տվեց Եգիպտոսում ՀՀ դեսպանին ԱՊԼ-ում որպես ՀՀ

⁵ Այդ հարցում նշանակալի էր Եգիպտոսում Սաուդյան Արաբիայի դեսպան Հիշամ Նազերի աջակցության ապահովումը, որը մինչ Եգիպտոսում Սաուդյան Արաբիայի դեսպան նշանակվելը զբաղեցրել էր այդ երկրի ծրագրավորման նախարարի, այնուհետև՝ նավթի նախարարի պաշտոնները, ղեկավարել է աշխարհում ամենամեծ նավթային ընկերությունը՝ «Արամկոն»: Նրա հետ Եգիպտոսում ՀՀ դեսպանը սկսեց նաև առարկայական քննարկումներ՝ երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման վերաբերյալ, որը տարբեր պատճառներով մնաց անավարտ:

լիազոր ներկայացուցիչ հավատարմագրելուն: Այդ որոշման հիման վրա մի քանի ամիս անց ՀՀ նախագահի հրամանագրով ՀՀ դեսպան Ռուբեն Կարապետյանը համատեղության կարգով նշանակվեց ԱՊԼ-ում ՀՀ լիազոր ներկայացուցիչ⁶:

ՀՀ լիազոր ներկայացուցիչը պաշտոնապես իրավունք ստացավ ներկա գտնվելու ԱՊԼ գազաթափողովներին /առանց ձայնի իրավունքի/, մասնակցելու ԱՊԼ շրջանակում բոլոր քննարկումներին ու նստաշրջաններին /բացառությամբ փակ նիստերի/, շրջանառել ՀՀ պաշտոնական հայտագրեր /նոտաներ/ ու փաստաթղթեր:

ՀՀ դեսպանի՝ ԱՊԼ-ում հավատարմագրման պահին ոչ-արաբական երկրներից ԱՊԼ-ում դեսպանի մակարդակով ներկայացված էին միայն ՌԴ-ն, Չինաստանը, Իտալիան և Մալթան: ՀՀ-ն դարձավ **ոչ-արաբական հինգերորդ երկիրը**, որը դիվանագիտական բարձր ներկայացվածություն ունեցավ ԱՊԼ-ում, ինչն էլ վերահաստատեց ու նորովի ամրագրեց հայ ժողովրդի բացառիկ պատմական կապերի առկայությունն արաբ ժողովրդի հետ, նրա անուրանալի ներդրումն արաբական երկրների զարգացման գործում՝ բացելով լայն հեռանկարներ հայ-արաբական բարեկամության էլ ավելի ամրապնդման ու խորացման համար:

Արաբական բոլոր երկրները միավորող միակ միջազգային կազմակերպությունում դեսպանի մակարդակով ՀՀ ներկայացվածությունը կարևոր քայլ էր Հայաստան-Արաբական աշխարհի հարաբերությունների հետագա ծավալման ուղղությամբ: Այն նոր որակ հաղորդեց ու ամենաբարձր մակարդակն ապահովեց արաբական երկրների հետ ՀՀ երկկողմ և բազմակողմ համագործակցության համար, հնարավորություն ընձեռեց առավել արդյունավետ կերպով պաշտպանելու մեր ազգային ու պետական շահերը՝ ԱՊԼ-ի շրջանակում Արցախի ու միջազգային կարևոր այլ հիմնախնդիրների վերաբերյալ ՀՀ դիրքորոշումները ներկայացնելու և պարզաբանելու, ինչպես նաև տարաբնույթ քաղաքական, տնտեսական և մշակութային նախաձեռնություններով հանդես գալու համար:

⁶ <http://www.president.am/hy/decrees/item/310/>.

ИЗ ИСТОРИИ СОТРУДНИЧЕСТВА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ С ЛИГОЙ АРАБСКИХ СТРАН

КАРАПЕТРЯН Р.К.

Резюме

2004-2008 годы являются одним из знаменательных периодов в истории сотрудничества РА с ЛАГ – единственной организацией, объединяющей все арабские страны. Сотрудничество Республики Армения с Лигой Арабских стран было направлено на достижение качественно нового уровня отношений между РА и ЛАГ. В свете сказанного особую важность имел вопрос аккредитации в ЛАГ Полномочного представителя РА на уровне посла для дальнейшего углубления отношений с Арабским миром.

FROM THE HISTORY OF COOPERATION BETWEEN ARMENIA AND THE LEAGUE OF ARAB STATES

R. KARAPETYAN

Abstract

During 2004-2008 the new qualitative level of cooperation between the Republic of Armenia and the League of Arab States – the only international organization that unites all Arab countries was achieved. The accreditation of Ambassador of Armenia to the League, once again confirmed the exceptional historical bonds which existed between Armenians and Arabs, and provided Yerevan with additional effective tool for further deepening cooperation with the Arab world.

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՕՐԳԱՆՆԵՐԸ. «ԺՈՂՈՎՐԴԻ ՁԱՅՆ»

ՍԱՐԳՍՅԱՆ Ս.Թ.

Հայոց պետականության կերտման ու կայացման գործում մեծ ներդրում ունեցած կուսակցություններից է Հայաստանի Առաջին հանրապետության գոյության ողջ ընթացքում ՀՅԴ-ից հետո երկրորդ ամենահզոր քաղաքական ուժը՝ Հայ Ժողովրդական կուսակցությունը (այսուհետև՝ ՀԺԿ): Այն հիմնադրվել է 1917 թ. ապրիլի 11-ին Թիֆլիսում՝ նշանավոր մտավորական Համբարձում Առաքելյանի նախաձեռնությամբ, «Մշակ» թերթի շուրջ համախմբված մտավորականության և Թիֆլիսի գործարար շրջանակների ներկայացուցիչների մասնակցությամբ:

ՀԺԿ-ն, իր քաղաքական հավատամքը, նպատակներն ու դրան հասնելու միջոցները ներկայացնելու, դրանք ժողովրդի սեփականությունը դարձնելու, ընթացիկ կարևոր իրադարձությունների նկատմամբ կուսակցության վերաբերմունքը պարզաբանելու, ինչպես նաև քարոզչական գործունեությանը զարկ տալու նպատակով, 1918 թ. սեպտեմբերի 1-ից Թիֆլիսում սկսեց լույս ընծայել «Ժողովրդի ձայն» հասարակական, քաղաքական, գրական օրաթերթը: Պարբերական, որը զարմանալիորեն դուրս է մնացել ուսումնասիրողների տեսադաշտից, և ցարդ որևէ մեկը ոչինչ չի գրել թերթի մասին:

Լրագրի հրատարակիչը ՀԺԿ-ն էր: Այն ստորագրվում էր խմբագրական կոլեգիայի կողմից, սակայն որոշ մտավորականներ (Գ. Մելիք-Նարագյոզյան, Տ. Հախումյան) ավելի հաճախ էին խմբագրականներ հեղինակում: Թերթը տպագրվում էր Թիֆլիսի «Մամուլ» տպարանում: Թերթի լույսընծայման առիթով մեծ թվով հայ և օտարազգի մտավորականներ ողջունեցին «Ժողովրդի ձայնի» հրապարակ իջնելը և բարի երթ մաղթեցին նրան: «Վերջապես իրականանում է Հայ Ժողովրդական Կուսակցութեան վաղեմի իղձը, և նրա անդամներն այսուհետև լիակատար հնարաւորութիւն են ստանում արտայայտելու իրենց հայեացքներն ու հասկացողութիւնները այն բազմատեսակ հրատապ հարցերի մասին, որոնցով այնքան լի է մեր

ժամանակը»¹, - կարդում ենք թերթի անդրանիկ խմբագրականում: Խմբագրակազմը վստահ էր, որ թերթն անշեղորեն հետևելու էր «կուսակցության ըմբռնումներին», լուսաբանելով և ցույց տալով «այդ ըմբռնումների իրավացիությունն ու օգտակարությունը» հայ ժողովրդի համար:

ՀԺԿ-ն պարզ և որոշակի հայտարարում էր, որ ինքն **ազգային կուսակցություն** է, և իր նպատակն է ամբողջ հայ ժողովրդի և նրա ազգային ողջ մշակույթի պաշտպանությունը քաղաքական միջոցներով: «Զթաքցնելով» ազգային նպատակները՝ կուսակցությունը միաժամանակ քննադատաբար էր վերաբերվում «նեղ ազգայնականությանն ու շովինիզմին»² և համոզված էր, որ հայ ժողովուրդը բոլոր հարևան ազգերի հետ կարող է համերաշխ ապրել: Իսկ ինչ վերաբերում էր Այսրկովկասին, ապա ՀԺԿ-ն գտնում էր, որ տարածաշրջանի երեք հիմնական ժողովուրդները կարող են և պետք է միասնաբար գործեն երկրամասը քաղաքական և տնտեսական բարդ կացությունից դուրս բերելու համար:

Պարբերականի տեսաբանները, արձագանքելով վրացական իշխող շրջանակների ծայնափող «Գրուզիա» ռուսալեզու թերթի թյուր կարծիքին, թե ՀԺԿ-ն ու իր «Ժողովրդի ծայնը», անտեսում են հարևան ժողովուրդների շահերը, գրում են. «Մենք ուրախ կլինենք, որ վրաց շրջանների միջից երեւան գայ ազատամիտ, գործնական և ազգային, բայց ոչ շովինիստական մի կուսակցություն, որի հետ ձեռք ձեռքի տուած, մենք կարողանայինք մի ընդհանուր երկրային քաղաքականութիւն վարել ի շահ մեր ժողովուրդների»³:

Թերթի խմբագրակազմը շեշտում էր, որ երկրում ստեղծված արտակարգ պայմաններն ու բարդ քաղաքական իրավիճակը «ստիպում են աչալուրջ զգուշութեամբ վերաբերուել կեանքի բոլոր անցուդարձերին՝ աշխատելով գտնել նրանց պատմական-քաղաքական հիմքը և արմատական պատճառները»⁴: Լրագիրը մանրամասնում էր, որ անկախ ժողովրդի մեծաթիվ կամ փոքրաքանակ լինելուց, նրա գոյությունը կախված չէ դասակարգային շերտավորումից կամ քաղաքական-տնտեսական պայքարից: Ավելի ազդեցիկ են «պետական և ազգայնական սկզբունքները, որոնց

¹ Ժողովրդի ծայն, առաջնորդողը, 1.IX.1918:

² Նույն տեղում, 25.IX.1918:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում:

քննութեանը և պարզաբանութեանն էլ նուիրուած կը լինեն «Ժողովրդի ձայնի» էջերը»⁵: Իսկ քանի որ հայ ժողովուրդը գտնվում էր ծանր և ողբերգական վիճակում, ուստի հնարավոր չէ անտեսել Հայաստանի վերաշինության հարցը, որի շուրջ պետք է համախմբվեն մեր ժողովրդի բոլոր մտավոր և բարոյական ուժերը, «որպէս զի հնարաւոր լինի մաքառել այն խորին յուսահատութեան և թերահաւատութեան դէմ, որ համակել է մեր ժողովրդին պատմական անօրինակ տարաբախտ պայմանների շնորհիւ»⁶:

Թերթը ջանում էր ժողովրդի մէջ համոզմունք սերմանել, որ միայն բոլոր հարևանների հետ համերաշխ, խաղաղ աշխատանքը և անկեղծ բարեկամությունը հնարավորություն կտան «պատուով դուրս գալու այն փակուղիից, որի մէջ գտնուում է հայութիւնը»⁷: Պարբերականում ընդգծվում էր նաև այն միտքը, որ լինելով կուսակցական օրգան՝ «Ժողովրդի ձայնը» նեղ կուսակցական պարբերական չէ և, անկախ կուսակցական պատկանելությունից, լուրջ քննադատության կենթարկի հայ կյանքի բոլոր թերությունները՝ ջատագովելով լավն ու կառուցողականը: «Ժողովրդի ձայնի» նպատակը չէր լոկ կուսակցական պայքար մղել և «ճշմարտութիւնը ճնշել յօգուտ զանազան «դասակարգային» և անհատական սկզբունքների, այլ ծառայել ճշմարտութեանն ու քաղաքակրթական յառաջադիմութեանը»⁸: Միաժամանակ, շարունակական պայքար էր մղում գաղափարական հակառակորդների դէմ՝ աշխատելով հեռու մնալ ամեն տեսակ անձնական կամ կուսակցական «խճրճանքներից»:

Երբեմն տպագրվել են հավելվածներ կարևորագույն իրադարձությունների կամ գործիչների վերաբերյալ: Օրինակ՝ հավելվածի ձևով թերթի թիվ 57-ում լույս է տեսել ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնի ճառն ամբողջությամբ⁹:

«Ժողովրդի ձայնը» խոստանում է իր էջերում զգալի տեղ հատկացնել նաև գեղարվեստական գործերին և պատմական-քննադատական հոդվածներին: Թերթելով պարբերականի բոլոր համարները՝ համոզվում ենք, որ գոյության բոլոր տարիներին թերթը հավատարիմ է մնացել իր խոստմանը և տպագրել է չափաժող և արձակ, համեմատաբար ոչ շատ ծավա-

⁵ Նույն տեղում:

⁶ Նույն տեղում:

⁷ Նույն տեղում:

⁸ Նույն տեղում:

⁹ Նույն տեղում, 10.XI.1918:

լուն ստեղծագործություններ: Դրանց մեջ առանձնանում են Հ. Թումանյանի, Տ. Հախումյանի և այլ նշանավոր հեղինակների մեծախորհուրդ քառյակները, Ազատ Վշտունու բանաստեղծությունները, Շիրվանզադեի գողտրիկ պատմվածքները: Քիչ դեպքերում թերթում տեղ են գտել նաև զգալի ծավալ ունեցող ստեղծագործություններ, որոնք մաս-մաս տպագրվել են մի քանի համարներում:

Լրագրի մշտական խորագրերից էին՝ «Պատերազմ», «Մեր կուսակցութեան մէջ», «Հայկական, ռուսական եւ թուրքական մամուլ», «Հեռագրեր», «Թղթակցութիւններ», «Հայ-թուրքական յարաբերութիւններ», «Հայաստանի խորհրդարան», «Հայ գաղթականութեան վիճակը», «Օրուայ խնդիրները»: Հիշատակության է արժանի այն իրողությունը, որ հաճախակի հղումներ էին արվում Թիֆլիսի ռադիոկայանի հաղորդումներից:

Առաջին համարից սկսած՝ թերթում աստիճանաբար զգալի տեղ էր հատկացվում գովազդին ու զանազան բնույթի հայտարարություններին: Դրանք ավելանում էին ոչ միայն քանակով ու ծավալով, այլև ավելի հաճախ էին հայտնվում առաջին էջում, որը պայմանավորված էր նյութական գործոնով, քանի որ ավելի բարձր արժեք ունեին բառաշատ հայտարարություններն ու առաջին էջում տպագրվածները¹⁰:

«Ժողովրդի ձայն» արձագանքում էր գրեթե բոլոր կարևոր իրադարձություններին և հայտնում իր տեսակետները, որոնք բխում էին հայ ժողովրդի շահերից և հիմնականում համընկնում էին ՀԺԿ-ի ծրագրային դրույթներին: Այսպես, առաջին համարներից սկսած՝ անդրադառնալով Ռուսաստանում տեղի ունեցող դարակազմիկ իրադարձություններին՝ լրագիրը մերժողական կեցվածք էր դրսևորում բոլշևիկյան Ռուսաստանի նկատմամբ: Արձանագրելով, որ Ռուսաստանի ժողովրդական կոմիսարների կառավարության նախագահ Լենինի դեկրետով հրամայված է ցրել Ռուսաստանի բոլոր Հայոց ազգային խորհուրդները՝ հողվածագիրը ներկայացնում է Լենինի պատճառաբանությունը՝ «իբրև թե այդ բոլոր կազմակերպությունները լինելով ճիշդ Թիֆլիսի Հայոց Ազգային Խորհրդի և սննդուելով բուրժուական գումարներով, դաւեր են կազմում Խորհուրդների իշխանութեան դէմ, ոյժ տալով Ռուսաստանում հակայեղափոխական շարժ-

¹⁰ Թերթը տարբեր համարներում տեղեկացնում էր, որ գովազդի մեկ միավորի արժեքն առաջին էջում 5, իսկ վերջին էջում 3 ռուբլի էր:

ման»¹¹: Նա նշում է, որ այս ակտով մի նոր փաստաթուղթ էր ավելանում Հայկական հարցի վերաբերյալ, որը, «ինչպես իրական կեանքը, անողորմ կերպով յօդս է ցնդեցնում մեր բոլոր երազները»¹²: Նրա կարծիքով, տարաբախտ հայ ժողովուրդն ստանում էր մի նոր և ծանր հարված հենց այն երկրից, որից ամենից քիչն էր սպասում և որին միշտ նվիրված էր եղել: Եվ հայերի համար, որպես մխիթարանք, մնում էր հուսալ, որ դեկրետը հրատարակվել է ոչ թե ռուս ժողովրդի, այլ նրա խորթ զավակ բուլշևիկյան իշխանության կողմից:

«Ժողովրդի ձայնի» համար անչափ կարևոր էին մատաղ սերնդին սովորեցնող ճիշտ տեղեկությունները և նրա դաստիարակության խնդիրները, որոնց անդրադարձներ կան գրեթե բոլոր համարներում:

Թերթի առաջին էջում պարբերաբար տպագրվում էին հայտարարություններ՝ «Հայ ժողովրդական կուսակցության պրոպագանդայի դասընթացներ» վերտառությամբ, որոնց նպատակն էր նպաստել կուսակցության գաղափարախոսությունը տարածելուն և շարքերն ընդլայնելուն: Դասընթացները և դասախոսությունները մեկը մյուսից կարևոր ու արդիական թեմաներով էին՝ «Մեր կուսակցության նպատակները եւ տակտիկան», «Սոցիալիզմը եւ Հայ ժողովրդական կուսակցությունը», «Կուսակցության դերը քաղաքական կեանքում», «Տեսություն ռուս կուսակցությունների», «Դաշնակցության դերը հայկական վիճակի մեջ», «Աստուծոմիա, ֆեդերացիա, կոնֆեդերացիա, հանրապետություն, սահմանադրական եւ կիսասահմանադրական միապետություն», «Գիւղացիական հարցը հայկական կեանքում», «Անդրկովկասի ժողովուրդների միության գաղափարը», «Հայերը եւ միջազգային քաղաքականությունը», «Մեր կուսակցության նախապատմությունը», «Մեր կրթական գործը», «Մեր գաղթականական հարցը», «Հայկական հանրապետությունը քաղաքական, տնտեսական, վիճակագրական եւ աշխարհագրական տեսակետից» եւ այլն: Բանախոսները հիմնականում կուսակցության անդամ մտավորականներ էին, ինչպես, օրինակ՝ Տ. Հախումյանը, Ստ. Մալխասյանցը, Գ. Մելիք-Ղարաբյոզյանը:

ՀԺԿ-ի պաշտոնաթերթում իրենց հրապարակումներով հաճախ էին հանդես գալիս ժամանակի նշանավոր շատ մտավորականներ. կուսակցության անդամ լինելը պարտադիր չէր: Հատկապես սկզբնական շրջանում

¹¹ Ժողովրդի ձայն, 4.IX.1918:

¹² Նույն տեղում:

առանձնապես ակտիվ էին այնպիսի ականավոր մտավորականներ, ինչպիսիք էին Լեոն, Շիրվանզադեն, Վահրամ Փափագյանը, Մանուկ Աբեղյանը, Հովհաննես Թումանյանը, Տիգրան Հախումյանը, Գրիգոր Ղափանցյանը և ուրիշներ: Իրենց հրապարակումներում ներկայացնելով հայ ժողովրդի օրհասական վիճակն ու կրած անհամար տառապանքները՝ նրանք չէին կորցնում լավատեսությունն ու ապագայի նկատմամբ լուսավոր հավատը: Օրինակ՝ պարբերականի մի քանի համարներում տպագրված՝ Լեոյի «Փոքրիկ նամակներ» հոդվածաշարում հեղինակը, մեծ ցավով արձանագրելով, որ «Կարսի անկումը կոտրեց հայ ժողովրդի մեջքը, և մինչև այսօր մեզանում տիրում է անփոփոխ նոյն խուճապականությունը»¹³, փոքրիկ պատմական էքսկուրս կատարելով և ցույց տալով մեր նախորդ սերունդների հերոսական ոգին և դժվարությունների դեմ պայքարելու կարողությունները՝ կոչ էր ուղղում ամբողջ հայությանը՝ սթափվել և լինել արժանի մեր նախնիներին՝ հաղթահարելու մեզ բաժին հասած հերթական փորձությունը:

Պարբերականը գաղափարախոսական տեսանկյունից, կարևորում էր հայ ժողովրդի կողմնորոշման հարցը: «Մեր օրիենտացիան» հոդվածում անդրադառնալով այդ թեմային՝ հեղինակները շեշտում էին, որ դա հայության համար հեշտ լուծելի խնդիրներից չէ: Պատասխանելով վրացական մի քանի թերթերի և սոցիալ-դեմոկրատական «Եօթեճա»-ին՝ նրանք պարզաբանում էին, որ վրացիների նման գերմանական կողմնորոշում որդեգրելը հնարավոր չի, քանի որ «Վրաց ժողովուրդը չէ ապրել հայ ազգի տառապանքի ծանր օրերը: Վրաց ժողովուրդը չէ խմել մեր ազգի կենաց բաժակի անհուն դառնությունը»¹⁴: Հայ ժողովրդին մշտապես ուղեկցել է ֆիզիկական գոյության պահպանության և ազգի բեկորների փրկության խնդիրը: «Մահի և ոչնչացման պատմականօրէն մեզնից անբաժան ուրուականը», ընդգծվում էր հոդվածում, մշտապես կաշկանդում է մեզ և թույլ չի տալիս վստահորեն մտածել որևէ կողմնորոշման մասին: «Մեր օրիենտացիան, եզրակացնում է թերթը, մեր ազգի ֆիզիքական գոյութեան պաշտպանման և նրա բեկորների փրկութեան օրիենտացիան է»¹⁵: Եվ «Վերջապես ժամ է խորապես գիտակցելու», որ մեր հողը, մեր երկիրը, մեր տունը շինողը, մեր ազգի վի-

¹³ Նույն տեղում, 7.IX.1918:

¹⁴ Նույն տեղում, 6.IX.1918:

¹⁵ Նույն տեղում:

ճակը բարելավողը մենք պետք է լինենք և ոչ թե այն օտարները, որոնք միայն իրենց շահն են փնտրում, և որոնց համար մեր ցավերի մեծ մասը նույնիսկ աննկատելի է մնում¹⁶:

Լինելով թիֆլիսյան իրականության ծնունդ ու գործելով այդ քաղաքում՝ ՀԺ կուսակցությունն ու նրա պաշտոնական օրգան «Ժողովրդի ձայնը» վկայակոչելով վրացական «Կլդէ», «Սաքարթուելօ», «Սախալիա Սաքմէ», «Գրուզիա» պարբերականների հակահայկական հրապարակումները, փորձում էր անաչառ կերպով լուսաբանել հայ-վրացական հարաբերություններն ու հայ ժողովրդի նկատմամբ վրացական իշխանությունների վերաբերմունքը: Երբեմն մեծ ցավով ու ափսոսանքով, երբեմն անթաքույց զարմանքով թերթի հեղինակները նկատել էին տալիս, թե ինչպես դարեր շարունակ միասին ապրած և օտար նվաճողների մեծ թվով հարվածներին միասին դիմակայած հայ և վրաց ժողովուրդները մեծ տերությունների թելադրանքով երբեմն թշնամական կեցվածք էին ընդունում միմյանց նկատմամբ: Հատկապես վրացական իշխանությունները, մոռանալով դարավոր անցյալը, դրսևորում էին ընդգծված հակահայկական պահվածք և մեծ վնասներ հասցնում առանց այն էլ կործանման եզրին հասած հայ ժողովրդին: Օրինակ՝ «Վրաստանը եւ հայ գաղթականութիւնը» հրապարակման մեջ տեղեկացվում էր, որ Վրաստանի կառավարությունը «յայտնել է գաղթականական գլխավոր Խորհրդին, թե նա այլեւս հնարավոր չէ գտնում որ հայ գաղթականութիւնը Վրաստանի սահմաններում գտնուի»¹⁷: Կառավարությունը մի՞թե չգիտի, -զարմացած հարցնում է թերթը, -որ դա հնարավոր չէ: Ապա եզրակացնում է՝ կգա այն օրը, երբ հայը կգտնի իր պայծառ օրը, և դարավոր հարևան ու բարեկամ ժողովուրդներից մեկը կամաչի: Ուստի բոլոր նրանք, ովքեր «մեր օրերում ջուր են պղտորում, որ առատ ծուկ որսան», չարաչար սխալվում են և ոչնչի չեն հասնի¹⁸:

«Ժողովրդի ձայնը» պարբերաբար անդրադառնում էր նաև հայ-թուրքական հարաբերություններին: «Հարկավոր է սթափել» հրապարակման մեջ ՀԺԿ-ական նշանավոր իրավաբան Սամսոն Հարությունյանը, պատմական էքսկուրս կատարելով և բերելով բազմաթիվ օրինակներ, կոչ էր անում սթափվել գոնե կատարվածից հետո (նկատի ուներ Հայոց ցեղաս-

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Նույն տեղում, 8.IX.1918:

¹⁸ Նույն տեղում, 14.XI.1918:

պանությունը), որի ընթացքում առհավետ կորցրինք հայության մի հատվածը. «հիմա էլ ալան-թալանով ու անկարգություններով, սով ու հիվանդություններով ինքներս մեր ձեռքով կորցնում ենք նաև մյուս հատվածը», ուստի պետք է վերջապես խելքի գալ. «Հարկաւոր է սթափուել, հարկաւոր է արտայայտել պարտաճանաչութեան զգացմունք և ամենամեծ թափով ընդառաջ գնալ մեր ժողովրդի ծով կարիքներին: Անտարբերութիւնը այսուհետև աններելի յանցանք կլինի»¹⁹:

Հայ ժողովրդի փրկության հիմնական գրավականը թերթը համարում էր կանոնավոր, լավ զինված ու մարզված, սրտացավ ու գործին նվիրված սպայակազմ ունեցող բանակը: «Կանոնավոր զորքի կարիքը» խմբագրականում հեղինակը, պատմական անցյալի հերոսական օրինակներ բերելով, փաստում է, որ բանակն օդի նման անհրաժեշտ է հայերին, որոնք ոչինչ չպիտի խնայեն բանակի համար²⁰:

«Ժողովրդի ծայնը» պարբերաբար անդրադառնում էր **Հայաստանում տիրող իրավիճակին** և ներկայացնում կարևոր իրադարձություններ, տեղեկություններ էր տալիս Հայաստանի կառավարության, խորհրդարանի և պետական մյուս մարմինների գործունեության մասին: Արժևորելով իշխանությունների կազմակերպչական և իրավական գործունեությունը երկիրը քառսից դուրս բերելու, սովն ու տարափոխիկ հիվանդությունների համաճարակները հաղթահարելու ուղղությամբ՝ թերթը ցավով արձանագրում էր, որ նրանց ջանքերն իզուր էին անցնում, քանի որ «կարգ ու կանոնը» հեռու էին բավարար լինելուց: Հաճախ էլ նախկին խմբապետները, ձգտելով իշխել ամենուրեք, երկիրը վերածում էին քաոսի: Ահավասիկ՝ Երևանից ուղարկված մի թղթակցությունում հայտնվում էր այն մասին, որ քաղաքում իսկական խառնաշփոթ է, և իշխանությունները հաճախ չեն կարողանում վերահսկել իրավիճակը: Թղթակիցը գրում էր, որ գյուղացիները մշտապես գանգատվում են զինվորների կամայական գործողությունների դեմ. «Երևանի կեսնքը փողոցում կատարեալ խառնաշփոթութիւն է: Սպանութիւններ, որոնք անցնում են առանց քննութեան (Աստաֆեան փողոցում՝ 3 հոգու), հարբած խմբականների անկարգութիւններ քաղաքի բոլոր ծայրերում և կենտրոնում, աննպատակ և անկարգ հրացանաձգութիւն...: Իսկ խոլերան, ճանապարհների վրայ փռուած ձիերի դիակները, որոնք գար-

¹⁹ Նույն տեղում, 9.X.1918:

²⁰ Նույն տեղում, 15.X.1918:

շահուտություն են տարածում: Կան շատ հայրենասերներ, որոնք ցանկությամբ գուշակում են այն խայտառակ անիշխանությունը, որ ամենից առաջ տակովն է անելու այսօրվա իշխանություններին...»²¹: Թերթում պարբերաբար արտատպվում էին նաև ՀԺԿ Երևանի կենտրոնի պաշտոնաթերթի՝ տեղեկատվական հրապարակումները Հայաստանի խորհրդարանի մասին: «Հայաստանի խորհրդարան» վերտառությամբ հրապարակման մեջ թղթակիցը, հղում կատարելով խորհրդարանում Գաղթականության կոմիտեի անունից հանդես եկած Ռուբեն Տեր-Մինասյանի ելույթից, հետաքրքրական տվյալներ է հայտնում, երկրի բնակչության թվականի մասին. «ՀՀ-ի տերիտորիան բաղկացած է 4 գաւառամասերից, որտեղ կան 522 գիւղեր՝ 524 հազար բնակչութեամբ: Այդ գիւղերի մի մասը, 182 հազար բնակչութեամբ, գաղթել է: ՀՀ-ի սահմաններում գտնուած գաղթականութեան թիւը 300 հազարից ատելի էր: Սրանից հիմա մնացել ատելի քան 200 հազար. մնացածների մի մասը հեռացել է երկրից, միւս մասը մեռել: Աշխատունակութեան տեսակետից գաղթականներին կարելի է բաժանել 3 կատեգորիայի - որբեր, կանայք և տղամարդիկ: Որբերի թիւը հասնում է 7-8 հազարի»²²:

Թերթը մեծ ոգևորությամբ ողջունեց համաշխարհային պատերազմի ավարտը և հայտարարեց, որ հայ ժողովուրդն իր թվաքանակի համեմատությամբ ամենաշատ զոհերն է տվել. վտանգելով իր գոյությունը՝ բոլոր ջանքերն է ներդրել հաղթանակի համար, հետևապես նաև բոլոր՝ տարածքային, նյութական, իրավական, հոգևոր, հատուցման և այլ առումներով պահանջատեր է: Հրապարակման հեղինակը, վկայակոչելով միջազգային մի շարք պայմանագրերի համապատասխան կետեր, եզրակացնում է. «Ժամը վերջապես հասաւ... Մեծ երկիրներ խելքի են եկած, ու պիտի վառուի հայոց ճրագը՝ Հայաստանը կը դառնայ հայութեան մշտաւառ օրանը»²³:

Սկսած թիվ 73-ից՝ «Ժողովրդի ծայն» առաջին էջում ներկայացնում է տպագրված կարևոր նյութերի վերնագրերը: Դրանով ընթերցողին հնարավորություն է տալիս նախապես տեղեկանալ իրեն հետաքրքրող թեմաների մասին, որ վերջինս իզուր ժամանակ չվատնի դրանք փնտրելու համար:

Նշենք, որ թերթի մի շարք համարներ կամ չեն պահպանվել, կամ հայտնի չէ դրանց գտնվելու վայրը: Թերթի համարների մեծ մասը էջմիած-

²¹ Նույն տեղում, 8.IX.1918:

²² Նույն տեղում, 26.IX.1918:

²³ Նույն տեղում, 16.XI.1918:

նի մատենադարանի գրապահոցում է, մի մասն էլ՝ ՀՀ ազգային գրադարանի պահոցում: Մասնավոր հավաքածուներում եղած որոշ համարներ ևս տները սիրով նվիրել են Ազգային գրադարանին: Մեզ հայտնի չէ՝ 1919 թ. օգոստոսի 22-ի թիվ 179-ից հետո օրաթերթը լույս տեսե՞լ է, թե՞ ոչ: Սակայն եղած համարները լիովին բավարարում են պարբերականի մասին ամբողջական պատկերացում կազմելու և այն ըստ արժանվույն գնահատելու համար:

ОРГАНЫ ПЕРИОДИКИ АРМЯНСКОЙ НАРОДНОЙ ПАРТИИ: "ЖОГОВРДИ ДЗАЙН" ("ГОЛОС НАРОДА")

ՏԱՐԳՏՅԱՆ Ս.Թ.

Резюме

За весь период существования Первой Армянской Республики второй по значимости политической силой, после правящей партии АРФД, являлась Армянская Народная партия, основанная 11 апреля 1917 г. в Тифлисе. Рупором ее политических целей и средств стала общественно-политическая газета “Жоговрди дзайн”, издававшаяся в Тифлисе с 1-го сентября 1918 г.

Хотя и газета была партийным органом, но она выступала с резкой критикой социальной действительности, ратуя за все прогрессивное.

PERIODICALS OF THE ARMENIAN PEOPLE'S PARTY: "ZHOGHOVRDI DZAYN" ("VOICE OF THE PEOPLE")

S. SARGSYAN

Abstract

During the entire period of the existence of the First Republic of Armenia, the Armenian People's Party (ANP), founded in Tiflis on April 11, 1917, was the second most important political force after the ruling ARFD. The social and political newspaper “Zhoghovrdi Dzayn”, published in Tiflis since September 1, 1918, became the mouthpiece of its political goals and means.

Although the newspaper was a party organ, it acted with sharp criticism of social reality, advocating for everything progressive.

ԳՈՐԲԱԶՈՎՅԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈԽԼԵՐԸ (1985-1990 ԹԹ.)

ՄԱՏԻՆՅԱՆ Լ.Վ., ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Հ.Մ.

1985 թ. մարտին հրավիրված Խորհրդային Միության կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի պլենումը շրջադարձային երևույթ դարձավ Խորհրդային Միության պատմության մեջ: Արմատապես փոխվեց երկրի կուսակցական, պետական իշխանության ղեկավար կազմը:

ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար ընտրվեց Միխայիլ Սերգենիչ Գորբաչովը, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ՝ Ա.Ա. Գրոմիկոն, Մինիստրների խորհրդի նախագահ մինչև 1985 թ. աշունը մնաց Ն.Ա. Տիխոնովը, որին փոխարինեց Ն.Ի. Ռիժկովը: Երկրի նոր ղեկավարությունը 1985 թ. ԽՄԿԿ Կենտկոմի ապրիլյան պլենումում, իսկ հետո նաև կուսակցության XXVII համագումարում՝ 1986 թ. փետրվար, երկրի ներքին և արտաքին քաղաքականության բնագավառում մշակեց նոր կուրս: Այն հայտնի է նաև որպես արագացման կուրս և նշանակում էր երկրի տնտեսական ոլորտի աճ, որը պետք է իրագործվեր մարդկանց էներգիան ներդնելով կուսակցության և կառավարության առաջացրած խնդիրները լուծելու համար: Անհրաժեշտ էր նաև վերականգնել և ամրապնդել կուսակցության և պետական իշխանության հեղինակությունը:

Կուսակցությունը նաև կարևորում էր իր երկրի տնտեսության վերափոխումը գիտատեխնիկական առաջընթացի հիման վրա: Այդ նպատակով շեշտը դրվում էր երկրի կառավարման արդյունավետության և աշխատանքի շահագրգռվածության բարձրացման հարցերի վրա: Դժվար չէ տեսնել, որ երկրի նոր ղեկավարությունը ինչպես երբեք բավական մեծ և բարդ խնդիրներ էր դնում ողջ հասարակության առջև, որը նաև պահանջում էր փոխել կուսակցական աշխատանքի մեթոդները, է՛լ ավելի խորացնել սոցիալական ժողովրդավարության սկզբունքները և այլն: Կուսակցության արագացման կուրսը նաև ենթադրում էր երկրի խոշոր ոլորտներում իրականացնել արմատական վերափոխումներ, որոնք ոչ թե սոսկ մերկա-

պարանոց կարգախոսներ էին, այլ բավական լուրջ և երկարատև աշխատանքի մարտահրավեր՝ երկիրը վերափոխելու և զարգացնելու համար:

Սակայն, ցավոք, ժամանակը ցույց տվեց, որ արագացման կուրսը, որն ավելի շատ հենվում էր զանգվածների և հատկապես երիտասարդ սերնդի էնտուզիազմի, հայրենասիրական պոռթկման և ոգևորության վրա, չէր կարող լինել տևական և ցանկալի արդյունքներ տալ, եթե չընդգրկեր երկրի կյանքի բոլոր ոլորտները և չգնար ավելի արմատական փոփոխությունների: Անհրաժեշտ էր փոխել շեշտադրումները և ընդունել հասարակության զարգացման առավել ընդունելի և հեռանկար խոստացող տարբերակ, որն էլ հայտնի է որպես «գորբաչովյան վերակառուցում» անունով: Եվ եթե արագացումը համարվում էր երկրի կուսակցության նպատակը, ապա վերակառուցումը պետք է դառնար միջոց՝ այդ նպատակն իրականացնելու համար:

1987-1988 թթ. վերակառուցումը գլխավորապես դարձավ երկրի համար արմատական տնտեսական բարեփոխում իրականացնելու կարևոր լծակ, որին ավելացվեցին նաև քաղաքական բարեփոխումը, երկրի գաղափարախոսության նորացումը, հրապարակայնությունը, հասարակության ժողովրդավարացումը և այլն:

Պատասխանելով այն հարցին, թե ինչու է անհրաժեշտ վերակառուցումը, Մ.Ս. Գորբաչովն ասում էր, որ դա ճանապարհ է իրականացնելու համար կուսակցության արագացման կուրսը: Նա նաև նշում է, որ ամեն ինչ պետք է անել, որ վերակառուցումը կրի անվերադարձ բնույթ և շարժման մեջ ներքաշի հսկայական ուժեր: Ըստ նրա՝ վերակառուցումը միայն մեկ պահի ակտ չէ, այլ պատմական որոշակի ժամանակաշրջանի գործընթաց, որն ընդգրկում է երկրի կառավարման համակարգը, տնտեսավարման մեթոդները և այլն: Վերակառուցումը ենթադրում է լայն հրապարակայնություն, հասարակության ժողովրդավարացում, երբ մարդ-անհատն իրեն զգում է երկրի տեր, որի վրա մեծ պատասխանատվություն է դրված և այլն¹:

Հասարակության ժողովրդավարացում նաև ենթադրում էր ավելի օպտիմալ օգտագործել հասարակության հոգևոր ներուժը, հաստատել սո-

¹ Ст'я Ускорение социально-экономического развития страны – задача всей партии, всего народа. Документы и материалы, М., 1986, էջ 437-458:

ցիալական արդարություն և լուծել երկրի ազգամիջյան հարաբերություններում առկա խնդիրները:

1989 թ. հուլիսի 18-ին ԽՄԿԿ Կենտկոմում հրավիրված խորհրդակցության ժամանակ, խոսելով վերակառուցման մասին՝ որպես օրվա արմատական խնդրի, Մ.Ս. Գորբաչովը նշում է, որ իրականում երկիրն ապրում է վերակառուցման քննական ժամանակաշրջան, որը, մյուս բնագավառներից զատ, վերաբերում է նաև կուսակցության աշխատանքի վերակառուցմանը, քանի որ այն երկար ժամանակ հիմնված էր կառավարման վարչահրամայական համակարգի սկզբունքների վրա և ապրում էր նրա օրենքներով, որոնք էլ պետք է փոխվեին: Ըստ այդմ՝ կուսակցությունը պետք է հրաժարվի իր դարն ապրած կառավարման մեթոդներից և վերադառնա աշխատանքի ժողովրդավարացման, ազատական մեթոդներին: Խնդիր էր դրվում կուսակցությունը հանել այսպես կոչված շրջափական վիճակից և դնել շարժման մեջ²: «Սոցիալիստական գաղափարը և հեղափոխական վերակառուցումը» հողվածում Գորբաչովը, կրկին խոսելով վերակառուցման մասին, նշում է. «Վերակառուցումը ամբողջական հեղափոխական գործընթաց է, որն իրականացվում է ժողովրդավարական մեթոդներով, ժողովրդի կողմից ու ժողովրդի համար, որի նկատմամբ կուսակցությունը հանդես է գալիս որպես նրա քաղաքական ավանգարդ: Իսկ կուսակցության կողմից դրսևորվող ակտիվությունն ու պատմական նախաձեռնությունները նրա ավանգարդային դերի բնական արտահայտությունն են: Եվ կուսակցությունը որոշման իրավունքը իր մենաշնորհը չի դարձնում: Ամեն մի օգտակար նախաձեռնություն, որտեղից էլ որ այն ելնելիս լինի, հարկավոր է վերակառուցմանը, քանզի նրա կենսական տոնուսը քաղաքական իմաստով կախված է ժողովրդավարության զարգացումից, որի գործառույթը մասնավորապես ժողովրդական նախաձեռնության խթանումն է³:

Որքան էլ որ այդ հարցադրումները, հատկապես մեր օրերում գնահատելու տեսանկյունից, հռչակագրային բնույթ էին կրում, սակայն, այնուամենայնիվ, տվյալ ժամանակահատվածում առանց լուրջ, արմատական վերափոխումների խորհրդային հասարակությունը չէր կարող առաջընթաց

² Տե՛ս Демократизация советского общества: истоки, проблемы, решения, М., 1989, էջ 7, 11:

³ Տե՛ս Խորհրդային Հայաստան, 29.11.1989:

ապրել: Իսկ դա նշանակում էր, որ նոր պայմաններում հասարակության մեջ կուսակցության դերն արմատապես փոխվում էր, որի գլխավոր գործառույթներից էին մշտական զարգացումը, հասարակական մտքի հարստացումը, հասարակության համար ժողովրդավարական զարգացման օրինակ լինելը և այլն: Այսինքն՝ պետք է պայմաններ ստեղծվեին, որ հասարակության մեջ առանց ցավի հակադրվեին տարբեր կարծիքներ, իսկ հարցերի լուծման համար առաջ քաշվեին այլընտրանքային լուծումներ, կարծիքներ՝ պահպանելով կուսակցության միասնությունը հատկապես սկզբունքային, ռազմավարական նշանակություն ունեցող հարցերում:

Մ.Ս. Գորբաչովը նաև կարևորում էր կուսակցության սերտ փոխհարաբերությունները տարբեր հասարակական կազմակերպությունների և շարժումների հետ: Նման դեպքերում, ըստ նրա, կուսակցությունն ավելի կամրապնդեր դիրքերը, որն էլ հնարավորություն կտար, հասարակության ողջ մտավոր, կենսառատ ուժերը ներառելով, մշակելու երկրի ընդհանուր քաղաքականությունն ու գործողությունների ծրագիրը⁴:

Վերակառուցման շրջանում կարևոր նշանակություն էր ստանում նաև ոչ ֆորմալ կազմակերպությունների գործունեությունը, որոնք պայքարում էին տասնամյակների ընթացքում երկրում հաստատված, նորի, առաջավորի զարգացման համար խոչընդոտ դարձած արատավոր երևույթների դեմ: Այդ իմաստով կարևոր էր նաև այն հարցադրումը, թե վերակառուցման ընթացքում իրականում ինչպիսին պետք է լինեին կոմունիստական կուսակցությունը, նրա քաղաքական կերպարը: Պատասխանելով այդ հարցին՝ Մ.Ս. Գորբաչովն ասում է, որ կուսակցությունը ողջ հասարակության համար պետք է լինի հասարակության ժողովրդավարական զարգացման օրինակ և առանց վախենալու պայմաններ ստեղծի հակադիր կարծիքների, այլընտրանքային հարցադրումների, տարբեր մոտեցումների ազատ դրսևորման համար⁵: Նա նաև ընդգծում է, որ վերակառուցման ուղղությամբ աշխատանքը պետք է սկսվի յուրաքանչյուրն ինքն իրենից, որոշելով իր քաղաքացիական դիրքորոշումը, սկսած քաղաքական, աշխատանքային գործունեության ակտիվացումից, հանձնարարված գործի

⁴ Ст'я Демократизация советского общества: истоки, проблемы, решения, էջ 12-13:

⁵ Նույն տեղում:

նկատմամբ պատասխանատվությունից հանուն վերջնական արդյունքների և այլն⁶:

Ինչ խոսք, թվարկված խնդիրները, հարցադրումները որքան էլ կարևոր էին, տեղին, սակայն սոսկ խոսքեր էին, քանի որ միութենական հանրապետություններում, առավել ևս տարբեր կարգի ինքնավար կազմավորումներում մարդիկ նույնանման չէին արձագանքում կուսակցության վերադասի կարգախոսներին և ընկալում դրանք: Նրանցից շատերն անթաքույց բարձրաձայնում էին Խորհրդային Միությունից դուրս գալու, անկախություն ձեռք բերելու մասին և վերակառուցումն ընկալում և մեկնաբանում էին այլ դիրքերից, մանավանդ որ բախվում էին կարգախոսներին հակառակ իրականության հետ, որն էլ հաճախ մարդկանց մեջ ծնում էր անտարբերություն, դեռ ավելին՝ վերակառուցման սկզբունքներին հակառակ դիրքորոշում: Եվ եթե Ժողովրդական զանգվածների մի մասն այլ դիրքորոշում և մոտեցում ուներ գորբաչովյան վերակառուցման նկատմամբ և այն ավելի շատ օգտագործում էր ազգային որոշ հարցեր բարձրացնելու համար և այլն, ապա Հայաստանի կոմկուսը, հատկապես Կենտկոմը ընդունում էր որոշումներ, որոնք բխում էին ԽՄԿԿ Կենտկոմի սկզբունքներից:

1988 թ. մայիսի 13-ին ՀԿԿ Կենտկոմի բյուրոն քննարկել է ապրիլի 5-ին «Правда»-ում հրապարկված «Վերակառուցման սկզբունքները, հեղափոխական մտածողությունը և գործողությունները» հոդվածը և արձանագրել, որ ՀԿԿ Կենտկոմի բյուրոն լիովին պաշտպանում է վերոհիշյալ հոդվածը, որտեղ տրված էր խոր վերլուծություն ԽՄԿԿ Կենտկոմի 1985 թ. ապրիլյան պլենումից և ԽՄԿԿ 27-րդ համագումարից հետո: Հոդվածում նաև խոսվում էր այն մասին, որ անհրաժեշտ է խորհրդային հասարակության տնտեսական, սոցիալական, հոգևոր ոլորտներում իրականացնել արմատական վերափոխումներ: Նաև նշվում էր, որ երբ բոլորը նախապատրաստվում են Համամիութենական կուսակցական XIX կոնֆերանսին, է՛լ ավելի է պահանջվում մեծ պատասխանատվություն երկրի ճակատագրի նկատմամբ: Հոդվածում կարևորվում էր քաղաքական նոր մտածողության ձևավորման հարցը՝ պատմությունից օբյեկտիվ և օգտակար

⁶ **Горбачев М.С.** Перестройка неотложна, касается всех и во всем. Сборник материалов о поездке М.С. Горбачева на Дальний Восток, 25-31 июля 1986 года, М., 1986, с. 38.

դասեր քաղելու ունակությունը, սոցիալիստական ժողովրդավարության ներուժի ամբողջովին օգտագործումը, մարդկային գործոնի ակտիվացումը և այլն: Ներկայացնելով այդ մտքերը՝ ՀԿԿ Կենտկոմի բյուրոն նաև նշում է, որ Խորհրդային Հայաստանի աշխատավորությունը, դրականորեն ընդունելով այդ հոդվածը, առաջ քաշված դրույթները, եզրակացությունները և այլն, բնականաբար, հանձնարարում է համապատասխան մարմիններին՝ կուսակցական քաղկոմներ, շրջկոմներ, մամուլ, ռադիո, հեռուստատեսություն և այլն, քննարկել և անել անհրաժեշտ առաջարկներ, մոտեցումներ:

Իհարկե, Կենտկոմի բյուրոն նշում է նաև որոշ թերությունների, բացթողումների մասին, որոնք խանգարում էին վերակառուցման գործընթացին: Հատկապես կարևորվում էր ոչ թե խոսքով, այլ գործով պայքարը կուսակցական, խորհրդային, գերատեսչական ապարատի բյուրոկրատական մոտեցումների, սկզբունքների դեմ: Հանձնարարվում էր համապատասխան մարմիններին հրապարակել վերլուծական, ինչո՞ւ չէ՝ նաև քննադատական հոդվածներ՝ վերակառուցման և երկրի մյուս գործընթացների վերաբերյալ⁷:

Դժվար չէ տեսնել, որ Հայաստանի կոմկուսը իր որոշումներում լիովին պաշտպանում էր ԽՄԿԿ Կենտկոմի գիծը, քաղաքականությունը, որը որքան էլ պահանջում էր մարդկանցից նոր մտածողություն, հեղափոխական մտածողություն, պատրաստ չէր փոխելու այն համակարգը, որն արդեն չունեի ներքին մղում գործող համակարգը զարգացնելու համար: Այդ հանգամանքն էլ պետք է դառնար այն խոչընդոտը, որն ավելի էր մեծանում և ծնում հենց վերակառուցումից բխող նոր մոտեցումներ, նոր հարցադրումներ: Այդ շարքում գլխավորն աստիճանաբար դառնում էր Կենտրոնից անջատվելու և սեփական ճակատագիրը ինքնուրույն որոշելու ձգտումը, որն էլ պետք է դառնար Միության փլուզման գլխավոր պատճառներից մեկը, և որի իրականացումն ստանձնեցին Խորհրդային Միության գրեթե բոլոր հանրապետությունները, նաև Խորհրդային Հայաստանի ընդհատակում ձևավորված այլախոհական շարժումը: Եվ որքան էլ որ շարժումն ամեն օր իշխանությունների կողմից ենթարկվում էր տարբեր կարգի հետապնդումների, ձերբակալությունների, այնուամենայնիվ, չվիատվեց, շարունակեց պայքարել՝ ստանալով ժողովրդական զանգված-

⁷ Տե՛ս ՀՀ ազգային արխիվ, ֆ., տ. 82, գ. 23 թ. 160-162:

ների համընդհանուր աջակցությունը: Այդ հանգամանքն էլ դարձավ այն գլխավոր պատճառներից մեկը, որի շնորհիվ նաև վերակառուցման ծնունդ Արցախյան շարժումը օր օրի դառնում էր համաժողովրդական՝ ստանալով լայն զանգվածների աջակցությունը. ի վերջո այն հասավ հաջողությունների և պայքարեց իր ճակատագիրը ինքնուրույն կերտելու համար:

Ի դեպ, Արցախյան շարժումը վերջին հաշվով նաև ազգային հարց էր, որի իմաստը թերևս ամենից շատ աղավաղվել է Խորհրդային Միությունում՝ հակառակ պաշտոնական քարոզչության, որը կառուցված էր ժողովուրդների, ազգերի անխախտ բարեկամության և եղբայրության կեղծ, իրականությունից բավական հեռու հիմքի վրա: Մինչդեռ իրականությունն այն էր, որ հատկապես 1980-ական թթ. Խորհրդային Միությունում այդ հարցն է՛լ ավելի սրվեց: Այդ երևույթին մեծապես նպաստեց այն հանգամանքը, որ 1977 թ. ԽՍՀՄ-ում ընդունված այսպես կոչված բրեժնևյան նոր Սահմանադրությունով փաստվում էր մի իրողություն, ըստ որի՝ իբր Խորհրդային Միությունում ազգերի, ազգությունների մերձեցման հետևանքով ձևավորվել էր նոր հասկացություն՝ «խորհրդային ժողովուրդ», հետևաբար ենթադրվում էր, որ ռուսաց լեզուն դարձել էր պետական լեզու:

Բնական է, նման շտապողականությունը տարբեր ազգերի, ժողովուրդների շրջանում կառաջացներ դժգոհություն: Այդ դժգոհությունը հատկապես դրսևորվեց Հայաստանում և Վրաստանում, որոնք, ի հակադրություն կենտրոնի, իրենց հանրապետությունների սահմանադրություններում ընդունեցին որոշում հայերենը և վրացերենը պետական լեզու ճանաչելու մասին: Ուշագրավ է, որ այդ նույն ժամանակ ՌԽՖՍՀ-ում, միջինասիական հանրապետություններում, Ղազախստանում ապրող գերմանացիների մեջ առաջացավ ձգտում՝ ստեղծելու սեփական ինքնավարությունները, իսկ մերձբալթյան ժողովուրդների շրջանում հակառուսական տրամադրություններն է՛լ ավելի սրվեցին⁸:

Ի դեպ, Խորհրդային Միությունում ազգամիջյան հակասությունների առաջացման պատճառներից մեկը երկրի տարբեր շրջանների միջև ոչ հավասարաչափ տնտեսական զարգացումն էր: Դա հատկապես ընդգծված դրսևորվում էր Լեռնային Ղարաբաղում, որին մեծապես նպաստել էր խորհրդային և առավել ևս հետխորհրդային Ադրբեջանի իշխանությունների բացահայտ կամ քողարկված հակահայ քաղաքականությունը: Այն

⁸ См. **Елисеева Н.В.** История перестройки в СССР 1985-1991 гг., М., 2016, էջ 146-147:

ավելի բացահայտ բնույթ կրեց, երբ 1988 թ. փետրվարի 20-ին ԼՂ մարզային խորհրդի արտահերթ նստաշրջանը, լսելով և քննարկելով պատգամավորների ելույթները, ընդունեց որոշում՝ «Միջնորդելու Խորհրդային Ադրբեջանի և Խորհրդային Հայաստանի Գերագույն խորհուրդներին և ԽՍՀՄ Գերագույն խորհրդին դուրս գալու Ադրբեջանի կազմից և միանալու Խորհրդային Հայաստանին», դիմեց թե՛ Ադրբեջանի և թե՛ Հայաստանի Գերագույն խորհուրդներին՝ դրսևորել ԼՂԻՄ-ի աշխատավորների զգացմունքների նկատմամբ խոր ըմբռնում և լուծել այդ հարցը, այսինքն՝ Լեռնային Ղարաբաղը միավորել Խորհրդային Հայաստանի հետ, միաժամանակ միջնորդել ԽՍՀՄ Գերագույն խորհրդին ընդունելու դրական որոշում, այն է՝ Լեռնային Ղարաբաղը միավորել Խորհրդային Հայաստանին⁹։ Սակայն, ցավոք, Ադրբեջանի իշխանությունները ոչ միայն չընդառաջեցին Լեռնային Ղարաբաղի աշխատավորների արդարացի պահանջներին, այլև թե՛ Լեռնային Ղարաբաղի և թե՛ Ադրբեջանի այլ քաղաքներում, շրջաններում ապրող հայության նկատմամբ վայրագություններ իրականացրին՝ 1988 թ. փետրվարի 27-29-ին Սումգայիթում սպանություններ, այլ քաղաքներում ջարդեր և այլն։

Ցավոք, խորհրդային իշխանությունները համապատասխան քաղաքական գնահատական չտվեցին այդ ամենին՝ է՛լ ավելի սրելով անկախության համար պայքարը։ Կանգնեցնել այն այլևս հնարավոր չէր, որքան էլ խորհրդային համապատասխան մարմինները շարունակում էին աշխատել հին, կոշտ վարչահրամայական մեթոդներով՝ է՛լ ավելի խորացնելով կենտրոն-ծայրամաս հակասությունները։ Իսկ դա նշանակում էր, որ գորբաչովյան վերակառուցումը, անկախ սահմանափակումներից, կարծրատիպերից, այլևս չէր կարող կանգնեցնել վերակառուցմամբ ծնված և վերակառուցումից առաջացած ժողովրդական զանգվածների ամենօրյա պայքարը ազատության, անկախության համար։ Այդ պայքարն էլ տվեց իր պտուղները. թե՛ Հայաստանը, թե՛ Լեռնային Ղարաբաղը հռչակեցին իրենց անկախությունը։ Թեև Արցախն առ այսօր դեռևս չի ճանաչվել որևէ երկրի կողմից, սակայն ավելի քան քառորդ դար է, որ Արցախի ժողովուրդը վստահորեն շարունակում է կերտել իր ապագան, լի վճռականությամբ

⁹ Ст'я Советский Карабах (21.02.1988), վերցված է «Հայության կոչերն ու դիմումները ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար 1988-1989 թթ.», Ե., 2014, № 16:

յամբ՝ պայքարել այդքան թանկ ձեռք բերած անկախությունը, ազատությունն ամեն գնով պաշտպանելու և ամրապնդելու համար:

СУЩНОСТЬ ГОРБАЧЕВСКОЙ ПЕРЕСТРОЙКИ И ЭТАПЫ ЕЕ РАЗВИТИЯ (1985-1990 ГГ.)

МАТИНЯН Л.В., АБРААМЯН Г.М.

Резюме

Горбачевская перестройка вдохновила граждан на борьбу за восстановление свободы и независимости. Эта борьба дала свои плоды, в итоге Армения и Нагорный Карабах также заявили о своей независимости, хотя Арцах как суверенное государство по сей день не признан ни одной страной. Более четверти века народ Арцаха уверенно строит свое будущее и полон решимости бороться, защищать и укреплять столь дорогой ценой приобретенную независимость и свободу.

THE ESSENCE OF GORBACHEV'S RECONSTRUCTION AND STAGES OF ITS DEVELOPMENT (1985-1990)

L. MATINYAN, H. ABRAHAMYAN

Abstract

Gorbachev's reconstruction inspired citizens to struggle for the restoration of freedom and independence. This struggle gave its benefits, Armenia and Nagorno Kharabakh also declared their independence, although Artsakh has not been recognized yet as a sovereign state by any country. But for more than a quarter century, the people of Artsakh confidently continue to build their future with determination to fight, defend and strengthen for their independence and freedom, which have been so dearly acquired.

ՂՐԻՄԻ ՀԱՅ ԳՐԱՎՈՐ ՄՇԱԿՈՒՅԹԸ XVII ԴԱՐՈՒՄ

ՊՈՂՈՍՅԱՆ Ն.Բ

Միջնադարում, հատկապես XVII դարում, Ղրիմը հայ գրավոր մշակույթի զարգացման և տարածման կենտրոններից մեկն է եղել, որտեղ ստեղծվել ու գրվել են բազմաթիվ երկեր, ընդօրինակվել են ձեռագրեր, կառուցվել են վանքեր:

Նախ նշենք, որ դրիմահայերի պատմության, գրավոր մշակույթի հարցերը պարզաբանելու ուղղությամբ բանասիրությունը զգալի արդյունքներ ունի: Նկատի ունենք, հայ ուսումնասիրողներից բացի¹, հատկապես Յարոսլավ Դաշկևիչի մեծարժեք աշխատությունները: Անվանի գիտնականն իր «Армянские колонии на Украине в источниках и литературе 15-19 веков» աշխատության մեջ, ի մասնավորի, քննության նյութ է դարձրել Ղրիմի, ինչպես ինքն է նշում՝ «ճանապարհորդների և քաղաքական գործիչների հուշագրությունները, աշխարհագրական-տեղագրական նկարագրությունները, պատմական երկերը, կրոնական և ուխտավորական գործերը, դիվանագետ դեսպանների և եկեղեցական գործիչների երկարաշունչ հաշվետվությունները»²:

Յ. Դաշկևիչի օգտագործած աղբյուրների մեջ չեն ներառվել գրական ստեղծագործությունները: Թեև անվանի գիտնականը ուրիշ առիթով ինքն էլ նշում է, որ Ուկրաինայի հայկական գաղութին վերաբերող XV-XVII դարերի գրականության ուսումնասիրությունը նույնպես կարող է վերածվել մի կողմից՝ առաջնային նշանակության աղբյուրների տեսության, մյուս կողմից՝ Ուկրաինայում հայկական գաղութի անցյալի քննության:

Ինչո՞վ է առանձնանում XVII դարը, պատմագիտական ու գեղարվեստական ի՞նչ արժեք են ներկայացնում այդ ժամանակաշրջանում Ղրիմում

¹ **Քուշներեան Բ.**, Պատմութիւն գաղթականութեան Խրիմի հայոց, Վենետիկ, 1895, **Պարսամյան Վ.**, Ղրիմի հայերի մասնակցությունը Դավիթ Բեկի ապստամբությանը, Ե., 1972, **Միքայելյան Վ.**, Ղրիմահայ գաղութը Արևելք-Արևմուտք հարաբերությունների ոլորտում (13-18-րդ դդ.), Ե., 2001 և այլն:

² **Дашкевич Я.Р.** Армянские колонии на Украине в источниках и литературе 15-19 веков, Е., 1962, с. 11.

ստեղծված հայերեն երկերը: Այս հարցադրումը երկու հիմնական պատասխան ունի:

Նախ՝ միջնադարում Ղրիմում առկա էր հոծ հայ համայնք: Դեռևս XV դարի վերջին, համաձայն ոչ հայկական աղբյուրների տվյալների, հայերը Ղրիմի բնակչության մոտ 1/3-ն էին, այնտեղ ունեին 30-ից ավելի եկեղեցիներ, որոշ ժամանակ հայերը թաթարներից հետո եղել են քանակով երկրորդը³: «Չնայելով բազմաբնույթ սահմանափակումների դեմ մղած կատաղի պայքարին՝ Ղրիմի հայկական գաղութները XV դարի առաջին կեսերից մինչև XVII դարը տնտեսական և մշակութային վերելք են ապրել», - գրում է Յ. Դաշկևիչը⁴: Միայն XVII դարի կեսերին Կաֆա քաղաքի 70 հազար բնակչից 46 հազարը հայեր էին: Թվային այդ հարաբերակցությունը տարբեր կերպ նկատելի է եղել ընդհուպ 1778 թվականը, երբ ռուսական կայսերական հրամաններով հայերը տեղահանվեցին ու վերաբնակեցվեցին Նոր Նախիջևան (այժմյան Դոնի Ռոստովի կազմում) քաղաքում և շրջակա գյուղերում, որտեղ մինչև օրս առկա է հայահոծ համայնք՝ մշակութային ակտիվ կյանքով և ուրույն բարբառով: Հայ ազգաբնակչության հիմնական զանգվածն ապրում էր Կաֆա (Թեոդոսիա), Սուրխաթ (Սուրբ Խաչ, այժմ՝ Ստարի Ղրիմ), Խազարաթ (Կազարաթ, այժմ՝ հիմնովին կործանված), Սուրոժ (այժմ՝ Սուդոկ), Ագմեչիդ (այժմ՝ Սիմֆերոպոլ), Կեոզլ (այժմ՝ Եվպատորիա), Օրբազար (Արմյանսկի բազար, Արմյանսկ) քաղաքներում և Թոփտի (Թոփի, այժմ՝ Տոպոլևկա), Բախչիելի (այժմ՝ Բոգատոյե), Օրթալանկ (այժմ՝ Ջենյանիչնոյե) և այլ գյուղերում: Ուսումնասիրողները, ինչպես Ե. Զևակինը և Ն. Պենչենկոն, իտալական աղբյուրների հիման վրա եզրակացրել են, որ թերակղզու տնտեսական զարգացման մեջ հիմնական դերերից մեկը կատարել է հայկական առևտրական կապիտալը⁵:

Սովար հայ բնակչության առկայությունն է առիթ տվել, որ ջենովական աղբյուրներում Ղրիմի հարավարևելյան հատվածը հաճախ կոչվել է «Armenia Maritima – Ծովային Հայաստան»⁶:

³ Հայ-իտալական առնչություններ, ջենովական փաստաթղթերը դրիմահայերի մասին», կազմեց՝ Վ. Միքայելյան, Ե., 1974, էջ 8:

⁴ Дашкевич Я.Р., նշվ. աշխ., էջ 10:

⁵ Зевакин Е.С., Пенчко Н.А. Очерки по истории генуэзских колоний на Западном Кавказе в XIII и XV веках (Исторические записки, т. 3, М., 1938).

⁶ Դիվան հայ վիմագրության, հ. VII, Ե., 1996, էջ 11:

XVII դարում Ղրիմում և առհասարակ Ուկրաինայում հայերի մասին իր ուղեգրության մեջ արժանահավատ տեղեկություններ է հաղորդում Սիմեոն Լեհացին: Իր այցելած վայրերի մասին նա պատմում է. «Այստեղ... տարբեր քաղաքներում հայեր են ապրում... Եվ մեծ Մանքերմանում⁷, ասում են, որ երբ պատերազմ լինի, հայերից հինգ հարյուր հոգի կելնի»⁸:

Որոշ բնակավայրերում հայերն ունեցել են դատական գործեր վարելու ինքնավարություն: 1572-1619 թթ. Լվովի հայկական համայնքի դատարանում գրագիր աշխատած **Մինաս Թոխաթեցին** տեղի հայ դատավորների և նրանց իրավունքների մասին գրում է.

Հայոց ազգին իրենք են դատում,
Ուխտ և դաշինք են հաստատում,
Ապստամբներին են խրատում,
Կարգ ու կանոն են ամրացնում:
Տասներկու դատավորներն են՝
Որ ծուռն ու շիտակն են քննում,
Մեղավորներին պատժում
Եվ անմեղներին ազատում⁹:

Ժամանակաշրջանի ընտրությունը պայմանավորված է նաև նրանով, որ XVII դարում կարևորագույն իրադարձություններ տեղի ունեցան թե՛ Ղրիմում, թե՛ հայ ժողովրդի կյանքում: Հատկապես նկատի ունենք Բ. Խմելնիցկու ղեկավարած ազատագրական պայքարը (1648-1654), ռուս-լեհական (1654-1667), ռուս-թուրքական (1676-1681) պատերազմները, նաև բուն Հայաստանում ծավալվող դեպքերը՝ երկրի մեծ մասի զավթումը Օսմանյան Թուրքիայի կողմից, բնակչության տնտեսական և կրոնա-էթնիկ կացության վատթարացումը, արտագաղթը բնիկ տարածքներից: Այդ ամենը, բնականաբար, այս կամ այն չափով իրենց արտացոլումն են ստացել Ղրիմում հայերի կյանքի ու նաև նրանց ստեղծած հայերեն երկերի ուղղվածության և բովանդակության վրա:

⁷ Կիև քաղաքն է:

⁸ **Սիմեոն Դպրի Լեհացույ**, Ուղեգրութիւն, տարեգրութիւն և յիշատակարանք, հրատարակեց՝ Ն. Ակինեան, Վիեննա, 1936, էջ 347-48:

⁹ Այս և այլ բանաստեղծություններից ու այլ աղբյուրներից մեջքերումները տալիս ենք աշխարհաբար թարգմանությամբ:

Այսպիսով, XVII դարի ղրիմահայերի գրավոր մշակույթը որոշակի արտացոլանքն է մեր ժողովրդի պատմության ու գրավոր ժառանգության կարևորագույն մի շրջանի, որը բնութագրվում է որպես «հոգևոր վերելքի ու վերածնունդի» շրջան¹⁰: Այս հրապարակման մեջ անդրադառնում ենք հատկապես բանաստեղծությանը և ձեռագիր հիշատակարաններին, որոնք միաժամանակ պատմական տվյալներ են հաղորդում ժամանակի հայ կյանքի մասին:

Ա) ՏԱՂԱՍԱՏ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐ: Ղրիմի հայ բանաստեղծների ստեղծագործությունները միջնադարյան հայ գրականության անբաժանելի էջերից են: Բուն հայրենիքից հեռու ստեղծագործող տաղասացները պահպանում ու զարգացնում էին հայկական մշակույթը, նաև աշխարհիկ (աշխարհաբար) լեզուն, գրականությունը: Այս շրջանում Ղրիմում զարգացում ապրեց հատկապես հայ բանաստեղծական արվեստը: Հանդես եկան գրողներ և տաղասացներ **Խաչատուր Կաֆայեցին** (ձեռագրերում գրվում է նաև Խասպեկ Երեց ապրել է (1610-1686 թթ.), **Վրթանես Կաֆայեցին** (XVI-XVII դար), **Ստեփանոս Թոխաթեցին** (XVII դար), **Վարդան Կաֆայեցին** (1615-1712), **Մարտիրոս Ղրիմեցին** (XVII դար) և ուրիշներ: Հայ ուսումնասիրողները նշված հեղինակներից առանձնակի քննել են Մարտիրոս Ղրիմեցու, Խաչատուր Խասպեկի, Վարդան Կաֆայեցու երկերը: Ներկայացնենք նրանցից մի քանիսի ստեղծագործական ընդհանուր բնութագիրը:

Վրթանես Կաֆայեցի. ծնունդով Հայաստանի Այրարատ նահանգից էր, սակայն կյանքի վերջին շրջանն ապրել է Կաֆայում, եղել է տեղի եպիսկոպոսը: Վրթանեսի երկերում հանդիպում են սոցիալական թեմաներով գրվածքներ, որոնք պատմական կենցաղը վերականգնելու լավ աղբյուրներ են: Նշենք, որ մեր քննած երկերը մեծ արժեք են ներկայացնում փաստերի, առաջին հերթին Ղրիմում պատմական միջավայրը վերականգնելու առումով: Այդպիսին է XVI դարի վերջերին Ղրիմում գրված «Կաֆայի աղետը» ոտանավորը, որտեղ Վրթանեսը բանաստեղծական տողերով ներկայացնում է Կաֆայի ծանր վիճակը վրա հասած սովի պատճառով, մարդկային կերպարանափոխությունն այդ պայմաններում:

Ո՛չ վանք, ո՛չ ջրաղաց թողեցին,

¹⁰ Միրզոյան Հ., Հայ գրքի և գրատպության պատմության փիլիսոփայական անդրադարձներ, Ե., 2015, էջ 133:

Հարուստ տները թալանեցին,
 Չար գազանների նմանվեցին,
 Գիշերով որսի գնացին:
 ...Եթե նավեր էլ չգային՝
 Ուրեմն բոլորը կջնջվեին¹¹:

1583 թվականին տեղի ունեցած մարտերի մասին է Վրթանես Կաֆայեցու «Ողբ Կաֆայի առման մասին» ստեղծագործությունը: Երբ թաթարներն ապստամբում և հրաժարվում են օսմանյան զորքերին օժանդակել Պարսկաստանի դեմ արշավանքի ժամանակ, օսմանյան 80-հազարանոց բանակը շրջապատում է Կաֆան, բազում հրացանակիրներ (թվանքչի) և թնդանոթներ են բերվում, Փաշա թեփա բլրի վրա տեղադրում, հարվածում են պարսպին, սակայն վնասել չեն կարողանում: 40 օր հետո նոր նավեր են օգնության գալիս, որից վախեցած՝ թաթարները փախուստի են դիմում և հնազանդվում օսմանցիներին: Սակայն լինում են նաև չհնազանդվողներ, որոնք ապաստանում են Բախչիսարայում: «Ողբի» շարունակության մեջ նկարագրվում է վեց ամիս տևած խառնակ վիճակը: Հեղինակը դիմում է Աստծուն, որ «փորձանք չբերի Աստվածաշեն Կաֆա քաղաքին»: Վ. Կաֆայեցին ականատես է եղել Պարոն-Լույս անունով հայ պատանու նահատակությանը (1567 թ.), որի վկայաբանությանն է նվիրված նրա գրած բանաստեղծությունը:

Վարդան Կաֆայեցի (1615-1712). ծնվել է Կաֆայում և այնտեղ է ապրել մինչև խոր ծերություն: 1680 թ. Ղրիմի հայ համայնքի խնդրանքով Հայ առաքելական եկեղեցու կաթողիկոս Հակոբ Զուղայեցուց (1655-1680) ստացել է եպիսկոպոսական գավազան և նշանակվել տեղի հայերի հոգևոր առաջնորդ: Բացի «Վարդի երգից»՝ նրա մյուս բոլոր տաղերը նվիրված են Ղրիմի հայկական եկեղեցուն: Դրանք բազմաթիվ տվյալներ են մատուցում Կաֆայում և Ղրիմում շինարարական պատմության մասին, որի համար նաև պատմական որոշակի արժեք են ներկայացնում: Օրինակ՝ տաղերից մեկում Ղրիմի բնակավայրերը գովերգելիս ասում է.

¹¹ Այս շրջանի հայ բանաստեղծների ստեղծագործություններից շատերը հրատարակվել են տարբեր ժողովածուներում և առանձին գրքերում: Դրանցից պետք է հիշատակենք հատկապես «Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը» (XVI-XVII դդ.) երկհատոր ժողովածուն, կազմող՝ Հասմիկ Սահակյան, հ. I-II, Ե., 1986-87 թթ., որից քաղել ենք չափածո մեջբերումների մեծ մասը: Ներկայացնում ենք աշխարհաբար մեր փոխադրումով:

Դու ես ապաստանը Կաֆայի համար,
 Ղարասու կոչվող, բուրաստանով լի,
 Եվ արքայանիստ Բախչիսարայի՝
 Դաշտածև երկրի, օրինյալ Կեզլովի:

Ստեփանոս Թոխաթեցի. Թոխաթ քաղաքում ծնված և հետո Ղրիմ տեղափոխված Ստ. Թոխաթեցու տաղերից հիշատակելի են «Գանգատ ճանճերի և լվիճների համար», «Կաֆայի մասին», «Գովասանություն Կաֆայի քահանաների մասին» երկերը: Վերջինը գրված է մեծ հումորով, մեկ առ մեկ ներկայացնում է Ղրիմի հայ հոգևորականներին՝ պատկերավոր նկարագրելով նրանց կերպարի բնորոշ ինչ-ինչ գիծը, օրինակ՝ Խաչատուր Եպիսկոպոսին նկարագրում է հետևյալ ձևով.

Երբ գոռում է բաց բերանով,
 Վախենում են՝ թե կուլ կտա,
 Փախչում են՝ շուտ հեռանալով:

Մեկ ուրիշի մասին՝

Աստուածատուր «սուրբ» քահանան՝
 Խիստ խայտառակ, ծեր, ծաղրական...

Այսպես բնութագրում է Կաֆայի բոլոր 27 հայ հոգևորականներին:

Ռուսների՝ Ղրիմ կատարած արշավանքներից մեկին է նվիրված Ստ. Թոխաթեցու բանաստեղծությունը: Հեղինակն ընդօրինակել է մի ձեռագիր «Երգարան», որի վերջին էջերին չափածո տաղ է գրել՝ նվիրված այդ արշավանքին: Այն որոշակի կենցաղային ստույգ մանրամասներ է պարունակում.

Ժամանակն էր շատ անբարի.
 1616 թվին հարյուր լիքը նավերով,
 Ուռուներն եկան Կաֆայի վրա:
 Բոլորը քաղցած և անոթի էին,
 Հին հագուստով, ոտքերին՝ չարուխ:
 Հանկարծակի եկան գիշերով,
 Դեռ չէր պառկել մարդ իր անկողնում...
 Կաֆայի պարսպից նրանք վայր իջան,
 Մեծամեծ տներ մտան, թալանեցին... (1, 618):

Ապա հեղինակը մանրամասն ներկայացնում է հերթական արշավանքի ու դրան հաջորդած իրադարձությունների պատկերը:

Ղրիմահայ տաղասացների երգերը բնավ զուրկ չեն բանաստեղծական-գեղարվեստական արժեքից, նրանցում կարելի է գտնել նաև սիրո, բնության թեմատիկա: Նման երգիչ է **Սիմեոն Կաֆայեցին**, եղել է բնիկ Կաֆայից, մշտապես ապրել և ստեղծագործել է այդ քաղաքում: Պահպանվել են նրա հեղինակած մի քանի տաղերը՝ գրված 1683-86 թթ.: Մասնագիտությամբ կոշկակար է եղել, սակայն այդ աշխատանքը նրան բավականություն չի պատճառել, հանգամանքների բերումով կամեցել է թողնել իր այդ գործը: «Գեղեցիկ է վարդը ամենից» բանաստեղծության մեջ ակնարկ կա իր մասնագիտության և ապրումների մասին.

Եկա, և տե՛ս, կյանքս արագ անցկացավ,
Գնալու ենք ամենքս էլ աշխարհից,
Խրըմպեյի որդի, տե՛ս ինչ ասվեց՝
Թո՛ղ կոշիկ կարելո՛ւ, ահա մահը վրա հասավ:

Առավելապես սիրո և բնության երգիչ է Սիմեոնը, այդ թեմաներով են գրված «Սիրտ իմ...», «Թռիր, սոխակ...» ոտանավորները: Նրա «Վասն ուրախութեան» տաղում նկատելի է անձնական սիրո մոտիվը: Այն սկսվում է սիրած աղջկան ուղղված ձոնով.

Կարոտ եմ խիստ գեղեցիկ տեսքիդ, իմացի՛ր,
Քաղցր-քաղցր դայլայլելով մոտեցի՛ր,
Մոտեցի՛ր, մոտեցի՛ր, մոտեցի՛ր:

Սիրո ու բնության գովք է «Ե՛կ, բլբուլ գարնանային» տաղը: Այստեղ գարնան սոխակը ավետաբեր ձայնն է, իսկ հարավային քամին՝ երգչի մխիթարանքը:

Արի՛ բլբուլ գարնանային,
Ավետյաց ձայն բեր, բե՛ր.
Քաղցրիկ հողմով հարավային՝
Մխիթարի՛ր մեզ, մեզ:

Մեկ այլ բանաստեղծ՝ **Խաչատուր Խասպեկը**, ինչպես նրա մահվան կապակցությամբ գրում է իր աշակերտը՝ Սիմեոն Կաֆայեցին, բացի տաղասաց լինելուց, եղել է նաև ձեռագրերի ընդօրինակող-գրիչ, փիլիսոփա-հռետոր: Աշխարհիկ թեմաներով է գրված նրա «Տաղ սիրո և ուրա-

խութան» բանաստեղծությունը: Բնության գեղարվեստական պատկերներ են տրված «Տաղ վարդի և անուշահոտ ծաղիկների մասին» երգում. այստեղ կարմիր վարդը, կակաչը, հազար ու մի ծաղիկ միաձուլված մի պատկեր են կազմում, դրանք ստեղծված են, որ ուրախություն պատճառեն մարդկանց.

Ծաղիկներն ամեն սիրով այգում հավաքվեցին՝
Անուշ գինի ճաշակելու ծաղի շուքին, կանաչ թփին,
Եվ ուրախացնում են կարմիր, ճերմակ վարդին:

Արձանագրենք, որ, ի հակադրություն միջնադարում կրոնաեկեղեցական ժանրերի տարածվածության, Ղրիմի հայ ստեղծագործողների մեջ կրոնական թեման գերակշռող չէ: Թեև հանդիպում ենք մեծ թվով կրոնական բովանդակության տաղերի, բանաստեղծությունների, սակայն առավել տարածված են բնության, սիրո, աշխարհիկ կյանքի, պանդխտության մոտիվները: Ղրիմի գրեթե բոլոր հայ տաղերգուները եղել են հոգևորականներ՝ քահանաներ, վարդապետներ, սակայն դա բնավ չի խոչընդոտել, որ նրանց երգերում արծարծվեն աշխարհիկ թեմաներ, նաև սիրո թեման: Աշխարհիկ թեմայով է գրված, ինչպես տեսանք, անգամ տեղի հայ հոգևոր առաջնորդ (1680-1712) Վարդան Կաֆայեցու երգերից մեկը («Տաղ վարդի մասին»): Ղրիմահայ գրողների ստեղծագործություններին ու չափածո տաղերին խորթ չեն նաև հումորն ու սատիրան: Հիմնականում արհեստավորական խավերից կազմված ղրիմահայ գաղութին հարազատ են եղել զվարճասեր ու աշխարհասեր բարքերը, ուրախությունն ու վիշտը, և այդ զգացմունքներն արտացոլվել են տաղերգուների երգերում: Այս իմաստով տաղերգուները հայկական միջավայրի և Ղրիմի տրամադրությունների արտացոլողն են: Եվ դա է թերևս հիմնական պատճառներից մեկը, որ տաղերգուների ստեղծագործությունը ժողովրդականություն է վայելել Ղրիմի հայերի շրջանում՝ ընդօրինակվելով և պահպանվելով բազմաթիվ ձեռագիր մատյաններում:

Մի քանի խոսք այս շրջանի տաղերի լեզվի մասին: XVII դարը շրջանաբաժանման մի նոր փուլ է համարվում նաև հայերենի համար: Այս ժամանակներից է ձևավորվում ու լայն տարածում ստանում նոր հայերենը: Ղրիմահայերը, ինչպես երևում է նրանց թողած գրական ժառանգությունից և այդ թվում՝ բանաստեղծություններից, անկաշկանդ էին նոր հայերենը գործածելու հարցում: Իհարկե, հին հայերենի հետքեր կան բանաս-

տեղծության մեջ, մանավանդ հոգևոր ու խրատական բովանդակության երգերում, սակայն տաղերի մեծ մասը գրված է աշխարհիկ լեզվով, ճիշտ այնպես, ինչպես որ նոր հայերենով են գրված ժամանակի բուն հայկական բնակավայրերում և հայաշատ քաղաքներում (Կ. Պոլիս, Ջուղա, Երևան, Վան, Լվով և այլն) ստեղծված երկերից շատերը: Կարծում ենք, սրանով հաստատվում է այն տեսակետը, որ դրիմահայերը թեև հեռու էին բուն Հայաստանից, սակայն կտրված չէին նրա մշակութային ընթացքից, դրա բաղկացուցիչն էին, խոսում էին մայրենի լեզվի մի խոսվածքով, որը գրեթե չէր տարբերվում այլ վայրերի հայերենից: Ավելի ուշ՝ XVIII-XIX դարերից, դա հայտնի է որպես դրիմահայերի բարբառ¹²:

Բ) ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ: Ուշ միջնադարում Ղրիմում, հայերեն գրական ստեղծագործություններ ստեղծվելուց բացի, մեծ թվով ձեռագրեր են արտագրվել, կազմվել: Այն հայկական գրչության կարևոր և հայտնի կենտրոններից է: Միայն Երևանի Մատենադարանում պահվում է Ղրիմում ստեղծված հայկական ավելի քան 300 ձեռագիր: Դրանց մեջ է, օրինակ, 1434 թ. Կաֆայում կազմված «Տոնացոյցը», որը չափերով հավասար է լուցկու տուփի և կշռում է 19 գրամ¹³: Հայկական ժողովրդական երգերի առաջին ձեռագիր ժողովածուն կազմվել է Ղրիմում Խաչատուր Կաֆայեցու ձեռքով, երբ նա ընդամենը 16 տարեկան էր: XVII-XVIII դդ. Կաֆայի նշանավոր գրիչներից նույնպես հասել են բազմաթիվ ձեռագրեր, օրինակ՝ Նիկողայոս Մելանավորից պահպանվել է 20, Ջաքարիա Աբեղայից՝ 13, Հովակիմ Երեցից՝ 6 ընդօրինակած ձեռագիր և այլն¹⁴:

Հարյուրավոր ձեռագրերի էջերում գրվել և պահպանվել են ստեղծագործող հեղինակների, ձեռագրերը արտագրողների, նվիրատուների, ստացողների և այլոց գրավոր հիշատակումները: XVII դարի Ղրիմի հայերեն ձեռագիր մատյանների հիշատակարաններում անհամար են Ղրիմի մասին փաստերը, այդ գրությունները արժանահավատ սկզբնաղբյուրներ են և ուղղակիորեն ներկայացնում են գրողի ժամանակի, կենցաղի, մարդկանց մասին մեծաքանակ տվյալներ: Հանդիպում ենք Կաֆա, Կեոզլ, Սուրխաթ և այլ քաղաքների մասին տվյալներ, հիշատակարան-

¹² Ղրիմի հայերի բարբառի մասին տե՛ս **Աճառյան Հ.**, Քննություն Նոր-Նախիջևանի բարբառի, Ե., 1925:

¹³ Հայ Սփյուռք, Ե., 2003, էջ 610:

¹⁴ **Առաքելյան Վ.**, Ղրիմահայոց պատմություն, Ե., 1989:

ներ տեղի հայկական և ոչ հայկական սրբավայրերի, պատմական անցուդարձերի մասին:

XVII դարի սկզբին Հայաստանում ի հայտ եկած Ղարա Եազըճի անունով ջալալու ասպատակություններից և պատճառած ավերներից հետո բուն Հայաստանից հայերի մեծ հոսք է սկսվում դեպի Ղրիմ, հատկապես՝ Կաֆա: Հայերի այս արտագաղթի արձագանքները պահպանվել են բազմաթիվ հիշատակարաններում, օրինակ՝ «1602 թ. Ղարա Եազըճին ավիրեց Թոխաթը, և ամենքը փախստական ելան եկան Կաֆա» (1, էջ 151)¹⁵: «1602-ին Ղարա Եազըճի անունով մեկը Ուռհայից մինչև Սկուտար ամեն ինչ այրեց և ավիրեց, թալանեց և սպանեց շատերին, և մենք Թոխատից ելանք եկանք Կաֆա» (1, 374):

Նշված պատմական դրվագը իր ժամանակին մեծ արձագանք է ստացել թե՛ Հայաստանում և թե՛ Մերձավոր Արևելքում: Այն նաև գեղարվեստական ստեղծագործության նյութ է ծառայել Ստ. Թոխաթեցի բանաստեղծի համար և վերջինիս ողբի հիմքում է՝ «Տաղ և ողբ Եվդոկիա մեծ քաղաքի մասին»: Դրա մի նախնական տարբերակը գտնում ենք նաև ձեռագիր մատյաններում, որտեղ ակնարկում է Ղրիմ տեղահանվելու մասին:

Տնանկ պանդուխտ, դարիք, նժդեհ՝
Սահեցի ընկա Կաֆայի մեջ,
...Կաֆա քաղաքը նման է դրախտի՝
Երուսաղեմ սուրբ քաղաքի,
Մեծ Հռոմին և Ստամբուլին (1, 250):

Բուն Հայաստանում տիրող անմխիթար վիճակի և դրա պատճառով դեպի այլ վայրեր և մասնավորապես դեպի Ղրիմ գաղթերի մասին են պատմում նաև այլ հիշատակարաններ:

«1604 թ. սովից ցրվեց հայոց ազգը Պարսկաստան, Ասորեստան, Վրաստան, հասան անգամ մինչև Ափսազիա, Կաֆա» (1, 289):

«1605 թ. մի անօրեն իշխան ի հայտ եկավ Կարինում, քրիստոնյաներին բազում նեղություններ պատճառեց և թալանեց, ոմանք փախստա-

¹⁵ Ձեռագիր հիշատակարաններից մեջքերումները կատարել ենք ըստ հետևյալ գրքի. «ԺԷ դարի հայերեն ձեռագիր հիշատակարաններ», կազմեցին՝ Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, հ. 1-3, Ե., 1974-84: Շարադրանքում տրվում են այդ հրատարակության հատորը և էջը:

կան դարձան երկրից երկիր և քաղաքից քաղաք, և ոմանք ծովով անցան գնացին Կաֆայի աշխարհը» (1, 179):

«1611 թ. Մարաշից կրոնական պաշտոնյա եկավ Սիս մայրաքաղաքը, ավերեց, քաղաքացիներից ոմանք փախան Կաֆա, ոմանք՝ Պուլտանու երկիրը¹⁶, ոմանք՝ Լեհաստան» (1, 432):

Հիշատակարաններում պահպանվել են նաև բուն Ղրիմում պատահած դեպքերի, արշավանքների, անգամ աղետների մասին նկարագրություններ: Դրանցից շատերը գրել են դեպքերին ականատեսները կամ մասնակիցները, շատ հաճախ փաստերը բերված են օրվա ճշգրտությամբ և ուրեմն լիովին արժանահավատ են: Օրինակ՝

«1604 թվի օգոստոսի 16-ին բազում որոտներ և կայծակներ և սաստիկ անձրևներ և մեծ հեղեղ պատահեցին Կաֆայում, մինչև անգամ կայծակը Եփրախլուի մեկ աշտարակը փլցրեց, մի հովիվի և իր մեծաքանակ հոտը քշեց, շատ տներ հեղեղով լցվեցին» (1, 152):

«1607 թ. օգոստոսի 4, օրը երեքշաբթի, ուռուս կազակները արշավեցին Կեզլով և 900 հոգի ջարդեցին, թաթար, հայ, իտալացի և հրեա՝ գերի տարան» (1, 252):

«1616 թ. յուլիսի 21, օրը կիրակի, 3 ժամ էր անցել գիշերվանից, եկան ուռուս կազակները և Կաֆան կոխեցին, թալանեցին, ավիրեցին և այրեցին շատ տներ և խանութներ» (1, 584) և այլն:

Ղրիմի հայկական միջավայրում, ձեռագիր հիշատակարաններից բացի, ստեղծվել են պատմագրական բնույթի գործեր: XVII դարից հատկապես պետք է հիշատակել Ստեփանոս Թոխաթեցու «Հիշատակարանը», Խաչատուր Կաֆայեցու «Տարեգրությունը», Դավիթ Գրիչի ընդարձակ հիշատակարանը: Մասնավորապես 1615-1658 թթ. մասին մանրամասներ պատմող Խ. Կաֆայեցու (Խաչգռուզ) «Տարեգրությունը» շատ բան է հիշատակում Ղրիմի քրիստոնյաների վիճակի, ուկրաինական և լեհական շրջանները թաթարական ասպատակությունների, կազակական մարտերի և շատ այլ հարցերի մասին: Այն հայ, ուկրաինական և ռուս պատմության մի շտեմարան կարելի է համարել:

¹⁶ Ուշ միջնադարում Մոլդովան շատ ժողովուրդներ, այդ թվում՝ հայերը սկսեցին անվանել Բոգդանի կամ Պուլտանի երկիր՝ Մոլդովայի իշխան Բոգդան Երրորդի անունով:

Հայերեն ձեռագիր ոտանավոր մի հիշատակարան նվիրված է պատմական մեկ այլ կարևոր փաստի՝ Բոգդան Խմելնիցկու ազատագրական կռիվներին և այդ ընթացքում Ղրիմում կատարվող դեպքերին ու դրանց անդրադարձներին: Այն գրվել է Կաֆա քաղաքում 1648 թ., հեղինակի անունն է՝ Ավետիք: Այս չափածո հիշատակարանում նախ հիշատակում է Ավետարանի հայտնությունը, ըստ որի՝ «Վեր կկենա ազգը ազգի վրա և թագավորը թագավորի վրա...», և այդպիսի խոռովմունք է սկսվում երկրում, հետմանի մարդիկ գալիս են Ղրիմի երկիրը, հաշտվում են Նեպի անունով խանի հետ, ապա թաթարները միաբանվում են կազակների հետ և գնում Լեհաց երկրի վրա, շատ վայրեր ու քաղաքներ են գրավում, անգամ Պար քաղաքի պարոնին գերում և բերում են Ղրիմ: Սակայն պայքարին դրիմցիների մասնակցությունն անսպասելի ավարտ է ունենում, որի պատճառն է դառնում Ղրիմում և Կաֆայում սկսված համաճարակը: Հեղինակն անսպասելի շրջադարձով երկար նկարագրում է համաճարակի տեսարանները, պատմում, թե ինչպես էր հարազատը կորցնում հարազատին, ծնողը՝ զավակին և այլն (3, 289-291): Ի դեպ, մեկ ուրիշ հիշատակարանում այդ համաճարակի պատուհասած մահերի թիվը նշվում է 10 հազար:

1648-1654 թթ. ազատագրական շարժման ժամանակ, որը չէր կարող բնականաբար շրջանցել հայկական համայնքները, ըստ պատմական տվյալների՝ հայերը հստակորեն գրավել են ուկրաինացի ժողովրդի կողմը: «Հայկական բնակչության գերակշռող մասը՝ հասարակ մարդիկ, արհեստավորներ, նույն վտանգներին ու ազգային խտրականությանն էին ենթարկվում, ինչ ուկրաինացիները, և լրացնում էին ապստամբած ժողովրդի շարքերը»¹⁷, - գրում է Յ. Դաշկևիչն այդ ապստամբության մասին:

Գրական ստեղծագործություններից շատերի աղբյուր են եղել ժողովրդի մեջ տարածում ստացած զրույցները: Նման ծագում ունի նաև այն ավանդագրույցը, ըստ որի հայերը XIII դարում Ղրիմ են տեղափոխվել Հայաստանի միջնադարյան Անի մայրաքաղաքից, իսկ դրիմահայերից

¹⁷ Українсько-армянские связи в 17-ом веке, сб. документов, составитель Я.Р. Дашкевич, Киев, 1969, с. 20.

ոմանք սերում են հայկական իշխանական ու թագավորական տներից՝ Բագրատունի, Պաղիավունի և այլ տոհմերից¹⁸:

Ղրիմում XVII դարում հայ հեղինակների ստեղծած գրական երկերի ու հիշատակարանների մասին այս ակնարկը եզրափակելիս պետք է նշել, որ դրանք կարևոր և առաջնային սկզբնաղբյուր են թե՛ Ղրիմի և տարածաշրջանի, թե՛ տեղի հայ գաղթավայրի պատմության համար: Դրանց միջոցով պատմական բազմաթիվ փաստեր են վերհանվում, ճշգրտվում, նաև պատկերացում է կազմվում Ղրիմում ապրող ժողովուրդների, այդ թվում՝ հայերի կենցաղի, մշակույթի, լեզվավիճակի մասին: Պետք է ասել նաև, որ այդ երկերը ի մի հավաքելու և ամբողջացած հրատարակելու կարիք ունեն:

АРМЯНСКАЯ ПИСЬМЕННАЯ КУЛЬТУРА КРЫМА В XVII В.

ПОГОСЯН Н.Б.

Резюме

Согласно некоторым данным, на протяжении всего средневековья, начиная с XIII в., треть всего населения Крыма составляли армяне. Например, в городе Каффа в XVII в. было зарегистрировано огромное число армян, которые в основном были сосредоточены в Каффе (Феодосия), Сурхате (Святой Крест, ныне – Старый Крым), Кеозлеве (ныне – Евпатория), Суроже (ныне – Судок) и в других областях Крыма. Южную часть Крыма некоторые итальянские источники называли Армения Maritima – Морская Армения. Армяне внесли свой ощутимый вклад в развитие Крыма.

Жизнь и творчество ряда армянских поэтов XVII в. связаны с Крымом (Стефанос Тохатеци, Вардан Каффаети, Мартирос Крымечи и т.д.). В Крыму были созданы многие ценные армянские рукописи. Данное

¹⁸ Այդ մասին տե՛ս **Պողոսյան Ն.**, Անդրադարձ Անիի վիմագիր արձանագրությունների լեզվին (Պատմամշակութային ժառանգություն և արդիականություն, միջազգային գիտաժողովի նյութեր, Գյումրի, 2013, էջ 43-44):

исследование свидетельствует о том, что армяне Крыма в XVII в. не были изолированы от культурной жизни армянского народа.

ARMENIAN WRITTEN CULTURE IN CRIMEA OF THE 17TH CENTURY

N. POGHOSYAN

Abstract

Armenians had a significant presence in Crimea throughout the Middle Ages starting with the 13th century. Their presence was so significant that according to some estimates, a third of the total population was Armenian, for example in the city of Kafa in the 17th century an enormous number of Armenians were living. They mostly lived and created a dozen churches in Kafa (Feodosia), Surkhat (The Holy Cross, now Stara Crimea), Kezlev (now Yevpatoria), Surozh (now Sudok) and in other areas. Given to some Italian sources, the southern part of Crimea was called Armenia Maritima.

The present article considers Armenian poets of the 17th century in Crimea (Stephanos Tokhatetsi, Vardan Kafayetsi, Martiros Ghrimetsi etc.) whose works are containing historical facts about Armenians and their life in Crimea. There are also Armenian manuscripts records found in Crimea. The investigations show that in the 17th century Armenians of Crimea weren't isolated from the cultural life of Armenian people.

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՀՍԽՀ-ՈՒՄ (1922-1924 ԹԹ.)

ԿԵՍՈՅԱՆ Գ. Է.

Պետական-կուսակցական վերահսկողության մարմինների պատմության ուսումնասիրման կազմակերպական հարցերի լուծմանը հաջորդած փուլն ընդգրկում է այդ մարմինների կազմակերպարարական ձևի փոփոխությունների քննությունը: Այս ընթացքում տեղի ունեցած վերակազմակերպումների հետևանքով պետական վերահսկողությունը նախ դադարեց հանրապետական «ինքնուրույն» ժողովրդական կոմիսարիատ լինելուց, այնուհետև, վերականգնելով հանրապետական ժողովրդական կոմիսարիատի կարգավիճակը, նախապատրաստական կարճ շրջանից հետո միավորվում է կուսակցության վերահսկողության մարմնի հետ:

Պետական վերահսկողության մարմնի վերակազմակերպումների առաջին փուլը կապվում է Անդրկովկասյան դաշնության կազմավորման հետ: 1922 թ. ապրիլի 22-ին ընդունված դեկրետով հիմնվում է ԱՍԽՀԴՄ Բանվորա-գյուղացիական տեսչության ժողկոմատը¹, որը, սակայն, հանգեցնում է հանրապետական ԲԳՏ ժողկոմատների վերացմանը: Մայիսին ընդունված ԱՍԽՀԴՄ ԲԳՏ կանոնադրությամբ սահմանվում էր. «Միութենական ԲԳՏ-ն ուղղորդում, միավորում և ղեկավարում է առանձին հանրապետությունների ԲԳՏ աշխատանքները,– նշվում է կանոնադրության 5-րդ հոդվածում,– ինչպես նաև առանձին դեպքերում նրանց տալիս է կոնկրետ առաջադրանքներ և հետևում դրանց կատարմանը»²: Ինչպես տեսնում ենք, կանոնադրությունը ևս ենթադրում է անդրկովկասյան հանրապետություններում առանձին ԲԳՏ ժողկոմատների գոյություն: Այդ վիճակը տևում է մինչև

¹ См'я Погосян Ш. Органы партийного и государственного контроля ЗСФСР в борьбе за победу социализма в 1922-1937 гг., Е., 1986, էջ 22:

² Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 128, ց. 1, գ. 122, թ. 42:

1922 թ. վերջը, երբ վերահսկողության հանրապետական ժողկոմատները դառնում են ԱՍԴԽՀ ԲԳՏ-ի Լիազորություններ տեղերում:

Անդրկովկասյան հանրապետությունների պետական վերահսկողության մարմինների միավորումը տեղի է ունենում 1922 թ. դեկտեմբերին ընդունված Անդրդաշնության Սահմանադրությամբ: Համաձայն այդ հիմնարար փաստաթղթի՝ հանրապետություններում առանձին գործող ԲԳՏ ժողկոմատներ այլևս չէին լինելու: Գործելու էր միութենական ԲԳՏ ժողովրդական կոմիսարիատը, իսկ հանրապետություններում լինելու էին դրա Լիազորությունները³: 1923 թ. փետրվարի 26-ին նման բովանդակությամբ որոշում է ընդունում ԱՍԴԽՀ Ժողկոմիտեի: Փոփոխությունը կյանքում կենսագործվում է 1923 թ. մարտի 1-ից, և հանրապետական ԲԳՏ ժողկոմատները վերակազմակերպվում են ԱՍԴԽՀ ԲԳՏ Լիազորությունների⁴:

Այս փոփոխությունը առաջ է բերում որոշ բարդություններ, և տեղի ունեցած փոփոխությունը գործում է շատ կարճ ժամանակ: Անդրդաշնության ԿԳԿ-ի 1923 թ. հունիսի 29-ի⁵ և Անդրդաշնության ԺԿԽ-ի 1923 թ. օգոստոսի 12-ի⁶ որոշումներով նախատեսվում է վերակառուցել ազգային հանրապետությունների ԲԳՏ ժողկոմատները, որոնք, սակայն, անմիջապես չեն իրագործվում:

Հայաստանում ԲԳՏ ժողկոմատը վերականգնվեց 1924 թ. հունվարին, երբ հարցի վերաբերյալ որոշումներ ընդունեցին ԱՍԴԽՀ ԺԿԽ-ն, ապա նաև ՀԿ(Բ)Կ Կենտկոմը և Հայաստանի ԺԿԽ-ն: Ժողկոմի պաշտոնում հաստատվում է Վ. Հովսեփյանը⁷: Հարցը քննարկվում է նաև ՀԿ(Բ)Կ ԿՎՀ 1924 թ. հունվարի 4-ի նիստում, որտեղ ևս հաստատվում է ԲԳՏ ժողկոմատի վերականգնումը, ինչպես նաև ժամանակավոր կառուցվածքը: ԲԳՏ-ն բաղկացած էր լինելու Կոլեգիայից, Ընդհանուր և Գործառնական բաժիններից, ունենալու էր 32 աշխատակից⁸: Համաձայն 1924 թ. հունվարի 14-ին Անդրկովկասի ԿԳԿ-ի և ԱՍԴԽՀ ԺԿԽ-ի հաստատած կանոնա-

³ Տե՛ս Первый Закавказский съезд советов, Е., 1923, էջ 138-142:

⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 128, ց. 1, գ. 122, թ. 60:

⁵ Տե՛ս **Հակոբյան Ա.**, Հայաստանի Բանգյուղտեսչությունը սոցիալիզմի համար մղված պայքարում (1920-1934), Ե., 1974, էջ 59:

⁶ Տե՛ս **Погосян Ш.**, նշվ. աշխ., էջ 27:

⁷ Տե՛ս **Պողոսյան Շ.**, Լենինյան վերահսկողությունը գործողության մեջ, Ե., 1978, էջ 65-66:

⁸ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 91, ց. 2, գ. 2^բ, թ. 79:

դրության՝ Անդրդաշնության ԲԳՏ-ն «իբրև ղեկավար մարմին,- սահմանում է կանոնադրության 23-րդ հոդվածը,- համակերպում և ուղղություն է տալիս Հանրապետական Բանվորա-Գյուղացիական Տեսչությունների գործունեությանը»⁹:

Նույն թվականի կեսերին տեղի է ունենում պետական վերահսկողության նոր վերակազմակերպումը: Փոփոխության այս փուլն առնչվում է պետական և կուսակցական վերահսկողության մարմինների աշխատանքների միավորման հետ: Այս գործընթացը ավելի քան մեկ տարի առաջ տեսականորեն մշակել էր Վ.Ի. Լենինը՝ արտացոլելով «ինչպես վերակազմենք Բանգյուղտեսչությունը (առաջարկ կուսակցության 12-րդ համագումարին)» և «Լավ է քիչ, բայց լավ» հոդվածներում: Վ.Ի. Լենինը նախ քննադատության է ենթարկում պետական վերահսկողությունը. «բոլորը գիտեն, որ չկան ավելի վատ կազմակերպված հիմնարկներ, քան մեր բանգյուղտեսչության հիմնարկներն են, և որ ժամանակակից պայմաններում այդ ժողկոմատից ոչինչ էլ չի կարելի պահանջել»¹⁰, ապա, դրությունը համեմատելով քաղաքացիական պատերազմի հետ, տալիս է այն ընդհանուր ուղղությունը, որի հիմամբ պետք է շտկվեր վիճակը: «Մենք մեր կուսակցական լավագույն ուժերը կենտրոնացնում էինք կարմիր բանակում», - գրում է Լենինը¹¹ և նախանշում ԲԳՏ-ում կուսակցական ուժերի կենտրոնացման քաղաքականության կենսագործումը:

Վերը նշված հոդվածներից կարելի է եզրակացնել վերահսկողության մարմինների վերակազմակերպման մի քանի պատճառ: Նախ դրվում է ԲԳՏ-ի հեղինակության բարձրացման խնդիրը: Միավորումը Կենտրոնական վերահսկիչ հանձնաժողովի կուսակցական վերահսկողության մարմնի հետ պետք է նրան բարձրացներ այն մակարդակի, որ բոլորի կողմից դիտարկվեր որպես «օրինակելի» և «վստահություն ներշնչող» մարմին: Հեղինակությունը կարևոր հանգամանք էր ԲԳՏ-ի և մյուս ժողկոմատների փոխհարաբերությունները սահունացնելու տեսակետից, քանզի ԲԳՏ-ն, լինելով ժողկոմատ, պետք է վերահսկեր, ինչպես նաև ուղղորդեր մյուս ժող-

⁹ ԱՍՖԽՀ բանվորա-գյուղացիական կառավարության օրենքների յեվ վորոշումների հավաքածու, 25 փետրվարի 1924, մաս Առաջին, N 1, էջ 21:

¹⁰ Լենին Վ.Ի., Երկերի լիակատար ժողովածու, հ. 45, Ե., 1983, էջ 464:

¹¹ Նույն տեղում, էջ 453:

կոմատների գործունեությունը՝ ունենալով կառավարությանը բնորոշ յուրատեսակ գործառույթներ:

Պատճառների մի խումբ առնչվում է ԿՎՀ-ի միջոցով ԲԳՏ-ի կարևորագույն գործառույթների գործադրումը վերահսկելու և ուղղորդելու հետ: Վերակազմությունից հետո ԲԳՏ-ի ուշադրության առանցքը դառնում է պետական ապարատի բարելավումը, որը, բնականաբար, պետք է տեղի ունենար կուսակցական գաղափարախոսության հիմամբ: Հանգամանք, որով սկզբունքային է դառնում ԿՎՀ-ի և ԲԳՏ-ի միավորումը:

Նշված շարքին է պատկանում ԲԳՏ-ի՝ կառավարման կարողություններով օժտված անձանց պատրաստման և պետապարատի մեջ ներգրավելու գործառույթը: Նման անձինք առաջին հերթին պետք է պատրաստվեին և դաստիարակվեին կուսակցական ոգով:

Կարևոր գործոն էր նաև ՆԷՊ-ի կիրառման հանգամանքը: Ճիշտ է, թույլատրվում էր «բաց շրջանառության» գոյությունը, այնուամենայնիվ, գծվում էին այդ գործունեության շրջանակները, և հատուկ ուշադրություն էր դարձվում այդ շրջանակների պահպանմանը: Կապիտալիստական տարրեր պարունակող գործունեությունը չէր կարող դուրս մնալ կուսակցական վերահսկողության և կուսակցության ուշադրության կենտրոնից:

Վ.Ի. Լենինը վերակազմության պատճառ է համարում նաև կուսակցական շարքերի միասնության ապահովումը: Պետք է բացառվեր կուսակցությունում թևերի գոյությունը, որևէ անձի հեղինակության բացարձականացումը, և ապահովվեր կուսակցության միասնականությունը¹²:

Փոփոխության պատճառների քննությունը Վ.Ի. Լենինն ավարտում է կուսակցական մարմնի գերակա դիրքը շեշտող մտքով. «Ահա թե ինչու եմ ես նրա (ԲԳՏ-ի - Կ.Գ.) համար պլանավորում կուսակցական ամենահեղինակավոր վերնախավի միաձուլումը **«շարքային» ժողկոմատի հետ** (ընդգծումը մերն է)»¹³:

Քննելով վերակազմության համար ներկայացվող պատճառները՝ կարող ենք եզրակացնել, որ փոփոխության նպատակը կուսակցության վերա-

¹² Հարց է առաջանում, թե վերահսկողության մարմինների վերակառուցումը ինչո՞վ պետք է օգներ նշված խնդրին: Չէ՞ որ ԲԳՏ-ին չէր թույլատրվելու միջամտել կուսակցության գործերին: Այսինքն՝ կուսակցության վերահսկողությունը իրականացնելու էր նույն մարմինը նույն ձևով: Միակ տարբերությունը ԿՎՀ-ի անդամների թվի մեծացումն էր, որը կարծում ենք չէր կարող այս խնդրում էական նշանակություն ունենար:

¹³ Նույն տեղում, էջ 480:

հսկողական և ուղղորդող գործառույթների գործունեության շրջանակների ընդլայնումն է: Այս մասին նշել է նաև Լենինը՝ գրելով, որ միավորումը «հիմնված է մեր ԿՎՀ-ի յուրատեսակ ընդլայնման վրա»¹⁴: Հարցն ավելի է հստակեցնում ժամանակի մամուլը: «Մարտակոչ» օրաթերթը հաղորդում է. «Յեվ նորերս միայն գլխի յեն ընկել (խոսքը հասարակ ժողովրդի մասին է-Կ.Գ.), վոր կոնտրոլի հանձնաժողովների գործունեությունը կուսակցական ե, **վերջերս ստանալով ել ավելի լայն հնարավորություններ-միանալով, ավելի շուտ ղեկավարելով նաև Բանվորա-Գյուղացիական Տեսչությունը** (ընդգծումը մերն է - Կ.Գ.)»¹⁵: «Խորհրդային Հայաստան» իր հերթին գրում է. «ԲԳՏ-ի վերակազմությամբ ԿՎՀ-ի աշխատանքներն ել ավելի յե կենդանանում և նյութականն ել ավելի յե ծավալվում: Մի նոր, առավել ևս բարդ և պատասխանատու շրջան ե մտնում նա, աշխատանքի, վորի նպատակն ե ԲԳՏ-ի միջոցով բարեկարգել մեր պետապարատը, կատարելագործել յերկրում տնտեսվարության և կառավարելու տեխնիկան»¹⁶: Ստացվում է, որ ԿՎՀ-ն ԲԳՏ-ի միջոցով վերահսկելու էր պետական ամբողջ համակարգը, տնտեսական կյանքը և ընդհանրապես ամեն ինչ, որը տեղի էր ունենում երկրում: Սա, փաստորեն, կուսակցական ամենատիրություն հաստատելու ուղղությամբ կատարված կարևոր քայլ էր:

Պետական և կուսակցական վերահսկողության մարմինների միավորման հարցը քննարկվում է 1923 թ. ապրիլի 17-25-ը կայացած ՌԿ(Բ)Կ XII համագումարում և արժանանում հավանության: Համագումարը հույս է հայտնում, որ այս կերպ հնարավոր կլինի հասնել 2 նպատակների իրագործմանը. «1) ձեռնամուխ լինել պետապարատի վճռական բարելավմանը և 2) կուսակցությունն անվտանգ դարձնել գծի խեղաթյուրումից և աշխատողների առանձին խմբերի՝ ամբողջ կուսակցությունից փաստորեն կտրվելուց»¹⁷: Համագումարն արձանագրում է նաև, որ «ԲԳՏ-ն և ՌԿ(Բ)Կ ԿՎՀ-ն միմյանց հետ կազմակերպորեն կապված են պետական ապարատի կատարելագործման ուղղությամբ իրենց վրա դրվող խնդրի կատարման հողի վրա: Դրա համար անհրաժեշտ է ԿՎՀ գործառույթները և կազմն ընդլայ-

¹⁴ Նույն տեղում, էջ 454:

¹⁵ Մարտակոչ, 1 հունվարի 1924, N 1 (257), էջ 1:

¹⁶ Խորհրդային Հայաստան, 15 մարտի 1924, N 61, էջ 3:

¹⁷ ՍՄԿԿ-ն համագումարների, կոնֆերանսների և Կենտկոմի պլենումների բանաձևերում և որոշումներում, հ. 3, Ե., 1987, էջ 70:

նել, իսկ ԲԳՏ արմատականորեն վերակազմել ինչպես աշխատանքի կառուցվածքի ու մեթոդների տեսակետից, այնպես էլ կազմի տեսակետից»¹⁸:

Տեղի ունեցած վերակազմակերպումը սկզբում վերաբերում էր միայն ԲԳՏ և ԿՎՀ կենտրոնական մարմինների միավորմանը: Վերահսկողության տեղական մարմինների միավորման ուղղությամբ քայլեր են ձեռնարկվում 1924 թ. սկզբներից: 1924 թ. մարտի 3-ին ԽՍՀՄ ԲԳՏ ժողկոմի տեղակալ Վ. Ավանեսովի ստորագրությամբ ընդունվում է հրաման «ԲԳՏ տեղական մարմինների և ՌԿ(Բ)Կ տեղական վերահսկողության հանձնաժողովի կապերի ամրապնդման մասին»¹⁹, որով դրվում է տեղական վերահսկողության մարմինների միավորման հիմքը: Նոր ձևավորվող մարմինների նպատակներն էին պետական ապարատի աշխատանքի ստուգումն ու ուսումնասիրումը, կառավարման ձևի և տեխնիկայի բարելավումը, աշխատանքի արտադրողականության բարձրացմանը նպաստելը և այլն:

Վերահսկողության տեղական մարմինների հարցը քննարկվում է նաև 1924 թ. մայիսի 223-31-ը կայացած ՌԿ(Բ)Կ XIII համագումարում, և որոշվում է, որ «...հասունացել է պահանջը, և բավականաչափ պայմաններ կան տեղական վերահսկիչ հանձնաժողովները և բանգյուղտեսչությունը վերակազմելու համար՝ ԿՎՀ և ԲԳՏ վերաբերյալ կուսակցության 12-րդ համագումարի որոշումների հիման վրա: Այդ պատճառով համագումարը որոշում է վերահսկիչ հանձնաժողովների և բանգյուղտեսչության աշխատանքների միավորումը տարածել բոլոր տեղական մարմինների վրա...»²⁰:

Տեսական մշակում անցնելուց և կենտրոնում գործնական կիրառություն ստանալուց հետո վերակազմակերպումը պետք է կիրառվեր նաև միութենական հանրապետություններում: Այս ուղղությամբ կատարված առաջին քայլը 1923 թ. սեպտեմբերի 6-ին ԽՍՀՄ Ժողկոմխորհի և Կենտգործկոմի կողմից «Միութենական հանրապետություններում ԲԳՏ ժողկոմատների վերակազմավորման մասին»²¹ դեկրետի ընդունումն էր: Դեկրետում վերակազմավորման հիմնական շարժառիթ է համարվում սոցիալական շինարարության առաջին պլան մղվելը, որի իրագործմանը խանգարում էր «հին պետական ապարատից մնացած ժառանգությունը»: Իր առջև

¹⁸ Նույն տեղում, էջ 116:

¹⁹ Деятельность органов партийно-государственного контроля по совершенствованию государственного аппарата, М., 1964, с. 43:

²⁰ ՍՄԿԿ-ն... բանաձևերում, հ. 3, էջ 294:

²¹ Տե՛ս Деятельность органов..., էջ 29-32:

դրվելիք խնդիրներն իրականացնելու համար ԲԳՏ-ն ազատվում էր մի շարք պարտականություններից և ուշադրությունը պետք է կենտրոնացներ արտադրության, խորհրդային տնտեսական և կառավարման ապարատի բարելավման, հրամանատարական հանգուցային կետերի (համաձայն ԲԳՏ-ի նախօրոք առաջադրած և բարձրագույն օրենսդրության մարմինների հաստատած պլանի) վերստուգիչ-տեսչական հետազոտությունների վրա: ԲԳՏ-ի կողմից այդպիսի եղանակով արտադրության ընթացքը ստուգման ենթարկելու հիմնական նպատակը պետք է լիներ տնտեսական և վարչական մարմինների գործունեության գործնական արդյունքների թե՛ բացասական և թե՛ դրական կողմերի բացահայտումը, ինչպես նաև կազմակերպչական մեթոդների մշակումը՝ կանխարգելելու թերությունների և չարաշահումների ապագայում կրկնվելու հնարավորությունը:

Այս դեկրետի հիման վրա 1923 թ. դեկտեմբերի 29-ին ՀՍԽՀ Կենտգործկոմն ընդունում է որոշում «Բանվորա-Գյուղացիական Տեսչության Ժողովրդական կոմիսարիատը մի շարք ֆունկցիաներից ազատելու մասին», որով ԲԳՏ-ն ազատվում էր ֆինանսական վերահսկողությանը վերաբերող մի շարք պարտականություններից: Մասնավորապես, ազատվում էր բոլոր ժողովրդական կոմիսարիատների ֆինանսական փաստաթղթերով հետագա ամբողջական վերստուգություն կատարելուց, պետական, վարչական և տնտեսական մարմիններին օժանդակիչ միջոցներ տրամադրելու վերաբերյալ եզրակացություններ տալուց, գերատեսչությունների նախահաշիվների նախնական քննությունից, պետական մարմինների դրամական գործառնությունների ամբողջական ընթացքի վերահսկողությունից և վերահասությունից և սրանից բխող մթերքներ ու արժենյութեր ընդունելուն և հանձնելուն մասնակցելուց, պետական առանձին ձեռնարկություններում և հիմնարկներում մշտական վերահսկիչ խմբեր կազմելուց, ինչպես նաև միջգերատեսչական և գերատեսչական խորհրդակցությունների և նիստերի պարտադիր մասնակցությունից, ինչպես նաև մասնավոր իրավական շահերի պաշտպանության ու պահպանության վերաբերյալ բողոքներ ընդունելուց ու քննելուց և այլ լիազորություններից²²:

Տեսական մասի մշակումից հետո ձեռնարկվում են գործնական միջոցներ խնդիրն իրականում կենսագործելու համար: 1923 թ. վերջերից

²² Տե՛ս ՀՍԽՀ դեկրետների յեվ վորոշումների հավաքածու, նոյեմբեր-դեկտեմբեր 1923, N 9, էջ 11-13:

ԽՍՀՄ ԿՎՀ-ԲԳՏ ժողկոմատը կատարում է նախապատրաստական աշխատանքներ Մոսկվայում Կենտրոնական վերահսկիչ հանձնաժողովների և ԲԳՏ ներկայացուցիչների խորհրդակցություն գումարելու համար, որում պետք է քննարկվեին և որոշվեին միութենական պետական-կուսակցական մարմինների միավորման հնարավորությունները: Խորհրդակցությունը կայանում է 1924 թ. փետրվարի 3-4-ին, որին ներկա էին նաև Հայաստանի ներկայացուցիչներ Վահան Հովսեփյանը և Հովսեփ Պողոսյանը: Միութենական հանրապետությունների ներկայացուցիչները խորհրդակցության ընթացքում և Մոսկվայում եղած կարճ ժամանակահատվածում ստանում են հատուկ հրահանգավորում ԿՎՀ և ԲԳՏ մարմինների միավորման մասին: Այնուհետև Հայաստանի ներկայացուցիչները մարտին վերադառնում են Հայաստան և ձեռնարկում փոփոխության կազմակերպումը²³:

Կատարված նախապատրաստական աշխատանքներից հետո 1924թ. ապրիլին իրագործվեց Հայաստանի կուսակցական և պետական վերահսկողության մարմինների միավորումը, և ստեղծվեց ԿՎՀ-ԲԳՏ ժողովրդական կոմիսարիատը, որն ունենալու էր հետևյալ կառուցվածքը.

1. Կուսակցության Կոլեգիա, որը զբաղվում էր կուսակցականների զանցանքների քննությամբ: Իր կազմում ուներ 3 մարդ: Կոլեգիայի նախագահն էր Հայրապետ Տատյանը:

2. ԲԳՏ Կոլեգիա, որը ղեկավարում էր ԲԳՏ ժողկոմատի աշխատանքները: Նախագահն էր Վ. Հովսեփյանը:

3. ԿՎՀ-ԲԳՏ Նախագահություն, որը ղեկավարում էր կուսակցական Կոլեգիայի և ԲԳՏ Կոլեգիայի աշխատանքները: Հանրապետության ԿՎՀ-ԲԳՏ ժողկոմը միաժամանակ այս համաժողովի նախագահն էր: ԲԳՏ-ԿՎՀ ժողկոմ է նշանակվում Սերգո Մարտիկյանը²⁴:

1924 թ. ապրիլի ՀՍԽՀ Կենտգործկոմի նախագահության կողմից ընդունվում և 1924 թ. նոյեմբերի 12-ին Կենտգործկոմի 8-րդ նստաշրջանում հաստատվում է ԲԳՏ ժողկոմատի կանոնադրությունը, որով հստակեցվում են ԲԳՏ-ի պարտականությունները, իրավունքները, կառուցվածքը, նրա մարմինների իրավասությունները:

Օրենսդրական այս ակտն ընդգծում էր, որ ԲԳՏ-ն պետական ապարատի բարձրագույն և այն սոցիալիստական շինարարության նպատակ-

²³ Տե՛ս Հակոբյան Ա., նշվ. աշխ., էջ 60:

²⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 91, ց. 2, գ. 19, թ. 32:

ներին հարմարեցնելու խորհրդային իշխանության հիմնական մարմինն է: Հետևաբար նա պետք է անցկացներ կառավարման գործի գործնական և տեսական ուսումնասիրություն, թերությունների բացահայտում և վերացում, պետական մարմինների ղեկավարների ու աշխատակիցների հանցագործությունների և անտնտեսվարության պատճառների հետազոտություն և ուսումնասիրություն, պետական մարմինների ապարատների և տնտեսական մարմինների կատարելագործում, աշխատանքի գիտական կազմակերպության, արտադրության և կառավարման տեխնիկայի ուսումնասիրությամբ զբաղված բոլոր հիմնարկների գործունեության ընդհանուր ղեկավարություն, ինչպես նաև պետական, վարչական, տնտեսական մարմիններին ամեն կերպ մղեր դեպի իրենց ապարատների բարվոքմանը²⁵:

Վերջիններս իրականացնելու համար ԲԳՏ-ն պետք է իրականացներ կենտրոնական և տեղական, պետական և հասարակական բոլոր հիմնարկների ու ձեռնարկությունների և նրանց միավորների ամբողջական և մասնակի տեսչական-վերստուգողական քննություն: Ընդ որում՝ մասնավոր ձեռնարկությունների քննությունն իրականացվում էր նրանց և պետության միջև գոյություն ունեցող պայմանավորվածության սահմաններում: Քննությունից հետո ԲԳՏ-ն պետք է առաջարկություն ներկայացներ վերստուգվող պետական հիմնարկներին, ձեռնարկություններին և կազմակերպություններին՝ նկատված թերությունները վերացնելու, պաշտոնյաներին լուրջ զանցառությունների և անտնտեսվարության համար հեռացնելու՝ օրենքով մատնանշված կարգով ու սահմաններում կարգապահական պատիժներ նշանակելու մասին: Հատկանշական է, որ ԲԳՏ-ն կարող էր կասեցնել պաշտոնյաների ակնհայտ ապօրինի կարգադրություններն ու գործողությունները²⁶:

Վերակառուցման էր ենթարկվում նաև ԲԳՏ-ի վարչական կառուցվածքը: ԲԳՏ-ն կազմվում էր Կոլեգիայից, որն իրականացնելու էր ընդհանուր ղեկավարումը, Ընդհանուր բաժնից, որի իրավասության շրջանակներում էին գործավարությունը, ֆինանսատնտեսական բոլոր աշխատանքները, տեղեկատվության բոլոր նյութերի հավաքումը և համակարգումը, ԲԳՏ գործունեության մասին մամուլին տեղեկատվություն տալը, ինչպես

²⁵ Տե՛ս ՀՍԽՀ դեկրետների յեվ վորոշումների հավաքածու, մայիս-հունիս 1924, N 9, էջ 18-26:

²⁶ Նույն տեղում, էջ 200-203:

նաև ժողովրդից պետական ապարատի չարաշահումների դեմ ուղղված բողոքների և դիմումների ընդունումը, և Օպերատիվ բաժնից, որի պարտականությունն էր ղեկավարել ժողկոմատի բոլոր տեսչական-վերստուգողական աշխատանքները²⁷:

Հարց է առաջանում, թե ո՞ր մարմնի ենթակայությամբ էր գործելու նոր կազմավորված մարմինը՝ ԿՎՀ-ԲԳՏ ժողովրդական կոմիսարիատը: Դատելով ժողկոմատ լինելու իրավական կարգավիճակից, այն պետք է ենթարկվեր և հաշվետու լիներ ժողկոմխորհին: Սա կնշանակեր կուսակցություն-պետական բարձրագույն մարմին փոխհարաբերությունում գերակայությունը տալ վերջինին, կուսակցությունը դնել կառավարության ենթակայության տակ, որն անթույլատրելի էր խորհրդային գաղափարախոսության համար: Խնդիրն այն է, որ վերակազմակերպման հետևանքով չէր ձևավորվում մեկ միաձուլ մարմին: «Իմ կարծիքով (Լենինի-Գ.Կ.), բանգյուղտեսչության ժողկոմը կարող է մնալ ժողկոմ (և պետք է մնա որպես այդպիսին), ինչպես և ամբողջ կոլեգիան...»²⁸: Տեղի ունեցած փոփոխությունը իրավաբանական տերմինաբանությամբ ասած ո՛չ «միաձուլում» էր, ո՛չ «միացում»: Առանձին գործելու վկայություններ են ԲԳՏ-ի համար առանձին կանոնադրության հաստատումը, առանձին աշխատանքային ծրագրերի մշակումը, պաշտոնական գրագրություններում անվանումների առանձին հիշատակումները և նմանատիպ այլ գործոններ: Ստացվում է, որ փոփոխության հետևանքով վերահսկողություն էր սահմանվում պետական վերահսկողության նկատմամբ՝ թույլատրելով ձևաբովանդակային հակասություն:

ԲԳՏ-ի նկատմամբ ԿՎՀ-ի գերակայությունը պարզորոշ զգացվում է մի շարք հանգամանքների ամփոփումից: Նախ այդ փաստը սահմանվում է 1926 թ. հունիսի 7-ին հաստատված «Կենտրոնական վերահսկիչ հանձնաժողովի մասին» կանոնադրությամբ, որի 11-րդ կետով հստակ ամրագրվում է, որ ԿՎՀ-ն իրականացնելու է ԲԳՏ-ի աշխատանքների ընդհանուր ղեկավարումը²⁹: Նույն ժամանակ ընդունված «Միութենական հանրապետությունների, երկրամասային և մարզային Կոմկուսների ԿՎՀ-ների մասին» կանոնադրությամբ՝ ԿՎՀ-ները և ՎՀ-ները պետք է ընտրեին ԲԳՏ

²⁷ Նույն տեղում, էջ 203-205:

²⁸ Լենին Վ.Ի., ԵԼԺ, հ. 45, էջ 456:

²⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 91, ց. 2, գ. 63, թ. 2:

կոլեգիան³⁰: Գերակայության մասին է խոսում նաև այն, որ ԲԳՏ-ի աշխատանքային պլան-ծրագրերը, իրականացման ժամկետները պարտադիր պետք է հաստատվեին նաև ԿՎՀ-ի կողմից, մինչդեռ չէր թույլատրվում ԲԳՏ-ի որևէ միջամտություն կուսակցության գործերին: ԲԳՏ-ն իր գործունեության համար հաշվետվություն էր տալիս ԿՎՀ-ին և կուսակցության համագումարին, այնինչ ԿՎՀ-ի գործունեության մասին որևէ անգամ զեկուցում չի ներկայացվել ԺԿԽ-ին: Ժողովրդական կոմիսարիատների հաշվետվության նյութերը ցույց են տալիս, որ բոլոր դեպքերում ԺԿԽ-ին տրվում է զեկուցում միայն Բանվորա-գյուղացիական տեսչության առանձին գործունեության մասին:

Այսպիսով՝ տեղի ունեցած փոխոխությունների հետևանքով ԿՎՀ-ի առաջնահերթությամբ միավորվում են պետականակցական վերահսկողության մարմինների աշխատանքները, որոնք շարունակվելու են մեկ տասնամյակ:

РЕОРГАНИЗАЦИЯ ГОСУДАРСТВЕННЫХ И ПАРТИЙНЫХ ОРГАНОВ КОНТРОЛЯ В ССРА (1922-1924 ГГ.)

КЕСОЯН Г.Э.

Резюме

При формировании органов контроля в ССРА был выдвинут вопрос об объединении этих органов, что привело к изменениям в их организационном и правовом статусе. Народный комиссариат РКИ Армянской ССР сначала стал полномочным органом Народного Комиссариата РКИ РСФСР, затем – независимым и был объединен с Центральной контрольной комиссией, являющейся органом партийного контроля, и должен был привести к дальнейшему расширению деятельности партийного контроля, поднять авторитет РКИ, усилить контроль над проводимой экономической политикой, заниматься чисткой госаппарата. С юридической точки зрения это объединение не являлось ни “союзом”, ни “слиянием”. Партийный конт-

³⁰ Նույն տեղում, թ. 6:

роль, осуществляемый Народным комиссариатом РКИ-ЦКК, доминировал над государственным партийным контролем.

REORGANIZATION OF STATE AND PARTY CONTROL BODIES IN SSRA (1922-1924)

G. KESOYAN

Abstract

In the next phase after formation of control bodies' in SSRA the problem of bodies' unification appears, which brings forth changes of organization and legal status. ArmSSR People's Commissariat of Workers' and Peasants' Inspection first becomes Transcaucasian Socialist Federative Soviet Republic People's Commissariat of Workers' and Peasants' Inspection Authority, then obtains independence, and unites with Central Control Commission, with the purpose to enlarge the frames of the party control activity, to higher the authority of WPI, to strengthen the control over economic policy, state apparatus purification and so on. This unity in legal terms was neither "connection", nor "merging". In the new-formed organ – WPI-CCC, the dominance of the party was clear.

ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ԻՐԱՆԻ ԵՎ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՄԻՋԵՎ ԱՌԵՎՏՐԻ ՄԻՋՆՈՐԴՆԵՐ

ՊԱՊԻԿՅԱՆ Ք.Վ.

Արևելյան Հայաստանում, հատկապես Նախիջևանի և Ղարաբաղի շրջաններում XV-XVI դդ., չնայած երկրի մշակութային, քաղաքական և տնտեսական ծանր պայմաններին, ձևավորվում են կամ սկսում են ակտիվորեն զարգանալ բազմաթիվ վաճառականական քաղաքներ և գյուղեր, որոնցից նշանավոր էին Արաքսի ձախ ափին գտնվող Զուղան, Աստապատը, Վանանդը, Վիստը, Ագուլիսը, Շոռոթը, Նախիջևանը, Դաշտը, Մեղրին, Երնջակը, Շահ-կերտը, Օրդուբադը և այլն: Աչքի էին ընկնում նաև Սյունիքը (Ղափան/Կապան), Արցախը, Արարատյան դաշտի քաղաքները (Երևան)¹: Բայց առավել նշանակալի էր Արաքսի ձախ ափին գտնվող Զուղա գյուղաքաղաքը², որին առանձնահատուկ առևտրական նշանակություն էր տալիս Միջին Ասիան, Իրանը Սև ծովի արևելյան ավազանի և Կովկասի մեծ ճանապարհների հետ կապող աշխարհագրական դիրքը: Զուղայի առևտրականները գրավում էին պարսից Շահ-Աբաս Ա-ի ուշադրությունը դեռևս թագավորության առաջին տարիներից: Եռանդուն և զորա-

¹ **Բայբուրդյան Վ.**, Համաշխարհային առևտուրը և իրանահայությունը XVII դարում, Թեհրան, 1996, էջ 17:

² Զուղայի պատմության ու մշակույթի մասին մանրամասն տե՛ս **Տէր-Հովհաննես Յ.**, Պատմութիւն Նոր Զուղայու որ յԱսպահան, հ. Ա, Բ, Նոր Զուղա, 1880-1881, **Խաչիկյան Շ.**, Նոր Զուղայի հայ վաճառականությունը և նրա առևտրատնտեսական կապերը Ռուսաստանի հետ XVII-XVIII դդ., Ե., 1988, **Ղազարյան Մ.**, Նոր Զուղայի գեղանկարչությունը 17-18 դդ., Թեհրան, 1985, **Այվազյան Ա.**, Զուղա, Ե., 1984, **Մինասյան Լ.**, Նոր Զուղայի տպարանն ու իր տպագրած գրքերը, Նոր Զուղա, 1972, **Բայբուրդյան Վ.**, Նոր Զուղա, Ե., 2007, **Ստեփանյան Ա.**, Նոր Զուղայի կենցաղային մշակույթը, Ե., 2000, **Թաջիդյան Է.**, Նոր Զուղայի հայ գաղթաբախը 17-18-րդ դդ. եվրոպական աղբյուրներում, մաս I, Ե., 2012, **Байбуртян В.А.** Армянская колония Новой Джульфы в ирано-западноевропейских экономических и политических взаимоотношениях в XVII в., М., 1965, **Олеарий А.** Подробное описание путешествия голштинского посольства в Московию и Персию в 1633, 1636 и 1637 гг., М., 2013.

վոր, ինչպես նաև խոհեմ Շահ-Աբասը (1587-1628) լավ էր հասկանում, որ XV-XVI դդ. թուրք-իրանական անընդմեջ արյունալի պատերազմների հետևանքով երկրի դատարկված գանձարանը լցնելու և քայքայված տնտեսությունը վերականգնելու համար անհրաժեշտ է առևտուր «ներմուծել», մեծացնել դրամաշրջանառությունը և խթանել արտաքին աշխարհի հետ առևտրական հարաբերությունների հաստատումը: Շահի նվիրական երազանքն էր միջազգային առևտրի կենտրոնը Արաքսի ձախ ափին գտնվող Զուղայից տեղափոխել Իրան, իսկ մետաքսի քարավանային ուղիները տանել Սպահանի վրայով դեպի Պարսից ծոց՝ խթանելով Իրանի առևտրական աշխուժացումը եվրոպական և ասիական երկրների հետ: Այս հեռահար նպատակի իրականացմանն էր ուղղված 1604 թ. Շահ-Աբաս Ա-ի իրականացրած մեծ բռնագաղթը, երբ նրա հրամանով Զուղայի և հարակից բնակավայրերի ժրաջան, արտադրող, բարձր մշակույթ ունեցող հայությունը բռնի տեղափոխվեց Պարսկաստան: Նա զարգացրեց Խորասանի տափաստանները, Գիլանի և Մազանդարանի վաստառոջ և հեռավոր գավառները, զարդարեց Սպահանը, Ղազվինը, Շիրազը, Քեշանը: Բռնագաղթի ժամանակ Անդրկովկասի բնակչությունը գաղթեց Իրանի մետաքսի շրջաններից մեկը՝ Գիլանի հարավում գտնվող դրախտանման Մազանդարան՝ մետաքսի արտադրությամբ զբաղվելու համար: Նախիջևանի, Երևանի և Զուղայի հաշվին 27.000 ընտանիք հաստատվեց Գիլանի գավառում, որտեղ շերամ էին մշակում: 1650 թ. այս 27.000-ից մնաց միայն 3000-ը, քանի որ Գիլանի կլիման խիստ մահաբեր էր: Եվ ինչպես ցույց տվեց ժամանակը, այս երկրամասը նրանց համար դարձավ գերեզման՝ գաղջ օդի և հիվանդոտ կլիմայի պատճառով³: Գիլանի ճահճային գավառը Կասպից ծովի հարավարևմտյան ափին էր. ամեն տարի մեծ քանակությամբ մետաքս էր արտադրվում: Շահը որոշեց մետաքս արտահանել եվրոպա և այդպիսով առևտրական կապեր հաստատել եվրոպական երկրների հետ: Կարևոր հանգամանք էր այն, որ, XVI դարից սկսած, հայ առևտրական խոջաների ձեռքին էր կենտրոնացած իրանական հում մետաքսի ու մի շարք այլ ապրանքների արտահանումը⁴: Մյուս կողմից՝ Շահի հրամանով Կախեթում ոչնչացրին թթի բոլոր ծառերը՝ վերջ տալու հա-

³ Արթինեան Հ., Նոր ջուղայեցի հայերուն առևտուրը ԺԷ դարում (Անահիտ. ազգային, գրական, գեղարվեստական հանդես, Փարիզ, 1908, N 1-4, էջ 31-32):

⁴ Բայբուրդյան Վ., Նոր Զուղա, Ե., 2007, էջ 32:

մար վրացիների շերամապահությանը: Սա տնտեսական և քաղաքական հարված էր հարևան Վրաստանին⁵: Շահի հատուկ հրովարտակով 1605թ. Սպահանի հարավային մասում՝ Ջայենդերուդ գետի աջ ափին, շահապատկան «Խասսէ» հողերից հատկացվեց մի մեծ հողատարածք՝ նոր բնակավայր կառուցելու համար, որը, ի հիշատակ ավերված Ջուղայի, անվանվեց Նոր Ջուղա: Կարճ ժամանակ անց այն դարձավ հայ առևտրական կապիտալի խոշոր կենտրոն, որն իր կարգավիճակը պահեց շուրջ մեկ դար: Նոր Ջուղայի բնակչությունն սկզբնապես բաղկացած էր հին ջուղայեցիներից, բայց հետագայում այն դարձավ Իրան գաղթեցված և առևտրով զբաղվող բնակչության բնակավայր՝ վերածվելով զուտ առևտրական քաղաքի⁶:

Թուրք-իրանական երկարատև պատերազմն ավարտվեց 1639 թ. Ջոհաբում (Կասր Ե Շիրին) կնքված հաշտության պայմանագրով, որով XVII դ. երկրորդ կեսին Հյուսիսային Իրանի, Հայաստանի, Փոքր Ասիայի և Միջագետքի վրայով անցնող առևտրական ուղիներով երթևեկող քաղաքականների համար ստեղծվեցին առևտրական գործունեության համար ապահով պայմաններ: Այս իրադարձությունը նպաստավոր էր հատկապես հայ վաճառականության համար, որը նախընտրում էր արտաքին առևտուր իրականացնել Թավրիզ-Ջմյուռնիա (Իզմիր), Թավրիզ-Հալեպ մայրուղիներով⁷: Այս մասին տարբեր նկարագրություններ են թողել հայ պատմագիրները՝ Ջաքարիա Ագուլեցին⁸, Ջաքարիա Քանաքեռցին⁹: Կապված լինելով գլխավոր մայրուղուն՝ այս ճանապարհները ծառայում

⁵ **Բայբուրդյան Վ.**, Համաշխարհային առևտուրը և իրանահայությունը..., էջ 40-41:

⁶ Նույն տեղում, էջ 40-42:

⁷ **Փափազյան Վ.**, Առևտրային ճանապարհների պաշտպանությունը Սեֆյան պետությունում 17-րդ դարում [Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), 1986, N 4, էջ 156]:

⁸ **Ջ. Ագուլեցի**, Օրագրութիւն, Ե., 1938, էջ 24:

⁹ Ֆրանսիացի ճանապարհորդ Ժոզեֆ Պիտտոն դե Տուրնեֆորը, XVII դ. կեսերին այցելելով Հայաստան, տեսնելով Արարատյան դաշտավայրի առատ բերք ու բարիքը, գրել է. «Ես կասկածում եմ, որ, Հայաստանից բացի, կա մեկ այլ երկիր, որտեղից կհավաքեն այդչափ բազմատեսակ մթերքներ՝ հացահատիկային մշակաբույսեր, բրինձ, վուշ (կտավատ), ձմերուկ, խաղող, ծիրան, դդում, բամբակ» (**Каратегян Г.** Армянский мир в «Путешествии в Левант» Турнефора, Е., 2017, с. 96): Նրա ժամանակակից մեկ այլ ճանապարհորդ՝ Ժակ Վիլլոտը, գալով Հայաստան, գրել է. «Մրգերն այստեղ ընտիր են, հատկապես ծիրանը: Բացի Հայաստանից, չկա որևէ այլ տեղ, որտեղ ծիրանը լինի այդքան շատ ու համեղ» (նույն տեղում):

էին նաև միջնահանգային և միջգյուղային առևտրի իրականացմանը: Ագուլեցի պատմագիրն իր գրքի առաջին՝ «Ուղեչափություններ» բաժնում¹⁰, մանրամասն նկարագրում է հատկապես Ագուլիս-Թավրիզ-Սպահան և Թավրիզ-Մարաղա առևտրական ճանապարհները և իր վկայությունների ճշմարտացիությունն ապացուցելու համար գրում. «Ոչ թէ մին մարդ, գ կամ դ մարդ կու հարցնեն անունն՝ կամ քանի աղաջ կայ կամ չկայ կամ մին աղաջ յետ կամ թէ առաջ, ոչ թե չափելով իմացայ, այլ իմաստուն մարդիկ հարցանելով: Ոչ թե մին անգամ գնալով այս գրեցի. ՌՂԶ/1647/ յամի Ագուլաց դուրս գնացի մինչի ՌՃԺԳ/1667/ յամն շուրջ գալով, գնալով, հարցանելով գրեցի ըստուքն: Գ, դ թղթի վերայ գրած էի, ոմն ըստուք, ոմն սխալ: Ապա ՌՃԺԳ/ 1667/ յամին նորոյգէցի այսմ դավտարս: Դարցեալ ես անարժան Զաքարիայ, ուր և իցէ, էթէ գիւղ, էթէ քաղաք, էթէ ծով, էթէ ցամաք մինչի ես գնացի ոչ, ականատես չէլայ, գրեցի ոչ. գերայ իմ գնացած, տէսած տէղն գրեցի. անտէսն ոչ գրեցի»¹¹:

Պատմագիրն իր վկայակոչած ուղղությունների համար չափման միավոր է ընտրել փարասանգը՝ ձիերի և ուղտերի ընթացքի միջին արագությունը¹²: Ագուլեցին քաղաքները, բերդերն ու քաղաքատիպ ավանները (ղասաբայ) չի տարբերակում և ներկայացնում է նույն նշանով՝: Տարբերակված չեն նաև ռահդարխանները (ճանապարհապաշտպան կետեր) և մաքսատները, որոնք ներկայացվում են ||| նշանով: Պատմագիրը Ագուլիսից մինչև Էրզրում ընկած հատվածում հիշատակում է 9 մաքսատուն՝ Նախիջևան, Շարուր, Էջմիածին, Աղջաղալա, Չոբան-քորփի, Հասան-Ղալա, Իլիջա, Թոդաթ, Իզմիր¹³: Սրանցից 6-ը իրանական հատվածում են, իսկ երեքը՝ թուրքական (Չոբան-քորփի, Հասան-Ղալա կամ Հաքաբադ, Իլիջա): Պատմագիր Առաքել Դավրիժեցին Աղջաղալան նույնացնում է հին Երվանդակերտի հետ¹⁴:

Ագուլեցու հաղորդած տեղեկությունների համաձայն՝ այս մայրուղիներով շարժվելիս առևտրական քարավանները հաճախ ենթարկվում էին

¹⁰ **2. Ագուլեցի**, էջ 20-24:

¹¹ Նույն տեղում, էջ 6:

¹² Փարասանգը հին իրանական երկարության չափի միավոր է, որը հավասար է վեց կիլոմետրի (տե՛ս **Хинц В.** Мусульманские меры и веса с переводом в метрическую систему, М., 1970, с. 72):

¹³ Նույն տեղում, էջ 7-11:

¹⁴ Պատմութիւն **Առաքել վարդապետի Դարիժեցոյ**, Վաղարշապատ, 1896, էջ 36-37:

ավագակային հարձակումների: Առավել անպաշտպան և խոցելի էին Օսմանյան Թուրքիայի տարածքով անցնող միջազգային տարանցիկ առևտրի քարավանային մայրուղիները: Պատմագիր Դավրիժեցին գրում է Վան-Թավրիզ քարավանային ճանապարհի մասին, որն անընդհատ հարձակման էր ենթարկվում Խոջաբի բերդի տեր Սուլեյման բեկի կողմից¹⁵: Առևտրականների համար լուրջ սպառնալիք էին ոչ միայն ավագակային հարձակումները, այլև տեղական իշխանությունների թալանչիական գործողությունները: Այսպես, օրինակ, Դավրիժեցին գրում է, որ Էրզրումի Աբազա փաշան խաբեությամբ հավաքում է բազմաթիվ առևտրական քարավաններ քաղաքում և թալանում դրանք¹⁶: Հատկապես վտանգավոր են եղել Օսմանյան կայսրության քրդաբնակ շրջաններով անցնող քարավանային ուղիները: Այսպիսով, պատմագիտական գրականության մեջ կան բազմաթիվ վկայություններ թե՛ Սեֆյան Պարսկաստանի և թե՛ Օսմանյան Թուրքիայի տարածքով անցնող առևտրական ճանապարհների անապահովության մասին, որոնք լուրջ խոչընդոտներ էին ստեղծում հայ վաճառականների առևտրական գործունեության համար:

Նոր Զուլայում¹⁷ հաստատվելուց ի վեր ջուղայահայությունը Շահ-Աբասի կողմից ստացավ քաղաքական, տնտեսական, կրոնական և իրավական արտոնություններ¹⁸: Նրանց հնարավորություն տրվեց պարսկական հողում ազգային ու կրոնական սովորույթներն ու առանձնահատկությունները պահելու և զարգացնելու: Գաղթեցված ու մնանկացած հայ վաճառականությանը ոտքի կանգնեցնելու և նրանց առևտրական գործունեությանը սատարելու համար Շահը ջուղայեցի վաճառականներին հատկացնում էր անտոկոս դրամական վարկեր և ապրանքներ: Նա ամեն կերպ խրախուսում էր հայ վաճառականներին՝ հայտնաբերելու նոր և ազատ շուկաներ:

¹⁵ Նույն տեղում, էջ 494:

¹⁶ Նույն տեղում, էջ 573:

¹⁷ Խաչատուր Զուլայեցու վկայությամբ՝ հարուստ խոջաներն իրենց տները կառուցում էին Ջայանդերուտ (Ջայանդեհ Ռուդ՝ գետ, որ կյանք է բաշխում) գետի ափին, որտեղ օղը մաքուր էր (**Խ. Զուլայեցի**, Պատմութիւն Պարսից, Վաղարշապատ, 1905, էջ 102):

¹⁸ Պարսից Շահ Աբաս Առաջին արքան 1593 թ. հունվարի 24-ի հրովարտակով ջուղայեցի խոջա Նազարին առևտրական արտոնություններ է շնորհում՝ Պարսկաստանում՝ ցույց տալով իր բարյացակամ վերաբերմունքը [**Քիլոսեան 3.**, Զուլայեցի Խոջա Նազար եւ իր գերդաստանը (առանձնատիպ), Բոստոն, 1943, էջ 13]:

Շահի կողմից ջուղայեցիներին փոխտվության ձևով հատկացված մետաքսը վաճառականները վճարում էին ոչ թե կանխիկ, այլ ճանապարհորդությունից վերադառնալուց հետո: Ի վերջո, հայ վաճառականական դասի օգնությամբ Իրանը միջազգային առևտրի կենտրոն դարձնելով և մետաքսի գլխավոր քարավանային ուղիները Սպահանի վրայով անցկացնելով՝ Շահը տնտեսական մեծ հարված հասցրեց Օսմանյան Թուրքիային՝ նրան զրկելով իրանական հում մետաքսից ստացվող ահռելի եկամտից: Այդ էր պատճառը, որ 1605 թ. բռնագաղթի ժամանակ Շահը ամայացրեց էրզրում-Թավրիզ առևտրական ճանապարհին ընկած այն բոլոր երկրամասերը, որոնց վրա կատարվող առևտրի հասույթի մեծ մասը մտնում էր օսմանյան գանձարան: Իրանի տնտեսական կյանքն աշխուժացնելու համար շահը, բացի հում մետաքսից, պետական մենաշնորհի հայտարարեց ակնահանքերը և մետաղահանքերը, դրամահատությունը և դրամափոխության գործը¹⁹: XVI դ. սկզբից Եվրոպայում մետաքսյա կտորեղենի արտադրությունն ունեցավ այնպիսի զարգացում, որ տեղում արտադրվող հումքը այլևս չէր բավարարում, և հարկ եղավ այն ներմուծել Արևելքից, հատկապես Իրանից՝ որպես հում մետաքսի արտադրության խոշորագույն կենտրոններից մեկը: Նոր Զուղայի խոջաներին էր պատկանում դեպի Լևանտի առևտրական կենտրոններ Իրանի հում մետաքսի արտահանման մենաշնորհը, որը նոր վերելք ապրեց հատկապես XVII դարում: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ հում մետաքսը Եվրոպական շուկաներում մեծ պահանջարկ ուներ: Հայ վաճառականները Լևանտում աշխույժ առևտրական հարաբերություններ էին վարում Հոլանդիայի և Ֆրանսիայի հետ՝ հարուցելով Անգլիայի դժգոհությունը: Մեծ Բրիտանիան, որը քաղաքական և տնտեսական հակամարտության մեջ էր Հոլանդիայի և Ֆրանսիայի հետ, ամեն կերպ ջանում էր խլել մետաքսի առևտուրը նրանց ձեռքից: Մեծ հաշվով այս քայլը ուղղված էր նաև հայ վաճառականների դեմ, քանի որ նրանց առևտուրը հիմնականում կատարվում էր Հոլանդիայի և Ֆրանսիայի հետ: Այսպիսով, ի դեմս հայ վաճառականների, Մեծ Բրիտանիան Լևանտում ուներ լուրջ մրցակից: Անգլիացիներին հայտնի էր այն իրողությունը, որ հայ դիվանագիտական հանձնակատարները պատրաստվում են Շահ-Աբաս Ա-ի հանձնարարությամբ Եվրոպայում իրանա-Եվրոպական հակաթուրքական դաշինք կնքել:

¹⁹ 2. Քանաթեղի, Պատմագրություն, հ. Ա, Վաղարշապատ, 1870, էջ 36-37:

Այս հանգամանքը անգլիացիները օգտագործում էին թուրքական իշխանությունների մոտ հայ վաճառականներին օգտագործելու համար: Բացի այդ, անգլիացիների համար ձեռնտու չէր հում մետաքսը երկրորդ ձեռքից՝ հայ վաճառականներից գնելը, քանի որ այն Հալեպում հիսուն տոկոսով ավելի թանկ էր, քան Իրանում²⁰: 1607 թ. Լևանտյան ընկերությունը, նպատակ ունենալով Բոսֆորով և Տրապիզոնով Իրանից էժան հում մետաքս արտահանել, թուրքական սուլթանից թույլտվություն է ստանում մուտք գործելու Սև ծով, որը փակ է եղել եվրոպացիների առաջ: 1639 թ. հետո Լևանտում իրանահայ վաճառականների մասնակցությունը մի նոր թափ ձեռք բերեց: Հալեպում, Զմյուռնիայում, Ալեքսանդրիայում, Ստամբուլում հայ վաճառականները առանձնանում էին իրենց առևտրական գործողություններով: Ստամբուլում անգլիական առևտրական ներկայացուցիչները խոստովանում էին, որ հում մետաքսի առևտուրն առավելապես հայ վաճառականների ձեռքում էր: Եվրոպական հզոր առևտրական ընկերությունների իրականացրած մրցակցային սուր պայքարին դիմագրավելու համար հայ վաճառականներն ստիպված էին ճկունություն ցուցաբերել²¹:

Ֆրանսիացի հայտնի պատմաբան և տնտեսագետ Ֆերնան Բրոդելի վկայությամբ՝ հայերը Չինաստան չէին գնում, քանի որ արծաթն այնտեղ ավելի թանկ էր, քան մյուս երկրներում, ուստի հայերը հասնում էին նրա սահմաններին և արծաթը փոխանակում ոսկու սալիկներով²²: Հայ առևտրականների գործունեությունը ծավալում էր մինչև Հնդկաստան: XVII դ. նոր ջուղայեցիները, որպես խոշոր վաճառականներ, Պարսկաստանի Բանդարաբաս նավահանգստից նավերով մուտք գործեցին նաև Հնդկաստան: Հասնելով Սուրաթ նավահանգիստ՝ նրանք այնտեղից մեկնում էին երկրի գլխավոր քաղաքներ, մասնավորապես Կալկաթա, Բենգալ և հյուսիսային Փենջաբ, որտեղ էլ կատարվում էին առևտրական աշխույժ գործողություններ: Վենետիկցի նշանավոր առևտրական Ֆրիդրիխի պատմելով՝ 1563 թ. Հալեպի շուկայում իրեն հանդիպած առաջին առևտրականները ջուղայեցիներն են եղել, որոնց անվանել են «հայաստանցի վաճառականներ»: Դեռևս հնագույն ժամանակներից Հալեպը կամ «Արաբիոյ հյու-

²⁰ **Բայբուրդյան Վ.**, Հայերը և Լևանտյան առևտուրը 17-րդ դ. (ՊԲՀ, 1985, N 2, էջ 109):

²¹ **Բայբուրդյան Վ.**, Միջերկրածովյան առևտրական ճանապարհը և հայ վաճառականների առևտուրը Արևմտյան Եվրոպայի երկրների հետ 17-րդ դ. (ՊԲՀ, 1987, N 3, էջ 107-108):

²² **Ալերամո Հերմետ**, Հայերի Վենետիկը, Ե., 2000, էջ 176:

սխալին մայրաքաղաքը» բնակավայր է եղել այստեղ ապրող հայերի համար²³: Հալեալում զարգացած է եղել հայկական-վանական կյանքը: Փաստորեն, Նոր Զուղայի վաճառականները, համագործակցության մեջ մտնելով Արևմուտքի և Արևելքի երկրների հետ, իշխող դիրք գրավեցին թանկարժեք քարերի, ոսկու և արծաթի, բամբակյա և մետաքսյա գործվածքների, ինչպես նաև թեյի, դարչինի և այլ համեմունքների առևտրի ոլորտներում:

Աշխույժ առևտրական կապեր էին հաստատվել նաև Իտալիայի մի շարք վաճառաշահ քաղաքների՝ մասնավորապես Լիվոռնոյի, Ջենովայի և Վենետիկի հետ²⁴: Հայ վաճառականների և վենետիկցիների միջև, ըստ աղբյուրների վկայությունների, բացի համագործակցությունից, կար նաև մրցակցություն առևտրի ոլորտում: Հիշատակության է արժանի XVII դ. պատմագիր Զաքարիա Ագուլեցու վկայությունը: Ըստ նրա՝ 1676 թ. նամակ են տանում Ագուլիս, որ Վենետիկի «Ֆռանգստան քաղաքում» դոժի հրամանով կրակի է մատնվել վեց հարյուր փաստավ լոնդոնյան մահուղ: Այս մահուղից երկու հարյուր երեսուն փաստավ պատկանում էր ագուլեցի Փանոս Շահշովարենցին, իսկ մյուս մասը՝ ջուղայեցիներին և հրեաներին: Այս հրդեհումն ուներ իր պատճառը: Նրանք այս մահուղը գնել էին Ամստերդամից, բերել Վենետիկ, որպեսզի մաքսը վճարելով և ծովով անցնելով Տոպրավանատիկով հասնեն Ուռումելի կամ Խորմացտուն և կամ էլ տանեն ղզբաշների երկիր՝ վաճառքի համար: Այս մասին իմանալով՝ վենետիկյան գորգագործներն ու մահուղի վաճառականները գնացին բողոքելու դոժին, ասելով՝ «այս չուխես գնայ Խորմաց երկիրն, մէր չուժէն կոտոր կը ընկնի: Դարցյալ մին մահանա արին, թէ՛ այս չուխի տէրն գայ, փող դնի բանքումն, մուչուլգայ տան /գրավոր կերպով պարտավորվեն - Պ.Ք./ թէ մեք այս չուխես Ուռումելի բանաք ոչ, ծախինք ոչ, մեք ձեր փողն յետ տալու լինիք»: Ոմանք չհավատացին՝ ասելով, որ խաբում են և փողերը հետ չեն տա, ոմանք էլ կարծում էին, որ այդ եղանակով իրենց վախեցնում

²³ Առաքել Դավրիժեցին հիշատակում է վարպետներ Մինասին և Հակոբջանին «... եւ են սոքա երկրքեանս ի ցեղէն Զուղայեցոց» (**Տէր-Հովհաննէսն Հ.**, նշվ. աշխ., էջ 154, **Առաքել Դավրիժեցի**, էջ 409):

²⁴ Զուղայի մեծահարուստ վաճառականությունը, արտաքին աշխարհի հետ առևտրական կապեր հաստատելով և երկրե երկիր շրջագայելով, հաղորդակից դարձավ քաղաքակիրթ Եվրոպայի մշակութային նորամուծություններին (**Ղազարյան Մ.**, Հայ կերպարվեստը 17-18-րդ դդ., Ե., 1974, էջ 16):

են: Մինչ այս ու այն կողմ հարցեր էին հնչում, մահուդով բեռնված քարավանը շարժվեց նավահանգիստ: Այստեղ մահուդով բեռնված երկու նավեր շուրջ յոթ-ութ օր պտտվում էին ծովի վրա, որոնք, սակայն, դժի հրահանգով, ոմն ծովակալ դուրս է բերում ծովից, ողջ մահուդը դատարկում է և հրդեհում: Մահուդի տերերը նրան խնդրում են չայրել. «Ան կէսն ձեզ, կէսն տվէք մեզ կամ ամէն տվէք, Սան Մարկու լինի, այրել մեք, դաբուլ չարին: Այսպէս զուլմ ու սիթամով այրեցին»²⁵: Ըստ Ագուլեցու՝ Փանոսն այնքան է կոտրվում կատարվածից, որ հիվանդանում է:

XVII դարում միջազգային առևտրի ասպարեզում կարևոր դեր ունենր Հոլանդիան: Հայերի գալուստը Ամստերդամ հիշատակվում է 1560-1565 թթ.²⁶: XVII-XIX դդ. Ամստերդամը դարձել էր վաճառականական խոշոր քաղաք, նրա համբավն այնքան մեծ էր, որ ստացել էր «եվրոպական կայսրուհի» տիտղոսը²⁷: Ինչպես Զմյուռնիայի հայ վաճառականությունը, այնպես էլ պարսկահայերն ու նոր ջուղայեցիները իրենց հայացքը սևեռել էին Ամստերդամին: Դեպի Ամստերդամ հայերի կանոնավոր երթևեկությունը սկսվել է XVII դարից: Նրանց այս քայլը հոլանդացի պատմագիրները մեկնաբանում են այսպես. 1605 թ. հայոց երկրի մի մասը Շահ-Աբասի կողմից ենթարկվում է թալանի ու ավերի, և հայերը հարկադրված գաղթում են Պարսկաստան տարբեր քաղաքներ: Հայ վաճառականներից շատերը այդ վայրերում հաջողություն են ունենում և մեծ հարստություն կուտակում: Առևտրական գործունեությունը դյուրացնելու համար XVII դ. հայերը Ամստերդամում, Վենետիկում նույնիսկ սեփական նավեր են ունեցել, որը հեշտացրել է նրանց մուտքը թուրքական նավահանգիստներ: Զմյուռնիայից հայ վաճառականները նավերով Վենետիկ էին տեղափոխում դաղմատացիների ափերից բերված չմշակված մետաքս և ներկանյութերի կապոցներ: Պատմագիր Զաքարիա Ագուլեցին սրա մասին գրում է. «Յամի ՌՃԷ/1658/ սեփտեմբերի ժթումն/19/ ես Զաքարիայ Իզմիր այսօր մտայ նավ, որ Աստուծով գնաք Վենետիկ»²⁸: Վենետիկ գնացած Նոր Զուղայի հայերից առաջին անգամ ներկայացուցչություն են բա-

²⁵ Զ. Ագուլեցի, էջ 131:

²⁶ Սարուխան Ա., Հոլլանդան եւ հայերը ԺՁ-ԺԹ դարերում, Վիեննա, 1926, էջ 46:

²⁷ Սարուխան Ա., Բելգիա և հայերը, Պատմական-մատենագրական տեսություն՝ ԺԱ դարից մինչև մեր օրերը հայ ժողովրդի՝ Բելգիայի հետ ունեցած յարաբերությունների վրայ, Վիեննա, 1937, էջ 12:

²⁸ Զ. Ագուլեցի, էջ 51:

ցել Շեիրիմանները կամ Սեիրիմանները, որոնք մեծ հեղինակություն վայելող տնտեսագետներ են եղել: Նրանք հաջողակ ու մեծ ճանաչում ունեցող վաճառականներ էին ադամանդի շուկայում, զբաղվում էին նաև կտորեղենի, մորթեղենի, ծխախոտի, համեմունքների և այլ ապրանքների մեծաքանակ առևտրով²⁹: 1650 թ. Շահումյանները Ղարաբաղից Վենետիկ գնացած Ոսկան իշխանի հետ բացեցին դրամատուն, իսկ հետագայում դարձան Մուրանոյի ապակու և բյուրեղի ամենահզոր արդյունահանողները³⁰: Պարսկաստանի և Արևմուտքի միջև սերտ բարեկամական և առևտրական հարաբերություններ էին ձևավորվել, ուստի հայերով բնակեցված Վենետիկը նորջուլայեցի առևտրականների շնորհիվ օգտվում է իրավիճակից և մեծ շահ ստանում:

Միջազգային առևտրի ասպարեզում կարևոր դեր է ունեցել Ռուսաստանը: XVII դ. ջուլայեցի վաճառականները Ռուսաստանը առևտրի բնագավառում դիտում էին որպես կարևոր հանգրվան: Ուշագրավ է, որ ջուլայեցիների վերաբերմունքը Ռուսաստանի նկատմամբ խրախուսվում էր նաև թուրքական ավազակաբարո կառավարության կողմից, որը հույսեր էր կապում պարսկահայ վաճառականների հետ՝ թուրքական ապրանքը ռուսական շուկա արտահանելու համար³¹: Ռուսաստան ներմուծված ապրանքը, բացի Մոսկվայից, վաճառքի էր հանվում նաև Ռուսաստանի այլ վաճառաշահ քաղաքներ, մասնավորապես Աստրախան, Մեծ Նովգորոդ, Սմոլենսկ, Արխանգելսկ: Զուլայեցիների կանոնավոր վաճառականությունը Ռուսաստանում սկսվել է 1667 թ.: Սույն թ. մայիսի 31-ին Ալեքսեյ Միխայլովիչ ցարը հրովարտակով արտոնություններ է շնորհում ջուլայեցի վաճառականներ Ստեփան Ռոմադանեցին և Գրիգոր Լուսիկյանին (նաև Հուսիկյան)՝ առանց մաքս վճարելու Պարսկաստանի մետաքսը վաճառել ողջ Ռուսաստանի տարածքում: Զուլայի և Սպահանի վաճառականները Ռուսաստան էին արտահանում մետաքս, չմշակված մետաքս /ղաճ/, մետաքսե գործվածքներ, բամբակ, իսկ Ռուսաստանից արտահանում էին սամույրի, աղվեսի, բելքի, կզաքիսի մորթիներ:

²⁹ Ալեքսանդր Հերմետ, նշվ. աշխ., էջ 177:

³⁰ Նույն տեղում, էջ 185:

³¹ Քիլյուսեան Յ., Նիվթեր հայ վաճառականության պատմության համար, Հում մետաքսի վաճառականությունը եւ հայերը (հրատ. վայրը նշված չէ), 1861, էջ 28:

Առևտուրը, որպես կանոն, երբեմն կատարվում էր դրամով, բայց հիմնականում ապրանք էին փոխանակում միմյանց հետ: Հայ վաճառականների՝ ռուսական սահմաններով առևտուրը այնքան մեծ չափերի էր հասնում, որ ամբողջությամբ ստվերում էր Թուրքիայի սահմանով կատարվող առևտրին, հատկապես XVII դարում, երբ թուրքական ավազակաբարո իշխանությունն ընկել էր հոգեվարքի մեջ. «...Սկսեալ ի 1626 ամէ ց1723 ամն Հայք Զուղայու կատարէին զառևտուրս խամ /հում/ մետաքսիք՝ թանկագին գոհարօք՝ մարգարտօք եւ ձեռագօրծք այլ եւ ապրանօք Պարսկաստանաց եւ Հնդկաստանի ի Տէրութեանն Ռուսաստանի...եւ ի սկսանիլ ի Ռուսաստան մետաքսեայ ձեռագործաց, տարեալ եղեն ի Զուղայոյ Հայ արհեստաւորք սակս տալոյ զերանգս մետաքսից եւ վասն ուսուցանելոյ Ռուսաց զայն արհեստ»³²: Հիմնականում Զուղայի հայ առևտրականների շնորհիվ է, որ եվրոպական երկրներից Ռուսաստան ներմուծվեցին բազմատեսակ ապրանքներ՝ մահուդի գործվածքներ, ժամացույցներ, հեռադիտակներ, ակնոցներ, ասեղներ, պերճանքի իրեր³³: Հայ վաճառականների նկատմամբ ռուսական արքունիքի արտոնյալ վերաբերմունքը շարունակվեց նաև Ալեքսեյ Միխայլովիչ ցարին հաջորդած Պետրոս Մեծի օրոք (1682-1725): 1703 թ., հիմնելով Պետերբուրգը, նա հայ վաճառականներին հրավիրեց Պետերբուրգ՝ առևտուր անելու: Նրա գահակալության օրոք հայ վաճառականները չեն սահմանափակվում միայն մետաքսի առևտրով. այս անգամ Ռուսաստան են գալիս հայեր աշխարհի չորս անկյուններից՝ Ղրիմի քաղաքներից, Կամենեց և լեհական այլ քաղաքներից: Սրա շնորհիվ Ռուսաստանում մեծանում էր վաճառվող իրերի քանակը:

Այսպիսով, անգնահատելի է հայ առևտրական կապիտալի ներկայացուցիչների դերը հայ ժողովրդի պատմության հոլովոյթում: Նրանք, թափառելով Ռուսաստանում, Արևմտյան Եվրոպայում, Պարսկաստանում, Սիրիայում, Հնդկաստանում, Չինաստանում, այդ երկրներում հիմնեցին հայկական գաղութներ: Շնորհիվ Նոր Զուղայի գաղթահայ համայնքի ներկայացուցիչների՝ օտար հողում լուծվում էին ազգային եկեղեցուն և մշակույթին առնչվող համահայկական կարևորության բոլոր հարցերը: Հայ առևտրական բուրժուազիան կապող օղակ դարձավ Եվրոպայի, Ասիայի և Արևելքի միջև՝ խթանելով հայ-ռուսական, հայ-իրանական և եվրոպական

³² Նույն տեղում, էջ 32:

³³ **Խաչիկյան Շ.**, նշվ. աշխ., էջ 6-7:

երկրների հետ առևտրատնտեսական հարաբերությունների ամրապնդումն ու զարգացումը:

КУПЦЫ НОВОЙ ДЖУГИ КАК ПОСРЕДНИКИ В ТОРГОВЛЕ МЕЖДУ ИРАНОМ И ЗАПАДНОЙ ЕВРОПОЙ

ПАПИКЯН К.В.

Резюме

Согласно сведениям летописцев XVII века (Закария Канакерци, Аракел Даврижеци, Закария Агулеци), иранским шахом Аббасом I было организовано массовое насильственное переселение армян в Иран. Благодаря торговой деятельности армянского купечества армянский торговый капитал (капитал ходжей) был сосредоточен в поселке Новая Джуга (Джюльфа), основанном переселенцами из разных районов Армении в южной части города Исфахан. Купцы из Новой Джуги являлись посредниками в торговле между Ираном и Западной Европой.

В трудах армянских историографов сохранились важные сведения о роли армянских ходжей в национально-церковной и духовно-культурной жизни иранской общины, об их активном участии в выполнении дипломатических поручений иранского правительства. Армянские ходжа подписывали торговые договора с разными товариществами и даже с государствами. В их руках была сосредоточена значительная часть торговли с крупными европейскими городами, одновременно они устанавливали торговые связи с азиатским торговым рынком.

MERCHANTS OF NEW JUGHA AS MEDIATORS IN TRADE BETWEEN IRAN AND WESTERN EUROPE

K. PAPIKYAN

Abstract

According to the historiographers of the 17th century (Zakaria Kanakerzi, Arakel Davrizhetsi, Zakaria Aguletsi), the Iranian Shah Abbas I organized a massive forced migration of Armenians to Iran. Thanks to the trade activities of the Armenian merchants, the Armenian commercial capital (Khoja capital) was concentrated in the village of New Dzhuga (Julfa), founded by settlers from different regions of Armenia in the southern part of the city of Isfahan. Merchants from New Jugha were mediators in trade between Iran and Western Europe.

In the works of Armenian historiographers has been preserved important information about the role of Armenian Khojas' in the national-ecclesiastical and spiritual-cultural life of the Iranian community, about their active participation in the fulfillment of the diplomatic missions of the Iranian government. The Armenian Khojas signed trade agreements with various partnerships and even with states. A significant part of trade with large European cities was concentrated in their hands at the same time they established trade relations with the Asian trade market.

ОБ ОСОБЕННОСТЯХ ИЗЛОЖЕНИЯ ФИЛОСОФСКИХ ИДЕЙ В ХУДОЖЕСТВЕННОЙ ФОРМЕ

ОГАНЕСЯН С.Г., САФАРЯН А.А.

Одной из наиболее распространенных теорий возникновения философии является теория возникновения философии из мифа – фантастического (с точки зрения современных ученых) представления о мире, передаваемого, как правило, в форме устных повествований, чем часто объясняется “поэтичность” античной философии. Многие философы и по сей день используют литературную форму для “имплементации” своих взглядов. Некоторые ученые считают, что художественная форма творчества препятствует развитию философского мышления, поскольку за образами и метафорами сложно уловить логику и смысл, другие полагают, что философия должна занимать место между поэзией и наукой (М. Хайдеггер)¹ или что “музыка – это философское откровение, а философия – это музыкальный энтузиазм” (А.Ф. Лосев)². В философии как бы преобладает не научный, а мировоззренческий императив. Философы, как и деятели искусства, выражают свое личностное видение, оценку мира и общества в контексте своей эпохи, чем и объясняется субъективность философии. Философия и искусство схожи, в некотором смысле, своей индивидуальностью, но искусство, в отличие от философии, не нуждается в логическом обосновании. Объекты искусства являются образами и существуют в чувственно-наглядном виде (в этом смысле искусство и миф схожи), а объекты философии являются мысленными конструкциями. Некоторые уче-

¹ **Хайдеггер М.** Что значит мыслить? (Разговор на проселочной дороге. Избранные статьи позднего периода творчества, М., 1991, с. 134-145).

² **Клюев А.С.** Музыка как звучащая философия (Звучащая философия, СПб., 2003, с. 99-100).

ные все же склонны утверждать, что между философией и художественной литературой есть больше общего, чем различий. Эта общность особенно хорошо чувствуется в своеобразном синтезе философии с художественной литературой (в частности, в произведениях французских философов-экзистенциалистов). “Все мы писатели – философы”, утверждал Ж.П. Сартр, А. Камю также заявлял – “Хочешь быть философом – пиши романы”³. У экзистенциалистов художественные произведения “перетекают” в философское эссе.

Философия, как и другие формы духовной культуры, имеет два слоя⁴. Первый слой, именуемый “чистой философией”, определяет природу самой философии, а второй слой может быть полон разными феноменами, которые не являются философией, но без которых, грубо говоря, философия не может существовать. Этот второй слой может быть перенасыщен также и художественными образами. Иногда, уделяя большое внимание второму слою, труды многих философов можно рассматривать как художественные произведения, к примеру, труды Ф. Бэкона (“Новая Атлантида”), Вольтера (“Кандид, или оптимизм” и др.), Д. Дидро (“Монахиня”), которые давно вошли в классику мировой литературы. Естественно, что составители известной и популярной серии “Мировой литературы” (в 200 томах), изданной в советское время, включили в нее вышеназванные произведения как шедевры художественной литературы. Жемчужины античной философии – диалоги Платона также часто представляются читателям как произведения искусства, так как они не ограничены “сухой” аргументацией, а переполнены художественными образами.

В средневековой философии античную “поэтичность” как бы вытесняет теоцентричность. Но и в средневековый период встречаются произведения, которые воспринимаются и как художественные, и как философские. Такое двоякое восприятие хотелось бы рассмотреть

³ Бессонов Б.Н. Философия и литература: общее и особенное (Философия и литература: линии взаимодействия, сб. научных статей, отв. ред. И.А. Бирич, М., 2009, с. 6).

⁴ Оганесян С.Г. Философское и нефилософское в философии (Философские рефлексии, Е., 2004, с. 20).

на примере “Книги скорбных песнопений” Святого Армянской Апостольской церкви и провозглашенного Папой Римским Франциском “Учителем Церкви”, армянского средневекового поэта Григора Нарекаци. Говоря о своем видении, Нарекаци пишет: «Ան արն ինքն ինքն / Ան որ մեծ է արարածի արարչին / Քան ան հարկին Անտարանին» (За то, что я увидел собственными глазами, я больше в ответе, чем за весь свод Евангелия)⁵. В процитированных строках вырисовывается стремление философски (т.е. посредством рациональных средств) аргументировать религиозные утверждения, что присуще также Клименту и Оригену.

Своеобразным явлением культуры XVI-XVII веков являются утопии. В них четко выявляются как социальные, так и художественно-философские аспекты. Утопические романы Т. Мора, Т. Кампанеллы и Ф. Бэкона унаследовали слияние философского и эстетического подходов эпохи Ренессанса. Феномен утопического романа XVI-XVII веков не был бы возможен также и без интереса к античной философии, характерного для эпохи Возрождения (романы утопистов продолжают традицию диалогов Платона, где социально-философская мысль воплощена в художественно-образной форме). Многочисленные отсылки на страницах романов также свидетельствуют о влиянии Платона на утопистов.

Антропоцентризм Возрождения являлся отправной точкой и для творчества французских моралистов XVII века. “Максимы” Франсуа де Ларошфуко и “Мысли” Блеза Паскаля имеют как философскую, так и художественную ценность. Выполненные в жанре афоризма, они затрагивают тему человеческой сущности и нравственности, выражая жизненную философию их авторов. Французские моралисты пытались выразить наиболее общие психологические и социальные законы, в которых нашли отражение добродетели и пороки конкретного человека. Политический опыт для Ларошфуко и опыт ученого для Паскаля имели

⁵ **Գրիգոր Նարեկացի**, Մատեն օրերգութեան / աշխատասիրությամբ Պ.Ս. Խաչատրյանի և Ա.Ա. Ղազինյանի, պատ. խմբ. Լ.Ս. Խաչիկյան, Պ.Ս. Շարափանյան, Ե., 1985, էջ 351:

фундаментальное значение для их сочинений, побудив авторов ступить на поле художественно-философских размышлений. Великий русский писатель Л.Н. Толстой писал о “Максимах” Ларошфуко: “Книга эта приучила людей не только думать, но и заключать свои мысли в живые, точные, сжатые и утонченные обороты. Со времени Возрождения никто, кроме Ларошфуко, не сделал этого”⁶. XVIII век открывает новую страницу в истории мировой культуры. Мыслители эпохи Просвещения хотели просветить человеческие умы, нести знание в массы и восстать против догм, что является переосмыслением идей предыдущих веков, в том числе – возрожденческих. Эти желания породили, выражаясь словами Вольтера, “великий памятник нации” – Энциклопедию (под редакцией Д. Дидро). “Просветителями” вошли в историю мировой культуры Вольтер, Ж.Ж. Руссо, Монтескье, Д. Дидро, Дж. Свифт, Д. Дефо, Гете, Ф. Шиллер и др. Просветители основывались на чувственных показаниях, пытаясь не противопоставлять их рассудку, что и легло в основу уникального синтеза философии и художественной литературы. В будущем подобный “инструментарий”, дополняющий рациональность философии иррациональностью искусства, возьмут “на вооружение” французские философы-экзистенциалисты. Воспитанник Вольтера Мельхиор Гримм пишет: “Если интерес к философии в эпоху Просвещения более широк среди народа, чем в любой иной век, то этим мы обязаны... Вольтеру, который, наполнив философией свои пьесы и все остальные свои произведения, привил публике вкус к философии и научил огромное множество людей понимать ее достоинства и искать ее в сочинениях других авторов”⁷. Если одни исследователи характеризуют творчество Вольтера как философию, заключенную в художественную форму, то другие – как художественные произведения, наполненные философией. Однозначна же роль Вольтера в становлении жанра философского романа, о чем свидетельствует также Ж.Ж. Руссо:

⁶ Толстой Л.Н. Полн. собр. соч., т. 40, М., 1956, с. 281; Франсуа де Ларошфуко. Максимумы; Блез Паскаль. Мысли; Жан де Лабрюйер. Характеры (Всемирная литература, т. 42, М., 1974, с. 516, 522).

⁷ Артамонов С. Вольтер (Вольтер, М., 1971, с. 8-10).

“Мое пристрастие к его творениям вызывало во мне желание научиться писать изящно и стараться подражать прекрасному слогу этого автора, от которого я был в восхищении”⁸. По словам А.С. Пушкина, Вольтер – “умов и моды вождь... он наводнил Европу прелестными безделками, в которых философия заговорила общедоступным и шутивным языком”⁹.

О синтезе философских и художественных особенностей в творчестве Руссо писал Л.С. Мерсье: “Никогда еще художник слова не показывал, что в равной степени могут волновать столь отдаленные друг от друга, прямо противоположные сферы – красноречие страстной любви и теоретические сложности политики”¹⁰. “Персидские письма” великого философа-энциклопедиста эпохи Просвещения Монтескье, написанные в эпистолярной форме, давно уже охарактеризованы как шедевр мировой литературы. Роман Монтескье быстро завоевал популярность во Франции и имел неоспоримое влияние на последующее развитие литературы как Европы, так и стран Востока. Уже в 1730 году были опубликованы “Турецкие письма” Сен-Фуа (1698-1776), которые большинство французских литературоведов считают подражанием “Персидским письмам” Монтескье¹¹. Литературно-философский прием, введенный в обиход Монтескье, состоял в том, чтобы выставить обычные явления на обозрение людям, не привыкшим их оценивать по устоявшимся критериям.

На формирование жанра философского романа оказали влияние английские писатели Д. Дефо и Дж. Свифт. Идея об относительности человеческих суждений и оценок представляется Дж. Свифтом в форме художественных образов лилипутов и великанов. Свифт как бы противопоставляет философам эпохи Просвещения свой сарказм, используя “популярный” в эту эпоху художественный прием. Шедеврами жан-

⁸ Там же.

⁹ Там же.

¹⁰ **Верцман И.** Философско-лирический роман XVIII века (Жан-Жак Руссо, М., 1968, с. 20).

¹¹ **Маштакова Е. И.** Новые явления в турецкой культуре XVIII века (Проблемы истории Турции, М., 1978, с. 41).

ра философского романа являются “Философские этюды” Бальзака, которые составляют часть его “Человеческой комедии”. В “Философских этюдах” Бальзак продолжает философские размышления эпохи Просвещения о религиозных догмах, затрагивает эстетические и социальные темы, проблемы психологии человека. Примечательно, что К. Маркс говорил, что он “глубже и ярче познакомился с капиталистическим обществом, читая Бальзака, нежели произведения профессионалов-экономистов”¹². Одним из современных ареалов соприкосновения философии с искусством является кинематограф. В этом плане особо следует отметить творчество основоположника жанра “экзистенциальная драма” – известного кинорежиссера Ингмара Бергмана [“Седьмая печать” (1957), “Земляничная поляна” (1957), “Персона” (1966)]. Как и философы-экзистенциалисты, И. Бергман затрагивал в своих картинах проблемы человеческой жизни – одиночества, смысла жизни. Экзистенциальные проблемы в творчестве режиссера пересекаются и с теорией психоанализа.

“Великие кинорежиссеры сравнимы не только с живописцами, архитекторами и музыкантами, но еще и с мыслителями... кино словно говорит нам: со мной вы не сможете избежать шока, который пробудит в вас мыслителя”¹³, – подчеркивал известный философ двадцатого века Жиль Делез. Интересна параллель, которую он проводит между философией Ф. Ницше и творчеством американского кинорежиссера О. Уэллса: “Подобно Ницше, Уэллс непрестанно боролся с системами суждения: не существует ценности выше жизни; жизнь не следует ни судить, ни оправдывать; она невинна, ей присуща “невинность становления” по ту сторону добра и зла...”¹⁴.

С появлением кинематографа многие философы стали рассматривать его как возможный способ имплементации своих философских взглядов. Ж.П. Сартр написал сценарий биографического фильма о

¹² **Бессонов Б.Н.** Философия и литература: общее и особенное (Философия и литература: линии взаимодействия, сб. научных статей, отв. ред. И.А. Бирич, М., 2009, с. 7).

¹³ **Делез Ж.** Кино, М., 2016, с. 13, 396, 418.

¹⁴ Там же.

З. Фрейде. Были экранизированы произведения многих философов – Вольтера (“Кандид или оптимизм”, 1960, реж. Н. Карбонно и др.), Ж. Ж. Руссо (“Веселая наука”, 1969, реж. Ж.Л. Годар), Д. Дидро (“Монахиня”, 1966, реж. Ж. Риветт), А. Камю (“Посторонний”, 1967, реж. Л. Висконти, “Чума”, 1992, реж. Л. Пуэнсо, “Первый человек”, 2011, реж. Дж. Амелио) и др. Классифицируя феномены культуры, традиционно воспринимаемые “двояко” (и как философские, и как художественные), и исходя из философского императива в “первом слое” конкретного феномена, можно прийти к заключению, что возможна “имплементация” философии в художественной форме, несмотря на то, что многие философы считают это препятствием для развития философии. Синтез (или “симбиоз”) двух самостоятельных форм духовной культуры – философии и искусства лежит в основе жанров искусства – философского романа (или философской повести), философского кинематографа (или кинематографического жанра “экзистенциальная драма”) и др. На современном этапе развития науки очевидно “тотальное” привалирование разных междисциплинарных исследований: изучение взаимосвязей форм духовной культуры (философии и искусства) способствует многостороннему и детальному раскрытию проблематики. И в информационном обществе, откликаясь на постмодернистские вызовы переосмысления ценностей, многие философы “уходят в искусство”, а деятели культуры “активизируют философско-мировоззренческий поиск” с использованием и “иного” инструментария, расширяя “аудиторию”.

ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ ԳԵՂԱՐՎԵՍՏՈՐԵՆ ՇԱՐԱԴՐԵԼՈՒ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Ս.Հ., ՍԱՖԱՐՅԱՆ Ա.Ա.

Ամփոփում

Ուսումնասիրողները մշակույթի որոշ ֆենոմեններ գնահատում են երկկերպ՝ դրանք դիտարկելով որպես փիլիսոփայական և գեղարվեստա-

կան: Ելնելով կոնկրետ ֆենոմենի «առաջին շերտի» փիլիսոփայական հրամայականից՝ կարելի է եզրակացնել, որ հնարավոր է գեղարվեստական ձևի փիլիսոփայական «իմպլեմենտացիան», իսկ հոգևոր մշակույթի երկու ինքնուրույն ձևերի՝ փիլիսոփայության և արվեստի համադրությունը (կամ «սինթեզը») ընկած է այնպիսի ժանրերի հիմքում ինչպիսիք են փիլիսոփայական վեպը կամ կինեմատոգրաֆիական «էկզիստենցիալ դրաման»:

TOWARDS THE ARTISTIC REALIZATION OF PHILOSOPHICAL IDEAS

S. HOVHANISYAN, A. SAFARYAN

Abstract

The researchers of certain cultural phenomena evaluate and perceive them both as philosophical and artistic. In terms of the philosophical imperative of the very “first layer” of the specific phenomenon, it can be assumed that the philosophical implementation in an artistic form is possible while the two individual forms of spiritual culture, i.e. the synthesis of philosophy and art underpin such genres as philosophical novel and “existential drama” of cinematography.

ՀԱՆԴՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԱԶԱՏԱԿԱՆ-ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ՓԻՐՈՒՄՅԱՆ Տ.Ա.

Արդի աշխարհի ժողովրդավարացման միտումները կարծես թե այլևս այլընտրանք չունեն: Խորհրդային Միության փլուզմանը հետևած երկ-բևեռ աշխարհակարգի կազմաքանդմանը հաջորդեց համաշխարհային մի գործընթաց, որի նպատակն աշխարհում միատարր քաղաքական համակարգի հաստատումն է՝ հիմնված ժողովրդավարական և ազատական արժեհամակարգի վրա: Ամերիկացի հայտնի տեսաբան Ֆ. Ֆուկույաման այս գործընթացը կապեց «պատմության ավարտի» հետ՝ այն բնութագրելով որպես մի վիճակ, երբ հակամարտության բևեռները չքացել են, աշխարհը շարժվում է զարգացման մի՝ ազատական-ժողովրդավարության հաստատման ուղղությամբ: Սակայն, ժամանակակից աշխարհին բնորոշ քաղաքական և քաղաքակրթական գործընթացները վկայում են, որ դեռևս վաղ է խոսել «պատմության ավարտի» մասին: Եթե աշխարհը մի կողմից շարժվում է համաշխարհայնացման ուղղությամբ, ապա, մյուս կողմից էլ հայտնվում են աշխարհաքաղաքական նոր կազմավորումներ, որոնք երբեմն համախմբվում են մեկ կենտրոնական գերտերության շուրջը: Եթե ազատական ժողովրդավարության հաստատման լոկոմոտիվ պետությունը ԱՄՆ-ն է, ապա այս գործընթացին հակադրվում են տարածաշրջանային գերտերությունից համաշխարհայինի վերածվող ՌԴ-ն և տնտեսական թռիչքաձև զարգացում ապրող Չինաստանը: Այժմ արդեն աշխարհը միաբևեռությունից անցում է կատարում բազմաբևեռությանը: Այնուամենայնիվ, ժողովրդավարությունը դեռևս մնում է ձգողության այն կենտրոնը, որին ձգտում են զարգացող պետություններից շատերը (այդ թվում՝ նաև Հայաստանի Հանրապետությունը): Աշխարհաքաղաքական և ներքաղաքական հիշյալ գործընթացների համատեքստում հանդուրժողականության խնդիրը հայտնվել է տեսաբանների ուշադրության կենտրոնում, քանզի օրեցօր մեծանում է այդ սկզբունքով առաջնորդվող քաղաքականության

իրականացման անհրաժեշտությունը ինչպես աշխարհաքաղաքական, այնպես էլ ներքաղաքական հարաբերություններում: Հանդուրժողականությունն այս առումով և՛ ազատական ժողովրդավարության անկյունաքարային արժեքներից է, և՛ դրա հաստատման կարևոր պայմանը:

Արդի քաղաքական գործընթացներում մեծ է հատկապես քաղաքակրթական զարգացումների ազդեցությունը, մասնավորապես քաղաքական գործընթացներում տեղեկատվական-ցանցային հասարակության ձևավորումը: Ֆ. Ֆուկույաման իրավացիորեն նկատում է, որ ներկայիս տեղեկատվական դարաշրջանում ժողովրդավարությանը լուրջ մարտահրավեր է նետված՝ պահպանել հասարակական կարգը ժամանակակից տեխնոլոգիական և տնտեսական փոփոխությունների պայմաններում: Նախորդ դարի 70-ականներից մինչև 90-ական թթ. սկիզբը Լատինական Ամերիկայի, Եվրոպայի, Ասիայի և Նախկին հետխորհրդային երկրներում սկսվում է քաղաքակրթական մի նոր ալիք, որին Ա. Թոֆլերը տվեց «երրորդ ալիք» անվանումը, որի համար բնութագրական են տեղեկատվության դերի և ազդեցության տարածումն ու ընդլայնումը¹: Քաղաքակրթական երրորդ ալիքի շրջանակներում տեղի ունեցող մի շարք փոփոխություններ ենթադրում են սոցիալական, քաղաքական, տնտեսական նոր համակարգերի ստեղծում: Մասնավորապես՝ քաղաքակրթական հիշյալ փոփոխություններին հաջորդում է ազատական-ժողովրդավարական քաղաքական համակարգերի հաստատումը կամ հաստատման փորձերը այս կամ այն հասարակություններում և պետություններում: Տեղեկատվական քաղաքակրթության պայմաններում հասարակությունները, որոնք հենվում են տեղեկատվության դերի ինտենսիվացման վրա, ավելի ու ավելի են կարևորում ազատության և հավասարության սկզբունքների նշանակությունը սոցիոմշակութային հարաբերությունների հաստատման գործում. արժեքներ, որոնք ընկած են ազատական ժողովրդավարության արժեհամակարգի հիմքում: Փաստորեն, տեղեկատվական քաղաքակրթության կայացումը նպաստում է ազատական-ժողովրդավարական քաղաքական համակարգերի կայացմանը:

Ժողովրդավարության և ազատականության արժեքային ներուժն անմիջականորեն պայմանավորված է մարդկային մի շարք որակներով՝ մարդու և հասարակության հոգևոր բնույթով, ինքնակառավարման և ինք-

¹ Տե՛ս **Фукуяма Ф.** Великий разрыв, М., 2008, с. 21:

նակազմակերպման ունակությամբ, բարոյական գիտակցությամբ և բազմաթիվ այլ գործոններով²: Ընդ որում, մարդկային գործոնն ազատական-ժողովրդավարական արժեքների հաստատման գործընթացի վրա կարող է ինչպես դրական ազդեցություն, այնպես էլ մի շարք բացասական հետևանքներ ունենալ: Մասնավորապես՝ վտանգ կա, որ ժամանակակից ազատական ժողովրդավարությունը կարող է ծայրահեղ անհատականացման զրհ դառնալ: Ի տարբերություն նախկին ավանդական հասարակությունների, որտեղ մարդիկ ունեին ընտրության բավական սահմանափակ հնարավորություններ, արդի հասարակություններում անհատի ազատության սահմաններն ակնհայտորեն ընդլայնվել են: Ազատականության ժամանակակից տեսության համաձայն՝ եկեղեցու, պետության, քաղաքացիական հասարակության և սոցիալական այլ ինստիտուտների գործառույթները տարբերվում և առանձնացվում են իրարից, իսկ դրանց միջև փոխհարաբերությունները կարգավորվում են հանդուրժողականության սկզբունքով: Այլ կերպ ասած՝ ազատական ժողովրդավարության կայացումն ու սոցիոմշակութային հարաբերությունների անհատականացումը փոխադարձաբար գործընթացներ են: Անհատականացման նման սկզբունքների վրա ձևավորված հասարակությունում դժվար է խոսել ազատական-ժողովրդավարական պետությունների կայացման այլընտրանքային արժեքների՝ որպես ժամանակակից հասարակության կառուցման մեխանիզմի մասին³:

Ազատական-ժողովրդավարական արժեքները ենթադրում են հանդուրժողականության՝ որպես անհրաժեշտ նորմի կիրառումը և հաստատումը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում, որպես սոցիալական իրականության կառուցման կարևոր նախապայման և բազմազանության հաստատման ու պահպանման միջոց: Ազատական ժողովրդավարության իրականացման համար հանդուրժողականությունը կարևոր դեր ունի, քանզի քաղաքական գործընթացներին փոքրամասնության ներգրավվածության ապահովումը հնարավոր է միայն մեծամասնության կողմից փոքրամասնության նկատմամբ հանդուրժողական դիրքորոշման պարագայում, ուստի ազատական ժողովրդավարության պայմաններում հանդուրժողականությունն անկյունաքարային արժեք և սոցիալ-քաղաքական կյանքի

² Տե՛ս **Бердяев Н.** Судьба России. Самосознание, Ростов-на-Дону, 1997, с. 195:

³ Տե՛ս **Фукуяма Ф.**, նշվ. աշխ., էջ 21-22:

կազմակերպման մեխանիզմներից է: Հարկ է նկատել, որ այս համատեքստում քաղաքական հանդուրժողականությունը հնարավոր դարձավ միայն ժողովրդավարական քաղաքական համակարգի կայացման ընթացքում⁴: Հանդուրժողականության դերի կարևորումն ազատական-ժողովրդավարական քաղաքական համակարգի կայացման հարցում ինքնին հասկանալի է, քանի որ մեծամասնության իշխանությունը (ժողովրդավարություն) դեռևս չի երաշխավորում փոքրամասնությունների ներառվածությունը քաղաքական և սոցիալական գործընթացներում: Ժողովրդավարական քաղաքական համակարգի պայմաններում ներկայացված են հասարակության մեծամասնության շահերը, մինչդեռ ազատական-ժողովրդավարական քաղաքական համակարգի պարագայում հաշվի են առնվում նաև այս կամ այն փոքրամասնությունների շահերն ու պահանջները: Այդ դեպքում անհատ-քաղաքացու իրավունքների ու պահանջների իրացման գրավականը հանդուրժողականության սկզբունքի առաջնայնության ընդունումն է:

Ժամանակակից ժողովրդավարական պետությունները հանդես են գալիս մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությամբ, նպաստում են մշակութային բազմազանությանը, մրցակցությանը, այսինքն՝ հասարակության մեջ հաստատում են բազմակարծության հավասարակշռություն: Սակայն, երբ այդ հավասարակշռությունը հայտնվում է ճգնաժամային փուլում, ժողովրդավարական պետությունը պարտավոր է միջամտել, վերականգնել, կարգ ու կանոն հաստատել, բոլորին ստիպել հետևելու համընդհանուր «խաղի կանոններին»: Այս կանոններից մեկն էլ հենց հանդուրժողականությունն է⁵: Առաջին հայացքից կարելի է կարծել, որ ժողովրդավարությունն ու հանդուրժողականությունը փոխապայմանավորված են մեկը մյուսով. եթե տվյալ սոցիալական համակարգում գերիշխում են ժողովրդավարական արժեքներ, ապա այդտեղ գերիշխում է նաև հանդուրժողականության սկզբունքը և՛ հակառակը, այն է՝ ժողովրդավարությունը հանգեցնում է հանդուրժողականության, իսկ հանդուրժողականությունը՝ ժողովրդավարության⁶: Արդի ազատական-ժողովրդավարական

⁴ Տե՛ս **Widmalm S.** Political Tolerance in the Global South, London-New York, 2016, p. 19:

⁵ Տե՛ս **Гречко П.** О границах толерантности (Свободная мысль-XXI, 2005, № 10, с. 176-177):

⁶ Տե՛ս **Шипилов А.Б.** Демократия и толерантность (Социологические исследования, 2005, № 3, с. 40):

քաղաքական համակարգի և բազմամշակութային սոցիալական համակարգի կայացման ընթացքում հանդուրժողականությունը նպաստում է ժողովրդավարական կենսակերպի զարգացմանն ու ընդլայնմանը: Ազատական-ժողովրդավարական քաղաքական մշակույթի համատեքստում հանդուրժողականությունն իրապես կարևոր արժեք և բնութագրիչ է, որի առկայությունը խոսում է քաղաքական համակարգի էության մասին: Ենթադրվում է, որ ժողովրդավարական քաղաքական կառուցվածք ունեցող հասարակություններում տվյալ հասարակության քաղաքական կյանքի կազմակերպման գործընթացներին պետք է մասնակցություն ունենան հասարակության բոլոր անդամները: Եվ քանի որ հասարակությունն ամենևին էլ միատարր չէ, այնտեղ որևէ էական հարցի վերաբերյալ կարող են լինել ինչպես համընկնող, այնպես էլ՝ հակադիր կարծիքներ, որոնց բազմազանությունը ստեղծում է բազմաթիվ կոնֆլիկտային իրավիճակներ. դա վերաբերում է հատկապես քաղաքական համակարգին, որտեղ քաղաքական գործիչների որևէ կարծիքի և դիրքորոշման դրսևորման հանգամանքից են կախված բազում տնտեսական և քաղաքական շահեր, ուստի և դրանցից են բխում բազմաթիվ վտանգներ: Այս առումով շատ կարևոր գործիք է քաղաքական հակադրությունների հաղթահարման հանդուրժողականության մեխանիզմը, որ կարող է ապահովել քաղաքական կյանքին հանրության ներգրավվածությունը: Միմյանց տեսակետների և մոտեցումների նկատմամբ հանդուրժողականության մշակույթը հասարակության մեջ տարբեր կարծիքների առկայության հնարավորություն է տալիս, ինչն էլ արդեն ապահովում է հասարակության բոլոր անդամների ներգրավվածությունը հասարակական կյանքի կազմակերպման, քաղաքական որոշումների կայացման գործում: Ժամանակակից ժողովրդավարական պետություններում հանդուրժողականությունը հավասարակշռության ապահովման, խաղաղ գոյակցության, քաղաքական մշակույթի կարևոր տարր է: Ըստ էության, ժողովրդավարական-քաղաքական մշակույթ ունեցող հասարակություններում, որպես սոցիոմշակութային կառուցվածքաստեղծ կարևոր սկզբունքներ, գործում են երկխոսության, քաղաքացիական համաձայնության նորմերը: Բանն այն է, որ տվյալ տեսակի հասարակություններում որոշումներն իրականանում են մեծամասնության կամքով (կամ գոնե պետք է այդպես լինի), և այս դեպքում մշտապես առկա է որևէ խնդրի շուրջ փոքրամասնություն դարձած խմբի նկատմամբ անհանդուր-

ժողական մոտեցում ցուցաբերելու վտանգը, ինչը կարող է սպառնալ սոցիալական խաղաղ համակեցությանը: Եվ հանդուրժողականությունը դառնում է ժողովրդավարության կայացման և զարգացման կարևոր նախապայման, քանզի միայն այդ դեպքում են հնարավոր դառնում մեծամասնության իշխանության հաստատումը և փոքրամասնության հետ մեծամասնության փոխհամաձայնեցված գործունեությունը:

Ֆ. Ֆուկույամայի կարծիքով՝ ժամանակակից ժողովրդավարական հասարակություններում գերակայում է կյանքի բոլոր ձևերի և արժեքների հավասարության նկատմամբ հավատը⁷: Պատմական փորձը ցույց է տալիս, որ կյանքի կազմակերպման այս կամ այն կենսիմաստային ուղղորդիչներին գերակայություն տվող գաղափարախոսությունների մարմնավորումն ի վերջո հանգեցրել է մարդկային բազում տառապանքների և արհավիրքների, ինչի մասին են վկայում ֆաշիստական, կոմունիստական, անգամ էգալիտարիստական գաղափարախոսությունների՝ սոցիալական կյանքում մարմնավորման փորձերը: Ըստ էության, այս կամ այն արժեհամակարգին գերակայություն տվող գաղափարախոսությունների ջատագովներն այդպես էլ չկարողացան ապացուցել իրենց գաղափարախոսությունների իրավացիությունն ու արժեքավորությունը: Հիշյալ մոտեցման համատեքստում կյանքի կազմակերպման բոլոր գաղափարախոսություններն ու արժեհամակարգերը համահարթեցվում են, և որևէ արժեհամակարգ կամ գաղափարախոսություն չի կարող գերակայություն ունենալ այլոց նկատմամբ: Իսկ այդ պարագայում համահարթեցվում են բոլոր արժեքներն ու կենսիմաստային ուղղորդիչները: Այս համատեքստում հանդուրժողականությունն ազատական ժողովրդավարության բաղադրիչ արժեքներից է, քանզի արժեհամակարգային համահավասարության պայմաններում սոցիալական կյանքի ներդաշնակության ապահովման համար անհրաժեշտ է հաշվի նստել այլ կարծիքների և արժեհամակարգերի «գոյության իրավունքի» հետ: Այլ կերպ ասած՝ ազատական ժողովրդավարությունում գործում է բազմազանության սկզբունքի վրա հիմնված քաղաքական մշակույթը:

Եվ այսպես, համաշխարհայնացման արդի սոցիոմշակութային փոխակերպումների պայմաններում՝ որպես քաղաքական մշակույթի կայացման իդեալներ, հանդես են գալիս կյանքի կազմակերպման ժողովրդավարության և ազատականության սկզբունքները, որոնցից ժողովրդավարութ-

⁷ Տե՛ս **Фукуяма Ф.** Конец истории и последний человек, М., 2010, с. 453-454:

յունը ենթադրում է մեծամասնության իշխանության, իսկ ազատականությունը՝ մարդու իրավունքների գերակայության և անհատների ձայնին հաղորդակից լինելու սկզբունքները: Ազատական-ժողովրդավարական քաղաքական մշակույթում հարգվում է (կամ պետք է հարգվի) ինչպես մեծամասնության կամքի, այնպես էլ մարդու իրավունքների լինելությունը: Այս իմաստով, ազատական-ժողովրդավարական քաղաքական կյանքի կազմակերպման մշակույթի արժեհամակարգը հենվում է ոչ բռնության բարոյագիտության սկզբունքների վրա, ինչից բխում է, որ ազատական ժողովրդավարության պարագայում բռնությամբ ուղեկցվող հարկադրանքի ցանկացած դրսևորում անընդունելի է: Ասվածը հատկապես վերաբերում է ինչպես ներքաղաքական, այնպես էլ՝ արտաքին քաղաքական զարգացումներին: Մինչդեռ ազատական ժողովրդավարության կարգախոսով ընթացող համաշխարհայնացման արդի միտումները երբեմն փաստում են հակառակը: Նախորդ դարի հայտնի փիլիսոփա Հ. Արենդթն իրավացիորեն նկատում է, որ «քաղաքական հայացքները հիմնված են բազմակարծության, բազմազանության և փոխադարձ սահմանափակումների վրա»⁸: Եվ իսկապես, քաղաքական կյանքն անհնար է պատկերացնել առանց քաղաքական տարբեր հայացքներ ունեցող և տարբեր թիմեր ներկայացնող մարդկանց մրցակցության: Ազատական ժողովրդավարությունն այս առումով ապահովում է մրցակցության առկայությունը, քանի որ ընդունում է, բոլոր մարդկանց՝ սեփական աշխարհայացք ունենալու իրավունքը, իսկ քաղաքական կամ սոցիալական կյանքին վերաբերող որոշումների կայացումը պետք է իրականանա երկխոսության միջոցով հաստատված փոխհամաձայնությամբ, ինչը հնարավոր է միայն տվյալ հասարակության քաղաքական մշակույթում հանդուրժողականության՝ որպես կառուցողական նորմի և աշխատակարգի առկայության պայմաններում:

⁸ Արենդթ Հ., Մենք՝ փախստականներ, Ե., 2016, էջ 105:

ПРОБЛЕМА ТОЛЕРАНТНОСТИ В СИСТЕМЕ ЛИБЕРАЛЬНО-ДЕМОКРАТИЧЕСКИХ ЦЕННОСТЕЙ

ПИРУМЯН Т.А.

Резюме

В современных геополитических и внутривнутриполитических процессах актуальность толерантности как необходимого правила политической игры более чем очевидна, поскольку как в глобальном, так и в региональном масштабах общества сталкиваются с такими проблемами, как терроризм, экстремизм, военные конфликты, религиозный фундаментализм, которые являются угрозой для социокультурного строя современных социумов. Важно отметить, что толерантность – это ключевая характеристика либерально-демократической политической системы, фундаментальная ценность гражданского общества, обеспечивающая основные права и свободы человека. Возникающие в условиях поликультурных социальных обществ, миграций разных народов, существования нестабильных политических систем, мировых экономических потрясений международные конфликты можно решить лишь с помощью такой социокультурной политической системы, которая возьмёт на вооружение толерантность, допускающую наличие иных мнений, решений и предложений.

THE PROBLEM OF TOLERANCE IN THE SYSTEM OF LIBERAL-DEMOCRATIC VALUES

T. PIRUMYAN

Abstract

In the current geopolitical and political processes, the relevance of the integration of tolerance as an essential rule in the politics is evident, because in the global and regional level the modern societies are faced such large-scale problems, as terrorism, extremism, military conflicts, religious funda-

mentalism which are dangerous threat for the socio-cultural system and order. It is important to note that tolerance is a key characteristic of the liberal-democratic political system, a fundamental value of civil society, which provides the basic human rights and freedoms. In the conditions of multicultural social systems, migrations of different nations, the existence of unstable political systems, global economic fluctuations, the emerging international conflicts can be solved only with such a socio-cultural political system which will be based on tolerance, the ability of acceptance of the others solutions and suggestions. Of course, the tolerance cannot eliminate all the causes of conflicts, terrorism and wars. However, tolerance is the condition for the peaceful solution of different contemporary conflicts, such as international, inter-cultural, political problems.

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

ԳԱԼՍՏՅԱՆ Մ.Վ.

Արդի շրջանում Հայաստանի բնակչության արտաքին աշխատանքային միգրացիան իր ազդեցությունն է թողնում հանրապետության սոցիալ-տնտեսական գործընթացների վրա: Այսպես, 2015 թ. Հայաստանից աշխատանքային միգրանտների թիվը կազմել է 60-65 հազար մարդ¹, որը մի կողմից դարձել է այդ ընտանիքների եկամուտների ձևավորման կարևոր աղբյուր, մյուս կողմից դրա հետևանքով հանրապետությունում լայն տարածում է ստացել «երկատված» ընտանիքների մոդելը: Աշխատանքային միգրացիան Հայաստանի համար առաջացնում է սոցիալ-տնտեսական մի շարք լուրջ հիմնախնդիրներ, որոնց ուսումնասիրությունը դրա հետագա կարգավորման առումով ունի կարևոր գործնական նշանակություն: Մասնավորապես, անհրաժեշտ է պարզել, թե որոնք են աշխատանքային միգրացիայի մասնակցության պատճառները, սեռատարիքային և կրթական ինչ բնութագրեր ունեն միգրանտները, և ի՞նչ հետևանքներ է ունենում այն անհատի, ընտանիքի և հասարակության մակարդակով: Այդ խնդրի բացահայտման նպատակով որպես հետազոտության օբյեկտ ընտրվել են միգրանտ ունեցող ընտանիքները, որոնց շրջանում իրականացվել են էթնո-սոցիոլոգիական հարցումներ²: Հետազոտության արդյունքների պարզա-

¹ Պետպատվերով գիտահետազոտական թեմայի գիտական հաշվետվություն, Թեմայի գիտական ղեկավար, տ.գ.թ. Ռ. Եգանյան, Ե., 2015, <http://www.smsmta.am/upload/Hashvetvutyun-23.12.2015> (13.03.2018):

² Էթնոսոցիոլոգիական հարցումներն իրականացվել են 2016-2017 թթ. Երևանում և Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի, Սյունիքի, Արմավիրի, Արագածոտնի մարզերի վեց քաղաքային և քսան գյուղական բնակավայրերի 384 ընտանիքներում: Վերջին 5 տարվա կտրվածքով (2013-2017) 126 ընտանիք (32.8%) ուներ աշխատանքային միգրանտ: Այդ ընտանիքների 69,8%-ից արտագնա աշխատանքի էր մեկնել մեկ, 25.4%-ից՝ երկու, 4%-ից՝ երեք, իսկ 0.8%-ից՝ չորս միգրանտ: Նրանց 47,6%-ը պատկանում է միջին, 29,9%-ը՝

բանման համար մեթոդաբանական հիմք են ընդունվել միգրացիայի վերաբերյալ գոյություն ունեցող տնտեսական տեսությունները: Մասնավորապես նշենք է. Ռավենշտայնի մոտեցումները, ձևակերպված միգրացիայի վերաբերյալ տասնմեկ օրենքներում, որտեղ նա հանգում է այն եզրակացության, որ միգրացիայի գլխավոր պատճառներն են տնտեսական գործոնը և բարձր վարձատրվող աշխատանքը³: Ըստ էվերեթ Ս. Լիի՝ յուրաքանչյուր տարածքում գործում են միգրացիոն գործոնների տարբեր խմբեր՝ պահպանող, ձգող և վանող, որոնք որոշում են միգրանտների ժամանումը և մեկնումը: Միգրացիայի վանող երևույթների շարքին դասում են տնտեսական (գործազրկությունը, եկամուտների ցածր մակարդակը, բարձր հարկերը), սոցիալական և քաղաքական բնույթի գործոնները (աղքատությունը, խտրականությունը, խղճի և հավատի ազատության սահմանափակումը, պատերազմները), անբարենպաստ բնակլիմայական պայմանները և այլն: Միգրանտներին ձգող գործոններից են տնտեսական զարգացման և եկամուտների բարձր մակարդակը, անվտանգությունը, աշխատաշուկայում մուտք գործելու հնարավորությունը (այդ թվում՝ ոչ պաշտոնական հատվածում, որը կարևոր է ոչ լեգալ միգրանտների համար) և այլն⁴: Նոր դասական տեսության ներկայացուցիչները (Մ. Ֆրիդման, Պ. Սեմյուելսոն) աշխատանքային միգրացիայի դերը քննարկում են տնտեսական զարգացման գործընթացում և միգրացիան համարում են տարածքների միջև աշխարհագրական տարբերությունների, աշխատուժի առաջարկի և պահանջարկի անհամապատասխանության արդյունք: Միգրացիայի ազդակ են համարվում ելքի և մուտքի տարածքների միջև եկամուտների տարբերությունները: Համաձայն այդ տեսության՝ միգրացիայի ուսումնասիրությունը նպատակ է հետապնդում լուծելու ռեսուրսների արդյունավետ բաշխման խնդիրը⁵:

Անդրադառնանք այն խնդրին, թե աշխատանքային միգրանտների վարքի ձևավորման և այդ գործընթացին մասնակցության վրա ինչ գոր-

ավագ, իսկ 22,6%-ը՝ երիտասարդ սերնդին: Ըստ սեռային բաշխվածության՝ 89,6%-ը տղամարդ է, իսկ 10,4%-ը՝ կին:

³ **Ravenstein E.G.** The Laws of Migration (Journal of the Statistical Society of London, Vol. 48, No. 2 (June, 1885), pp. 167-235).

⁴ **Everett S. Lee A.** Theory of Migration (Demography, Vol. 3, No. 1 (1966), pp. 47-57).

⁵ Տե՛ս **Садовская Е.Ю.** Социология миграций и современные западные теории международной миграции (Социальная политика и социология, 2004, N 1, с. 83-88):

ծոններ են ազդում: Նշենք, որ անհատի միգրացիոն վարքի մեխանիզմների ձևավորման հարցում կարևորվում են նրա պահանջմունքները և շահերը՝ որպես նրա տնտեսական գործունեությունը խթանող կարևոր աղբյուր: Աշխատանքային միգրացիայի պատճառների վերաբերյալ առավել օբյեկտիվ պատկեր ստանալու նպատակով «Որո՞նք են արտագնա աշխատանքի մեկնելու հիմնական պատճառները» հարցին հնարավորություն էր տրված պատասխանելու միայն թիրախ խմբին, այն ընտանիքներին, որոնք ունեին աշխատանքային միգրանտներ: Հարցմանը մասնակցած տղամարդ և կին միգրանտ ունեցող ընտանիքների կեսից ավելին որպես միգրացիայի պատճառ նշել է Հայաստանում աշխատանքի (նաև մասնագիտական) բացակայությունը: Աշխատանքային միգրացիայի մեկնելու այդ պատճառը գերակշռում է նաև երիտասարդ, միջին և այնուհետ ավագ սերնդի միգրանտների շրջանում: Այդ պատասխանի համար իրական հիմքը, բնականաբար, Հայաստանում գոյություն ունեցող գործազրկության բարձր մակարդակն է, որը 2017 թ. դրությամբ կազմել է 220,2 հազ. մարդ (տղամարդիկ՝ 116.9 հազ., կանայք՝ 103.3 հազ)⁶: Թե՛ տղամարդկանց և թե՛ կանանց շրջանում մեկ քառորդը արտերկրում աշխատելու պատճառները պայմանավորող կարևոր գործոններից է համարել ընտանիքի առաջնային կարիքները բավարարելու համար անհրաժեշտ գումար վաստակելու հանգամանքը: Ընդհանուր առմամբ, ընտանիքի տնտեսական ապահովման գործառույթը կարևոր ազդեցություն է թողնում ոչ միայն տղամարդկանց, այլև կանանց միգրացիայի վարքագծի ձևավորման գործում: Տղամարդ միգրանտների 13.4%-ը և կին միգրանտների 12.2%-ը պլանավորել են դրսում գումար վաստակել տան կառուցման/գնման, համապատասխանաբար 3.1% և 1.7%-ը՝ ամուսնության/ հարսանիքի և այլ արարողությունների, 5.1% և 4.2%-ը՝ երկարատև օգտագործման ապրանքներ (ավտոմեքենա, կահույք և այլն) ձեռք բերելու համար: Ինչպես տեսնում ենք, մեր օրերում փոխակերպման են ենթարկվում ընտանիքում կանանց կարգավիճակները և դերերը. միգրանտ կանայք իրենց վրա են վերցնում նաև ընտանիքի տնտեսական ապահովման գործառույթը, որը հայոց մեջ ավանդականորեն կատարել են տղամարդիկ: Դրա հետևան-

⁶ Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում, 2017, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն (այսուհետև՝ ԱՎԾ), http://www.armstat.am/file/article/trud_2017_9.pdf (13.10.2016):

քով ընտանիքում նրանց դիրքն ավելի է մոտենում տղամարդկանց կարգավիճակին և, շնորհիվ ձեռքբերված նյութական միջոցների և ռեսուրսների, կարողանում են ազդել նաև ընտանիքում կարևոր որոշումների կայացման վրա: Հարցման մասնակիցների չնչին տոկոսն է, որ ցանկացել է աշխատանքային միգրացիայի միջոցով դրամ վաստակել և դրանով հայրենիքում ձեռք բերել արտադրության միջոցներ (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Աշխատանքային միգրացիայի մեկնելու պատճառները՝ ըստ սեռի և տարիքի

Պատճառները	Միգրանտների սեռ		Միգրանտների տարիք		
	Արական	Իգական	18-29	30-49	50 և բարձր
Աշխատանքի բացակայությունը	50,0	53,8	55,1	51,3	50,0
Մասնագիտությամբ աշխատանքի բացակայությունը	3,1	4,2	1,4	3,9	5,6
Ընտանիքի առաջնային կարիքները բավարարելու համար անհրաժեշտ գումարի բացակայությունը	25,5	21,8	18,8	27,6	23,6
Տան կառուցման (գնման), վերանորոգման համար անհրաժեշտ գումարի բացակայությունը	13,4	12,2	14,5	10,5	13,9
Ամուսնության, հարսանիքի, օժիտի և այլ անհրաժեշտ արարողությունների համար գումարի բացակայությունը	3,1	1,7	1,4	2,6	2,8
Ավտոմեքենա, կահույք, տեխնիկա ձեռք բերելու համար անհրաժեշտ գումարի բացակայությունը	5,1	4,2	7,2	2,6	4,2
Արտադրության միջոցներ ձեռք բերելու համար անհրաժեշտ գումարի բացակայությունը	1,0	0,8	1,4	1,3	0,0
Ընդամենը	100,0	100,0	100,0	100,0	100,0

Ըստ հարցվածների կրթական մակարդակի՝ աշխատանքի բացակայությունը միգրացիայի պատճառ է համարել նաև բարձրագույն կրթություն ունեցողների 52.4%-ը: Այդ ցուցանիշը փաստում է այն մասին, որ միգրանտների կեսից ավելին Հայաստանում ստացել է բարձրագույն կրթություն, սակայն աշխատանքի բացակայության հետևանքով ստիպված է եղել մեկնել արտագնա աշխատանքի՝ դրսում կատարելու որակավորում չպահանջող ֆիզիկական աշխատանքներ (աղյուսակ 2):

Նախնական և միջին մասնագիտական կրթություն ունեցողները որպես աշխատանքային միգրացիայի պատճառ նշել են տեղում մասնագիտությամբ աշխատանքի բացակայությունը, և նրանց մի մասն էլ (14,3%), մեկնելով արտագնա աշխատանքի, ցանկանում է վաստակել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ հայրենիքում արտադրության միջոցներ ձեռք բերելու և սեփական գործ հիմնելու համար: Ըստ նույն աղյուսակի տվյալնե-

րի՝ անկախ միգրանտների կրթական մակարդակից՝ ընտանիքի առաջնային կարիքների բավարարումը համարվում է նրանց միգրացիոն վարքի ձևավորման կարևոր գործոն:

Աղյուսակ 2

Աշխատանքային միգրացիայի մեկնելու պատճառները՝ ըստ հարցվողների կրթական մակարդակի, %

Արտագնացության մեկնելու պատճառները	Թերի միջնակարգ	Միջնակարգ	Նախնական մասնագիտական	Միջին մասնագիտական	Բարձրագույն
Աշխատանքի բացակայությունը	42,9	58,1	42,9	45,5	52,4
Մասնագիտությամբ աշխատանքի բացակայությունը	0,0	1,1	14,3	3,0	9,5
Ընտանիքի առաջնային կարիքները բավարարելու համար անհրաժեշտ գումարի բացակայությունը	28,6	21,5	14,3	24,2	26,2
Տան կառուցման (գնման), վերանորոգման համար անհրաժեշտ գումարի բացակայությունը	28,6	11,8	14,3	15,2	9,5
Ամուսնության, հարսանիքի, օժիտի և այլ անհրաժեշտ արարողությունների համար գումարի բացակայությունը	0,0	3,2	0,0	3,0	0,0
Ավտոմեքենա, կահույք, տեխնիկա ձեռք բերելու համար անհրաժեշտ գումարի բացակայությունը	0,0	4,3	0,0	7,6	2,4
Արտադրության միջոցների ձեռք բերելու համար անհրաժեշտ գումարի բացակայությունը	0,0	0,0	14,3	1,5	0,0
Ընդամենը	100,0	100,0	100,0	100,0	100,0

Սոցիալ-տնտեսական առումով կարևոր է աշխատանքային միգրացիայի ունեցած ազդեցության բացահայտումը: Ըստ կարծիքների՝ աշխատանքային միգրացիան ընտանիքի վրա թողնում է երկակի՝ դրական և բացասական ազդեցություն: Աղյուսակ 3-ում ներկայացված է ընտանիքներում աշխատանքային միգրացիայի ունեցած դրական ազդեցությունը:

Ըստ այդ աղյուսակի՝ հարցվածների 86.2%-ի կարծիքով արտագնա աշխատանքի հետևանքով լուծվում են այդ ընտանիքների առաջնային կարիքները, քանի որ ձեռք բերված ֆինանսական միջոցներով հոգում են նրա անդամների սննդի, հագուստի, կացարանի և այլ կարևոր հարցեր: Այսինքն՝ Հայաստանի բնակչության աղքատության բարձր մակարդակի պայմաններում արտագնա աշխատանքը վերածվել է այդ ընտանիքների եկամուտների ձևավորման, նյութական վիճակի բարելավման և աղքատության հաղթահարման կարևոր միջոցի⁷: Բավական է նշել, որ, շնորհիվ աշխատանքային միգրացիայի, 2017 թ. դրսից ուղարկված ֆինանսական հոսքերը կազմել են 1.756.485 ԱՄՆ դոլար, որից 60.6%-ը՝ ՌԴ-ից⁸: Ֆինանսական այդ հոսքերը նպաստում են նաև Հայաստանում սոցիալ-տնտեսական լարվածության թուլացմանը: Հարցվածների 76.0%-ը համաձայն է այն կարծիքի հետ, որ արտագնա աշխատանքի միջոցով լուծվում է ընտանիքի աշխատունակ անդամների զբաղվածության հարցը և, շնորհիվ դրա, այլ երկրներում նրանք կարողանում են գտնել աշխատանք: Արտագնա աշխատանքի միջոցով վաստակած գումարներով նրանք լուծում են նաև ընտանիքի անդամների առջև ծառացած կրթական և առողջապահական խնդիրները, մասնավորապես հոգում են երեխաների դպրոցական և բուհական կրթության ծախսերը, օգտվում են վճարովի բժշկական ծառայություններից և այլն: Վերջին տեսակետի հետ համաձայն են հարցվածների համապատասխանաբար 79,2%-ը և 77.6%-ը: Ֆինանսական այդ միջոցներով լուծվում է նաև տուն կառուցելու/գնելու, վերանորոգելու (կարծիքի հետ համաձայն է հարցվածների 70.1%-ը) և ամուսնության, հարսանիքի, օժիտի, ինչպես նաև այլ անհրաժեշտ արարողությունների համար (կարծիքի հետ համաձայն է հարցվածների 71.6%-ը) ծախսերի հարցը: Այդ հանգամանքը միգրանտի ընտանիքի երեխաների համար ստեղծում է նաև որոշակի հնարավորություններ արտ-

⁷ Ըստ ՀՀ ԱՎԾ տվյալների՝ 2017թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ-ում աղքատության ցուցանիշը կազմել է 29.4%, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2017, <http://www.armstat.am/am/?nid=82&id=1988> (07.03.17):

⁸ ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց անունով կատարված դրամական փոխանցումների ներհոսքը 2017 թվականին, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիայի պետական ծառայություն, http://www.smsmta.am/?menu_id=52 (06.03.17).

երկրում ստանալու կրթություն կամ էլ ընտանիքով հաստատելու մշտական բնակություն: Այդ տեսակետներին համաձայնել են հարցվածների համապատասխանաբար 53.9%-ը և 58.8%-ը:

Աղյուսակ 3

Աշխատանքային միգրացիայի դրական ազդեցության վերաբերյալ դիրքորոշումները

Դրական ազդեցություն	Ընդհանրապես համաձայն չեմ	Ավելի շուտ համաձայն չեմ	Ավելի շուտ համաձայն եմ	Լիովին համաձայն եմ	Դժվարանում եմ պատասխանել	Ընդամենը
Լուծվում են ընտանիքի առաջնային կարիքները (երեխաների սննդի, հագուստի և այլ հարցեր)	4,4	8,3	58,1	28,1	1,0	100,0
Լուծվում է ընտանիքի աշխատունակ անդամների զբաղվածության հարցը	6,3	16,9	53,9	22,1	0,8	100,0
Լուծվում է ընտանիքի անդամների ուսման համար պահանջվող ծախսերի հարցը	4,4	14,8	53,4	25,8	1,6	100,0
Լուծվում է ընտանիքի անդամների առողջության հետ կապված ծախսերի հարցը	7,3	13,5	51,3	26,3	1,6	100,0
Լուծվում է տուն կառուցելու /գնելու, վերանորոգելու հարցը	11,7	15,6	46,9	23,2	2,6	100,0
Լուծվում են ամուսնության, հարսանիքի, օժիտի և այլ անհրաժեշտ արարողությունների համար ծախսերի հարցը	9,9	16,1	50,8	20,8	2,3	100,0
Ստեղծվում է արտերկրում երեխաներին կրթություն ստանալու հնարավորություն	14,6	26,3	38,8	15,1	5,2	100,0
Ընտանիքն ստանում է արտերկիր տեղափոխվելու և այնտեղ ապրելու հնարավորություն	14,3	22,7	42,4	16,4	4,2	100,0

Անդրադառնանք այն հարցին, թե աշխատանքային միգրացիան ինչ խնդիրներ է առաջ բերում ընտանիքում և ներընտանեկան հարաբերություններում: Այդ հարցի պարզաբանման համար հարցվածներին նույնպես առաջարկվել էին դատողություններ, որոնց հետ համաձայն լինելու կամ չլինելու վերաբերյալ նրանք արտահայտել են իրենց դիրքորոշումները (աղյուսակ 4): Այդ դիրքորոշումների մեջ առանձնակի տեղ է

գրավում միգրանտի և նրա ընտանիքի վրա այդ երևույթի թողած բացասական ազդեցությունը: Ընտանիքից միգրանտի երկարատև բացակայության և տարիներ շարունակ այլ երկրներում արտագնա աշխատանքի մեկնելու պատճառով սահմանափակվում են ընտանիքի մյուս անդամների հետ նրա շփումները, որն էլ իր հերթին առաջացնում է հոգեբանական այնպիսի երևույթ, ինչպիսին կարոտն է: Այդ մտքի հետ համաձայն է եղել հարցման մասնակիցների 97.7%-ը: Աշխատանքային միգրացիան, հարցվածների 90.1%-ի կարծիքով, լուրջ բացասական ազդեցություն է թողնում առողջական վիճակի վրա: Օրական միջին հաշվով 10-12 ժամ, հաճախ առանց հանգստյան օրերի, ծանր ֆիզիկական աշխատանքը, անկանոն սնվելը և ոչ ճիշտ սանիտարահիգիենիկ պայմանները մի շարք հիվանդությունների առաջացման են խթանում: Մյուս կողմից՝ Հայաստանում տարեցտարի ավելանում է նաև ՄԻԱՎ/ՁԻԱՀ սեռավարակակիրների թիվը, որը, մասնագետների վկայությամբ, հիմնականում պայմանավորված է Ռուսաստանի Դաշնություն արտագնա աշխատանքի մեկնող միգրանտների վարքով: Երիտասարդ և միջին տարիքի միգրանտներն այնտեղ ձեռք են բերում սեռավարակ հիվանդություն և վերադառնալուց հետո փոխանցում ընտանիքին⁹: Հարցվածների 89.4%-ը կողմնակից է այն կարծիքին, որ արտագնա աշխատանքի հետևանքով ընտանիքում լարվում են ամուսին – կին հարաբերությունները, 87.7%-ը՝ ավելանում է ամուսնալուծվողների թիվը, 87.2%-ը՝ տուժում է երեխաների դաստիարակության գործը: Աշխատանքային միգրացիայի պատճառով խաթարվում են ընտանիքի ձևավորման կարևոր կենսափուլերը. ամուսնանալուց անմիջապես հետո արտագնա աշխատանքի մեկնելը, առաջին կամ երկրորդ երեխայի ծննդյան ընթացքում արտագնա աշխատանքի վայրում գտնվելը, երբեմն նաև երեխաների նշանադրությանը և ամուսնությանը չմասնակցելը բացասական ազդեցություն են թողնում ընտանիքի ամրության վրա: Դրա հետևանք

⁹ Նման մարդկանց թիվը ամենաբարձրն է Շիրակում և Գեղարքունիքում: Ըստ ՀՀ առողջապահության նախարարության ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի տվյալների՝ 1988-2015 թվականներին մեր հանրապետությունում գրանցվել է ՀՀ քաղաքացիների՝ ՄԻԱՎ վարակի 2214 դեպք (334-ը՝ միայն 2014 թ. ընթացքում. առավելագույնն է նախորդ տարիների համեմատ)⁹: Այդ դեպքերի 75%-ը տեղի է ունեցել միգրացիայի հետևանքով: Տե՛ս «Իսրայելի դեպքեր, թմրամոլ էր, խաղամոլ... հետո պարզվեց, որ ՄԻԱՎ ունի ու ինձ էլ է փոխանցել». լրություն և զոհաբերություններ՝ հանուն հասարակական կարծիքի, <http://medialab.am/news/id/6756> (03.03.2016):

քով համայնքներում ավելացել է ամուսնալուծված, լքված ընտանիքների թիվը¹⁰:

Աղյուսակ 4

Աշխատանքային միգրացիայի բացասական ազդեցության վերաբերյալ դիրքորոշումները

Բացասական ազդեցություն	Ընդհանրապես համաձայն չեմ	Ավելի շուտ համաձայն չեմ	Ավելի շուտ համաձայն եմ	Լիովին համաձայն եմ	Դժվարանում եմ պատասխանել	Ընդամենը
Տուժում են ամուսին-կին փոխհարաբերությունները	2,3	7,6	33,1	56,3	0,8	100,0
Տուժում է երեխաների դաստիարակության գործը	1,3	10,9	28,9	58,3	0,5	100,0
Տուժում է ծերերին և հիվանդներին անհրաժեշտ խնամքով ապահովելու հարցը	6,5	20,6	27,9	44,0	1,0	100,0
Ավելանում է ամուսնալուծվողների թիվը	2,1	8,6	32,8	54,9	1,6	100,0
Ավելանում է չամուսնացածների թիվը	2,9	8,6	38,0	49,2	1,3	100,0
Տուժում են արտագնա աշխատանքի մեկնողի բարոյական նորմերը	6,5	17,4	30,2	42,2	3,6	100,0
Տուժում է արտագնա աշխատանքի մեկնողի առողջությունը	1,6	7,0	35,2	54,9	1,3	100,0
Օտար միջավայրում մեծանում է նրան սպառնացող վտանգը	1,8	7,0	34,4	55,2	1,6	100,0
Ընտանիքում ուժեղանում է միգրանտի նկատմամբ կարոտը	,5	1,0	25,0	72,7	0,8	100,0

¹⁰ Ըստ ԱՎԾ 2018 թ. հունվարի 1-ի տվյալների՝ Հայաստանում ամուսնությունների թիվը կազմել է 16 924 մարդ, իսկ ամուսնալուծություններինը՝ 3648 մարդ (22.3%), ընդ որում՝ դրա մի մասը մասնագետները կապում են աշխատանքային միգրացիայի հետ: Տե՛ս Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2017, <http://www.armstat.am/am/?nid=82&id=1991>:

Ըստ հարցվածների՝ այդ ընտանիքներում միգրանտներն ավելի քիչ դերակատարում են ունենում երեխաների սոցիալականացման գործընթացներում և դաստիարակության գործում: Միգրացիան իր ազդեցությունն է թողնում այդ ընտանիքների ժողովրդագրական վարքագծի վրա, որի հետևանքով ավելանում է չամուսնացած երիտասարդների թիվը: Աշխատանքային միգրացիան երիտասարդների համար դարձել է նաև հանրապետությունից արտագաղթի կարևոր միջոց, ըստ այդմ՝ Հայաստանում շատացել է «դատարկ բույնի» նմանվող տարեց ընտանիքների թիվը: Դրանից տուժում է նաև ընտանիքում ծերերին և հիվանդներին անհրաժեշտ խնամքով ապահովելու հարցը:

Այսպիսով, Հայաստանից այդ երևույթի հետագա մեղմացմանը կարող է նպաստել հանրապետությունում գոյություն ունեցող միգրացիայի վանող գործոնների կարգավորումը, այն է՝ աշխատունակ բնակչության շրջանում գործազրկության մակարդակի կրճատումը և նոր աշխատատեղերի ստեղծում, բնակչության կենսամակարդակի բարձրացում և աղքատության հաղթահարում: Դրանք կնպաստեն միգրանտների առաջնային կարիքների բավարարմանը, տեղում զբաղվածության բարձրացմանը և հանրապետությունից միգրացիոն հոսքերի կրճատմանը: Մյուս կողմից աշխատանքային միգրացիայի կարգավորումը հիմք կարող է դառնալ սոցիալական մի շարք խնդիրների լուծմանը, մասնավորապես ամուսնալուծված, կոնֆլիկտային և քված ընտանիքների թվի կրճատմանը:

СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКИЕ ПОСЛЕДСТВИЯ ТРУДОВОЙ МИГРАЦИИ В РА

ГАЛСТЯН М.В.

Резюме

Трудовая миграция создает для Армении ряд серьезных социально-экономических проблем, всестороннее изучение которых имеет важное практическое значение с точки зрения ее дальнейшего регулирования. Проведенные в РА этносоциологические исследования позволяют выявить причины трудовой миграции и ее социально-экономические послед-

ствия на уровне индивидуума, семьи и общества. Дальнейшее решение проблемы предполагает регулирование существующих в республике отталкивающих от миграции факторов, что может привести также к ослаблению негативных социальных явлений.

SOCIAL-ECONOMIC IMPACTS OF LABOUR MIGRATION IN THE REPUBLIC OF ARMENIA

M. GALSTYAN

Abstract

Labour migration creates many critical social-economic problems for Armenia. A comprehensive study is required that will have practical significance and contribute to effective regulation of these problems. Therefore, ethno-sociological research was conducted among the Armenian population to explore the reasons for labour migration and its social-economic impacts at the individual, family and society levels. The problem's further statement implies regulation of factors preventing migration existing in the republic which may also contribute to the decrease of its negative impacts.

СОЦИАЛЬНО-ДЕМОГРАФИЧЕСКИЕ И ЭТНОКУЛЬТУРНЫЕ ОРИЕНТАЦИИ МОЛОДЕЖИ АРМЕНИИ И РОССИИ¹

СТАРЧЕНКО Р.А., КАРАПЕТЯН Р.С., ОСТАПЕНКО Л.В.,
СУББОТИНА И.А.

В нынешний, достаточно сложный исторический период, характеризующийся обострением отношений между странами и народами, ростом недоверия и враждебности, резким подъемом угрозы терроризма, снижением рождаемости, сокращением численности трудоспособного населения в развитых странах и одновременно интенсивно расширяющимися миграционными процессами, итогом которых становится столкновение культур и мировоззрений, принципиально важное значение приобретает проблема участия молодежи в решении важнейших социально-экономических, демографических и этнокультурных задач. Весьма остро встает вопрос о готовности молодежи достойно ответить на вызовы времени, о достаточности ее потенциала, об интересах, ориентациях и жизненных ценностях молодого поколения.

Нельзя не отметить, что молодежь XXI века отличается такими позитивными качествами, как техническая эрудиция, быстрота мышления, владение языками, глобальность взглядов и т.п. Принципиально важно, что над поколением конца 1990-х – начала 2000-х годов уже практически не довлеют стереотипы прошлого, в том числе периода «холодной» войны, страшных событий Второй мировой с огромными человеческими жертвами, масштабными разрушениями и бедствиями, вызвавшими колоссальный всплеск ненависти и отчуждения между народами. Особый смысл имеет и то, что именно молодежь в наибольшей мере заинтересована в развитии связей между странами, т.к. это от-

¹ Программа международного исследовательского проекта. Публикуется при поддержке исследовательского проекта РФФИ №18-59-05001.

крывает простор для массовых перемещений людей в поисках лучших условий жизни и труда.

Современные юноши и девушки являются активными пользователями социальных сетей, благодаря которым могут общаться с жителями разных стран и континентов, тем самым, налаживая отношения между представителями различных культур. Модель поведения молодежи становится все более нацеленной на социальное продвижение, интеграцию в мировое сообщество. При этом особое значение приобретает уровень патриотических ориентаций молодых людей, чьи таланты нужны стране, которая их вырастила и дала образование.

В то же время, как показывает реальность, участие немалой части молодежи многих развитых стран, в том числе России и Армении, в общественной и политической жизни остается пассивным и характеризуется аполитичностью и незаинтересованностью. Согласно последним данным социологических исследований, среди жизненных ценностей лидируют те, что связаны исключительно с личной, семейной жизнью – здоровье, хорошие семейные отношения, безопасность своя и членов семьи.

Многие представители нынешнего молодого поколения или стараются полностью дистанцироваться от политических и социальных проблем, или выплескивают свою энергию в противоборство с правительством и полицией своих стран, отстаивая интересы конкретных групп населения. Мало того, молодежь нередко сама выступает инициатором межэтнических конфликтов, особенно в регионах с усиленным миграционным притоком иноэтнических групп, в силу не только специфики возрастной психологии, но и наличия особых социально-экономических и культурных проблем (получение образования, трудоустройство, приобретение жилья и т.п.). Эти трудности вызывают социальную напряженность и зачастую проецируются на сферу межэтнических отношений.

Для некоторых групп современных молодых людей становится характерным предпочтение виртуального мира реальному. Все больше юношей и девушек не желают работать и выбирают стратегию иждивенчества. Во многих странах среди молодежи становятся серьезными

проблемами алкоголизм и наркомания. Европейские ценности все шире распространяются по всему миру в качестве идеала, призывают людей, в первую очередь, молодежь свободно выбирать свой образ жизни, ориентироваться только на личные интересы, в результате чего растет число безработных, бездетных семей, не желающих иметь детей, матерей-одиночек, женщин, отказывающихся от своих детей, внутрисемейных конфликтов, в том числе с применением физической силы и т.п.

Проблема повышения социальной ответственности молодежи, совершенствования ее нравственной культуры, а также роста степени участия в общественной жизни, в социально-экономических, политических и демографических процессах, в налаживании и развитии межгосударственных, межэтнических и межконфессиональных контактов, в миротворческой деятельности носит глобальный характер, являясь общей и для многих государств постсоветского пространства. Но вполне понятно, что в разных странах, с разными условиями жизни и разным этническим составом, особенностями исторического прошлого, мировоззрения, традиционной культуры и т.п. различны ее характер, масштабы, формы проявления, и соответственно, пути решения. В этой связи особое значение при исследовании данной актуальной проблемы приобретает этнорегиональный подход.

В силу своей остроты молодежная проблематика находится в центре внимания не только широкой общественности и СМИ многих стран мира, но и руководящих органов, религиозных и общественных организаций, ученых. Однако вопросы этнической толерантности, межэтнического взаимодействия далеко не всегда рассматриваются в связке с молодежной тематикой.

На сегодняшний день российскими исследователями в области разработки молодежных проблем накоплен немалый научный багаж. Немаловажное значение имеют, прежде всего, теоретико-методологические исследования Ю.В. Арутюняна, М.Н. Губогло, Л.М. Дробизевой, Т.И. Заславской, А.Г. Здравомыслова, Е.А.Здравомысловой, И.С. Кона, В.Т. Лисовского, Р.В. Рывкиной, Н.М. Римашевской, В.А. Тишкова, А. Темкиной и др. В рамках названной проблематики особую ценность пред-

ставляют изыскания, нацеленные на изучение социальных проблем, касающихся региональной молодежи. В этом ряду, прежде всего, можно назвать работы Т.П. Абазовской, К.О. Айтбай, З.В. Анайбан, Н.А. Гущиной, Е.А. Гришиной, А.Н. Демина, Д.П. Дербенева, Д.Д. Ешпановой, Е.М. Михеевой, Б.А. Ручкина, С.П. Иваненкова, И. Черкашиной и др. Изучение проблем молодежи в различных конкретно-исторических и этнокультурных условиях осуществлялось в исследованиях Е.В. Андропова, Ю.Андреевой, В.В. Гаврилюк, Т.М. Дадаевой, В.В. Костюшева, Л.В. Остапенко, З.В. Сикевич, Г.Г. Силласте, И.А. Субботиной, А.Н. Тесленко, Л.П. Швеца, О.Ю. Щепкина, М.В. Энговатова. Вопросами «включенности» молодежи в этнокультурные процессы занимались Т.Н. Бояк, О.А. Губарева, Е.Л. Омельченко, Б.А. Федулов. В то же время большинство специалистов, работающих в сфере молодежной тематики, основное внимание уделяют, прежде всего, вопросам патриотического и нравственного воспитания, трудовой занятости и образования, досуга молодых людей, молодежным группировкам и т.п. (Д. Громов, В.Н. Кузнецов, А. И. Ковалева, О.Ф. Киселева, Г.А. Чередниченко, В.И. Чупров и др.). Объемный массив публикаций в виде монографий, сборников статей, материалов конференций по молодежной тематике имеется и за рубежом. Хотя здесь все больше прослеживается тенденция исследования данной проблемы в этническом ракурсе (Р. Баумайстер, У. Джеймс, Дж. Мид, Э. Фромм, В. Хесле, К. Корнаи), изучается не молодежь вообще, а конкретная этническая группа. Заметно расширяется и география исследований, когда объектом изучения становится молодежь сразу нескольких стран. Вместе с тем, в работах зарубежных специалистов при анализе тех или иных сторон жизнедеятельности молодежи по-прежнему большое внимание уделяется проблемам труда и занятости, а также образовательному аспекту (С. Майлс, Г.С. Марфи, М. Мид, С. Фрис, М. Яхода и др.)².

² **Анайбан З.В.** Молодежь Тувы и Хакасии в XXI веке, отв. ред. Д.Д. Васильев (М., 2017, 240 с.+12 илл.); Этносоциологические очерки [**Бояк Т.Н.** Русская сельская молодежь: трансформация духовно-нравственных ценностей (на материалах Респуб-

Можно сказать, что на сегодняшний день на фоне значительного количества работ по молодежной проблематике все еще до конца не заполнен пробел, касающийся исследований участия молодежи в процессах межнационального, межэтнического и межконфессионального взаимодействия в этнорегиональной проекции.

Авторы международного совместного армяно-российского исследования, программа которого представлена в данной статье, пытаясь внести свой вклад в изучение объявленной темы, видят свою основную задачу в исследовании социально-демографических и этнокультурных взглядов и ориентаций современной молодежи двух стран в этнорегиональном разрезе. При этом особое внимание предполагается уделить изучению роли молодых людей в развитии и укреплении межэтнического сотрудничества, межнационального и межконфессионального взаимодействия в целях снижения политической напряженности, установления более дружественных доверительных отношений между странами и народами.

Рассмотрение проблемы в этнорегиональном ракурсе представляется достаточно актуальным, т.к. сравнение материалов исследования в разных регионах с разным этническим составом, разным уровнем социально-экономического развития, политическими настроениями, демографическими и культурными традициями населения не только позволит показать условия и факторы, влияющие на интересы, ориентации и поведение молодежи, но и повысит значимость полученных результатов и выводов, сделать их более универсальными, распространить на другие территории и т.п.

лики Бурятия и Читинской области)], Улан-Удэ., 2007; **Киреев Е.Ю., Красниковский В.Я., Сазонов А.А., Сазонова А.Л.** Молодежь Москвы: ценностные приоритеты, стратегии поведения и перспективы развития, М., 2013; **Савва И.В., Чупров В.И.** Этнический статус в молодежной среде (Социологические исследования, 1992, № 7, с. 20-30); **Сабитов М.Р.** Межнациональные отношения молодежи в полиэтничной среде (опыт Республики Башкортостан) (Евразийский юридический журнал, 2015, № 9 (88), с. 313-316); **Шакирова А.Ф.** Формирование культуры межнациональных отношений сельской молодежи в полиэтничной социальной среде. Автореферат дисс. кандидата педагогических наук, Казань, 2003.

С точки зрения российских интересов, представляется важным сравнение социальной активности и этнической толерантности молодежи в странах постсоветского пространства. Жившие ранее в одном государстве, исповедующие одну идеологию, имевшие массу общего в социально-культурном развитии, говорившие в большинстве случаев на одном языке, граждане образовавшихся после распада СССР республик стали заметно расходиться по многим жизненным параметрам. В особенности это касается молодого поколения, выросшего уже в новых условиях и знающего о существовавшем когда-то едином государстве лишь со страниц учебников и по рассказам родителей.

Несмотря на постепенное налаживание межгосударственных отношений между Россией и рядом других стран, так называемого, ближнего зарубежья, «разъединительная» тенденция продолжает действовать даже между такими близкими странами как Россия и Беларусь, не говоря уже об Украине. В нашем исследовании в качестве исследовательского полигона наряду с Россией была выбрана Армения.

Армению можно назвать одной из наиболее дружественных по отношению к России стран. Общность исторического прошлого, участие Армении в интеграционных процессах, активная миграция армянского населения в Россию, широкое расселение армян по ее территории и их высокий адаптационный и интеграционный потенциал делают Армению своеобразным опытным полем, на котором могли бы тестироваться методы работы по укреплению интернациональных чувств и убеждений молодежи. Мононациональный состав республики (95% населения – армяне), с одной стороны, и наличие огромных “старой” и “новой” зарубежных диаспор (две трети армян живут вне Армении) – с другой, определяют своеобразие современной армянской молодежи. Важно, что в течение XX столетия в местное население Армении активно вливались приезжие – мигранты как из республик бывшего СССР, так и из многих зарубежных стран, что влияло на формирование ценностей и ориентаций армянской молодежи. В процессе адаптации приезжего населения происходила взаимная интеграция представителей различных субкультурных групп этноса, сформировавшихся в своей и

иноэтнической среде. Наличие широких и интенсивных связей между живущими в разных странах армянами создает ситуацию открытости и вследствие этого подверженности молодого поколения республики влиянию тех социальных и культурных ориентаций, которые превалируют как на постсоветском пространстве, так и в большинстве регионов мира. Нельзя не отметить и то, что Армения прошла все процессы так называемого переустройства общества не только более высокими темпами по сравнению с другими постсоветскими странами (она первая провела земельную реформу, приватизацию, политическое переустройство), но и более болезненно, преодолевая последствия землетрясения, энергетического кризиса, войны. Если учесть это обстоятельство, а также общую тенденцию моноэтнизации стран, образовавшихся на постсоветском пространстве, происходящие в Армении процессы могут быть показательными для других постсоветских республик.

Исследование предполагается провести в Москве и Ереване. Выбор Москвы был обусловлен, прежде всего, тем, что это полиэтничный мегаполис, отличающийся особенно высоким уровнем иноэтничной миграции, в том числе армян, где характер межэтнических отношений далеко не всегда бывает спокойным. Важно учесть и то, что московская молодежь значительно дифференцирована как в социально-экономическом, так и в культурном отношении. В то же время московскую молодежь в определенной мере можно назвать неким эталоном, на который ориентируются молодые люди из других российских регионов. Она часто находится в центре внимания СМИ, на ее взгляды, поступки, манеру поведения нередко обращают внимание иностранцы. Ее социальная активность, участие в миротворческой, общественной деятельности сейчас особенно необходимы для поддержки устойчивого развития России. Столицу Армении отличает то, что она всегда была локомотивом урбанизации, следовательно, этносоциальных процессов. Ее население, по данным на 2016 год, составляло более трети всего населения страны. Сегодня, как и в прошлом, большинство высших учебных заведений Армении сосредоточено в столице, где обучается более $\frac{3}{4}$ из 75 тысяч студентов республики. Из-за постсоветских социально-

экономических проблем, усугубленных катастрофическим землетрясением, блокадой и войной, столичный мегаполис стал центром миграции молодежи из остальных районов и городов Армении. Очевидно также, что происходящие в среде столичной молодежи этносоциальные процессы являются показательными для всего молодого поколения республики.

Изучение проблемы предполагает множественный подход. Молодежь, являющаяся объектом нашего исследования, будет рассматриваться в трех ипостасях – как представитель своего поколения, как представитель своей страны, как представитель той или иной этнической общности. Ее социально-демографические и этнокультурные ориентации будут анализироваться как на уровне мировоззрения, так и на уровне поведения, будет изучено отношение молодежи разной этнической принадлежности к тем или иным взглядам, поступкам, нормам морали и поведения и т.п., их оценка. Будут разработаны критерии для определения уровня социальной активности молодежи и ее этнической толерантности.

В качестве основного метода сбора материалов предполагается применить этносоциологический опрос. К опросу будет привлечена молодежь титульной национальности как представитель большинства населения своих стран: в Москве – русские, в Армении – армяне. Помимо массового опроса для сбора информации намечены проведение углубленных интервью, опрос экспертов, а также анализ статистических и документальных материалов, материалов СМИ, религиозных и национально-культурных организаций.

По окончании проекта предполагается получить данные об особенностях взглядов, интересов, ориентаций и установок современных молодых столичных жителей Армении и России (армян и русских) в социально-демографической и этнокультурной областях, их потенциальных возможностях в развитии межэтнических контактов в зависимости от ряда демографических, социально-экономических, образовательных и других характеристик. Будет предложен анализ сведений о социальных планах молодых людей, их жизненных ценностях, об уровне их удовле-

творенности теми или иными сторонами жизни, политических симпатиях и протестных настроениях, языковых ориентациях, об отношении молодежи к людям той или иной этнической принадлежности, об уровне этнического самосознания молодежи, структуре ее идентичности и т.п.

Итогом исследования должно стать выявление и развернутая характеристика групп молодых людей с различным уровнем социальной активности, в том числе тех, чьи интересы ориентированы только на себя и свою семью («интраверты»), и тех, кто в большей мере ориентируется на потребности всего общества («экстраверты»). Будут подведены итоги анализа реального и перспективного участия молодежи разных национальностей и стран в процессе оптимизации межгосударственных, межэтнических и межконфессиональных отношений, а также предложены некоторые практические рекомендации.

Значимость подобных исследований обусловлена возможностью реального использования полученных результатов как при решении различных проблем молодежи, так и урегулировании разного рода социальных и этнических напряжений. Выдвигаемые в работе положения и выводы могут дополнить разрабатываемую отечественными исследователями теорию гендерных исследований в части определения и конкретизации особенностей молодежной проблематики с учетом этнической и региональной специфики.

Важно отметить, что как армянские, так и российские ученые, принимающие участие в проекте, уже имеют солидные наработки в изучении молодежной проблематики.

За многие годы работы в Центре по изучению межэтнических отношений Института этнологии и антропологии РАН авторы проекта с российской стороны накопили немалый опыт в изучении данной проблемы и собрали богатый фактический материал в ряде стран СНГ. Так как основным методом исследования всегда служили массовые этносоциологические опросы по разработанным авторами анкетам, все полученные материалы можно назвать новыми и оригинальными. Сочетание нескольких методов исследования, в том числе социологических и психологических также давали возможность осветить то или иное явле-

ние с разных сторон, выявить те грани, которые с трудом поддаются изучению с помощью какого-либо одного метода. В арсенале авторов имеются материалы исследования по следующим проектам: «Стратегия поведения русской молодежи в странах нового зарубежья» (1997-1998 гг.), «Русские в Молдавии: миграция или адаптация?» (1998 г.), «Этнорегиональные модели адаптации» (2000-2002 гг.), «Технологии преодоления социально-экономического неравенства при построении гражданского общества в Республике Молдова» (2007 г.), «Москва многонациональная: формирование гражданской солидарности, культуры мира и согласия (2005-2007 гг.), «Российские армяне» (2015-2016 гг.). В 2013-2015 гг. было осуществлено международное исследование совместно с Кыргызстаном по проекту, финансируемому РФФИ, – «Молодежь в системе межэтнического взаимодействия в полиэтнических средах». В 2008 г. среди московской молодежи был проведен опрос по теме «Межэтнические отношения в Москве».

Авторы армянской части проекта, длительное время работавшие в стенах Института археологии и этнографии НАН РА, также собрали весомую базу данных по изучаемой теме. Проведенные ими в 1976, 1980, 1993, 2000, 2005 и 2007 гг. этносоциологические исследования различных групп городского и сельского населения (с применением методов стандартизированного интервью) Армении, включая и молодежь, по совместной с Ю.В. Арутюняном (Институт этнологии и антропологии РАН) программе, позволили авторам получить качественно новый и для республики весьма ценный материал. Сочетание множества методов исследования, в том числе этнологических, социологических и психологических, а также неоднократное повторение подобных исследований позволили рассмотреть происходящие в республике процессы в более чем тридцатилетней динамике. Таким образом, у авторов, задействованных в проекте, имеются материалы исследований по следующим темам: «Этносоциальные процессы в Армении» (1976-2007); «Свободное время у молодежи малого города» (2008-2009), целевая программа «Армяне в своей и инонациональной среде: опыт, проблемы и перспективы исследований» (2011-2020), «Роль армянской диаспоры в

российско-армянских экономических отношениях”(совместный российско-армянский проект, 2012-2013), “Этносоциальные последствия трудовой миграции из Армении в Россию” (совместный российско-армянский проект, 2016); “Пути интеграции сирийских армян-беженцев в Армении” (2014-2015); “Предприниматели диаспоры в Армении: опыт деятельности” (2016-2017); “Армяне в Беларуси и Армении” (совместный белорусско-армянский проект, 2017-2019).

Данное исследование должно помочь привлечению внимания общества и политических деятелей к вопросу повышения участия современной молодежи в решении этносоциальных и этнокультурных проблем.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԵՎ ԷԹՆՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՍՏԱՐՉԵՆԿՈ Ռ.Ա., ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Ռ.Ս., ՕՍՏԱՊԵՆԿՈ Լ.Վ.,
ՍՈՒԲՈՏԻՆԱ Ի.Ա.

Ամփոփում

Ռուսաստանի և Հայաստանի ժամանակակից երիտասարդության սոցիալ-ժողովրդագրական և էթնոմշակութային կողմնորոշումների ուսումնասիրությանն ուղղված միջազգային գիտական նախագծի ծրագիրը վերոնշյալ հիմնախնդիրների քննության համար սկզբունքորեն կարևոր և համեմատաբար նոր էթնոտարածքային մոտեցում է առաջարկում:

Որպես հետազոտության առարկա՝ հանդես է գալիս Ռուսաստանի և Հայաստանի ռուս և հայ ազգությունների երիտասարդությունը: Ընդ որում, նախագծի շրջանակում հատուկ ուշադրություն է հատկացվում ոչ միայն հիմնախնդիրները և նպատակները քննարկելուն, ուսումնասիրության մեթոդաբանությանը, այլ նաև հայրենական ու արտասահմանյան գիտնականների կողմից թեմայի մշակվածության աստիճանի վերլուծությանը:

SOCIAL-DEMOGRAPHIC AND ETHNOCULTURAL ORIENTATION OF THE ARMENIAN AND RUSSIAN YOUTH

R. STARCHENKO, R. KARAPETYAN, L. OSTAPENKO, I. SUBBOTINA

Abstract

The program of an international scientific project aimed at studying the socio-demographic and ethno-cultural orientations of the contemporary youth of Russia and Armenia. This project offers a fundamentally important and relatively new ethno-regional approach to addressing the above-mentioned problems. The object of the study is the capital youth of the titular nationality of Russia and Armenia. Particular attention is paid to the statement of the problem, the goals and objectives of the project, the methodology of the study, as well as to the analysis of the degree of development of the topic by domestic and foreign scientists.

АВТОРСКИЙ ЗАМЫСЕЛ "ХРОНИКИ АРМЕНИИ" ЖАНА ДАРДЕЛЯ

КАРАГЕЗЯН Г.Л.

История Киликийского Армянского государства, воссозданная по армянским историческим источникам¹, как бы обрывается на 1340-ом годе. Тридцать пять лет существования этого государства, фактически, не освещаются армянской историографической наукой. И здесь приходит на помощь восточная и особенно западноевропейская историография, позволяющая восполнить этот существенный пробел. В этой связи огромный интерес представляет "Хроника Армении" Жана Дарделя, позволяющая восстановить историю Киликийского Армянского царства в последние десятилетия его существования – в период царствования династии Лузиньян, а также жизнь и деятельность последнего царя Киликийской Армении Левона V Лузиньяна, что являет собой, по мнению известного французского историка Сен-Мартена, "наиболее неизвестную, трудную и, возможно, наиболее интересную в истории средних веков проблему..."².

"Хроника Армении" Жана Дарделя, написанная в конце XIV века (точная дата не установлена³), начинается со времен Иисуса Христа

¹ "Хроника" Матвея Эдесского, рифмованные хроники Нерсеса Шнорали и Григория Отрока, "История Армении" Киракоса Гандзакеци, "Всеобщая история" Вардана Вардапета (Аревелци), "Летопись", приписываемая Смбату Гундстаблю, "История Татар" Григора Акнерци (Магакя), "История" Хетума Патмича, "Хронография" Нерсеса Палианенца, "История Рубенидов" Ваграма Рабуни и т.д.

² **Saint-Martin J.** Recherches sur la vie et les aventures de Léon, dernier roi des Arméniens (Mémoires de l'Académie des Inscriptions, 1836, T. XII, p. 147).

³ Можно определить лишь дату завершения "Хроники...". Последнее событие, о котором в ней повествуется – въезд Левона Лузиньяна в Париж 30 июня 1384 года.

вплоть до 1387 года. Она состоит из 144 глав, какие-либо другие формальные единицы структурного членения отсутствуют. Тем не менее, композиционно и по внутренней (смысловой) структуре “Хроника” распадается на три части. Первая часть (1-24 главы) посвящена истории Армении, от Абгара до последнего царя династии Хетумидов. Вторая часть – (24-42 гл.) – периоду активизации фамилии Лузиньян на Востоке и, в частности, в Киликийской Армении. Третья часть (42-144 гл.) – это история прихода к власти Левона V Лузиньяна, описание периода его правления и связанных с ним приключений.

Последняя часть “Хроники Армении” – история жизни Левона Лузиньяна, пожалуй, самая ценная. В ней эпоха освещается “изнутри”, а исторические реалии воссоздаются под углом зрения участника и очевидца событий. Вместе с тем, эта часть “Хроники” – самый оригинальный отрывок повествования. Она представляет собой сплав различных жанров: хроники, истории, мемуаров, автобиографии. Наряду с этими жанрами “Хроника Армении” содержит элементы популярного в средневековье рыцарского романа (заточение героя в крепости, попытка его убийства, побег, женитьба, период царствования, ранение, плен, странствия и т.д.) и жития (верность католической церкви, муки египетского плена, отказ от обращения в мусульманскую веру, скитания, посвящение святому делу освобождения христианской Армении от неверных). Комбинация в “Хронике” столь неоднородных и разнохарактерных жанров приводит к трансформации историографических традиций, к утрате четких жанровых критериев. На базе хроники и мемуаров, приближающих историю о Левоне Лузиньяне к исторической действительности, а также авантюрного романа и жития, отдаляющих от нее, создается своеобразная имитация исторического повествования. Придерживаясь летописной манеры изложения, акцентируя внимание на выигрышных моментах биографии Левона, делающих его в глазах читателя “рыцарем – мучеником”, автор игнорирует, а порой и искажа-

Жан Дардель же умер в декабре того же года. В промежутке между этими двумя датами и была закончена “Хроника...”.

ет историческую "правду". Этим и объясняются некоторые неточности в хронологии, противоречащие друг другу датировки событий, отсутствие логической нити повествования. Вместе с тем "Хронику Армении" отличает тенденциозность, а ее автора – субъективизм в истолковании фактов, что объясняет в ряде случаев характер неточностей и деформацию подлинной истории. В "Хронике" не только материал субъективно организован вокруг Левона Лузиньяна и фамилии Лузиньян, но и историческое время. Из временного потока вычленены исторические события, не отвечающие идейной структуре хроники. Так, в хронике умалчивается факт провозглашения в 1368 году Пьера I – короля Кипра – с согласия папы Урбана V и армянского народа царем Киликийской Армении. Автор "Хроники" не только не упоминает об этом факте, но и утверждает, что папа высказался только за Левона V. Или же хроника ставит в заслугу Ги Лузиньяну приоритет в деле союза с Римом, хотя инициатором западной ориентации был его предшественник Левон IV из династии Хетумидов. Если часть фактов искажена умышленно, соответственно авторскому замыслу, то другая – непроизвольно, в силу недостаточной компетентности автора в вопросах истории армянского народа. Особенно это касается погрешностей, которыми изобилует первая часть "Хроники". Тем не менее, несмотря на ряд неточностей, "Хроника Армении" – исторический документ, представляющий большую научную ценность. Она содержит целую систему неизвестных в исторической науке фактов, позволяющих восстановить довольно-таки длительный период истории Киликийской Армении. Заключение в "Хронике" материал предоставляет возможность отклонить или принять серию гипотез, с помощью которых, в силу отсутствия исторических источников, делалась попытка воссоздать этот отрезок истории. Правдивость значительной части хроники не может быть поставлена под сомнение: историческая достоверность приводимых хроникой фактов подтверждается данными, сообщаемыми другими историческими источниками. Так, например, приведенные в хронике сведения относительно осады Сиса и некоторые события 1374-1375 гг., а также сведения относительно кипрского плена Левона Лузиньяна, подтвер-

ждаются письмом Клементя VII от 4-го июля 1381 года архиепископу Таррагоны⁴. Информацию о передаче в дар Левону королем Кастилии Хуаном I Мадрида, Вильяреала и Андухара подтверждается соответствующими актами⁵, а факт преподнесения Левону Лузиньяну “Золотой Розы” – документами архива Ватикана⁶. Большая часть фактов относительно переговоров с Западом по вопросу освобождения Левона V обнаруживается в документах Арагона, Каталонии, Прованса⁷. Информация относительно участия королей Кастилии, Арагона и Наварры в судьбе Левона V, а также приема, оказанного ему Карлом VI, помимо “Хроники” Дарделя, приводится в “Сен-Дениских Хрониках” Жувенеля дез Юрсена, в “Хрониках” Жана Фруассара, в “Хронике Монпелье” под названием “Petit Talamus”⁸.

Невольно возникает вопрос: каково участие Левона Лузиньяна в создании памятника? Ряд исследователей, в их числе Август Каррьер⁹ и Шарль Келер, убеждены, что автором “Хроники” является Левон Лузиньян. Проведя доскональный анализ всех частей “Хроники”, Келер заключает, что “рассказы Левона V – главный источник хроники” и что “материал снабжен, иными словами, продиктован Жану Дарделю Левон Лузиньяном”¹⁰. Аналогичного мнения относительно авторства хроники придерживается и Клод Мутафян: “Часть (хроники), относящаяся

⁴ **Köhler Ch.** Chronique d'Arménie par Jean Dardel (Recueil des historiens des croisades: Documents arméniens', Paris, t. II, 1906, p. XIX.

⁵ Там же.

⁶ **Carrière A.** La rose d'or du roi d'Arménie, Léon V (Revue de l'Orient latin, t. IX, 1902, p. 1-5).

⁷ Эти документы собраны Виктором Ланглуа и Эдуардом Дюлорье (см.: **Langlois V.** Généalogie des Lusignan d'Arménie (Revue archéol, t. XII, 1859, pp. 162-166); Ed. Dulaurier (Recueil des historiens des croisades. Doc. armén., t. I, 1869, pp. 721-723).

⁸ Подробно о документах, подтверждающих приведенные автором хроники факты см.: **Köhler Ch.** Chronique d'Arménie par Jean Dardel (Recueil..., p. XVII-XX).

⁹ На основе орфографического анализа некоторых слов Август Каррьер приходит к выводу, что текст “Хроники” записан Дарделем под диктовку – со слов Левона Лузиньяна (см.: **Կ. Եղեաւնի,** Առաջաբան. տե՛ս Յովհաննու Դարդելի ժամանակագրութիւն Հայոց, թարգմ. Խորեն արքեպիսկոպոս Նար-Պէյի, խմբ. Նորայր Բիւզանտացու, Ս. Պետերբուրգ, 1891, էջ ՀԸ):

¹⁰ **Köhler Ch.**, указ. соч, с. XI, XIII.

к Левону V, явно инспирирована, если не продиктована им самим"¹¹. Левон Тер-Петросян, подытоживая мнение исследователей, констатирует, что главный источник труда Дарделя – воспоминания самого Левона и что автор попросту записал историю, продиктованную последним¹².

Итак, автором "Хроники" мы можем с уверенностью считать Левона Лузиньяна, а ее соавтором – Жана Дарделя. Функция последнего сводилась к записи текста со слов Левона V, его редактированию, а также акцентированию отдельных эпизодов и деталей, представлявших хрониста в выигрышном для него амплу ангела-хранителя, избавителя, преданного и заслуженно оцененного доверенного лица последнего монарха Киликийской Армении. Частичное перемещение акцента повествования с Левона Лузиньяна на Жана Дарделя осуществлялось с согласия армянского царя, который в знак благодарности за преданную службу предоставил хронисту возможность посвятить читателя в подробности своего участия в судьбе Левона V. Мы имеем дело в хронике не с одним, а с двумя героями. Первый – христианский мученик, изгнанный иноверцами из своих земель, испытывавший муки пленения, скиталец, просящий помощи у Запада в надежде вернуть безвозвратное, другой – добрый христианин, монах ордена францисканцев, всецело преданный армянскому королю, неизменный спутник и спаситель последнего. Таким образом, к написанию хроники причастны два человека, а в центр повествования поставлены два героя. Причем, если роль протагониста – ведущего персонажа – отведена Левону Лузиньяну изначально, то Жан Дардель становится героем хроники автономно, независимо от авторского – левоновского замысла. Итак, один герой запроектирован предварительно, он сам замыслил историю, центральной фигурой которой сделал себя самого. Другой стал героем непредвиденно, в силу своей причастности к жизни автора, а, следовательно, в данном случае – и протагониста. Сюжетная линия, связанная с Жаном Дарделем, ненавязчива, она ни в коей мере не оттесняет основ-

¹¹ **Claude Mutafian**, Léon V Lusignan: Un pieux chevalier et/ou un piètre monarque (Actes du colloque "Les Lusignans et l' Outre Mer"), Poitiers-Lusignan, 1993, p. 201.

¹² **Տեր-Պետրոսյան Լ.**, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ, Ե., 2007, էջ 451:

ную – лузиньяновскую тему хроники. Органически вплетаясь в общую канву повествования, она служит своеобразной “подпоркой” для последней, ибо рассказ Жана Дарделя – очевидца событий, связанных с Левонам V, убедительное документальное свидетельство реалистичности и подлинности повествования.

Если сюжетную линию, связанную с Жаном Дарделем, вычленим из общего контекста и выделить в отдельную самостоятельную тему, то это даст возможность восстановить историю жизни этого малоизвестного хрониста, во всяком случае ту ее часть, которая была связана с Левонам Лузиньяном. Что касается магистральной сюжетной линии, композиционной структуры, направленности сюжетного потока, приемов организации хроники, то они подчинены лишь одной цели – описанию судьбы Левона Лузиньяна. В этом, казалось бы посвященном истории Армении повествовании (не случайно труд назван “Хроника Армении”), просматривается четко продуманный план.

Как уже было отмечено выше, книга отчетливо разделена на три части. Тернарность композиции вовсе не случайна. Первые две части являются преддверием к третьей, несущей основную смысловую нагрузку. Именно третья часть – история мытарств Левона V – представляется нам основополагающей в сюжетопостроении.

Возникает закономерный вопрос: для чего Левону Лузиньяну нужно было так издалека (с царя Абгара) начинать историю своего рода? Ведь мог он начать “Хронику” со времен правления Киликийской Арменией династии Лузиньян – своих предков, т.е. с истории армянских Лузиньянов, с периода их вступления на армянский престол до эпохи правления его самого – законного потомка по восходящей и нисходящей линиям армянских киликийских царей.

Ключ к разгадке лежит в самом начале хроники, во вступительной ее части: “Начинается хроника и история деяний и событий (касающихся) царей Великой и Малой Армений, которые царствовали и правили названным царством, начиная с 32-го – года Преображения Господа Нашего Иисуса Христа до 1374 года, следуя по нисходящей линии от по-

коления к поколению до прямого потомка царского рода – царя Левона пятого, ныне царя Армении...”¹³.

Уже во вступительной части “Хроники Армении” явственно прослеживается композиционная структура и ее связь с основной проблематикой. История Армении до периода правления Левона V представляет собой своеобразную историческую привязку к основной теме хроники. Обращение автора к истории Армении – своеобразный композиционный ход, позволяющий вплести историю жизни самого Левона Лузиньяна и его рода в естественный ход исторического развития страны армянской и тем самым легализовать свое правомерное место в генеалогии армянских правителей. В пользу сказанного говорит и несоразмерность, диспропорциональность различных частей хроники. Наиболее значительна в объемном отношении последняя ее часть, связанная с историей жизни Левона V. События же, изложенные в первой части хроники (с I по XIV вв.), представляют собой наиболее сжатый фрагмент повествования.

Третья часть хроники ввиду значительного объема, а также сведений, связанных с личностью Левона V – сведений уникальных и ценных¹⁴, автономизировалась, отколовшись от хроники. Не случайно, упоминая в той или иной связи хронику Жана Дарделя, исследователи касаются, как правило, только ее третьей части, и “Хроника Армении” расценивается как “История Левона V”. Таким образом, история правления Левона Лузиньяна, вычленившись из общего корпуса повествования, заострила на себе внимание читателя, тем самым неосознанно вскрыв “закодированный” Левонам V латентный композиционный ход. Возникает закономерный вопрос о функциональном назначении “Хроники Армении”. Книга эта была адресована Западу и имела своей первоочередной задачей воздействовать на правителей Европы с целью

¹³ Jean Dardel, *Chronique d'Arménie*, p. 1.

¹⁴ Нельзя не заметить, что, несмотря на обвинения учеными автора “Хроники...” в тенденциозности и в искажении исторических фактов, ни одно исследование относительно последних десятилетий существования Киликийского Армянского государства не обходилось без привлечения заключенного в “Хронике...” материала.

получения материальной поддержки. Такова была программа минимум Левона V. Возникает вопрос – для чего понадобилась Левону Лузиньяну материальная помощь Запада? Для обеспечения собственного существования или для отвоевания родины из рук неверных? Кто он есть на самом деле? Беспочвенный мечтатель, фантазер, увлеченный несбыточными иллюзиями или расчетливый политикан? Да, беспочвенный мечтатель, если опираться на “Хроники” Жана Фруассара и некоторые эпизоды “Хроники Армении” Дарделя, расчетливый политикан, если исходить из комментариев Шарля Кёлера и статьи Клода Мутафяна “Левон V, доблестный рыцарь и/или жалкий монарх”. Уже само заглавие статьи Мутафяна свидетельствует о двояком восприятии личности Левона Лузиньяна. Тем не менее автор склонен видеть в нем “сеньора, лишенного искусства управлять,... падкого на материальные блага...”¹⁵. Естественно, идея восстановления Киликийского Армянского государства и царского трона кажется утопичной с позиции сегодняшнего дня. Однако иначе виделась перспектива исторического развития Киликийской Армении в те далекие времена. Надежда на возможность отстаивания своей государственной независимости, не покидавшая армян на протяжении тысячелетий, не покинула их и в тот злосчастный период истории Армении, когда, находясь во вражеском окружении, пала ее столица Сис, и страна “обратилась в пустыню и развалины” (выражение историка М. Чамчяна). Народам с “успешной” судьбой трудно вникнуть в сознание нации, которая, будучи обреченной, находясь на грани истребления, способна надеяться на возрождение. Левон Лузиньян – человек из далекого средневековья, был движим такими же страстями, что и человек любой исторической эпохи. В нем боролись и сосуществовали два типа мышления – личностное и государственное, и было бы неверно возводить какую-то китайскую стену между ними. Мы затрудняемся определить, какое из них господствовало, где кончалось “Я” и откуда начиналось “Мы”, и какое место занимали в дуальной организации человеческой психики личная и гражданская позиции. Если еще

¹⁵ Claude Mutfian, Léon V..., p. 208.

принять во внимание утверждение психологов, что "мотивы, которые человек выдвигает, обосновывая перед другими людьми и перед самим собой свое поведение, даже и тогда, когда он стремится правильно осознать свои побуждения и субъективно вполне искренен, далеко не всегда объективно отражают его побуждения, реально определяющие его действия..."¹⁶, то суждения о Левоне Лузиньяне, как о всецело положительном или всецело отрицательном образе, однобоки и поспешны.

Вернемся к поставленной задаче – выявлению авторского замысла "Хроники Армении". Книга эта была адресована Западу и имела своей основной целью получить от западных правителей необходимую помощь, причем в данном случае не имеет существенного значения, какими мотивами – личными или государственными – руководствовался автор. К каким же приемам прибегал создатель хроники для реализации своей цели? Это, в первую очередь, способ организации сюжета: композиция книги подводит читателя к тому, что Левон Лузиньян, являясь выходцем из французской царской фамилии, связан узами родства с армянскими царями и является их законным наследником и преемником. Далее, если выделить идеологический уровень "Хроники", то этот законный наследник, истинный приверженец католической веры, изгнанный из своих земель иноверцами и претерпевающий муки христианского мученика, нуждается в помощи своих братьев по вере и по крови. Главная задача автора "Хроники" – соответствовать интересам момента, т.е. той ситуации, в которой он оказался после падения его царства, потери близких во время египетского плена. В этом смысле его труд можно рассматривать как орудие по спасению. Напрашивается вопрос, какую интерпретацию получила бы хроника, если бы была задумана и преподнесена не в столь критический для страны и царя период и не с определенной заданной целью, а просто как мемуары очевидца, адресованные потомкам?

¹⁶ Рубинштейн С.Л. Основы общей психологии (цит. по: Социальная психология, М., 1975, с. 236).

Как уже было отмечено выше, "Хроника Армении" была фактически продиктована Левонам Лузиньяном. Так почему же он сделал ее автором Жана Дарделя? Из чувства благодарности за проявленное участие? Очень возможно, что это обстоятельство сыграло не последнюю роль. Однако, как нам кажется, рассказ француза Жана Дарделя, очевидца событий, живого свидетеля мытарств Левона V, мог произвести большее впечатление на социум, которому был адресован, поскольку был написан человеком "со стороны", и, естественно, должен был отличаться большей объективностью и беспристрастностью.

Невольно возникает параллель между "Хроникой Армении" Жана Дарделя и "Историей стран Востока" историографа Хетума. Фактически, обе эти книги написаны на французском языке, армянами – выходцами из царской фамилии. Обе они продиктованы авторами: Жан Дардель написал "Хронику" под диктовку Левона Лузиньяна, "La Flor des Estoires de la Terre d'Orient" записал со слов Хетума Патмича Никола Фалкон. Обе эти книги считаются достоянием как французской, так и армянской исторической науки, и впервые должным образом были оценены и признаны не своей, а инонациональной, в данном случае – французской литературой. Принцип членения книги Хетума подчинен определенной логике: все четыре части "Истории..." системно взаимообусловлены и взаимозависимы и служат единой цели – освобождению христианского Востока, в том числе и Киликийской Армении – родины Хетума Патмича – от неверных. В книге Жана Дарделя "Хроника Армении" также все части взаимозависимы и подчинены задаче получения помощи Запада с целью отвоевания родины Левона Лузиньяна – Киликийской Армении, во всяком случае, в пользу сказанного говорит поверхностная структура повествования книги. Вполне вероятно, что Левон V задумал написать хронику под влиянием хетумовской "Истории...", которая в эту эпоху пользовалась во Франции большой популярностью¹⁷. Не ис-

¹⁷В 1401 году герцог Бургундский Филипп Смелый приобрел за 300 золотых ливров три экземпляра "Flos...". Один он подарил герцогу де Берри, второй – герцогу Орлеанскому, третий остался в его библиотеке. В "Хронике Армении" Дарделя упоминается и герцог де Берри, и герцог Бургундский.

ключена возможность, что с книгой¹⁸ армянского историографа он ознакомился во время своего пребывания в Авиньоне¹⁹, в городе, в котором Хетум написал и передал свой труд папе Клементу V.

Однако автор "Хроники Армении" не только был знаком с трудом Хетума, но и использовал его в качестве источника. Наглядным доказательством факта использования Дарделем "Flor..." является приведенный в XIV главе ("Как царь Хетум заключил соглашение с великим ханом, сеньором Тавриза"²⁰) рассказ о предъявленной Хетумом I Мангухану петиции, все семь пунктов которой дословно повторяют текст XVI главы III книги²¹ "La Flor..." Хетума.

Но историограф Хетум, который досконально разработал план освобождения Св. Земли, в том числе и своей родины – Киликийской Армении, не добился желаемых результатов, и книга его стала лишь развлекательным повествованием о татарах, увлекшим не одно поколение читателей.

Безрезультатность попыток историографа Хетума склонить Запад к идее крестового похода побудила, видимо, Левона Лузиньяна несколько иначе подойти к решению своих замыслов. Так, в "La Flor..." история Армении, казалось бы, должна была иметь доминантное звучание, на ней автором должен был быть поставлен главный акцент повествования. Однако Хетум сознательно, будучи в курсе повышенного интереса европейцев к монголам, перемещает историю татар в центр сюжетной структуры, главенствующее же значение армянской темы, как и основная формообразующая роль истории Армении, остается для автора скрытым во внутренних, идейных плоскостях.

¹⁸ В списке рукописей Папской Библиотеки Авиньона, составленном около 1375 года, по распоряжению Григория IX, значится рукопись "Flos...", о чем свидетельствуют следующие строки: "Item liber inti-tulatus Flos ystoriarium terre Orientis in modica forma, coopertus de pergameno" (см.: **Köhler Ch.**, Recueil..., p. CXXII).

¹⁹ Согласно "Хронике Армении" Дардель посетил Авиньон дважды. Первый раз в 1383 году, по дороге в Испанию, второй – в 1384-ом, по дороге в Париж.

²⁰ **Jean Dardel**, Chronique d'Arménie ..., p. 11.

²¹ **Hayton**, La Flor des Estoires de la Terre d'Orient (Recueil des historiens des Croisades: Documents arméniens, t. II, éd. Ch. Köhler, Paris, 1906, pp. 164-165).

Левон Лузиньян как бы извлекает историю Армении из хетумовских глубинных пластов и ставит судьбу страны и ее царя в центр повествования, в центр основного сюжетного потока. Он прибегает в своей книге не к конкретной деловой программе, а к психологическим ухищрениям идейно-композиционного характера. Не подвести Запад путем логически взаимодополняющих построений к идее крестового похода и воплотить эту идею в конкретный план действий, а воздействовать на Запад психологически, разжалобить его, показав, с одной стороны, несправедливую участь христианской Армении и ее народа, поработанного мусульманами, с другой – незаслуженную участь его самого – последнего законного монарха Киликийской Армении, приверженца римско-католической церкви, выходца из французской династии Лузиньян, и тем самым напомнить Европе о святом христианском долге западных правителей помочь брату по вере и крови вернуть трон, поддержать его материально, а страну, завоеванную иноверцами, вернуть ее народу – такова основная задача книги Жана Дарделя.

ԺԱՆ ԴԱՐԴԵԼԻ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ» ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՄՏԱՀՂԱՅՈՒՄԸ

ՂԱՐԱԳՅՈՂՅԱՆ Գ.Լ.

Ամփոփում

Լևոն Լուսինյանի պատմաճից գրի առած՝ Ժան Դարդելի «Ժամանակագրությունը» (*"Chronique d'Arménie par Jean Dardel"*) բազմաթիվ երկրների գիտնականների համար գիտական որոնումների և քննության նյութ է ծառայել: Սակայն պատմագրական այդ հուշարձանը հետաքրքրություն է ներկայացնում ոչ միայն իր աղբյուրագիտական «առաքելությամբ»: Լինելով Լևոն Լուսինյանին ծոնված ինքնատիպ ներքող՝ «Ժամանակագրությունը» չէր կարող ընթերցողի մեջ համակրանք և հետաքրքրություն չառաջացնել գահից և թագավորությունից զրկված հայոց արքայի նկատմամբ: Միննույն ժամանակ, Կիլիկյան Հայաստանի և Լևոն V-ի ճակատագրերն

այնքան համահունչ էին և սերտորեն միահյուսված, որ միաձուլվելով ամբողջանում էին հայ ժողովրդի ճակատագրի հետ:

AUTHOR'S INTENTION OF "CHRONICLES OF ARMENIA" BY JEAN DARDEL

G. GHARAGYOZYAN

Abstract

"Chronicles of Armenia" by Jean Dardel, written down from the words of Levon Lusignan, has become starting material for the scientific search of scholars of many countries. However, this memorial of historiography is of interest not only for its "mission" of having a source value. Being a kind of panegyric to Levon Lusignan, "Chronicles of Armenia" could not have failed to arouse a liking and interest towards the Armenian king, deprived of his throne and kingdom. At the same time, the fates of the Cilician Armenia and Levon V were so consonant and intertwined that they merged and became an entity in the image of the fate of the Armenian people.

ԽՈՍՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԻՄՆԱԲԱՂԱԴՐԱՏԱՐՐԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԴԵՐԸ ՆՈՐՄԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ԱՂԱՋԱՆՅԱՆ Զ.Խ.

Խոսողությունը մարդու բնատուր հատկանիշներից է. ոմանք անգամ այն կարծիքին են, թե մեր խոսքային գործունեությունը, սկսած այն պահից, երբ սկսում ենք թրթռվել բառերը, և մինչև այն պահը, երբ կասենք մեր վերջին խոսքը, ամբողջությամբ երկար ու ծավալուն խոսք է, որում փոխվում են հանգամանքները, հասցեակիրները, խոսողության նյութը, թեման, նպատակն ու դրդապատճառները, ձևը, փոխվում են նորմերը... Մարդը բոլոր ժամանակներում աշխատել է մշակել իր խոսքը՝ շատ լավ հասկանալով, որ այն իր ուժն է («Խոսքը մեծ ուժ է, այն համոզում է, շրջում, հակադրում» (Ռ. Էմերսոն), «Մարդկային ուժի զորավարն է» (Վ. Մայակովսկի): Սակայն մինչև հիմա հստակեցված չէ, թե ի՞նչ է խոսքը, ի՞նչ հարաբերակցության մեջ է լեզվի և մտածողության հետ¹, վերջապես՝ լեզվաբանասիրական գիտություններից ո՞րն ի՞նչ չափով է ուսումնասիրում այն: Ըստ Գ. Բրուտյանի՝ ավստրոամերիկյան մեծագույն փիլիսոփա, մեթոդաբան Ռուդոլֆ Կառնապն իր հետազոտություններում այն եզրակացությանն է հանգում, որ ընդհանրապես գիտությունների պատմության մեջ օգտագործվող բազմաթիվ հասկացություններ թվում են շատ հայտնի, բայց ոչ ստույգ, և դրանք անվանում է «էքսպլիկանտներ»: Վերջիններս, ճշգրտվելով գիտության զարգացման տվյալ մակարդակին համապատասխան մեթոդներով (Կառնապի խոսքերով՝ էքսպլիկացիայի ենթարկվելով), վերածվում են

¹ Եթե լեզվի և խոսքի հակադրամիասնությունը վաղուց է ուսումնասիրությունների կենտրոնում, և այդ հարցում զգալի առաջընթաց կա, ապա նույնը չի կարելի ասել մտածողության և խոսքի, մյուս կողմից՝ լեզվի, խոսքի և մտածողության փոխհարաբերության մասին, որի ուսումնասիրությունը լոկ լեզվաբանության խնդիրը չէ: Ժամանակին համապատասխան փոխվում է «մտածողության եղանակը», «մտածողության աստիճանը» ևս խորանում է. իսկ լեզուն ու խոսքը (նաև ճաշակը) «ծնվում են» հենց այդ աստիճանի, այդ եղանակի վրա:

ստույգ հասկացությունների²: Այդպիսի էքսպլիկանտ կարելի է համարել և խոսքը. այն այսօր ևս ստույգ հասկացություն չէ, բայց ճշգրտվելով, նորմավորվելով՝ ժամանակի որոշակի հատվածում դառնում է հարաբերականորեն ստույգ: Խոսքը յուրատեսակ համաձուլվածք է՝ բազմաբարդ կառուցվածքով, և քանի դեռ մշակված չեն այն բացարձակորեն գնահատելու, գիտականորեն մաքուր ձևով ներկայացնելու հիմքերը, ապա կարևոր է դառնում հիմնական օրինաչափությունները, հիմնաբաղադրատարրերը նշելը, որոնց օգնությամբ հնարավոր է գնահատել տվյալ հասարակության և նրա յուրաքանչյուր անհատի խոսքային մշակույթը կամ էլ նույն չափանիշներով վերլուծել խոսքը: Սակայն, մյուս կողմից, նման գնահատումը չպետք է վերածվի սոսկ «պլյուս»-«մինուսների», «լավ» ու «վատի», «ճիշտ» ու «սխալի» փաստման, հաստատման: Դրանք պիտի ծառայեն նաև որպես կենսունակ և գործնական միջոցներ, արդյունավետ եղանակներ՝ ուղղորդված խոսքի հետագա մշակմանը, նրա մշտական կատարելագործմանը: Սա ստեղծագործական այն խնդիրն է, որը ծառայում է խոսքային գործունեության մշակույթի դրսևորմանը:

Խոսքի մշակույթի ուսումնասիրության նախնական տվյալները կապվում են անտիկ աշխարհի **ճարտասանական** կամ **հռետորական արվեստի** հետ: Բոլոր ժամանակներում լեզվի հարստությունն ու հռետորական արվեստն ընթացել են կողք կողքի: Խոսելու արվեստն ու գիտությունը, որ ձևավորվել են Ք. ա. IV-V դդ. Հունաստանում, նպատակ ունեին վերհանելու խոսքի արժանիքներն ու թերությունները, իսկ հռետորական իմաստասիրություններում (տրակտատներում) նկարագրվում էր, թե ինչպիսին պետք է լինի խոսքը, հանձնարարվում էր հետևել խոսքի ճշտությանն ու ճշգրտությանը, մաքրությանն ու պարզությանը, տրամաբանականությանը, արտահայտչականությանը, միաժամանակ նշվում էր, թե ինչպես կարելի է հասնել այդպիսի խոսքի կառուցմանը: Հետագայում հռետորական արվեստը նահանջեց, իսկ լեզվի ուսումնասիրությունը երկփեղկվեց **լեզվի տեսության** և **խոսքի տեսության**: Ներկա ժամանակում խոսքի տեսությունն առանձին գիտաճյուղ է՝ **խոսքի մշակույթ** անվանումով (հունարենից՝ *orthos*-ուղիղ, *ճիշտ*, *logos*-խոսք, բան): **Խոսքի մշակույթը լեզվագիտության (կամ բանասիրության) բաժին է, որն ուսումնասիրում է գիտակցված խոսքա-**

² Տե՛ս **Բրուսյան Գ.Ա.**, Հայագիտություն և մետահայագիտություն, Ե., 2004, էջ 8:

յին գործունեությունը՝ հաղորդակցական տարբեր (կարգավորված և չկարգավորված) իրավիճակներում:

Մարդկության պատմության ցանկացած ժամանակաշրջանում խոսքի մշակույթը, ինչպես և մշակույթի ցանկացած բնագավառ, եռակողմ՝ **հասարակության, գործունեությամբ միավորված մարդկային որոշակի խմբերի** (կոլեկտիվի), **անհատի** խոսքի մշակույթների հանրագումարն է: Այն նաև **հաղորդման և ընկալման՝ վերծանության մշակույթների** միագումարն է: Մարդկային հասարակության պատմության ընթացքում երբեք անհատն իր կենսագործունեությամբ այսքան սերտորեն կապված չի եղել հասարակության հետ, որքան մեր օրերում: Մարդկային գործունեության, անհատ-հասարակություն փոխհարաբերության և հաղորդակցական գործընթացի այսպիսի բնույթը առաջադրում է գրական լեզվին հմտորեն տիրապետելու, խոսքի բարձր մշակույթ ունենալու պահանջներ: Մտքերը ճիշտ և հստակ, նպատակաուղղված արտահայտելու կարողությունը, գրագետ, կիրթ խոսելու հմտությունը, իր խոսքի նկատմամբ ուշադրություն գրավելու, սկսելու ունակությունը, նաև լսողների վրա ներազդելու կարողականությունը, մշակված, բարձրամակարդակ և բարձրարվեստ խոսքը օրինակելի բնութագրիչներ պիտի լինեն բոլոր նրանց համար, ովքեր իրենց գործունեությամբ առնչվում են մարդկանց, մարդկային խմբերի հետ:

Լեզվական նորմի իմացությունը պայմանավորում է խոսքի ճշտությունը և դառնում է նրա հիմնաբաղադրատարրը, ոճագիտությունը խոսքը արտահայտիչ և պատկերավոր դարձնող խոսքիմշակութային բաղադրիչներից մեկն է: Սրանց էլ պետք է գումարել բարոյագիտական և վարվելակարգային (էթիկական և էթիկետային) իմացությունը, նաև հաղորդակցական իրավիճակի ճանաչումն ու գնահատումը, ազգային մշակութային ժառանգության յուրացումը. այս դեպքում միայն կարելի է խոսել խոսքի մշակույթի մասին: Ծավալվող խոսքային շղթայում պետք է կարողանալ նաև «գտնել տարողունակ սկիզբը», և առավել դժվարը՝ «ընդհանրացնող ավարտը արարել», որը հատկանշվում է բազմաթիվ կախվածությունների հետևանքներով: Պետք է կարողանալ որոնել-գտնել պատճառներն ու հետևանքները և դրանք կապակցել՝ հասկանալով նպատակը, բացահայտելով պատահականը, ի հայտ բերելով օրինաչափը: Ավելին՝ խոսքը ենթադրում է նաև հեռանկարային հավելումներ, այսինքն՝ պարունակում է ենթատեքստային կոնսիդերություն: Շատ դեպքերում տվյալ իրադրության մեջ

խոսքը հարաբերականորեն, ձևականորեն է ավարտին հասնում, ավարտվում. իրականում պահպանում է իր ներքին շարժունակությունը, հետագա «շարժման» հեռանկարը: Ընդհանրապես՝ խոսքային գործունեության ընթացքում շատ կարևոր է հաշվի առնել նաև խոսքի հատույթավորման սկզբունքները: Խոսքը հատույթավորվում է ըստ այն բանի, թե հաղորդակցվողները (խոսողը և խոսակիցը) հաղորդակցական-տեղեկատվական, գեղագիտական ինչ առաջադրանքներ ու նպատակադրում ունեն: Խոսքային գործունեության անընդհատ և գծային ընթացքի հատույթավորումը արտահայտվում է ամենից առաջ դադարների միջոցով. խոսքի մշակույթային բարձր մակարդակի դրսևորում է ճիշտ տեղում և ճիշտ ժամանակին դադար տալը, և, որ ամենակարևորն է, վերծանել հաղորդակցական դադարները: Ի վերջո՝ սևակյան խոսքերով ասած՝ «Խոսակցիդ նախ քոնը պիտի դարձնես, հետո միայն ականջը լցնես քո ուզածով»:

Արտաքուստ շատ հեշտ է թվում սահմանել՝ «Խոսքի մշակույթի ուսումնասիրության առարկան խոսքն է», սակայն վերոբերյալ մի քանի դիտարկումներից իսկ ակնհայտ է դառնում, որ խոսքը բնութագրելը ամենաբարդ խնդիրներից է: Այս հարցում հայ լեզվաբանասիրությունը (և ոչ միայն՝ հայ) դեռևս շատ անելիքներ ունի: Իբրև գիտաճյուղ՝ այն խոսքն իր ամբողջությամբ չի ներառում. որպես ընդհանուր մշակույթի մի մաս՝ խոսքի մշակույթը խոսքն ուսումնասիրում է միայն այնքանով, որքանով որ թելադրում է ժամանակը՝ սահմանափակված քաղաքակրթորեն հաղորդակցվելու բնական պահանջմունքի շրջանակում: Խոսքի համար «արտահագուստը» ժամանակն է՝ իր լեզվով և մտածողության եղանակով, լեզվաճաշակով, իսկ խոսքի մակարդակը պայմանավորված է դարերի նստվածքով:

Խոսքի մշակույթը դրսևորվում է այն կանոնակարգով, որը հավանության է արժանանում, մշակվում, կատարելագործվում է տվյալ հասարակության կողմից: Ինչպես մշակույթի մյուս տեսակները, այնպես էլ խոսքի մշակույթը ստեղծում է և հանձնարարում արժեքների որոշակի համակարգ՝ սահմանված չափանշային սանդղակով, որի մատնանշած աստիճաններով գնահատվում է խոսքը: Հենց այս չափանիշներով էլ բարձր խոսքը հակադրվում է ցածր խոսքին, կարելի է ասել՝ խոսքի մշակույթը հակադրվում է չմշակված խոսքին: Եվ այդ գնահատականով է պայմանավորված խոսքի մշակույթի դերը ընդհանուր մշակույթի մեջ: Խոսքի մշակույթը նաև ազգային մշակույթի նկարագրությունն է:

Մեր ժամանակակից լեզվաբան-մշակութաբաններից մի քանիսի, նաև մեր կարծիքով, խոսքի մշակույթի նվազագույն միավորը **խոսույթն** է, մյուս խումբն այն համարում է նշված գիտաճյուղի ուսումնասիրության առարկան՝ այսպիսի մասնավորումներով՝ իրավաբանական խոսույթ, դիվանագիտական խոսույթ, տնտեսագիտական խոսույթ և այլն:

Խոսքի մշակույթ ասելով՝ առաջին հերթին պետք է հասկանալ խոսքի ճշտություն, այսինքն՝ գրական լեզվի նորմի իմացություն: Խոսքի մշակույթին տիրապետել նշանակում է նաև բարոյագիտական և վարվելակարգային կանոնների իմացություն, հաղորդակցական իրավիճակի ճանաչում և ցանկացած իրադրությունում, տարբեր հանգամանքներում համապատասխան լեզվական ու վարվելակարգի կանոններին հետևելուն և գործառնելուն զուգընթաց, անհրաժեշտ ներգործության ապահովում՝ հաղորդակցական նպատակի իրագործման ուղղությամբ: Այստեղից էլ՝ խոսքի մշակույթը բնորոշվում է 3 հայեցակարգով՝ **Ա. նորմատիվային (չափակարգային), Բ. հաղորդակցական, Գ. վարվելակարգային:**

Այլ կերպ ասած՝ խոսքի մշակութային նորմը լեզվական, հաղորդակցական և բարոյագիտական-վարվելակարգի նորմերի հանրագումարն է: Այստեղ մտնում են ևս երկու բաղադրատարրեր՝ **ա)** մտածողության մշակույթը, **բ)** հաղորդակցման հոգեբանական բաղադրատարրը (հոգեբանական վարքը)... Ի վերջո՝ խոսքի մշակույթի նորմը չի կարող լիարժեք լինել առանց վերձանության մշակույթի (վերձանության արվեստի). լսելու կարողությունը դեռևս հավասարազոր չէ գրագետ լինելուն («Բոլորն այժմ կարդալ գիտեն, Ուրեմն փառք... կարդացածը հասկացողի՞ն...» (Պ. Սևակ)): **Խոսել** նշանակում է՝ **ճաշակ մշակել, հասու լինել գեղեցիկին. հասկանալ՝ կանգնել խոսողի մակարդակին:**

Նշանակում է՝ խոսքի մշակույթը խոսքային գործունեության ամենաբարձր մակարդակն է, որը որոշակի ներուժ ունի փոփոխելու, ինչպես Մ. Աբեղյանն է ասում, «նորոգելու» իր հիմնաբաղադրիչ նորմերը, որպեսզի ինքն է փոփոխվի, «վերանորոգվի», կատարելագործվի:

Հիմնաբաղադրատարրերը քննարկելով առանձին-առանձին և ուսումնասիրության արդյունքները համադրելով՝ գիտականորեն սահմանենք, թե ի՞նչ է նշանակում խոսքի մշակույթ, ի՞նչ է նշանակում խոսքի մշակույթի նորմավորում, խոսքի մշակութային նորմեր և այլն:

Ա. Խոսքը գնահատելու մեկ հիմնային չափ ու կշիռ կա՝ ճշտությունը: Խոսքի ճշտության հիմքում ընկած է լեզվի ճշտությունը: Հետևաբար՝ խոսքի բարձր մակարդակի ապահովման առաջին պայմանը լեզվի իմացությունն է, դրա գործառության հիմքում ընկած օրենքների ու օրինաչափությունների ճանաչումը՝ ընդգծելով խոսքի մշակույթի բաղադրատարրերից մեկի՝ լեզվական նորմի կարևորման արդիականությունը: Ցանկացած լեզվի նորմ բարդ և բազմակառույց, ինչ-որ չափով կարծրացած երևույթ է, որը, թեև արտացոլում է նաև հասարակության գեղագիտական-գնահատողական վերաբերմունքը լեզվի նկատմամբ, բայց արտաքուստ լեզվակիրների ցանկությամբ և ճաշակով չպայմանավորված՝ լեզվական համակարգը կանոնարկող օրինաչափությունների հանրագումարն է՝ դրա անընդհատ զարգացման և կատարելագործման ճանապարհին: Լեզվական նորմը խոսքի մշակույթի առանցքային հասկացություններից է, դրա հիմնաբաղադրիչը: Այն գրական լեզվի զարգացման որոշակի ժամանակահատվածում գործող ուղղախոսական-ուղղագրական, բառական-բառագործածական, քերականական կանոնների ամբողջությունն է, որ սահմանում է լեզվական միավորների (բառի, բառակապակցության, նախադասության) միասնական, օրինակելի, համընդհանրական և պարտադիր գործածության կանոնները: Նորմի բնութագրիչներն են՝ հարաբերական կայունությունը, համընդհանրականությունը, պարտադիր լինելը, լեզվական համակարգին համապատասխանելը և այլն:

Լեզվական նորմով սահմանված կանոնները խոսքային գործունեության կողմնորոշիչներ են: Գրական լեզվի նորմերին տիրապետել նշանակում է լեզվական միջոցների ճիշտ ընտրություն, ճիշտ բառագործածություն և բառաձևագործածություն, լեզվական միավորների տրամաբանական կապակցություն և կապակցության միջոցների ու եղանակների ճիշտ ընտրություն, վերհատույթային միավորների համապատասխան գործածություն, ասույթին-խոսույթին համապատասխան հնչերանգային ձևավորվածություն և այլն: Մյուս կողմից՝ խոսքի մշակույթի նորմավորումը պահանջում է հետևել լեզվական նորմով սահմանված կանոններին՝ պարտադրվածության և խստության տարբեր աստիճաններով, բայց և այնպես անտարբեր չմնալ լեզվական նորմի տատանումների, փոփոխությունների նկատմամբ: Եվ սա դրսևորվում է խոսքի գնահատման, արժևորման համակարգում, որը կատարվում է **«ճիշտ»/«ոչ ճիշտ»** չափանշային ցուցիչներով:

Եթե խոսքի մշակույթի հիմքը ճշտությունն է, ապա լեզվի ճշտությամբ պայմանավորված խոսքի ճշտությունը ապահովում է նրա հասկանալիությունը: Հաղորդակցական տեսակետից ճշտությունը թույլ է տալիս խոսքային գործունեությունը ծավալել միասնական կողի շրջանակում: Լեզվական նորմով սահմանված կանոնների ամբողջությամբ պայմանավորված խոսքի մշակութային այս արժանիքը ձևավորում է նաև լեզվակիր անհատի կերպարը: Խոսքի մշակույթի հարցերը համակողմանիորեն քննելու համար անհրաժեշտ է հաշվի առնել լեզվագործածության ներկա վիճակը, լեզվի կանոնարկման ընթացքը, զարգացման միտումները, լեզվաշինությունն ու լեզվաքաղաքականությունը:

Բ. Կարելի է չխախտել լեզվական նորմը, պահպանել վարվելակարգային բոլոր կանոնները, բայց չտիրապետել բարձրարվեստ խոսքի: Խոսքը կարող է շքեղ լինել, «զարդարուն», բայց ոչ նպատակային: Ահա թե ինչու հաղորդակցական բաղադրատարրը վճռորոշիչ դեր ունի խոսքի մշակույթի մեջ: Խոսքային գործունեության ընթացքում մշակվում են լեզվական միջոցների ընտրության և գործածության հմտություններ: Խոսքի մշակույթի հաղորդակցական հիմնաբաղադրիչի հիմքը լեզվական անհրաժեշտ միջոցների ընտրությունն է: Հայտնի լեզվաբան-մշակութաբան Գ.Օ. Վինոկուրը գրում է. «Յուրաքանչյուր նպատակի (նշանակության) համար՝ իր միջոցը. այսպիսին պետք է լինի քաղաքակիրթ հասարակության կարգախոսը (ուղենիշը)»³: Հաղորդակցական նպատակահարմարությունը համարվում է խոսքի մշակույթի տեսության կարգերից մեկը: Ահա թե ինչու շատ կարևոր է իմանալ խոսքի հաղորդակցական որակները և հաշվի առնել դրանք խոսքային գործունեության ընթացքում: Խոսքի հաղորդակցական արժանիքներն են՝ **ճշտությունը, հասկանալիությունը, հստակությունը, պարզությունը, մաքրությունը, հարստությունը, արտահայտչականությունը** և այլն: Ինքնըստինքյան ուժ չունենալով՝ խոսքը վերածվում է մեծագույն գործիքի, դառնում հզոր ու անկասելի, երբ ասվում է տեղին ու ժամանակին, երբ հնչում է անկեղծ, երբ պարզ է, մաքուր, երբ արտահայտիչ է: Խոսելու արվեստն այն է, որ լավագույն ձևով ազդի ունկնդիրների տվյալ խմբի վրա՝ հայտնի ճշմարտությունը նրա համար դարձնելով հնարավորինս ավելի համոզիչ, հեշտ յուրացվող, ավելի ակնառու: Գ. Ջահուկ-

³ Введенская Л.А., Павлова Л.Г., Кашаева Е.Ю. Русский язык и культура речи, Ростов-на-Дону, 2003, с. 70.

յանը գրում է. «Մարդկային խոսքը, բացի անմիջական հաղորդակցման և իմացական կարիքները բավարարելուց, ձեռք է բերում գեղագիտական հաճույք պատճառելու և, սրա հետ կապված, ուժեղ ներգործելու գործառնություն, որ երբեմն իմացականը մղում է երկրորդ պլան»⁴:

Գ. Խոսքի մշակույթի վարվելակարգային հիմնաբաղադրիչը պահանջում է հաղորդակցական կոնկրետ իրադրությամբ պայմանավորված լեզվական վարքի, վարվելակարգային կանոնների իմացություն և գործածություն: Բարոյագիտական նորմերի մեջ առավելապես կարևորվում է խոսքային վարվելակարգը՝ իր բանաձևային համակարգով, որի համար իբրև ժանրեր առանձնացվում են **ողջույնը, խնդրանքը, շնորհավորանքը, շնորհակալությունը, հարցումը** և այլն, ինչպես նաև կարևորվում են **դու-Դուք**-ի գործածությունը, դիմելաձևերի, հատուկ անունների (կոչականների)՝ լրիվ կամ կրճատված ձևերի ընտրությունը և այլն: Խոսքային գործունեությունը (հաղորդակցումը) իրականացվում է տվյալ ժամանակաշրջանում տվյալ հասարակության կողմից ընդունված կանոններին համապատասխան, կանոններ, որոնք պայմանավորված են նաև բազմաթիվ արտալեզվական գործոններով (հաղորդակցվողների ազգությունը, տարիքը, սեռը, հասարակական-սոցիալական կարգավիճակը, հարաբերությունների տեսակը՝ պաշտոնական, կիսապաշտոնական, ընկերական, հաղորդակցման հանգամանքները՝ տեղը, ժամանակը և այլն): Վարվելակարգային հաղորդակցության առանձնահատուկ ոլորտ են որոշակի լեզվական միջոցների բացահայտ և պարտադիր արգելանքները. արգելվում են բարձրատոն խոսակցությունը, ոչ հարգալից վերաբերմունքի դրսևորումները, կամ՝ ցանկացած իրավիճակում անվիճարկելի է գոռգոռոցների, գռեհկաբանությունների, զգալի խոստովությունների (հայհոյախոսությունների) գործածությունը: Լեզվական արգելանքների տակ կարող են մտնել նաև հնչական որոշակի տոնայնություններ, հնչերանգային դրսևորումներ և այլն: Մյուս կողմից, վարվելակարգը չի արգելում չափազանց զգացմունքայնությամբ դրսևորված արտահայտիչ խոսքը, ընդհուպ մինչև այսօրինակ կառույցների գործածությունը՝ **գրողը տանի, սատանան գիտի, թե դա ինչ է** և այլն:

Խոսքի մշակույթում նորմի ցանկացած տեսակ ունի գնահատման իր սանդղակը՝ տարբեր չափորոշիչներով (չափանշույթներով): Սրանց ամբող-

⁴ **Ջահուկյան Գ.**, Ժամանակակից հայոց լեզվի տեսության հիմունքներ, Ե., 1974, էջ 358-359:

ջությունը վերածվում է խոսքի գնահատման սանդղակի: Ըստ խոսքային վարքի (վարվելակարգային կամ բարոյագիտական-վարվելակարգային) չափանշոյթների՝ խոսքը գնահատվում է՝ **քաղաքավարի/ոչ քաղաքավարի, պատշաճ/ոչ պատշաճ, հարմար/ոչ հարմար, լավ/վատ...** Հաղորդակցական առումով այն կարող է լինել՝ **հաջողված /ոչ հաջողված, ազդու (տպավորիչ)/ոչ տպավորիչ, ներգործուն (արտահայտիչ)/ոչ ներգործուն, տրամաբանական/ոչ տրամաբանական, ճշգրիտ/ոչ ճշգրիտ, տեղին/ոչ տեղին, մատչելի և ոչ մատչելի, տարատեսակ/միատեսակ (միակերպ) և այլն:** Լեզվական նորմի տեսակետից խոսքը լինում է՝ **ճիշտ/ոչ ճիշտ (սխալ), թույլատրելի/ոչ թույլատրելի, գրական/խոսակցական...**

Այսպիսով՝ խոսքի մշակույթի ուսումնասիրության առարկան խոսքն է: Սակայն մինչև հիմա հստակեցված չէ, թե ի՞նչ է խոսքը, ի՞նչ հարաբերության մեջ է լեզվի և մտածողության հետ, լեզվաբանասիրական գիտություններից ո՞րն ի՞նչ չափով է ուսումնասիրում այն: Ըստ Գ. Բրուսյանի՝ էքսպլիկանտ կարելի է համարել և «խոսք» հասկացությունը: Խոսքի մշակույթը բնորոշվում է 3 հայեցակարգով՝ **նորմատիվային (չափակարգային), հաղորդակցական և վարվելակարգային:** Լեզվական նորմը խոսքի մշակույթի հիմնաքաղաղրիչն է: Խոսքի մշակույթի հարցերը համակողմանիորեն քննելու համար անհրաժեշտ է հաշվի առնել լեզվագործածության ներկա վիճակը, լեզվի կանոնարկման ընթացքը, զարգացման միտումները, լեզվաշինությունն ու լեզվաքաղաքականությունը: Խոսքի մշակույթը հաղորդման և վերձանության մշակույթների միագումարն է: Խոսքի մշակույթային նորմը լեզվական, հաղորդակցական, վարվելակարգային (բարոյագիտական-վարվելակարգային) և վերձանության նորմերի հանրագումարն է: Այն նաև ազգային մշակույթի նկարագրությունն է:

ОСНОВНЫЕ КОМПОНЕНТЫ КУЛЬТУРЫ РЕЧИ И ИХ РОЛЬ В ПРОЦЕССЕ НОРМИРОВАНИЯ

АГАДЖАНИЯН З.Х.

Резюме

Предметом изучения культуры речи является речь. Во все времена человек старался и старается усовершенствовать свою речь. Однако до

сих пор не уточнено, как она соотносится с языком и мышлением, объектом изучения какой научной дисциплины является?

Лингвистическая норма – это ключевой компонент речевой культуры. Для всестороннего изучения вопросов речевой культуры необходимо учитывать процесс языкового регулирования, тенденции развития, языковое конструирование и речевую политику. Речевая культура является суммарным результатом культур общения и интерпретации. Норма речевой культуры представляет собой сумму языковых, коммуникативных, этикетных (этико-этикетных) и транскрипционных норм.

MAIN COMPONENTS OF CULTURE OF SPEECH AND THEIR ROLE IN THE PROCESS OF RATIONING

Z. AGHAJANYAN

Abstract

The subject of studying the culture of speech is the speech. At all times a man has tried and tries to improve his speech. Nevertheless, until now it is not specified what speech is, in what relations it is with language and thinking, which of the linguistic-philological problems does it study.

The linguistic norm is a key component of the speech culture. For a comprehensive study of the issues of speech culture, it is necessary to take into account the present state of the use of speech, the process of language regulation, development trends, language design and speech policy. Speech culture is the cumulative result of cultures of communication and interpretation. The norm of speech culture is the sum of language, communicative, etiquette (ethical-etiquette), and transcribing norms.

ՎԱՃԱՌԱԿԱՆԻ ԿԵՐՊԱՐԸ «ՔՅՈՌՕՂԼԻ» ԷՊՈՍՈՒՄ ԵՎ ԴՐԱ ՊԱՏՄԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԸ

ՌԱՄԱԶՅԱՆ Ս.Մ.

«Քյոռօղլի» էպոսը, լինելով ուշ ժամանակաշրջանի (XVII դ.) ստեղծագործություն, թյուրքական մյուս էպոսների ու հերոսական ասքերի համեմատ՝ իր տարածվածության առումով նախադեպ չունի: Այս վիպական-բանահյուսական յուրօրինակ հուշարձանը համընդհանուր ընդունելության է արժանացել ամենատարբեր ազգերի շրջանում՝ Տյան-Շանից մինչև Բալկաններ, Կասպից ծովից մինչև Սիբիր: Հետազոտողների մեծամասնության կարծիքով (Վ.Մ. Ժիրմունսկի, Բ.Ա. Կարրիև, Ն.Փ. Բորաթավ ևն)՝ «Քյոռօղլի» էպոսի ձևավորումը XVII-XIX դդ. վերջերը ենթարկվել է գեղարվեստական բազմաբնույթ մշակումների և փոփոխությունների:

Էպոսի արևմտյան խմբում ընդգրկված տարբերակները (թյուրքական, ադրբեջանական, հայկական, քրդական, վրացական, դաղստանյան ևն) հիմնականում հանգում են ատրպատականյան (կամ այսպես կոչված «վաղադրբեջանական») «Քյոռօղլու» էպոսին, ինչպես կարծում է հետազոտողների մեծամասնությունը¹: Դրանք, հիմնավորապես պահպանելով

¹ Նկատի է առնվում 1830-ական թթ. Իրանի Ատրպատական (Ադրբեջան) երկրամասում ռուսաստանցի (լեհ) արևելագետ Ալեքսանդր Խոճկոյի (1804-1891) գրառած և 1842 թ. անգլերեն Լոնդոնում տպագրված ամբողջական տարբերակը (**Chodzko A.** Specimens of the Popular Poetry of Persia, as Found in the Adventures and Improvisations of Kurroglou, the Bandit-Minstrel of Northern Persia, and in the Songs of the People Inhabiting the Stories of the Caspian Sea), որը, 14 տարի անց թարգմանվելով ռուսերեն, հրատարակվել է Թիֆլիսում (Кёроглу, восточный поэт-наездник, Тифлис, 1856): Բնականաբար, տվյալ ժամանակահատվածում էպոսն ադրբեջանական (հայերեն՝ ատրպատականյան) էր համարվում գրառման տեղավայրի հաշվառմամբ, սակայն 1918 թ. հետո, Հարավային Կովկասում «Ադրբեջան» անվամբ կազմավորման ի հայտ գալով, դրան ուղղակիորեն վերագրվել է էթնիկ պատկանելություն: ԽՍՀՄ-ի օրոք հարցն առավելապես կրել է համաթուրանական գունավորում՝ ելնելով «Հարավային Ադրբեջանի» կեղծ դրույթից, ընդամին, հենց այդ ժամանակահատվածից էլ շրջանառության մեջ է դրվել «հարավադրբեջանական» բացարձակ հակագիտական որակումը: Էպոսի խոշորա-

պատմական իրադարձությունների իրական արձագանքները և շերտերը, սկզբնավորվելով անմիջական պատմական հենքից՝ ճշմարտացիորեն են վերարտադրել Փոքր Ասիայում և Հարավային Կովկասում XVI-XVII դդ. տեղի ունեցած անցքերը, այն է՝ ջալալիների (ջելալիների) ապստամբությունները: Արևելյան տարբերակներում (թուրքմենական, ուզբեկական, տաջիկական, դազախական, կարակալպական, Բուխարայի արաբների, տուբուլ-թաթարական, ույղուրական ևն) արևմտյան խմբին բնորոշ պատմավավերական ատաղձը գրեթե անհետանում է՝ տեղը զիջելով նախախլամական տարրերով հավելված գրույցների շարքին և իրանական առասպելաբանությանը:

Արևմտյան բոլոր տարբերակներում Քյոռոլլի-Ռուշանը հանպատրաստից բանաստեղծ-աշուղ է, որը իր նման վրիժառուների գլուխն անցած, վրեժ է լուծում հորը հանիրավի կուրացրած բռնակալներից (այստեղից էլ «Քյոռոլլի» մականունը), վարում «ազնվաբարո ավազակին» բնորոշ կյանք՝ պատսպարվելով լեռնային Չամիբեյ ամրոցում: Ինչպես և նման կերպարներին բնորոշ դեպքերում Քյոռոլլու գործունեության հիմնական տարրերից է իր վերահսկած տարածքներում յուրօրինակ կարգի սահմանումը՝ իշխանությունների և նրանց հետ կապված շրջանակներից իրականացվող հարկահանությամբ, վաճառականների ու նրանց քարավանների կողոպուտով: Ընդհանրապես, չնչին բացառությամբ, էպոսի գրեթե բոլոր տարբերակների համար ընդհանուր և բնորոշ են դրվագները, որոնցում Քյոռոլլին կողոպտում է վաճառականների քարավանները կամ դրամ, ապրանք և անասուններ վերցնում որպես տուրք: Դրանք ցայտուն են արտացոլվում արևմտյան խմբի տարբերակներում, որոնցում հերոսի ավազակային գործունեության գլխավոր ուղղությունը հենց քարավան թալանելն ու տուրք առնելն է: Քարավանների կողոպուտը կանխելու համար են Չամիբեյի վրա արշավում Թոխատի, Երզնկայի և Կարսի կառավարիչները:

գույն հետազոտողներից Խ. Կորոզլին, ծագումով լինելով Իրանից, վերջին շրջանի իր ուսումնասիրություններում Խոճկոյի գրառած տարբերակի վերաբերմամբ նախապատվություն է տվել «վաղադրեջանական» որակմանը: Սույն ուսումնասիրության մեջ նախկին Ադրբեջանական ԽՍՀ-ում գրառված պատումներից տարբերելու և քաղաքական նկատառումներով առաջացած տեղանվանական շփոթից խուսափելու նպատակով օգտագործել ենք հայերեն առավել ավանդական «ատրպատականյան» եզրը:

Վիպական Քյոոռոլլու և Նրա զինակիցների պատմական նախատիպերի, ինչպես նաև նրանց գործունեության տարածքի հարցը որոշելու տեսանկյունից առավել արժանահավատ և վավերական պատմական աղբյուրներ են Օսմանյան կայսրության պետական արխիվներում պահվող և XVI դ. վերջով թվագրվող փաստաթղթերը (Mühimme Defterleri), որոնք հիմնականում հրամանագրեր են և նահանգային իշխանությունների զեկույցներ: Մասնավորապես, 1579-81 թթ., 1588 թ. և 1593-95 թթ. Բոլիի, Գերեդեյի, Իչելի, Կարամանի, Անատոլիայի այլ շրջանների բարձրաստիճան պաշտոնյաներին հասցեագրված հրամանագրերում նկարագրվում են Քյոոռոլլու և Նրա գործակիցների ավագակային գործողությունները, նշվում դրանց վերացման անհրաժեշտությունը: Շեշտվում է, որ Քյոոռոլլի անվամբ ավագակը քարավաններ է կողոպտել²:

Ջալալիների ապստամբությունների ժամանակահատվածում գործած պատմական Քյոոռոլլու մասին համահունչ է XVIII դ. հայ մատենագիր

² Վերջին շրջանում Թուրքիայի գիտական շրջանակներում առկա է միտում էպոսի խմբերը բաժանել հետևյալ կերպ. արևմտյան, որն ընդգրկում է Անատոլիայում, Բալկաններում, Ղրիմում և Կովկասում տարածված պատումները, և արևելյան «կամ Թուրքեստանի»՝ թուրքմենական, ուզբեկական, ույղուրական, ղազախական, կարակալպական և տաջիկական պատումներով (**Özkan İ.** “Köroğlu” Destanı’nda Kahraman ve Atinin Doğuşu ile İlgili Motiflerin Tahlili, Türk Dili Dergisi, S. 549, s. 223-233, Ankara, 1997, s. 224; **Saluk R.G.** Köroğlu Destanı’ın Uygur Versiyonu (Metin-Aktarma-Inceleme), Yüksek Lisans Tezi, Tez Danışmanı Prof. Dr. İ. Özkan, Ankara, 2008, s. 3): Նման միտումը որևէ քննադատության չի դիմանում, որովհետև արևմտյան խմբի դեպքում կիրառվում է զուտ աշխարհագրական մոտեցում, և անտեսվում է ընդունված ազգային տարբերակների առկայությունը, իսկ մյուս դեպքում՝ մոտեցումն արդեն կրում է ազգային բնույթ: Հայկական պատումների պարագային, օրինակ, աշխարհագրական մոտեցումը բացարձակ չի գործում, որովհետև միակ հրատարակված պատումը Ուրմիայի բարբառով Արևելյան Հայաստանում գրառվածն է (Քյոռ-Օղլի, ժողովրդական վիպասանություն, հավաքեց և գրի առավ Գ. Թարվերդյան, Երևան, 1941), իսկ անտիպները հիմնականում գրառվել են Արևմտյան Հայաստանի տարածքում՝ Վան, Մոկս, Բաշդալա ևն: Բացի այդ, նման մոտեցման պարագային պետք է նշվեին նաև Իրանի Ատրպատականը և Սիբիրը, ընդհանրապես, Ռուսաստանի Դաշնության տարածքը (ՌԴ տարբեր տարածաշրջաններում բնակվող թաթարներից, թուրքմեններից և կարաիմներից ժամանակին գրառված պատումների հաշվառմամբ): Իսկ Թուրքեստանի հիշատակումն արդեն ինքնին հակազիտական է, քանի որ առկա է հստակ համաթուրանական գունավորումը, և, բացի այդ, Տաջիկստանը որևէ կերպ չի կարող ներառնվել դրա մեջ:

Եղիա Մուշեղյանի³ 1721 թ. Թավրիզում գրած «Գիրք խաղից երաժշտականաց» տաղարանում պահպանված վկայությունը. «Այր{ս} այս բնակեր ի լերինս եւ ի անտառս երկրին օսմանցոց, բազում հեծելագօրօք պահէր անցս ճանապարհաց, երբեմն կողոպտէր զվաճառականս եւ երբեմն սիրով առնոյր դրամս»⁴:

XVII դ. ֆրանսիացի ճանապարհորդ և վաճառական Ժան-Բատիստ Տավերնիեի վկայությամբ՝ քարավանային առևտրական ուղիները տվյալ ժամանակահատվածում մշտապես վտանգավոր էին. «Ամբողջ Թուրքիան լի է ավազակներով, որոնք միասին թաքնվում են խմբերով ու ճանապարհներին դարանակալում վաճառականներին, և եթե նրանք լավ ապահովված չեն, ապա անպայման կկողոպտեն նրանց, շատ դեպքերում՝ կսպանեն... Այս վտանգներից և անհանգստություններից խուսափելու համար դուք ստիպված եք սպասել քարավանների, որոնք մեկնում են Պարսկաստան կամ Հնդկաստան»⁵:

Հատկանշական է, որ արևմտյան խմբի տարբերակներում վաճառականի կերպարն ակնհայտորեն կապակցվում է հայությանը: Ընդհանրապես, հայ վաճառականի հետ կապված դրվագը բնորոշ է տվյալ խմբին: Բոլոր դեպքերում էլ նկարագրվում է նրա՝ հարուստ քարավանների տեր լինելը, Քյոռոզլու հետ համարձակ, հանդուգն պահվածքը, երբ նա չի ցանկանում վճարել պահանջված տուրքը:

Եթե նկատի առնենք XVI-XVII դդ. տարածաշրջանում հայ խոջա-առևտրականների խաղացած բացառիկ ակնառու դերը, որի մասին վկայում են հայ և օտար բազմաթիվ աղբյուրներ, ապա բնավ պատահական չէ

³ Եղիա Մուշեղյանը (Եղիա Աստվածատրյան, նաև՝ Եղիա Կարնեցի, 1689-1750/51) թողել է բավական հարուստ գրական ժառանգություն, որը ձեռագիր մի քանի հատոր է կազմում: 1724 թ. Ռուսաստան և Արևմտյան Եվրոպա ճանապարհորդելիս պարսից օգտին լրտեսություն իրականացնելու կեղծ ամբաստանությամբ Եղիան ձերբակալվում է ռուսական իշխանությունների կողմից և տարվում Մոսկվա: Հենց այս ձերբակալության ժամանակ նրանից առգրավվում են բազմաթիվ ձեռագրեր, այդ թվում և մեզ հետաքրքրող տաղարանը, որտեղ ժողովված են հայատառ թուրքերենով գրված Քյոռոզլուն վերագրվող 13 խաղեր: Տաղարանը հայտնաբերվել է 1937թ. և վերծանելուց հետո 1954թ. հրատարակվել (**Աբրահամյան Ա., Գաբրիելյան Դ.**, Քյոռ-օղլու նորահայտ երգերը, (Հայկ. ՍՍՌ ԳԱ Տեղեկագիր, հասարակական գիտություններ), 1954, N 9, էջ 71-93):

⁴ Քյոռ-Օղլի, ժող. վիպ., էջ 12, հմմտ. **Աբրահամյան, Գաբրիելյան**, էջ 74:

⁵ The Six Voyages of John Baptista Tavernier, a Noble Man of France Now Living, Through Turkey into Persia and the East-Indies, Finished in the Year 1670. Giving an Account of the State of Those Countries. Translated by John Phillips, London, 1678, p. 1-2.

հայ վաճառականի կերպարի առկայությունն էպոսում: Հիշատակելի է, որ XVI-XVII դդ. հայ խոջա-առևտրականների նշանավոր կենտրոններն էին Հայաստանի և Իրանի հյուսիսային շրջանների հայաբնակ քաղաքները: XVII դ. սկզբին շահ Աբաս Ա-ի հրամանով Սպահանի մոտ Հայաստանից բռնագաղթված հայերը հիմնում են Նոր Զուղա ավանը, որն առհասարակ հայ խոջայության խոշորագույն կենտրոնն է դառնում: Հենց նորջուղայեցի վաճառականներն են հանդես գալիս Իրանի և Արևմտյան Եվրոպայի առևտրի միջնորդներ, հատկապես, նրանց միջոցով էր իրականացվում պարսկական հում մետաքսի արտահանումը: Անդրադառնալով խնդրո առարկա ժամանակաշրջանին՝ Լեոն գրում է. «...հայն իր ձեռքում պահում էր Արևելքի և մասնավորապես ամբողջ Պարսկաստանի առևտուրը: Այդ մի չափազանց կարևոր տնտեսական ուժ էր: Պարսկաստանի ապրանքների պահանջը չափազանց մեծ էր Եվրոպայում, և վաճառողներն ահագին շահ էին ստանում: Ամեն տեղ հռչակված էր մանավանդ պարսկական մետաքսը»⁶:

Այսպես կոչված, «լևանտյան առևտրի» ուղիները XVI-XVII դդ. տակավին կարևորվում էին, և հայ վաճառականությունը դրանում դեր ուներ: Բուն Արևմտյան Հայաստանի մի շարք քաղաքներ Սև ծովի վրայով առևտրի տարանցիկ կենտրոններ էին, ինչպես Թոխատը (Եվդոկիա) և Էրզրումը (Կարին): Տարանցիկ ուղիները հիմնականում հետևյալներն էին՝ Կ. Պոլիս-Թոխատ-Էրզրում-Թավրիզ, Ջմյուռնիա-Թոխատ-Էրզրում-Թավրիզ և Տրապիզոն-Էրզրում-Թավրիզ, որոնք որոշակիորեն խափանվել էին XVI դ. վերջին օսմանա-իրանական պատերազմների և այնուհետ ծագած ջալալիական ապստամբությունների հետևանքով, սակայն չէին կորցրել իրենց նշանակությունը և տակավին բանուկ էին⁷: Բնականաբար, ոչ միայն բուն հայկական տարածքներում, այլև դրանցից դուրս հայտնի վաճառաշահ կենտրոններում իրականացվող առևտրի զգալի մասը տնօրինում էր հենց հայ վաճառականությունը: Մի հանգամանք, որ չէր վրիպում նաև Օսմանյան կայսրության տարբեր ծայրամասերում ճանապարհորդող եվրոպացի դիվանագետների և գիտնականների աչքից ևս: Հատկանշական է, XVII դ. կայսրության ներքին կյանքին լավատեղյակ պատմաբան, շվե-

⁶ Լեո, Երկերի ժողովածու, հ. Գ, Ե., 1969, էջ 327:

⁷ Զուլպյան Մ., Զալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ, Ե., 1966, էջ 87-88:

դական դիվանագիտական առաքելության աշխատակից հայազգի Իգնատիուս Մուրադջա դ'Օսոնի⁸ դիպուկ բնորոշումը. «Հայերը մայրցամաքային նահանգներում շատ հաճախ իրենց նվիրում են վաճառականությանը: Այդ նրանք են, և ոչ մահմեդականները, որ կազմում են այդ հարուստ քաղաքները, որոնք յուրաքանչյուր տարի գնում են Ասիայի տարբեր շրջաններ՝ այնտեղ տարածելու աշխարհի չորս մասերի արտադրությունը»⁹:

Ոչ միայն բուն հայկական տարածքներում, այլև ողջ տարածաշրջանում հայ վաճառականները հայկական աղբյուրների կողմից հիշատակվում են որպես «դօլաթաուրք» («տոլվաթվորք»՝ «ունևոր» իմաստով) կամ ուղղակի «պազիրկան» («պազարկան», միջին և նոր պարսկերեն բառացի՝ «վաճառական»): XVI-XVII դդ. Օսմանյան կայսրությունում իշխանական շրջանակների հետ համագործակցող և հովանավորվող վաճառականներն առավել հայտնի էին որպես «չելեբիներ» (հատկապես Կ.Պոլսում և Ջմյուռնիայում), իսկ արտաքին առևտրով զբաղվողները՝ «խոջաներ»: Ավելի ուշ հայ վաճառականները հիշատակվում են նաև որպես «թաջիր» (արաբերեն՝ «վաճառական»), ապա նաև «խալֆա» և «ամիրա» պատվանուններով: Հայտնի և խոշոր վաճառականները սերում էին հենց տվյալ հայկական շրջաններից՝ Թոխատ, Էրզրում, Վան ևն:

Թուրքական, Խոնկոյի գրառած ատրպատականյան («վաղադրբեջանական») տարբերակներում և «Թբիլիսյան ձեռագրում» Քյոռոլլին ոչ թե կողոպտում ու բաց է թողնում իրեն ընդդիմացած հայ վաճառականին, այլև մի անիմաստ և ստոր սպանության հեղինակ է դառնում: Նման զարգացման հիմնական գծերը հետևյալն են. քաջարի վաճառականը կռվում և մենամարտում հաղթում է Քյոռոլլուն, սակայն խղճահարվելով՝ ողջ առողջ բաց է թողնում, երբ վերջինս արցունքն աչքերին գթություն է հայցում: Ատրպատականյան տարբերակում նույնիսկ դրանից հետո հայն իր վրանն է հրավիրում Քյոռոլլուն, մեծարում և 500 թուման նվիրելով՝ ճանապարհում Չամիբել: Բայց հակառակ այս, հիրավի, ասպետական մեծահո-

⁸ Արևելագետ, պատմաբան և դիվանագետ Իգնատիուս Մուրադջա դ'Օսոնը (Ignatius Mouradjea d'Ohsson), նույն ինքը՝ Մուրադջան Թոսունյան (1740-1807), ծնունդով Կ.Պոլսից, շվեդական դիվանագիտական ծառայության մեջ անցնելով՝ եղել է դեսպանության գլխավոր թարգման, իսկ 1782 թ. արժանացել դեսպանորդի աստիճանի:

⁹ **Mouradjea d'Ohsson, Ignatius**, *Tableau Général de l'Empire Othoman: Divisé en Deux Parties, Dont l'Une Comprend la Législation Mahométane, l'Autre, l'Histoire de l'Empire Othoman*, Tome IV, Code Religieux. Paris, 1789, p. 207; **Զուլայան**, էջ 88:

գության՝ Քյոռոզլին երկրորդ անգամ ևս դյուցազնին անվայել կերպով է վարվում՝ Երզնկայի ճանապարհին դարանակալ սպանելով վաճառականին և յուրացնելով նրա հարստությունը¹⁰:

«Քյոռոզլին հաճախ էր անարժան կերպով վարվում,- գրում է Խ. Կորոզլին՝ նույն դրվագը քննարկելով «Թբիլիսյան ձեռագրից»,- սակայն ամեն անգամ ինչ-որ բան ինչ-որ չափով արդարացնում էր թշնամու դեմ նրա գործողությունները: Բայց հայ վաճառականի հետ միջադեպը չունի ոչ մի արդարացում: Պատահական չէ, հավանաբար, որ ասացողը, կարծես, մոռացության է մատնում այս փաստը: Հետագայում... նա {Քյոռոզլին} իր սովորությանը հակառակ՝ ոչ մի խոսքով չի ակնարկում վաճառականի հետ իր հանդիպման մասին... Քյոռոզլին վաճառականի հետ ստորաբար է վարվում ոչ թե նրա համար, որ նա հայ է, այլ անհասկանալի ներքին բնագործով»¹¹:

Ատրպատականյան տարբերակում վաճառականը թուրք է ներկայանում, սակայն սպանությունից հետո Քյոռոզլին, նրա մարմինը մերկացնելով և համոզվելով, որ կարծեցյալ «թուրքը» հայ էր, գոհ է մնում իր արարքից և անգամ երգ հյուսում¹²:

Նմանապես Ուրֆայում և Խարբերդում (Էլազիզ) գրառված պատումներում Զոռ-Բեզիրգենը հայ է ներկայացվում, սակայն բացասական է պատասխանում իր հայ լինելու հարցմանը («Ես հայ չեմ»): Մենամարտում հայ վաճառականին հաջողվում է նույնիսկ գերեվարել հոխորտացող ավազակին, որը, ի վերջո, կարողանում է սպանել հակառակորդին և տիրանալ նրա նժույգին: Ամեն դեպքում անգամ սպանության ելքով հայը «մարդկայնության դաս» է տալիս Քյոռոզլուն, որը դրանից ազդվում և այլևս դադարեցնում է իր ավազակային գործունեությունը¹³: Խարբերդում գրառված խաղերից մեկում Քյոռոզլին Թոխատ ճանապարհվող վաճառականին ուղղակի դիմում է որպես «բեզիրգենի էրմենի», որը կրկին ժխտում է¹⁴:

¹⁰ Chodzko A., p. 192-194.

¹¹ Короглы Х.Г. Взаимосвязи эпоса народов Средней Азии, Ирана и Азербайджана, М., 1983, с. 243.

¹² Սույն հատվածի ծանոթագրության մեջ Խոճկոն բացատրություն է տալիս, թե պարսիկները (իմա՝ շիա մահմեդականները, որոնցից է Քյոռոզլին) քրիստոնյաներից առավել ատում են սուննի թուրքերին և գերադասում ավելի հայից խաբված լինել, քան թե որևէ թուրքից (Chodzko A., p. 194):

¹³ Boratav P.N. Köroğlu Destanı, Bütün Eserleri-6, BilgeSu, Ankara, 2016, s. 47-48, 72.

¹⁴ Նույն տեղում, էջ 330-331:

Մարաշում գրառված պատումներում առկա են վաճառականի տարբեր կերպարներ, ընդամին, առանձին են ներկայացվում միևնույն Չոռ-Բեզիրգենի և «հայ վաճառականի» (Ermeni Bezirgân) գրույցները¹⁵։ Հայը տվյալ տարբերակում նշվում է նաև “İrmeni” ձևով, որը, ըստ երևույթին, տեղական բարբառային արտասանության արդյունք է¹⁶։

Ընդհանրապես, թուրքական պատումներում կայուն առկա է վաճառականի կամ վաճառականների դեմ «պայքարի» մասին գրույցը։ Վաճառականը երբեմն բացեփրաց ներկայանում է որպես հայ, սակայն հիմնականում խուսափում է ուղղակի հարցից, ինչպես ատրպատականյան տարբերակում¹⁷։ Վաճառականի և Քյոռոզլու դիմակայության մոտիվը պատումների զգալի մասում առկա է նաև չափածո խաղերով, որոնցից շատերը հրատարակել է հենց Բորաթավը¹⁸։ Դրանցից մեկում անգամ նշվում են վաճառականների հայկական անունները՝ Մանուկ, Պետրոս, Քոռպողոս, Ասատուր Խոջա¹⁹։ Էրզրումում գրառված խաղերից մեկում վաճառականը հիշատակվում է որպես «Սինան Բեզիրգեն»²⁰։

Հայ վաճառականի և Քյոռոզլու դիմակայության դրվագը ցայտուն է արտացոլված նաև նորահայտ մի ձեռագրից քաղված արաբատառ «թյուրքյու» խաղում, որը ներկայացվում է հերոսների միջև ծավալուն երկխոսությամբ²¹։ Ընդ որում, առավել ընդգծվում է վաճառականի անզիջում և խրոխտ կեցվածքը՝ քարավանային ճանապարհի ավազակային տուրքը վճարելու պահանջից հրաժարվելու առումով, որն անհասկանալիորեն հիմք է տալիս թուրք ուսումնասիրողին նրան բնութագրելու որպես «դաժան առևտրական, կեղծ անձնավորություն»²²։

Ինչպես արդեն նշվել է, որպես կանոն, էպոսի կերպարներն ու գործողության վայրերն անպայման տեղայնացվում են ազգային պատումներում։ Սակայն հատկանշական է, որ թուրքական և այլ պատումներում վա-

¹⁵ Նույն տեղում, էջ 56։

¹⁶ Նույն տեղում, էջ 72, 103, 168։

¹⁷ Նույն տեղում, էջ 103։

¹⁸ Նույն տեղում, էջ 224-229։

¹⁹ Նույն տեղում, էջ 258-259։

²⁰ Նույն տեղում, էջ 298։

²¹ **Saluk R.G.** Köroğlu, Ermeni ve Bir Türkü, Uluslararası Avrasya Sosyal Bilimler Dergisi (IJOEES), C. 6, S. 20, s. 224-241, Antalya, 2015, s. 234-238.

²² Նույն տեղում, էջ 240։

ճառականը կրկին որպես հայկական կերպար է ներկայացվում, որը, անշուշտ, խնդրո առարկա պատմական ժամանակահատվածի բնորոշ իրողությունների գեղարվեստական արձագանքն է: Պատկերը միանգամայն այլ է ավելի ուշ գրառված և հրատարակված պատումներում, ինչպես նաև ուղղակի գրական փոխադրություններում, որտեղ հայկականության հետքերն իսպառ վերանում են²³:

Նույն հարուստ քարավանատեր վաճառական Բեզիրգենի կերպարն առկա է նաև Բուլղարիայի թուրքերի շրջանում տարածված Քյոռոջլու մասին ասքերում: Քյոռոջլին այս դեպքում ևս «զաքյաթ» է պահանջում, ապա կողոպտում վաճառականին²⁴:

Հայ վաճառականի կերպարը կայուն տեղ է գտել նաև էպոսի համեմատաբար նվազ ուսումնասիրված գազաուզյան տարբերակում: Ընդ որում, առավելապես ընդգծվում է մահմեդական Քյոռոջլու հակառակորդ հայի «անհավատ» (*kâfir*), իմա՝ քրիստոնյա լինելը: Հայ բեզիրգանի և Քյոռոջլու դիմակայությունը նկարագրվում է նաև չափածո խաղերով²⁵:

Թվացյալ հայաոյացություն պարունակող դրվագը, այնուամենայնիվ, հակասության մեջ է տարբեր պատումներում նկատվող «հայկական շերտի» հետ: Այսպես, Խոճկոյի գրառած տարբերակում Քյոռոջլին մի առիթով ասում է. «Ես սիրում եմ հայոց խաչը: Չի մեռնի նա, ով այն համբուրում է» (*«I like the Armenian cross. He will not die who kisses it»*²⁶; Բորաթավի մոտ՝ *“Severim ben Ermeninin haçını...”*²⁷): Մի առիթով Քյոռոջլին պատասպարվում է Կարսի մոտ գտնվող հայոց եկեղեցում²⁸ կասկած հարուցելով զինակիցների մեջ. «Արդյո՞ք մի հայ է նա, որ պետք է գնա և աղոթի եկեղեցում»²⁹:

Վաճառականի կերպարից բացի, Ն.Փ. Բորաթավը, հատկապես, Մարաշում գրառված պատումներում ընդգծում է հայկական կերպարների

²³ **Sever M.** Köroğlu Destanı Antep Rivayeti. “Bilig” Türk Dünyası Sosyal Bilimler Dergisi, S. 24, s. 65-78, Ankara, 2003, s. 70.

²⁴ “Köroğlu”, hazırlıyan ve redakte eden Rıza Mollof, Sofya, 1957, s. 57-58.

²⁵ **Bayat F.** Türk Destancılık Tarihi Bağlamında Köroğlu Destanı - Türk Dünyasının Köroğlu Fenomenolojisi, Ötüken Neşriyat Yayınevi, İstanbul, 2009, s. 143.

²⁶ **Chodzko A.**, p. 283.

²⁷ **Borataş P.N.**, s. 126.

²⁸ **Chodzko A.**, p. 207.

²⁹ Նույն տեղում, էջ 211:

և հատուկ անունների հետ կապված առատությունը³⁰: Առավել առանձնահատուկ է վերջերս Ադանայի շրջանում գրառված էպոսի նորահայտ պատումը, որում առկա է որևէ այլ տեղ չհանդիպող մի ամբողջական գլուխ՝ «Քյոռոջլու Հայաստանի արշավանքը», որտեղ նկարագրվում են Քյոռոջլու պատերազմը հայերի դեմ, Հայոց թագավորի գերեվարումը և այլն, որը պետք է որ տեղական պատմական իրողությունների արգասիք լինի³¹:

Ի վերջո, Բորաթավը թուրքալեզու հայ աշուղների ազդեցությանն է վերագրում հայերի նման հաճախադեպ հիշատակությունները³², որի հետ չի համաձայնվում սփյուռքահայ բանասեր Հայկ Պերպերյանը. «Մեր զգացումը այն է, որ թուրքերէն լեզուով պատմուած զրոյցներու եւ վէպերու մէջ հայ հերոսներու գոյութիւնը արդիւնք չէ հայ աշուղներու ազդեցութեան, այլ հայկական եւ թրքական զրոյցներու ծուլման, զոր հայ աշուղները կատարած են»³³: Հայ վաճառականի և հայերի հետ կապված դրվագների մասով Պերպերյանն իրավամբ շեշտում է. «Այս յիշուած դրուագները կրնան իրական դէպքերու արձագանգը ըլլալ: ԺԶ. եւ ԺԷ. դարերուն, հայ վաճառականները ու կարաւանները կ'երթեւեկէին Պարսկաստանի եւ Փոքր Ասիոյ միջեւ եւ կրնան ենթարկուած ըլլալ ճելալիներու կամ ամազակներու յարձակմանց»³⁴:

Հակառակ Թուրքիայի հանրապետական շրջանում հրատարակված Բորաթավի աշխատություններում հայկական նյութի այս և այլ առատ դրսևորումների՝ նախկին Ադրբեջանական ԽՍՀ-ում հրատարակված պատումներում բացակայում է ոչ միայն վաճառականի կերպարի հայկականությունը, այլև համապատասխան դրվագն ամբողջությամբ: 1927 թ. առա-

³⁰ Boratav P.N., s. 126.

³¹ Kaya D. Köroğlu Kollarinin Yeni Varyantlari. Türklük Bilimi Araştırmaları, S. 5, s. 311-334, Sivas, 1997.

³² Boratav P.N., s. 126.

³³ Պերպերյանի հաղորդմամբ՝ «դիւցազնավէպին տարբերակներէն մէկուն մէջ Այվազ ալ Հայ մըն է, եւ Պ.Ա. Սագըզեան կը հաղորդէ թէ Կեսարիոյ շրջանին մէջ ալ Այվազ իբր հայ ճանչցուած է»: Ապա իրավամբ եզրակացնում է. «Եթէ հայ աշուղները ազգասիրաբար Հայերու պատուաբեր դերեր վերագրել ուզած ըլլային, ինչպէս կը թուի խորհիլ Պ. Պորաթաւ, Այվազը իբր Հայ {չէին} ներկայացներ, որովհետեւ Այվազ շատ ալ պատուաբեր տիպար մը չէ» (**Պերպերեան Հ.**, Արշակ Բ. եւ Քեռոջլու, Փարիզ, 1938, էջ 42): Նույնը վերաբերում է նաև Համզայի կերպարին, որն էպոսի բոլոր տարբերակներում բացասաբար է ներկայանում:

³⁴ Նույն տեղում:

ջին իսկ արաբատառ հրատարակության մեջ առկա են որոշ զրույցներ, ընդհանրապես, «վաճառականների դեմ պայքարի» թեմայով, ինչպես «Վաճառականի փախուստը Քյոռօղլուց», որում պատմվում է հենց վաճառականի (թաջիր) կողմից Քյոռօղլու դրամների հափշտակության մասին³⁵։ Մի զրույց, որն իսպառ բացակայում է մյուս բոլոր հայտնի ազգային տարբերակներից և հիմնականում զուտ ադրբեջանական հորինվածք է։ Մեկ այլ ինքնուրույն զրույց պատմում է աշուղ Ջունուլի մասին, որն ուղեկցում էր վաճառականների (կամ Բեգիրգանբաշիի) քարավաններին երկարատև ճանապարհորդությունների ընթացքում և այդ կերպ ընկնում է Քյոռօղլու ձեռքը՝ նրա մոտ մնալով ցմահ³⁶։ Վաճառականի բնորոշ դրվագի բացակայության պայմաններում, այնուամենայնիվ, քարավանի կողոպուտի և դրա հետ կապված աշուղ Ջունուլի կերպարի ի հայտ գալը ժամանակին որոշ թերահավատություն է ներշնչել նաև Բորաթավին³⁷։

1912 թ. Խոյի բարբառով բանահավաք Գ. Թարվերդյանի գրառած և առայժմ միակ հրատարակված հայկական պատումի մեջ առանձնահատուկ ընդգծվում է Չամիբեյի՝ ավազակային գործունեության համար հարմարագույն վայր լինելը³⁸։ Նմանապես առկա է մի առանձին գլուխ վաճառականի դրվագի կապակցությամբ՝ «Քյոռ-Օղլին և թաջիրը», որտեղ համոզիչ ներկայացվում է գլխավոր հերոսի գործելակերպը³⁹։ Այդպես Քյոռօղլին լիովին սեփականացնում է սուլթան Մուրադի «Իրան թաջիր» Միհրանի ունեցվածքը, երբ վերջինս հրաժարվում է տուրք վճարել⁴⁰։ Ուշագրավ է, որ այս դրվագում վաճառականը, ի տարբերություն այլոց, կրկին փորձում է դիմադրել և մենամարտել Քյոռօղլու հետ⁴¹։ Թեև «թաջիրի» ազ-

³⁵ Каррыев Б.А. Эпические сказания о Кёр-оглы у тюркоязычных народов, М., 1968, с. 54.

³⁶ Նույն տեղում, Boratav P.N., s. 44:

³⁷ Նույն տեղում, էջ 73: Հաշվի առնելով թուրքական և ադրբեջանական տարբերակների ակնառու ծագումնաբանական կապը՝ ադրբեջանական համահավաք բնագրում վաճառականի (հայ վաճառականի) հետ կապված դրվագի արհեստական բացակայությունն առավել քան ակնհայտ է։ Բացառված չէ, որ 1920-ական թթ. սկսած, Ադրբեջանական ԽՍՀ հրատարակություններում այն տեղ չի գտել նաև խորհրդային գրաքննության սահմանափակումների հետևանքով՝ համաձայն «Ժողովուրդների բարեկամության» գերիշխող քարոզչական դրույթի։

³⁸ Քյոռ-Օղլի, Ժող. վիպ., էջ 142:

³⁹ Նույն տեղում:

⁴⁰ Նույն տեղում, էջ 144:

⁴¹ Նույն տեղում, էջ 143:

գութունն այստեղ չի նշվում, սակայն Քյոռոլու՝ հայերի վերաբերյալ թուրքական ասացվածք մեջբերելուց հետո («Էրմանի վերմազ դոխկազի, Յիյար թոպալուզի, վերար օթթուզի»)՝⁴² պարզ է դառնում Միհրանի՝ հայ վաճառական լինելը⁴³։ Մեր խորին համոզմամբ, հենց այս դրվագն է իր հիմնական գծերով այն առանցքը, որի շուրջ կազմվել է թուրքմենական պատումներում առկա «Բեզիրգեն» («Վաճառական») շահան։ Ընդհանրապես, արևելյան խմբի տարբերակներում սակավադեպ է հիշատակվում Քյոռոլու (Գյոռոլի) կողմից վաճառականների քարավաններ կողոպտելը կամ տուրք վերցնելը՝ ի տարբերություն արևմտյան խմբի։ Քյոռոլին (Գյոռոլին) այս դեպքում ևս անիմաստ (թեև համեմատաբար փոքր-ինչ պատճառաբանված) սպանության հեղինակ է դառնում, սակայն կարծես զղջալով քավում է իր մեղքը՝ փառավոր կերպով թաղելով Բեզիրգենին և, նրա կտակի համաձայն, պաշտպանում սպանվածի հայրենիք Գուրջաստանը և քրոջը։ Թուրքմենական որոշ պատումներում տարբեր է ներկայացվում Բեզիրգենի ծագումը. Փելվան-բախշու տարբերակով նա Սալսալի ցեղից Ակբեկի որդին է, Գուրջաստանից, իսկ այս երկրանունը, ինչպես հայտնի է, Կենտրոնական Ասիայում նույնացվում է ոչ թե միայն կոնկրետ Վրաստանի, այլև ամբողջ Կովկասի հետ⁴⁴։ Հատկանշական է, որ Գուրջաստանից Թուրքիա անցնելու համար Բեզիրգենը հատում է Արաքս գետը, այսինքն՝ ակնհայտ է, որ տվյալ դեպքը խոսքը կոնկրետ Վրաստանի մասին չէ։

Ընդհանրապես, ինչպես Վ. Ժիրմունսկին է ժամանակին նկատել, Կենտրոնական Ասիայում տարածված էպոսներում և հերոսական ասքերում որպես հակառակորդ են հանդես գալիս թուրքերի պատմական թշնամի «հեթանոս» կալմիկները, իսկ Կովկասից՝ Գուրջաստանի (Վրաստանի) «գյաուր» քրիստոնյաները, ինչպես Բամսը-Բեյրեքին և նրա 40 հեծյալներին նենգաբար բռնած Բայբուրդ (Բաբերդ) ամրոցի տերը⁴⁵։ Ընդամին, Գուրջաստանը (Գուրջաստան, ղազ.՝ Կորժաստան ևն) թուրքմեն, տաջիկ և այլ ասացողների շրջանում նույնացվում էր ողջ Կովկասի հետ։

Այլ պատումներում Բեզիրգեն-հսկան իրանական նշանավոր Սեիստան նահանգից է կամ քուրդ։ «Քուրդ» բառն այս դեպքերում հաճախ օգ-

⁴² Հայը չի տա ինը, կուտի ծեծը՝ կտա երեսունը (թուրքական ասացվածք)։

⁴³ Նույն տեղում, էջ 144։

⁴⁴ **Гёроглы**, Туркменский героический эпос, составитель Б.А. Каррыев, М., 1983, с. 794.

⁴⁵ **Жирмунский В.М.**, Народный героический эпос, М.-Л., 1962, с. 213.

տագործվում է «գայլ» իմաստով («Գուրջիստանի ուժեղագույն գայլը»), որը դրական մակդիր է թյուրք վիպական ավանդության մեջ⁴⁶:

Գուրջիստանը միևնույն իմաստով հանդես է գալիս նաև էպոսի համեմատաբար նվազ ուսումնասիրված ուղղության «Էմիր Գյոռոզլու» տարբերակում, որտեղ գլխավոր հերոսի հակառակորդը տվյալ երկրի կառավարիչ Հունհար (Խունկար) շահն է⁴⁷: Բեգիրգենի կերպարն առկա է տաջիկական «Գուրուգլի» («Գուրգու-լի») էպոսում ևս՝ Գուրջի փահլևան կամ Գուրջիխան անվամբ, որը Խուն-կարի (Խունխար փաղիշահ) հսկաներից է, ունի մեծաթիվ ոչխարի հոտեր, ինչպես թուրքմենական տարբերակում⁴⁸: Տաջիկական բոլոր պատումներում էլ Գուրուգլի-սուլթանը հարձակվում, զգեստնում է Գուրջիխանին և կտրում նրա գլուխը⁴⁹:

«Բեգիրգենը», որն առկա է նաև ուզբեկական պատումներում, երբեմն բառացիորեն կրկնում է Քյոռոզլու և հայ վաճառականի հետ կապված դրվագը, փաստորեն, ծագումնաբանորեն ևս հանգելով էպոսի արևմտյան խմբին: Ղազախական որոշ պատումներում նմանապես հանդիպում է Բեգիրգենի կերպարը, առկա է մի ամբողջական գլուխ («Քոռ-ուղիլին և Բեգիրգենը»), որում Բեգիրգենը կրկին ներկայացվում է որպես ահռելի ուժի տեր քաջ հսկա, գլխավոր հերոսի հակառակորդներից: Ընդամին, դեպքերը զարգանում են միևնույն սյուժեով⁵⁰:

Վաճառականի կերպարը (Աղա-Ջաուս) և գլխավոր հերոսի հետ «զաքյաթի» պատճառով մենամարտի դրվագը պահպանվել են նույնիսկ Վ. Ռադլովի գրառած տորթլ-թաթարական «Կուրնըն-ուլը» («Կուր-ուլը») տարբերակում⁵¹:

Այսպիսով, ինքնըստինքյան հերքվում է որոշ ուսումնասիրողների արդեն արմատացած պնդումը, թե «Բեգիրգեն» շահայի (դաստանի) սյուժեն, զուգահեռներ չունենալով արևմտյան խմբի տարբերակներում, հայտ-

⁴⁶ Каррыев Б.А., с. 188.

⁴⁷ Saluk R.G., 2008, s. 67.

⁴⁸ Гургули. Таджикский народный эпос, составитель И.С. Брагинский, М., 1987, с. 369-370.

⁴⁹ Гургули. Девять сказаний о подвигах Гургули и Аваза богатыря, Душанбе, 1983, с. 29-30.

⁵⁰ Özdemir A. “Körüğli Men Bezergen” Destanındaki Özel Adlara Dair, “Bilig” Türk Dünyası Sosyal Bilimler Dergisi, S. 37, s. 91-114, Ankara, 2006, s. 92-97.

⁵¹ Радлов В.В. Образцы народной литературы тюркских племен, ч. VIII. Наречия османские, тексты собраны И. Куношем, СПб., 1899, с. 259.

նի է միայն թուրքմենական և ուզբեկական ասքերում, որն էլ իբր վկայում է դրա՝ բախշիների և շաիրների միջավայրում առաջացած լինելու մասին⁵²: Հատկանշական է նաև վաճառականի կերպարի կապակցումը Վրաստանին, իմա՝ Կովկասին, որով կրկին ակներև է դառնում տվյալ դրվագի ծագումնաբանական կապն էպոսի արևմտյան խմբի տարբերակների հետ:

Վերոշարադրյալի հաշվառմամբ կարելի է անել ներքոհիշյալ եզրակացությունները.

- Վաճառականի կերպարը և դրա հետ կապված դրվագը կայուն տեղ են գրավում «Քյոռոկի» էպոսի արևմտյան խմբի տարբերակներում, ընդամին, հիմնականում վաճառականին վերագրվում է հայկական ծագում:

- Մինևույն կերպարն ու բնորոշ դրվագն ակնհայտորեն իրենց անդրադարձն են ստացել էպոսի նաև արևելյան խմբի հիմնական տարբերակներում, մանավանդ թուրքմենական պատումներում, որտեղ վաճառականի հայկականությունը փոխարինվել է ընդհանուր կովկասյան ծագմամբ:

- Ակնհայտորեն վաճառականի կերպարի և նրա հետ կապված դրվագի ճանապարհով էպոսում արտացոլվել են XVI-XVII դդ. տարածաշրջանում հայ վաճառականության խաղացած նշանակալից դերը և ջալալիական ապստամբությունների ժամանակահատվածում արձանագրված պատմական իրողությունները:

ПЕРСОНАЖ КУПЦА В ЭПОСЕ “КЕРОГЛЫ” И ОСНОВЫ ЕГО ИСТОРИЗМА

РАМАЗЯН С.М.

Резюме

Для всех национальных версий эпоса “Кероглы” характерно наличие персонажа купца и мотива противостояния. Детали, реалии и география меняются в зависимости от среды распространения эпоса. На основе анализа армянских и прочих источников можно сделать следующие выводы:

⁵² Каррыев Б.А., նշվ. աշխ., էջ 186; Короглы Х.Г., նշվ. աշխ., էջ 243:

- персонаж купца и связанный с ним мотив занимают особое место в западной версии эпоса, причем купцу в основном (Безирген и т.п.) приписывается армянское происхождение;

- тот же персонаж и мотив нашли свое отражение и в восточных эпосах, особенно в туркменских сказаниях, где купец имеет не армянское, а кавказское происхождение.

- посредством персонажа купца и связанного с ним мотива в эпосе отражены исторические реалии периода джелалийских восстаний и роль армянского купечества в регионе в XVI-XVII вв.

THE PERSONAGE OF THE MERCHANT IN THE EPIC OF “KOROGLU” AND THE BASIS OF ITS HISTORISM

S. RAMAZYAN

Abstract

The presence of personage of the merchant and the motive of confrontation with the protagonist in all national versions is characteristic of the epic "Koroglu". Details, realities and geography vary depending on the places and environment of the epic. Based on the analysis of Armenian and other sources, it's possible to make the following conclusions:

- The personage of the merchant and the motive associated with him, occupy a special place in the western group of the epic, and mainly the Armenian origin is attributed to the merchant (Bezirgen etc.);

- The same personage and motive were also reflected in the versions of the eastern group of the epic, especially in the Turkmen legends where the Armenian origin of the merchant was replaced by a common Caucasian;

- Through the personage of the merchant and the motive associated with him, the significant role of the Armenian merchants in the region of the XVI-XVII centuries and the historical realities of the period of the Jelali Revolts (Celali Rebellions) reflects in the epic.

ԳՈՅԱՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ XX ԴԱՐԱՍԿՁԲԻ ՖՐԱՆՍԱՀԱՅ ԱՐՁԱԿՈՒՄ

ԿԱՐԱԳՈՒԼՅԱՆ Հ.Պ.

Հետպատերազմյան առնվազն երեք տասնամյակների ընթացքում Ֆրանսիայի գրական կյանքի առաջին գծում էին այն գրական ուղղությունները, որոնք ընդունում էին գրողի պատասխանատվությունը հասարակության առջև, նրա սերտաճումը սոցիալական հարաբերությունների սուրանկյուն արձագանքներին, քննում էին անհատի դրաման ընկերային անտարբերության ընդհանուր խորքի վրա: Երկրի գրականության մեջ աստիճանաբար գերիշխան դիրքեր են նվաճում «նոր գրականության» և գոյափիլիսոփայական հայացքները: Վերջինիս յուրահատկությունն այն էր, որ, ունենալով փիլիսոփայական մշակված կայուն համակարգ, միաժամանակ դուրս էր մղվում փիլիսոփայական գեղագիտական համակարգից և դառնում աշխարհագրագոյություն, ոչ քիչ դեպքերում՝ առօրեական և զգացմունքային (Գ. Մարսել, Մ. Պրուստ, Ժ.-Պ. Սարտր և ուրիշներ):

Սփյուռքահայ գրականության մեջ գոյափիլիսոփայական որոնումների հանդիպում ենք դեռևս XX դարի 20-30-ական թթ. Վ. Շուշանյանի և Շ. Նարդունու, Զ. Որբունու և Հր. Զարդարյանի ստեղծագործություններում: Հայ գրողները հետևել են եվրոպական գրական արժեքներին, արձագանքել նրա և ամերիկյան գեղարվեստական նորույթներին: Փիլիսոփայական ուղղության որոշ ներթափանցումը հայ գրականություն առաջին հերթին բացատրվում է Սփյուռքի անօրինակ ծանր վիճակով, այն իրատես տագնապով, թե նա դատապարտված է մահվան:

Հայ գրականության մեջ Վազգեն Շուշանյանն առաջիններից է, որ հետևել է դարի առաջնային գրական ուղղություններից գոյափիլիսոփայությանը և իր ստեղծագործություններով հաստատել գոյափիլիսոփայական ուղղության ներթափանցումն ու ամրապնդումը սփյուռքահայ գրականության մեջ:

Վ. Շուշանյանը հայ բազմադարյան գրականության մեջ առաջին հեղինակներից է, որ բերել է մարդու ներապրումի, ինքնասուզումի ստեղծագործական գայթակղությունը, որի շնորհիվ հայ գրականությունը դուրս է եկել մեծ գրականության մայրուղի: Գրողի գրեթե բոլոր գործերում տեսնում ենք դեմ դիմաց կանգնած փիլիսոփային և ստեղծագործողին: Դեմ դիմաց, բայց ոչ նույն աստիճանի վրա: «Ծառերը ծլարձակ» պատմվածքը պետք է դասել մեզ արդեն քաջածանոթ «ներապրումի» գեղագիտական համակարգում քչերի մեջ լավագույնների շարքում: Այն առանձին «սյուժետային պատումներից» կառուցված խոստովանանքային պատմվածք է, որով պանծացվում են հոգևոր-զգացական այն արժեքները, որոնք անհրաժեշտ են գրողին կյանքի լիարժեքությունը և ամբողջականությունը ճանաչելու համար: Պատմվածքն աչքի է ընկնում սեղմ դիպաշարով, որի ընձեռած սահմանափակ հնարավորություններում գրողն իրեն դրսևորում է հոգեբանական խորաթափանց վերլուծական կարողությամբ, ներապրումի համընդգրկուն բացահայտմամբ:

«Ծառերը ծլարձակ» պատմվածքի սյուժետային զարգացումն անցյալի և ներկայի համադրված քննությունն է՝ բացված հերոսի ներքին տեսողությամբ: Պատմվածքի վերնագիրն անգամ ցույց է տալիս գեղարվեստական միտումնավոր հնարանքը, կառուցողական պատկերի հեռահարությունը: Այն օգնում է փիլիսոփայական-հոգեբանական հարցադրումները գեղարվեստական փաթեթում քննելու՝ առանց գայթակղիչ խճողանքի: Պատմվածքն առաջ է ընթանում անցյալի հիշողությունների վրա հյուսված մոտ քառասուն հաջորդական պատկերների շնորհիվ: Այգեստանը դառնում է պաստառ՝ հերոսի մտածումների շղթայական ընթացքի համար: Գլխավոր հերոսը *ես*-ն է՝ ինքը գրողը, որի հիշողության առանցքի շուրջ ծավալվում են ու զարգանում պատմվածքի գործողությունները: Շուշանյանի *ես*-ի մեջ *մենք*-ն ավելի տարածուն է: Դրա հավաստիացումն է պատմվածքի ընծայականը.

Անհատի տիպային ընդհանրացված ձգտումը բխում է Շուշանյանի ստեղծագործության առանձնահատկություններից: Անանուն հերոսն իր հետ բերում է բարոյական նոր ըմբռնում, անհրաժեշտ փիլիսոփայական-գեղարվեստական մտածողություն: Փիլիսոփայական դասերի հիման վրա նա մարդուն տեսնում է մերթ անընկճելի, մերթ անկման, խեղճության,

հուսալքության վիճակում: Գեղարվեստական առաջադրություններից մեկն էլ մարդու փիլիսոփայական ըմբռնման նոր տեղաշարժն է:

Գեղագիտական հայեցողության համակարգում Վ. Շուշանյանի հակումը «գիտակցության», ներհուսի գործոնների կողմն է, այն մնում է իբրև առաջնային ելակետ:

Անցյալը Վ. Շուշանյանի ստեղծագործության մեջ օտար միջավայրի պարտադրող պառակտման դեմ հոգևոր հենարան է, ազգային որոշակի ինքնություն: Նա անցյալը ներկայացնում է ժամանակից ու տարածությունից դուրս մի աշխարհ: Հոգեզգացական աշխարհին տրվելու ներքին հուզումը հերոսին ազատել է այն գիտակցությունից, թե կյանքում տիրականը ոչինչն է, բնության գերիշխանությունը ևս հենվում է նման մտահանգումների վրա:

Վ. Շուշանյանին հիացնում է մարդու ներաշխարհի թռիչքը: Նրան հիացնում է առավել ևս տառապանքի մեջ մարդու դիմակայության սահմանը, երբ նա չի հանձնվում թշվառության կամ խեղճության հորձանքին: Հենց այդ ճանապարհին է հեղինակի հերոսի համար գոյության խորհուրդը: «Ես, որ մենավոր՝ ծառի մը տակ նստած կմտածեմ, թե երբ իմ տանս վրա ալ գարուն պիտի իջնե, պիտի ծաղկին ծառերը, ու վարդենիները վերջապես իմ թաց ու խոնավ պատերես ի վեր հասակ պիտի նետեն»¹:

Նրա ես-ը՝ բարոյական հանձնառություն կրողը, որ դիմակայում է ժամանակին և հոռետես գաղափարներին, պատրաստ է իրագործել «ապրելու դատապարտվածությունը»՝ արձակագիր-փիլիսոփայի գոյափիլիսոփայական գեղագիտական ծրագիրը, որն իր բարձունքին է հասնում «Մթին պատմություն» վեպում և «Ներքին դաշտանկար» օրագրությունում: Մեր խոսքը հաստատելու համար կատարենք փոքրիկ մեջբերումներ: «Մթին պատմություն» վեպում ընդհանուր հսկիչը անապաստան աշակերտներին սովորեցնում է ապրելու իրավունքը. «Կարևորը միայն ապրելը չէ...այլ մեծությամբ ապրելը: Պետք է, որ ազգը իր մեջքը շտկե»²: «Ներքին դաշտանկարում» կարդում ենք. «Պետք է, սակայն, շարունակել պայքարը, դանդաղելեն ապրիլ, ունենալ ապրելու արտակարգ քաջութ-

¹ Շուշանյան Վ., Երկիր հիշատակաց, Ե., 1966, էջ 245:

² Շուշանյան Վ., Երկու վիպակ, 1983, Ե., էջ 258:

յունը՝ այս մոայլ, խուլ ու գեշ օրերուն»³: Փիլիսոփայական երանգն ավելի է խտանում մահվան ու կյանքի շուշանյանական ընկալումներում:

Շավարշ Նարդունին ևս հետևում էր ժամանակի համաշխարհային գրական քիչ թե շատ ուշագրավ նորություններին: Սփյուռքահայ գրողն իր ստեղծագործություններում զգալի տեղ է տալիս անցյալի պատկերներին: Շ. Նարդունու փիլիսոփայական տեսողությամբ՝ անցյալը ներաշխարհի հայտնության նախադուռն է: Եվ նա ճիշտ է: Իրականում գրողն անցյալն անընդմեջ հյուսում ու դարձնում է ժամանակ: Գեղարվեստական ժամանակ: Դա այն «հին» տպավորությունը չէ, մեզ ներքին հավասարակշռության հանգեցնող ծանոթ դատողությունները, որոնցով կողմնորոշվում ենք ներկայի մեջ: Մեր կենսագրության ապրած յուրաքանչյուր դրվագն արդեն բարի անցյալ է: Շ. Նարդունին կոտրում է մեր ներքին մտածողության «խաղաղությունը» և անցյալի մասին իր խոսքով ստիպում ընթերցողին նորովի խորհել իր ներկայի մասին, թե այն ինչ տարրերով է լեցուն: Անցյալը Շ. Նարդունու ստեղծագործության մեջ ներկայանում է որպես կենդանի և գործուն մի ուժ, նույնիսկ ժամանակից ու տարածությունից դուրս բերված մի աշխարհ:

«Բնութեան եւ ընտանիքի ներգործութենէն յետոյ, ժամանակակից հայ կեանքը, Մեծ Արհաւիրքը, իր բոլոր դժոխային ձեւերով, ակօսներ բացեր են անոր մտքին մէջ,-գրում է սփյուռքահայ գրականագետ Մկրտիչ Պարսամյանը, - հայրենի գիւղին աքսորուիլը, այդ անարդար գործողութեան կապուած բոլոր բացասական զգայութիւնները, հայրենի գիւղին կարօտը, կորսուած ու քանդուած երդիքներու հեռաւոր յիշատակը, բարոյական ու նիւթական զրկանքները, բոլորը, բոլորը կը ձեւաւորեն խմորը անոր մտաւորական եւ հոգեկան աշխարհին»⁴:

Շ. Նարդունու ստեղծագործության հիմքում ընկած է իր հայրենի երկրի, ծննդավայրի՝ Արմաշի հետ կապված վերհուշը: «Անոր «Հէքիաթներու ալպոմը», - հավաստում է Մինաս Թեղեղյանը, - «Մեղեդիներ, մեղեդիներ» պատմուածքներու, հէքիաթներու եւ պատկերներու հատորը, «Երուսաղէմ, Երուսաղէմ» վիպերգութիւնը, «Բաներ, բաներ, ինչ բաներ», «Կանաչ բա-

³ **Շուշանյան Վ.**, Ներքին դաշտանկար, Ե., 1995, էջ 170:

⁴ **Պարսամյան Մ.**, Շավարշ Նարդունի, Փարիզ, 1933, էջ 126:

ժակով», «Ծաղկամատեան» հատորները հայրենի գիւղի պատկերներու, քաղցր ու թախծոտ վերյիշումներու էջեր կը բերեն»⁵:

Մարմարայի եվրոպական ափին գտնվող այդ հայրենի գյուղաքաղաքը դրախտի մի անկյուն է եղել: Ինչպիսին էլ լիներ այդ կորսված եզերքը, միևնույն է, յուրաքանչյուր երկում ներկայանալու էր երազին մոտեցող «փոքրիկ սրբություններով»: Շ. Նարդունու ստեղծագործական ժառանգության մեջ մի յուրօրինակ տեղ ունի «Մեղեդիներ, մեղեդիներ» ժողովածուն՝ հեքիաթներ, բանաստեղծություններ, պատմվածքներ, որոնք ներկայացնում են գրողի մանկության, պատանեկության, երիտասարդության երազները՝ «հին, երջանիկ, հեթանոսական դարերու, տեսիլքներով»: Գրողը օտար անհրապույր իրականության մեջ ապրում էր երազով:

«Շավարշ Նարդունու երազին, երազայինին ապավինելը կյանքից, իրականությունից հեռանալը, - գրում է հայրենի գրականագետ Գեղամ Սևանը, - կրում էին ծրագրային բնույթ, ավելին՝ ունեին փիլիսոփայական հիմք, որն իր սնունդն էր առնում արվեստի ու գրականության այն հատվածից, որի դրոշի վրա գրված էր «Արվեստը արվեստի համար»⁶:

Ֆրանսահայ գրողի գրեթե բոլոր ստեղծագործությունների առանցքը իր գյուղն է, որի վրա ցլանում է գործողությունների, մտորումների, ապրում-հիշողությունների ստեղծագործական նկարագիրը: Արմաշը գայթակղությունների փորձաքար է, որը, հիշողությունից բացի, բերում է հոգեբանական համակարգված դատողություններ, որոնք առհասարակ «ծանր կը կշռեն» գեղարվեստական գրականության խորքային համեմատություններում, որն էլ հանգեցնում է չափավորության, գեղարվեստական տարրերի արթուն պաշտպանության:

«Մեղեդիներ, մեղեդիներ» ստեղծագործության մեջ Շ. Նարդունին բացում է *Ես*-ի երեք ներհակ շերտեր, գոյաբանական, նույնիսկ բնագանգական վիճակներ, երբ մեռնելու ուղղակի շարունակությունը կարող է դառնալ նրան անհարիր թվացող «ապրելու դատապարտվածությունը»: Գեղարվեստական այդ սկզբունքը նոր, ավելի հիմնավորված կիրառություն է ստանում ստեղծագործության մեջ, կարճ ժամանակ անց հուսահատական «կենսաբանական» վիճակը, որ ապրում է հերոսը, իր տեղը գի-

⁵ Թէօլէօլեան Մ., Դար մը գրականութիւն, հ. 2, Գահիրէ, 1956, էջ 184:

⁶ Սևան Գ., Սփյուռքահայ գրականության պատմության ուրվագծեր (1920-1945), Ե., 1980, էջ 76:

ջում է ապրած կյանքի վերափմաստավորմանը, երջանիկ ամբողջական անցյալի, գոյի, խոր ինքնաբավ զգացողությանը: Շատ հաճախ նրա աչքի առջև պատկերանում է հայրենի գյուղը՝ հիասքանչ բնությամբ, ազգային հեթանոսական տարազով, ավանդություններով: «Մեր գյուղը կարմիր լուսնկայիմը նման՝ այգիներուն մէջ ինկած, ասանդապահ բեկորն է ցրի ցրի եղած փառապատում ցեղիս, որ «մեծերուն» եւ «իմաստուններուն» նման՝ կրցաւ հագնիլ պատմութեան թանկագին պատմութեանը» («Ելակը» Աւանդութիւն)⁷:

Գրողը խորապէս հասկանում է, որ հայրենի եզերքը կորցնելը ողբերգության միայն մի մասն է, ողբերգությունը մոռացվելն է, ազգային ավանդականից հեռանալը, որից մինչև կործանում, հոգևոր թե ֆիզիկական վախճան ընդամենը մէկ փոքրիկ քայլ է: «Կարոտ հայոց լեզուին» խորհրդածությունում գրողի դատողությունները լցված են ցավի անթաքույց մեկնումով: «Ախ, մեծ Աստուա՛ծ, քեզի բնաւ չեմ հաւատար, բայց ցաւը զիս մանուկ է դարձուցեր եւ նորէն, ահա նորէն ամպերուդ կը բարձրացնեմ ճակատս: Երկնքի Աստուա՛ծ, հայերէն լեզուիս ամէնէն գեղեցիկ բառերը կու տամ քեզի, միայն թե հրաման ըրէ, որ իմ լեզուս գտնէ իր երջանկութիւնը»⁸: Շ. Նարդունին զարմանալի հապճեպ կողմնորոշումով փորձում է նոր հույս վառել միանգամից խավարած իր սրտում: «Ո՛վ իմ հայերէնս, աղոթքի պէս մխիթարիչ, դեղի մը պէս օգտակար: Ես քեզ այնքան կը սիրեմ, որ այսօր կը փնտռեմ նոյնիսկ մանկապարտեզի հին «օրհորդ»ս՝ խնդրելու համար կրկնել հայերենի առաջին դասս: Ինչ էլ որ ըլլայ, չեմ մոռանար հայերէնս...»⁹: Շատ հնարավոր է, օրինակ, որ գրողի հույսը աղոտ լինի և մարի, այսինքն՝ ինքնամխիթարումը, կամքը, ինքնատիրապետման հավատը պարզապէս հոգու առաջին, ենթագիտակցական արձագանքն են, որ որոշ ժամանակ անց բեկվելու է: Չէ՞ որ մարդու դիմակայությունն էլ իր վերջնագիծն ունի, կամային-զգացումային լարվածության սահմանը: Շ. Նարդունու «Ամէն բանէ վեր» ստեղծագործությունը ոչ այնքան սրտաբուխ, առարկայական լավատեսությունն է, որքան, մեր կարծիքով, գոյության խորհուրդը պարզող պատգամ, որը, ըստ երևույթին,

⁷ **Նարդունի Շ.**, Մեղեդիներ, մեղեդիներ (Հեքիաթ եւ բանաստեղծութիւն), Փարիզ, 1933, էջ 49:

⁸ Նույն տեղում, էջ 152:

⁹ Նույն տեղում:

դուրս է գալիս անձնականի ընդգրկման ոլորտից և ներառում սփյուռքի գոյակցության այսօրվա ներհակ, առանցքային խնդիրները: «Ես ալ կուզեմ ազգի գավակ ըլլալ, ես ալ կուզեմ ազգ ունենալ, երկիր ունենալ: Տու՛ր ինձ, Աստուա՛ծ, «...ամէն բանէ վեր» մը, որպէսզի առտուն աղօթքս անով սկսիմ, օտար ազգերու երիտասարդներուն մէջ որբի պէս չ'ըլլամ, խորթ քայլերդներ մըմնջալով սրտիկս չ'արիւնի: Մենք ալ կուզենք երգել «...ամէն բանէ վեր»»¹⁰: Տարաշխարհիկ գրեթէ բոլոր հորիզոններում ազգային պահպանման բնագոյն անդառնալիորեն շարունակում է իր նահանջը. հայը և հայկականը լուծվում են օտար միջավայրին, խորթ գաղափարին, լեզուներին՝ ի շահ հասարակական կեցության, սոսկ գոյության, բարեկեցության, որի մէջ ազգային պահպանությունը ուղղակի «խանգարիչ» հանգամանք է: Վերհիշենք Շ. Նարդունու դիտարկման մէջ ընդհանրացումի գտնված օրինակը՝ գրող հերոսն անընդհատ լքվելու գեղարվեստական փաստով բացահայտում է սփյուռքահայ աշխարհի հին ու նոր տագնապները. «Բզկտեցին մեզ ուրիշները, փրցուցին մեզ՝ մեր հողէն, ինչպէս ծաղիկը՝ թաղարէն: Նետեցին մեզ ամպավարիկ երկիրներ: Ու հիմա, ափսոս, մեր ժողովուրդը ինքզինքը կը բզկտէ, եղբայրը եղբօր արիւնը կը գողնայ, զի չունի իր «...ամէն բանէ վերը, որ լռեցնէր, խոնարհեցնէր ու ներշնչումի նստեցնէր: Որքան դժբախտ ենք...»¹¹:

Այս երևույթը դուրս է մեկ օջախի օրինաչափության շրջանակից, այն ներառում է սփյուռքի «հիվանդ» մարմինը՝ ամբողջության մէջ: Շ. Նարդունին մի փոքր այլ երանգ է տեսնում «ապրելու դատապարտվածության» մէջ, որ մնում է գրողի շուրթերին ստեղծագործության գրեթէ բոլոր էջերում. «Ու մենք, հոս, խաղաղության մէջ ընկղմված, հիվանդի պէս ուժաքամ, մտիկ կ'ընենք ուրիշներուն...»¹²:

Այսպիսով, սփյուռքի անհեռանկարայնությունը, նրա վաղ թե ուշ մահվան գաղափարը, որ միշտ Շ. Նարդունու ազգային-հասարակական հաճումների կենտրոնում է եղել, անակնկալ ներխուժում են նաև «Մեղեդիներ, մեղեդիներ» ստեղծագործության մէջ, դառնում ներքին շիկացման ազդակ, տարողունակ հարցադրում, ելակետային հայացք:

¹⁰ Նույն տեղում էջ 101:

¹¹ Նույն տեղում, էջ 100:

¹² Նույն տեղում, էջ 99:

Իսկ ահա Զ. Որբունու գոյափիլիսոփայական փորձարարության հիմքում ընկած է օբյեկտիվ աշխարհի անհեթեթության, անիմաստության և անճանաչելիության ըմբռնումը: Զ. Որբունին այն գրողներից է, որոնք ձգտում են մեզ համոզել, թե կեցության համակարգի բանալիները անտեսվել են, թե խաթարվել է աշխարհի ընկալման ամբողջականությունն այն աստիճան, որ արդեն ողբերգականորեն անվերականգնելի է: Զ. Որբունու ստեղծագործության հիմքում աշխարհի «անմիտ նպատակահարմարության» գաղափարն է: Կանխավ «նախատեսված» ներդաշնակության փոխարեն գոյություն ունի աններդաշնակություն, իրական կյանքը բնավ չի համապատասխանում մարդկային բուն «առաքելությանը», հետևաբար մարդը դատապարտված է ճակատագրից մշտապես անպաշտպան մնալու: Զ. Որբունու հերոսներն առհասարակ չեն հասնում իրենց նպատակին, ինչ-որ բան նրանց խանգարում է, ճանապարհները բերում են նրանց մի օրինաչափ ու կայուն մտահանգման, թե կեցության անկատարելության ու անտես ուժերի առջև կա մարդու անօգնական, թշվառ վիճակը: Այսպես, օտարության ծանր վիճակում հայտնված մայրը մեռնում է («Փորձը»), ես-ը դատապարտված է հավիտենապես թափառելու այս կամ այն աշխարհների միջև ընկած սանդուղքների վրա՝ իր գոյությունը քարշ տալով ոչ այն է մեռած, ոչ այն է ողջ, և ոչ ոք չի կարողանում օգնել նրան: Ուշ շրջանի գործերում, հատկապես «Ասֆալտ» վեպում, Զ. Որբունին գալիս է այն համոզման, որ կյանքը մշտական ինքնագոհաբերում է, մահվան անկարգ արշավ, որի դեմ անգոր է անհատը: «Մարդ երբեք պիտի չհրաժարի կեանքի իր պայքարին, - գրում է նա վեպի ներածականում, - որովհետեւ ան է, որ կը սահմանէ եւ կ'արժենորոգէ իր գոյութեան իմաստը, իր ինքնութիւնը որպէս ազատութիւն»¹³:

Ֆրանսահայ գրողը կարևորում է նոր փիլիսոփայության այն կենտրոնական ելակետը, թե մարդը դատապարտված է ազատության և ապրելու ինքնության, իր ուսերին պարտավոր է տանել աշխարհի բարոյական ողջ ծանրությունը, պատասխանատու է աշխարհի մեջ եղած զուգակշիռ ներուժերի պահպանման և շարունակականության համար: Ամբողջության մեջ սարտրյան կեցություն-ոչնչություն-գիտակցություն առանցքը, որը տրոհվում ու տարրալուծվում է գրողի ստեղծագործության ներքին շերտերում, հայ գրողին տանում է դեպի «գիտակցությունը որպես բարձրագույն կե-

¹³ Որբունի Զ., Ասֆալթ, Իսթանպուլ, 1972, էջ 11:

ցություն» հայեցողությանը՝ մեկնական հետևողական հունով, որը, սակայն, չես ասի Հրաչ Զարդարյանի մասին:

Եթե Զ. Որբունու գոյապաշտական հաճումներում տեսնում ենք աշխարհի անհեթեթության մոդելը, ապա Հր. Զարդարյանը Վ. Շուշանյանի նման առավելապես որոնում է գոյության փիլիսոփայական խորհուրդը: «Մեր կյանքը» վեպով նա հաստատում է փիլիսոփայության հիմնաբևեռները՝ աբսուրդն ու ընդվզումը, ընդ որում, հետաքրքիր է, որ այն տպագրվել է Ալբեր Կամյուի նշանավոր «Սիզիփոսյան առասպելը» վեպի լույսընծայումից ութ տարի առաջ, որտեղ, ինչպես հայտնի է, առաջին անգամ եվրոպական գրականության մեջ դրանք քննվում էին կողք կողքի:

Կյանքի անիմաստության գիտակցումը Հր. Զարդարյանին հանգեցնում է այն մտքին, որ մարդն ազատ է իր գործողություններում, բայց պարտավոր է հատուցել իր սխալների համար: Գրողի խորին համոզմամբ՝ անհատը ներգրավված է պատմական առաջընթացի մեջ և պատասխանատու է ոչ միայն իր, այլև մարդկության առջև: Նա գիտակցում է, որ աբսուրդը մարդու և աշխարհի միջև չէ. այն ծնվում է անհատի ու նրա անորոշ կեցության բախումից: Աբսուրդից Հր. Զարդարյանն արտածում է անհատի ընդվզումը, նրա ազատաբաղձությունը: Գոյության փիլիսոփայական խորհուրդը մի սահման է, որ ներառում է ազատ կյանքը և պատասխանատվությունը հավաքական ազատ մղումների հանդեպ, որի տակ պետք է միավորել նաև անհատի անընկճելիությունը, տառապանքի վեհությունը, դիմակայելու ուժը, հատկանիշներ, որ տեսնում է իր ժողովրդի նոր, դժվարին կյանքի մեջ: Այսպիսով, կարելի ասել, որ նրա գլխավոր հավաքական հերոսը խտացնում է համամարդկային նորագույն ձգտումները ազգային ճանաչողության ավազանում, և սա Հր. Զարդարյանի ստեղծագործական յուրահատկությունն է, գոյապաշտական հայացքի և ազգային մտահոգությունների առժամանակյա «դաշինքը»:

Եթե նրա «Մեր կյանքը» նոր վեպի հիմքում ընկած է գոյության փիլիսոփայության խորհուրդը, ապա մեկ տարի հետո գրած «Արեւոտ տան մեջ» պատմվածքում գրողը քննում է աշխարհի «անհեթեթության» գաղափարը: Երեսուն տարի անց գրված պատմվածքների մեջ գրողը շարունակում է վիճարկել աշխարհի «անհեթեթության» (աբսուրդի) և անհատի անընկճելիության բախումի արդյունքները: Դա առաջին հերթին պետք է բացատրել արձակագրի աշխարհազգացողության մեջ հուսալքության կա-

յունացող փաստով, որը կապված է սփյուռքահայության օրավոր աճող նահանջի, ուժացման իրողության ընկալման հետ: Հր. Զարդարյանը կարծես կորցրել է հավատը արվեստի բարոյական կրթիչ ուժի, նրա դաստիարակիչ գործոնի նկատմամբ, որի վրա հենվում էր ընդամենը մի քանի տարի առաջ: Նա չի դատապարտում իր հերոսներին, ընդհակառակը, թվում է՝ աշխարհին նայում է նրանց աչքերով: Գրողը փորձում է «աշխարհի անհեթեթության» միտքը տեղ հասցնել անմիջական տրամադրությամբ և ոչ թե «չոր» դատողություններով: Գեղարվեստական պատկերների օգնությամբ նա ցանկանում է համոզել, թե մարդիկ իրենք չգիտեն՝ ինչ են ուզում ասել, խոսում են պարզապես ոչինչ չասելու համար: Հերոսը հանդես է գալիս իբրև ինչ-որ վերին կամքի կատարող: Գիտակցելով գոյի անելանելիությունը՝ նրանք ելքեր փնտրելու կարծես չեն էլ մղվում: «Աշխույժ են» այնքանով, որքան կարելի է ենթադրել «պայքարը», այսպես կոչված, «անմիտ նպատակահարմարության» սահմաններում, որտեղ ո՛չ հաղթանակ կա, ո՛չ պարտություն: Իրականում աշխուժություն բնավ չկա, այլ շուրջը դանդաղ, գոյափիլիսոփաների նախասիրած աստիճանական մահն է, ինքնամեկուսացումն աշխարհից:

ЭКЗИСТЕНЦИАЛИЗМ В АРМЯНОЯЗЫЧНОЙ ФРАНЦУЗСКОЙ ПРОЗЕ НАЧАЛА XX ВЕКА

КАРАГУЛЯН А.П.

Резюме

В литературе армянской диаспоры (20-30-ые гг. XX в.) экзистенциализм нашел отражение в прозе В. Шушаняна, Ш. Нардуни, З. Ворбуни, Г. Зардаряна. Создавая свои произведения лишь на родном – армянском языке, они тем не менее творили в контексте общеевропейской культуры, поскольку являлись приверженцами европейской ценностной системы. Проникновение некоторых философских течений в литературу армянской диаспоры говорило о глубоком социально-психологическом кризисе, переживаемом диаспорой. Проза французских армяноязычных писателей рефлексировала экзистенциальную модель утверждения права на свободу и права на жизнь.

EXISTENTIALISM IN THE ARMENIAN FRENCH PROSE AT THE BEGINNING OF THE 20th CENTURY

H. KARAGULYAN

Abstract

In the literature of the Armenian Diaspora (20-30s of the 20th century) existentialism was reflected in the prose of V. Shushanyan, S. Narduni, Z. Vorbuni, G. Zardaryan. Creating their works only in native Armenian language, they nevertheless worked in the context of a common European culture, being adherents of the European value system. The penetration of some philosophical currents into the French literature of the Armenian diaspora spoke of the deep social and psychological crisis of the Armenian diaspora. The prose of French Armenian-language writers reflected the existential model of asserting the right to freedom and the right to life.

ՀԱՅԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԼՈՊԵ ԴԵ ՎԵԳԱՅԻ ՊԻԵՄՆԵՐՈՒՄ

ԶԻԼԻՆԳԱՐՅԱՆ Ե.Կ., ԽԱԶԱՏՐՅԱՆ Ս.Ա., ԽԱԶԱՏՐՅԱՆ Վ.Ք.

Լոպե դե Վեգան (1562-1635) Իսպանիայի ոսկեդարի ականավոր ներկայացուցիչներից է: Հայրենակիցների համար նա միշտ եղել է և կմնա մեծ բանաստեղծ և արձակագիր, սակայն համաշխարհային գրականության մեջ մտավ որպես դրամատուրգ: Նրա մի շարք պիեսներ («Պարտիզպանի շունը», «Վալենսիայի այրին» և այլն) ավելի քան չորս դար շարունակում են մնալ աշխարհի լավագույն թատրոնների բեմերում:

Լինելով բավական ինքնավստահ և համարձակ մարդ՝ նա կանգ չի առել և ոչ մի խոչընդոտի առջև: Սկանդալային սիրային պատմության պատճառով նա հեռացվել է Ալկալա դե Էնառեսի համալսարանից, սակայն շնորհիվ բացառիկ հիշողության և աշխատասիրության՝ կարողացել է ինքնուրույն լրացնել թերի մնացածը: Իր բուռն գրական գործունեության ընթացքում նա գրել է շուրջ 3000 սոնետ և ավելի քան 2000 պիես, որոնցից պահպանվել են միայն 426-ը: Մեր հետազոտությունը, իհարկե, հենված է միայն պահպանված պիեսների վրա, իսկ թե իրականում քանի անգամ է Լոպե դե Վեգան օգտագործել հայերի թեման կամ հիշատակել Հայաստանն ու հայերին, կարելի է պատկերացնել՝ բազմապատկելով եղածն առնվազն չորս անգամ, առանց չափազանցության:

Լոպե դե Վեգայի ստեղծագործման դարաշրջանը համընկավ կլասիցիզմի ծաղկման ժամանակաշրջանի հետ, ուստի տեղի, ժամանակի և գործողության միասնության սկզբունքները պարտադիր էին ցանկացած պիեսի համար: Սակայն խիզախ Լոպե դե Վեգան հրաժարվեց առաջին երկուսից՝ թողնելով միայն գործողության միասնության սկզբունքը: Դեռ ավելին՝ նա նույնիսկ ողբերգության մեջ համարձակորեն օգտագործում էր կատակերգական տարրեր՝ իրավացիորեն համարելով, որ անկեղծությունից զուրկ պիեսը հանդիսատեսի մեջ չի առաջացնի բուռն զգացումներ, իսկ զվարճալի պահեր լինում են նույնիսկ թշվառ մարդու կյանքում:

Լոպե դե Վեգայի պիեսները բազմազան են իրենց բովանդակությամբ, ընդ որում, հայերի թեման առկա էր ինչպես նրա *պատմական սոցիալ-քաղաքական դրամաներում*, այնպես էլ *սիրային* պիեսներում:

Առաջնային նպատակը մեկն է՝ փորձել պարզել, արդյոք մո՞տ էր միջնադարյան հայերին Իսպանիան, թե՞ ընդհակառակը՝ հեռավոր ու անծանոթ: Ի՞նչ գիտենք միջնադարյան Իսպանիայի մասին, բացի նրանից, որ 1375 թ. Եգիպտոսի Մելիք Աշրաֆ սուլթանը գրավեց Սիսը, և Կիլիկիայի վերջին թագավոր Լևոն 2 Լուսինյանը գերվեց: Իսկ Իսպանիայի (Կաստիլիա) Խուան Ա թագավորը փրկագնով ազատեց Լևոն 2-ին գերությանից: Խուան Ա-ն 1383 թ. նույնիսկ հատուկ հրովարտակով նրան շնորհեց Մադրիդ, Անդոլիսար և Վիլառեալ քաղաքները ցմահ տնօրինելու իրավունքով՝ անտեսելով տեղի ազնվականների բողոքները: Փաստորեն, մինչև 1389 թ., երբ Խուան Ա-ն մահացավ, և Լևոն 2-ն ստիպված հրաժարվեց այդ քաղաքներին տնօրինելուց, նրա նստավայրը Մադրիդն էր: Ասենք, Մադրիդն այն ժամանակ մի փոքրիկ քաղաք էր, ավելի շուտ ամրոց¹: Դե ի՞նչ, էլ ոչինչ չի՞ եղել, բացի մի քանի կցկտուր տեղեկությունից: Գուցե հենց Լոպե դե Վեգայի պիեսներն օգնեն մեզ այդ հարցում:

Պատմական թեմայով գործերից նախ առանձնացնենք *“Justas de Tebas y reina de las Amazonas”* պիեսը, այսինքն՝ «Մրցույթը Թեբասում և ամազոնուհիների թագուհին»²: Քանի որ սա անծանոթ է հայ ընթերցողին, մանրամասնենք՝ հաշվի առնելով ժամանակի իսպանացի հանդիսատեսի ընկալումը: Թեբաս³ քաղաքում եռուզեռ է, այնտեղ են ժամանել բազում արքայազներ և անգամ թագավորներ: Այստեղ են հեռավոր Հնդկաստանի թագավոր Գուալկանը, Աթենքի արքայազն Բրիսեդիոն, Հունաստանի, Տրոյայի, Թրակիայի և այլ երկրների արքայազները, Փյունիկիայի թագավորը: Իհարկե, այստեղ է նաև Հայաստանի արքա Լուտարոն, որը, սակայն, թաքցնում է իր ինքնությունը՝ ձևացնելով թե իբր ընդամենը դեսպան

¹ Հայ նշանավոր գրող Կ. Ջարյանի վկայությամբ (Երկրներ և աստվածներ: Սպանիա, Ե., 1999) 1934-36 թթ. իր հետ գրուցելիս իսպանացիներն ընդունում էին Խուան Ա-ի այս նվիրատվության փաստը, բայց դժվարանում էին այդ կապակցությամբ արձագանքել: Հավանաբար հիմա էլ իրենց պատմությունը լավ ճանաչող իսպանացիները մեծ զարմանքի մեջ են՝ իսկապես պատմության մեջ նման նախադեպ չի եղել: Հավանաբար, Խուան Ա-ի սիրտը շատ մեծ էր:

² St'u artelope.uv.es/basededa tos/browserrecord.php?action...recid...15.19.2018 թ.

³ Հնում Թեբայ քաղաքը Հին Հունաստանի Բեոթիա նահանգի գլխավոր պոլիսն էր: Լոպե դե Վեգայի պիեսում այն ստացել է Թեբաս անվանումը:

է: Ինչո՞ւ է նա դիմել այդ խորամանկ քայլին: Պատճառը շատ պարզ է ու հասկանալի. բոլորը ցանկանում էին կնության առնել Թեբասի արքա Արքիմունդոյի միակ դստերը՝ Դելբորային: Սպասվում է թեժ պայքար, ուստի Լոտարոյի խորամանկությունն անգամ *գովելի է*:

Թեբասի արքայի որոշմամբ բոլորը պետք է մասնակցեն մի մրցակցության, պայքարեն միմյանց դեմ, իսկ պարտվողները դուրս են մնալու հավակնորդների ցուցակից: Այդ մենամարտերի հաղթողին, այսինքն՝ ամենաուժեղ, ամենախելացի ու խորամանկ տղամարդուն էլ կհասնի գլխավոր մրցանակը՝ Թեբասի արքայադուստրը:

Մրցույթը սկսվեց: Ցուցադրելով իր բոլոր ունակությունները՝ հայոց արքա Լոտարոն հերթով տապալում է իր մրցակիցներին և դուրս գալիս եզրափակիչ: Դե ինչ, կարող ենք շունչ քաշել: Լոտարոյին մնում է մի քայլ, վերջին մենամարտը, և Դելբորան հասած խնձորի պես կընկնի իր ձեռքը: Բայց նրան սպասում է ահեղ մի մրցակից, որի դեմքը ծածկված է սաղավարտով: Նա իր հերթին կարողացել է հաղթել բոլոր ախոյաններին: Այ թե մենամարտ է լինելու՝ երկու հզոր անպարտելիներից մեկը պարտվելու է: Հայոց արքան հերոսաբար պայքար է մղում, հաղթանակը կարծես մոտ է, բայց, ավաղ, նա պարտվում է: Բոլորը պահանջում են, որ հաղթողը հանի սաղավարտը: Բոլորը տեսնում են նրա դեմքը, և պարզվում է, որ... ամազոնուհիների ահեղ թագուհին է: Սովորական կնոջից պարտվելն այն ժամանակի յուրաքանչյուր տղամարդու համար ամոթ մի բան էր: Բայց այդ դեպքը բացառություն է ընդհանուր օրենքից՝ ամազոնուհիների հզոր թագուհի Ադբերիտեի համբավը տարածվել էր աշխարհով մեկ: Բոլոր մասնակիցները գիտեին, որ նա աշխարհի ամենաուժեղ կինն է, որի դեմ, եթե դու Աքիլեսը, Սիդը, Թրիստանը կամ այլ մի հերոսը չես, ինչպես ասում են՝ «խաղ չկա», ուստիև վատ զգալու կարիք էլ չկա:

Պարզվում է հետևյալը: Իմանալով, որ Դելբորայի ձեռքի հավակնորդների թվում է և հույների արքայազն իր եղբայր Յելանդոն, թագուհին որոշել էր օգնել նրան: Տղամարդու շորեր հագած, քողարկված ու զինված՝ նա եկել էր հաղթելու բոլոր մրցակիցներին: Իսկ երբ պարզվեց իր ինքնությունը, թագուհին կփոխանցեց այդ հաղթանակը Յելանդոյին: Իհարկե, դա անարդար է, պարզապես խարդախություն, որը դժվար թե դուր գար որևէ հանդիսատեսի: Նաև երկնքին... Այդ պատճառով էլ թագուհու հանդուգն պլանը ձախողվում է՝ մենամարտերից մեկում մահանում է եղբայրը:

Դե ինչ, թագուհի, ամեն ինչ փոխվեց, դարձավ անիմաստ: Էլ ինչո՞ւ է քեզ պետք հաղթանակը, անարդա՛ր թագուհի: Թո՛ղ ու հեռացի՛ր՝ լացելով եղբորդ անշունչ մարմնի վրա: Բայց ոչ, ինքնահավան թագուհին այդպես էլ չհեռացավ, շարունակեց մենամարտն ու հաղթեց: Նա չէր ցանկանում, որ Դելբորան ընկնի մի որևէ բարբարոսի ձեռքը. այսպես է բացատրում իր արարքը: Բայց դա անտրամաբանական է: Իսկապես, ո՞վ է բարբարոսը, հայոց արքա՞ն: Քաղաքակիրթ աշխարհի մեջ մտնող Հայաստան երկի՞րը: Շատ չեղա՛վ, վայրի ամազոնուհիների թագուհի:

Օգտվելով ստեղծված իրավիճակից՝ հայոց թագավորն անմիջակա- նորեն դիմում է արքա Արքիմունդոյին՝ խնդրելով Դելբորայի ձեռքը, հա- մոզված լինելով, որ հակառակ դեպքում կտաներ արդար հաղթանակ: Բայց... *քյուրոկրափական* մերժում է ստանում: Հենց նույն պահին ոտքի ելնելով՝ Տրոյայի արքայազնը՝ Արդեննիոն, խոստովանում է, որ ինքն է սպա- նել ամազոնուհիների թագուհու եղբորը՝ չիմանալով նրա ծագումը: Ներո- դություն խնդրելով թագուհուց՝ ամուսնության առաջարկություն է անում նրան, իսկ վերջինս ներելով ընդունում է այն: Հենց այդ որոշմամբ էլ Ամա- զոնուհիների թագավորությունը մոտենում է իր ավարտին՝ ինչ խոսք, եթե հենց թագուհին է ամուսնանում, ապա ինչո՞ւ մյուս ամազոնուհիներն իրենց հերթին դա չպետք է անեն: Իսկ թե ինչպես պիտի Արդեննիոն կարողանա լեզու գտնել այդ տրամաբանությունից զուրկ ու դժվար կառավարվող կնոջ հետ, մնում է մեզ անհայտ: Երևի թե հետո Տրոյան քանդվեց այն պատճա- ռով, որ Պարիսն այդ անուղեղ տղամարդու և անսանձ կնոջ ժառանգորդ- ներից մեկն էր: Եթե Լոպե դե Վեգան այդպես էր կարծում՝ օժտելով այս գործող անձանց նման հատկանիշներով, ապա նա իրավացի էր: Այն ժա- մանակ գեների մասին տեղյակ չլինելով՝ մարդիկ ասում էին՝ «պտուղը ծա- ողից հեռու չի ընկնում»: Իհարկե, այդպես է, եթե... ծառը ժայռի եզրին չէ...

Լոտարոյի պես արժանապատվությամբ է օժտված և մեկ ուրիշ հայ թագավոր՝ Դարդանիոն “Roma abrasada” («Հոռմն այրվեց») ողբերգության մեջ, չնայած հայտնվում է միայն երկու փոքրիկ դրվագում: Փաստորեն, նա գալիս է Ներոնի մոտ, որ ավարտվի պատերազմը հռոմեացիների ու պարթևականների միջև, որոնց թագավորն իր եղբայր Վուլգեզիոն է: Իսկ Ներոնը «մեծահոգաբար» ասում է, որ նա լիովին ազատ մարդ է⁴:

⁴ Lope de Vega. Roma abrasada, 2008, Biblio Bazaar, p. 132.

Այս պիեսը գրելիս Լոպե դե Վեգան, անշուշտ, օգտվել է Կոռնելիոս Տակիտոսի «Պատմությունից»: Վոլգեզիոն Պարթևաստանի արքա Վաղարշ Ա Արշակունին է, որին Արևմուտքում անվանել են Վոլոգեզ: Իսկ հայոց արքա Տրդատ Ա Արշակունին նրա կրտսեր եղբայրն էր: Ինչ խոսք, նրա անունը դժվար ընթերցելի էր այլազգիների համար: Հռոմեացիները նրան անվանում էին «Տիրիդատ»: Սակայն այս տարբերակն էլ չի գոհացրել Լոպե դե Վեգային: Հայտնի է, որ Տրդատ Ա-ն մեծ ջբախմբով հասել էր Հռոմ՝ Ներոնից իր թագն ստանալու համար, որն էլ մեծ շուքով տեղի ունեցավ 66 թ.: Այսինքն՝ Լոպե դե Վեգան չի խեղաթյուրել իրողությունը:

Իր պատմական պիեսներում Լոպե դե Վեգան չի փորձում ներկայացնել որևէ հայ հերոսի հային բնորոշ ինչ-որ գծերով: Նրա հանդիսատեսն իսպանացի էր, որի համար ամեն ինչ պետք է լիներ հասկանալի ու ըմբռնելի, այսինքն՝ իսպանաճան: Անգամ հայ գործող անձանց անունները:

Հայաստանը հիշատակվում է Լոպե դե Վեգայի գրեթե բոլոր այն պատմական պիեսներում, որտեղ կան տարբեր երկրների թվարկություն կամ աշխարհագրական տվյալներ: Նույն պատկերն է նաև ազգերի թվարկության դեպքում: Օրինակ, “La Santa Liga” («Սուրբ Լիգա») պիեսում մի քանի անգամ հիշատակվում է Հայաստանը⁵, և նշված են “Griegos, Armenios, Epiros” (այսինքն՝ հույները, հայերն ու էպիրացիները)⁶: Իսկ “Jerusalén conqvistada: Epopeya tragica” («Գրավված Երուսաղեմ. Ողբերգական դրամա») պիեսում ասվում է ոչ միայն Հայաստանի, այլև Տավրոս լեռնաշղթայի ու Կիլիկիայի Տարսոն քաղաքի մասին: Նշվում է, որ Եփրատն ու Տիգրիսը Հայկական լեռնաշխարհի գետերն են, իսկ վերջինիս ակունքը հայկական Նիպաթ (Ծաղկանց լեռներում) լեռնաշղթայում է⁸: «Դորոտեյա» (“La Dorotea”) պիեսում (գործ. 3, տե՛ս 7) գործող անձանցից

⁵ Lope de Vega Carpio. La Santa Liga. Tragicomedia famosa. – In Decima Qvinta parte de las comedias de Lope de Vega Carpio. Madrid, Fernando Correa de Montenegro, 1621, pp. 99, 100.

⁶ Նույն տեղում, էջ 108:

⁷ Lope Felis de Vega Carpio Jervsalen conqvistada. Epopeya tragica. Barcelona. Raphael Nogues Libero. Año M. DCIX, p. 107.

⁸ Այստեղ Նպատ լեռան հունական անվանումներից մեկն է: Տե՛ս Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան (Թ.Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Բախշյան, Հ.Խ. Բաբսեղյան), Ե., 1998, հ. 4, ցուց. 1, էջ 34:

մեկը՝ Ֆելիպան, խոսում է սաբայական⁹, արաբական ու հայկական բույրերի մասին՝ հիշատակելով Օրոնտեսի մյուրոն¹⁰:

Նշենք, որ որևէ պատմական պիեսի գործող անձի անպայման հայ դարձնելը Լոպե դե Վեգայի համար ամենևին էլ ինքնանպատակ չի եղել: Այսպես, «Տարածայնություն ամուսնության մեջ» (“La Discordia en los casados”) պիեսը գրելիս, ըստ իսպանացի գրականագետ Իրեն Ռոմերո Պինտորի, Լոպե դե Վեգան օգտվել է իտալացի Ջամբատիստա Ջիրալդի Չինտիոյի «Հարյուր պատմություն» (“Ecatommiti”) նովելների ժողովածուից: Նովելը թվագրված է՝ V տասնյակի 1-ին նովել: Գլխավոր հերոսներն են պարսից շահ Ռոդոբանոն ու նրա կինը՝ Եգիպտոսի թագուհի Սելենան: Կասկածամիտ Ռոդոբանոն կարծում է, որ Սելենան չի սիրում իրեն, իսկ ինքնահավան ու *ինքնասեր* Սելենան սիրում է նրան այնքան, ինչքան կարող է: Կասկածամիտ ու խանդոտ¹¹ Ռոդոբանոյին օգնում է երկու հայ ազնվական: Իր պիեսը գրելիս Լոպե դե Վեգան օգտագործել է այս նովելի սյուժեն, սակայն իրադարձությունները տեղի են ունենում Կենտրոնական Եվրոպայում, ուստի չկա ո՛չ պարսից շահը, ո՛չ էլ Եգիպտոսի թագուհին: Բնականաբար, հայերը՝ նույնպես: Ինչպես գրել է Պինտորը, “les dos caballeros de Armenia”-ի (երկու հայ կաթալյերոյի)¹² փոխարեն պիեսում հանդիպում են այլազգի կերպարներ՝ Պանֆիլոն ու Կլենարդոն:

Հայտնի է՝ XVII դ. եվրոպացի հեղինակները սկսեցին լայնորեն օգտագործել անտիկ շրջանի սյուժեները, իսկ ավելի ուշ՝ նաև արևելյան: Այդ սյուժեները նրանք վերցնում էին հռոմեացի և հույն նշանավոր պատմիչներից, որոնց համար Հայաստանն անտիկ շրջանի ու վաղ միջնադարի կարևորագույն երկրներից մեկն էր, իսկ հայերը՝ ճանաչված ազգ: Պարզ է, որ այդ սյուժեների օգտագործման հիմնական պատճառն այլազգիների բարքերը (շատ անգամ հորինված) քողարկելն էր, որով և կարելի էր արտահայտել «վտանգավոր մտքեր» հասարակության տարբեր հրատապ

⁹ Սաբա՝ հնագույն երկիր, որը Արավիա թերակղզու հարավային մասում էր, ժամանակակից Եմենի տարածքում: Տեղական խունկը լայն ճանաչում էր ստացել հին աշխարհում:

¹⁰ Lope de Vega. La Dorotea. Edwin S. Morby. 2 ed. University of California press. Berkeley and Los Angeles, 1968, p. 267.

¹¹ Ի դեպ, հենց Չինտիոյի գրչին է պատկանում Օթելոյի մասին նովելը, որից հետագայում օգտվել է Շեքսպիրը:

¹² Այսինքն՝ ազնվականները: I.R. Pintor, “La Discordia en los casados” de Lope de Vega y su modelo italiano, էջ 131:

հարցերի շուրջ, հատկապես՝ իշխանության: Բայց առկա էր նաև էկզոտիկայի պահանջարկ, որն արդեն կար ֆրանսիական, իսպանական ու իտալական հասարակության մեջ: Այստեղ ունենք *հարաբերական էկզոտիկայի օրինակ, որպեսզի հարկավոր չէ ապացուցել տվյալ ազգի գոյությունը, որ մարդիկ չմտածեն, թե ամբողջը հորինված է*: Ինչ խոսք, հայերին ավելի քիչ էին ծանոթ, քան իրենց հարևաններին: Ի դեպ, միջնադարում էլ հարևան ազգերին ոչ ոք առանձնապես չէր սիրում, քանի որ նրանց հետ սովորաբար պատերազմում էին, հետևաբար գերադասում էին ծաղրել¹³: Լուպե դե Վեգայի համար, ի տարբերություն ֆրանսիացիների, Հայաստանն ու հայերը շատ ավելի մոտ էին ու ծանոթ: Այդպիսի տպավորություն է ստեղծվում, երբ ուսումնասիրում ենք նրա *սիրային* ստեղծագործությունները:

“El perro del hortelano” («Պարտիզպանի շունը») կատակերգությունը, որը Լուպե դե Վեգան գրել է մինչև 1604թ., ստեղծվել է ընդամենը երեք օրում¹⁴: Բայց արդեն մի քանի դար այն ցուցադրում են աշխարհի բազմաթիվ թատրոններում: Հնուց գոյություն ունի մի իսպանական ասացվածք՝ “El perro del hortelano, que ni come las berzas ni las déja comer al amo”, որի իմաստը հետևյալն է՝ «Այգեպանի շուն, ինքը չի ուտում, ուրիշին էլ չի թողնում»: Դարձնելով այս ասացվածքը իր լավագույն պիեսի վերնագիր՝ Լուպե դե Վեգան շուտով նկատեց, որ այն լիովին համահունչ չէ պիեսի բովանդակությանը: Իսկապես, շունը չի ուտում այն պատճառով, որովհետև այգու պտուղներն իրեն պետք չեն, բայց կոմսուհի Դիանային իր քարտուղար Տեոդորոն շատ էլ պետք է, նույնիսկ կենսականորեն անհրաժեշտ: Պիեսի կեսից սկսած՝ Տեոդորոյին կորցնելը Դիանայի համար հավասարազոր է մեծ դժբախտության, համարյա մահվան: Գուցե դա էր պատճառը, որ Լուպե դե Վեգան փոխեց պիեսի վերնագիրը՝ նախ դարձնելով այն “Amar al ver amar” (“Սիրել, սիրո հանդիման”), իսկ հետագայում՝ “La Condessa de Belflor” (“Կոմսուհի դե Բելֆլոր”): Սակայն հեղինակի մահվանից հետո պիեսի հրատարակիչները վերադարձան առաջին վերնագրին, որով արդեն հրապուրվել էին: Նույն օրինակին հետևեցին նաև բազմաթիվ թատրոններ:

Պիեսի կեսից Դիանայի հոգում ուժեղ պայքար է սկսվում սիրո ու ազնվականի պատվի միջև: Արդյոք այդ պատիվն այն պատճառն է, որը

¹³ Буркхардт Я. Культура Италии в эпоху Возрождения, СПб., 1876, с. 275.

¹⁴ “Кто есть кто в мире”. Гл. Ред. Г.П. Шалаева, М., 2003, с. 238.

կարող է փրկել սիրուց: Եթե այն ամուր է, ուրեմն բացակայում է մեծ սերը: Սակայն հետզհետե այդ պատնեշը թուլանում է, քայքայվում, Դիանայի զգացմունքն ավելի ու ավելի է ուժեղանում. սիրո կայծը վերածվում է մեծ, ամենակուլ մի հրդեհի, որը, անշուշտ, կայրի նրան, եթե անպատասխան մնա: Այդ զգացմունքը նույնպես փոխանցվեց իր քարտուղար Տեոդորոյին. «Սիրել, սիրո հանդիման»:

Ո՞վ էր Տեոդորոն: Նա անհայտ ծնողների մի ընկեցիկ երեխա է: Խելացի լինելով՝ ունի նաև կարևոր մի հատկանիշ՝ ներքին ազնվականություն, կարելի է ասել՝ վեհություն, և դրանով նա ավելի բարձր է, քան կոմս Ֆեդերիկոն ու մարկիզ Ռիկարդոն են, որոնց միակ արժանիքը ծագումն է: Նրանք երկուսն էլ ցանկանում են ամուսնանալ Դիանայի հետ: Ձևացնելով, թե իբր սիրում են Դիանային, իրականում ուզում են տիրանալ նրա հարստությանը: Իրականում բարձրագույն ազնվականության համար դա մի սովորական երևույթ էր՝ նրանք, որպես կանոն, ամուսնության գաղափարին նայում էին զուտ գործնական տեսանկյունից: Իսկ սերը... կարող էր հետո ծագել, կամ էլ՝ ոչ: Տեսնելով, թե ոնց են տանջվում Դիանան ու Տեոդորոն, ապրումակից լինելով նրանց՝ հանդիսատեսն անհամբեր սպասում է, թե ինչ հանգուցալուծման կգան և արդյո՞ք կմիանան: Այդ ցանկությունն այնքան մեծ է, որ նպատակը, ինչպես ասում են, սկսում է արդարացնել միջոցները, որոնց մեջ կա և՛ խորամանկություն, և՛ սուտ:

Մի՞թե Դիանան պետք է հրաժարվի իր ունեցվածքից Տեոդորոյին հավասարվելու համար: Ոչ, դա հարմար չէ, ցանկալի չէ՝ Դիանան արժանի չէ «իջնելու», իսկ Տեոդորոն հաստատ արժանի է «բարձրանալու»: Իսկ ո՞վ է այն հրաշագործը, որի օգնությամբ սիրահարված զույգը պետք է հասնի կատարյալ երջանկության: Դա Տեոդորոյի սպասավոր «իբր թե հայ» Տրիստանն է: Նա գիտեր, որ քսան տարի առաջ Նեապոլի թագավորության ազնվացեղ դեմքերից մեկի՝ կոմս Լուդովիկոյի միևնույն փոքրիկ որդին, որի անունը նույնպես Տեոդորո էր, ընկել է ծովահեն Ալի-փաշայի (Ուլուջ-Ալի)¹⁵ ձեռքը, երբ ուղևորվում էր Մալթա կղզի իր քեռու՝ Սուրբ Իոանի միաբանության Մեծ Մագիստրոսի մոտ, որը, փաստորեն, Մալթայի ղեկա-

¹⁵ Սուլ-Ալի, որն իտալացիների և իսպանացիների մեջ տպավորվել էր որպես Օչչիալի (Occhiali):

վարն էր¹⁶: Ուստի, Տրիստանի խնդիրն է համոզել Լուդովիկոյին, որ Դիանայի քարտուղար Տեոդորոն հենց իր կորած տղան է:

Տրիստանը լավ հոգեբան է՝ եթե Լուդովիկոն հույսը կորցրած լիներ, ապա նա մեծ կասկածով կվերաբերվեր Տրիստանի պատմածին: Նրան շատ դժվար կլիներ համոզել, նա կպահանջեր ապացույցներ կամ, գոնե, կփորձեր գտնել ինչ-որ վկաների: Բայց քանի որ նա արդեն քսան տարի է, ինչ սպասում է տղային և ծեր է, ապա հոգեբանորեն լիովին պատրաստ է հավատալ անգամ ամենաաներևակայելի պատմությունների: Ըստ էության, նա սպասում է հրաշքի, և Տրիստանը որոշում է իրականացնել այդ հրաշքը:

Տրիստանը ներկայանում է Լուդովիկոյին որպես խոշոր հայ վաճառական, որը նոր է ժամանել Նեապոլ: Իր հայրը իբր զբաղվում էր սպորուկների առուծախով ու ժամանակին Աստիկոյի քաղաքում թուրքերից գնել է Տեոդորո անունով մի գեղեցիկ տղայի: Նա գերի էր ընկել Չաֆալոնիայի մոտ, երբ թուրքերը գրավել էին մի մալթական նավ: Հայրը բերում է փոքրիկ Տեոդորոյին Հայաստանի Տեփեկաս քաղաք, որտեղ և իրենց տունն էր: Վաճառականն ուներ նաև Տեոդորոյի տարիքի մի աղջիկ, որի անունն էր Սերալիփոնիա: Նրանք մեծանում են միասին և դեռ տասնվեց տարին չլրացած՝ սիրահարվում: Շուտով աղջիկը հղիանում է, իսկ Տեոդորոն դատաստանի վախից փախչում է: Նրանց սիրուց ծնվում է տղա՝ Տերիմակոնյոն: Հայրը վշտից մեռնում է, իսկ տղան՝ Տրիստանը, ամենուր սկսում է որոնել Տեոդորոյին ու վերջապես գտնում Նեապոլում: Պարզվում է, որ նա այժմ կոմսուհի Դիանայի քարտուղարն է: Տրամաբանությունը հուշում է, որ գոնե մեկ անվանում պետք է ճշգրիտ լինի, թեև «հայ վաճառականը» կարող էր և մի փոքր աղավաղել, ինչպես դա անում էին նույն իսպանացիներն ու իտալացիները հայկական աշխարհագրական անվանումների հետ: Օրինակ՝ Կիլիկիայի Հայաս քաղաքը նրանք անվանում էին Լայացցո: Իհարկե, «Չաֆալոնիան» (“Chafalonia”)՝ հունական Կեֆալոնիա (Cefalonia) կղզին է, որի մոտով էին անցնում վենետիկյան կամ ֆրանսիական նավերը առևտուր անելու համար: Բայց չէ՞ որ Մալթան այդ ճանապարհին չէ՞ ի՞նչ էր անում այնտեղ մալթական նավը: Քանի որ կոմս Լուդովիկոն չի զար-

¹⁶ Սա զարմանալիորեն կոնկրետ մի տվյալ է, որը հուշում է, որ Լուպե դե Վեգան օգտագործել է իրականում տեղի ունեցած և հասարակությանը հայտնի պատմական հանգամանքներ:

մանում այդ ասածի վրա, փորձենք հասկանալ՝ պարզելով պիեսի գործողության ժամանակը:

1568-1572 թթ. Մեծ Մագիստրոս էր իտալացի Պիետրո դել Մոնթեն, ի դեպ, նրա նախորդներն ու հետնորդները ֆրանսիացիներ էին: Այսինքն, ըստ էության, *իտալացի երեխայի քեռու* ամենալավ, ամենահարմար հավակնորդը հենց նա է: Նրա օրոք՝ 1571 թ., Կեֆալոնիայի մոտակայքում բախվեցին թուրքական ու Սուրբ Լիզայի միացյալ նավատորմերը¹⁷: Քրիստոնյա նավատորմի հիմքն էին վենետիկյան (100-ից ավելի) և իսպանական (մոտ 100) նավերը, բայց կային այլ երկրներից էլ, ընդ որում՝ երեք մալթական նավ: Թուրքական նավատորմը կրեց ջախջախիչ պարտություն, բայց ճակատամարտին իր ծովահեն ջոկատով մասնակցող Ալի-փաշային հաջողվեց գրավել մալթական գլխավոր նավն ու գերի վերցնել նրա անձնակազմը: Տեսնելով, որ պարտությունն անխուսափելի է, նա իր ջոկատով կարողացավ փախչել¹⁸:

*Փաստորեն, այս ճակատամարտն իրականում տեղի ունեցավ Կեֆալոնիա կղզու մոտակայքում՝ Պապրասի ծոցից դուրս գալու հաղվածում՝ Լեպանտո քաղաքից մոտ 60 կմ հեռու*¹⁹: *Ըստ էության, Տրիստանն ակնարկում է շապերին քաջ հայտնի փաստի մասին: Երևի թե պիեսում այդպես էլ պետք էր: Ակնկալում էր, որ մալթական նավերը պետք է գնային Մալթա, բայց հետո պլանները փոխվեցին: Այդ դեպքում կոմս Լուդովիկոյի կերպարը սրանում է հերկյալ երանգը՝ ընդունելի ռիսկի նրա գործակիցը բավական բարձր է: Այդ առումով արդարացված է, որ նա հենց սկզբից հավատում է Տրիստանի պարմածին:*

Ինչ վերաբերում է *հայ մարդկանց* անուններին և «*Հայաստանի Տեփեկաս քաղաքին*», ապա պարտադիր չէր, որ Լուդովիկոն իմանար: Քիչ

¹⁷ Պատմության մեջ այդ բախումն անվանեցին «1571 թ. ճակատամարտ Լեպանտոյի մոտ»:

¹⁸ Մալթացիների ու Ալի-փաշայի միջև ևս մեկ բախում տեղի է ունեցել 1570 թ. հուլիսի կեսերին, երբ վերջինս Ալժիրից դեպի Ստամբուլ ճանապարհվելիս Սիցիլիա կղզու հարավային ափի մոտ հանկարծ հանդիպեց 3-4 մալթական թիանավերի, որ տեղափոխում էին սննդամթերք ու գինի: Մալթացիների ղեկավար Ֆ. դե Ստ. Կլեմենտի սխալների պատճառով նրանցից 2-ը կամ 3-ը գրավեցին ծովահենները, զոհվեց կամ գերի ընկավ 80 ասպետ (Kenneth M. Setton. The Papacy and the Levant (1204-1571), vol. IV. The Sixteenth Century from Julius III to Pius V. Philadelphia, 1984, p. 937):

¹⁹ Les alters guerres de religio Catalunya, Espanya, Europa (ciegles XVI-XIX). Girona, Xavier Torres I Sans (ed.), 2012, pp. 137-139.

անց Տրիստանը գլուխ է գովում, որ հունարեն խոսելը մի դժվար բան չէ, մի քիչ փոխում ես տառերը և ստացվում է հունանման, իսկ թե մեկը չփորձի խորանալ, ապա նրա համար՝ և հունարեն: «Աստեկլիա, Կատիբորրատոս, Սերպալիտոնիա, Քսիպատոս, Աթենիաս, Ֆիլիմոկլիա... Այստեղ կարևորը՝ գեղեցիկ ծայնն է», - ասում է Տրիստանը²⁰:

Լուպե դե Վեգային իրավամբ համարում են նախառեալիստ: Հատկապես դա արտահայտվում է նրա այն պիեսներում, որոնցում իրադարձությունները ժամանակակից են: Ինչպես Լուպե դե Վեգայի նման պիեսներում, այստեղ ևս ցանկացած բան ունի իր ներքին տրամաբանությունը, որը մոտ է իրական կյանքին, ուրեմն՝ ընդունելի հանդիսատեսի կողմից: Այդ առումով հարկ է ուսումնասիրել երկու կարևոր հարց և գտնել ճշգրիտ պատասխանները: Նախ, ինչո՞ւ է Տրիստանը ներկայանում որպես հայ, եթե նա իր պատմության մեջ օգտագործում է այնպիսի բառեր, որոնց կարելի է անվանել հունանման: Դե թող միանգամից էլ հույն անվանվեր: Ի՞նչ է, վախեցա՞վ, թե կրթված Լուդովիկոն գիտե հունարենը, իսկ հայերենը դժվար թե իմանար: Եթե նա հունարենը չիմանար էլ, հանգիստ կարող էր մի հույն թարգմանիչ բերել, չէ որ նրանք ապրում էին Նեապոլում: Բայց այնտեղ ապրում էին և հայեր, իսկ 930 թ. գործում էր “San Gregorio Armeno” (Հայ Սուրբ Գրիգորի) հայկական եկեղեցին: Ո՞րն էր պատճառը: Հայտնի է, որ կաթոլիկ և ուղղափառ եկեղեցիների միջև գոյություն ուներ դարավոր թշնամանք: Միջնադարում Բյուզանդական կայսրությունն ամենահզոր ուղղափառ երկիրն էր, որտեղ մեծամասնությունը հույներ էին: Հենց նրանք էլ դարձան կատաղի քարոզչության թիրախ: Երբեմն կաթոլիկների և ուղղափառների միջև տեղի էին ունենում դաժան, արյունալի բախումներ, իսկ Չորրորդ խաչակրաց արշավանքն ուղղված էր Բյուզանդիայի դեմ՝ 1204 թ. խաչակիրներին հաջողվեց մոտ 60 տարով գրավել Կ.Պոլիսը:

Արևմուտքում հույներին անվանում էին հերետիկոսներ, նրանց բնութագրում էին որպես խարդախ, խաբեբա, ստոր մի ժողովուրդ, որին վստահել չի կարելի: Զուր չէ, որ ժամանակին Պետրարկան գրել էր՝ «Թուրքերը թշնամի են, բայց պառակտիչ հույներն ավելի վատն են, քան թշնա-

²⁰ **Лопе де Вега.** Собр. соч. в 6 тт., т. 4, М., 1963, с. 632.

մին»²¹: Պարզ է, որ արևմտյան մարդու համար հույնի կերպարը մնում էր շատ բացասական²²:

Իսկ Հայ առաքելական եկեղեցու հետ կաթոլիկների հարաբերություններն այլ էին: Տարածայնություններ ու վեճեր միշտ էլ եղել են, ինչպես նաև՝ փորձեր հայերին դավանափոխ անելու: Սակայն կաթոլիկները երբեք չեն մոռացել, որ ժամանակին հայերը մեծ օգնություն են ցուցաբերել խաչակիրներին: Հետագայում էլ հայերը բարիդրացիական կապեր են ունեցել Վենետիկի ու Ճենովայի իշխանությունների հետ, ինչպես նաև՝ առևտրականների: Իտալացի, իսպանացի, ֆրանսիացի ժողովուրդների մոտ հայի կերպարը շատ դրական էր, իսկ հայը՝ որոշ չափով յուրային:

Միջնադարի Իսպանիայում (նաև իտալական երկրներում) արևելյան քրիստոնյա ազգերից ամենաճանաչվածը հույներն ու հայերն էին²³: Այսպիսով, Լոպե դե Վեգան ընտրության կարիք չունե՛ր՝ նա գիտեր, որ եթե Տրիստանը ներկայանար որպես հույն, Լուդովիկոն պետք է պարզապես չհավատար նրան: Հակառակ դեպքում, հանդիսատեսի աչքերում նա կդառնար կյանքից լիովին հեռու մարդ, որը կհակասեր բոլորի կողմից հարգանք տաճողի նրա կերպարին:

Ուսումնասիրելով պիեսի տարբեր հրատարակությունները և թարգմանությունները՝ նկատվում է մի խառնաշփոթ, որն անմիջականորեն կապված է վերը նշվածի հետ:

²¹ **Васильев А.А.** История Византийской империи. Время от крестовых походов до падения Константинополя (1081-1453), т. 2, СПб., 1998, с. 930. 1438 թ. Ֆլորենցիայում կաթոլիկները նորից կնքեցին միասնության դաշինք Կ. Պոլսի ուղղափառ եկեղեցու հետ: Բայց թուրքերին հաջողվեց գրավել Կ. Պոլիսը, իսկ 1484 թ. ուղղափառ եկեղեցին չեղյալ հայտարարեց կնքված դաշինքը:

²² Այդ վիճակը սկսվեց փոխվել 1821 թ., երբ ծագեց թուրքերի դեմ հույների ազատագրական պայքարը, որը տևեց մինչև 1832 թ.: Այդ ընթացքում հույները հերոսական պայքար մղեցին՝ տալով մեծ կորուստներ: Թուրքերի վայրագությունները հանգեցրին նրան, որ Արևմուտքը սկսեց օգնել հույներին, փոխվեց նաև քարոզչությունը՝ «ստախոս և խաբեբայի» փոխարեն հույներն արդեն ընկալվում էին որպես բարբարոս թուրքերի կողմից հալածված մարդիկ:

²³ 1453 թ. Կ. Պոլսի պաշարումից առաջ Բյուզանդիայից արդեն մեծ արտահոսք էր սկսվել դեպի Վենետիկ, ներառյալ՝ հունական կղզիներ, Նեապոլյան թագավորություն և հարավային Եվրոպայի այլ երկրներ: Երբ թուրքերը գրավեցին Կ. Պոլիսը, արտահոսքը որոշ ժամանակ ուժգնացավ: Գաղթում էին և՛ հույները, և՛ հայերը. գաղտնիք չէ, որ հայերը Բյուզանդիայում եղել են քանակով երկրորդ ազգը:

Լուդովիկոյի մոտ Տրիստանի այցելությունը պիեսում նկարագրված է այսպես: Գալիս է մի պաժ (երիտասարդ ծառա) և հայտնում, որ հույն առևտրականը խնդրում է ընդունելություն կոմսի մոտ: Կոմսը թույլ է տալիս: Լուպե դե Վեգայի պիեսում գրված է՝ «Մտնում է Տրիստանը հայկական շորերով և մի չալմայով, [մտնում է] նրբագեղ, և Ֆուրիոն, մեկ ուրիշ [չալմայով]»²⁴: Ահա այսպես՝ կարճ և որոշակի: Պատանի պաժը դեռ փոքր է, նա շատ բան չգիտե, այդ պատճառով էլ, ըստ հեղինակի, սխալվում է՝ բնութագրելով «հայ առևտրականին»: Պարզվում է, որ նրա բառերը կարելի է ընդունել հալած յուրի տեղ և «ուղղել» հեղինակի թվացյալ սխալը՝ դարձնելով «հայկական շորերը» հունական: Հոգ չէ, որ հետո խոսվում է Հայաստանի մասին, և իմացվում է, որ առևտրականը հայ է: Ինչո՞ւ պետք է այդ հարուստ հայը հունական շորեր հագներ Իսպանիայում: Այս հարցը մնում է առկալիս: Խորհրդային լավագույն թարգմանիչներից մեկը՝ Միխայիլ Լոգինսկին, այս պիեսի իր հոյակապ, փայլուն թարգմանության մեջ թույլ է տալիս այսպիսի մի բան: Համոզելով կոմս Լուդովիկոյին՝ Տրիստանը դուրս է գալիս պալատից, ապա հրաժեշտ տալով Մերկապոնյոս-Ֆուրիոյին, ասում է.

Здесь у меня был плащ подвернут,
Надеть, словно как подрясник,
Чтоб просто, в случае чего,
Закинуть в первую канаву
Мою армянскую чалму
И греческую размахайку²⁵.

/Перевод М. Лозинского/

«Ռազմախայկան» երկար ու լայն շոր է, իսկ «չալման», փաստորեն, հայկական՝ ըստ թարգմանչի: Օսմանյան կայսրության և Պարսկաստանի հայերի մի մասը, իհարկե, չալմա օգտագործած կլինի, ինչպես նաև ֆես, բայց հայկական այն երբեք չի եղել: Այստեղ չեղածը մատուցվում է որպես իրականություն, հանդիպում է նաև հակառակը: Բոկաչոյի «Դեկամերոնի»

²⁴ (Sale[n] TRISTÁN, *vestido de armenio con un turbante, graciosamente, y FURIO con otro.*). St'u Lope de Vega. El perro del hortelano. Ed. De Rosa Duran. San Isidro (Almeria), [S.a.], p. 143.

²⁵ Lope de Vega. Собр. соч. в 6 тт., т. 4, М., 1963, с. 632.

5-րդ օրվա 7-րդ նովելում ասվում է, որ ճենովացի ծովահենները Հայաստանի ափի մոտ գերեցին մեծ թվով տղաների, մտածելով, որ նրանք թուրքեր են, ու բերեցին Սիցիլիա՝ վաճառելու: Հավանաբար Ն. Տոմաշևսկին կարծում էր, որ Խորհրդային Հայաստանի տարածքը շատ չի տարբերվում միջնադարյան Հայաստանի տարածքից, ուստի և գրեց այսպիսի «փայլուն» մեկնաբանություն. «Բոկաչոյի համար Հայաստանը հեքիաթային երկիր էր: Տվյալ դեպքում նա նկատի ուներ Կոլխիդայի, այսինքն՝ Կովկասի ափը»²⁶: Զվարճալի է, չէ՞: Չիմանալով Կիլիկյան Հայաստանի մասին՝ նա «ուղարկում» է ընթերցողին ու նաև *ճենովացի նավաստիներին* լրիվ այլ ուղղությամբ՝ Սև ծով: Հենց նույն նովելում կա մի պահ, երբ ծեր հայ ազնվականը տեսնում է իր տղային, որին տասնհինգ տարի առաջ ծովի ափին «Լայացցոյի մոտ» փախցրին ծովահենները, ու ճանաչում նրան խալով... Տոմաշևսկու կարծիքով, այդ «Լայացցոն» այն ժամանակվա հայ «բանաստեղծ է»²⁷: Գուցե այստեղ տառախալ կա, “порт”-ի փոխարեն ստացվել է “поэт”: Բայց Լայացցոյի մասին իմացողը չէր կարող Բոկաչոյին *մեղադրել*, թե նա չգիտեր Հայաստանի աշխարհագրությունը: Ի դեպ, Բոկաչոն առևտրականի տղա էր, իսկ նրանցից լավ ոչ ոք չգիտեր, թե որ ուղին ուր է տանում:

Դառնալով Լուպե դե Վեգային՝ նշենք, որ իր պիեսում գրված է “turbante” (турбан), որը չալմայի տեսակ է: Միջնադարում այն հատկապես նորածն էր հարավային Եվրոպայում՝ Իտալիայում, Իսպանիայում, Ֆրանսիայում, բայց տարածվել էր և ավելի հյուսիսային երկրներում:²⁸ Այնուամենայնիվ, ինչո՞ւ ենք մենք մեծ ուշադրություն դարձնում այս՝ կարծես չնչին հարցին, թե ինչ շոր էր հագել Տրիստանը: Բանն այն է, որ Լուպե դե Վեգան ուղղակի գրել է՝ «հայկական շորերով», և էլ ոչ մի բացատրություն չի տվել: Նշանակում է, որ հայկական շորերով մարդն անհայտ մի երևույթ չի եղել ո՛չ նրա համար, ո՛չ էլ, ըստ էության, իսպանացի հանդիսատեսի: Այսինքն՝ Լուպե դե Վեգան համոզված էր, որ դերասանները գիտեն, թե ինչ հագուստ պետք է կրել:

²⁶ Боккаччо Дж. Декамерон, М., 1989, с. 731.

²⁷ Նույն տեղում:

²⁸ Տե՛ս, օրինակ, նշանավոր ֆլամանդացի նկարիչ Յան վան Էյքի «Կարմիր տյուրբանով մարդը» նկարը (1433): Ի դեպ, նա ինքն իրեն էլ է նկարել տյուրբանով:

Իսկ ինչո՞ւ է Տրիստանը ներկայանում հենց հայ առևտրական, այլ ոչ թե, օրինակ, ճանապարհորդ: Պարզ է, առևտրականն ավելի համոզիչ է, բայց ճանապարհորդն էլ կարող էր *Աստեկկայում* գնել ծովահեններից փոքրիկ ստրուկ Տեոդորոյին: Բայց խոսքն այլ բանի մասին է՝ ինչքանով էին ըմբռնելի իսպանացի հանդիսատեսին և, ասենք, Լուդովիկոյին այսպիսի հասկացությունները՝ *հայ* և *առևտրական*: Քանի որ այս պիեսում շատ բան տրամաբանական է, ուրեմն և հայ առևտրականը պետք է որ արտառոց երևույթ չլիներ Իսպանիայում:

Ո՞ր հայերը կարող էին առևտուր անել Իսպանիայում: Իհարկե, ջուղայեցիները, կիուշի ընթերցողը: Բայց պարզվեց, որ ջուղայեցի առևտրականների ներկայությունը Իսպանիայում, մասնավորապես՝ Կադիս նավահանգստում, գրանցված է միայն 1680-ականներից: Այդ եզրահանգման է գալիս Սեբուի Ալանյանն իր գրքում²⁹: Իսկ մյուսներինը՝ 1664 թվականից՝ ըստ Անտոնիո Դոմինգես Օրտիսի հոդվածի³⁰: Դա ըստ Կադիսի ու Սևիլիայի մաքսատների տվյալների, որոնք, ինչ խոսք, հակասում են մեր հոդվածի որոշ դրույթներին: Նախ՝ Իսպանիան խոշոր և նշանավոր մի եվրոպական երկիր էր մեծ ներքին շուկայով, որը չէր կարող անտեսել ցանկացած լուրջ հայ առևտրական: Նաև հավելենք, որ այն ժամանակ շատերն էին համոզված, որ արագ հարստանալու համար պետք է հասնել Ամերիկա, իսկ այդ ուղին սկսվում էր հենց իսպանական Կադիս կամ Սևիլիա նավահանգիստներից: Իհարկե, բացառված էր, որ հայերի գոնե մի մասը չիմանար այդ մասին³¹:

Բարեբախտաբար, մեզ հետաքրքրող հարցին անդրադարձել է և Ղևոնդ Ալիշանն իր «Սիսականում»: Նախ նա գրել է Հայրապետի որդի Անտոնի³² մասին, որին իսպանացի Ալվարես Դավիլան պարտք էր 600

²⁹ From the Indian Ocean to the Mediterranean. The global Trade Networks of Armenian Merchants from New Julfa. Sebouh David Aslanian. University of California. Berkeley-New York-London, [2010], pp. 363.

³⁰ Գրքում կա հոդում նրա “Los Armenios en Cadiz” ուսանողական աշխատության վրա (էջ 77-78), որը, հավանաբար, անտիպ է: 1953թ. նա գրել է նաև “Armenios en Sevilla” հոդվածը՝ Archivo Hispalense, no. 61-62, pp. 189-196, որն արտատպվել է՝ Sociedad y Mentalidad en la Sevilla del Antiguo Régimen. Sevilla, 1979, pp. 27-38.

³¹ Միջնադարում մի շարք հայեր այցելել էին Իսպանիայի տարբեր վայրեր՝ նրանք եկեղեցականներ, ուխտավորներ, ճամփորդներ էին: Տե՛ս **Աբրահամյան Ա.Գ.**, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. 2, Ե., 1967, էջ 199-206:

³² Համոզված ենք, որ բնագրում գրված էր Անտոնիո (Antonio):

ռեալ և այլ բաներ: 1599 թ. Անտոնն ուղարկում է իր որդի Սիմոնին³³, որ հանդիպի Ալվարեսին ու պահանջի նրանից վերադարձնել պարտքերը: Այդ գումարը հուշում է մեզ, որ Անտոնը միջին առևտրական էր, որը, լինելով Վենետիկի քաղաքացի, առևտուր էր անում նաև Սևիլիայում: Իսկ Ալվարեսը, ամենայն հավանականությամբ, Գրանադայից էր, որը ծովի ափից բավական հեռու է: Նա Սևիլիայից ապրանք էր գնում ու վաճառում Գրանադայում: Անձանոթ մարդուն Անտոնը դժվար թե պարտքով փող ու ապրանք տար, ուրեմն Ալվարեսը մի քանի տարի, ասենք՝ 1590-ից, Անտոնից ապրանք էր գնում ու վճարում կարգին փողերով: Եթե ռեալները կեղծ լինեին, ապա Անտոնը կզգուշանար նրա հետ գործարքի մեջ մտնել: Ամենայն հավանականությամբ, Անտոնը մոտ հիսուն տարեկան մարդ էր: Գուցե նա սկսել էր իր առևտուրը Սևիլիայում 1575-ից, իսկ հիմա ինչ-ինչ պատճառներով այդ գործը պետք է շարունակեր իր որդի Սիմոնը, որը, իհարկե, դատարկաձեռն չէր գնալու Սևիլիա (ինչ-որ ապրանք էր տանելու), դրա հետ մեկտեղ լիազորված էր հոր կողմից պարտքը հետ վերցնել: Փաստաթղթում գրանցվել են նրա արտաքին տվյալները («23 ամեայ, բարձրահասակ, սևագոյն, սևամորուս, և այլն»)³⁴, որը Ալիշանը, ցավոք սրտի, լրիվ չի մեջբերում: Հետաքրքիր կլիներ իմանալ, արդյոք իր հագած շորերի նկարագրությո՞ւնն էլ կար, թե՞ ոչ:

XVII դ. Վենետիկի նոտարական արխիվն ուսումնասիրելիս Ղ. Ալիշանը տեսել է Իսպանիայում հայերի առևտրական գործունեության հետ կապված մեծաքանակ փաստաթղթեր. ըստ այդմ՝ հայերը հիմնականում գործում էին Կադիս (գրված է «Գատիս»), Սևիլիա ու Բարսելոնա (գրված է «Պարցելոնա») քաղաքներում: Ալիշանի հիշատակված հաջորդ փաստաթուղթը կապված է 1608 թ. տեղի ունեցած մի տխուր դեպքի հետ: Վենետիկից Իսպանիա ապրանքի հերթական խմբաքանակը տանելով՝ ճանապարհին հենց նավի վրա Ադամ անունով հայ առևտրականը մահանում է (անհայտ պատճառով): Նրա որդին ու եղբորորդին, որպես գործակալներ և նրա ունեցվածքի ժառանգներ, կարգել են Իսպանիա ջուղայեցի Անտոնին «ի Կեծկոյ»³⁵ որպես վստահված անձ: Նա պետք է լուծեր ժառանգու-

³³ Երևի՝ Սիմոնե (Simone):

³⁴ **Ալիշան Ղ.**, Սիսական: Տեղագրություն Սյունյաց աշխարհի: Վենետիկ, Սուրբ Ղազար, 1893, էջ 458:

³⁵ Նույն տեղում:

թյան հետ կապված հարցերն ու նաև պահանջեր այնտեղ գտնվող հայր Անդրեասից (Մխիթարյան միաբանությունից), որ մարի իր պարտքով վերցրած գումարը, որը տվել էր նրան հանգուցյալը:

Ըստ այլ նոտարական փաստաթղթի (1616 թ.)՝ տեղեկանում ենք, որ 1611 թ. սկզբին Սևիլիայում վախճանվել է Հովսեփի որդի Հերոնիմ Տրիպուսեցին, և այժմ ժառանգությունը պետք է անցնի եղբորը՝ Սիմոնին:

Ըստ 1623 թ. Գրառման՝ Սուքիաս Մոկացին Վենետիկից գրավոր խոստանում է Բահսի Ջուղայեցուն, որ կմարի իր պարտքը կա՛մ Իսպանիայում, կա՛մ Ճենովայում³⁶: Պարզվում է, որ այդ Սուքիաս Մոկացին վերցրել էր իր պարտքը դեռ քսան տարի առաջ: Երբ հանդիպում էր Ջուղայեցուն, երկի թե ասում էր, որ անպայման կտա: Չափազանց համբերատար Ջուղայեցու համբերությունը վերջապես հատեց, նա բռնեց Մոկացուն ու տարավ նոտարի մոտ: Հիմա Ջուղայեցին արդեն կարող էր դիմել դատարան, եթե փողերը հետ չստանար³⁷:

Փաստորեն, ըստ Ղ. Ալիշանի, հայերի գործունեությունը Կադիսում և հատկապես Սևիլիայում սկսվել է առնվազն 1590-ականների սկզբից: Ծիծաղելի կլինի մտածել, թե Անտոնը, որն առաջինն է Ալիշանի ցուցակում, հենց առաջին հայ առևտրականն էր Իսպանիայում: *Նա առաջինն էր, որի մասին պահպանվել է ինչ-որ տեղեկություն*: Սխալ է նաև կարծել, որ հայերի քանակն Իսպանիայում հենց այնքան էր, ինչքան տեղ էր գտել Ալիշանի գրքում՝ ինչպես վերը նշեցինք, նա տեսել է մեծ թվով նոտարական փաստաթղթեր:

Ի՞նչ եզրահանգման կգանք, ինչպե՞ս լուծենք հակասությունը: Առաջնություն կտանք, իհարկե, նոտարական փաստաթղթերին, քանի որ մաքսատան գրառումները, անշուշտ, թերի են: Մաքսանենգությունը ծնվեց աշխարհում առաջին իսկ մաքսատան ստեղծման պահից ու լայնորեն տարածված էր ամենուր: Լոպե դե Վեգայի ապրած ժամանակաշրջանը համընկավ Իսպանիայի անկմանը, երբ մաքսանենգությունը հասել էր իր գագաթնակետին³⁸:

³⁶ Ի դեպ, փաստաթղթում գրված էր Գենուա: Դե արի ու հասկացիր, թե ոնց ճիշտ գրել այդ քաղաքի անվանումը:

³⁷ **Ալիշան Ղ.**, Սիսական: Տեղագրություն Սյունյաց աշխարհի: Վենետիկ, Սուրբ Ղազար, 1893, էջ 458:

³⁸ Հայտնի է, որ արտասահմանցին իրավունք չունեին առևտուր անելու Իսպանիայի ամերիկյան գաղութների հետ: Այդ խստիվ արգելքը շրջանցելու համար նրանք դիմում էին

Նշենք, որ հայագիտության տեսանկյունից միջնադարյան Իսպանիան մնում է բավական «terra incognita»: Բարբախտաբար, մեր չարածն ինչ-որ չափով փորձում են լրացնել իսպանացիները: Օրինակ, մի քանի տարի առաջ ժողե Մ. Ֆլորիստան Իմիսկոսը գրեց մի հոդված՝ «Հայերը Ֆիլիպ III Իսպանացու արքունիքում (1598-1621)»³⁹: Պարզվեց, այդ տարիներին Իսպանիայում գործում էին ոչ միայն հայ առևտրականներ՝ տասնմեկ հայ կար նաև Ֆիլիպ III-ի արքունիքում: Հիմնականում հոգևորականներ էին՝ մուշեցի Պաուլո Պաշեկուն, Մարտիրոսը՝ Ախթամար կղզուց, Նախիջևանի արքեպիսկոպոս Ֆրիտոն Ազարիասը, որը ծնվել էր Ապարանում և այլն: Բայց կար նաև մեկ գուսան՝ Վարդան Մանգլինոն, և երկու թարգմանիչ՝ Գաբրիել Armenio-ն և Թոմաս դե Անգելիսը: Վերջինս ուներ լեզվական մեծ ունակություններ, լավ գիտեր ինչպես հայերենը, այնպես էլ պարսկերենը, արաբերենը, թուրքերենն ու իտալերենը: Նաև լատիներենը, քանի որ գրագրությունն այն ժամանակ հիմնականում լատիներենով էր: Նա ծնվել էր Հալեպում: Թոմասի երկու հորեղբայրները փոխեցին դավանանքն ու ստացան թուրքական անուններ: Նրանք փորձում էին Թոմասին էլ թրքացնել, բայց նա փախավ երկրից ու հասավ Հռոմ:

АРМЕНИЯ И АРМЯНЕ В ПЬЕСАХ ЛОПЕ ДЕ ВЕГИ

ЧИЛИНГАРЯН Е.К., ХАЧАТРЯН С.А., ХАЧАТРЯН В.К.

Резюме

Армянская тематика присутствует в ряде *исторических* пьес Лопе де Веге. В некоторых из них (“La Santa Liga”, “Jerusalén conquistada: Epopeya tragica”, “La Dorotea”) есть лишь исторические и географические данные об Армении. Однако в пьесе “Roma abrasada” (“Рим сожжен”) в маленьком

զանազան խարդախությունների, որոնցից ամենամեծը մի հավատարիմ իսպանացու անունից գործելն էր: Դեռ մի հարյուր տարի դրանից առաջ Ֆրեյ Թոմաս դել Մերկադոն գրել էր, որ «արտասահմանցիները գողանում են մեր երկրի արծաթն ու ոսկին... դիմելով բազմաթիվ հնարքների ու խաբկանքի»: Տե՛ս **Марселен Дефурно**. “Повседневная жизнь Испании Золотого века”, М., 2004, с. 15: Տե՛ս <https://coollib.com/b/197562/read>:

³⁹ **José M. Floristán Imízcoz**, “Armenios en la Corte de Felipe III de España (1598-1621)”. *Stu` Revue des Études Arméniennes*, 32 (2010), pp. 165-199.

эпизоде фигурирует армянский царь Дарданио. А в пьесе “Justas de Tebas y reina de las Amazonas” (“Состязание в Тебасе и королева амазонок”) армянский царь по имени Лотаро является одним из главных действующих лиц. При этом образы обоих царей являются воплощением положительных качеств человека.

Что же касается любовных пьес Лопе де Веги, то в них нет героя-армянина, но в лучшей пьесе драматурга (“Собака на сене”) один из героев называет себя армянином, притом армянским купцом. К подобной уловке прибегает слуга Тристан, чтобы соединить два любящих сердца – графиню Диану и ее секретаря Теодоро. Изучение исторических реалий проливает свет на то, почему Тристану было выгодно назваться армянином, а не греком.

Пьеса Лопе де Веги свидетельствует о том, что с конца XVI в. армянские купцы и торговцы играли заметную роль в испанской действительности. Помимо этого, при дворе Филиппа III Испанца (1598-1621) служили армяне – представители духовного сословия (католики), на что указывает статья испанского ученого Жозе М. Флористана Имискоса.

THE ARMENIANS AND ARMENIA IN THE PLAYS OF LOPE DE VEGA

Y. CHILINGARYAN, S. KHACHATRYAN, V. KHACHATRYAN

Abstract

The Armenian subject is present in a number of *historical* plays of Lope de Vega, among them in “La Santa Liga”, “Jerusalén conquistada: Epopeya tragica”, “La Dorotea”. Already in the play “Roma abrasada” the Armenian king Dardanio figures in a small episode. Besides, in the play “Justas de Tebas y reina de las Amazonas” the Armenian king Lotaro is one of the main characters. The images of the mentioned kings, by the way, embody human positive qualities.

As to the *love* plays of Lope de Vega there is no any Armenian hero in them, although in the best play of the playwright “The Dog in the Manger”,

one of the characters presents himself as an Armenian merchant. This trick is used by the servant Tristan in order to unite two loving hearts – countess Diana and her secretary Theodoro. The study of historical circumstances helps us to understand why it was advantageous for Tristan to present himself as an Armenian and not as a Greek.

Thanks to the play of Lope de Vega we succeeded in finding that the Armenian merchants and traders did business in Spain since the end of the 16th century. The Armenian colony in Spain however was not limited by the merchants. There was also a considerable number of the Armenian catholic clerics. At least eight of them served at the court of Philip III of Spain (1598-1621), which is indicated in the works of the Spanish researcher José M. Floristán Imízcoz.

Ե.Դ. ՊՈԼԻՎԱՆՈՎԻ ԶՈՒԳԱՄԵՏԱՏԱՐԱՄԵՏԱՅԻՆ ՀՆՉՈՒՅԹԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

ՊԵՏՐՈՍՅԱՆ Վ.Զ.

Հնչոյթաբանական երկու՝ համաժամանակյա և տարաժամանակյա հայեցակերպերի տարբերական գաղափարն առաջադրվել է գրեթե միաժամանակ՝ նախորդ դարի 20-30-ական թթ., հնչոյթաբանության՝ որպես գիտակարգի ձևավորման փուլում: Չնայած այդ իրողությանը՝ տասնամյակներ շարունակ (գրեթե ողջ XX դարի ընթացքում) լեզվաբաններն առավելապես ուշադրություն են դարձրել համաժամանակյա հնչոյթաբանության խնդիրներին, ուստի և, ի տարբերություն տարաժամանակյա հնչոյթաբանության, համաժամանակյա հնչոյթաբանությունը ներկայացված է բազմաթիվ տեսություններով և աչքի է ընկնում հիմնահարցերի առավել համակողմանի մշակվածությամբ:

Պատմական (տարաժամանակյա) հնչոյթաբանության տարբերական անհրաժեշտության մասին առաջինն արտահայտվել է Ի.Ա. Բոդուենը Կուրտենեն լեհական հանրագիտարանի համար գրված «Հնչոյթաբանություն» բառահոդվածում (1899)՝ *մարդահնչաբանությունից*¹ (антропофоника, *իմա՝* բունհնչյունաբանությունը) և *հոգեհնչյունաբանությունից* (психофонетика, *իմա՝* հնչոյթաբանությունը) բացի, տարբերակելով նաև *պարմական հնչյունաբանությունը*: Վերջինի ուսումնասիրության առարկան, ըստ դր Կուրտենենի, «լեզվի արտասանական կամ հնչական կողմի քննությունն է ժամանակային հաջորդականության մեջ»²:

Տարաժամանակյա հնչոյթաբանության ձևավորման ճանապարհին, որպես առաջին լուրջ փորձեր, ուշագրավ են Ե.Դ. Պոլիվանովի ուսումնասիրությունները: Եթե ընդունենք «պատմական» և «տարաժամանակյա»

¹ Կազմվել է հունարենի *ἄνθρωπος* «մարդ» և *φωνητικός* «հնչյունաբանություն» բառերից

² Бодуэн де Куртенэ И.А. Избранные труды по общему языкознанию, т. I, М., 1963, с. 353-355: Տե՛ս նաև Պետրոսյան Վ., Հնչոյթի գաղափարի սկզբնավորումը և հնչոյթաբանական գիտակարգը [Բանբեր Երևանի համալսարանի (ԲԵՀ), Բանասիրություն, 2012, N 138.2, էջ 34-50]:

հայեցակարգերի տարբերակման՝ Վ. Ժուրավյովի առաջարկած չափորոշիչները³, ապա Պոլիվանովի հնչոյթաբանական հայեցակարգը պիտի համարել «պատմական»՝ երևույթի ուղղակի ըմբռնումով:

Պատմական հնչոյթաբանության հարցերին նվիրված իր մի քանի հոդվածներում (հմմտ. «Լեզվի հնչյունական բարեշրջման՝ որպես աշխատանքային գործընթացի գործոնները», «Որտե՞ղ են ընկած լեզվական բարեշրջման պատճառները», «Մուտացիոն փոփոխությունները լեզվի հնչյունական պատմության մեջ», «Քանակը որակի անցնելու օրենքը պատմա-հնչյունաբանական գործընթացներում»)⁴ և Ռ. Յակոբսոնի գրքի մասին գրված գրախոսության մեջ (հմմտ. «Գրախոսություն Ռ. Յակոբսոնի գրքի մասին»)⁵ Ե. Պոլիվանովը տարբերակում է հնչյունական/(հնչոյթային) փոփոխությունների (իր բնորոշումով՝ «բարեշրջման») երկու տեսակ՝ *դարամեպրություն* (дивергенция) և *զուգամեպրություն* (конвергенция): Դրանք երկուսն էլ ունեն մեկ հիմնական պատճառ՝ «աշխատանքային էներգիայի խնայողության ձգտումը» (վերջինին նա տալիս է նաև «մարդկային ծուկություն» բնորոշումը)⁶: Թեպետև խնայողությունը «բացարձակ, առանց բացառության պայմանների չէ խոսողության ամեն մի դեպքի համար», բայց և այնպես, ըստ Պոլիվանովի, այն «մեր առոգանական գործունեության բնութագրա-

³ Լեզվաբանական գրականության մեջ «պատմական» և «տարաժամանակյա» տերմինները ոչ միշտ են գործածվում տարբերակված նշանակությամբ: Մենք ևս, ընդունելով հանդերձ այդ երկու հասկացությունների՝ Վ. Ժուրավյովի առաջարկված չափորոշիչները, «տարաժամանակյա» տերմինը գործածում ենք լայն առումով՝ որպես «պատմականի» հոմանիշ (հմմտ. «Պատմական հնչոյթաբանություն» հասկացությունը անհամեմատ լայն է «տարաժամանակյա հնչոյթաբանության» հասկացությունից: Տարաժամանակյա հնչոյթաբանության առարկան խստորեն սահմանափակված է երեք չափումներով, երեք բազիսային սկզբունքներով. 1) համակարգայնության, 2) պատմականության, 3) պատճառայնության» (Журавлев В.К. Диакроническая фонология, М., 1968, с. 38-44):

⁴ Հմմտ. Поливанов Е.Д. Факторы фонетической эволюции языка как трудового процесса (Поливанов Е.Д. Статьи по общему языкознанию, М., 1968, с. 57-74); Поливанов Е.Д. Где лежат причины языковой эволюции? (Поливанов Е.Д. Статьи по общему языкознанию, с. 75-89); Поливанов Е.Д. Мутационные изменения в звуковой истории языка (Поливанов Е.Д. Статьи по общему языкознанию, с. 90-113); Поливанов Е.Д. Закон перехода количества в качество в процессах историко-фонетической эволюции (Поливанов Е.Д. Статьи по общему языкознанию, с. 114-134):

⁵ Поливанов Е.Д. Рецензия на книгу Р. Якобсона (Поливанов Е.Д. Статьи по общему языкознанию, с. 135-142).

⁶ Поливанов Е.Д. Где лежат причины языковой эволюции? (Поливанов Е.Д. Статьи по общему языкознанию, с. 81).

կան գիծն է», ուստի և կարևոր է լեզվի բարեշրջման գործոնների մասին եզրակացությունների առումով⁷: Խնայողությունը աշխատանքային էներգիայի կրճատման ձգտումն է հաղորդակցման մասնակիցների կողմից, բայց այդ միտումը կարող է գործել այնքան ժամանակ, քանի դեռ այն «անպտղությամբ չի սպառնում ամբողջ աշխատանքային գործընթացին», այսինքն՝ քանի դեռ հաղորդակցումը չի դադարում հասկանալի լինել կողմերի համար:

Հնչույթային զուգամետությունը Ե. Պոլիվանովը համարում է երկու հնչյունական պատկերացումների («որոնք սկզբունքորեն նույն են եղել ավագ սերնդի համար») նույնացումը կրտսեր սերնդի կողմից⁸: Նա առաջարկել է հնչույթային զուգամետության $axb \rightarrow c$ բանաձևը, որտեղ a -ն և b -ն զուգամետներ են, իսկ c -ն՝ անդրադարձը (իր տերմինով՝ «ռեֆլեքսը»), այսինքն՝ այդ երկու հնչույթների զուգադրությունից ստացված հնչույթային արդյունքը (հմմտ. «նախահունական $*kw$ (ատտիկյանում միայն ոչ առաջնային ձայնավորներից հետո) $\times p \rightarrow p (= \pi)$, օրինակ $\pi\acute{o}-\tau\epsilon\rho\omicron\varsigma$ //լատ. $quo-$ //ռուս. котормый և այլն, հոմեր. $\pi\acute{\iota}\sigma\upsilon\rho\acute{\epsilon}\varsigma$ //լատ. $quat-tuor$ //ռուս. четыре և այլն...»): Այս զուգամետության առաջացման համար Ե. Պոլիվանովը նշում է երկու նախադրյալ. 1) երկու զուգամետների բնախոսական (ֆիզիոլոգիական) և ձայնաբանական (ակուստիկական) նմանությունը, 2) $*kw$ հնչյունի (ինչպես նաև $*kw'$ -ի և $*gw'$ -ի) «դժվարին» լինելը ընդհանուր հնչյունաբանական տեսանկյունից⁹:

Հնչույթային համակցության դեպքերը, երբ երկու կամ ավելի հնչույթների զուգադրությունը հանգեցնում է մեկ հնչույթի, Ե. Պոլիվանովը բնորոշում է որպես *քանակից որակի անցման օրենք* (հմմտ. ռուս. $\check{c} (= \check{c})$ -ի առաջացումը հին ռուս. $*tj$ -ից. $*sw\acute{e}t-j-\bar{a} \rightarrow sv\acute{e}t\check{c}-a = свеч\check{a}$): Այդ օրենքի դրսևորման ձևերը բազմազան են, սակայն, նրա դիտարկմամբ, առավել բնութագրական են $a \rightarrow (a_1 + b_1) = c$, $b \rightarrow (b_1 + a_1) = c$ (**IIa**) և $a \rightarrow (a_1 | b_1) = c$, $b \rightarrow (b_1 | a_1) = c$ (**IIб**) բանաձևերով արտահայտվողները: Առաջին՝ **IIa** տիպի դեպքում «...անդրադարձը հավասար չէ զուգամետներից ոչ մեկին, բայց իր (ինքնաբերական) բնութագրի մեջ համակցում է զուգամետներից յուրաքանչ-

⁷ Поливанов Е.Д. Факторы фонетической эволюции языка как трудового процесса (Поливанов Е.Д. Статьи по общему языкознанию, с. 60).

⁸ Նույն տեղում, էջ 63:

⁹ Նույն տեղում, էջ 64:

յուրի որակից ժառանգված պահեր»¹⁰: Այդ տեսակին է վերաբերում, օրինակ, ընդհանուր չինական խուլ և ձայնեղ հպականների (ներառյալ՝ հապաշփականները) զուգամետությունը մանդարինյան բարբառի պեկինյան խոսվածքի համապատասխան կիսաձայնների մեջ (հմմտ. *p×*b→պեկ. ⁹b, *c×*z→պեկ. ¹z (y3, ɔ3 ոռու. տառադարձությամբ, ch և այլն՝ եվրոպ.) և այլն): Երկրորդ՝ **II6** տիպի դեպքում «անդրադարձի խաչավորված (երկու զուգամետներից ածանցված) բնութագիրը դրսևորվում է ոչ թե նրա մշտական որակում, այլ նրա տարբերակների համակցային-կամ ընտրական *աբեռացիայում* (իմա՝ շեղման մեջ-Վ.Պ.)՝ երկու զուգամետների որակների միջև»¹¹: Այդ տեսակին է վերաբերում *z և *ʒ զուգամետությունը ճապոներենում, որի անդրադարձը z/z հնչոյթն է. այն բառասկզբում և ռնգայինից հետո իրացվում է իբրև հպաշփական, իսկ ձայնավորից հետո՝ իբրև շփական z (օր. *midu→mizu/mizu ‘ջուր’)¹²:

Տարամետությունը զուգամետության հակառակ գործընթացն է, երբ ավագ սերնդի տեսանկյունից «միևնույն հնչյունապատկերացման տարբեր դեպքերը բաշխվում են երկու սկզբունքորեն տարբեր հնչյունապատկերացումների միջև»¹³, այսինքն՝ մեկ հնչոյթից սերվում են երկու տարբեր հնչոյթներ: Ե. Պոլիվանովը տարամետությունն արտահայտում է + պայմանական նշանով: Տարամետություն առկա է ատտիկյան հունարենի *k^w×t→t (=τ) անցման մեջ, ուր e-ից և i-ից առաջ փափկացած *k^w-ը համընկնում է *t-ին (հմմտ. τέσσαρες/quattuor//четыре/հոմերոս. πέντες)¹⁴: Տարամետության առաջացման գլխավոր պայման է «տարամետվող տարբերակների բավականաչափ ֆիզիկական բաժանումը»: Տարամետների առաջացման հարցում կարող է դեր խաղալ բառերի «մաշելիությունը», որ նույնն է, թե՛ «հնչյունների մաշելիությունը բառերի կազմում»¹⁵:

Ինչպես զուգամետ, այնպես էլ տարամետ փոփոխությունների դեպքում անցումները կրում են *մուտացիոն* (իր բնորոշմամբ՝ «հեղափոխական», այսինքն՝ լիարժեք) բնույթ, ըստ որի՝ եթե մի հնչյունական որակից մյուսին անցումը տեղի է ունենում տևական ժամանակի ընթացքում, ապա

¹⁰ Նույն տեղում, էջ 67:

¹¹ Նույն տեղում:

¹² Նույն տեղում, էջ 68-69:

¹³ Նույն տեղում, էջ 63:

¹⁴ Նույն տեղում, էջ 64:

¹⁵ Նույն տեղում, էջ 72:

վերջնական արդյունքում կազմավորված հնչյունը որակապես նոր հնչույթ է՝ հնչյունական ամբողջական ձևավորվածությամբ («...Մուտացիոն (հեղափոխական) է միայն զարգացման ավարտը, զարգացման այդ լուծմանը նախորդող նախապատրաստական մասը սովորաբար կրում է տևական բնույթ»¹⁶), որովհետև չեն կարող գոյություն ունենալ «1/10 հնչույթներ, կամ 1/9 հնչույթներ, կամ 1/2 հնչույթներ»¹⁷:

Հնչույթային փոփոխությունների պատճառ կարող են լինել ինչպես զուգամետությունը և տարամետությունը առանձնաբար, այնպես էլ այդ երկուսը միաժամանակ: Ընդ որում, «մաքուր տարամետության» դեպքը, որը մեկուսացած է որևէ ուղեկցող զուգամետության գործընթացից, ըստ էության, տեսական դեպք է¹⁸, մի հանգամանք, որը նրան հիմք է տալիս ասելու, որ «վիթխարի մեծամասնությամբ դեպքերում տարամետությունն ուղեկցվում է այս կամ այն զուգամետությամբ», և այդ դեպքում թելադրվող է զուգամետությունը (հմմտ. ատտիկյան հունարենում k^w (e, i) + k^w (a, o) տարամետությունը ոչ այլ ինչ է, քան երկու զուգամետությունների հակառակ կողմը. $*k^w \times p \rightarrow p$ և $*k^w \times t \rightarrow t$)¹⁹: Այս դրույթն առանցքային նշանակություն ունի Ե. Պոլիվանովի պատմահնչույթաբանական հայեցակարգի համար: Այն, ըստ էության, պատմական/(տարածամասնակյա) հնչույթաբանության առաջին օրենքներից է, որի նշանակությունը բարձր են գնահատել գիտակարգի հիմնախնդիրներով զբաղված լեզվաբանները²⁰: Վերոհիշյալը լեզվաբանին հիմք է տալիս տարամետությունը դիտարկելու «որպես ֆիզիկական տարբերության հոգեկան տարբերակման մասնավոր դեպք...»²¹:

¹⁶ Поливанов Е.Д. Рецензия на книгу Р. Якобсона (Поливанов Е.Д. Статьи по общему языкознанию, с. 111).

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ Поливанов Е.Д. Факторы фонетической эволюции языка... (Поливанов Е.Д. Статьи по общему языкознанию, с. 72).

¹⁹ Նույն տեղում, էջ 71:

²⁰ Ռ. Յակոբսոնն այն գնահատել է որպես «պատմական հնչույթաբանության սկզբունքները մշակելու համար շատ արդյունավետ օրենքներից մեկը» (Якобсон Р. Избранные работы, М., 1985, с. 128), իսկ ըստ Վ. Ժուրավյովի՝ զուգամետության և տարամետության սերտ կապի գաղափարը «պոլիվանովյան հայեցակարգի միջուկն է» (տե՛ս Журавлев В.К., նշվ. աշխ., էջ 50):

²¹ Поливанов Е.Д. Факторы фонетической эволюции языка... (Поливанов Е.Д. Статьи по общему языкознанию, с. 72).

Ե. Պոլիվանովի առաջադրած կարևոր գաղափարներից մեկը «սկզբնահնչոյթներով զուգամետոության» տեսությունն ստեղծելու պահանջն է՝ որպէս պատմական հնչոյթաբանության առաջնահերթ խնդիրներից մեկը: Օրինակ՝ *ա* (ապաշրթնայնացած *o*)→*o* անցման մեջ (առանց, սակայն, ուրիշ ծագման *o*-ի) նա *o*-ն «սկզբնահնչոյթ» է համարում այն հիմնավորումով, որ ընդհանուր հնչյունաբանական տեսանկյունից *o*-ն անհամեմատ ավելի կանոնական է, քան *ա*-ն («*ա*-ն ընդհանուր հնչյունաբանական անկանոնություն է»)²²: Թեպետև «սկզբնահնչոյթի» ըմբռնումը չի հանգեցվում հնչոյթի նախաձևին, սակայն չպետք է բացառել, որ գործնականում այդ երկուսը հաճախ կարող են համընկնել: Ուշագրավ է, որ Ռ. Յակոբսոնի «Պատմական հնչոյթաբանության սկզբունքները» աշխատության մասին գրված գրախոսականում Պոլիվանովը վերապահությամբ է մոտենում բոլոր դեպքերում «սկզբնահնչոյթները» վերականգնելու հնարավորությանը՝ դրանով ընդգծելով իր և Յակոբսոնի պատկերացումների տարբերությունը²³:

Պատմական հնչոյթաբանության սկզբունքների մշակման գործում ունեցած նշանակության տեսանկյունից Պոլիվանովի զուգադրատարամետային տեսությունը պատմահամեմատական լեզվաբանության առավել հիմնարար բացահայտումներից է և որպէս այդպիսին՝ կարող է համեմատվել «միայն երիտքերականների կողմից հնչյունական օրենքների հայտնագործության հետ»²⁴: Ե. Պոլիվանովն առաջինը չէ, որ հնչյունաբանական և հնչոյթաբանական փոփոխությունները բացատրելիս դիմել է զուգամետության և տարամետության հասկացություններին: Նրանից առաջ այլ իրողությունների առնչությամբ (մասնավորապես՝ հնչյունական և հնչոյթային հերթագայությունների որոշակի տեսակներ բացատրելիս) այդ տերմիններին դիմել է նրա ուսուցիչը՝ Բոդուեն դը Կուրտենեն²⁵: Ի տարբերություն այդ տերմինների բոդուենյան կիրառության, որոնցով հեղինակը բացատրել է որոշակի երևույթներ, Պոլիվանովի տեսության մեջ այդ հասկացությունների կիրառությունը ձեռք է բերել հայեցակարգային

²² Նույն տեղում, էջ 74:

²³ **Поливанов Е.Д.** Рецензия на книгу Р. Якобсона...(Поливанов Е.Д. Статьи по общему языкознанию, с. 136).

²⁴ **Журавлев В.К.**, նշվ. աշխ., էջ 52:

²⁵ **Бодуэн де Куртенэ И.А.** Опыт теории фонетических альтернатив (**Бодуэн де Куртенэ И.А.** Избранные труды по общему языкознанию, т. I, с. 265-347).

նշանակություն: Հատկապես նոր էր հնչյունական /(հնչույթային) փոփոխությունների պատմական/(տարածամասնակյա) գործընթացներում այդ երկու իրողությունների միաժամանակ հանդես գալը:

Պատմական հնչույթաբանության զարգացման գործում Ե. Պոլիվանովի տեսության ունեցած նշանակության առումով կարևոր են հատկապես հետևյալ հանգամանքները. 1) նրա առաջարկած բանաձևերում ընդհանրացված է հնչյունական փոփոխությունների ուսումնասիրությունների ողջ նախորդող փորձը՝ ներառյալ հնչյունական օրենքները, 2) նրա տեսությունը *էքստրապոլիբել* է [*իմա՝ տարածվող, դեպի դուրս բացվող*], այսինքն՝ կիրառելի է ոչ միայն երևույթների որոշակի շրջանակի նկատմամբ, այլև հարակից ոլորտներում, օր.՝ բառապաշարում, ձևաբանության մեջ, շարահյուսության մեջ²⁶ և այլն, 3) նրա բանաձևերին բնորոշ է «հայեցակարգային համընդհանրականությունը» (ունիվերսալիզմը)²⁷. դրանք կիրառելի են բոլոր լեզուների նկատմամբ և չունեն լեզվաընտանիքային սահմանափակումներ. դա միանգամայն օրինաչափ պիտի համարել, քանզի նա իր տեսակետները փորձարկել է տարբեր լեզվաընտանիքների (հնդեվրոպական, չին-տիբեթական, թյուրքական, ուգրո-ֆիննական և այլն) լեզուների վրա, 4) նրա հիմնարար բանաձևերից ու տեսություններից տրամաբանորեն հնարավոր է դուրս բերել նոր, ավելի ընդհանուր բանաձևեր ու տեսություններ. այդպիսին կարող է համարվել, օր., Ռ. Յակոբսոնի մուտացիաների տեսությունը, որը տրամաբանորեն հնարավոր է դուրս բերել Ե. Պոլիվանովի համապատասխան բանաձևից, 5) Պոլիվանովի տեսությունը բացահայտում է այն սահմանափակումները, որոնք համակարգը կարող է դնել հնչյունական փոփոխությունների կամայականության վրա. ըստ այդմ՝ սահմանափակվում է նաև ուսումնասիրողի երևակայությունը²⁸:

Պոլիվանովի հնչույթաբանական հայեցակարգը խոցելի է հետևյալ կողմերով. 1) նրա տեսության կենտրոնական գործառնելին հնչյունն է (կամ հնչույթը Բոդուեն դը Կուրտենի և Շչերբայի ըմբռնումով), այսինքն՝ հնչյունը որպես հոգեբանական միավոր. տարամետվում է առանձին հնչյունը (հնչույթը), և զուգամետվում են առանձին հնչյունները (հնչույթները). դեռևս չկա հնչույթի, այլահնչակի և դիրքային տարբերակի հստակ

²⁶ Նույն տեղում:

²⁷ Նույն տեղում:

²⁸ Նույն տեղում, էջ 52-53:

տարրորոշում, այնինչ այդ նույն ժամանակաշրջանում առնվազն Պրահայի խմբակի ներկայացուցիչների, մասնավորապես՝ Ն. Տրուբեցկոյի աշխատություններում արդեն իսկ գործառում էին վերոհիշյալ հասկացությունները, և Ե. Պոլիվանովը չէր կարող դրան տեղյակ չլինել. այս հանգամանքը կարող է բացատրվել նրանով, որ հնչույթի տեսության հարցերը նրա համար չեն եղել առաջնային, իր տեսակետներն արտահայտելու համար բավարար է եղել արդեն իսկ առկա հայեցակարգի կիրառումը. 2) նրա աշխատանքներում անհրաժեշտ չափով արտահայտված չէ տարամետա-գուգամետային գործընթացների կապը հնչյունական օրենքների հետ, «չնայած որ նրա հայեցակարգի էությունը հենց դրանց ընդհանրացումն է»²⁹:

Ճիշտ չի լինի ասել, որ Ե. Պոլիվանովի աշխատություններով ամբողջաձևավորվածության է հասնում պատմական հնչույթաբանությունը՝ որպես գիտակարգ, բայց տեղին կլինի ասել, որ նրա աշխատություններով և հատկապես նրա մշակած գուգադրատարամետային տեսությամբ լուրջ նախադրյալներ են ստեղծվում այդ գիտակարգի ձևավորման համար:

КОНВЕРГЕНТНО-ДИВЕРГЕНТНАЯ ФОНОЛОГИЧЕСКАЯ КОНЦЕПЦИЯ Е. ПОЛИВАНОВА

ПЕТРОСЯН В.З.

Резюме

Е. Поливанов стоял у истоков формирования исторической фонологии как лингвистической дисциплины. Стержнем его историко-фонологической теории является интерпретация звуковых/фонемных изменений по конвергентным и дивергентным принципам, точнее, по одновременному действию этих двух принципов, основной причиной чего является естественное стремление достигнуть максимальной экономии в артикуляции. Открытые им формулы и законы в области исторической фонологии, в частности, теория мутации, послужили основой новых формул и теорий, и по своей значимости они сравнимы лишь с открытием младограмматиками звуковых законов.

²⁹ Նույն տեղում, էջ 54:

E. POLIVANOV'S COMPARATIVE-DIVERGENT PHONEMIC CONCEPT

V. PETROSYAN

Abstract

E. Polivanov is a scientist who stands in the bases of the development of historical phonemics as a linguistic discipline. The angle of his historical-phonemic theory is the interpretation of phonetic/phonemic changes according to the principles of convergence and divergence, particularly according to the synchronous activity of both principles the main reason for which is considered the natural aspiration for maximal thrift in articulation. The formulae and laws (regulations) found out by E. Polivanov in the sphere of historical phonemics, in particular the theory of mutations, have become a basis for new formulae, and with their value and significance they are comparable only with the invention of phonetic laws by Young Grammarians.

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՄԱԺԱՄԱՆԱԿՅԱ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

ՄԿՐՏՉՅԱՆ Լ.Հ.

Սինքրոն (համաժամանակյա) թարգմանությունը մասնագիտության հետ չառնչվող լայն հասարակությունը զուգակցում է մի շարք առասպելների հետ: Սույն հոդվածի նպատակն է տալ մասնագիտության համար կարևոր և որոշիչ մի շարք պայմանների և հանգամանքների ընդհանուր ուրվագիծը՝ Հայաստանում մասնագիտության դասավանդման մեթոդաբանության մշակման լույսի ներքո, հենվելով սեփական երեսնամյա գործնական փորձի, միջազգային ու տեղական բանիմաց գործընկերների փորձի, Սինքրոն թարգմանիչների միջազգային ասոցիացիայի¹, Եվրոպական հանձնաժողովի Թարգմանության դիրեկտորատի մի շարք կանոնակարգող հիմնարար փաստաթղթերի² և ՌԴ սինքրոն թարգմանիչների լիգայի³ հանձնարարականների ուսումնասիրության վրա:

Սինքրոն թարգմանչի մասնագիտական գործունեությունը շատ առումներով բնորոշվում է բազմապիսի, երբեմն աննախադեպ հանգամանքներով, ուստի հիմնականում կախված է թարգմանչի ինքնուրույն տրամաբանական ընտրությունից և ողջամիտ որոշումներից: Գրեթե երեսուն տարի աշխատելով որակավորումների բազմակողմանի տեսականիով՝ այսինքն՝ և՛ որպես բանավոր համաժամանակյա, և՛ բանավոր հաջորդական, և՛ բանավոր ուղեկցող կամ ինչպես ասում են «շուշոտիստ» (շուշոտաժ կոչ-

¹ <http://aiic.net/> - Սինքրոն թարգմանիչների միջազգային ասոցիացիայի կայքը պարունակում է բազմաթիվ օգտակար փաստաթղթեր, որոնք կոչված են կանոնակարգելու սինքրոն թարգմանիչների միջազգային և ազգային գործունեությունը:

² http://ec.europa.eu/dgs/scic/index_en.htm - Եվրոպական հանձնաժողովի Ընդհանուր գործերի դիրեկտորատի բանավոր թարգմանության հետ առնչվող հարցեր լուսաբանող վեբկայքը նույնպես բազմաթիվ հետաքրքիր, օգտակար և արդիականացվող նյութեր է պարունակում բանավոր համաժամանակյա և հաջորդական թարգմանիչների համար:

³ <http://www.russian-translators.ru/perevodchesky-opit/practika/recomendatziipoustno-muperevodu/>; http://rvalent.ru/UstniPerevod_p1-4.pdf; <http://www.translators-union.ru/>; <http://tconference.ru/>; <http://www.russian-translators.ru/>.

վում է բանավոր թարգմանության այն տեսակը, երբ թարգմանիչը փսփսում է թարգմանությունը լսողի ականջին), և՛ գրավոր տեխնիկական, և՛ գրավոր փաստաթղթային, և՛ գրավոր գեղարվեստական թարգմանիչ, միայն վերջերս են իմացել, որ աշխարհում այդպես ընդունված չէ, որովհետև կա կարծիք, որ դա անհնար է: Եվրոպական ստանդարտներն ասում են, որ մեկ մարդը չի կարող անել այդ բոլոր տեսակի թարգմանությունները և պետք է մասնագիտանա միայն մեկ-երկու տեսակի բանավոր կամ մեկ տեսակի գրավոր թարգմանության մեջ: Սկսենք կազմակերպչական հարցերից: Եթե թարգմանիչն արդեն պատրաստ է սինքրոն թարգմանության, ապա պետք է հիշի մեկ ոսկե կանոն՝ յուրաքանչյուր թարգմանիչ կարող է հավակնել սինքրոն թարգմանության պատվեր ստանալու, սակայն իրեն պրոֆեսիոնալ սինքրոն թարգմանիչ կարող է համարել միայն պատվիրատուից կրկին և կրկին պատվերներ ստանալուց հետո:

Քանի որ Հայաստանում առայժմ չկա պաշտոնապես գործող սինքրոն թարգմանիչների լիգա, միություն կամ գրանցված բյուրո, հետևաբար թարգմանության պատվերներ տրվում են հենց իրադարձությունների կազմակերպիչներից, որոնք, սակայն, գրեթե միշտ, բացառությամբ մեկ-երկու պատվիրատուի (UN, EC), կա՛մ զբոսաշրջային գործակալություններ են, կա՛մ գործի հետ ինչ-որ առնչություն ունեցող անհատներ:

Առաջին խորհուրդ-հանձնարարականս՝ ստուգեք պատվիրատուին և թույլ մի տվեք, որ ձեր և պատվիրատուի միջև երրորդ, հատկապես ոչ գործընկեր անձ լինի, որը կարող է անբարեխղճորեն օգտվել առիթից և շահագործել ձեր աշխատանքը:

Վստահելի պատվիրատուի հետ առաջին հանդիպման ժամանակ պետք է քննարկել հետևյալ հանգամանքները.

- պատվիրատուի կազմակերպության անունը և գործունեության բնույթը.
- կազմակերպվող իրադարձության բնույթը (համաժողով, սեմինար, աշխատանքային հանդիպում, բանակցություն, շնորհանդես և այլն).
- պահանջվող թարգմանության տեսակը (սինքրոն, հաջորդական, շուշոտաժ, լինելո՞ւ են արդյոք միայն պլենար նիստեր, թե՞ կլինի նաև սեկցիոն աշխատանք).
- թեման, ոլորտը, յուրահատուկ համառոտագրությունները, հապավումները, նեղ մասնագիտական եզրերը, եթե այդպիսիք կան.

• պահանջվում է արդյոք թարգմանել հարցազրույց կամ մամուլի ասուլիս, պե՞տք է արդյոք ուղեկցել և (կամ) թարգմանել գալա իրադարձության, ընդունելության կամ ընթրիքի ժամանակ.

- իրադարձության աշխատանքային լեզուները.
- իրադարձության վայրը՝ քաղաքում է, թե՞ քաղաքից դուրս.
- աշխատանքային պայմանները՝ սինքրոն սարքավորման տեսակը.
- դահլիճը և (կամ) խցիկի տեսակը (որոշ դահլիճներ ունեն իրենց խցիկները, որոշ դահլիճներ՝ ոչ, խցիկի դիրքից կախված՝ տեսանելի կամ անտեսանելի կարող են լինել զեկուցողները և ելույթների էկրանային ցուցադրումը.

• ի՞նչ գրավոր նյութեր կան, առաջին հերթին և անպայման պահանջեք օրակարգը՝ բոլոր եղած լեզուներով, մամուլի հաղորդագրությունը, եթե կա, ճառերի, ելույթների տեքստը կամ առնվազն վերնագրերը, մասնակիցների անունները և պաշտոնները և իմացեք՝ ե՞րբ են դրանք տրամադրվելու թարգմանչին.

• ո՞վ է լինելու ձեր երկրորդը⁴ (երկրորդ թարգմանիչը), որոշ դեպքերում կարող է լինել և թարգմանիչների խումբ, ո՞վ է ընտրելու խմբի կամ զույգի անդամներին՝ ինքնե՞րդ, թե՞ պատվիրատուն: Երբեմն հաջորդական թարգմանության դեպքում երկրորդ թարգմանիչ չի նախատեսվում⁵.

- վարձատրության չափը և վճարման պայմանները.
- եթե իրադարձությունը տեղի է ունենալու քաղաքից դուրս որևէ հյուրանոցում կամ այլ քաղաքում, ապա պետք է պայմանավորվել նաև տրանսպորտային, հյուրանոցային և օրապահիկ ծախսերի համար⁶.

• հնարավոր է, որ պատվիրատուն պահանջի սինքրոն թարգմանության ձայնագրություն: Ձեր իրավունքն է հրաժարվելու ձայնագրությունից,

⁴ Անգլերեն հնչում է «the second», որը գերադասում եմ թարգմանել ոչ թե «երկրորդ» կամ «զույգ» («զուգընկեր» այլ նշանակություն ունի), այլ «մարտավակա»: Իրոք, սինքրոն թարգմանության գործընկերը պետք է մարտավակայի պես վստահելի լինի բոլոր առումներով, դու ինքդ նույնպես նրա համար ես «մարտավակա», իսկ սինքրոն թարգմանությունը, ըստ իս, շատ առումներով նման է մենամարտի:

⁵ Միջազգային պրակտիկայում ընդհանրապես ընդունված է, և խորհուրդ է տրվում ոչ մի դեպքում չաշխատել առանց երկրորդ թարգմանչի, հատկապես սինքրոն թարգմանության ընթացքում:

⁶ Չհամաձայնվեք հյուրանոցային սենյակը երկրորդ կենվորի հետ կիսելու առաջարկին: Թարգմանչին պետք է հանգիստ և անձնական տարածքի անձեռնմխելիություն:

թեև ինձ մի քանի անգամ օգնել է դրա առկայությունը⁷: Նախ բանավոր թարգմանությունը հեղինակային իրավունքի օբյեկտ է, որի սեփականատերը թարգմանիչն է, երկրորդ՝ բանավոր թարգմանության յուրահատկությունն այն է, որ անգամ կատարյալ թարգմանելու դեպքում բանավոր խոսքը գրավորի վերածելը շատ բարդ է և լրացուցիչ խմբագրական աշխատանք է պահանջում, այլապես կարող է անհերթել հնչել:

Միջազգային ստանդարտներով երկու լեզվով (սովորաբար մայրենի լեզվից դեպի օտար լեզու և «ռետուր», այսինքն՝ հետադարձությամբ) սինքրոն թարգմանության համար պահանջվում են ոչ պակաս, քան երկու թարգմանիչ⁸, ընդ որում՝ յուրաքանչյուր ուղղությամբ թարգմանելու համար, թարգմանչական խցիկ,⁹ համապատասխան սարքավորում և աշխատանքի տևողության խիստ կանոնակարգում: Հազվագյուտ պահանջարկ ունեցող լեզուների թարգմանության համար երբեմն կարող է պահանջվել «պիլոտային խցիկ» կամ թարգմանության «ռելե» գործելակարգ, երբ հազվագյուտ լեզվի մասնագետ թարգմանիչը թարգմանում է դեպի մեկ աշխատանքային լեզու, իսկ դեպի մյուս լեզուները թարգմանողներն արդեն թարգմանում են պիլոտային խցիկից ստացած թարգմանությունից:

Պրոֆեսիոնալ սինքրոն թարգմանիչները սովորաբար ունենում են լեզվական կոմբինացիայի կարգ՝ ըստ աշխատանքային լեզուների մասնագիտական տիրապետման մակարդակի: Թարգմանչի աշխատանքային լեզուները դասակարգվում են որպես «ակտիվ» և «պասիվ» լեզուներ: Սինքրոն թարգմանիչների միջազգային ասոցիացիայում (AIIC) ընդունված է դասակարգել սինքրոն թարգմանիչների լեզուներն ըստ «A», «B» և «C» կարգերի¹⁰:

⁷ Որոշ անփորձ լրագրողներ սովորություն ունեն լրահոսի նյութը փոխառնել միմյանցից, և եթե հանկարծ նյութի հեղինակը անթույլատրելի սխալ է թույլ տվել ինչ-որ, հատկապես քաղաքական խոսնակի ելույթը վերաշարադրելիս, ապա մյուսների հոդվածները կամ բլոգները կարող են կրկնել նույն սխալը: Իսկ երբ գործը հասնում է քաղաքական սկանդալի, բնականաբար, հեշտ է մեղքը զցել թարգմանչի վրա, հատկապես երբ այնպիսի փաստարկ կա, թե բոլոր լրագրողները չէին կարող սխալվել: Այստեղ թարգմանչին իրոք կարող է փրկել ձայնագրությունը:

⁸ <http://aiic.net/professional-standards>.

⁹ Թարգմանչական խցիկների և սարքավորման տեխնիկական պարամետրերը կանոնակարգված են գործող ISO ստանդարտներով. ISO/TC 37/SC 5 -Translation, interpreting and related technology -<https://www.iso.org/committee/654486.html>.

¹⁰ <http://aiic.net/>.

Ակտիվ լեզուներն այն լեզուներն են, որոնցով կարող է թարգմանել բանավոր թարգմանիչը, և որոնք հիմնականում դասակարգվում են մայրենի և ոչ մայրենի տեսակների.

«**A**» կարգի **լեզու**. որը թարգմանչի մայրենի լեզուն է, կամ որն է այլ լեզու, որին թարգմանիչը տիրապետում է մայրենի լեզվի մակարդակով և բանիմացությամբ, և որով թարգմանում է իր իմացած մյուս բոլոր լեզուներից՝ համաժամանակյա և հաջորդական գործելակարգերով: Ընդ որում, AIIC անդամ դառնալու համար սինքրոն թարգմանիչը պետք է տիրապետի առնվազն մեկ «A» կարգի և երկու «B» կարգի աշխատանքային լեզուների: Կա կարծիք, որ «A» կարգի լեզու կարող է լինել միայն մարդու մայրենի լեզուն կամ այն լեզուն, որով նա ստացել է հիմնական կրթությունը: Խորհրդային կրթություն ստացած թարգմանիչներից շատերի համար ռուսերենը երկրորդ մայրենի լեզու է եղել, ուստի կարող է լինել «A» կարգի լեզու: Ճիշտ այդպես լեզվական առավելություն ունենում են այն երկրներից սերված թարգմանիչները, որտեղ երկու և ավելի պաշտոնական լեզուներ են գործում, և որոնք հնարավորություն են ունեցել երիտասարդ տարիքից կրթվելու այդ լեզուներով:

«**B**» կարգի **լեզուն** թարգմանչի ոչ մայրենի աշխատանքային լեզուն է, որին տիրապետում է այնպիսի մասնագիտական կատարելությամբ, որ կարող է այդ լեզվով թարգմանել մեկ կամ մի քանի ուրիշ լեզուներից:

Պասիվ լեզուներ են «C» կարգի լեզուները, որոնք թարգմանիչը կատարելապես հասկանում է, ուստի կարող է թարգմանել այդ լեզուներից, բայց այնքան վստահ չի տիրապետում, որ դրանցով թարգմանի:

Որոշ թարգմանիչներ գերադասում են աշխատել միայն մեկ բանավոր գործելակերպով, այսինքն՝ կա՛մ միայն համաժամանակյա, կա՛մ միայն հաջորդական: Ըստ իս, դա պայմանավորված է ոչ միայն լեզվի իմացության խորությամբ, այլև անհատի խառնվածքի առանձնահատկություններով և ակտիվ աշխատանքային տարիների փորձով:

Քանի որ Հայաստանում սինքրոն թարգմանության աշխատանքային և իրավական հարաբերությունները կանոնակարգող օրենսդրություն չկա¹¹,

¹¹ Թարգմանության (գրավոր) ոլորտի կարգավորման մասին առայժմ մի քանի հոդված կա միայն «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում (2006 թ. հունիսի 15). Հոդված 3. **Հեղինակային իրավունքի օբյեկտները**, 4-րդ մասի «Ժ» կետ, Հոդված 4. **Հեղինակային իրա-**

ապա այդ գործի հետ առնչվող պայմանները և հանգամանքները որոշում և կանոնակարգում են կա՛մ միջազգային կազմակերպությունները, որոնք գործի հիմնական պատվիրատուներն են և շարունակաբար թարգմանության մեծ պատվերներ ունեն, կա՛մ եթե այդպիսին լինելը (ընդ որում՝ դա ավելի անմիջական գործնական կանոնակարգում է ապահովում, քան օրենսդրական նախաձեռնությունները), թարգմանիչների ազգային միությունը կամ պաշտոնապես գործող մասնագիտական միավորումը¹²:

Սինքրոն թարգմանության ոլորտի մյուս բոլոր հանգամանքները նույնպես հիմնականում կանոնակարգում է Սինքրոն թարգմանիչների միջազգային ասոցիացիան¹³, որը, լինելով ոլորտի առաջատար միջազգային կազմակերպությունը, ուղղորդում է նաև սինքրոն թարգմանության ոլորտին առնչվող տեխնիկական, կազմակերպչական, իրավական և ֆինանսական բոլոր հարաբերությունների կանոնակարգումը: Ներկայումս ISO ստանդարտների միջազգային կազմակերպությունում մշակվում է սինքրոն թարգմանության որակի ապահովման միջազգային ստանդարտ¹⁴:

Սինքրոն թարգմանչի աշխատանքը միջազգային ստանդարտներով, ընդ որում՝ նաև Ռուսաստանում, չափվում է միայն «լրիվ աշխատանքային օրով» կամ «կես աշխատանքային օրով»: Թեև անգամ ՄԱԿ-ի նման խոշոր գործատուն տեղացի սինքրոն թարգմանիչներին առաջարկում է հատկանշել «Ժամավճարի» դրույքաչափ, որը կարող է ընդունելի լինել միայն որոշակի վերապահումներով, և ելնելով միայն տեղական շուկայի առանձնահատկություններից: Սինքրոն թարգմանչի «լրիվ աշխատանքային օրը» չի կարող լինել 8 ժամից ավելի՝ պարտադիր մեկ ու կես ժամ ճաշի կամ հանգստի համար և երկուական անգամ կեսժամանոց «սուրճի» ընդմիջումներով: Ուստի սինքրոն թարգմանության «կես օրը» 4 ժամ է՝ համապատասխան ընդմիջումով: Եթե որևէ գործատու փորձի աշխատանքային ժամից հանել ընդմիջման ժամերը, ապա թարգմանիչը պետք է անմիջա-

վունքի օբյեկտ չհամարվող ստեղծագործությունը, 1-ին մասի «գ» կետ, Հոդված 13. **Հեղինակի գույքային իրավունքները** 1-ին մասի «ե» կետ, Հոդված 22. **Ստեղծագործության ազատ օգտագործումը** 2-րդ մասի «ա» կետ, Հոդված 30. **Թարգմանության կամ այլ ածանցյալ ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքը**:

¹²<http://aiic.net/agreements>, http://europa.eu/interpretation/doc/conv_en_2008.pdf, http://europa.eu/interpretation/doc/modalites_en_2008.pdf:

¹³ AIIC (<http://aiic.net/>).

¹⁴ <https://www.iso.org/committee/654486/x/catalogue/p/0/u/1/w/0/d/0>.

պես հրաժարվի այդ գործատուից կամ առաջարկի այնպիսի ժամավճարային գին, որը լիարժեք կհատուցի նրա աշխատանքը: Կանոնակարգված աշխատանքային օրից (8/4) ավելի լրացուցիչ ամեն մի աշխատանքային ժամի համար թարգմանիչը պետք է հավելյալ վճար ստանա գործատուից՝ կանխավ պայմանավորվելով դրա դրույքաչափի մասին: Անթույլատրելի է, երբ թարգմանիչն մոտենում են ընդմիջումների ժամանակ հաղորդակցման մեջ օժանդակելու խնդրանքներով կամ հանպատրաստից հարցազրույցների թարգմանության համար:

Քանի որ Հայաստանում հեռավորությունները հարաբերականորեն մեծ չեն քաղաքների միջև, և տրանսպորտային ծախսերը առանց վերապահումների հոգում են գործատուները, սովորաբար կարիք չի լինում լրացուցիչ պայմանավորվել ճամփորդության վրա ծախսված օրերի հատուցման համար:

Եթե լինեք բանավոր թարգմանության ոլորտը կանոնակարգող հայկական օրենսդրություն, ապա մի ամբողջ հոդված պետք է նվիրվեր պայմանագրերի դադարեցման կամ հրաժարման հարցերին: Միջազգայնորեն ընդունված գործելակերպ է բանավոր թարգմանության ծառայությունների մասին պարտավորություններ ստանձնելուց հետո կողմերի միջև պահպանել *pacta sunt servanda*¹⁵ սկզբունքը, որի խախտումը, թեև ըստ էության կարող է միայն բարոյական կամ հանրային հանդիմանության հետևանք ունենալ, միանգամայն բավարար է եղել ինձ բազմամյա գործունեության ընթացքում: Սովորաբար բոլոր պայմանավորվածությունները լինում են բանավոր, և շատ հաճախ աշխատանքային պայմանագրերն ստորագրվում են արդեն արված գործից հետո՝ ֆինանսական հատուցումը կանոնակարգված կազմակերպելու և հարկային պարտավորությունները հարգելու նպատակով: Երեսուն տարվա ընթացքում ավանդական «վաճառականական ազնիվ խոսքը» անձամբ ես ստիպված եմ եղել խախտել երկու անգամ միանգամայն հիմնավոր անհաղթահարելի հանգամանքների պատճառով, որը կարող եմ ասել նաև պատվիրատուների մասին: Անշուշտ, լինում են իրավիճակներ, երբ հանգամանքների բերումով պայմանավորվածության խախտումն անխուսափելի է: Արհեստավարժ թարգմանիչի համար չկա

¹⁵ Pacta sunt servanda (լատ.՝ «պայմանագրերը պետք է իրականացվեն»)՝ քաղաքացիական և միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքը, որը կողմերին տալիս է պայմանավորվածության անքակտելիության փոխադարձ ընդունման երաշխիք:

ավելի մեծ տնտեսական արժեք, քան սեփական մասնագիտական անբասիր հեղինակությունը, և չեմ ճանաչում որևէ մեկի, որն առանց հիմնավոր պատճառի, առանց կանխավ զգուշացման և համապատասխան փոխարինող(ներ) առաջարկելու՝ երբևէ խախտած լինի իր պայմանը, ուստի դեռ կարիք չեմ ունեցել ուսումնասիրելու՝ արդյոք Հայաստանի օրենսդրությունում կա համապատասխան վերաբերմունք կամ նախադեպ նման իրավիճակների կարգավորման համար: Անշուշտ, այդ հարաբերությունները կարգավորվում են աշխատանքային օրենսգրքի և գործարար հարաբերությունների կանոնակարգման համապատասխան իրավական սկզբունքներով, եթե կողմերը դիտարկվում են գործատու-աշխատող կամ գործարար-գործարար հարաբերությունների տեսակետից:

Միջազգայնորեն ընդունված է, որ պայմանավորվածության պահպանման անհնարինության դեպքում **թարգմանիչը** պարտավոր է նախօրոք իրազեկել պատվիրատուին և համապատասխան փոխարինող առաջարկել թարգմանության գործի համար¹⁶, եթե, իհարկե, պատվիրատուն չի նախընտրում ինքնուրույն գտնելու փոխարինողի: **Պատվիրատուն** պետք է հասկանա, որ պայմանավորվածության խախտումը թարգմանչին ֆինանսական կորուստ է պատճառում, առավել ևս եթե թարգմանիչը, պատվիրատուի առաջարկն ընդունելով, հրաժարվել է այլ առաջարկներից: Անդրադառնամ միջազգային պրակտիկային. Եվրոպական երկրներում պատվիրատուն, ըստ պայմանագրային պարտավորությունների, պետք է հատուցում վճարի թարգմանչին: Հատուցման չափերը կախված են այն հանգամանքից, թե պայմանավորվածությունը երբ է դադարեցվել: Այսպես, համաձայն ԵԽ և Սինքրոն թարգմանիչների միջազգային ասոցիացիայի միջև պայմանավորվածության¹⁷ պատվիրատուն մինչև իրադարձության օրը մնացած 60 օրն անցնելուց հետո պատվերը դադարեցնելու դեպքում պետք է թարգմանչին վճարի «*cancellation fee*», որը թարգմանչի ստանալիք գումարն է՝ յուրաքանչյուր չաշխատած օրվա համար:

¹⁶ Արտերկրյա պատվիրատուների հետ աշխատելիս պետք է հաշվի առնել, որ գործի առաջարկը կարող է ունենալ փուլային տարբերակման առանձնահատկություն. *option* (այսինքն՝ առաջարկ, ընտրության իրավունքի վերապահումով) և *firm offer* (*հաստատված առաջարկ*): *Option* տարբերակի դեպքում պայմանավորվածությունը վերջնական չէ, քանի դեռ պատվիրատուն չի հաստատել իր առաջարկը, իսկ եթե հաստատումն ուշանում է, թարգմանիչը կարող է ուրիշ առաջարկ ընդունել:

¹⁷ <http://aiic.net/page/3540/aiic-eu-convention/lang/>.

Թարգմանիչը պետք է ժամանակին ստանա բոլոր նյութերը և ամբողջ տեղեկությամբ, որն անհրաժեշտ է իրադարձության հաջողությունը ապահովելու համար: Ընդ որում, նյութերի և առկա տեղեկատվության ուսումնասիրությունը պատվիրատուի և մասնակիցների համար անտեսանելի, սակայն թարգմանչից ժամանակ և աշխատանք պահանջող տնային աշխատանքն է: Յուրաքանչյուր գործից առաջ թարգմանիչը հատկապես անձանոթ պատվիրատուից (փորձառու թարգմանիչներին հին պատվիրատուի հետ աշխատելիս երբեմն բավարար է ունենալ միայն իրադարձության օրակարգը) պետք է պահանջի նախապատրաստական տնային աշխատանքի համար բացարձակապես անհրաժեշտ նյութեր. օրակարգ, ելույթներ, մամուլի հաղորդագրություն, լրացուցիչ տեղեկություններ, բացատրական բառարաններ, եզրերի և հապավումների ցանկ, մասնակիցների անունները և պաշտոնների ցանկը, հիմնական զեկուցողների կենսագրականները և ցանկացած այլ երկրորդական նյութ, օրինակ՝ նախկինում իրականացված նմանատեսակ իրադարձությունների արձանագրությունները և նյութերը, զեկուցողների PowerPoint ներկայացումները, տպագիր կամ էլեկտրոնային ֆորմատով մյուս բոլոր նյութերը, որոնք պետք է բաժանվեն մասնակիցներին, նաև իրադարձությունը ներկայացնող կազմակերպության կամ նրա գործունեության ոլորտին առնչվող վեբկայքերի հասցեները և այլ նյութեր, որոնք կօգնեն թարգմանչին խորամուխ լինելու իրադարձության թեմատիկ ոլորտի մեջ: Եթե իրադարձության ընթացքում նոր փաստաթղթեր կամ նյութեր են հայտնվում կամ բաժանվում մասնակիցներին, ապա անպայման պետք է հասցվեն նաև թարգմանիչներին:

Որոշ պատվիրատուներ իրադարձությունից առաջ առանձին հանդիպում են կազմակերպում զեկուցողների և թարգմանիչների համար, որը երկուստեք օգտակար է՝ և՛ ելույթ ունեցողների, և՛ թարգմանիչների համար:

Բանավոր թարգմանիչների ընդհանուր վարվելակարգի մեջ չգրված օրենք է ստացված նյութերի, իրադարձության բովանդակության և զեկույցների գաղտնիության պահպանումը, սակայն որոշ պատվիրատուներ կարող են թարգմանչից պահանջել ստորագրել Գաղտնիության պահպանման պարտավորագիր¹⁸: Վերջին ժամանակներում հաճախակի է դարձել համաժողովների ժամանակ սկայպով հաղորդակցման թարգմանության անհրաժեշտությունը: Ըստ էության, դա ոչ մի լրացուցիչ խնդիր չի առա-

¹⁸ Statement of confidentiality and non-disclosure.

ջացնում թարգմանչի համար, եթե տեխնիկապես ապահովվում է ձայնի մատչելիությունը:

Քիչ այլ մարտավարություն է պահանջում տեսանյութերի թարգմանությունը: Սովորաբար տեսանյութի մեջ գրանցված թարգմանության կարիք ունեցող խոսքը երկու անգամ ավելի արագ է հնչում, որովհետև ժամանակի սահմանափակության պատճառով խոսքի բովանդակությունը կարող է կրկնակի խիտ լինել: Ուստի թարգմանչին պետք է նախօրոք տրամադրել տեսանյութի սցենարը և «մոնտաժային տեքստը», իսկ ձայնի կապը պետք է լինի սարքավորման միջոցով: Եթե ձայնը փոխանցվելու է թարգմանչին դահլիճում դրված խոսափողերի միջոցով, ապա թարգմանիչը կարող է հրաժարվել տեսանյութի թարգմանությունից, որովհետև այդ դեպքում բանավոր սինքրոն թարգմանությունն ուղղակի անհնար է:

Մի քանի խոսք «շուշոտաժ» թարգմանության մասին, երբ թարգմանիչը փսփսում է թարգմանությունը ունկնդրի ականջին: Սովորաբար շուշոտաժ պահանջվում է, երբ դահլիճում թարգմանության կարիք ունի մեկերկու ունկնդիր: Անձամբ գերադասում եմ նույնիսկ մեկ ունկնդրի համար սինքրոն թարգմանություն անել ավանդական սարքավորումով: Տեխնիկապես նման տեսակի թարգմանությունը գրեթե ոչնչով չի տարբերվում սինքրոնից, սակայն համապատասխան որակ երաշխավորելը համարյա անհնար է: Դրանից բացի, կա մի քանի հանգամանք, որ թարգմանիչը պետք է հաշվի առնի «շուշոտաժի» առաջարկ ընդունելուց առաջ: Թարգմանիչը պետք է ունենա բերանի առողջ և խնամված խոռոչ, առողջ և մաքուր ատամնաշար: Պետք է խուսափել սննդակարգի մեջ հոտավետ սննդատեսակներից և անմիջականորեն գործից առաջ չխմի գազացված խմիչքներ: Չէ՞ որ թարգմանիչը նստում է ունկնդրի կողքին կամ նրա թիկունքում և կիսաձայն կամ շշուկով թարգմանում: Որքան էլ շնչա, դահլիճում անպայման կգտնվեն մարդիկ, որ դժգոհություն կհայտնեն շեղող ձայնի համար, իսկ շատ մոտ նստելը և առավել շշուկով խոսելը կարող են միանգամայն տհաճ լինել և՛ թարգմանչի, և՛ ունկնդրի համար:

Սինքրոն թարգմանության ժամանակ թարգմանչին խանգարող ամենամեծ բարդությունը, որը կախված չէ թարգմանչի պատրաստվածության մակարդակից, ելույթ ունեցողների հոետորական կարողություններն են, կամ ավելի ստույգ՝ հոետորական կարողությունների բացակայությունը: Անգամ զգուշացման դեպքում նա իր զեկույցը կարդում է իրեն հարմար

արագությամբ: Թարգմանիչը գրեթե ոչ մի լծակ չունի զեկուցողի վրա ազդելու: Ձեռքով նշաններ անելը կամ խցիկից դուրս գալը և դահլիճով մեկ գոռալը, որ խոսնակը դանդաղ խոսի, բավական նսեմացնող գործողություններ են, իմ կարծիքով, իսկ լուսային ազդանշանով սարքավորումը Հայաստանում ընդունված չէ: Ուստի նման «անփորձ» հոեետորին թարգմանելիս թարգմանիչն ստիպված է հավաքել բոլոր ուժերը և անել հնարավորը: Այդ իրավիճակում թարգմանչին օգնում է այսպես կոչված «լեզվաբանական կանխատեսման» հմտությունը: Լինում են դեպքեր, երբ լսողին կարող է թվալ, որ թարգմանիչն ավելի շուտ է թարգմանում հոեետորի խոսքերը, քան վերջինս հասցնում է դրանք ասել: Սակայն նման երևույթը ո՛չ հրաշք է, ո՛չ էլ նորագույն տեխնոլոգիական ձեռքբերում, այլ վկայում է թարգմանչի ակտիվ բառապաշարի հարստության, բազմագիտակության մակարդակի և հոգեբանական ինքնատիրապետման կարողության մասին:

Սինքրոն թարգմանչի արհեստավարժ պատրաստության ժամանակ հատուկ ուշադրություն է դարձվում ակտիվ բառապաշարի կազմավորմանը՝ հաշվի առնելով ժամանակի սղության պատճառով և որոշ շրջահայաց վերապահումներով հնարավոր «սղասության» կամ իմաստային մոտավորության և ընդհանրացումների թույլատրելիությունը, օրինակ՝ վիճակագրական տվյալների և թվային տեղեկույթի թարգմանության ժամանակ:

Ընդհանրապես, սինքրոն թարգմանությունը հնարավոր է շնորհիվ այսպես կոչված «լեզվական հավելուրդության», որը լեզվաբանության մեջ բացատրվում է որպես տեղեկույթի փոխանցման և ընկալման անհրաժեշտ պայման՝ կախված բնական լեզվի մեջ կրկնվող տեղեկույթ պարունակող տարրերի առկայությունից: Բանավոր խոսքում լեզվական հավելուրդությունը արտահայտվում է տարբեր բառային միավորների միջոցով միևնույն իմաստային տեղեկույթի կրկնությամբ՝ բարձրացնելով իմաստային հաղորդագրության փոխանցման հավաստիությունը: Լեզվական հավելուրդությունը պայմանավորված է լեզվի բացարձակ էնտրոպիկ կարողությամբ, որը մաթեմատիկորեն կարող է հաշվարկվել որպես այն առավելագույն տեղեկույթը, որը կարող է փոխանցվել տվյալ լեզվի ընկալելի փոքրագույն միավորով: Չեմ կարող ասել՝ որևէ նման հետազոտություն արդեն արվե՞լ է հայերենի լեզվական հավելուրդության հաշվարկման նպատակով, սակայն որոշ հաշվարկներով անգլերենում և ուրիշ եվրոպական լեզուներում լեզվական հավելուրդությունը կազմում է 70-85%՝ հնարա-

վորություն տալով թարգմանչին բնագոյային կամ լեզվական տրամաբանությամբ կանխատեսելու լեզվական տարրերի հաջորդական ընթացքը, առաջին հայացքից աներևակայելի հրաշք թվացող ճշտությամբ և արագությամբ համաժամանակյա թարգմանություն անելու:

Ուստի թեև անփորձ գրավոր թարգմանիչների հիմնական թերություններից մեկն այն է, որ ցանկացած հատկապես ոչ պրոֆեսիոնալ թարգմանություն իր ծավալով ավելի մեծ է լինում, քան օրիգինալ տեքստը... քանի որ թարգմանիչները գերադասում են ավելի շուտ լրացումներ անել ընկալելիություն ապահովելու համար, քան բաց թողնել որևէ բան հանուն պարզության, բանավոր սինքրոն թարգմանության ժամանակ ոչ կատարյալ թարգմանությունը գերադասելի է բացարձակ լռությունից: Պետք է ունենալ պատրաստի արտահայտությունների կամ հավելորդային բառակապակցությունների համապատասխան պաշար՝ առանց զեկուցողի ասածի իմաստը խեղաթյուրելու, անհասկանալի կամ անթարգմանելի պահերը լրացնելու համար: Նման մարտավարությունը հնարավորություն է տալիս ժամանակ շահելու մինչև այն պահը, երբ թարգմանիչը նորից «կբռնի» իր համար ընկալելի տեղեկույթի հոսքը և կշարունակի թարգմանության հարաշարժը:

Ես գիտեմ բազմաթիվ հրաշալի մասնագետների, որոնք խորապես տիրապետում են լեզուների, բայց չեն կարող որոշակի բովանդակությամբ կամ իմացության ոլորտային թեմայով սինքրոն թարգմանություն անել, որովհետև հաջողված թարգմանության համար իրականում լեզվի իմացությունը շատ քիչ է: Անհրաժեշտ է բովանդակության թեկուզ ընդհանրական ընկալում, ուստի բանավոր թարգմանչին անհրաժեշտ է բազմազիտակ լինել տարաբնույթ ոլորտներում:

ВОПРОСЫ СИНХРОННОГО ПЕРЕВОДА В АРМЕНИИ

МКРТЧЯН Л.Г.

Резюме

Профессия синхронного переводчика предполагает наличие разно-стороннего профессионального лингвистического образования. Помимо этого синхронный переводчик должен обладать широкой эрудицией, иметь

психологическую и политическую подготовку. Немаловажное значение имеют рекомендации практикующих переводчиков и соответствующее законодательное или профессиональное регулирование. Тем не менее абсолютное регулирование профессиональной деятельности синхронного переводчика невозможно, так как профессия требует от переводчика самостоятельности и психологической уверенности для принятия индивидуальных профессиональных решений.

ON THE QUESTIONS OF SIMULTANEOUS TRANSLATION IN ARMENIA

L. MKRTCHYAN

Abstract

The profession of simultaneous translator assumes and requires deep and comprehensive professional linguistic education, as well as wide and diversely rich erudition, physical, psychological and political preparation. Not less important are recommendations of practicing simultaneous translators and corresponding legal and trade-unional regulations. Nevertheless, an absolute regulation of the work of simultaneous translator is impossible, as long as the profession requires from the translator individual independence and psychological confidence in professional decisions.

НАГОТА И ТЕАТРАЛЬНОСТЬ

БЕРОЯН Н.Э.

Когда человек одевает и украшает свое тело, он подсознательно или осознанно “приоткрывает” или скрывает что-то потаенное в душе. Что же такое одежда, продолжение тела или оболочка души? Является ли она своего рода исходным принципом поведения человека в обществе? “Человек не есть нечто составное из души и тела. Человек – это душа, временно пользующаяся телом”¹, – утверждал Платон. Византийский богослов Иоанн Дамаскин высказывал утверждение об изображении: “Всякое изображение делает ясным скрытые вещи и показывает их”².

Одежда есть своего рода изображение, которое обволакивает душу и проводит своеобразную границу с социальным и климатическим пространством жизненных действий человека. Тело человека в искусстве может рассказать историю цивилизации и эволюцию человечества от Ветхого Завета до наших дней. Через тело, которое, по словам Григория Тульчинского, является космосом человеческого бытия, человек познавал и осваивал мир, в котором он жил³. Изначально нагое тело не воспринималось как нечто непристойное. В древние времена оно вызывало восхищение и воспринималось как божественное начало. Исходя не только из стыда и климатических условий, но и в силу религиозных “чувств” у человека возникла потребность прикрыть свою наготу.

Со временем нагое тело занимает свое истинное место центрального героя в искусстве ваяния и живописи. Именно древние греки подарили миру красоту, гармонию и эстетику нагого тела. Нагота для ис-

¹ **Фома Аквинский.** Сумма против язычников, кн. 2, М., 2004, гл. 57.

² **Иоанн Дамаскин.** Три слова в защиту иконопочитания, СПб., 2001, с. 87.

³ Ср: **Эпштейн М, Тульчинский Г.** Философия тела. Тело свободы, СПб., 2006, с. 313.

куства греков – это высшая идея (душа), совершенная форма (тело), заключающая в себе данную идею, которая соответствовала философии и мировоззрению античного мира. Греческому ваятелю с поликлетовским каноном красоты скульптура позволяла изучить совершенное человеческое тело а, может быть, и душу, ибо для них в человеке все должно быть идеально и гармонично. Определенная чувственность (кантовская бескорыстная заинтересованность) ощущалась при виде гармоничной наготы греческой скульптуры. Но на самом ли деле они нагие? Ответ на этот вопрос дал Ованес Туманян: “Они одеты”. Продолжая мысль Туманяна, можем сказать, что они окутаны божественным светом, – пишет Генрих Оганесян, – и свет этот не только завеса наготы, но и отблеск той “скрытой красоты”, которой действительно окутана, символизирована и превращена в знак в эпоху христианства”⁴.

Нагота греческих статуй являлась неотъемлемым отражением красоты бога и человека. “Тело, вера в богов, любовь к рациональным пропорциям, – пишет Кеннет Кларк, – именно синтезирующая способность греческого воображения свела все это воедино. И нагота приобрела свою непреходящую ценность. Она берет наиболее чувственный и волнующий объект – человеческое тело – и помещает его вне досягаемости времени и желания. Она берет смутные страхи перед неизвестным и смягчает их, показывая, что боги похожи на людей...”⁵.

Максимилиан Волошин отмечал, что для греков, не стыдящихся наготы и восхвалявших натренированное тело, лицом человека и, следовательно, статуй являлся совершенный торс, вся индивидуальность которого сосредоточивалась в нагом или слегка задрапированном теле, а не в чертах лица. Создания греков вызывают в нас неподдельные чувства переживания и познания самого себя. В древнем Риме, стране цезарей, на первое место вышло лицо человека, завоевавшего мир. С него начинается многовековое пленение тела. Римские патриции тщательно скрывали свое изнеженное тело под бесчисленными тугими

⁴ Հովհաննիսյան Հ., Ներքին ձևն արվեստում ըստ միջնադարյան դիտումների (Պատմաբանասիրական հանդես, 2014, N 3, էջ 110).

⁵ Кларк К. Нагота в искусстве, СПб., 2004, с. 35.

складками одежд, усиливая нескрываемое благоговение перед благородными лицами. Ваятели Рима приделывали мраморный бюст Цезаря к по-гречески идеальному, но одетому телу, полагая, как заметил Кларк, что "...божественность правителя можно усилить, дав ему тело бога"⁶.

Христианство продолжило начинание Рима, отделив лицо от тела рубахой святого и мафорием дев. Для христиан тело являлось храмом Святого духа, который надобно украшать. Христианское мировоззрение привнесло свои корректировки в изображение нагого тела. Средневековые мастера воспринимали личность только лишь как духовное существо, и не было резона изучать "запретную" анатомию человека. В христианской культуре физическая форма тела не столь важна, как важно духовное, чувственное начало, что и нашло свое отображение как в лицах, так и в целомудренной одежде человека.

В средневековье, на месте цветущих красотой мраморных Венер и Аполлонов появились, как верно подметил Кларк, "луковицеподобные женщины и корнеподобные мужчины", скрывающие свою наготу волосами или листвой. В эпоху средневековья появился новый идеал тела, который просто необходимо было скрыть. По этой же причине в христианской религии предпочтение отдается лицу, глазам как зеркалу богоугодной души, и одежде, которая связана с духовным миром человека. За одеждой, которая являлась божественным светом, обволакивающим скрытую красоту не только тела, но и души, скрывалась истинная вера.

Новый всплеск волны восхищения нагим телом набрал силу в эпоху Возрождения, когда усталость от средневекового запрета всего и вся освободила человека от догматических оков. Идеальные пропорции (Золотое сечение Витрувия) нагих и полуодетых мифологических и библейских мужчин и женщин стали главным элементом творений художников этого и последующих веков. Но все же высшее духовенство и римский папа "на публике" осуждали изображение нагого тела,

⁶ Там же, с. 63.

и в то же время они не гнушались иметь у себя творения художников, изображавшие метафоричных нагих красавиц.

В живописи Ренессанса нагое тело занимало важное, хотя и не самое главное место. Истинные ценители античной красоты итальянского Возрождения подарили нам как прелесть воздушного женского тела, прикрытого легкой материей, так и земную, телесную красоту. На другом конце мира эстафету победы земной красоты подхватили Рубенс и Рембрандт, воспев в своих полотнах жемчужнокожих красавиц своей страны. Восхваление желанного и чувственного женского тела продолжила эпоха мадам Помпадур. Гламурный век изысканных отношений и скрытых от глаз будuarов создал в искусстве (Антуан Ватто и Франсуа Буше) новый тип декоративной женщины, передававший пряную наготу или очертания тела в нежнейших костюмах, из-под кружев которых, как бы невзначай, вырисовывались округлые прелести дам и их маленькие ножки в изящных туфельках.

Французские импрессионисты в начале XX века вернули искусству красоту обнаженного тела, изобразив своих полных жизни красавиц в интерьерах, на лоне природы как своей страны, так и на экзотических берегах далеких островов. Художники-импрессионисты изображали полубнаженных или совсем нагих, где-то неприглядных, женщин полусвета, театра, цирка и варьете, показывая совсем иную “красоту” жизни.

Нагое или “завуалированное” тело человека, помимо изобразительного искусства, заняло особое место в искусстве театра и кино. В конце XIX и начале XX веков театральное искусство и литературу так же захлестнула волна нововведений, которая нарушила привычные каноны. Взоры художников, режиссеров и артистов были обращены на преобразование сценического искусства. Актер, главными инструментами которого были голос и тело, начал осознать свое тело как нечто индивидуализированное, которое необходимо представить в новой интерпретации – “в первородной, античной красе”. Танцую босой на “земле афинской”, Айседора Дункан принимала позы, в которых изображались женщины на греческих вазах, поскольку, по ее мнению, они

являлись естественным положением тела. Она, и в дальнейшем ее последователи, считали, что нагота или прикрытость тела есть нечто прекрасное. Меняются как техника постановки танца, так и движения рук и тела, которые стали продолжением и выразителями внутреннего состояния исполнителя, они, по словам Михаила Фокина, живут, поют, говорят, а не исполняют правильные “позиции”. Появляется совершенно иное оформление сценического пространства, со сцены исчезают традиционные балетные костюмы. Благодаря Дункан на театральной сцене появляются прозрачные туники, восточные тюли, разрисованное трико, одним словом – нагое тело. Изодранные лоскуты, по словам Гордона Крега, которые висели на вешалке, как тряпка, она преображала на себе и с каждым ее движением, с каждым шагом они через танец рассказывали “...о наших чувствах, мыслях, заключали его (танец) “в самое сердце сердца Горацио”⁷.

Триумфальное шествие наготы по сцене началось не с отказа от одежды, а со сбрасывания туфель. Н. Евреинов в своем сборнике “Нагота на сцене” отмечал именно разувание. Именно оно дало возможность танцовщицам исполнять летящие “па”, которые соответствовали характеру образа. Примером для многих актрис, которые ни за какие богатства мира не “оголились даже по колено”, стали выступления первой “босоножки” театра, экстравагантной Дункан. В те времена в обществе возникло много споров о ногах Дункан. Соответствует ли ее сценическая внешность (прозрачная одежда, кожа, ноги, тело) нравственным законам приличия, или же ей надо прикрыться “жутким шелковым трико цвета семги”? Танцовщица каждый раз, во время нападков и после них, пыталась доказать, что некрасиво и неприлично это самое трико. Доказывала она и то, как естественно, целомудренно и красиво нагое тело, если его воспринимать не как голое, а как выразителя высших чувств и “прекрасных помыслов”.

Вместе с этими нововведениями меняется и отношение общества к преобразованиям. Некоторые приветствуют и пропагандируют новое

⁷ Крэг Э.Г. Воспоминания, статьи, письма, М., 1988, с. 157.

искусство, воспринимая обнаженность пластичного тела человека и актера, другие – открыто осуждают исчезновение привычного костюмно-декоративного интерьера сцены.

Первопроходцами в новом трактовании театрального, в особенности танцевального, искусства в России явились Николай Евреинов, Михаил Фокин, Леон Бакст, Иван Мясоедов, Ида Рубинштейн, Тамара Карсавина, Вацлав Нежинский и др. Они создали новую, шокирующую эстетику в танцевальном и оформительском (костюм и декорации) творчестве.

Идея “Русских сезонов” в Париже, которые организовал Сергей Дягилев совместно с Фокиным, Бакстом и Бенуа, дала Европе совершенно новое видение танцевального искусства. Имена “мифической” Рубинштейн, “неистового” Фокина и “божественного” Бакста не сходили с уст восхищенной публики. Все они преобразили искусство танца, каждый из них своим творчеством изменил понятия – балет, техника, постановка, сценография и костюм. Бакст создавал костюмы, не столько скрывавшие, сколько выгодно обнажавшие пластичные тела артистов. Пластика тел танцоров дополнялась и становилась более выразительной благодаря невиданным доселе стильным костюмам.

Танцевальное искусство хранит в своем арсенале чрезвычайно соблазнительный вид – стриптиз (“strip” – раздеваться и “tease” – дразнить). Он известен как медленный танец с постепенным раздеванием танцовщицы, где идеальное, пластичное тело и разнородные “сценические костюмы”, как в искусстве балета, театра и кино, занимают важное место. Как и вся история человечества, история “обнаженного танца” имеет свои истоки. Как было отмечено выше, совершенное нагое тело волновало и вызывало интерес испокон веков. На заре человечества танец с раздеванием под аккомпанимент примитивных музыкальных инструментов являлся божественным таинством, ритуалом, который был доступен лишь взорам посвященных. Средневековые изменили отношение к телу и, следовательно, канули в лету изумительные танцы обнаженных жриц. Последующие эпохи вернули культ тела и вновь поя-

вились обольстительные танцы, насладиться которыми, было доступно лишь привилегированным особам.

Танец-обнажение в современном понимании появился в Париже в первой половине XIX века. И это в то время, когда в моде бытовало откровенное декольте, а красивая обувь, не говоря о женской ноге, была целомудренно скрыта под многослойными юбками. Обнаженные танцы и вовсе считались аморальными и были сокрыты под семью замками. Но всегда находились смелые реформаторы старых устоев. Первой волной, накатившей на целомудренность Старого света, стал французский канкан, что означает шум и гам. “Высокие взмахи ногами” европейцами были расценены как бесстыдное расшатывание вековых католических основ. Первый показ канкана состоялся в кабаре “Мулен Руж” в 1889 году, где его танцуют по сей день. Миловидные девушки во время выступления показывали намного больше частей тела, чем было принято. Они исполняли свои “па” абсолютно одетыми, но в то же время выставляли напоказ из-под бесчисленных кружевных оборок такое обольстительное белье, которое заставляло зрителей мужского пола непривычно, в рамках приличного общества, реагировать на неосуществимые фантазии.

“Мулен Руж” считается местом зарождения истинного стриптиза, который показали не танцовщицы кабаре, а две натурщицы в 1893 году. Постепенно стриптиз, приобретая чувственную форму танца, стал искусством, дающим возможность продемонстрировать совершенное тело, раскрыть все скрытые чувства посредством плавных или резких движений. Стриптиз удачно совместил в себе как свои собственные (эротические) движения, так и элементы разных танцевальных стилей, используя соответствующую сценическую одежду и аксессуары. Р. Барт писал о танце в стриптизе: “Вопреки предрассудку танец, которым сопровождается стриптиз, отнюдь не является эротическим фактором. Плавные раскачивания тела служат залогом Искусства. Он создает последнюю и самую эффективную ограду вокруг тела. Эта двигательная

косметика прячет наготу”⁸. Тело человека находится в движении, оно меняется, как и настроение, прикрываясь некими покровами, как для самого себя, так и для общества. Движения же тела танцовщицы стриптиза являются своего рода заведомо подобранными покровами для обнаженного тела. И в зависимости от того, какую конечную цель преследует она (быть желанной идеей, мифологической недосыгаемостью или банальным телом, выставленным напоказ), эти самые движения выполняют свои конкретные функции – становятся искусством, утверждающим эстетические чувства и истинную идею женственности или же превращаются в разрушительную машину по уничтожению той же идеи. Говоря о красоте обнажения как об искусстве, необходимо отметить феерично – красочный жанр танцевального искусства – бурлеск (шутка). Костюмы бурлеска, как и сам жанр, чрезвычайно театральны. В постановках танцовщицы для создания образа используют различные аксессуары – веера, мундштуки, сумочки, перчатки, меховые накидки. В театрализованном шоу, бурлеске задействованы режиссер-постановщик номера, осветители, реквизитор и костюмер. Костюмы бурлеска имеют огромное значение для актрис, с их помощью они выражают внутреннее, раскрепощенное состояние. Исполняя номер, она постепенно снимает сценический костюм. Но прелесть бурлеска в том, что полного обнажения зритель не видит. Артистка на сцене обнажается по своему усмотрению, а оставшиеся атрибуты женского обольщения закидываются в зал из-за занавеси к великому восторгу публики. Бурлеск является искусством, хотя и содержит в себе внехудожественные элементы. Идея женственности и недосыгаемости мифа полностью сохраняется на подмостках театра бурлеск, так как конечная цель актрисы – передать всю прелесть истинной женщины – желанной, интригующей, недоступной, душевной и... живой.

Интерес к нагому женскому телу и, тем более, к телу, которое обнажается, привлекал великие умы человечества. Так, Р. Барт в статье “Стриптиз” раскрыл феномен этого действия. По Барту, когда женщина

⁸ Барт Р. Мифологии, М., 2008, с. 218.

обнажается на сцене, она теряет свою сексуальность. Подобный танец – обнажение социолог рассматривает как “условную экзотику”, действия которой могут происходить в различных декорациях и неправдоподобных костюмах. Зритель мысленно переносится то в Венецию, то в Китай, где “встречает” знойную китаянку с трубкой опиума. Если весь антураж и костюмы нереальны, театрализованы, то и обнажение танцовщиц так же нереально. Нагое тело скрыто от глаз и находится на недосягаемом расстоянии. Обнажение и танец обретает историческую, ритуальную значимость. Вся сексуальность, желание обладать женщиной исчезает в свете прожекторов, в декорациях и аксессуарах.

По словам культуролога Ольги Вайнштейн, отношение к наготы всегда зависит от степени культурного настроения. Обнаженность, т.е. тело, “просящее” одежду, в любом случае выходит за рамки устоев общества, тогда как нагота тела полноценна и самодостаточна, что и сделало ее предметом искусства. Обнаженность – нечто приземленное, материальное, тем самым она выходит за рамки возвышенного (античного) искусства. Она – предмет мирского начала. Но “танцы с раздеванием”, где порой стирается граница между осязаемым и недосягаемым, могут занять свое место в искусстве. Так, стриптиз является искусством настолько, насколько он воспринимается с точки зрения наготы, и настолько он вне искусства, когда рассматривается как обнаженность.

Так что же в итоге вызывает интерес в искусстве? Женщина, как физическое существо или миф, идея женщины, нагота или намеки на обнаженность, подчеркнутая посредством знака или символа одежды? На наш взгляд, и то, и другое, ибо вся история костюма неразрывно связана с историей тела человека. Красота человека зависит от целостности двух явлений – тела, облаченного в одежду, и от одежды, обволакивающей само тело, тем самым выражая внутреннее содержание личности. Само нагое тело, демонстрирующее красоту и гармонию, покрытое неким “намеком на одежду” и облаченное в “скрытую красоту”, также является истинной красотой, которая воспета в искусстве и существует доселе.

ՄԵՐԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԹԱՏԵՐԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

ԲԵՐՈՅԱՆ Ն.Է.

Ամփոփում

Զգեստավորումն ինչ-որ բան բացահայտում է և ինչ-որ բան թաքցնում: Դա հասարակական վարքագծի դրսևորում է, որ հատուկ է նաև բեմին: Իսկ մերկությունն արվեստում, ինչպես հայտնի է, էական տեղ է ունեցել սկսած հնագույն ժամանակներից մինչ օրս: Թատրոնում մերկությունն սկսել է արժեքավորվել ու իմաստավորվել XIX դարավերջին և XX դարասկզբին: Որպես արվեստի առանձին տեսակ՝ այն սկզբնավորվել է փոքր-ինչ ավելի վաղ, փարիզյան ոչ - դրամատիկական բեմերում: Դա այն չէ, ինչը տեսնում ենք դասական արվեստում, քանզի վերաբերում է միայն կանացի մերկությանը, և արվեստի է հասել, երբ կինը դիտվել է որպես առասպել և գաղափար, և չի մոտեցել արվեստի, երբ ընկալվել է որպես ֆիզիկական մարմին: Հարկ է նկատել նաև, որ զգեստի պատմությունն առնչվում է նաև մերկության գաղափարին այնքանով, որքանով զգեստը մարմնի շարունակությունն է, և անձի ներկայանալու կերպը, իսկ մերկությունն էլ իր հերթին, ինչ-ինչ զարդարանքի տարրերով, զգեստ է ակնարկում: Ինչպես կյանքում, այնպես էլ բեմում զգեստավորումն ու ֆիզիկական մարմինը ներկայացնելու ակնարկները համերաշխ են ուղղակի և անուղղակի հայտանիշներով:

THE NUDITY AND THE THEATRICALITY

N. BEROYAN

Abstract

The paper considers one of the less studied issues in acting: the expressiveness of nudity in character forming process on stage. The costume shows or hides something. It is the expression of social attitude and typical for the

stage. Nudity in art was evaluated and gained the sense at the end of XIX century and at the beginning of XX century. As a type of art it appeared earlier in Paris on non-dramatic stages. This is not the same as it appears in classical art, because it deals only with the female nudity: it became creative when the woman was perceived as a myth and an idea, not just a physical body. The history of costume correlates with the concept of nudity, as the clothing resumes the body and it is a mode of lifestyle. Nudity, in its turn, covered with some decorative elements assumes clothing. In life and on stage being clothed or unclothed directly and indirectly are in harmony.

ՆՅՈՒԹԻ ԵՎ ՁԵՎԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ՀԱՅ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՎԱՎԵՐԱԳՐԱԿԱՆ ԿԻՆՈՅՈՒՄ

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ Ս.Մ.

Վավերագրական ֆիլմի ստեղծման տարբեր փուլերում նյութի և ձևի հարաբերակցությունը առարկայորեն պատկերացնելու համար այդ գործընթացը կարելի է համեմատել մետաղե արծան պատրաստելու հետ: Վավերագրական կինոյի նյութն առաջին հերթին կյանքն է, որը տվյալ համեմատության մեջ հավասարագոր է բուն մետաղին, իսկ նկարահանումը ծովումն է: Նյութը, մետաղի տեսակից և խտությունից կախված, որոշակի փոփոխության է ենթարկվում, փոխակերպվում է՝ միաժամանակ չկորցնելով իր բուն էությունը: «Գծային, լուսային և գունային զանգվածների դասավորությունը կադրի սահմաններում իրագործվում է ինչպես կադրի սահմաններում առարկաների կազմակերպմամբ, այնպես էլ նկարահանման կետի ընտրությամբ իր առարկայի առջև: Վերջինը համեմատաբար հաճախ կիրառվում է ժամանակագրական-վավերագրական, ռեպորտաժային նկարահանումներում»¹: Վավերագրական կինոն դիտման արվեստ է, և հեղինակի միջամտությունը կարող է լինել դիտանկյան ընտրությամբ, որից կախված՝ առարկան կցուցադրվի իմաստային տարբեր երանգներով: Այդպիսով, մոնտաժը կարող է համեմատվել եռակցման հետ՝ ծովված կտորներն իրար են ամրակցվում այնպես, որ ստեղծվի բովանդակություն, իմաստ: Հետարտադրական փուլում վավերագրության ծայնի և գույնի շտկումն էլ նման է մետաղական քանդակի հարթեցմանն ու փայլեցմանը: Երբ վավերագրական ֆիլմում ռեժիսորը ներմուծում է բեմադրական տարրեր, դա կարող ենք համեմատել քանդակի վրա նկարչական ներկերով շտրիխներ ավելացնելու հետ՝ ամբողջական կամ տպավորիչ դարձնելու նպատակով: Թերևս սա կարող է վտանգավոր լինել ֆիլմի այլ հատվածնե-

¹ Березин В.М., Волкова И.И., Грабельников А.А. Экранная коммуникация в современном информационном обществе: учеб. пособие, М., 2008, с. 88.

րի արժանահավատության համար. «Երբ մենք գիրք ենք կարդում, ճշմարտացիության զգացումն ասում է մեզ. «Սա սուտ է», - յուրաքանչյուր սխալ մասնիկի առնչությամբ»²: Ըստ էության, վավերագրական ֆիլմի նյութ կարող են դառնալ հեղինակի ուշադրությունը գրաված ցանկացած իրադարձություն կամ անձ: Սակայն ամենահետաքրքիր և կարևոր թեման կարելի է պատկերել այնպես, որ թվա ձանձրալի ու անկարևոր: Եվ հակառակը, առաջին հայացքից ոչինչ չներկայացնող նյութին կարելի է այնպիսի ձև հաղորդել, որ դրա մասին ֆիլմ նկարահանելու անհրաժեշտության ու արդիականության հետ կապված՝ կասկած չառաջանա դիտողի մեջ: Իհարկե, կատարյալ տարբերակն այն է, երբ և՛ նյութն է ինքնին յուրօրինակ, և՛ այն վարպետորեն մշակված է: Պատահում է՝ ֆիլմի հիմքում ընկած է եղել արժեքավոր նյութ, սակայն նկատում ենք, որ սցենարական կամ նկարահանման փուլում հեղինակի ստեղծագործական մոտեցումն ու հնարավորություններն ինչ-ինչ պատճառներով արգելակվել են:

Մեր վավերագրական կինոյում նման օրինակ է 2007-2014 թթ. ընթացքում նկարահանված Արման Երիցյանի «Բաժանորդը ժամանակավորապես անհասանելի է» 22 րոպե տևողությամբ ֆիլմը: Նյութը Երևանում ապրող դազադագործի կյանքն է, որը փորձում են վերածել ֆիլմի: Ըստ էության, հեղինակը չկարողանալով փախչել առկա իրադրությունից (պրոտագոնիստը մահացել է, պրոդյուսերն իր վճարած փողի դիմաց ցանկանում է արդյունք տեսնել)՝ ընտրում է թեման այլ ձևով արտահայտելու լուծում, այսինքն՝ ներմուծում է նկարահանման ընթացքի ծախսողումներն ու ֆիլմարտադրական խմբի աշխատանքային խոսակցությունները: Այս շարժանկարը տարբերվում է Ա. Երիցյանի նախորդ աշխատանքներից, որոնց ընդհանրական դիտարկման դեպքում կարելի է արձանագրել, որ հեղինակի աշխատելաճը տարբեր ֆիլմերում նկարահանման և մոնտաժային տարբեր լուծումների կիրառումն է, այլ կերպ ասած՝ ձևի ընտրությունը պայմանավորված է նյութի առանձնահատկություններով: Այս բազմազանության մեջ հեղինակը մեկ բան ձգտում է հաստատուն պահել՝ չձանձրացնող տեմպով մոնտաժը:

Ըստ ամերիկացի գեղագետ, կինոտեսաբան Ռուդոլֆ Արնհեյմի, հենց մոնտաժն է, որ կինոյին տալիս է ավելի լայն հնարավորություններ, քան

² Дробашенко С.В. Феномен достоверности. Очерки теории документального кино, М., 1972, с. 27.

լուսանկարչությունն ու գեղանկարչությունը, որոնց հետ կինոարվեստը ընդհանրական բնութագրիչներ ունի³:

Հետխորհրդային շրջանի վավերագրական ֆիլմերի մեջ մոնտաժային-ոճական առանձնահատկություններով ուրույն տեղ են զբաղեցնում Արտավազդ Փելեշյանի «Վերջ» և «Կյանք» ֆիլմերը: Երկուսն էլ նկարված են դիտարկման մեթոդով և մոնտաժված՝ պոետիկ ֆիլմի սկզբունքով: Երկու ֆիլմի դեպքում էլ վերնագրերն արդարացված են նաև պոետիկ մոնտաժի շնորհիվ: Օրինակ՝ «Վերջ» ֆիլմում, սովորական գնացքի ուղևորներ ու թունել ցույց տալով, հեղինակը կինոդիտողի մեջ առաջացնում է երկար սպասված ելքին հասնելու զգացողություն, և վերնագիրը մեկնաբանվում է որպես մթության միջով անորոշ տևողությամբ ընթացքի ավարտ: «Նկարչի ձեռքերն ու գլուխը ստեղծում են ավելին, քան մենք սովորաբար տեսնում ենք բնության մեջ»⁴: Ըստ էության, Փելեշյանը կարողանում է սովորական ոճով նկարահանված առօրեական իրադարձություններին յուրօրինակ մոնտաժային ձև հաղորդել՝ հում նյութը փոխարկելով արվեստի, և նրա այս հմտությունը նկատելի է դեռևս 1960-ականներից, հատկապես «Սկիզբ» ֆիլմից սկսած: «Քնարական տիպը վավերագրական կինոյում ունի վառ ընդգծված առանձնահատկություն: Կինոքնարերգության մեջ օբյեկտիվ իրականությունը զգալիորեն վերափոխված, «կազմակերպված», փոխակերպված է բանաստեղծական մտքով: Քնարերգության մեջ արվեստագետը ազատորեն «փշրում է» իրականության տպավորությունն այնպես, որ հետագայում այդ տպավորությունների բազմազան խճանկարից հավաքի պոետական ապրումներին համապատասխան «նկար»⁵: Հնարավոր է՝ այս սկզբունքով է առաջնորդվում ռեժիսոր Արկա Մանուկյանը, որն իր ֆիլմերում, որպես ստեղծագործական ձեռագիր, հաճախ օգտագործում է խզված մոնտաժը (անգլ.՝ jump cut), երբ իրար հաջորդող կադրերի անցումները դիտողին սահուն չեն թվում՝ նախորդ կադրի ավարտի և հաջորդ կադրի սկզբի գործողությունների, գունալուսային պատկերների և օբյեկտների ոչ համապատասխան, անկանխատեսելի տեղաբաշխվածության կամ շարժման պատճառով: Կինոարտադրության և կինոմոնտաժի փորձագետ Քեն Դենսայգերն իր «Կինո- և վիդեոմոնտաժի տեխնիկաները. պատմութ-

³ Кракауэр З. Природа фильма. Реабилитация физической реальности, М., 1974, с. 67.

⁴ Гарин И.И. Пророки и поэты, т. 1, М., 1992, с. 56.

⁵ Мартыненко Ю.Я. Документальное киноискусство, М., 1979, с. 64.

յուն, տեսություն և կիրառություն» գրքում նշում է, որ խզված մոնտաժը ոչ միայն դիտողին հիշեցնում է, որ ինքը ֆիլմ է նայում, այլև նրան ցնցում է. այս անհանգստությունը կարող է և նպաստել ֆիլմի զգայական ընկալմանը, և վնասել⁶:

Ինչպես խզված մոնտաժի դեպքում, շարժվող խցիկը ևս կարող է դրականորեն կամ բացասաբար անդրադառնալ կինոդիտողի զգայական ընկալման վրա: «Կինոարվեստի պիոներները բավական արագ հայտնաբերեցին, որ «շարժվող» խցիկը տիրապետում է մեծ խորության: Այդ նույն էֆեկտը կարելի է դիտարկել, եթե մենք դիտում ենք մեզ շրջապատող լանդշաֆտը շարժվող մեքենայից կամ գնացքից»⁷: Մեծ խորություն ասելով՝ Արնհեյմը նկատի ունի կինոխցիկի շարժման միջոցով եռաչափ տարածության զգացողություն ստեղծելու հնարավորությունը, որի շնորհիվ կինոդիտողը երկչափ էկրանին ֆիլմը դիտելիս իրեն զգում է այդ միջավայրում: Հայ ժամանակակից վավերագրական կինոյում շարժվող խցիկի արդյունավետ կիրառության օրինակներից է Արա Վահունու 2005 թ. նկարահանած «Քոչարի» 16-րոպեանոց ֆիլմը, որի սկզբի տեսարանում մեքենան սլանում է մինչև նպատակակետին հասնելը, և այդ ընթացքը, ի հաշիվ փողոցի ծառերի եզրերի, ասֆալտի գծանշումների ու թունելի անկյունային երկայնակի ձգվող զծերի՝ դիտողին ենթագիտակցաբար կինոտարածություն տեղափոխելու հնարավորություն է ստեղծում: Վահունու թե՛ «Քոչարին», թե՛ մյուս ֆիլմերն առանձնանում են նյութի նկատմամբ պարզ, մարդկային մոտեցմամբ, ինչն արտահայտված է նաև նկարահանման ոճում:

Սուրեն Հասմիկյանը հայ կինոյի բնորոշիչներից է համարում արմատներ և անցյալ ունեցող անձանց պատկերումը էկրանին. «...նույնիսկ վավերագրական կինոյում շեշտը միշտ դրվել է այն բանի վրա, թե ինչ կա այդ հերոսների հոգում, և ոչ թե նրա վրա, թե անմիջականորեն ինչ են անում այդ հերոսները կադրում. այդպիսին են Ա. Վահունու և Ռ. Գևորգյանցի լավագույն վավերագրական ֆիլմերի հերոսները»⁸: Այստեղ կինոգետը խոսում է նյութի մասին, սակայն ձևաստեղծման տեսանկյունից Արա

⁶ **Dancyger K.** The Technique of Film and Video Editing: History, Theory, and Practice. 5th ed. - New York, 2013, p. 119.

⁷ **Арнхейм Р.** Искусство и визуальное восприятие, М., 1974, с. 266.

⁸ **Асмирян С.Г.** Тесный кадр, Е., 1992, с. 158.

Վահունին և Ռուբեն Գևորգյանցը ստեղծագործական տարբեր նախընտրություններ ունեն. Վահունու ֆիլմերում հակում է նկատվում պատկերի ու գործողության օրգանականության, այսինքն՝ կինոդիտողի մեջ հեղինակի կողմից հավելյալ միջամտության, իրականության ուռճացման տպավորություն չի ստեղծվում: Այս սկզբունքը դրված է նրա մասնագիտական գործունեության հիմքում, և կարելի է տեսնել հատկապես «Լենինի հրապարակը» ֆիլմում: Այդ մասին «Ժամանակը և փաստը» գրքում գրել է կինոգետ Սերգեյ Գալստյանը. «Թեման առաջարկվել էր վերևից: Ֆիլմը նկարահանվեց: ...Եղան առաջարկություններ ֆիլմը չընդունելու վերաբերյալ, եղան առաջարկություններ փոխել, հավելել բազմաթիվ դրվագներ: Վահունին չընկրկեց: Ինչպե՞ս: Ֆիլմը նվիրվելու է մեծ առաջնորդի 100-ամյա հոբելյանին, ու չկա նրա մասին ոչ մի խո՞սք... Չեն ցուցադրվում երկրում անցկացվող կարևորագույն իրադարձությունները, ջբերթներն ու տոնակատարությունները... Փոխարենն էկրանին մայրաքաղաքի առօրյա կյանքն էր, այն ամենը, ինչը քաղաքացին հաճախ չի նկատում՝ անցնելով այդ հրապարակով:

Վահունին շեշտել էր ոչ թե հրապարակի անվան նշանակությունը, այլ՝ որ այդ հրապարակը մարդկանց չափազանց հարազատ է որպես հանգստավայր, որպես գործարար հանդիպումների, սիրային ժամադրությունների վայր...»⁹: Իսկ Գևորգյանցը նախընտրում է սկզբնապես գրված սցենարին հավատարիմ մնալ, իրականությունը կազմակերպել և վերակազմակերպել էկրանին: Դա հատկապես նկատելի է նրա «Բարի հետք», «Հրաշագործի աշունը» և այլ ֆիլմերում:

Կառուցվածքային տեսանկյունից ուշագրավ է Հարություն Խաչատրյանի և Միքայել Ստամբուլյանի «Փակուղի» (2016) ֆիլմը: ԱՄՆ-ում ապրող հայերի միջավայրը ներկայացնելու համար հեղինակները ֆիլմում ցուցադրում են առաջին հայացքից պրոտագոնիստի հետ կապ չունեցող երևույթներ, սակայն այդ տեսարանների այլաբանական մեկնաբանության պարագայում պարզ է դառնում, որ դրանք կարող են համարվել պատճառաբանված հետևյալ ենթատեքստային շղթայում՝ կործանման ուղի - ժամանակից շուտ ծերացում - ոչ ֆիզիկական մահ կամ ռոբոտացում: Ֆիլմում միմյանց փոխլրացնում են արխիվային նյութերն ու վերջին տարիներին

⁹ Գալստյան Ս.Ս., Ժամանակը և փաստը. Ակնարկներ հայ կինովավերագրողների ու նրանց ֆիլմերի մասին, 2 գրքով, գիրք 2-րդ, Ե., 2014, էջ 10-11:

արված նկարահանումները, որոնք ֆիլմի ինչ-որ պահի ծուլվում են միմյանց, քանի որ ռեժիսորը պրոտագոնիստին հետևել է առանց երկար դադարների՝ մի քանի տարին մեկ նկարահանող խմբի հետ այցելելով նրան: Թեև «Փակուղին» առանձնանում է Հարություն Խաչատրյանի մյուս գործերից՝ առավելապես ավելի արագ մոնտաժային ռիթմով, այնուամենայնիվ, պահված է հեղինակի կարևոր սկզբունքներից մեկը՝ երկարատև նկարահանումների և դիտարկման մեթոդը, որը կարելի է տեսնել Հ. Խաչատրյանի սկզբնական շրջանի ֆիլմերից ի վեր:

Վահե Յանի «Գնդապետին ոչ ոք չի գրում» (2014) ֆիլմն աչքի է ընկնում կինեմատոգրաֆիական արտահայտչամիջոցների պատճառաբանված օգտագործմամբ և վավերագրական կինոյին բնորոշ մեթոդների կիրառմամբ, ինչը խոսում է հեղինակի՝ կինոյի գեղարվեստական համակարգին տիրապետելու մասին: Սակայն հեղինակի մյուս բոլոր ֆիլմերում նկատվում է նկարչական պատկեր ստանալու ձգտում: Մարսել Մարտենն իր «Կինոյի լեզուն» գրքում, անդրադառնալով կինոյում գեղագիտական դասավորության երևույթներին, գրում է, որ դրանցից ամենաակնառուն պատկերի կոմպոզիցիան է. ֆիլմում յուրաքանչյուր պատկեր իր տեսակի մեջ փոքրիկ նկար է, և վտանգավորը հենց դա է, որ այն չդառնա չափից ավելի «նկարային»¹⁰: Վ. Յանի մյուս գործերում խախտված է հենց այս համաչափությունը, ինչը նկատելի է նաև Արմեն Խաչատրյանի «Երազանքի պատը» (2014) ֆիլմում:

Կինոպերատոր, ռեժիսոր Արմեն Խաչատրյանի «Երազանքների պատը» ֆիլմի մոնտաժային ոճը կարելի է դիտարկել երկու տեսանկյունից:

1. Խզված մոնտաժը, երկար, հստակ ոճավորում ունեցող կադրերը, քամու ձայնը, երեխայի երգը եկեղեցում, որոշ կադրերի կրկնությունը ֆիլմին հաղորդում են բանաստեղծական տեսք և պատճառաբանված են, եթե աշխատանքն ընդունենք որպես Սերգեյ Փարաջանովի ծննդյան 90-ամյակին նվիրված վավերագրական ֆիլմ. պատկերների լեզվով խոսող պոետի մասին վավերագրությունը բնականորեն կարող է կառուցվել պատկերային պոետիկ մոնտաժով: Նաև նկարահանման տարածք դարձած գյուղն ու վանքը իրենց մեջ հանդարտություն են կրում, որ երբեմն հասնում է լիիրավ ներդաշնակության:

¹⁰ Мартен М. Язык кино, М., 1959, с. 32.

2. Սակայն այս աշխատանքը որպես ինքնուրույն վավերագրական ֆիլմ դիտարկելու դեպքում կարելի է նշել, որ հմուտ նկարված և մոնտաժված ֆիլմում ժամանակը ձգված է, մոնտաժը հիմնականում չի գործում կինոդիտողին տվյալ կինոիրականության մեջ ներգրավելու օգտին և ենթագիտակցական մակարդակում կարող է հոգնեցնել դիտողին:

Կինոռեժիսոր Տիգրան Խզմայանի «Մոռացված փետրվար-1988» (1999) ֆիլմի պատկերաշարը կազմված է Թատերական հրապարակում Արցախյան ազատագրական շարժման հանրահավաքների և այդ իրադարձություններին առնչվող ցույցերի ու ժողովների նկարներից, որին զուգահեռ լսվում են այդ լուսանկարի մասնակիցների ելույթները, միջավայրային ձայներ: Չնայած տեսաշարում ժապավենի վրա ամրագրված ֆիզիկական շարժումը բացակայում է, և ֆիլմը հավաքված է Զավեն Խաչիկյանի լուսանկարներից, սակայն կադրերի ու ձայնագրությունների հատվածների ընտրության, որոշակի հերթականությամբ հեղինակային դասավորության շնորհիվ ֆիլմում առկա է կրկնակի (երևակայական) շարժում:

1. Ֆիլմի սկզբում հնչում են պահանջներ և առաջարկություններ, որոնք սպասում են առաջացնում հանդիսատեսի մեջ և ստիպում հետևել սյուժետով արտահայտված անտեսանելի շարժման ընթացքին:

2. Լուսանկարներում որևէ գործողություն անելիս նկարված մարդիկ են, որոնց շարժումը կինոդիտողի երևակայության մեջ վերականգնվում է՝ շնորհիվ այդ պատկերներին համահունչ ելույթների, խոսակցությունների ձայնագրությունների և դրանցում հնչող մթնոլորտային աղմուկի:

Անձը, որը ներկա չի եղել այդ իրադարձություններին, կարող է տեղեկություններ ստանալ հեռուստատեսային հաղորդումներից կամ այլ անձանց պատմածներից, սակայն այս ֆիլմը վերակենդանացնում է պատմության մեջ հավերժացած իրադարձությունները և դիտողին հնարավորություն տալիս ոչ միայն տեղեկանալու իրադարձությունների ընթացքի մասին, այլև զգալու իր ներկայությունն այդ միջոցառումներում (դիտողի կարգավիճակով):

Ֆիլմում երևում է ժողովրդական միաբանություն՝ հանուն գաղափարի, և ֆիլմի վերնագիրն ակնարկում է այդ նույն ժողովրդի հետագա մասնատվածությունն ու նյութապաշտական մղումները: «Մոռացված փետրվար-1988» ֆիլմն ավարտվում է ավտոմատը ձեռքին, ժպտացող ու վստահ կանգնած մարտիկների լուսանկարներով: Ոչ՝ այդ տեսարանից առաջ, ոչ՝

այդ հատվածում որևէ խոսք չկա պատերազմի մասին, սակայն հեղինակը զուտ կինեմատոգրաֆիական միջոցներով հանգեցնում է այդ մտքին՝ որպես կատարվողի տրամաբանական շարունակություն: Այստեղ ևս գործ ունենք դիտողի երևակայության մեջ այնպիսի տեսարանների վերականգնման երևույթի հետ, որոնք ֆիլմում ֆիզիկապես գոյություն չունեն. սա կարելի է համարել առկա նյութի արդյունավետ կիրառություն ձևաստեղծման գործում:

Տ. Խզմայանի այս ֆիլմը համեմատելով մինչ այդ և դրանից հետո արված աշխատանքների հետ՝ կարելի է նկատել, որ սա, 1994-ին 3 օրում նկարահանված «Բեկոր» ֆիլմի հետ, նրա բացառիկ գործերից է՝ առանց հեղինակային ուղղակի մեկնաբանության, իսկ մնացած ֆիլմերի հիմնական մասում նախապատվությունը տրվել է ֆիլմի նյութը սեփական բանավոր մեկնաբանությամբ կառուցելու ձևին:

Վարդան Հովհաննիսյանի «Մարդկային պատմություններ պատերազմի և խաղաղության օրերից» (2007) ֆիլմի նյութը արցախյան պատերազմին մասնակցած և կենդանի մնացած մի քանի մարտիկների կյանքի պատմությունն է: Պատերազմի ժամանակ նա՝ իբրև ռեպորտյոր, նկարահանումներ է կատարել, որոնք հետագայում ընդգրկել է ֆիլմում: Հեղինակն ընտրել է նյութը ժամանակի երկարատև ընթացքի մեջ արտահայտելու ձևը, այսինքն՝ նույն անձանց նկարահանել է նաև պատերազմից շուրջ 15 տարի անց՝ խաղաղ պայմաններում, և մոնտաժով երկու ժամանակները հաջորդաբար համադրելով՝ ստացել կինոդիտողին տպավորող և պրոտագոնիստների նկատմամբ համակրանք առաջացնող ֆիլմ: Սա Վարդան Հովհաննիսյանի միակ մեծածավալ ֆիլմն է, սակայն դրանում արտահայտված են հեղինակի ստեղծագործական հաստատուն մտածելակերպն ու կինոընկալումները՝ ռիթմի զգացողություն, տարբեր ժամանակների արդյունավետ վերադասավորման կարողություն, զգայական ազդեցության ստեղծում: «Վավերագրական կադրի արժանահավատության հասնել հնարավոր է միայն այն դեպքում, երբ այդ կադրը մոնտաժի ընթացքում կերպարայնացված չէ, միտումնավոր կերպով որպես խորհրդանիշ կամ նշան օգտագործված չէ, որպես ստորադաս և համակցված տարր մտցված չէ խորթ գեղարվեստական կառույցի մեջ»¹¹: Վ. Հովհաննիսյանի

¹¹ Дробашенко С.В. Феномен достоверности. Очерки теории документального кино, М., 1972, с. 50.

Ֆիլմը այս սկզբունքների պահպանման շնորհիվ հասել է արժանահավատության:

Գարեգին Զաքոյանի «Քաջարան. քարի մետամորֆոզը» (2001) ֆիլմի ձևաստեղծման գործում կարևոր դեր է խաղացել ոչ միայն պատկերային շարքը, այլև ձայնի (հատկապես՝ աղմուկների) հետ հեղինակների նուրբ աշխատանքը, ինչի շնորհիվ շինարարական ու գործարանային առօրյայի պատկերներից բաղկացած տեսարանները հիպնոսային ազդեցություն են ունենում կինոդիտողի վրա:

Վավերագրական ֆիլմերի կառուցվածքային անբավարարությունները անիմացիոն լուծումներով լրացնելու մշակույթը հայ վավերագրության մեջ դեռևս լայն տարածում չի գտել, բայց օրինակներ կան, որոնցից ամենահատկանշականն ու հաջողվածը Վալենտին Պոդպոմոգովի մասին Նիկոլայ Դավթյանի «Քեռի Վալյա» (2009) ֆիլմն է, որտեղ նկարների ու քանդակի կերպարները շնչավորվում են ու պատմում ֆիլմի հերոսի մասին: Ն. Դավթյանն այս մեթոդը հաճախ չի կիրառում, սակայն նրա ստեղծագործական ձեռագրին հատուկ է կերպարի բնավորության բացահայտման հարցում որևէ մեթոդ չխնայելը, ինչը ոչ միշտ է գործում ի շահ ֆիլմի: Օրինակ՝ կինոսպերատոր Լևոն Աթոյանցին նվիրված «Հիշողության ֆիլմադարան» (2005) վավերագրական ֆիլմում ընտրվել է սեփական զգացողությունների ու հիշողությունների միջոցով հերոսին ներկայացնելու ձևը, այնինչ ստացվել է առավելապես հեղինակին բացահայտող ֆիլմ: Սակայն իբրև հաջողված օրինակ՝ հարկ է նշել, որ նրա՝ գիտահանրամատչելի ֆիլմի սկզբունքով կառուցված «Քարկտիկ» (2006) ֆիլմում օգտագործված է մոնտաժային ռեֆրեն, որն արդյունավետ է և դրդում է ֆիլմի ընթացքում հնչող գիտական, պատմական և փիլիսոփայական մտքերի մասին առավել խորը մտածելու:

Խոսելով հայ վավերագրական կինոյի կառուցվածքային առանձնահատկությունների մասին՝ կարելի է քննության առնել նաև Դավիթ Ստեփանյանի շախմատի Հայաստանի հավաքականի մասին պատմող ֆիլմը, որը հրապարակվել է երկու տարբերակով՝ հեղինակային (վերնագիրը՝ «Հասցեն՝ Հայաստան») և պրոդյուսերական (վերնագիրը՝ «Թիմը»): Երկու դեպքում ֆիլմի կառուցման տրամաբանությունը նույնն է՝ ցույց տալ, որ աշխարհի կրկնակի չեմպիոն շախմատիստները, որոնք նաև շախմատային լուրջ ավանդույթների ու դպրոցի կրողն են, ապրում են սովորական մար-

դու կենցաղով ու հետաքրքրություններով՝ ընտանիք, սեղանի խաղեր, կիթառ և այլն: Սակայն դրանք իրարից տարբերվում են հեղինակային (պատմողի) տեքստի առկայությամբ. առաջինի դեպքում Դ. Ստեփանյանը փորձել է ասելիքը տեղ հասցնել մաքուր կինեմատոգրաֆիկ լեզվով, իսկ պրոդյուսերական տարբերակում պատմողի խոսքը գեղարվեստորեն ներկայացնում է և՛ պրոտագոնիստների՝ ֆիլմում երևացող ու չերևացող հետաքրքրությունները, և՛ հաղթական տեսարանների արխիվային կադրեր Տիգրան Պետրոսյան ավագի խաղերից, որոնք հեղինակային տարբերակում չեն հասկացվում: Չնայած Դ. Ստեփանյանն այլ մեծածավալ աշխատանք չունի հանրության դատին հանձնած՝ նրա ստեղծագործական ոճի մասին ընդհանրական պատկերացում կազմելու համար, սակայն այս ֆիլմի օրինակով կարելի է տեսնել, թե ինչպես են նույն նյութից ստեղծվում նույն ասելիքով երկու տարբեր ֆիլմեր՝ հակասական զգացողություններով (հեղինակային տարբերակում բազմաթիվ տեսարանների իմաստը պարզորեն պատճառաբանված չէ, ինչը կարող է բարդություն ստեղծել ֆիլմի տրամաբանական ընթացքին հետևելու տեսանկյունից և հանդիսատեսին ենթագիտակցական մակարդակով զցել ցայտնոտային իրավիճակի մեջ, մինչդեռ պրոդյուսերական տարբերակում ամեն ինչ պարզ է), իրարամերժ կադապարներով (հեղինակային տարբերակում սկզբունքորեն խոսքը չի օգտագործվում, ինչը, չնայած ստեղծագործական խնդիրներին, ֆիլմը մոտեցնում է մաքուր կինեմատոգրաֆիկական սկզբունքներին, պրոդյուսերական տարբերակը խուսափում է խորհրդավոր անցքեր թողնելու մտքից ու անհասկանալի լինելուց, որի պատճառով հեռանում է կինեմատոգրաֆիկ մտածողությունից և հեռուստատեսային բնույթ ստանում):

Վերնագրի կարևորությունը կարելի է տեսնել նաև գերմանացի կինոռեժիսոր Յանա Ռիխտերի «Պատերազմի հետքերը» (2015) ֆիլմի օրինակով: Վերնագիրը կարող է նախ ճշգրիտ պատկերացում տալ հանդիսատեսին՝ դիտման ժամանակ հնարավոր հիասթափություններից խուսափելու համար, ապա նաև դիտման վերջում հաստատել հեղինակի ցանկալի ազդեցության ճշմարտացիությունը: Այստեղ հատկապես ուշագրավ է ֆիլմի վերջում գրվող ենթավերնագիրը՝ «Առօրյա կյանքի պատկերներ գոյություն չունեցող երկրից», ինչը լիովին պատճառաբանում է ֆիլմի կառուցվածքն ու դրամատուրգիական սուր արտահայտված շարունակական սյուժետային պատմության բացակայությունը: Պրոդյուսերը կինոռեժիսոր Դավիթ

Սաֆարյանն է, որը եղել է ֆիլմի ռեժիսորի դասախոսը, և այս աշխատանքում ակնհայտ են նրա նախորդ ֆիլմերի կառուցվածքային ընդհանրությունները՝ երկարաշունչ կադրեր, միջավայրային տրամադրություն և կինեմատոգրաֆիկ մթնոլորտ ստեղծող տեսարաններ: Այդպիսին է, օրինակ՝ Դ. Սաֆարյանի «Որքան էլ տարօրինակ, բայց խոխլովա» վավերագրական ֆիլմը:

Այսպիսով, հայ ժամանակակից վավերագրական կինոյում հեղինակները գտել են նյութի արտահայտման որոշակի ձև կամ սկզբունք, ինչի շարունակական կիրառությունը կարելի է տեսնել յուրաքանչյուր հեղինակի ֆիլմերն ընդհանրական դիտարկելով (ձևային դրսևորման շարունակականությունը կարող ենք կոչել ռեժիսորի ձեռագիր), և ինչի ձևավորման հիմքում ընկած են կամ ստեղծագործական վաղ շրջանից կարծրացած պատկերացումները կինոստեղծման սկզբունքների մասին, կամ էլ՝ սեփական փորձարկումներից հետո ֆիլմի կառուցման որոշակի ոճի նախընտրությունը:

ПРОБЛЕМА ВЗАИМОСВЯЗИ МЕЖДУ ВЕЩЕСТВОМ И ФОРМОЙ В АРМЯНСКОМ СОВРЕМЕННОМ ДОКУМЕНТАЛЬНОМ КИНО

КИРАКОСЯН С.М.

Резюме

Авторы современного армянского документального кино нашли определенные принципы и формы выражения, непрерывное использование которых не может остаться незамеченным при ознакомлении со всеми работами конкретного режиссера в целом (непрерывность формального выражения можно назвать почерком режиссера). Эти формы и принципы основаны либо на стереотипном понимании основ кино, восходящих к ранним этапам их карьеры, либо на личных экспериментах и предпочтениях данного режиссера.

THE PROBLEM OF THE RELATIONSHIP BETWEEN SUBSTANCE AND FORM IN ARMENIAN CONTEMPORARY DOCUMENTARY CINEMA

S. KIRAKOSYAN

Abstract

Authors of Armenian contemporary documentary films have found certain principles and forms of expression, the continuous use of which can be noticed by an overall view on them (the continuity of formal expression can be called a director's handwriting). These forms and principles are based on either the stereotypical understanding of cinema basics from their early career, or personal experiments and preferences.

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻ ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ». ՌԱԶՄԱԿԱՆ ԼԱՆԴՇԱՖՏԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՁԵՎԱՓՈԽՈՒՄՆԵՐԸ ԱՐԱՐԱՏԻ ԵՎ ԱՐԱԳԱԾԻ ՄԻՋԵՎ

ԱՎԵՏԻՍՅԱՆ Պ.Ս., ԲՈԲՈՒՅԱՆ Ա.Ա.

Սարդարապատի ճակատամարտը XX դ. հայոց պատմության կարեւորագույն իրադարձություններից մեկն է՝ հայ ժողովրդի կամքի և կենսունակության բացարձակ դրսևորումը¹: 2018 թ.՝ ճակատամարտից 100 տարի անց, Սարդարապատի ոգին շարունակում է ապրել հայկական նոր պետականության միջավայրում, այս անգամ, սակայն, ոչ թե որպես գոյության պահպանման տարերային ձգտում, այլ որպես մարտահրավեր ապագային:

Սարդարապատի հերոսամարտի և նրա կարևորության մասին շատ է գրվել², և անիմաստ է կրկնել արդեն ասվածը: Սարդարապատը դիտենք

¹ Օգտվելով աղբյուրից՝ շնորհակալություն ենք հայտնում Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի տնօրեն Կ. Արիստակեսյանին, փոխտնօրեն Ս. Պողոսյանին և աշխատակից Դ. Պողոսյանին՝ համագործակցության և տեղեկատվության փոխանակության համար: Սարդարապատում հնագիտական ծրագիր սկսելու գաղափարը, որ մասամբ քննարկվում է նաև այս հոդվածում, զարգացում է ապրել միասնական քննարկումների ընթացքում: Օղալուսանկարների և քարտեզների համար շնորհակալ ենք ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատակից Հ. Դանիելյանին:

² Հմմտ., օրինակ՝ **Թուրջյան Հ.**, Սարդարապատի հերոսամարտը, Ե., 1965 (I հրատ.), 1969 (II հրատ.), **Աստվածատուրյան Ա.**, Սարդարապատի պատմաշինությունը, Բեյրութ, 1966, **Շենուր Ա.**, Սարդարապատի հերոսամարտը, Ֆրեզնո, 1967, **Հարությունյան Ա.Հ.**, Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918 թ. և ինքնապաշտպանական կռիվները, Ե., 1984, **Արզումանյան Մ.Վ.**, Արհավիրքից վերածնունդ, Ե., 1973, **Հարությունյան Ա.**, Պատմական ճշմարտությունը Սարդարաբադի ճակատամարտի մասին (Բանբեր Հայաստանի արխիվների, 1978, N 3, էջ 96-119), **Աֆանասյան Ս.**, Սարդարապատի հաղթանակը, Ե., 1991, **Արիստակեսյան Կ.Ա.**, **Պողոսյան Ս.Հ.**, **Մելիքյան**

քիչ այլ, ոչ ավանդական հայացքով և մասնավորապես ոչ միայն որպես 1918 թ. «ազգային գերլարման» մի քանի մայիսյան օրերը բնորոշող իրադարձություն, այլ նաև որպես մի երևույթ, որը բնույթով տևական է, կրկնվող, օրինաչափ: Այն մի ընթացք է, որը պայմանավորված է տարածական, ժամանակային, մշակութային և կամային առանձնահատկություններով ու դրանց անընդհատ ձևափոխությամբ (տրանսֆորմացիայով): Օգտագործելով հիմնականում հնագիտական գործիքակազմ՝ ստորև կփորձենք անդրադառնալ Սարդարապատին հիշյալ ընդհանուր և մասնավոր տեսանկյուններից:

Մեթոդի անհրաժեշտությունը: Սարդարապատի ճակատամարտի վերոհիշյալ ընկալումն էականորեն բխում է հնագիտական ուսումնասիրության բնույթից, որի գերխնդիրը, իրադարձության օրինակով՝ երևույթի (դրա ժամանակի, տարածության և կայունության) քննարկումն է: Այս տեսանկյունից «հնագիտություն» կատեգորիան դադարում է լինել զուտ որպես նյութական արժեքի միջոցով անցյալը վերականգնող գիտակարգ, այլ, նախ և առաջ, երևույթի ակունքները, զարգացումը, պատճառահետևանքային կապերը, մարդկային գիտակցության մեջ դրա ընկալման տրանսֆորմացիան հետազոտող համակարգ³:

Այս համատեքստում հատկապես կարևորվում է խնդրի քննարկումը ժամանակային և տարածական դինամիկայի մեջ: Երևույթի դիտարկումը տևականության տեսանկյունից հնարավորություն է տալիս բացահայտել կրկնվող պատմական կառուցվածքներ⁴, մինչդեռ տարածության յուրացման և օգտագործման օրինաչափությունների քննարկումը օգնում է ավելի լավ հասկանալ ինքնության ուղենիշների ձևավորման, տարածման և, ինչը հատկապես կարևոր է այս աշխատանքի սահմաններում, դրանց պահպանման մեխանիզմները⁵: Այս իմաստով մեզ համար «Սարդարապատ» հասկացությունը ինչ-որ տեղ դառնում է Հայկական լեռնաշխարհի պատ-

Ա.Բ., 1918 թ. մայիսյան հերոսամարտերը մասնակիցների հուշերում, Ե., 2014, **Kayaloff J.** The Battle of Sardarabad, La Haye-Paris, 1973.

³ Հմմտ. **Foucault M.** L'Archéologie du savoir, Paris, 1969.

⁴ **Braudel F.** Histoire et Sciences sociales: La longue durée, Annales. Économies, Sociétés, Civilisations, 13e année, N 4, 1958, p. 725-753.

⁵ **Branton N.** Landscape Approaches in Historical Archaeology: The Archaeology of Places, in: Majewski T., Gaimster D. (eds), International Handbook of Historical Archaeology, London, 2009, p. 51-66.

մաաշխարհագրական միջավայրում ընթացող և նրանում ապրող տեսակի ինքնապահպանմանն ուղղված գործողությունները բացատրող «իդեալական տիպ»⁶, որով տարաժամանակյա իրադարձությունները հանդես են գալիս տրամաբանական կապակցվածության մեջ և բացահայտվում որպես երևույթ:



Նկ. 1. Ճակատամարտի «վճռական գոտին». սպիտակով նշված է հետագոտովելիք տարածքը

«Հայկական լանդշաֆտի» կառուցվածքը: Հայկական լեռնաշխարհը ցածր, միջին և բարձր լեռնային սարահարթերի յուրահատուկ մի ամբողջություն է. այն ավարտվում է այնտեղ, որտեղ ավարտվում են սարահարթերը⁷: Ընդ որում, հիշյալ երեք մակարդակները կրկնում են իրար և առանձնանում նույնակերպ ուղենիշներով՝ լեռներով շրջապատված գոգավո-

⁶ Weber M. Wirtschaft und Gesellschaft, Tübingen, 1914. «Իդեալական տիպ» (Idealtypus) հասկացության մեկնության համար տե՛ս **Чубарьян А.О.** Теория и методология исторической науки. Терминологический словарь, М., 2014, с. 114-115, **Ковальченко И.Д.** Методы исторического исследования, М., 2003:

⁷ Լեռնաշխարհի բնական պայմանները փայլուն կերպով նկարագրված են այս աշխատության մեջ՝ **Бальян С.П.** Структурная геоморфология Армянского нагорья и окаймляющих областей, Е., 1969:


րությաններ, որոնք բնորոշվում են մեծ և փոքր լճերով, լեռներից բխող և սարահարթով անցնող գետերով: Լեռներով շրջապատված ցածր (պայմանականորեն՝ «քաղաքային») և միջին (պայմանականորեն՝ «գյուղական») սարահարթերն այն հիմնական բեմահարթակներն են, որտեղ ընթացել է լեռնաշխարհի բնակչության կյանքը, մինչդեռ բարձր սարահարթերը ծառայել են որպես ամառանոցներ կամ սրբավայրեր՝ առաջին երկուսի բնակչության համար: Ընդ որում, այդ սարահարթերը շրջապատող լեռները եղել են այն բնական սահմանները, որոնք մի կողմից պաշտպանական թիկունքի դեր են խաղացել, մյուս կողմից՝ եղել այդ տարածքների տնտեսական (իրենց ջրային և բնական պաշարներով) և հոգևոր (դրանք սրբացվել են ու դարձել ուղենիշներ) պահանջմունքները բավարարող միջավայրեր:

Սարահարթերի այդ ամբողջությունը ձևավորել է Հայկական լեռնաշխարհի գրեթե բոլոր աշխարհագրական, պատմամշակութային, ինչպես նաև վարչատնտեսական միավորները՝ բնորոշվելով նույնատիպ առանձնահատկություններով (վաղ պատմական շրջանների համար, օրինակ՝ բնակավայրային համակարգ, թաղման ծես, նյութական մշակույթի գույքակազմ, աշխարհայացք և այլն)⁸:

Ինչքան հեռանում ես նկարագրված հատկանիշներով բնորոշվող սարահարթային գոտիներից, այնքան պակասում են դրանց՝ որպես ամբողջություն բնորոշ ինվարիանտ մշակութային տարրերը: Հիշյալ երևույթը կարելի է բացատրել ոչ միայն աշխարհագրական պայմանների «թելադրանքով» կամ պատմամշակութային և քաղաքական զարգացումների կամայական ընթացքով, այլ, նախ և առաջ, լեռնաշխարհի բնակչության կողմից՝ նույնական հատկանիշներով բնորոշվող կենսատարածքի *ընտրության* հանգամանքով: Այս ընտրության «իրավունքն» իր բնույթով *a priori* է, այն չի պարտադրվել ոչ բնության, ոչ մարդկային այլ/օտար համայնքների կողմից և ցույց է տալիս դրա կրողների մտածողության կայունությունը տևական զարգացումներում: Սա խոսում է այն մասին, որ լեռնաշխարհը ոչ միայն աշխարհագրական ուրույն տարածք է, այլև յուրահատուկ/ներփակ հաղորդակցական համակարգ:

⁸ Մանրամասների համար տե՛ս **Bobokhyan A.** Kommunikation und Austausch im Hochland zwischen Kaukasus und Taurus, ca. 2500-1500 v. Chr., Bd. 1-2, British Archaeological Reports 1853, Oxford, 2008:

Հայկական լեռնաշխարհին յուրահատուկ կենսատարածքի կազմակերպման այս մոդելը ձևավորվել է հազարամյակների ընթացքում՝ որպես նրանում ապրող գլխավորապես երկրագործ ժողովրդի հարմարեցում (=երկխոսություն) համապատասխան բնական պայմաններին⁹: Այդ մոդելը տատանվել/խախտվել է միայն կլիմայական կամ քաղաքական աղետների դեպքում, բայց հիմնականում վերականգնվել՝ որպես օրինաչափություն:



Նկ. 2. Ճակատամարտի հիմնական հենակետ-բլուրների դասավորվածությունը

Մեր հարցադրման տեսանկյունից այստեղ հատկապես կարևոր է «ռազմական լանդշաֆտ» եզրը: Վերն արդեն ասվեց, որ սարահարթերը շրջապատող լեռները պաշտպանական թիկունքի դեր են խաղացել: Բոլոր ժամանակներում, վտանգների դեպքում, սարահարթային կենտրոններում բարգավաճող քաղաքային բնակչությունը բարձրացել է նախալեռներ և այնտեղ պաշտպանվել կամ նախահարձակ եղել՝ թիկունքում ունենալով բարձունքները: Օտար ներխուժումների կամ տիրապետությունների ընթացքում հիմնականում բարձրացել է նախալեռների՝ որպես կենսատարածքի նշանակությունը: «Ռազմական լանդշաֆտը», տվյալ դեպքում, սա-

⁹ Հ. Թուրքյանը, քննարկելով Սարդարապատի ճակատամարտում հայերի հաղթանակի պատճառները, ճշտվել շեշտում է նաև բնաաշխարհագրական գործոնի կարևորությունը (**Թուրքյան Հ.Գ.**, նշվ. աշխ., 1969, էջ 149):

րահարթի և նախալեռների միջև ընկած այդ պատմաաշխարհագրական միջավայրի ձևափոխության ընթացքն է՝ այն պաշտպանելու/տիրապետելու նպատակով: Այս համատեքստում Սարդարապատի հերոսամարտը տեսանելի է որպես այդ ձևափոխության մի փայլուն օրինակ, որի առանձին հետազոտությունը կարող է էապես նպաստել ընդհանուր օրինաչափության բացահայտմանը:

Արագածյան հանգույցը: Հայկական լեռնաշխարհի ամենաառանցքային սարահարթը Արարատի և Արագածի միջև ընկած Արարատյան դաշտավայրն է: Այն լեռնաշխարհի ամենամեծ «հրապարակն» է, նրա գրեթե մշտական քաղաքական-մշակութային կենտրոնը՝ սկսած առնվազն նոր քարի, բայց հատկապես՝ բրոնզի և երկաթի դարերից¹⁰: Այս տեսանկյունից, կարծում ենք՝ ամենևին էլ պատահական չէ, որ հայկական հիշողությունը (Մովսես Խորենացի) պետականության վերջնական ձևավորումը կապում է Արարատի և Արագածի միջև ընկած այս նույն տարածքի հետ:


Քննարկվող գոտին մենք կոչում ենք «Արագածյան հանգույց», քանի որ բոլոր ժամանակներում հենց Արագածն է իրականացրել Արարատյան դաշտը սնուցողի (իր հարուստ ջրերով ու խիտ բնակավայրային համակարգով) և նրան պաշտպանող վահանի գործառույթը¹¹: Արագածի հարավային փեշերը՝ որպես թիկունք, իրենց դիրքով և ամրաշինական համակարգով, ապահովել են Արարատյան դաշտի անվտանգությունը, իսկ դրանց միջանկյալ գոտին եղել է տեղական/պաշտպանվող և եկվոր/հարձակվող ուժերի (ռազմական) շփման միջավայր:

Արարատի և Արագածի միջև ընկած այս գոտում հիշյալ գործընթացը տեսանելի է դեռևս վաղ երկրագործական հասարակությունների ժամանակաշրջանից: Սակայն Ք.ա. II հազ. կեսերից (ուշ բրոնզի դարից) և հատկապես վերջերից (վաղ երկաթի դարից) մինչ նոր ժամանակներ տարածքը դառնում է ռազմական գործողությունների կարևորագույն թատերաբեմ,

¹⁰ Badalyan R.S., Avetisyan P.S. Bronze and Early Iron Age Archaeological Sites in Armenia: I. Mt. Aragats and its Surrounding Region, British Archaeological Reports 1697, Oxford, 2007.

¹¹ Արագածի այս պատմական նշանակության մասին մանրամասն տե՛ս Քալանթար Ա., Արագածը պատմության մեջ, Ե., 1935: Այստեղ պետք է նշել, որ եթե Արարատը լեռնաշխարհի կարևորագույն ուղենիշն է (=խորհրդանիշը), ապա Արագածը այն օրրանն է, որի լանջերին սնուցվել և իրական գոյությունն է պահպանել մեր ժողովուրդը: Այս իմաստով, Արագածի հետ կարող են համեմատվել միայն Բյուրակնյան լեռները Արևմտյան Հայաստանում:

որի մասին են վկայում, մի կողմից, հնագիտական տվյալները (մասնավորապես՝ հիշյալ ժամանակներում հիմնադրված և մինչ վերջերս օգտագործվող «կիկլոպյան» ամրոցների և աշտարակների խիտ ցանցը), մյուս կողմից՝ էլ գրավոր (ուրարտական, հունա-հռոմեական, հայկական, բյուզանդական, պարսկա-թուրքական, ռուսական) աղբյուրները: Ինչպես տեղական, այնպես էլ եկվոր խմբերի կամ վերնախավերի համար բավարար էր գրավել այս հանգույցը, որպեսզի ողջ Հայկական լեռնաշխարհը դառնար կառավարելի:



Նկ. 3. Օդից լուսանկարված մակերեսը N 449 և հարակից բլուրների շրջանում

Քննարկվող պատմաաշխարհագրական համատեքստում «Սարդարապատի ֆենոմենը» կարծես ավելի ընկալելի է դառնում: Չէ՞ որ Սարդարապատը գտնվում է նկարագրվող առանցքային գոտու կիզակետում: Ճակատամարտի պատմական կարևորության մասին խոսելիս՝ Արարատյան դաշտի հենց այս նշանակությունն է շեշտում նրա մասնակից Հ. Բաղրամյանը՝ այն բնորոշելով որպես հայկական օրրան՝ իր ստվար բնակչությամբ, հնագույն քաղաքներով, բազմադարյա մշակութային օջախներով. նրա կորուստը կնշանակեր ընդհանուր Հայաստանի կորուստ¹²:

¹² Баграмян И.Х. Мои воспоминания, Е., 1979, с. 91.

Ճակատամարտի տարածույթը: Այժմ փորձենք ավելի կոնկրետ անդրադառնալ Սարդարապատի ճակատամարտին: Այն, փաստորեն, տեղի է ունեցել ուղիղ գծով Արարատի և Արագածի միջև ընկած հատվածում, դաշտավայրային և նախալեռնային գոտիների սահմանագծին¹³: Եթե փորձենք աշխարհագրորեն սահմանել ճակատամարտի տարածույթը, լայն առումով այն ընդգրկում է երկու ենթագոտի. Արարատյան դաշտավայրի հյուսիսարևմտյան շրջանները, որտեղ տեղի են ունեցել շարժերն ու բախումները (Ֆերիկ, Արշալույս, Արմավիր, Առատաշեն, Մրգաշատ, Բամբակաշատ, Սարդարապատ բնակավայրերը) և Արագածի հարավարևմտյան լանջերը, որոնք դարձել են թիկունք և հարձակման հենակետ (Մաստարա, Թալին, Լեռնակերտ, Սառնաղբյուր, Դաշտադեմ, Աշնակ, Ուջան, Կոշ բնակավայրերը): Հայկական զորքի վճռական հակահարձակման ընթացքում, ճակատամարտի վերջին փուլում, ռազմական գործողությունների տարածքը գնալով նեղանում է՝ կենտրոնանալով ներկայիս Խանջյան գյուղից հյուսիս ընկած շրջանում, այսինքն, այն մասում, որտեղ սարահարթը հանդիպում է լեռներին:



Նկ. 4. Տարածքի լուսանկարը N 449 բլուրից

¹³ «Ռազմաճակատը ձգվում էր Արաքսից մինչև Արագած լեռան փեշերը» (Աֆանասյան Ս., նշվ. աշխ., 1991, էջ 41):

Ճակատամարտի առանցքային հատվածը Չիմնի-Ղըռ կամ N 440 և Թյուլքի Թափա կամ N 449 անվամբ հայտնի բլուրների շրջաններն են (նկ. 1-4), որոնք գտնվում են Խանջյան գյուղից հյուսիս, Արմավիրի ուսումնական մարտադաշտի տարածքում՝ դաշտավայրի և նախալեռների սահմանագծին, ծովի մակերևույթից միջինը՝ մոտ 900-950 մ բարձրության վրա: Փոքր բլրակներով բնորոշվող, հիմնականում հարթ տափաստանային գոտին ձգվում է դեպի Աշնակ, Դավթաշեն, Ներքին Սասնաշեն, Ներքին Բազմաբերդ գյուղերը՝ աստիճանաբար բարձրանալով ծովի մակերևույթից միջինը՝ մոտ 2000 մ: Այս գոտին առանցքային է ճակատամարտի համար, քանի որ այստեղ են տեղի ունեցել վճռական և հայերի համար բեկումնային մարտերը: Նախնական հետախուզական աշխատանքներն արդեն ցույց են տալիս համապատասխան ռազմական գույքի (փամփուշտներ, ձիու պայտեր՝ նկ. 5) կուտակումներ հիշյալ հատվածում:



Նկ. 5. Գտածոներ N 449 բլուրի շրջակայքից. նոր (1-2) և հին (3-5) փամփուշտներ, ձիու պայտ

Ուշագրավ է, որ խնդրո առարկա հատվածը հարուստ է վաղ պատմական ժամանակաշրջաններին վերաբերող հնագիտական հուշարձաններով (հատկապես՝ աշտարակաձև կառույցներով, հմմտ. նկ. 6), որոնք

տարածքի ռազմական կազմակերպման նախապատմությունը հետազոտելու հնարավորություն են տալիս: Այս տեսանկյունից կարևոր է, որ հիշյալ N 440 և 449 բլուրները բնորոշվում են «կիկլոպյան» շարվածքով աշտարակաձև կառույցներով, որոնք, ինչպես բրոնզ-երկաթի դարերում, այնպես էլ Սարդարապատի ճակատամարտի ընթացքում և այսօր զինվորների կողմից կիրառվել և կիրառվում են որպես ռազմական դիտակետեր: Սա նշանակում է, որ Սարդարապատի ճակատամարտի առանցքային գոտում բախումներ են տեղի ունեցել արդեն բրոնզի և երկաթի դարերում:

Հնագիտական հետազոտության կարևորությունը: Համաշխարհային պրակտիկայում հայտնի է «ռազմական հնագիտություն» գիտակարգը, որը զբաղվում է վերջին 100-200 տարիների ճակատամարտերի ուսումնասիրությամբ¹⁴: «Ռազմական հնագիտությունը» հետազոտում է, թե ինչպես է մարդու ռազմական գործունեությունը վերափոխում պատմամշակութային լանդշաֆտը: Այն անդրադառնում է նաև ռազմիկների գործունեության ու նրանց անձնական իրերի հետ կապված խնդիրներին: Հնագիտության այս ձևը երբեք չի կիրառվել Հայաստանի տարածքում, և, այս իմաստով, Սարդարապատը կարող է դառնալ կարևոր մի հարթակ՝ «ռազմական հնագիտությունը» Հայաստանում փորձարկելու համար: Նման աշխատանքը խիստ արդիական է, և կարելի է անցկացնել հետևյալ մեթոդներով ու փուլերով.

1. Կազմել ճակատամարտի հետազոտվող մակերեսի տեղագրական հանույթը և քարտեզը՝ GIS (Աշխարհագրական տեղեկատվական համակարգ) ծրագրի միջոցով (հմմտ. նկ. 3): Այդ մակերեսը տուպոհանույթի վրա բաժանել քառակուսիների՝ դրանով իսկ ստեղծելով հղման համապատասխան համակարգ:

2. Իրականացնել ինտենսիվ հնագիտական հետախուզություն, որի շնորհիվ կքարտեզագրվեն բոլոր գտածոները և մարդկային միջամտությունները (օրինակ՝ խրամատները): Գտածոներով ամենահարուստ վայրերում կարելի է իրականացնել հետախուզական հորատումներ՝ շերտագրությունը և գտածոների խտությունը պարզելու նպատակով: N 440 և 449

¹⁴ Վերջին հրատարակությունների համար հմմտ. **Schofield A.J.** Matériel Culture: The Archaeology of 20th Century Conflict, Abingdon, 2002, **Sutherland T.L.** Battlefield Archaeology - A Guide to the Archaeology of Conflict, York, 2005, **Homann A.** Battlefield Archaeology of Central Europe: With a Focus on Early Modern Battlefields, in: Mehler N. (ed.), Historical Archaeology in Central Europe, Rockville, 2013, p. 203-230.

բլուրների շրջակայքը բնորոշվում է սպիտակավուն կավահողով, որը հեշտությամբ կարող է կլանել արտեֆակտները: Քանի որ վերջիններս ի հայտ պիտի գան ոչ մեծ խորության վրա, ուստի որոշ հատվածներում պեղելով մոտ 10-15 սմ կավահող, կարող է հնարավոր լինել փաստագրել տարբեր գտածոներ: Կարելի է նաև պեղումներ իրականացնել N 440 և/կամ 449 բլուրների հատվածներում, որոնք, ինչպես նշվեց, «կիկլոպյան» շարվածքով, կլորավուն հատակագծով բրոնզ-երկաթեդարյան աշտարակներ են:

3. Հիմնական քառակուսիներում կարելի է իրականացնել երկրաֆիզիկական հետազոտություն, որը հնարավորություն կտա ուղղահայաց և հորիզոնական պրոֆիլներ ստանալ և, բացի այդ, արձանագրել մետաղական անոմալիաներ, որոնք կարող են կապված լինել հողի տակ անցած իրերի հետ (զենք, փամփուշտ և այլն):



Նկ. 6. Տասնյակ «կիկլոպյան» շարվածքով աշտարակներից մեկը N 445 բլուրի վրա

Նման հնագիտական հետազոտության նպատակը կարող է լինել երկակի՝ գիտական և հասարակական: Գիտական հարցադրման գերխնդիրն է հնագիտական հետազոտության միջոցով ճշգրտումներ մտցնել Սարդարապատի ճակատամարտին վերաբերող պատմական խնդիրներում (օրինակ՝ պարզել ճակատամարտի իրական մակերեսը/տարածույթը, զինվորական պարագաները, զինատեսակները և այլն), ինչպես նաև ներ-

կայացնել հետազոտվող ռազմական լանդշաֆտի պատմական ձևափոխումները դարերի ընթացքում: Հասարակական իմաստով, հանրությունը կարող է մասնակցել Հայաստանում երբեք չկիրառված մի միջոցառման, որը մեծ հետաքրքրություն կառաջացնի: Հնագիտական հետազոտությամբ կմիաձուլվեն գիտությունը և «խաղը»՝ պատմական իրականությունը գիտակցելու և, ամենակարևորը, վերապրելու նպատակով:

Այս հարցադրումների հիման վրա իրականացված հետազոտությունը կարող է հիմքեր նախապատրաստել մարտադաշտը հիշարժան վայր և բացօթյա թանգարանային ցուցադրական ակտիվ տարածք-արգելոց դարձնելու համար: Սա մեզանում ժառանգության բացահայտման, պահպանության և մեկնաբանման նոր տիպի խնդիր է, որը կարող է հիմնավորվել որպես կրթական և զբոսաշրջային կարևոր ներուժ:

Այս աշխատանքի արդյունքները նմանապես կունենան երկակի՝ գիտական և հասարակական նշանակություն: Դրանց հիման վրա կարելի է իրականացնել տարատեսակ գիտական վերակազմություններ, որոնք էական ճշգրտումներ կմտցնեն պատմական խնդիրներում: Ձեռքբերումները կարելի է ներկայացնել տարբեր, այդ թվում՝ եռաչափ ու հանրությանն ընկալելի մոդելներով՝ վերարտադրելով ճակատամարտի մանրամասները: Արված աշխատանքի հիման վրա կարելի է հրատարակել գիտական կամ հանրամատչելի աշխատանքներ, որոնցում կներկայացվի Սարդարապատի ճակատամարտի ռազմական լանդշաֆտի ձևափոխման ընթացքը՝ սկսած հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը:

Նման աշխատանքը կարող է լինել միայն միջմասնագիտական բնույթի՝ կազմված հնագետներից, ազգագրագետներից, պատմաբաններից, թանգարանագետներից, երկրաբաններից, որոնց միասնական ջանքերով կստեղծվի մի միջավայր, որը մեկ իրադարձությունը կդիտարկի որպես երևույթ՝ իր տևականության և զարգացման մեջ:

Գիտահասարակական տեսանկյունից այս ոճի աշխատանքը կարող է ցույց տալ հասարակական և հումանիտար գիտության կարևորությունը արդի հայ պետականության և ինքնության խնդիրների քննարկման համատեքստում՝ շեշտելով, որ հայկական անցյալին ռացիոնալ ու գիտական բարձր՝ միջազգային մակարդակին համապատասխանող մոտեցումը կարող է ավելի արդյունավետ լինել, քան զուտ զգացականը:

Այսպիսով, Սարդարապատը, վճռորոշ իրադարձություն լինելուց զատ, կարևոր երևույթ է, որը տևական է, կրկնվող, օրինաչափ: Այն մի ընթացք է, որը պայմանավորված է տարածական, ժամանակային, մշակութային և կամային առանձնահատկություններով ու դրանց անընդհատ ձևափոխությամբ: Տվյալ հարցադրումը, ուսումնասիրության որոշակի դաշտ բացելու հետ մեկտեղ, պարունակում է էական մի ակնարկ, որ արդեն ժամանակն է հաղթահարել «արխիվային մոտեցումը» անցյալի նկատմամբ և բացել մեկնության ավելի լայն դաշտեր, որոնք հնարավորություն կտան հայկական անցյալը դիտել մետամակարդակներում: Նման մոտեցման մեջ է հասարակական և հումանիտար գիտությունների զարգացման նախապայմանը, իսկ իշխանությունների համար՝ բացառիկ հնարավորություն հասկանալու այդ գիտությունների կարևոր ներուժը հայկական իրականությունը դրականորեն փոխելու տեսանկյունից:

“АРХЕОЛОГИЯ САРДАРАПАТСКОЙ БИТВЫ”: ИСТОРИЧЕСКИЕ ТРАНСФОРМАЦИИ ВОЕННОГО ЛАНДШАФТА МЕЖДУ АРАРАТОМ И АРАГАЦЕМ

АВETИCЯН П.С., БОБОХЯН А.А.

Резюме

Сардарапатская битва является одним из знаменательнейших событий армянской истории XX века, обусловленных пространственными, временными, культурными особенностями и их непрерывной трансформацией. Исходя из подобной постановки вопроса, необходимо преодолеть существующий “архивный подход” к прошлому, что даст возможность рассмотреть реалии армянской истории на метауровне. Предлагаемый подход является важнейшим компонентом исторических исследований. В свете сказанного ключевые события армянской истории следует анализировать в пространственно-временном, культурном и стратегическом контекстах.

“ARCHAEOLOGY OF SARDARAPAT BATTLE”: HISTORICAL TRANSFORMATIONS OF THE MILITARY LANDSCAPE BETWEEN ARARAT AND ARAGATS

P. AVETISYAN, A. BOBOKHYAN

Abstract

The Sardarapat battle is one of the most important events in Armenian history of the 20th century, which was conditioned by spatial, temporal, cultural features and their continuous transformation. Coming out from such formulation of the question it is necessary to overcome the current “archival approach” to the past, which will enable to discuss the realities of Armenian history on meta-level. The proposed phenomenological approach essentially widens the possibilities of historical studies. Based on the mentioned ideas the key events of the Armenian history should be analyzed in their spatial-temporal, cultural and strategic contexts.

IX-X ԴԴ. ԶՆԱՐԱԿԱԾ ԽԵՑԵՂԵՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ԺԱՄԿՈՉՅԱՆ Ա.Ս.

Հայաստանի միջնադարյան հնագիտության առանցքային հիմնախնդիրներից մեկը խեցեղեն նյութի ուսումնասիրությունն է: Այն Հայաստանի և տարածաշրջանի այլ երկրների քաղաքական, սոցիալ-տնտեսական, առևտրական, դիվանագիտական և հոգևոր կյանքի առանձնահատկությունները բացահայտող արժեքներից է: IX-X դարերի ջնարակած խեցեղենի քննությունը հնագիտական չափորոշիչների՝ թվագրում, տեսակավորում, տեխնոլոգիայի և հարդարման մոտիվային վերլուծությունների մակարդակով հստակեցված է՝ ձեռնպահ մնալով Արաքսական խալիֆայության ճգնաժամային գործընթացների, Հայաստանում և Այսրկովկասում ձևավորված ամիրայությունների, Բյուզանդիայի հակամարտության գործոնի ու Բագրատունիների անկախության համար մղվող պայքարի հիմնավորումներից: Սակայն այդ իրադարձությունները ժամանակաշրջանի քաղաքական գլոբալ փոփոխությունների իսկությունն էին՝ փոխկապակցված քաղաքների զարգացման, տնտեսական նոր քաղաքականության մշակման, տարածքների ու ճանապարհների ձեռքբերման համար մրցակցային պայքարի դրսևորումներով:

Սույն հաղորդման նպատակն է լրացնել այս բացն ու ջնարակած խեցեղեն երևույթը ներկայացնել քաղաքական ուժերի բացահայտ կամ դիվանագիտական մարտահրավերների աշխարհաքաղաքական զարգացումներով՝ ընդգրկելով տնտեսական մրցակցային ձեռքբերումները, ճանապարհային գործառույթներն ու մարդկային գործոնի դերը: Պատմական սկզբնաղբյուրները, արաբ ուղեգիրների հիշատակությունները համատեղելով Դվինի, Օրեն-Կալայի, Արցախի Տիգրանակերտի, Ատրպատականի

¹ Ղաֆադարյան Կ., Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. 1, Ե., 1952, հ. 2, Ե., 1982, Առաքելյան Բ., Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դդ., հ. 1, Ե., 1958, հ. 2, Ե., 1964, Kalantaryan A. Dvin, Histoire et archéologie de la ville médiévale, Paris, 1996, Шелковников Б. Художественная керамика двинских раскопок (Изв. АРМФАНА, 1940, № 4-5, с. 191-199).

Գանձակի, Արաբական խալիֆայության Սամառա, Բասրա ու Քուֆի քաղաքներից հայտնաբերված IX-X դարերի ջնարակած խեցեղենի հիմնաքազայով, փորձել ենք ապացուցել միևնույն կամ վիճելի տարածքներում Հայաստանի և հարակից երկրների տնտեսական քաղաքականության բնագավառում տիրող արհեստագործական շրջադարձերը, որոնք ընթանում էին արտադրական տեխնոլոգիաների միօրինակ զարգացումներով, բայց հարդարանքի տեղայնացման տարբերակումով:

IX դարի II կեսը խալիֆայության պատմության ճգնաժամային փուլն էր՝ Զինջինների ապստամբություն, բյուզանդական հակամարտություն, Արաբական ամիրայությունների գոյացում և Հայաստանի անկախության ու հողերի միավորման համար պայքարի սուր հակասություններով մի ժամանակահատված, որ փոխել էր տարածաշրջանի նախկին քաղաքական քարտեզի համապատկերը: Հայ պատմագրության մեջ այս ամենը՝ Հյուսիսարևելյան Հայաստանի՝ Դիզակի, Խաչենի, Փառիսոսի քաղաքական կազմավորումների կարգավիճակի ներառումով, հետազոտված է, թեև կան թյուրըմբռնումներ, որոնք նոր գյուտերի շարունակական համալրումով կճշտեն, կլուսաբանեն հայոց պատմության մշուշոտ էջերը: Սաջանների ու հայ Բագրատունիների բարդ հարաբերությունները, որ IX դարի վերջում և X դարում պայքարի կիզակետում էին: Սաջան մուսուլմանական տոհմը IX դարի կեսերին ներգաղթել էր Կենտրոնական Ասիայից, արմատացել Ատրպատականում և Արաբական խալիֆայության հետ դիվանագիտական փոխգործակցությամբ յուրացնում էր իր առաջխաղացմանը խոչընդոտող Բագրատունիների հողատարածքները: Արաբական խալիֆայության միջոցով նրանք անմիջականորեն հաղորդակցվեցին երկրամասի անցուղարձերին, դարձան «Արմինիա» ոստիկանության տնտեսական քաղաքականության կարևոր լծակներից մեկի՝ հարկահանության գործառույթի կրողը ու արաբա-հայկական միջնորդավորված հարաբերությունների հուսալի հենարանը: Սաջանները ռազմարշավներով ծավալվեցին դեպի հյուսիս՝ նվաճեցին Բաղասական աշխարհը՝ Վարդանակերտ (Վարսան) կենտրոնով, Յունանն ու Պարտավը, ապա ավելի ուշ Բագրատունիների հանդեպ խարդավանքներով ու ողբերգության գնով (Սմբատ Ա-ի 914 խաչելը Յուսուֆի կողմից) տիրացան Դվինին: Արաբական խալիֆայությունը, հովանավորելով մերթ Բագրատունիներին, մերթ էլ Սաջաններին, ուներ դիվանագիտական իր հաշվարկը՝ կիրառելով «Բաժանիր, որ տիրես» քաղաքա-

կանությունը, փոխհարաբերություններ, որոնք փաստարկված են հայ պատմիչների հիշատակություններում: Խաչենի տեր Սահլ Սմբատյանի միջոցով և Արաբական խալիֆայության թելադրանքով Սաջյան Աֆշինին հանձնվեց Խաչենում հայտնված ապստամբ Բաբեկին, որի համար էլ Սահլ Սմբատյանն առատորեն վարձատրվեց²: Իհարկե, սա չխանգարեց, որ 896 թվականին նույն Աֆշինը Պարտավից մեկնի Կարս՝ կազմակերպելով ամրոցում ապաստանած թագուհու գանձերի հափշտակումը³: Իսկ երբ Սմբատ Ա-ի (890-914) և Աֆշինի միջև թշնամանքը խորացավ, ու Գևորգ Գառնեցի կաթողիկոսը փորձեց հաշտության եզրեր փնտրել նրանց միջև, Աֆշինը նրան բանտարկեց ու նա ազատվեց միայն Հայոց եկեղեցու ու Համամ Արևելցու հատկացված փրկագնով⁴:

Սաջյանների ու Արաբական խալիֆայության ախոյանն էր նաև Բյուզանդիան: 893 թվականին, երբ Լևոն VI-ի (886-912) և Սմբատ Ա-ի միջև կնքվեց առևտրական պայմանագիր, և վերացավ Բյուզանդիայի արևելյան կապերին խոչընդոտող Ալ-Սուլուր պաշտպանական գոտին⁵, Արաբական խալիֆայությունն ու Սաջյաններն այս փոփոխությանը արձագանքեցին Սմբատ Ա-ին պատկանող Արևիք ու Երնջակ գավառները նվաճելով ու հիմնելով Գողթի և Նախիջևանի ամիրայությունները, որով հսկողության տակ պահվեց Դվին տանող ճանապարհը:

Արաբական խալիֆայության, Բագրատունիների և ամիրայությունների միջև հողատարածքների նվաճումից բացի, պայքարի թիրախ էին նաև միջազգային մայրուղիները, որոնք, մարդկային ռեսուրսների տեղաշարժից բացի, նյութական արժեքների և տեղեկատվական դաշտն ապահովող ռազմավարական միջոցներ էին: Այս ենթակառուցվածքների մասին պահպանված արաբական և հետարաբական տիրապետության ժամանակաշրջանի ճանապարհների չափագրական ձևաչափերը առևտրական կարգ ու կանոնը համակարգող պաշտոնյաների (մուխթասիբ) կազմով հսկում էին տարածաշրջանի քաղաքական ու տնտեսական գործառույթները ճանա-

² Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի (Բնագիրը և ներածությունը Վ. Առաքելյանի, հ. 3, գլուխ ԻԱ, էջ 330, Ե., 1983):

³ Յովհաննու կաթողիկոսի (Դրասխանակերտցոյ), Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 178-179:

⁴ Մովսէս Կաղանկատուացի, հ. 3, գլուխ ԻԲ, էջ 335:

⁵ Տեր-Ղևոնդյան Ա., Արաբական սահմանային ամրությունների գոտին (Ալ-Սուլուր), հողվածների ժողովածու, Ե., 2003, էջ 471-485:

պարհի ելման կետից մինչև վերջնակետ⁶: Ճանապարհներից առաջինը Արդեբիլ-Բարզանդ-Վարդանակերտ (Վարսան) Բայլական (Օրեն-Կալա), Յունան, Պարտավ ուղեգիծն էր, որը, շարունակվելով հայկական հողատարածքներով, հասնում էր Դվին՝ ապահովելով վարչատարածքային լայնարձակ միջավայրում տեղադրված կենտրոնների քաղաքական ու տնտեսական տարաբնույթ գործառույթները:

Իբն Խորդադբեհն այս մայրուղին ներկայացնում է առանց Յունան կայարանի,⁷ իսկ Ալ-Իսթահրին և Իբն Հաուկալն⁸ ունեն չափազրական որոշակի սահմանումներ՝ Պարտավից Յունան՝ 7 փարսախ, Յունանից Բայլական՝ 7 փարսախ, Բայլականից Վարսան՝ 7 փարսախ: Վարսանից, որ համարվում էր Մեծ Հայքի Փայտակարան աշխարհի (Վարդանակերտ գավառի համանուն կենտրոնը), հասնում էր Դարման, ապա Բայլական, որ համարվում է Օրեն-Կալան: Սանկտ Պետերբուրգի և Ադրբեյջանի հնագետների համատեղ արշավախումբը (1953-1955) այլ նյութերի շարքում պեղումներից հավաքել է IX-X դարերի ջնարակած խեցեղենի պատկառելի մի հավաքածու, որ մանրակրկիտ ուսումնասիրել է Ա. Յակոբսոնը (աղ. 3)⁹:

IX-X դարերում քաղաքի սեփականատիրոջ մասին տեղեկություններն իրարամերժ են: Ե. Պախոմովը, հենվելով Հ. Դրասխանակերտցու այն վկայության վրա, թե Աֆշինը այնտեղ է հասցրել Տուչ (Գարդմանից) գերեվարված Սևորդիներին, որոնք մահմեդականության չընդունելու համար ոչնչացվել են տեղում, քաղաքի տերն է համարել Սաջյան Աֆշինին (890-900)¹⁰: Կա տեղեկություն նաև այն մասին, որ 900 թվականին Աֆշինը, հեռանալով Դվինից ու որդուն՝ Դևդադին թողնելով այնտեղ, հասել է Բայլական ու 900 թվականին մահացել¹¹: Ելնելով Յակոբի այն հիշատակությունից, թե Սաջյաններին է պատկանել միայն Պարտավը, Ա. Եղիազարյանը այն տեսակետին է, թե Փայտակարանը Օրեն-Կալայով պատկանել է Եսա-

⁶ Maward, Al-Ahkam Al-Sultaniya, Bonn, 1853, p. 417-418, 431. Արաբական աղբյուրներ Գ., Արաբ մատենագիրներ, Թ-Ժ դարեր (ներածությունը և բնագրից թարգմ. Ա. Տեր-Ղևոնդյանի), Ե., 2005, էջ 108:

⁷ Նշվ. աշխ., էջ 447:

⁸ Նշվ. աշխ., էջ 577, 637:

⁹ Якобсон А. Художественная керамика Байлакана (Орен-Кала), МИА 67, Труды Азербайджанской (Оренкалинской) экспедиции, М.-Л., 1959, с. 228-302.

¹⁰ Пахомов Е. Пайтакаран-Байлакан-Орен-Кала, МИА 67, էջ 24, **Յովհաննու Դրասխանակերտցու**, Պատմութիւն Հայոց, էջ 187:

¹¹ **Յովհաննու Դրասխանակերտցու**, էջ 187:

յի Աբու Մուսեին¹²: Կռահել կարելի է, որ մինչև 855 թվականը քաղաքը պատկանել է Գոռոզուի տիրոջը, սակայն Բուղայի կողմից աքսորվելուց հետո, օգտվելով անիշխանությունից, Աֆշինն այն նվաճել է: Ենթադրական մակարդակով այս եզրակացությունը հիմնավորման կարիք ունի, իսկ անանուն զրուցագիրը հաղորդում է, թե տարածքը Ամբատ Ա թագավորի իշխանության ներքո էր. սա անհավանական է այն հակափաստարկով, որ Փայտակարանը նույնացվում է Թիֆլիսի հետ¹³: Մեր խորին համոզմամբ՝ Օրեն-Կալան (Բայլականը) IX–X դարերում ներառված էր Սաջանների տիրապետության սահմաններում:

Ճանապարհի հաջորդ կայարանը Յունանն է, որի տեղագրական հիմնավորումները հետազոտողներն իրականացրել են արաբ ուղեգիրների հիշատակություններով: Ե. Պախոմովը ենթադրաբար այն տեղադրել է Կալա Թեփե կամ Բայաթի հնավայրի տարածքում¹⁴: Ն. Կարաուլովի կարծիքով՝ դա Դարմանն է, որ համարվում է արաբ ուղեգիրների կողմից աղավաղված Յունանը¹⁵: Յունանի վերաբերյալ հետազոտություն ունի Ի. Յամպոլսկին, որով տեղագրությունը փորձել է մեկնաբանել հնչյունաբանական տարբերակով¹⁶: Խոսքը էնիան բնակավայրի մասին է, որ կառուցվել ու բնակեցվել է հույներով Ալեքսանդր Մակեդոնացուց հետո: Հիշյալ բոլոր գիտնականների առաջ քաշած վարկածների ճշտությունը պետք էր հիմնավորել պեղումներից ակնկալվող արդյունքներով: Փնտրտուքներով հայտնագործություն եղան 2006 թվականից Աղդամում Փանահի պալատի շրջակայքում սկսված պեղումները, որոնք շարունակաբար մինչ օրս իրականացնում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտը (ղեկ.՝ պ.գ.դ. Հ. Պետրոսյան):

¹² **Եղիազարյան Ա.**, Հայ Բագրատունիների տերությունը (885-908 թթ.), Ե., 2011, էջ 270:

¹³ Անանուն զրուցագիր կարծեցեալ Շապուհ Բագրատունի, Պատմութիւն (թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վ. Առաքելյանի), խմբագիր Ա. Յակոբեան, Ե., 2011, էջ 118:

¹⁴ **Пахомов Е.**, նշվ. աշխ., էջ 21:


¹⁵ **Караулов Н.** Сведения арабских писателей о Кавказе, Армении и Азербайджане (Сборник материалов для описания местностей и племен Кавказа, XXIX, Тифлис, 1901, с. 67).

¹⁶ **Ямпольский И.** К изучению древнеазербайджанского города Юнана, МИА, 67, с. 366-369.

Աղյուսակ 1




Աղյուսակ 2




Աղյուսակ 3



Աղյուսակ 4



Աղյուսակ 5



Աղյուսակ 6



Աղ. 1. 1, 4, 6, 10 սկուտեղներ, 2 կճուճ, 3, 5, 7, 8, 9 թասեր, 11, 12 քրեղանների բեկորներ, ջնարակած խեցեղեն IX-X դարեր, Դվին:

Աղ. 2. 1, 2, 5, 8 թասեր, 3, 4, 6, 7, 9, 10, 11, 12 քրեղանների բեկորներ, ջնարակած խեցեղեն, IX-X դարեր, Դվին:

Աղ. 3. 1, 2, 3, 4, 5, 6, 7 քրեղանների և թասերի բեկորներ, ջնարակած խեցեղեն, IX-X դարեր, Օրեն Կալա:

Աղ. 4. 1, 2 թասերի և քրեղանների բեկորներ, ջնարակած խեցեղեն, IX-X դարեր, Տիգրանակերտ:

Աղ. 5. Թասերի և քրեղանների բեկորներ, ջնարակած խեցեղեն, IX-X դարեր, Տիգրանակերտ:

Աղ. 6. 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15 թասեր և քրեղանների բեկորներ, ջնարակած խեցեղեն, IX-X դարեր, Միջին Ասիա (Չաչ, Սոգդ, Աֆրասիաբ):

Ներկայումս հստակեցված են Տիգրան Մեծի (95-55) ժամանակ ամրակուռ պարիսպներով կառուցված բնակավայրի սահմանները, և արդյունքներով ապացուցված է, որ այն շարունակաբար բնակեցվել, կառուցվել ու վերակառուցվել է վաղ, զարգացած և ուշ միջնադարում¹⁷: Տեղում հայտնաբերված IX-X դարերի ջնարակած խեցեղենը բեկորային է, սակայն զանգվածային և ուրույն առանձնահատկություններով հանդերձ, առնչվում է Օրեն-Կալայի IX-X դարերի նյութերին (աղ. 4):

Հաջորդ կայարանը Դվինից հետո «Արմինիա» ուստիկանության երկրորդ կենտրոն Պարտավն է, որի նշանակությունը 893 թվականի Դվինի երկրաշարժից հետո մեծացավ: Անանուն գրուցագիրը հայտնում է, թե հայկական հողերի միավորման գործընթացի ժամանակ Պարտավը նույնպես պատկանել է Բագրատունիներին¹⁸: Կարծում ենք, դա եղել է կարճատև մի ժամանակահատված, որովհետև Թ. Արծրունին գրում է, որ Սաջաններն այդ ընթացքում այնտեղ կառավարիչ են նշանակել հավատուրաց մի հույնի¹⁹: Հայոց թագուհու գանձերը ձեռք բերելու արշավի մեկնարկն էլ Աֆշինը Պարտավից է հիշատակում²⁰: Իսկ Յակուբը հստակ գրում է, որ քաղաքը պատկանել է Սաջաններին²¹: Եվ, վերջապես, Պարտավում հատած Սաջանների դրամները հաստատում են, որ քաղաքում արաբական դրամներ հատող փողերանոցը IX-X դարերում շարունակել է գործել Սաջանների հեղինակային տիտղոսով²²: Պարտավից հետո սկսվում էր երթուղու հայկական հողերով անցնող ուղեգիծը, որն անվերապահորեն պատկանել է Սմբատ Ա-ին. Բագրատունիների փաստացի ավատատիրական քաղաքական կազմավորումներից բացի (Խաչեն, Փառիսոս), այդ մասին կան արաբ աշխարհագիրների գրառումներ: Իսթաիրին Պարտավից Դվին կայարանների չափագրական հեռավորությունները նկարագրելիս նշում է.

¹⁷ Petrosyan H., Kirakosyan L., Safaryan V., Zhamkochyan A., Vardanyan R., Karapetyan I., Vardanesova T. The Discovery and First Results of Archaeological Investigation of Tigranakert in Artsakh 2005-2009, Archaeology of Armenia in regional Context, Yerevan, 2012, p. 223-235.

¹⁸ Անանուն գրուցագիր կարծեցիկ **Շապուհ Բագրատունի**, էջ 118:

¹⁹ **Թովմայի վարդապետի Արծրունոյ**, Պատմութիւն տանն Արծրունեաց, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 242:

²⁰ **Յովհաննու կաթողիկոսի**, Պատմութիւն Հայոց, էջ 178-179:

²¹ Արաբ մատենագիրներ Գ, էջ 473:

²² **Фасмер Р.** О монетах Саджидов (Известия общества обследования изучения Азербайджана, 1928, № 5, с. 22-48).

«Ճանապարհը Պարտավից Դվին անցնում է հայոց երկրի միջոցով, և այս բոլոր գյուղերը Սմբատի՝ Աշոտի որդու թագավորության մեջ են»²³: Իսկ Իբն Հաուկալը նույնը ձևակերպում է հետևյալ կերպ. «Այս ճանապարհը Պարտավից Դվին անցնում է Հայաստան (Հայոց) երկրի (Ալ Արման) միջոցով, և այս բոլոր գյուղերն ու քաղաքները հայազգի Ամբատի՝ Աշոտի որդու (Սինբաթ Իբն Աշոթ) Ալ Արմանի թագավորության (մամլաքա) մեջ էին» խոսքերով²⁴: Հյուսիսարևելյան Հայաստանում Բագրատունիների հովանավորությամբ Խաչենի, Փառիսոսի կիսանկախ կարգավիճակով քաղաքական կազմավորումները Սահլ Սմբատյանի և նրա թոռ Ատրներսեհի ճանապարհային առաջին խոչընդոտներն էին Սաջանների համար, և սադրանքներով նրանք փորձում էին բաժան-բաժան անել Բագրատունյաց այդ հողերը: Խնդիրը տարբեր հարցադրումների մակարդակով հետազոտված է, սակայն պատմական ու վիճագրական հիշատակագրություններով կան լրացումներ, որոնք հաստատում են ոչ միայն IX–X դդ., այլև ուշ միջնադարում այդ տարածքներում հայ էթնոսի բնակեցվածության փաստը: Ամենավաղ արձանագրությունը Փառիսոսի վանքի մատուռի մուտքին է, որտեղ, որպես բարավոր, օգտագործված է խաչքարի թևերից մեկը, որի շուրջը պահպանված է «ՆԽԳ (984) Մուսես երեց» արձանագրության մնացորդը²⁵:

Իսկ Վարդենիսի Մեծ Մագրա գյուղի գերեզմանատան խաչքարի ընդարձակ արձանագրությունը ՅԼ (881 թվականով) հիշատակում է իշխան Ատրներսեհին իբրև Աղվանից և Սյունյաց տեր²⁶:

ՅԼ: (881) ԹՎԱԿԱՆՈՒԹԵԱՆՍ ՇԱՅՆՑ ԵՍ
ԳՐԻԳՈՐ ԱՏՐՆԵՐՍԵՀԵԱՆ, ՍԻՆԵԱՑ ԵՒ
ԱՂՎԱՆԻՑ ԻՇԽԱՆ ԿԱՆԳՆԵՑԻ ԶԱՍՈՐԲ
ՆՇԱՆՍ ԱԻԳՆԱԿԱՆ ՀԱԽՍԱՑԵԼՈՑ. ՈՐՔ
ԵՐԿՐՊԱԳԼԵՔ ՍՈՐԲ ԽԱԶԵԼՍ ԳՄԻ ԶԼԵՍ
ՅԱՂԱԽԹՍ ՅԻՇԵԱՑԻՔ:

²³ Արաբական աղբյուրներ Գ, էջ 577:

²⁴ Նույն տեղում, էջ 638:

²⁵ Դիվան Հայ վիճագրության (այսուհետև՝ ԴՀՎ), պր. V, կազմեց Ս. Բարխուդարյանը, Ե., 1982, էջ 271, արձ. 1056:

²⁶ ԴՀՎ, պր. IV, կազմեց Ս. Բարխուդարյանը, Ե., 1973, էջ 334, արձ. 1358:

Սմբատ Ա-ին պատկանող հողատարածքների վերաբերյալ աղբյուրագիտական կարևոր փաստարկներից մեկը Գեղարքունիքի մարզի Մարտունու շրջանի Վանեվան գյուղի Սուրբ Գրիգոր եկեղեցու գմբեթի արձանագրությունն է, որի բովանդակությունից հասկանալի է, որ այն կառուցվել է Սմբատ Ա-ի եղբայր Շապուհի և իր քույր Մարիամի նախաձեռնությամբ: Ամենակարևորը արձանագրության վերջին տողերն են այն մասին, որ Սմբատ Ա-ն կառուցել է Վայոց ձորի Ունջոռք²⁷ գյուղի մոտից սկիզբ առնող մի ջրանցք, որ, կտրելով երկար տարածք, հասել է վանքի շրջակայքը²⁸:

Ի ԹՈՒԻՆ ՀԱՌՑ:ՅԾԲ:(903):ՍՄՊԱՏ ԹԱԳԱԽՈՐ, ԱՍՏ ԱՍՏ|ՈՒԾՈՎ,ԲԵՐԱԻ ԶՈՒՐՍ ՅՈՒՃՈՒ . . . ԵՆ|ԱՅ, ԳԼԱԽԹԻ ԶԵՌԱԽԻԲ ԵՒ ՄԻԱԲԱՆԱԽ|Բ, ԶՈՐ ՅԱՌԱՋ ԲԵՐԱՇ ԷՐ. ԱՇ ՈՂՈՐՄԻ:

Կային և Ուտիք Գարդմանի Սևորդիների (Տուչ) քաղաքական միավորման հարուցած խոչընդոտները²⁹, որոնք, հակառակ Սաջանների, հովանավորում էր Բյուզանդիան: Դեպի Դվին Սյունիքի տարածքով անցնող ճանապարհին Սաջանները սադրանքներով փորձում էին օգտվել Բագրատունիների ու Սյունյաց իշխանների միջև տարածքային հավակնությունների և իշխանական գերակայության մրցապայքարից, սյունեցիներին խոստանալով թագ և իշխանություն, որը, իհարկե, տեղի ունեցավ ավելի ուշ: Այս ամենը ամրապնդում են ճանապարհային քաղաքականության սահմաններում Սմբատ Բագրատունու վարկն ու մենաշնորհային իրավասությունները: Պարտավից հետո Սևանի ավազանի երկու ափերով Դվին տանող ճանապարհներին տիրելու Սաջանների անհաջող փորձերն իրականացան Դվինում, որ քաղաքական երկու ուժերի հակասությունների թնջուկն էր: 893 թվականի երկրաշարժից հետո նախկինում Սաջանների համար ռազմակայանի նպատակին ծառայող կենտրոն Դվինում խտացել էր բնակչության մոռովմանական շերտը՝ հակառակ մինչ այդ արաբ պատմիչների մոտ հայերով ու քրիստոնյաներով խիտ բնակեցված քաղաքի վե-

²⁷ Տե՛ս Պատմութիւն նահանգին Սիսական Արարեալ Ստեփաննոսի Օրբելեան Արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910, էջ 513:

²⁸ ԴՀՎ, պրակ IV, էջ 121-122, արձ. 491:

²⁹ **Իբն Ալ Ասիր** (թարգմ. ներ. և ծանոթ. Ա. Տեր-Ղևոնդյանի), Ե., 1981, էջ 370, Բյուզանդական աղբյուրներ, Կոնստանդին Ծիրանաձին (թարգմանությունը բնագրից, առաջաբան և ծանոթ. Հ. Բարթիկյանի), Ե., 1970, էջ 151:

րաբերյալ եղած տեղեկությունների: Այդ ժամանակ էլ մուսուլմանական մզկիթի վերածվեց Դվինի VII դարի կաթողիկոսական պալատը: Իհարկե, Սաջյանների ու Բագրատունիների միջև եղել են համագործակցության պահեր 893 թվականի երկրաշարժից քաղաքի ավերակ վիճակը վերականգնելու համար: Ա. Տեր-Ղևոնդյանը Հովհ. Դրասխանակերտցու՝ «ոռնիկս պատրաստեալ նմա թագաւորին Սմբատայ՝ սուղ ինչ պակաս քան զամ մի»³⁰ հիշատակությունը վերլուծել է իբրև Սմբատի կողմից Սաջյան Աֆշինի որդի Դևդատին քաղաքը նորոգելու համար տրված գումարի³¹: Իրականում դա գործարք էր, որովհետև IX դարի վերջերին և X դարում քաղաքն արդեն իբրև առևտրաարհեստավորական հզոր կենտրոն կրկին Մերձավոր Արևելքի թատերաբեմում էր: Դևդատի հեռանալուց հետո 901 թվականին քաղաքն անցավ Աֆշինի եղբայր Յուսուֆին, ու հակասական հարաբերությունները նրա և Սմբատ Ա-ի միջև ավարտվեցին Յուսուֆի ուխտադրուժ հաշվեհարդարով, երբ Դվինում նա խաչվեց, ու դա եղավ առնվազն պատճառներից մեկը, որ Բագրատունիները դադարեցին Դվինը մայրաքաղաքի վերածելու գաղափարից: Իսկ Սաջյանները մնացին քաղաքում մինչև Սալարյանների հայտնվելը Ատրպատականում: Դվինում հատված վերջին դրամը կրում է Դայսամ Իբրահիմ Ալ Քուրդիի³² անունը, որն ազդարարում է նրանց իշխանության վախճանը Դվինում 941-942 թվականներից հետո: Խալիֆայության ու Ատրպատականի հետ Հայաստանին կապող երկրորդ ուղին սկսվում էր Գանձակից, հասնում Մարաղա, Թավրիզ, Մարանդ, Հեր ու Զարևանդ, Ջուղա, Նախիջևան, Սիսաջան (Եղեգնաձոր), ապա Դվին:

Դվինը, 1937 թվականից սկսած (ընդմիջումով, բացի II համաշխարհային պատերազմի ընթացքից և 1990-2005 թվականներից), պարբերաբար պեղվել է (ղեկավարներ Ս. Տեր-Ավետիսյան, Կ. Ղաֆադարյան, Ա. Քալանթարյան). գտածոների հսկայածավալ հավաքածուներում IX-X դարերի ջնարակած խեցեղենը ծավալուն է (աղ. 1, 2): Պեղումներ են իրականացվել նաև Ատրպատականի Գանձակ քաղաքում ամերիկացի հնագետ

³⁰ **Յովհաննու Դրասխանակերտցու**, էջ 235:

³¹ **Տեր-Ղևոնդյան Ա.**, Արաբական ամիրությունները Բագրատունյաց Հայաստանում, Ե., 1965, էջ 119:

³² **Быков А.** Дайсам Ибрахим Ал Курди и его монеты (Эпиграфика Востока, 1955, X, с. 14-37).

Ռ. Ուայթհաուզի գլխավորությամբ³³, որտեղ նույնպես IX-X դդ. ջնարակած խեցեղենն զգալի քանակությամբ է հայտնաբերված: Սամառա Քուֆի և Բասրա քաղաքներում Ֆ. Ջարեի պեղումների շնորհիվ հայտնաբերված է ոչ միայն ջնարակած, այլև հախճապակե բարձրորակ խեցեղեն³⁴:

Տարածաշրջանում մեր նկարագրած քաղաքական վերոհիշյալ բոլոր իրադարձությունները հարաբերական կայունության պահերին ուղեկցվել են քաղաքաշինական գործառույթների շարժուն զարգացումներով՝ վերականգնվել են հին քաղաքները, կառուցվել նորերը, որոնց վարչական, առևտրատնտեսական ու դրամական կազմակերպություններն աշխատել են իշխող միավորումների շահերին համապատասխան օրինաչափություններով, արմատավորվել էր ավատատիրական հասարակարգի նոր փուլը՝ սոցիալ-տնտեսական կյանքի ու հասարակական հարաբերություններին համարժեք ներդաշնակությամբ:

Թեմայի շրջանակում մեր ներառած բոլոր քաղաքները տեղակայվել են մայրուղիների խաչմերուկային հատվածներում: Երբեմն ընդհատումներով (Իրաք, Իրան) կամ շարունակաբար (Օրեն-Կալե, Դվին) հուշարձանները պեղվել են՝ ջնարակած ու անջնարակ խեցեղենի ծավալուն խմբաքանակով: Արդյունքների քննությունը պարզեց, որ նյութը մշակված է տեխնոլոգիական միօրինակ եղանակով՝ ա) կաթնագույն հետնախորքի վրա եռագույն դեղին, կանաչ, դարչնագույն երանգներով, բ) միագույն (կանաչ) ջնարակով պատելու սկզբունքով, գ) սպիտակ անգործով մերկ խեցու վրա նկարագրողված և սպիտակ թափանցիկ ջնարակով պատելու և դ) մերկ խեցու վրա բաց կամ մուգ դարչնագույնով արված զարդարանքով ու թափանցիկ ջնարակով պատելու տեխնիկայով: Գունային ներկապնակում տիրապետողը եղել են դեղինի, կանաչի ու դարչնագույնի տարաբնույթ համադրությունները: Արտաքին ձևաստեղծման տիպաբանական մշակումները եղել են բազմաչափ՝ փոքր, միջին ու ծավալուն թասեր, շուրթերի ու հատակների համապատասխան լուծումներով: Գալով զարդամոտիվներին՝ գերակշռել են կետերը, սլաքները, խաչերը, օղակները և դրանց համադրությունից գոյացած կոմպոզիցիաները: Երկրաչափական այս մոտիվներից զատ՝ բուսական ոճավորված տարաբնույթ հո-

³³ Whitehouse G. Excavations at Siraf (Iran, 1969, № 7, p. 39-62).

³⁴ Sarre F. Die Keramik von Samarra, Berlin, 1925.

րինվածքները կազմել են հարդարման որակական այլընտրանքային տարբերակներ:

IX–X դարերի ջնարակած խեցեղենը արհեստագործության մեծագույն նվաճումներից մեկն էր, և նրա արտադրությունը կարելի է յուրօրինակ «վերածնունդ» համարել, որովհետև ջնարակած խեցեղենի գյուտը նոր չէր, հայտնի էր վաղնջական ժամանակներից, կիրառվել է անտիկ ու սասանյան ժամանակներում, սակայն միագույն (ներկապնակի կանաչ, փիրուզագույն) կիրառումով³⁵: Մինչդեռ IX–X դարերում այն նախորդից սահմանազատվում է բազմագույն երանգների կիրառությամբ անոթների ձևերի ու հարդարանքի ճոխությամբ, որ հիմք է տվել ուսումնասիրողներին այս առաջադիմությունը համարել արծաթի ճգնաժամի հետևանք, որովհետև սասանյան արծաթե սպասքն այդ ժամանակ կիրառությունից դուրս էր ու նորի փոխարինման անհրաժեշտությունը վերնախավի կենցաղում՝ օրվա պահանջ³⁶:

Տեղայնացման առանձնահատկությունների որոշ տարբերակումներով ներկայացված բոլոր հուշարձաններում Օրեն Կալա (աղ. 3), Դվին (աղ. 1, 2), Տիգրանակերտ (աղ. 4), Ատրպատականի Գանձակ, Սամառա, Քուֆի, Բասրա (աղ. 1, նկ. 4, 6, աղ. 2, նկ. 1, 4) գործող խեցեգործական կենտրոնները, մրցունակության տարբեր աստիճաններով և քաղաքական կողմնորոշման տարբեր հակումներով հանդերձ, գործել են իշխող վերնախավի շահերից ելնելով, և հաղորդակցման ճանապարհային կապերով տնտեսական քաղաքականության մեջ քաղաքական բոլոր միավորումները վարել են միասնական ու հանդուրժողական քաղաքականություն: Մեր խորին համոզմամբ այս կարգի խեցեղենը Արաբական խալիֆայության, Ատրպատականի և Այսրկովկասի ու Հայաստանի տարածաշրջանի խեցեգործական օջախների մենաշնորհն էր՝ նկատի առնելով նույն ժամանակաշրջանում Բուլեհիդների և Սամանիթների (Հարավային

³⁵ **Симонян А.** Новая трактовка социокультурной общности эпохи средней бронзы Армении [Պատմա-բանասիրական հանդես (ՊԲՀ), 1990, № 1, էջ 201, 203]; **Караханян Г., Мирзоян В.** Древние захоронения с поливной керамикой (ՀՍՍՌ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1976, № 11, էջ 71-73); **Խաչատրյան Ժ.**, Հայաստանի անտիկ շրջանի ջնարակած խեցեղենը (ՊԲՀ, 1977, № 3, էջ 184-192), **Ղաֆադարյան Կ.**, Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. II, Ե., 1982, էջ 118, աղ. XII, նկ. 3, 4:

³⁶ **Якобсон А.** Средневековая поливная керамика как историческое явление (Византийский временник, т. 39, М., 1978, с. 148-159).

Իրան, Կենտրոնական Ասիա) ամիրայական կազմավորումների տարածքում գործող խեցեգործական օջախների նույնատիպ արտադրանքը, որն էապես տարբերվում էր ոչ միայն գունային կոլորիտով (տիրապետող էր սևը, դարչնագույնը և նարնջագույնը), այլև արտաքին ձևաստեղծման տիպերով (գերակշռել են լայն սկուտեղներ ու բաց թասեր): Մեծ էր տարբերությունը նաև հորինվածքներում հարդատարրերի մշակումներում: Նկարագարող վարպետի հմուտ ձեռագրով այդ օջախներում (Սոգդ, Չաչ, Աֆրասիաբ և այլն) զարդաձևերը դրսևորվեցին տարբեր ոճավորումներով, իսկ արաբատառի մուտքը դարձավ անոթները հարդարելու նոր մտահղացում ու միջոց (աղ. 5)³⁷:

Թեմայից բխող մի այլ դիտարկումով պիտի հայտնել, որ IX-X դարերի ջնարակած խեցեղենի բացակայությունը ՀՊԹ Անիի № 123 ժողովածուում իրողություն է: Դրամագետ Ա. Զոհրաբյանը Բագրատունիների դրամների տարակացության առեղծվածը մեկնաբանել է իբրև ժամանակի քաղաքական ու իրավական միջավայրում տիրող հակասական մթնոլորտի հետևանք³⁸: Թերևս ջնարակած խեցեղենի բացակայության պատասխանը ևս փնտրենք Արաբական խալիֆայության և Սաջյանների վարած տնտեսական քաղաքականության այն շերտերում, որի նպատակն էր նախ բաժան-բաժան անել Բագրատունիների տարածքները և չեզոքացնել նոր կազմավորվող Անի քաղաքի տնտեսական զարգացման դինամիկան:

Այսպիսով, պեղված հուշարձանների արդյունքներով եզրակացնում ենք, որ IX-X դարերի ջնարակած խեցեղեն երևույթը, անկախ քաղաքական իրավիճակից, քաղաքային մշակույթի զարգացման արդյունք էր իշխող վերնախավի ճաշակի համապատասխան պահանջարկով: XI-XIII դարերում արձանագրվում է դրա զարգացման օրգանական շարունակությունը, երբ խեցեգործների ստեղծագործական նոր հնարներով մշակվեցին տեխնոլոգիական առաջավոր միջոցներ՝ փորագրություն, գծագրություն: Հարդարանքի մանրամասներում բուսական և կենդանական աշխարհի միջավայրում կենցաղային ու էպիկական սյուժեները խեցեգործության մեջ վերածվեցին գեղարվեստական պատկերագրության յուրօրինակ մտա-

³⁷ Տե՛ս **Шишкина Г.** Глазурованная керамика Согда (вторая половина VIII – начало XIII в.), Ташкент, 1979; **Брусенко Л.** Глазурованная керамика Чача IX-XII вв., Ташкент, 1986; **Вяткин В.** Афрасиаб-городище былого Самарканда, Ташкент, 1928.

³⁸ **Զոհրաբյան Ա.**, Հայ Բագրատունիների դրամների բացակայության առեղծվածը (Քրիստոնյա Հայաստան, Ե., 2000, էջ 111-114):

ծողության արգասիքի, և անոթը առօրյա կյանքում, կիրառական նշանակությունից բացի, գնահատվեց իբրև գեղագիտական արժեք:

ИССЛЕДОВАНИЕ ГЛАЗУРОВАННОЙ КЕРАМИКИ IX-X ВВ. В ИСТОРИКО-ГЕОГРАФИЧЕСКОМ КОНТЕКСТЕ

ЖАМКОЧЯН А.С.

Резюме

Торговля между Арабским халифатом, Атропатеной, Северо-Восточной и Центральной Арменией осуществлялась посредством коммуникационных путей, проходивших через Ардебил, Орен-Кала, Юнан, Двин. Найденная в результате раскопок обширная коллекция глазурованной керамики из названного региона указывает на технологическую, морфологическую и орнаментальную общность продукции из отмеченных центров. Сопоставив выявленные материалы с керамическими изделиями из среднеазиатских центров, можно выделить отличительные особенности производства глазурованной керамики двух географических ареалов и преимущества каждого из этих центров.

INVESTIGATION OF THE 9th-10th CC. GLAZED POTTERY IN HISTORICAL AND GEOGRAPHICAL CONTEXT

A. ZHAMKOCHYAN

Abstract

The trade relations between Atropatene, North East and Central Armenia were realized through communication arteries going through Ardebil, Oren Kala, Yunan and Dvin. The production of glazed pottery known from excavations of this region demonstrates similarities in technological, morphological and ornamental approaches. By juxtaposing the mentioned materials with ceramic objects from Central Asian centres, we can underline characteristic traits of glazed pottery production of both geographical areas as well as the preveleges of each of them in development of corresponding ceramic production.

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՕԺՏՎԱԾ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆՁՆԱՅԻՆ ԳԾԵՐԻ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՄԱՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ԱՌԱՔԵԼՅԱՆ Մ.Ա.

Օժտվածության հասկացման հարցում և բազմաթիվ սահմանումների մեջ գերակայում է կոգնիտիվ ուղղվածությունը՝ որպես ընդունակությունների բարձր մակարդակ կամ ինտելեկտուալ կարողություններ, որը պատմականորեն համարվում է առավել մշակված և հիմնավորված մոտեցում: Խորքային պատկերացում կազմելու համար առանցքային է օժտվածության դիտարկումը հոգեբանության մի քանի տեսությունների լույսի ներքո: Ըստ հոգեվերլուծության՝ ստեղծագործելու մեխանիզմը սեքսուալ էներգիայի սուբլիմացիան է, ըստ Ա. Ադլերի՝ սեփական թերաթեքության զգացումը հաղթահարելու, գերազանցության մեջ, որը կարող է դրսևորվել գերփոխհատուցմամբ՝ ստեղծագործական մեծ ձեռքբերումների հասնելով: Ըստ Կարլ Գ. Յունգի անալիտիկ տեսության՝ մարդու կյանքի վերջնական նպատակը «Ես»-ի իրականացումն է, անկրկնելի, ամբողջական անհատականության կայացումը: Ա. Մասլոուի տեսության համաձայն՝ ինքնաիրականացման բարձրագույն պահանջմունքը միջին մարդու մեջ միայն 10% է բավարարվում, իսկ ստեղծագործող մարդկանց մեջ գերակայում է՝ անկախ քաղցի, ծարավի և նույնիսկ կյանքին վտանգ ներկայացնող իրավիճակներից: Միայն օժտված մարդիկ են (բնակչության 1%-ից քիչ) հասնում իրենց ներուժի իրականացմանը, իսկ մեծամասնությանը խանգարում են սեփական ռեսուրսների չիմացությունը, սոցիալական և մշակութային միջավայրի խոչընդոտները, անվտանգության և ապահովության պահանջմունքի բացասական ազդեցությունը¹: Հիմք ընդունելով այս տեսական մոտեցումները, այնուամենայնիվ, նշենք, որ օժտված անհատները ևս վեր-

¹ Хьелл Л., Зиглер Д. Теории личности, СПб., 2007.

ևում նշված անձնային, սոցիալական, մշակութային սահմանափակումների պատճառով հաճախ այդպես էլ չեն հասնում ամբողջական անձնային զարգացման և ընդունակությունների դրսևորման: Սույն աշխատանքի նպատակն է ուսումնասիրել անձնային, սոցիալ-հոգեբանական հարմարման գենդերային տարբերությունները, որոնք բնորոշ են օժտված պատանիներին: Մենք ենթադրում ենք, որ օժտված աղջիկներն ու տղաները տարբերվում են իրենց անձնային որակներով, սոցիալ-հոգեբանական հարմարման դրսևորումներով, որոնք ինչպես կարող են օգնել նրանց ինքնազարգացմանը, այնպես էլ խոչընդոտել դրան:

Սույն հետազոտական աշխատանքը վերաբերում է ինտելեկտուալ ընդունակություններով օժտված աղջիկների և տղաների գենդերային տարբերությունների ուսումնասիրությանը:

Մեթոդ և մեթոդիկաներ

Հետազոտությունն անցկացվել է Երևանի մի շարք դպրոցներում՝ «Շիրակացու ճեմարան» միջազգային գիտակրթահամալիր, «Քվանտ» վարժարան, Կարեն Դեմիրճյանի անվան հ. 139 ավագ դպրոց, Բենիամին ժամկոչյանի անվան հ. 119 ավագ դպրոց: Դպրոցներից երկուսը՝ «Շիրակացու ճեմարան» գիտակրթահամալիրը և «Քվանտ» վարժարանը, ընտրվել են որպես բարձր ինտելեկտուալ ընդունակություններ ունեցող երեխաների կրթօջախներ: Հետազոտվել է ավագ դպրոցի ավելի քան 500 դպրոցական, տարիքային խումբը՝ 16-18, տարիքային դասակարգումը՝ ըստ Գ. Կրայգի, ըստ որի՝ 12-19 տարեկանը համարվում է դեռահասության, իսկ վերին շեմը՝ պատանեկության տարիք²:

Կիրառել ենք Զ. Ռենզուլիի եռամոդել հոգեդիագնոստիկ համակարգը, ըստ այդմ՝ օժտվածություն երեք կարևոր բաղադրիչների միասնությունն է, որոնք են՝ ինտելեկտուալ ընդունակություններ, կրեատիվություն (ստեղծարարություն) և ուսումնական մոտիվացիա³: Ինտելեկտուալ ընդունակությունների հոգեդիագնոստիկայի համար կիրառել ենք Կետտելի «Մշակութից անկախ» ինտելեկտի թեստը⁴, ստեղծարարությունը որոշելու համար՝ Պոլ Թորենսի ստեղծագործական մտածողության գնահատման մեթոդի-

² Крайг Г., Бокум Д. Психология развития, 9-е изд., СПб., 2005.

³ Տե՛ս Առաքելյան Մ., Օժտված երեխաների հոգեբանական դիագնոստիկա, Ե., 2017:

⁴ Տե՛ս Новые тесты IQ; Сост. Кошелева М.А., Ростов н/Д, 2003:

կան՝ «Ավարտիր նկարը» ենթաթեստը⁵, իսկ մոտիվացիայի մակարդակը որոշելու համար՝ Մ.Ի. Լուկյանովայի, Ն.Վ. Կալինինայի ուսումնական մոտիվացիայի ուսումնասիրման մեթոդիկան⁶:

Սոցիալ-հոգեբանական հարմարման առանձնահատկություններն ուսումնասիրելու համար կիրառվել է Կարլ Ռոջերսի և Ռոզալինդ Դայմոնդի՝ ԱՄՆ-ում 1954թ. ստեղծած մեթոդիկան: Ռուսերեն հարցարանը ադապտացվել է 1987 թ., սակայն լայն տարածում է ստացել 2004 թ. Ա.Կ. Օսնիցկինի մոդիֆիկացրած տարբերակը, որը և օգտագործել ենք մեր հետազոտության մեջ: Անձնային հարցարանը կազմված է 101 հարցից և վերլուծվում է ըստ հետևյալ սոցիալ-հոգեբանական ինտեգրալ հատկանիշների՝ հարմարում, ինքնաընդունում, ուրիշներին ընդունում, հուզական հարմարավետություն, ինտերնալություն և դոմինանտում: Հարցարանն ուղղված է դուրս բերելու նոր իրավիճակներում հարմարման և դրա հետ կապված անձնային առանձնահատկությունները⁷:

Այսպիսով, բոլոր 500 հետազոտվողից օժտված են դուրս բերվել միայն 35-ը, որը հետազոտվողների ընդհանուր քանակի 7%-ն է: Հետազոտությանը մասնակցել են փորձարարական խմբի 35 և ստուգիչ խմբի 35 պատանիներ, ընդհանուր քանակը՝ 70:35 օժտված պատանիներից 14-ը եղել են իգական, 21-ը՝ արական սեռի ներկայացուցիչներ: Ստուգիչ խմբի միջին ընդունակություններով պատանիներից՝ 24 իգական, 11 արական սեռի ներկայացուցիչներ: Համեմատական վերլուծություն անցկացնելու համար օգտագործել ենք SPSS 22 վիճակագրական փաթեթը, T-Test մեթոդը՝ երկու անկախ խմբերի համար, P նշանակալիության արժեքը՝ <.05:

Արդյունքներ

Աղյուսակ 1-ում ներկայացված է փորձարարական և ստուգիչ խմբերի սոցիալ-հոգեբանական հարմարման գենդերային տարբերությունները: Աղյուսակի առաջին հատվածում իգական սեռի փորձարարական և ստուգիչ խմբերի ներկայացուցիչների արդյունքներն են, երկրորդում՝ արական:

⁵ Տե՛ս **Туник Е.Е.** Лучшие тесты на креативность. Диагностика творческого мышления, СПб., 2013:

⁶ Տե՛ս **Лукьянова М.И., Калинина Н.В.** Психолого-педагогические показатели деятельности школы: критерии и диагностика, М., 2004:

⁷ Տե՛ս **Райгородский Д.Я.** Практическая психодиагностика. Методики и тесты. Учебное пособие, Самара, 2001:

Թեև փորձարարական խմբի արդյունքները շատ մոտ էին նշանակալիության գործակցին, սակայն տարբերվում էին միայն ըստ *հուզական հարմարավետության* (.004) սանդղակի: Փորձարարական և ստուգիչ խմբի տղաները նշանակալիորեն տարբերվում էին *հարմարման* (.002), *հուզական հարմարավետության* (.003) և *ինտերնալության* (.030) ցուցանիշներով:

Ինչպես տեսնում ենք, օժտված աղջիկների սոցիալ-հոգեբանական ապահարմարումը հուզական դրսևորում ունի, իսկ տղաների մոտ դրան ավելանում է նաև սոցիալական բաղադրիչը: Ըստ հարմարում սանդղակի՝ աղջիկներն ավելի հարմարված են, քան տղաները, որը բացատրելի է հատկապես պատանեկության տարիքում (հիշենք, որ դա ավագ դպրոցական տարիքն է) աղջիկների սեռադերային վարքի յուրացման, ինչպես նաև դաստիարակության և կարծրատիպերի արդյունքում առավել հարմարողական վարքի սոցիալական կարևորությամբ և դրանց ներքնայնացմամբ: Ինչպես նշվում է գրականության մեջ՝ աղջիկները միջին դպրոցում արդեն խուսափում են ներկայացնել իրենց մտավոր բացառիկ կարողությունները՝ փոխարենը փնտրելով խմբային նորմերին ավելի լավ հարմարվելու մեխանիզմներ⁸:

Օժտված տղաները, ի տարբերություն հասակակիցների, ավելի նպատակային են իրենց կյանքում, հակված վերցնելու պատասխանատվություն, հետևելու իրենց ներքին մղումներին և միջին ցուցանիշով գերազանցում են նաև օժտված աղջիկներին: Սա կարևոր անձնային գործոն կարող է լինել նաև բացատրելու օժտված տղաների ավելի մեծ քանակական հարաբերակցությունը՝ աղջիկների համեմատությամբ, ինչպես նաև կարևոր է ուսումնասիրել դրան նպաստող սոցիալական գործոնները: Այս առումով տղաներն ավելի հաճախ են խրախուսվում ծնողների, ուսուցիչների և ընդհանրապես սոցիումի կողմից իրենց ընդունակությունների, մասնագիտական առաջընթացի տեսանկյունից, քան աղջիկները, որոնց դեպքում առավելապես շեշտադրվում է աշխատասիրությունը, իսկ հետագայում՝ ընտանիքի, մայրության կարևորությունը: Ուշագրավ է օժտված աղջիկների (83.3/57.0) և տղաների (81.3/68.0) միջին արդյունքների համեմատությունը՝ ըստ ինքնաընդունման և ուրիշներին ընդունելու հատկանիշների, որից եզրակացնում ենք, որ աղջիկներն ավելի քննադատական կարող են լինել ուրիշների նկատմամբ, քան տղաները:

⁸ Տե՛ս **Щебланова Е.И.** Неуспешные одаренные школьники, М., 2008:

Աղյուսակ 1

**Սոցիալ-հոգեբանական հարմարման գենդերային
առանձնահատկությունները փորձարարական և ստուգիչ խմբերում**

Աղջիկներ

Հատկանիշներ	Փորձարարական խումբ	Ստուգիչ խումբ	<P
Հարմարում	68.4	62.6	.146
Ինքնաընդունում	83.3	75.6	.090
Ընդունել ուրիշներին	57.0	63.9	.070
Հուզական հարմարավետություն	38.1	56.5	.004
Ինտերնալություն	71.2	62.4	.055
Դոմինանտում	66.5	59.7	.142

Տղաներ

Հատկանիշներ	Փորձարարական խումբ	Ստուգիչ խումբ	<P
Հարմարում	45.3	66.1	.002
Ինքնաընդունում	81.3	81.2	.987
Ընդունել ուրիշներին	68.0	61.5	.201
Հուզական հարմարավետություն	42.2	65.3	.003
Ինտերնալություն	74.5	65.5	.030
Դոմինանտում	68.6	58.8	.099

Անձի հոգեբանական կերպարի դուրսբերման համար կիրառվել է «Մեծ հնգյակ (Big Five)» հարցարանը: Սա Կետտելի 16 գործոնային հարցարանի ձևափոխված տարբերակն է, ստեղծել են Ռ. Մակկրաեն և Պ. Կոստան: Այն ավելի կարճ է, անձնային կերպարը դուրս է բերվում առավել ընդհանրացված, ինչպես նաև մշակույթից կախվածությունը համեմատաբար փոքր է՝ ի տարբերություն մյուս թեստերի, քանի որ ընդգրկված են առավելապես կայուն անձնային գործոններ: Հարցարանը կազմված է 75 ծայրահեղ երկբևեռներով ներկայացված դատողություններից, դուրս է բերում հետևյալ հինգ մեծ գործոնները (դիսպոզիցիաներ)՝ էքստրավերսիա-ինտրովերսիա, կապվածություն-օտարվածություն/անկախություն, վերահսկում-իմպուլսիվություն, հուզական անկայունություն-հուզական կայունու-

թյուն, էքսպրեսիվություն-գործնականություն, որոնք իրենց հերթին ներկայացված են հինգ անձնային գծերով⁹:

Աղյուսակ 2-ում ներկայացված են օժտված աղջիկների և տղաների անձնային գծերի և գործոնների նշանակալի տարբերությունները ստուգիչ խմբի աղջիկների և տղաների համեմատությամբ: Ինչպես տեսնում ենք, ստուգիչ խմբի աղջիկների շրջանում բարձր է էքստրավերտության մեջ մտնող *տրամադրությունների որոնում* անձնային գիծը, փորձարարական խմբի համեմատությամբ (.013 նշանակալի տարբերությամբ): Ստուգիչ խմբի աղջիկներն իրենց վարքում կոկիկ են (.041), բարձր է ինքնավերահսկումը (.011), վերահսկումը (.006) և հասկացումը (.009), ինչպես նաև երազկոտ են (.038) և տարբերվում են օժտված աղջիկներից իրենց զգայունակությամբ (.003): Ստուգիչ խմբի աղջիկների շրջանում վերահսկողության լոկուսը արտաքին է՝ վարքում իրենց վերահսկելու, գիտակցական, զգոն ու կոկիկ լինելու, դիմացիներին ավելի հասկացող դիրքից ընկալելու տեսանկյունից: Օժտված աղջիկների շրջանում արտահայտված է նախատրամադրվածությունը նեյրոտիզմին (.001), որն արտահայտվում է հետևյալ անձնային գծերի դրսևորումներով՝ տագնապայնություն (.000), դեպրեսիվություն (.000), ինքնաքննադատություն (.020), հուզական անկայունություն (.001): Նեյրոտիզմի նախատրամադրվածություն (.038) ունեն նաև օժտված տղաները՝ ինքնաքննադատություն (.027), հուզական անկայունություն (.034) անձնային գծերի դրսևորմամբ:

Ինչպես տեսնում ենք, հուզական ոլորտի դժվարություններն առավելապես բնորոշ են օժտված աղջիկներին, քան տղաներին, թեև վերջիններս ևս հակված էին ինքնաքննադատության և հուզական անկայունության: Մենք կարծում ենք, որ նման արդյունքները կարող են բացատրվել օժտված աղջիկների հատկապես ներքին սահմանափակումների ու խոչընդոտների առկայությամբ:

⁹ **Хромов А.Б.** Пятифакторный опросник личности: учебно-методическое пособие, Курган, 2000.

Աղյուսակ 2

Անձնային գծերի գենդերային տարբերությունները փորձարարական և ստուգիչ խմբերում

Աղջիկներ

Անձնային գծեր	Փորձարարական խումբ	Ստուգիչ խումբ	<P
Տպավոր. որոնում	8.57	11.67	.013
Հասկացում	7.64	10.33	.009
Վերահսկում	48.50	55.29	.006
Կոկիկություն	8.50	11.25	.041
Ինքնավերահսկում	8.64	11.50	.011
Նեյրոտիզմ	66.29	54.29	.001
Տազնապայնություն	13.43	9.63	.000
Դեպրեսիվություն	14.14	10.92	.000
Ինքնաքննադատություն	12.93	10.04	.020
Հուզական անկայունություն	14.21	11.63	.001
Երազկոտություն	11.00	12.92	.038
Զգայունակություն	10.50	13.29	.003

Տղաներ

Անձնային գծեր	Փորձարարական խումբ	Ստուգիչ խումբ	<P
Նեյրոտիզմ	56.48	49.27	.032
Ինքնաքննադատություն	11.62	8.55	.027
Հուզական անկայունություն	12.43	10.09	.034

Միջին և ավագ դասարաններում հատկապես օժտված աղջիկների շրջանում նկատվում է սեփական հնարավորությունները ցույց տալու վախ, և իջնում է ինքնավստահությունը սեփական անձի նկատմամբ, նրանց մեջ խորանում է կասկածը սեփական ինտելեկտուալ կարողությունների վերաբերյալ և զգում են իրենց ավելի քիչ ընդունակ, քան իրականում կան: Նրանք սկսում են խուսափել մրցակցությունից, որպեսզի պահպանեն շրջապատողների հետ կապը, ընդունվածությունը: Ըստ Մյունխենյան լոնգիտյուդ հետազոտության՝ օժտված աղջիկները, կանայք, ի տարբերություն հակառակ սեռի, առանձնանում են տազնապայնությամբ և հուզական անկայունությամբ, ինչպես նաև տարիքի ընթացքում սեփական կարողությ-

յունների հանդեպ աճող անվստահությամբ¹⁰: Օժտված մարդկանց հատուկ պերֆեկցիոնիզմը, ըստ մի շարք հետազոտությունների, հատկապես բնորոշ է օժտված աղջիկներին, իսկ հաճախ ոչ առողջ, դիսֆունկցիոնալ պերֆեկցիոնիզմը հիմք է ծնողների քննադատության նկատմամբ ուժեղ արտահայտված անհանգստության: Աղջիկների մեջ անհաջողություններից վախը, փախուստը հանգեցնում են արտահայտված տագնապայնության, քանի որ ծնողների մեծ սպասելիքները վերածվում են ներքին ստանդարտների, որոնք առաջացնում են ուժեղ վախ սխալվելուց և սպասելիքները չարդարացնելուց¹¹:

Քննարկում

Համադրելով այս երկու մեթոդիկաների արդյունքները՝ կարող ենք ասել, որ օժտված պատանիների մոտ կան գենդերային տարբերություններ, մասնավորապես՝ ըստ սոցիալ-հոգեբանական հարմարման արդյունքների, աղջիկներն ավելի պասիվ են իրենց վարքում, հուզականորեն լարված և ուրիշների ու իրենց նկատմամբ ավելի չընդունող, քան տղաները: Չնայած հուզական ոլորտի դժվարություններին, օժտված պատանիներն ընդգծված տարբերվում են նպատակադրմամբ և պատասխանատվությամբ: Ըստ անձնային գծերի և գործոնների արտահայտվածության՝ աղջիկները աչքի են ընկնում նեյրոտիզմի բարձր մակարդակով՝ արտահայտված տագնապայնությամբ, հուզական անկայունությամբ, դեպրեսիվությամբ, ինքնաքննադատությամբ: Տղաները ևս ունեն հուզական անկայունության արտահայտված տարբերություններ, սակայն ոչ այդքան լայն և ընդգրկուն դրսևորմամբ, որքան աղջիկների մոտ է: Հասկանալի է, որ ներքին և արտաքին, այս դեպքում անձնային և սոցիալ-հոգեբանական հարմարման արդյունքները տղաների և աղջիկների շրջանում ենթադրում են տարբերվող վարք՝ աղջիկների մեջ հանգեցնում ներքին կոնֆլիկտների, ցածր ինքնագնահատականի, հուզական խնդիրների, տղաների մեջ՝ հարմարման դժվարությունների, հուզական լարվածության և այլն: Օժտված աղջիկների և տղաների նման տարբերությունների պատճառ են նաև ծնողների, ուսուցիչների կարծրատիպերը և համոզմունքները, ավանդական

¹⁰ Хеллер К.А., Перлет К., Сьервальд В. Лонгитюдное исследование одаренности (Вопросы психологии, 1991, N 2, с. 120-127).

¹¹ Տե՛ս Шибланова Е.И., նշվ. աշխ.:

սպասկերացումները աղջիկների և տղաների սեռադերային վարքի, ընդունակությունների վերաբերյալ:

ГЕНДЕРНЫЕ ОСОБЕННОСТИ ОДАРЕННОЙ МОЛОДЕЖИ В КОНТЕКСТЕ ЛИЧНОСТНЫХ ЧЕРТ И СОЦИАЛЬНО- ПСИХОЛОГИЧЕСКОЙ АДАПТАЦИИ

ԱՐԱԿԵԼՅԱՆ Մ.Ա.

Резюме

В конце двадцатого века стали проводиться исследования в сфере гендерных особенностей одаренной молодежи. Среди 500 старшеклассников было выявлено 35 одаренных представителей молодежи. Исследования показали различия как на личностном уровне, так и в их поведении, что обусловлено внешними – социальными, культурными и внутренними – психологическими факторами.

GENDER DIFFERENCES OF GIFTED ADOLESCENTS IN THE CONTEXT OF PERSONAL TRAITS AND PSYCHOSOCIAL ADAPTATION


M. ARAKELYAN

Abstract

At the end of the twentieth century research was begun on gender characteristics of gifted adolescents. Among the 500 high school students, 35 high school gifted adolescents were identified. Studies have shown differences both at the personal level and in their behavior, which is due to external social, cultural and internal psychological factors.

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայ պարբերական մամուլի պատմություն. 1900-1922, հ. 2, պատասխանատու խմբագիրներ՝ Ա. Խառատյան, Լ. Գևորգյան, Ե., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2017, 786 էջ:



ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտը «Մեսրոպ արք. Աշճեան» մատենաշարով լույս է ընծայել «Հայ մամուլի պատմություն» աշխատության երկրորդ հատորը, որն ավելի վաղ էր պատրաստվել տպագրության: Այն ընդգրկում է հայ մամուլի պատմության մի կարևոր ու ճակատագրական ժամանակաշրջան՝ 1900-1922 թվականները: Գիրքը բովանդակում է սովորաբար հայերեն թերթերի և ամսագրերի պատմությունը՝ սկսած «Մշակից» և վերջացրած հայ քաղաքական կուսակցությունների մամուլով:

Հատորի նյութերը դասավորված են ժամանակագրական և աշխարհագրական

սկզբունքներով, դրանք գաղափարական և քաղաքական ուղղությունների տրոհելու մոտեցումով:

Թերթերի և ամսագրերի վիթխարի քանակությունը դասակարգելիս հաշվի է առնվել մամուլի բովանդակային ընդհանրությունը: Գլուխները վերնագրվել են ըստ թեմաների՝ երգիծական, մանկավարժական, մանկապատանեկան, ազգային կուսակցություններ և այլն:

Հատորի հեղինակները կարևորել ու գնահատել են մամուլի հասարակական-քաղաքական արժեքը՝ ելնելով այն իրողությունից, որ մամուլն իր սկզբնավորումից մինչև օրս հիմնականում և սկզբունքորեն ունեցել է հասարակական ուղղություն և ուղղվածություն: 1900-1922 թթ. ընկած շրջանում լույս տեսած հայ պարբերականների գաղափարական բովանդակության արժևորման ու գնահատման մեջ որպես առաջնային չափանիշ նկատի են առնվել հենց հասարակական կողմնորոշումները:

Հայ պարբերական մամուլը բնութագրվում և գնահատվում է ոչ թե որպես զուտ ազգային, այլ, ընդհանուր առմամբ, քաղաքակրթական անցուղարձին,

հարևան և համաշխարհային այլ ազգերի պատմությանն ու մշակույթին լծորդված իրողություն:

Հայ պարբերական մամուլի պատմության սույն պատկառելի հատորն ընդգրկում է 1900-1922 թթ. ժամանակաշրջանի արևմտահայ, արևելահայ նաև գաղութահայ իրականության մեջ լույս տեսած անհավատալիորեն մեծ թվաքանակի բազմազան և բազմաբնույթ նյութեր: Պարբերականների էջերում բնականորեն արտացոլվել են ազգային և համաշխարհային պատմության կարևորագույն ու շրջադարձային իրադարձությունները, մասնավորապես հայ ազգային-ազատագրական պայքարի ընթացքը, հայության տարած ամենօրյա նվաստացումները, սոցիալական և ազգային հարստահարությունները: Պատշաճ կերպով լուսաբանվել և գնահատվել են համաշխարհային պատմական իրադարձությունները, ինչպես՝ 1905 և 1917 թթ. բալկանյան պատերազմները, Առաջին համաշխարհային պատերազմը, Հայոց ցեղասպանությունն ու հայրենագրկումը, ցարիզմի անկումն ու հայկական պետականության վերածնունդը և բազմաթիվ այլ իրողություններ: Հայ ժողովրդի ցավն ու բողոքը, տազնապներն ու ընդվզումը, հոգեկան ալեկոծությունները լավագույնս արտահայտված են XX դարասկզբի հայ պարբերական մամուլի էջերում: Այս ամենով հանդերձ, նաև հայ ժողովրդի սոցիալական, քաղաքական, հոգևոր-բարոյական և մշակութային կյանքի տարեգիրն է: Հատորի հեղինակներին հաջողվել է քսաներորդ դարասկզբի հայ մամուլը գնահատել ու արժևորել նաև ժանրային զարգացումների տեսանկյունից (էսսե, ակնարկ, լրատվական բնույթի հրապարակումներ, քաղաքական տեսություններ ու վերլուծականներ և այլն): Զուգահեռաբար համադրվում են հայ մամուլի լրագրական ու լրատվական արժեքները եվրոպականի և ռուսականի հետ:

Աշխատությունը վիթխարի նյութ է տալիս հայ ժողովրդի արևմտահայ և արևելահայ հատվածներում տեղի ունեցած հասարակական-քաղաքական բազմաբնույթ անցուդարձերի, ազգային-ազատագրական շարժման ընթացքի, նրա գործիչների ու գաղափարախոսության վերաբերյալ: Հատորի էջերում հանդես են գալիս հայ մամուլի և հրապարակախոսության բազմաթիվ ճանաչված ու երևելի դեմքեր՝ սկսած Գր. Արծրունուց, Ալ. Քալանթարից, Ալ. Ծատուրյանից, Ա. Չոպանյանից, Վրթ. Փափագյանից, Հովհ. Տեր-Մարտիրոսյանից (Ա-Դո), Լեոյից, Հր. Աճառյանից, Ալ. Շիրվանզադեից, Գ. Լևոնյանից մինչև Հովհ. Գազանճյան, Ա. Անտոնյան, Հ. Մամուրյան, Մ. Գոչունյան, Ռ. Զարդարյան, Հ. Արփիարյան, Թվկատինցի, Օ. Չիֆթե-Սարաֆ, Ռ. Որբերյան, Թեոդիկ. Ե. Թոլայան (Կավոռո), Ս. Բյուրատ, Վ. Թեքեյան, Ար. Արփիարյան, Տիրան

Քելեկյան, Միք. Կյուրճյան, Վ. Քյուրճյան, Եր. Օտյան, Մ. Տամատյան, Վ. Մալեգյան և շատ ուրիշներ:

Գրքում ընդգրկված հայ պարբերական մամուլի պատմությունն ուսումնասիրելիս պարզապես հիանում ես այն հիրավի անձնուրաց, խիզախ և նպատակասլաց գործունեությամբ, որ բավական աննպաստ և բազում խոչընդոտներով լեցուն ժամանակներում ծավալել են հայ մամուլի, գրի և գրականության համեստ մշակներն ու երևելի գործիչները: Նրանք չեն ընկրկել ֆինանսական, նյութական և նույնիսկ ֆիզիկական սպառնալիքների առջև՝ անհավատալիորեն ծանր ու դժվարին հանգամանքներում շարունակելով իրենց գործն ու առաքելությունը: Բազում զրկանքների, հոգևոր և ֆիզիկական տառապանքների գնով ոչ միայն ապագայի հանդեպ հույս և հավատ են սփռել, այլև ժողովրդական հոծ զանգվածների մեջ գեղարվեստական միտք, գեղագիտական ճաշակ և զգացողություններ ձևավորել:

Եվ հաճախ հենց մամուլի միջոցով էին ընթերցողները ծանոթանում գրական նոր ստեղծագործությունների՝ պատմվածքներ, պոեմներ, բանաստեղծություններ, գրականագիտական հոդվածներ: Մամուլը կրթում, ազնվացնում էր մարդկանց միտք ու ճաշակը, նրանց մղում ճշմարտացի եզրահանգումներ անելու և դասեր քաղելու ընթացող քաղաքական կյանքում տեղի ունեցող գործընթացներից: Լրատվական ու գաղափարախոսական գործառույթները հայ պարբերական մամուլի օրգանները կատարել են և՛ խաղաղ ու անվրդով ժամանակներում, և՛ պատերազմական ծանր իրավիճակներում: Նրա գոյության համար ամենակործանարարը եղավ Առաջին համաշխարհային պատերազմը, որի բոցերի մեջ իր բնօրրանում ողջակիզվեց արևմտահայությունը: Արևմտահայ մամուլը ոչնչացավ իր ժողովրդի հետ միասին և նույն այդ ժողովրդի բեկորների հետ փյունիկի նման վեր հառնեց մոխիրներից՝ օտար ափերում՝ հին ու նոր գաղթավայրերում:

Այս և բազում այլ հարցերի և հարցադրումներ ծնող թեմաների ու գաղափարայնության շուրջն է կերտվել մամուլի պատմության ստվարածավալ, կոթողային աշխատությունը:

Ինչպես առաջաբանում գրում են պատասխանատու խմբագիրները՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Խառատյանն ու պատմական գիտությունների դոկտոր Լ. Գևորգյանը, հատորում ընդգրկվել են հիմնականում ամենակարևոր պարբերականները (իսկ նշված ժամանակաշրջանում լույս տեսած պարբերականների թիվը հազարից ավելի է), որոնք լույս են տեսել արևմտահայ ու արևելահայ մշակութային կենտրոններում, ինչպես նաև սփյուռքում: «Կարճակյաց հրատարակություն-

ները, «որոնք, թվում է, տևական հասարակական նշանակություն չէին կարող ունենալ, բնութագրվում են տվյալ միջավայրի հայ ընթերցողի մտավոր պահանջմունքների մասին ըստ հնարավորին ընդարձակ պատկերացում տալու նպատակով» (էջ 5):

Ընդգծենք, որ հատորում կարելին եղածի չափով լայն է ներկայացված հայ մամուլի աշխարհագրությունը, իսկ ընդգրկված պարբերականների մեծագույն մասն ուսումնասիրվում է առաջին անգամ: Թերևս որպես թերացում կարելի է մատնանշել այն հանգամանքը, որ գրքում չեն ընդգրկվել հայ առաքելական և հարանվանությունների (հայ կաթոլիկներ և բողոքականներ) կրոնական-եկեղեցական հրատարակությունները, որոնք առհասարակ դուրս են մնացել հայ մամուլի հետազոտողների տեսադաշտից:

Հեղինակները բազմավաստակ գիտնականներ են՝ Ա. Խառատյան, Լ. Գևորգյան, Մ. Մխիթարյան, Թ. Գալարյան, Հ. Աբրահամյան, Ս. Նազարյան, Պ. Մելիքյան, Օ. Փահլևանյան, Գ. Խուդինյան, Մ. Հովսեփյան, Խ. Բարսեղյան, Ա. Հակոբյան: Գիրքը նախատեսված է ինչպես գիտական և ուսանողական, այնպես էլ հասարակության լայն շրջանների համար:

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Ա.Հ.

Պատմական գիտությունների թեկնածու

ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ. Հայաստանի կոմպոզիտորների միություն-85, Ե., «Գիտություն» հրատ., 2017, 96 էջ:



Հայաստանի կոմպոզիտորների միությունը 2017 թվականին բոլորեց իր հիմնադրման 85-ամյակը: Միության համագումարները, պլենումները, հայ երաժշտության տասնօրյակները, փառատոները, մրցանակաբաշխությունները, ստեղծագործական երեկոները, նոր ստեղծագործությունների քննարկումները և մի շարք այլ միջոցառումներ, ինչպես նաև ՀԿՄ «Դիլիջան» ստեղծագործական տան Բեթհովենի անվան համերգային դահլիճը (1984 թ.) մեծապես նպաստել են հանրապետության երաժշտական կյանքի աշխուժացմանը և ժամանակակից հայ երաժշտության պրոպագանդմանը:

Միությունը ստեղծվել է 1932 թ. մայիսի 9-ի ՀԿ(Բ)Կ Կենտկոմի «Հայաստանի գրական-գեղարվեստական կազմակերպությունների վերակառուցման մասին» որոշմամբ, համաձայն որի՝ վերացվել է Հայաստանի պրոլետարական երաժիշտների ասոցիացիան, և Խորհրդային Հայաստանի երաժիշտների միասնական միության կազմակերպման համար ձևավորվել հանձնաժողով հետևյալ կազմով՝ Ա. Ոսկերչյան (նախագահ), Կ. Զաքարյան, Ա. Տեր-Ղևոնդյան, Հ. Ստեփանյան, Հ. Եղիազարյան, Ս. Գասպարյան, Ռ. Մելիքյան, Մ. Աղայան: Միության նպատակն էր համախմբել կոմպոզիտորներին սոցիալիստական շինարարության շուրջ և նպաստել նրանց ստեղծագործական զարգացմանը: Նորաստեղծ միության ակունքներում կանգնած գործիչները գիտակցում էին, որ այն պետք է ակտիվ համագործակցի հանրապետության երաժշտական կոլեկտիվների հետ՝ ինչ-որ առումով ուղղորդելով նրանց աշխատանքները: Միության աշխատանքները ղեկավարել են Արտաշես Ոսկերչյանը, Մուշեղ Աղայանը, Հարո Ստեփանյանը, Աշոտ Սաթյանը, Գրիգոր Եղիազարյանը, Ղազարոս Սարյանը, Էդվարդ Միրզոյանը, Ռոբերտ Ամիրխանյանը: 2013 թվականից ՀԿՄ նախագահն է Արամ Սաթյանը:

Միության անդամները մասնակցել են արտասահմանում կայացած տարբեր միջոցառումների՝ փառատոների, կոնֆերանսների, հեղինակային հա-

մերգների, կոնգրեսների, կոլոկվիումների, մշակույթի օրերի, փոխադարձ հանդիպումների, հյուրախաղերի, մրցույթների և այլն: Հայ կոմպոզիտորների գործերը հնչել են աշխարհի տարբեր երկրներում: դրա շնորհիվ աճել է հայ երաժշտության միջազգային ճանաչումը: ՀԿՄ-ն հյուրընկալել է իր արտասահմանցի գործընկերներին, սերտորեն համագործակցել է հանրապետության առաջատար երաժշտական կոլեկտիվների և մենակատարների հետ: Բեղմնավոր է եղել նաև երաժշտագիտական գործունեությունը: ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի հետ ակտիվ համագործակցության շնորհիվ գումարվել են գիտական նստաշրջաններ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործերով ազգային հանձնաժողովի հետ համատեղ կազմակերպվել միջազգային գիտաժողովներ:

Այսօր 85-ամյա միությունը, որը միավորում է հայաստանաբնակ և սփյուռքահայ պրոֆեսիոնալ մեր առաջատար կոմպոզիտորներին և երաժշտագետներին, ապրում է ստեղծագործական լիարյուն կյանքով: Այդուհանդերձ, մինչ օրս Հայաստանի կոմպոզիտորների միության գործունեության վերաբերյալ չկար ամփոփ մենագրություն, ավելին՝ չկային անգամ առանձին հոդվածներ:

ՀԿՄ հոբելյանի առիթով ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի և Հումանիզմի պրոբլեմների ակադեմիայի նախագահության որոշումներով ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունը լույս է ընծայել ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի տեղակալ, երաժշտության բաժնի վարիչ, Հայաստանի կոմպոզիտորների միության վարչության անդամ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննա Ասատրյանի «Հայաստանի կոմպոզիտորների միություն-85» վերնագրով՝ միության գործունեության 85-ամյա պատմությունը ներկայացնող գիտական առաջին մենագրությունը, որը հեղինակը սիրով նվիրել է «հայ երաժշտության անխոնջ մշակներին՝ հայ կոմպոզիտորներին և երաժշտագետներին, որոնք ստեղծագործական և կազմակերպական անդուլ աշխատանքով ու անմնացորդ նվիրումով նպաստել ու նպաստում են հայ երաժշտարվեստի զարգացմանը, իրենց հարազատ օջախի՝ Հայաստանի կոմպոզիտորների միության առաջընթացին» (էջ 5):

Արխիվային նյութերի, օտարալեզու սկզբնաղբյուրների և մամուլից քաղված տեղեկությունների հիման վրա հեղինակը թերթում է ՀԿՄ ստեղծման 85-ամյա պատմության էջերը՝ հետամուտ լինելով նրա անցած պատմական ուղու ելևէջներին և համառոտ շարադրում միության անցած արդյունաշատ ուղին, գործունեության ընթացքում արձանագրված ձեռքբերումները:

Մենագրության կառուցվածքը կուռ է և տրամաբանական: Բովանդակությանը համապատասխան՝ այն բաղկացած է հինգ գլուխներից:

Առաջին գլխում՝ «Հայաստանի կոմպոզիտորների միություն. հիմնադրումը և կայացումը», Ա. Ասատրյանը հանգամանորեն ներկայացնում է միության հիմնադրման շարժառիթները, շարադրում կազմակերպության հիմնախնդիրները, փաստագրական նյութով բացահայտում և անդրադառնում նրա առաջին ղեկավարի՝ Արտաշես Ոսկերչյանի գործունեությանը, որ ղեկավարել է միության աշխատանքները մինչև 1935 թ.: Հեղինակը ներկայացնում է Հ. Ստեփանյանի և վարչության ձևավորած ավանդույթները, որոնք հետագայում առանցքային նշանակություն էին ունենալու միության գործունեության համար՝ երաժշտության պրոպագանդան Հայաստանից դուրս, երաժշտագիտական մտքի զարգացման կարևորությունը, կոմպոզիտորների ստեղծագործական երեկոների կազմակերպումը: Առանձնացվել և ներկայացվել են Հայրենական մեծ պատերազմի տարիներին ստեղծված սիմֆոնիկ, կամերային օպերայի և բալետի արժեքավոր երկերը, կարևորվել է Արամ Խաչատրյանի կողմից Հայկական ԽՍՀ պետական հիմնի ստեղծումը (1944):

Երկրորդ գլխում՝ «Հայաստանի կոմպոզիտորների միությունը վերելքի ճանապարհին» (1941-1947 թթ.), Ա. Ասատրյանն անդրադարձել է Հայաստանի կոմպոզիտորների միության և ՀԽՍՀ ԳԱ արվեստների պատմության և տեսության սեկտորների միջև համագործակցության սկզբնավորմանը, խորհրդային կոմպոզիտորների հետ կապերի ամրապնդմանը, հայ երաժշտության տասնօրյակներին, կոմպոզիտորների նոր ստեղծագործությունների ունկնդրումներին, ստեղծագործական և հուշ երեկոներին, Հայաստանից դուրս հայ երաժշտության ներկայացմանը: Հեղինակը նշում է. «Զգալի է Աշոտ Սաթյանի դերը կոմպոզիտորների միության առաջընթացի գործում: Շարունակելով և խորացնելով Հ. Ստեփանյանի ավանդույթները՝ նա հանդես է գալիս մի շարք նախաձեռնություններով, որոնք Միության տարեգրության մեջ են մտնում «Առաջին անգամ» խորագրով» (էջ 28): Հեղինակը նշում է ինչպես Ա. Սաթյանի պաշտոնավարման հնգամյակում հայ կոմպոզիտորների համամիութենական ճանաչման շեշտակի աճը, այնպես էլ Գր. Եղիազարյանի պաշտոնավարման ընթացքում միության բեղմնավոր գործունեությունը:

Երրորդ՝ «Հայրենական երաժշտարվեստի առաջընթացի խթանման դիրքերում. Հայաստանի կոմպոզիտորների միության պատմության ծաղկման շրջանը» գլուխը նվիրված է Էդ. Միրզոյանի պաշտոնավարման տարիներին՝ 1956-1991 թթ., երբ մեծ արդյունավետությամբ էր աշխատում միության վարչությունը. «Վարչության նիստերում քննության են առնվում Միության գործունեության բոլոր ոլորտները՝ համագումարների, պլենումների, փառատոների, սիմպոզիումների, գիտական կոնֆերանսների կազմակերպում, երաժշտութ-

յան օրեր, Անդրկովկասի կոմպոզիտորների ավանդական հանդիպումներ Խորհրդային բանակի մարտիկների հետ, հանրապետական մանկապատանեկան երաժշտական շաբաթներ, մրցույթներ, հեղինակային և հոբելյանական երեկոներ, փոխանակային համերգներ, սեմինարներ, ստուգատեսներ» (էջ 44-45): Ի դեպ, այս շրջանում ակտիվ են գործում ստեղծագործական սեկցիաներն ու հանձնաժողովները, ստեղծվում է լրատվական «Вестник» տեղեկագիրը (1975-1991 թթ.), որն արձանագրում էր միության կարևոր իրադարձություններն ու փաստերը, շարունակվում է հայ երաժշտության պրոպագանդումը Հայաստանում և արտերկրում, աճում է հայ երաժշտության միջազգային ճանաչումը, միության անդամների արտասահմանում կայացած տարբեր միջոցառումների մասնակցությունը, շարունակում են երիտասարդ տաղանդների բացահայտմանն ու խրախուսմանն ուղղված աշխատանքները, արգասավոր է դառնում համագործակցությունը ՀՍՍՀ արվեստի ինստիտուտի հետ, սերտ կապեր են հաստատվում Սփյուռքի երաժշտական կազմակերպությունների և երաժշտական գործիչների հետ և այլն: Միությունը դառնում է ԽՍՀՄ կոմպոզիտորների առաջատար ջոկատներից մեկը. ԽՍՀՄ ժողովրդական արտիստի պատվավոր կոչում ստացած 98 կոմպոզիտորներից 10-ը հայեր էին: Ա. Ասատրյանը նշում է. «Է. Միրզոյանի ղեկավարության տարիներին տեղի են ունենում տարբեր, բայց գործնականում սերտորեն փոխկապակցված երկու գործընթացներ: Մի կողմից՝ Հայաստանի կոմպոզիտորների միությունը հաջողությամբ ինտեգրվում է համամիութենական կոմպոզիտորական կազմակերպության համակարգում (կառուցվածքային, կազմակերպական, ստեղծագործական), իսկ մյուս կողմից՝ առանձնանում իր ստեղծագործական ինքնատիպությամբ, ազգային ուրույն դիմագծով» (էջ 46): Այս գլխում արժևորվել է Արամ Խաչատրյանի՝ Միությանը ցուցաբերվող անգնահատելի համակողմանի օգնությունն ու աջակցությունը, նրա մեծ դերը առաջընթացի բոլոր փուլերում:

Չորրորդ գլխում՝ «Հայաստանի կոմպոզիտորների և երաժշտագետների միության գոյատևումն ու պահպանումը», հեղինակը ներկայացնում է 1991-2013 թթ. Ռեբերտ Ամիրխանյանի պաշտոնավարման ժամանակահատվածը: Հեղինակն անդրադառնում է միության առջև ծառացած խնդիրներին ու անելիքներին, միջոցառումներին ու ծրագրերին:

Հինգերորդ գլխում՝ «Հայաստանի կոմպոզիտորների միությունը վերածննդի ուղիներում», հեղինակն անդրադառնում է միության գործունեությանն Արամ Սաթյանի ղեկավարության տարիներին՝ 2013-2017թթ.: Նա քննության է առնում հայ ժամանակակից երաժշտության և երիտասարդ կոմպոզիտորների կամերային ստեղծագործություններին նվիրված «Դեբյուտ» փառա-

տոները, նրանցում ընդգրկված կոմպոզիտորների ստեղծագործությունները, կոլեկտիվների և մենակատարների ելույթները, ինչպես նաև նշում միջազգային շփումների և համագործակցության վերահաստատումը, անդրադառնում սփյուռքահայ և արտասահմանյան կառույցների հետ արդյունավետ համագործակցությանը, մրցույթներին և մրցանակաբաշխություններին, կարևորում ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հետ միության համագործակցության վերականգնումը, սեկցիաների և հանձնաժողովների աշխատանքը: Ա. Ասատրյանը եզրակացնում է, որ երաժշտական արվեստի կարևոր արժանիքներից մեկը դարձած կազմակերպությունը տասնամյակներ շարունակ եղել է ու պիտի կրկին դառնա հայ երաժշտական մշակույթի ամուր ողնաշարը՝ համախմբելով ինչպես պրոֆեսիոնալ կոմպոզիտորների և երաժշտագետների, այնպես էլ կատարողների:

Մենագրության հինգ գլուխներում՝ խորհրդանշական 85 էջի սահմաններում, հեղինակն առանձնացրել և քննության է ենթարկել միության յուրաքանչյուր ղեկավարի և վարչության իրականացրած ստեղծագործական գործունեության կարևոր ուղղություններն ու ձեռքբերումները, համագումարներն ու պլենումները, համերգներն ու մրցույթները, մրցանակաբաշխությունները, համագործակցության ծրագրերը և այլն, նշել յուրաքանչյուրի նորամուծությունները, շարադրել առաջացած խնդիրներն ու անելիքները, անդրադարձել ունկնդրումներին և համերգներին ներկայացված ստեղծագործություններին և հանգել երաժշտագիտական ընդհանրացումներին:

Կոմպոզիտորների միության պատմության ուսումնասիրության հիման վրա Ա. Ասատրյանը եզրակացնում է. «Միությունը շարունակում է իր արգասավոր գործունեությունը՝ հանուն հայ երաժշտության առաջընթացի, ի շահ երաժշտարվեստի զարգացման» (էջ 93): Ապա՝ «Բնականաբար հետագայում նորից անդրադարձ կլինի Միության պատմության է՛լ ավելի լրացված, առավել հարստացված: Ու թող իմ այս անդրանիկ փորձը հետագայում օգնի, հիմք դառնա ամբողջական ու լիակատար պատմության շարադրման համար՝ առանձին գրքի տեսքով, որտեղ ավելի հանգամանորեն կլուսաբանվեն նրա անցած ուղին և ձեռքբերումները, կնախանշվեն հետագա անելիքները» (էջ 93-94):

Աշխատության անվիճելի արժանիքներից է կարևորագույն փաստերի և նյութերի հագեցած ընդգրկումով կոմպոզիտորների միության ստեղծագործական գործունեության պատմական առանցքային փուլերի տրամաբանական հակիրճ շարադրանքի կուռ կառուցվածքը, որը հնարավորություն է ընձեռում ամբողջական պատկերացում կազմելու միության 85-ամյա գործու-

նեության հիմնական ուղղությունների, նպատակների, խնդիրների և բնագավառում ձեռք բերված նվաճումների վերաբերյալ:

Մենագրությունը ժամանակակից երաժշտության պատմության ուսումնասիրության գործում, անկասկած, կարևոր ներդրում է, որը, կարծում եմ, կնպաստի Կոմպոզիտորների միության գործունեության և հայ ժամանակակից երաժշտության պրոպագանդանը Հայաստանում և արտերկրում:

Ա.Ասատրյանի մենագրությունը (շապիկի ձևավորումը՝ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու Մարտին Հարությունյանի) ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի յուրահատուկ նվերն է Հայաստանի կոմպոզիտորների միությանը՝ հոբելյանի առթիվ:

Հ.Գ. Գրախոսվող աշխատությունն արժանացավ Հայաստանի կոմպոզիտորների միության «Տարվա լավագույն ստեղծագործություն-2017» մրցանակին՝ «Երաժշտագիտություն» անվանակարգում:

Սրտանց շնորհավորում ենք Ա. Ասատրյանին և մաղթում նորանոր հաջողություններ՝ ի նպաստ հայրենական երաժշտագիտության զարգացման:

ԱՐՏԵՄՅԱՆ Լ.Ռ.

Արվեստագիտության թեկնածու

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ՄԷԼԱԴԱ ԱՂԱՔԷԿԵԱՆԻ (1939-2015) ԿԵՆՍԱՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ. ՀԱՅԵՐԷՆԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԵՐ

Դիւրին չէ գրել մի մարդու մասին, որի հետ աշխատել ես կարճ մի ժամանակահատուած, սակայն կապուած ես եղել մասնագիտական գործընկերային յարաբերութիւններով... Թեեւ ընդմիջումներով, բայց պարբերաբար առնչուել ես նրա հետ գիտական գործունէութեան ընթացքում եւ առանց բացառութեան ամէն անգամ հանդիպել բարութեան, բարեացակամութեան, գիտնականին վայել բարեխիղճ ու սրտացաւ վերաբերմունքի:

Մէլադա Աղաբէկեանը այդպիսի մարդ էր: Պարզութեամբ եւ մարդամօտութեամբ նա գրաւում էր շատերին՝ թէ՛ գիտական ու մտաւորական բնագաւառներում աշխատողներին, թէ՛ սովորական գիւղացիներին ու արհեստավորներին: Գիտելիքների իր հարուստ պաշարը երբեք ցուցադրաբար չէր պարզում իբրեւ դրօշ, համեստ էր, բայց, միեւնոյն ժամանակ, անդադար պրպտող ու հետաքրքրասէր միտք ունէր: Դժբախտաբար, որքան բժախնդիր էր իր գիտական որոնումների մէջ, նոյնքան անուշադիր էր սեփական առողջական խնդիրների նկատմամբ...

Իր ձիրքն ու գիտելիքի հանդէպ սէրը նա ժառանգել էր ծնողներից, որոնք արմատներով Սիւնեաց աշխարհից էին: Ծնուելով Երեւանում (11.05.1939)՝ 10 տարեկան հասակից Մէլադան բնակուել է Սիւնիքի գեղատեսիլ քաղաքներից մէկում՝ Գորիսում, ուր նրանց ընտանիքը տեղափոխուել էր հօր՝ կուսակցական աշխատանքի նշանակուելու հետեւանքով: Դպրոցն (№ 2) ավարտել է հայրենի Գորիս քաղաքում եւ նոյն՝ 1956 թ., բարձրագոյն կրթութիւն ստանալու նպատակով, մեկնել մայրաքաղաք Երեւան: Այստեղ Մ. Աղաբէկեանն ընդունուել է ԵՊՀ Ռոմանա-գերմանական բանասիրութեան ֆրանսիական բաժինը:

Երբ 1961-ին Մ. Աղաբէկեանն ավարտում էր Երեւանի պետական համալսարանը, նրա դիպլոմային աշխատանքի ղեկավարը յայտնի փիլիսոփա-լեզուաբան Էդուարդ Աթայանն էր: Պաշտպանութեան ժամանակ Մ. Աղաբէկեանի դիպլոմայինը մեծ հետաքրքրութեան ու դրուատանքի է արժանանում

Ֆակուլտետում, եւ դասախօսները միաձայն խորհուրդ են տալիս Մէլադային ուսումը շարունակել ասպիրանտուրայում: Սակայն մինչ այդ՝ գործունեության սկզբնական փուլում, նա աշխատանքի է նշանակում Լուսաւանի (Չարենցաւան) Մեսրոպ Մաշտոցի անուան միջնակարգ դպրոցում՝ որպէս ֆրանսերէնի ուսուցչուհի:

1964-ին Մ. Աղաբէկեանն ընդունուել է ասպիրանտուրա ԳԱ Հ. Աճառեանի անուան լեզուի ինստիտուտում, որն արդէն երկու տարի ղեկավարում էր ականաւոր լեզուաբան Գեորգ Զահուկեանը: Վերջինիս գործուն ջանքերով հայրենի լեզուաբանութեան մէջ նոր ուղղութիւններ ու մէթոդներ էին նախանշում: Հէնց այստեղ էլ կանխորոշուեց երիտասարդ Մէլադայի գիտական ապագան: Նա սկսում է խորամուխ լինել համեմատական լեզուաբանութեան մէջ, ուսումնասիրում մի շարք հնդեւրոպական լեզուներ եւ փայլուն յանձնելով ասպիրանտական քննութիւններն ու ստուգարքները՝ աշխատանքի անցնում նորաստեղծ Ընդհանուր եւ համեմատական լեզուաբանութեան բաժնում՝ որպէս կրտսեր գիտաշխատող:

Պրոֆ. Վ.Գ. Համբարձումեանի խօսքերով՝ «ինստիտուտի գիտական մթնոլորտում անսահման ստեղծագործական եւ մեղուաջան էին այն տարիները», երբ 70-ականների կէսերին հայերէնագիտութեան ասպարէզ ոտք դրած նոր սերունդը իր գիտական հետաքրքրութիւնների շրջանակում ներառեց հայ-իտալեան, հայ-կելտական, հայ-հնդկական, հայ-յունական, հայ-սլաւոնական բառային զուգաբանութիւնների, նաեւ հայերէնի հնագոյն բարբառային հետքերի, հայերէնի արմատի կազմում աճականի, մարմնի անուանումների բնիկ շերտի հարցերը [Աղաբէկյան 2017, 6]:

Երիտասարդ Մէլադա Աղաբէկեանն իր ուսումնասիրութեան տակ է առնում հնդեւրոպական լեզուների արեալային խնդիրները եւ թեկնածուական ատենախօսութիւն պաշտպանում «Հայ-իտալեան բառային զուգաբանութիւններ» թեմայով (1973 թ.): Յետագայում Լեզուի ինստիտուտի կողմից լոյս ընծայուող «Հայոց լեզուի համեմատական քերականութեան հարցեր» ժողովածուի 1-ին պրակում Մ. Աղաբէկեանը հրատարակում է իր ատենախօսութեան ամփոփ տարբերակը [Աղաբէկյան 1979ա]: Պատմահամեմատական լեզուաբանութեան ոլորտում գրուած իր առաջին հրապարակումներից է նաեւ «Տարածքային բառազուգաբանութիւնների սահմանման սկզբունքները» յօդուածը [Աղաբէկյան 1971]:

Աւելի ուշ Մ. Աղաբէկեանն անդրադառնում է նաեւ հայոց լեզուի համեմատական հնչիւնաբանութեան հարցերին [Աղաբէկյան 1998]: Այստեղ նա քննում է հնդեւրոպական ձայնորդ հնչիւնների դիրքային տարբերակների

արտացոլումը, նախապատմական շրջանի բառային շեշտի բնոյթն ու գործառնությունները: Ընդհանրապես, պատմական հնչյունաբանութեանն ու շեշտին վերաբերող տարատեսակ խնդիրները մշտապես եղել են Մ. Աղաբէկեանի գիտական հետաքրքրութիւնների ծիրում [հմտ. Աղաբէկեան 1981ա, 1981բ, 1984, 1987, եւն]: Սա պայմանաւորուած է նրանով, որ Մ. Աղաբէկեանը սկզբնական շրջանում աշխատել է Լեզուի ինստիտուտի Ընդհանուր եւ համեմատական լեզուաբանութեան, իսկ այնուհետեւ՝ Կիրառական հնչյունաբանութեան բաժիններում: Հաստիքների կրճատման արդիւնքում, սակայն, նշուած երկու բաժինները փակուեցին, եւ կեանքի վերջին տարիներին Մէլադան աշխատում էր Բարբառագիտութեան բաժնում: Այստեղ նա գործուն մասնակցութիւն է բերել հայոց բարբառային հնչագրութեանը վերաբերող գրատեսակների մշակմանը [տե՛ս Աղաբէկեան, Հանեյան, Ուռուտյան 2010]:

Մ. Աղաբէկեանը գիտական յօդուածներ է հրատարակել զանազան գիտական հանդէսներում, Լեզուի ինստիտուտի պատրաստած ժողովածուներում, Հայաստանում եւ արտերկրում տեղի ունեցած գիտաժողովների նիւթերում: Երեք ծաւալուն աշխատանքներ էլ գրեթէ մենագրութեան արժէք են ներկայացնում. առաջին երկուսը՝ վերը յիշատակուած «Հայ-իտալեան բառային զուգաբանութիւններ»-ը [Աղաբէկեան 1979ա] եւ «Հայերէնի համեմատական հնչյունաբանութեան հարցեր»-ը [Աղաբէկեան 1998], իսկ երրորդը՝ «Սիւնիք-Արցախի տարածքի բարբառները» [Աղաբէկեան 2010բ]:

Պատահական չէ, որ Մ. Աղաբէկեանի վերջին՝ յետմահու հրատարակուած ժողովածուն վերնագրուած է «Հայերէնի համեմատական ուսումնասիրութեան հարցեր» [Աղաբէկեան 2017]. այն մէկտեղում է տարբեր պարբերականների եւ ժողովածուների էջերում լոյս տեսած նրա 13 յօդուածները, որոնք ունեն թէմատիկ լայն ընդգրկում՝ սկսած հնդեւրոպաբանական-համեմատական ուսումնասիրութիւններից, վերջացրած բարբառագիտական-ստուգաբանական հետազոտութիւններով: Այս փաստը պայմանաւորուած է Մ. Աղաբէկեանի գիտական հետաքրքրութիւնների շրջանակով, նրա գիտելիքների համապարփակութեամբ:

Յաւօք, հեղինակը չհասցրեց իր կեանքի օրօք մէկ ամբողջական հատորում համակարգուած ձեւով ամփոփել իր բազում տարիների աշխատանքները: Նոր լոյս տեսած ժողովածուն [Աղաբէկեան 2017] ոչ միայն տուրք է տաղանդաւոր գիտնականի յիշատակին, այլեւ կոչուած է լրացնելու նշուած բացը: Անկասկած, ժողովածուի յօդուածներում ներկայացուած մեծածաւալ լեզուաբանական նիւթը, հեղինակի նոր ու ինքնատիպ վերլուծութիւնները զգալիօրէն նպաստել են եւ կնպաստեն հայագիտութեան առանձին ճիւղերի

զարգացմանը: Մ. Աղաբեկեանի վերոնշեալ յօդուածները եւ դրանցում արծարծուած տեսակէտները կարելոր հանգրուաններ են հայ լեզուաբանական գիտութեան յետագայ զարգացման համար, ուստի սոյն ժողովածուի հրատարակումը խիստ կարելոր է նոր սերնդի լեզուաբանների եւ հայագէտների համար: Աւելին, գիրքը կարող է օգտակար լինել ընդհանրապէս հայերէնի պատմութեան հարցերով հետաքրքրուողներին:

Խնդրոյ առարկայ ժողովածուում ընդգրկուած 13 յօդուածները բաշխուած են երեք բաժիններում, որոնք պայմանականօրէն կոչուած են՝ I. Ծագունային-վերականգնողական համեմատաբանութիւն (չորս յօդուած), II. Տարածական-ժամանակային համեմատաբանութիւն (չորս յօդուած) եւ III. Ստուգաբանութիւններ (հինգ յօդուած):

Առհասարակ, Մ. Աղաբեկեանի՝ պատմահամեմատական հնչիւնաբանութեան խնդիրներն արծարծող հրապարակումներից են, ըստ ժամանակագրական հերթականութեան՝ «Հնդեւրոպական *x բաղաձայնը հայերէնում», «Հնդեւրոպական ձայնաւոր եւ ձայնորդ *x-ն հայերէնում», «Հնդեւրոպական *l-ի արտացոլումը հայերէնում», «Հայերէնում *bh, *b, *p > ւ (վ, ու) հնչիւնափոխութիւնը եւ նրա ժամանակագրութիւնը», «Հայերէնի գլոտալացած բաղաձայնների խնդիրը», «Հայերէնի եւ հնդեւրոպական նախալեզուի կոկորդային հնչիւնների աղերսի հարցը» [Աղաբեկեան 1981ա, 1981բ, 1987, 2002, 2007, 2009]:

Նշուած յօդուածները բոլորն էլ, բացի վերջին երկուսից, ընդգրկուած են յիշեալ ժողովածուում: Առաջին երեք յօդուածները զետեղուած են I. Ծագունային վերականգնողական բաժնում, որտեղ մտցուած է նաեւ «Հնդեւրոպական բուսանունները հայերէնում» արժէքաւոր յօդուածը [Աղաբեկեան 1979բ]: Ինչ վերաբերում է պայթականների հնչիւնափոխութեան մասին վերոնշեալ յօդուածին [Աղաբեկեան 2002], ապա այն զետեղուած է II բաժնում: Այստեղ, իբրեւ «Տարածական-ժամանակային համեմատաբանութեան» ակնարկներ, զետեղուած է նաեւ վերը յիշատակուած՝ «Տարածքային բառազուգաբանութիւնների սահմանման սկզբունքները» յօդուածը [Աղաբեկեան 1971], ինչպէս եւ «Շեշտը եւ նրա հետ կապուած հնչիւնական փոփոխութիւնները նախապատմական շրջանի հայերէնում» [Աղաբեկեան 1984], «Դիտարկումներ հայերէնի հնագոյն փոխառութիւնների վերաբերեալ» [Աղաբեկեան 2008] յօդուածները:

Պատմահամեմատական լեզուաբանական խնդիրների հետ մէկտեղ, Մ. Աղաբեկեանը զբաղուել է նաեւ բարբառագիտական հարցերով: Ինչպէս արդէն նշեցինք, նրա գրչին է պատկանում «Սինիք-Արցախ տարածքի բար-

բառների պատմական հնչյունաբանություն» ուսումնասիրությունը [Աղաբեկյան 2010բ]: Հեղինակել է նաև մի շարք յօդուածներ եւ զեկուցումներ բարբառագիտութեան բնագաւառում, ինչպէս՝ «Ղարաբաղի բարբառի հնչութային համակարգի զարգացումը» [Աղաբեկյան 2001], «Հայոց լեզուի բարբառային ձեռագիր նիւթերի համակարգչային մշակման խնդիրները» [Աղաբեկյան 2013], եւն:

Նշուած թեմաներից զատ, Մ. Աղաբեկեանն ունի նաեւ բառապաշարի քննական եւ ստուգաբանական հետազօտութիւններ, ինչպէս, օրինակ, արդէն յիշատակուած «Հնդեւրոպական բուսանունները հայերէնում» եւ «Դիտարկումներ հայերէնի հնագոյն փոխառութիւնների վերաբերեալ» յօդուածները [Աղաբեկյան 1979բ; 2008]: Այս բնոյթի գիտական հրապարակումներին պէտք է միացնել նաեւ «Ստուգաբանական դիտողութիւններ»-ը առանձին բառերի, ինչպէս նաեւ որոշ տեղանունների վերաբերեալ՝ զորօրինակ Աղուանք (Ալբանիա, Առան) երկրամասի անուան ծագման մասին [Աղաբեկյան 1990; 1996]: Վերջիններս (4 յօդուած) ընդգրկուած են խնդրոյ առարկայ ժողովածուի III բաժնում, որը վերնագրուած է «Ստուգաբանութիւններ» (այստեղ, սակայն, ընդգրկուած չէ Քարահունջի ստուգաբանութեանը վերաբերող յօդուածը [տե՛ս Աղաբեկյան 2011բ]):

Որպէս լեզուաբան եւ համեմատաբան՝ Մ. Աղաբեկեանը քանիցս անդրադարձել է նաեւ Վանի թագաւորութեան սեպագիր արձանագրութիւնների լեզուին («Հայ-ուրարտական հնչյունական համապատասխանութիւններ» [Աղաբեկյան 2006], «Հայ-ուրարտական ստուգաբանական դիտարկումներ» [Աղաբեկյան 2012], «Հայերէնի բարբառային համապատասխանութիւններ ուրարտերէնում» [Աղաբեկյան 2014]), որը պայմանականօրէն կոչում ենք «ուրարտերէն»: Մասնաւորապէս, նա այս հարցը փորձել է քննել հայերէնի հնչյունական համակարգի պատմական զարգացման համատեքստում՝ ջանալով վերականգնել միջանկեալ ձեւերը եւ դրանք նոյնականացնել «ուրարտական» տեքստերում վկայուած բառերում առկայ հնչյունաբանական յատկանիշներին: Նշուած երեք յօդուածներից խնդրոյ առարկայ ժողովածուում ընդգրկուած է միայն երկրորդը՝ բնականաբար «Ստուգաբանություններ» բաժնում:

Մ. Աղաբեկեանը գրասենեակային գիտնական չէր, նա իր բարբառագիտական ուսումնասիրութիւնների նիւթը քաղում էր կենդանի շփումներից՝ այցելելով զանազան հեռաւոր շրջաններ ու գիւղեր, զրուցելով ու աշխատելով բարբառակիրների հետ: 2003-ին Մէլադան մեծ ներդրում ունեցաւ Սիւնիքի մարզի Կապանի շրջանում ձեռնարկուած բարբառագիտական միջազգային

գիտարշալին, որի կազմակերպիչը Փարիզի Արեւելեան լեզուների եւ քաղաքակրթությունների ազգային ինստիտուտի Հայագիտության բաժինն էր (ղեկավար՝ պրոֆ. Անահիտ Տոնապետեան, անդամներ՝ Մէլադա Աղաբէկեան, Վարդուշկա Սամուէլեան, Տորք Դալալեան, Սվետլանա Մանուչարեան): Վայրի ընտրութիւնը պատահական չէր, քանի որ այս տարածաշրջանի բարբառային իւրայատկութիւնները մինչ այդ բնաւ չէին դարձել գիտական հետազոտութեան առարկայ: Բարբառագիտական խորը իմացութիւնն ու հոտառութիւնը, իրավիճակներին յարմարողականութիւնը եւ իր հարցարանի հմուտ կիրարկումը Մ. Աղաբէկեանին եւ մեր ամբողջ անձնակազմին օգնում էր գիւղից գիւղ գրանցելու ամենաաննշան առանձնայատկութիւններն անգամ՝ թէ՛ շարահիւսական եւ թէ՛ ձեւաբանական-բառագիտական ոլորտներում:

Մէլադա Աղաբէկեանը սիրում էր աշխատել երիտասարդների հետ, փոխանցել իր գիտելիքները: Նա երկար տարիներ դասաւանդում էր Գորիսի պետական համալսարանում: Բարբառագիտութեամբ եւ լեզուաբանութեամբ տարուած ուսանողներին ամէն կերպ քաջալերում էր, ոգեւորում, որպէսզի նրանք շարունակեն իրենց պրպտումները, փորձում էր փոխանցել իր իմացութիւններն ու հմտութիւնները: Վստահ ենք, որ Մէլադայի փորձն ու յիշատակը կենդանի կմնան ոչ միայն իր գիտական աշխատանքներում, այլեւ իր ուսանողների մէջ:

ՏՕՆԱՊԵՏԵԱՆ Ա.Ա. (Ֆրանսիա, Փարիզ)

ՍԱՄՈՒԷԼԵԱՆ Վ.Կ. (Ֆրանսիա, Փարիզ)

ԴԱԼԱԼԵԱՆ Տ.Ս (<<, Երևան)

ՄԷԼԱԴԱ ԱՂԱԲԵԿԷԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

Աղաբէկյան Մ.Ա. 1971, Տարածքային բառագուգաբանությունների սահմանման սկզբունքները, ԼՀԳ, 1971, № 12 (348), էջ 70-79:

Աղաբէկյան Մ.Ա. 1979ա, Հայ-իտալյան բառային զուգաբանություններ. հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր, ՀՍՍՀ ԳԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ (պատասխանատու խմբագիր՝ ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Է.Բ. Աղայան), պրակ 1, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 23-127:

Աղաբէկյան Մ.Ա. 1979բ, Հնդեվրոպական բուսանունները հայերենում. հանրալեզվաբանական, հոգելեզվաբանական եւ համեմատալեզվաբանական ուսումնասիրություններ. Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 60-ամյակին նվիրված գիտական կոնֆերանսի նյութերի ժողովածու (խմբագիր՝ Է. Բ. Աղայան), Երեւանի պետական համալսարան, Ե., ԵՊՀ հրատ., էջ 77-87:

- Աղաբեկյան Մ.Ա.** 1981ա, Հնդեվրոպական *x բաղաձայնը հայերենում, ՊԲՀ, 1981, № 4 (95), էջ 95-108:
- Աղաբեկյան Մ.Ա.** 1981բ, Հնդեվրոպական ձայնավոր եւ ձայնորդ *u-ն հայերենում, ԼՀԳ, 1981, № 8 (464), էջ 56-63:
- Աղաբեկյան Մ.Ա.** 1984, Շեշտը եւ նրա հետ կապված հնչյունական փոփոխությունները նախապատմական շրջանի հայերենում, Այբ բեն. Միջազգային հայերենագիտական գիտաժողով (Ե., 21-25 սեպտեմբերի, 1982 թ.). զեկուցումներ, ՀՍՍՀ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1984, էջ 7-14:
- Աղաբեկյան Մ.Ա.** 1987, Հնդեվրոպական *l-ի արտացոլումը հայերենում, Հայերենագիտական միջազգային երկրորդ գիտաժողով (21-23 սեպտեմբերի, 1987 թ.). զեկուցումների դրույթներ, ՀՍՍՀ ԳԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Ե., էջ 8-9:
- Աղաբեկյան Մ.Ա.** 1990, Ստուգաբանական դիտողություններ Աղուանք տեղանվան վերաբերյալ, ՊԲՀ, 1990, № 1 (128), էջ 168-177:
- Աղաբեկյան Մ.Ա.** 1998, Հայերենի համեմատական հնչյունաբանության հարցեր, Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր, պրակ 2 (պատասխանատու խմբագիր՝ ակադեմիկոս Է.Բ. Աղայան), ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Ե., «Անանիա Շիրակացի», 1998, էջ 49-144:
- Աղաբեկյան Մ. Ա.** 2001, Ղարաբաղի բարբառի հնչույթային համակարգի զարգացումը (թեզիսներ), Հայ բարբառագիտության միջազգային համագումար, Հայ բարբառագիտության ամառնային դասընթաց, Ստեփանակերտ, օգոստոս 11-12, 2001, Թեզիսներ, էջ 2:
- Աղաբեկյան Մ.Ա.** 2002, Հայերենում *b, *b, *p > ւ (վ, ու) հնչյունափոխությունը եւ նրա ժամանակագրությունը, Հայագիտության եւ զուգադրական լեզվաբանության հարցեր, պրակ 2 (նվիրվում է ֆրանսիացի ականավոր լեզվաբան, հայագետ, հայ ժողովրդի մեծ բարեկամ Անտուան Մեյեի ծննդյան 135-ամյակին), Երեւանի Վ. Յա. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան, Ե., «Լինգվա», 2002, էջ 95-100:
- Աղաբեկյան Մ.Ա.** 2006, Հայ-ուրարտական հնչյունական համապատասխանություններ, Զահուկյանական ընթերցումներ. Ակադեմիկոս Գետրգ Զահուկյանի հիշատակին նվիրված գիտական նստաշրջանի զեկուցումներ (Երեւան, 2006 թ., հունիսի 3-4), ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Ե., «Վան Արյան», 2006, էջ 15-22:
- Աղաբեկյան Մ.Ա.** 2007, Հայերենի գլոտալացած բաղաձայնների խնդիրը, Զահուկյանական ընթերցումներ-2007. հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ (Երեւան, ապրիլի 3-4, 2007 թ.), ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Ե., «Վան Արյան», Ե., 2007, էջ 7-13:
- Աղաբեկյան Մ.Ա.** 2008, Դիտարկումներ հայերենի հնագույն փոխառությունների վերաբերյալ, Հայոց լեզվի պատմության հարցեր. միջազգային հայերենագիտական 8-րդ գիտաժողովի զեկուցումներ (15-18 օգոստոսի, 2008 թ.), ԼՂՀ Կրթու-

թյան եւ գիտության նախարարություն, Արցախի պետական համալսարան, բանասիրական ֆակուլտետ, Ստեփանակերտ, «Դիզակ պլյուս», 2008, էջ 76-79:

Աղաբեկյան Մ.Ա. 2009, Հայերենի եւ հնդեվրոպական նախալեզվի կոկորդային հնչյունների աղերսի հարցը, Զահուկյանական ընթերցումներ-2009. Հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ (Երեւան, ապրիլի 28-29, 2009 թ.), ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Ե., «Նաիրի», 2009, էջ 5-13:

Աղաբեկյան Մ.Ա. 2010ա, Ակադեմիկոս Գետրգ Զահուկյանը՝ համեմատաբան, Զահուկյանական ընթերցումներ. Ակադեմիկոս Գետրգ Զահուկյանի 90-ամյակին նվիրված հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ (Երեւան, 2010 թ., մայիսի 6-7), ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Ե., «Էդիթ պրինտ», 2010, էջ 9-23:

Աղաբեկյան Մ.Ա. 2010բ, Սյունիք-Արցախ տարածքի բարբառների պատմական հնչյունաբանություն, Հայերենի բարբառագիտական ատլաս (ուսումնասիրություններ եւ նյութեր), պրակ 3, ՀՀ ԳԱԱ Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ (պատասխանատու խմբագիր՝ Բան. գիտ. թեկ. Անահիտ Գալստյան), Ե., «Նաիրի», 2010, էջ 54-165:

Աղաբեկյան Մ.Ա. 2011ա, Հ. Աճառյանի պատմահամեմատական հետազոտությունները, Զահուկյանական ընթերցումներ. Հ. Աճառյանի ծննդյան 135-ամյակին նվիրված հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ (Երեւան, 2011 թ., ապրիլի 27-29), ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Ե., «Էդիթ պրինտ», 2011, էջ 6-15:

Աղաբեկյան Մ.Ա. 2011բ, Քարահունջ. ստուգաբանական դիտարկումներ, Զահուկյանական ընթերցումներ. Հ. Աճառյանի ծննդյան 135-ամյակին նվիրված հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ (Երեւան, 2011 թ., ապրիլի 27-29), ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Ե., «Էդիթ պրինտ», 2011, էջ 47-52:

Աղաբեկյան Մ.Ա. 2012, Հայ-ուրարտական ստուգաբանական դիտարկումներ, Հայկազունիներ. առասպել և պատմություն, միջազգային գիտաժողովի զեկուցումների դրույթներ, Ե., 5-6, 06, 2012, էջ 85-86:

Աղաբեկյան Մ.Ա. 2013, Հայոց լեզվի բարբառային ձեռագիր նյութերի համակարգչային մշակման խնդիրները, Զահուկյանական ընթերցումներ. Հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ (Երեւան, 2013 թ., մայիսի 22-24), ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Ե., «Էդիթ պրինտ», 2013, էջ 153-157:

Աղաբեկյան Մ.Ա. 2014, Հայերենի բարբառային համապատասխանություններ ուրարտերենում, Հայ բարբառագիտության հիմնախնդիրներ. Միջազգային գիտաժողով, 8-9 հոկտեմբերի, 2014 թ. Զեկուցումների ժողովածու, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Ե., «Ասողիկ», 2014, էջ 16-23:

Աղաբեկյան Մ.Ա. 2017, Հայերենի համեմատական ուսումնասիրության հարցեր (հոգվածների ժողովածու), ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ

(պատասխանատու խմբագիր՝ Բ.Գ.Ռ. Վ.Գ. Համբարձումյան), Ե., «Ասողիկ», 2017:

Աղաբեկյան Մ.Ա., Հանեյան Ա., Ուռուտյան Ռ. 2010, Հայերենի հնչատարբերակների տառադարձման նոր համակարգը, Հայերենի բարբառագիտական ատլաս (ուսումնասիրություններ եւ նյութեր), պրակ 3, ՀՀ ԳԱԱ Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ (պատասխանատու խմբագիր՝ Բան. գիտ. թեկ. Անահիտ Գալստյան), Ե., «Նաիրի», 2010, էջ 5-22:

Aghabekyan M.A. 2001-2002, L'origine indo-européenne des consonnes occlusives de l'arménien // SLOVO édité par l'Institut National des Langues et Civilisations Orientales, vol. 26-27 Actes du Sixième Colloque international de Linguistique arménienne (ce numéro est coordonné par Anaïd Donabédian et Agnès Ouzounian), INALCO - Académie des Inscriptions et Belles-Lettres - 5-9 juillet 1999, Paris, 2001-2002, p. 37-42.

СБОРНИК “ВОСКЕПОРИК” КАРЕН МИКАЭЛЯНА (К 135-ЛЕТИЮ СО ДНЯ РОЖДЕНИЯ ЛИТЕРАТОРА)

Видный армянский литературно-общественный и культурный деятель, писатель Карен Сергеевич Микаэлян (1883-1941) – один из инициаторов создания и издания знаменитой брюсовской “Поэзии Армении” (1916) и “Антологии армянской поэзии”, готовившейся под редакцией Максима Горького в середине 30-х годов XX в. Однако немногим известно, что в этот же период Микаэлян работал над другим значительным и объемным трудом – сборником средневековой армянской поэзии «Ուլեփորիկ» (“Воскепорик” – букв.: рукописное избранное ценных материалов).

Титульный лист рукописи, хранящейся в фонде К. Микаэляна в ереванском Музее литературы и искусства им. Е. Чаренца (МЛИ, N 154), снабжен эпиграфом из Фрика – «Հին ըզժաղիկ եմ ժողովել, քիւն զմարգարիտ սիւշծառ շարիծ» (букв.: “Собрал я цветы, как блестящих жемчужин ряд”; шире – Цветник поэтических жемчужин) – и чуть ниже надпись: “Предисловие и примечания составил Карен Микаэлян. 1935”. Дата свидетельствует о том, что литератор работал над этой рукописью наряду с подготовкой материалов для русскоязычной антологии. Работа шла довольно успешно: готовый труд датирован 28 декабря 1936 г. В рукописи, вместившей около 600 страниц черновика, – сведения о поэтах эпохи, стихотворения вошедших в сборник всех известных поэтов средневековья – Фрика, Ерзынкаци, Тлкуранци, Григориса Ахтамарци, Наапета Кучака, Нагаша Овнатана, Багдасара Дпира и многих других. Эти имена, конечно, не новы – подавляющее их большинство было помещено в русских переводах (подстрочных) самого Микаэляна в готовившуюся на русском языке антологию. Далее идут разделы подробнейших примечаний и источников. Примечания Микаэляна дают краткое представление о конкретном поэте и его крупных произведениях. В списке источников Микаэлян указывает имена Гамар-Катипа, М. Миансаряна, Г. Срвандзтяна, А. Тевканца, К. Костяняна, М. Пототяна, А. Чопаняна, Г. Алишана, Г. Левоняна, Ст. Малхасяна, М. Абеяна, Н. Марра, В. Брюсова, а также авторитетные периодические издания – “Андес Амсореа” (Венеция), “Анаит” (Париж), “Арагат” (Вагаршапат), “Бюракн” (Константинополь), “Арег” (Вена). Труд предваряет обстоятельное предисловие “Средневековая армянская поэзия” с профессиональным анализом этого периода расцвета армянской

культуры (рукопись составляет более 200 страниц). В предварительном слове составитель сборника К. Микаэлян поясняет: “Настоящий сборник включает в себя те сочинения средневековых поэтов, которые вышли в свет отдельными книгами, в сборниках или в различных периодических изданиях. Из рукописных источников под рукой имел лишь недатированный ценный средневековый песенник Ерванда Шахазиза. Ниже отмечен источник, откуда взято каждое вошедшее в сборник сочинение. Поскольку нашей целью является развить вкус советского читателя, в книге о средневековой поэзии, носящей характер антологии, приведены те произведения, которые обладают художественной ценностью и в тематическом плане могут заинтересовать современного читателя”¹. Далее Микаэлян пишет, что если в стихотворениях им отмечались “нехудожественные добавления, которые могут быть нередко результатом неуместного усердия того или иного переписчика, как это явным образом видно в произведениях ряда авторов, или если выбираемое произведение загромождено излишествами и пошлыми отрывками, от изъятия которых ни-как не страдает его художественная целостность и ценность”, – такие приведены вкратце или в отрывках. Микаэлян сообщает, что об этих сокращениях в примечаниях есть соответствующие пометки. Составитель особо подчеркивает, что сочинение, взятое им из нескольких источников, прежде чем войти в сборник, подверглось тщательному сравнению и в случае наличия вариантов, предпочтение отдавалось тому тексту, который казался ему более доступным по смыслу и художественно ценным.

Таким образом, можно констатировать: Микаэлян был кровно заинтересован в представлении богатой армянской, в частности средневековой, поэзии не только русскому читателю, но и широким армянским массам, которые в те годы также испытывали потребность в более глубоком ознакомлении с собственной духовной культурой, в осознании ее богатства и величия – ведь в подавляющем большинстве армянская интеллигенция советской генерации была плоть от плоти вчерашних полуграмотных крестьян и рабочих, беженцев и сирот...

По поводу своей новой работы Микаэлян 26 марта 1935 г. пишет из Москвы Чопаняну: “Уважаемый друг А. Чопанян! Из газет, несомненно, знаете, что я готовлю большой сборник средневековых поэтов, который в этом

¹ Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), Կ. Միքայելյանի ֆ., N 154:

году должен издать наш Госиздат. Я просмотрел все изданные до сих пор сборники, все материалы, которые вышли в свет в “Арапате”, “Базмавепе”, “Анаит”, “Бюракне”, и несколько рукописей, и на их основе уже составил и завершил избранное. Сейчас пишу предисловие (3 печ. листа) и биографии поэтов. Бесспорно, среди всех литераторов самую большую и самую ценную работу проделали Вы, что самым ярким образом проявляется тогда, когда сравниваешь ее со всеми другими трудами. Сборник я составил таким образом, чтобы в него вошли только сочинения, имеющие художественную ценность”².

Далее в письме Микаэлян перечисляет имена хорошо известных средневековых поэтов, подразделяет произведения безымянных авторов по мотивам их творчества – гражданские, пандухтские, народные – и сообщает, что все это у него было под рукой, кроме сочинений Лункианоса и Еремия Кемурджяна, которых не удалось найти в Армении. Микаэлян напоминает, что и в брюсовской антологии эти два автора были помещены в переводе с французского издания Чопаняна. Московский литературовед просит своего парижского коллегу подобрать и выслать ему ряд имеющих художественную ценность стихов указанных двух поэтов и высказать свое мнение о правильности выбора тех или иных авторов, включенных им в сборник.

В письме московский литератор также делится с Чопаняном другими литературными делами и планами, в частности, напоминает о предстоящем в ближайшие годы 700-летию Фрика, которое, по его мнению, “надо бы отметить”. В заключение Микаэлян подчеркивает, что в Советской Армении “отмечается большой интерес к наследию нашего прошлого” и выражает удовлетворение по поводу того, что Чопанян составляет сборник Наапета Кучака, добавляя, что он разделяет мнение парижского литератора об армянском поэте средневековья.

2 апреля 1935 г. Чопанян пишет Микаэлян у пространный, насыщенный литературными размышлениями ответ, в котором выражает удовлетворение в связи с самой инициативой и “двойную радость” по поводу того, что издание, посвященное средневековой поэзии, попало в “хорошие руки”³. Чопанян живо интересуется, были ли под рукой Микаэляна изданные им несколько хорошо известных сборников армянской поэзии на

² Գրական ժառանգություն, հ. 13, Արշակ Հոսքանյան, Նամակներ, Ե., 1980, էջ 449:

³ Там же, с. 246.

французском и армянском языках. Затем сам подробно делится своими литературно-издательскими планами и делами, в частности, в связи с изданием Кучака и Фрика, сообщает также, где и у кого можно найти те или иные интересующие Микаэляна источники и материалы по теме намечаемого сборника. Интерес к начинаниям Микаэляна (изданию армянской поэзии на армянском и русском языках) у А. Чопаняна велик: он всячески старается помочь советскому литератору высылаемыми материалами, статьями, информацией и “наводками” на то или иное малодоступное или неизвестное Микаэлян у издание. Об этом свидетельствуют его последующие письма, в частности от 30 апреля 1935 г. и 4 марта 1936 г.⁴ Так, в первом из указанных писем он пишет: “...Очень рад был узнать, что местное издательство “Academia” решило издать объемистый сборник избранных страниц армянской древней и новой поэзии в русском переводе. Хорошо, что выбор поручили Вам, потому что Вы – хороший критик, имеете тонкий вкус”⁵. Чопанян завидует Микаэлян, что как в Армении, так и в Москве он может с легкостью подготовить и издать подобные труды, и сетует, что у него самого лежит почти готовый трехтомник армянской поэзии на французском, ряд других работ на армянском и французском, судьба издания которых “неопределенна”... Все вышеизложенное свидетельствует, что К. Микаэлян ревностно следил за всеми сдвигами и переменами в армянской литературной жизни и пропагандировал по мере сил и возможностей армянскую литературу и, прежде всего, поэзию в России – стране, сыгравшей неоспоримую роль в общественно-политическом и духовном расцвете, сближении с европейскими ценностями интеллектуальных слоев армянского народа. Микаэлян придавал исключительное значение мировой известности армянской литературы, считая своим скромным вкладом активную деятельность в создании и издании работ, фундаментальных для познания Армении и ее древней духовной культуры.

БАГДАСАРЯН Р.А.

Доктор филологических наук

⁴ Там же, с. 250-252, 260-262.

⁵ Там же, с. 251.

ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ԹԱՂՄԱՆ ԾԵՍԻՆ

2018 թ. մայիսի 21-24-ին կայացավ «Թաղման ծեսը հնագույն ժամանակներից մինչ մեր օրերը (Հայկական լեռնաշխարհի և Հարավային Կովկաս)» գիտաժողովը, որը կազմակերպել էր ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտը:

Մարդկային հասարակություններում մահացածի բաժանվելու գլխավոր գործողությունը, տվյալ դեպքում թաղումը, կարևոր իրադարձություն է եղել առնվազն հին քարեդարյան ժամանակներից: Թաղման կարևորությունը և դրա նկատմամբ յուրահատուկ վերաբերմունքը հասարակության մեջ ամրապնդվել է թաղման գործընթացի ծիսականացումով: Նախապատմական ժամանակներում թաղման ծեսի տարբեր կողմերի մասին նյութական վկայություններ են ընձեռում հատկապես դամբարանները: Վերջիններս թվագրվում են հիմնականում բրոնզի ու երկաթի դարաշրջաններով և մեր տարածաշրջանում ամենաշատ հանդիպող և պեղված հնագիտական օբյեկտներն են: Նախաքրիստոնեական, մասնավորապես՝ նախապատմական ժամանակների թաղման ծեսերի ուսումնասիրությանը իրենց դաշտային աշխատանքներով և հետագա հետազոտություններով մասնակցություն են ունենում գրեթե բոլոր հնագետները: Այդ առումով ինչ-որ չափով նման իրավիճակ է նաև միջնադարն ուսումնասիրող մասնագետների պարագայում, սակայն այս դեպքում էլ հետազոտություններն հիմնականում տարվում են տապանաքարերի վիմագրերի և պատկերագրության ուսումնասիրության ուղղությամբ: Իրավիճակը, սակայն, այլ է վերջին տասնամյակների և, մասնավորապես, մեր օրերի թաղման ծեսի ուսումնասիրության դեպքում. թաղման ծեսը թերևս կարելի է համարել մեր ժամանակների «փակ թեմաներից» մեկը: Այս գիտաժողովի նպատակն էր տարբեր ժամանակաշրջաններ, իրավիճակներ, առարկաներ և գործընթացներ ուսումնասիրող մասնագետների հնարավորություն տալ ներկայացնելու թաղման ծեսին առնչվող իրենց տեսություններն ու մտքերը, ոլորտն ուսումնասիրող գործընկերների հետ խոսել իրենց մտորումների մասին, քննարկումներ ծավալել առկա և նոր առաջադրվող տեսությունների շուրջ:

Գիտաժողովին մասնակցելու համար հիսունից ավել հայտեր էին ներկայացվել, որոնցից, սակայն, զեկուցվեցին 45-ը: Ներկայացված գրեթե բոլոր զեկուցումները հայաստանյան նյութերի հիման վրա էին: Գիտաժողովի նիստերը անցկացվեցին ԵՊՀ Հայ բանասիրության ֆակուլտետի (21-ը, 22-ը

և 24-ը մայիսի) և Հնագիտության և ազգագրության ինստիտուտի դահլիճներում (23-ը մայիսի):

Գիտաժողովում ներկայացված զեկուցումները խմբավորվել էին ըստ ժամանակագրության, հետազոտությունների ոլորտների և թեմատիկայի. «Ներածական-ճանաչողական», «Թաղման ծեսը նախաքրիստոնեական ժամանակներում», «Թաղման ծեսը քրիստոնեական ժամանակներում», «Թաղման ծեսը բանահյուսական և ազգագրական նյութերում», «Թաղման ծեսը մեր օրերում» և «Գերեզմանոցը մեր օրերում»: Գիտաժողովը նախագահում էր Լևոն Աբրահամյանը, պատասխանատու քարտուղարն էր Ռոման Հովսեփյանը, կազմակերպչական աշխատանքներին մասնակցեցին նաև Պավել Ավետիսյանը և Սմբատ Հակոբյանը:

Միջոցառման բացման արարողության ժամանակ Լևոն Աբրահամյանն իր ելույթում անդրադարձավ նաև գիտաժողովի մտահղացման նախապատմությանը, թեմայի արդիականությանը, ինչպես նաև գիտաժողովից ունեցած ակնկալիքներին: Բացման խոսքին հաջորդեցին ներածական-ճանաչողական զեկուցումներ: Սմբատ Հակոբյանը «Ի՞նչ է Death Studies-ը և ինչո՞ւ է այն մեզ հարկավոր» զեկուցման մեջ ներկայացրեց մահվան հետազոտությունների ոլորտի արդի վիճակը: Գրիգոր Արեշյանը «Թաղումային իրագործումների, առասպելաբանությունների և ինքնությունների փոփոխությունը Հայկական լեռնաշխարհում և Հարավային Կովկասում հազարամյակների ընթացքում. հետազոտությունների արդի վիճակը» խորագրով ելույթի ընթացքում անդրադարձավ տարածաշրջանում թաղման ծեսի, դրա գործառույթի և հանդերձյալ կյանքի մասին պատկերացումների փոփոխությանը:

Զեկուցումների մի մասը՝ 45-ից 19-ը հնագիտության ոլորտից էր և ներառվել էր «Թաղման ծեսը նախաքրիստոնեական ժամանակներում» նստաշրջանում, որը տևեց շուրջ երկու օր: Այստեղ անդրադարձ կատարվեց թաղման ծեսին և առնչվող ոլորտներին հին քարի դարից մինչև միջնադարյան ժամանակները, թեև զեկուցումների գերակշիռ մասը և առանցքային թեմատիկան նախապատմական շրջաններն էին: Նստաշրջանի գրեթե բոլոր զեկուցումները նվիրված էին Հայաստանի տարածքում պեղված դամբարանների և դրանցում հայտնաբերված նյութերի մշակութային համատեքստի վերծանությանն ու մեկնաբանությանը: Ելույթներով հանդես եկան Բորիս Գասպարյանը (համահեղինակներ՝ Ռոբերտո Դան, Պրիշիլա Վիտոլո, Արթուր Պետրոսյան)՝ «Հայաստանի թաղման լանդշաֆտը. ժայռային լանդշաֆտի հարմարեցումը և մոդելավորումը նեոլիթից մինչև միջնադար», Սուրեն Հոբոսյանը (համահեղինակներ՝ Գարիկ Փրվեյան, Լիլիթ Տեր-Մինասյան,

Անահիտ Խուդավերդյան, Անի Սարատիկյան)՝ «Փիջուտի վաղ-բրոնզեդարյան դամբարանը», Արսեն Բոբոխյանը՝ «Վիշապի թաղման ծեսը (ըստ Տիրինկատարի պեղումների արդյունքների)», Պավել Ավետիսյանը (համահեղինակ՝ Վարդուհի Մելիքյան)՝ «Յլի/կովի զոհաբերությունը թաղման ծեսում (ըստ թռեղք-վանաձորյան դամբարանային համալիրների նյութերի)», Նվարդ Տիրացյանը (համահեղինակ՝ Արամ Գևորգյան)՝ «Դիակիզման ծեսը Հայաստանի Հանրապետության տարածքում մ.թ.ա. II-I հազարամյակներում», Գարեգին Թումանյանը՝ «Թաղման ծեսը մեկնաբանելու հարցի շուրջ (ըստ Հայկական լեռնաշխարհի բրոնզ-երկաթեդարյան դամբարանների նյութերի)», Բենիկ Վարդանյանը (զեկուցումը կարդաց Նարեկ Հովհաննիսյանը)՝ «Անվավոր փոխադրամիջոցներն ու թրոնզեդարյան թաղման ծիսակարգում (մ.թ.ա. XVI-XIII դդ.)», Արտակ Գնունին (համահեղինակներ՝ Հայկ Ավետիսյան, Նատալյա Ավետիսյան, Լևոն Մկրտչյան, Արսեն Բոբոխյան)՝ «Շարժումը և դարձը թաղման ծեսում», Հասմիկ Սիմոնյանը (համահեղինակներ՝ Ռուզան Մկրտչյան և Աշոտ Փիլիպոսյան)՝ «Սևանի ավազանի խմբային թաղումների ֆենոմենը», Արտավազդ Զաքյանը (համահեղինակներ՝ Աշոտ Փիլիպոսյան, Հասմիկ Սիմոնյան, Մատեուշ Իսկրա)՝ «Մեծամորի վերաթաղումներ պարունակող դամբարանաբլուրները», Համազասպ Խաչատրյանը՝ «Սեռորոշիչ ցուցիչներ թաղման ծեսում» զեկուցումներով:

Նստաշրջանը շարունակվեց նաև գիտաժողովի երկրորդ օրը. ելույթ ունեցան Աշոտ Փիլիպոսյանը՝ «Մարդկանց շարային երթը որպես հնագույն ծեսի մշակված արար», Սիմոն Հմայակյանը՝ «Հավերժության տանող երկու ուղիների և ֆալլուսաձև կոթողների շուրջ», Ռոբերտո Դանը (համահեղինակներ՝ Արթուր Պետրոսյան, Պրիշիլա Վիտոլո, Բորիս Գասպարյան)՝ «Ձևափոխելով լեռները. Հայաստանում ուրարտական ժայռափոր ճարտարապետության զարգացումը հին և նոր բացահայտումների լույսի ներքո», Հակոբ Սիմոնյանը՝ «Թեյշեբահինի թաղման ծեսը», Արտավազդ Զաքյանը և Հասմիկ Սիմոնյանը (համահեղինակներ՝ Մատեուշ Իսկրա, Օտտո Բազգի, Մենուա Գևորգյան, Տատյանա Ադամովսկա, Էլիզաբեթ Բաստիան)՝ «Մեծամորի քաղաքային թաղամասի որոշ հատվածները՝ որպես թաղման տարածք հետուրարտական շրջանում», Հայկ Հակոբյանը՝ «Հողմիկի հարավային դամբարանադաշտի 2008, 2012 և 2015 թթ. ուսումնասիրության արդյունքները», Ռոման Հովսեփյանը՝ «Բույսերը Հայաստանի տարածքի նախաքրիստոնեական ժամանակների թաղումներում», Բորիս Գասպարյանը (համահեղինակներ՝ Սուրեն Հոբոսյան, Արսեն Բոբոխյան, Արթուր Պետրոսյան, Անահիտ Խուդավերդյան)՝ «Գինին թաղման ծեսում»:

«Թաղման ծեսը քրիստոնեական ժամանակներում» նստաշրջանի ընթացքում ներկայացվեցին հետևյալ գեկուցումները. Լևոն Աբրահամյան (համահեղինակ՝ Արա Դեմիրխանյան)՝ «Խաչքարը՝ որպես մահարձան. վերածնող բանաձևի խաչքարային տարբերակը», Դիանա Միրիջանյան (համահեղինակ՝ Արման Նալբանդյան)՝ «Լուսավորության միջոցները թաղման ծեսում», Համլետ Պետրոսյան՝ «Մասունքավորումը և դամբարան-մասունքարանները հայ վաղքրիստոնեական մշակույթում», Լիլիթ Սիմոնյան՝ «Մասունքների պաշտամունքը հայոց մեջ և երկրորդային թաղման ծեսը»:

«Թաղման ծեսը բանահյուսական և ազգագրական նյութերում» նստաշրջանում հանդես եկան Էսթեր Խեմչյանը՝ «Մահվան ու թաղման մոտիվները հայ բանահյուսության ալեքսանդրյան սյուժեներում», Էմմա Պետրոսյանը՝ «Ուրախ թաղում», Սիրանուշ Առաքելյանը՝ «Թաղումը և դրան առնչվող հավատալիքները հայ վիպական բանահյուսության մեջ», Հասմիկ Գալստյանը՝ «Հանգուցյալի փոխակերպումը չար ոգու. գոռնափշտիկ (ըստ հայ ժողովրդական սնահավատական գրույցների)», Նվարդ Վարդանյանը՝ «Մահվան առասպելաստեղծ պատկերավորումը հայ ժողովրդական ողբերգերում», Հասմիկ Հարությունյանը՝ «Ողբերգի արդի դրսևորումները Շիրակում», Հասմիկ Մատիկյանը՝ «Օրոր-ողբերգերը անգլիական և հայկական բանահյուսության մեջ», Հայկանուշ Մեսրոպյանը՝ ««Մահ» հասկացությանը վերաբերող բարբառային բառաշերտի ընդհանուր բնութագիրը», Արմեն Սարգսյանը՝ «Զավեշտի դրսևորման միջոցները թաղման կրոնական արարողակարգին առնչվող անեկդոտներում», Լուսինե Ղռեջյանը՝ «Թաղման ծիսակարգը Գավառի տարածաշրջանում և դրա արտացոլումը անեկդոտ-գվարճախոսություններում»:

Գիտաժողովի չորրորդ օրը նվիրված էր մեր ժամանակների թաղման ծեսերին և գերեզմանոցներին: «Թաղման ծեսը մեր օրերում» նստաշրջանին գեկուցումներով հանդես եկան Սմբատ Հակոբյանը՝ «Մի՛ նկարիր նրանց, նրանք արդեն մահացած են». ինչո՞ւ մենք այլևս չենք լուսանկարում թաղման ծեսերը», Սամվել Մկրտչյանը՝ «Նոր արարողություններ նախնիների հիշատակման ավանդույթների համատեքստում», Միհրան Գալստյանը՝ «Միգրանտների հուղարկավորումը Հայաստանում. սգից մինչև ինքնության կառուցակցում», Յուլյա Անտոնյանը՝ «Հայ նեո-հեթանոսների թաղման ծեսը արդի քաղաքական, սոցիալական և մշակութային հակասությունների համատեքստում», ինչպես նաև Սմբատ Հակոբյանն ու Համլետ Մելքումյանը՝ «Թաղման ծեսի փերֆորմանսը հայաստանյան սոցիալական շարժումների և ցույցերի ժամանակ»:

«Գերեզմանոցը մեր օրերում» նստաշրջանի ընթացքում ներկայացվեցին հետևյալ զեկուցումները. Ինգա Ավագյան՝ «Գյումրու «Հին գերեզմանոցը»՝ որպես մշակութային պահպանական միավոր», Յակոբ Չոլաքեան՝ «Գերեզմանատուներն ու տապանական արձանագրությունները Քեսապի շրջանին մէջ», Հարություն Մարության (կարդաց Նարինե Շամամյանը)՝ «Գերեզմանոցային մշակույթի դրսևորումները Հայոց հուշարձանային համալիրներում (20-րդ դարի վերջ – 21-րդ դարի սկիզբ)», Անի Հայկազուն Գրիգորյան՝ «Մեմորիալ հուշարձանների տեղադրման կարգն ու գեղարվեստական առանձնահատկությունները Հայաստանի Երրորդ հանրապետության ժամանակաշրջանում», Լիանա Բեգինյան՝ «Հարսանյաց տարրերը տապանաքարային պատկերավորումներում (նորովի մեկնաբանում ազգագրական նյութերի լույսի ներքո)»¹:

Գիտաժողովում ամփոփիչ ելույթներ ունեցան և քննարկումներով հանդես եկան Գայանե Շագոյանը, Սուրեն Հոբոսյանը, Բորիս Գասպարյանը, Հասմիկ Կնյազյանը, Սմբատ Հակոբյանը, Ռոման Հովսեփյանը և Լևոն Աբրահամյանը: Գիտաժողովն ավարտվեց թաղման ծեսին առնչվող՝ Լ. Աբրահամյանի հեղինակած երգիծանկարների ցուցադրությամբ:

ՀՈՎՍԵՓՅԱՆ Ռ.Ա.

Կենսաբանական գիտությունների թեկնածու

¹ Գիտաժողովում զեկուցման համար ներկայացվել էին նաև ութ այլ թեմաներ, որոնց հեղինակները ժամանակային պատճառներով չկարողացան ներկայացնել իրենց զեկուցումները: Դրանք հետևյալներն էին՝ **Պավել Ավետիսյան**, Թաղման ծեսը՝ որպես մշակութային տեքստ, **Լարիսա Եգանյան**, Զոհի գլխի թաղման ծեսի հնագիտական և ազգագրական համատեքստը, **Անժելա Երիցյան**, Հայկական վաղ միջնադարյան թաղման ծեսի ձևավորումը և կանոնական ծիսակարգի կիրառումը միջնադարում, **Լիլյա Ավանեսյան**, Գորգը Հայոց թաղման ծեսում, **Տորք Դալայան**, Հին Հայաստանի թաղման ծեսի վերաբերյալ աղբյուրագիտական ակնարկ, **Անի Հովնանյան**, Թաղման ծեսը արդի հայ արձակում, **Ռուզաննա Ծատուրյան**, Հոգեհաց. ժամանակակից կոմերցիոն առաջարկներ, **Սվետլանա Պողոսյան**, Սարգարապատի հերոսի շիրիմը հուշահամալիրում. պատերազմի պատմություն:

К 110-ЛЕТИЮ СО ДНЯ РОЖДЕНИЯ СВЕТИЛА ОТЕЧЕСТВЕННОЙ НАУКИ ВИКТОРА АМБАРЦУМЯНА



18 сентября 2018 г. исполнилось 110 лет со дня рождения выдающегося ученого XX века, всемирно известного астрофизика, академика АН СССР и НАН Республики Армения, президента (1947-1993 гг.) и почетного президента (1993-1996 гг.) НАН Армении, Национального героя Армении (1994 г.) Виктора Амазасповича Амбарцумяна (1908-1996 гг.)

Впервые предлагаемая вниманию читателей "Автобиография" В. Амбарцумяна была написана им 29 ноября 1943 г., после избрания его на Общем собрании АН Армянской ССР вице-президентом Академии наук Армении.

ГАРИБДЖАНЫН С.Г.

Кандидат исторических наук

Автобиография

Родился в 1908 г. в гор. Тбилиси. Отец занимался преподаванием и литературной работой. Окончил среднюю школу в гор. Тбилиси в 1924 г. В том же году поступил в физмат Ленинградского Университета, который окончил в 1928 г. по специальности астрономия. Будучи студентом напечатал свои первые научные работы. С 1928 по 1931 г. окончил в Пулковской обсерватории аспирантуру под руководством акад. Белопольского. С 1931 г.

по ноябрь 1943 г. работал в Ленинградском Госуниверситете, сперва доцентом, затем профессором и, наконец, зав. кафедрой астрофизики. Сохраняя эту должность, я выполнял с 1938 по 1941 г. обязанности директора Астрономической Обсерватории ЛГУ. С марта 1941 г. был назначен ректором ЛГУ по научной части. С июля 1941 г. был поставлен во главе филиала ЛГУ, эвакуированного в гор. Елабугу и состоящего из исследовательских лабораторий ЛГУ.

За работу по ЛГУ дважды получил благодарность народного комиссара. Во второй раз мне была объявлена благодарность за успешную организацию научной работы по оборонной тематике.

С 1934 г. – доктор наук, с 1939 г. – член корреспондент АН СССР, с 1943 г. – академик АН АрмССР.

Вступил в кандидаты ВКП(б) в 1939 г. В следующем – 1940 году был переведен в члены ВКП(б). В 1941 г. состоял до выезда из Ленинграда членом партийного комитета ЛГУ, а в 1943 г. – членом партбюро филиала ЛГУ.

Женат с 1931 г. Имею четырех детей.

За свою научную деятельность напечатал на русском и иностранных языках свыше шестидесяти научных трудов. Подавляющее большинство этих работ посвящено вопросам теоретической астрофизики и звездной статистики.

Работы мои по теории планетарных туманностей и по новым методам статистической механики звездных систем были продолжены рядом ученых у нас и за границей, а также моими учениками.

В военное время моими сотрудниками под моим руководством был выполнен в филиале Ленинградского Университета ряд исследований оборонного характера. Результаты некоторых из них внедрены в жизнь и применяются в практике оборонных организаций.

Репрессиям не подвергался.

Родственников за границей не имею.

9/XII 1943 г.

Академик В. Амбарцумян

Архив Национальной академии наук Республики Армения. Личное дело Виктора Амбарцумяна., л. 2-2 об. Автограф.

ՍԱՐԳԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ. ԱՐԴԻ ՀԱՅ ԲԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱՀԱՊԵՏԸ



Հայագիտության, մասնավորապես՝ հայ բանագիտության անդաստանում իր պատվավոր տեղն ունի Սարգիս Բարդուղիմեոսի Հարությունյանը: Նա ճանաչված հեղինակություն է թե՛ Հայաստանում, թե՛ արտերկրում: Իրավամբ վաստակելով հայ բանագիտության նահապետի պատվավոր տիտղոսը՝ Ս. Հարությունյանը հայ բանահյուսության շնորհալի կրողն ու վերապատմողն է: Ծնվել է 1928 թ. սեպտեմբերի

22-ին Ղուկասյանի (այժմ՝ Աշոցքի) շրջանի Ղազանչի գյուղում, ծագումով ալաշկերտցի և մշեցի ծնողների ընտանիքում: Իր ծննդավայրում նա մանուկ հասակից հաղորդակից է եղել ժողովրդական բառ ու բանին, հավատալիքներին ու վիպաշխարհին:

1947-ին Թիֆլիսում ավարտելով միջնակարգ դպրոցը՝ Ս. Հարությունյանը ընդունվում է ԵՊՀ Բանասիրական ֆակուլտետի արևելյան բաժինը, որտեղ ուսումնասիրում է պարսից լեզու և գրականություն: Ուսանողական տարիներից առնչվելով իրանական հարուստ մշակույթին՝ Ս. Հարությունյանը, որպես լայն պրոֆիլի հայագետ, քաջատեղյակ էր նաև հարևան ժողովուրդների հետ փոխառնչություններին ու պատմամշակութային կապերին: Համալսարանում նրան բախտ է վիճակվում ունկնդրելու Հրաչյա Աճառյանի, Գրիգոր Ղափանցյանի, Էդուարդ Աղայանի, Վարդան Մելիքյանի դասախոսությունները:

1952-ին Ս. Հարությունյանը ավարտաճառ է գրում «Պարսկերենի տարրերը Սայաթ-Նովայի հայերեն խաղերում» թեմայով, որի միայն հավելվածը կազմում էր 500 էջ: Հետագայում էլ գիտնականը հոդվածներ է նվիրում հայ-իրանական ու հայ-քրդական մշակութային-բանահյուսական աղբյուրներին:

1956-1959 թթ. Ս. Հարությունյանի գիտական գործունեությունն ընթացել է ՀԽՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում: 1960 թ. նա տեղափոխվել է նորաստեղծ Հնագիտության և ազգագրության ինստի-

տուտ, որտեղ աշխատում է և իր հարուստ գիտելիքները երիտասարդներին փոխանցում առ այսօր:

1959 թ. պաշտպանում է թեկնածուական ատենախոսություն՝ «Հայ ժողովրդական հանելուկներ» թեմայով: 1959-1960 թթ. կրտսեր գիտաշխատող էր Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում: 1960-1972 թթ. կրտսեր, այնուհետև ավագ գիտաշխատող էր Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Հայ ժողովրդական բանահյուսության բաժնում: 1971 թ. պաշտպանում է դոկտորական ատենախոսություն՝ «Մանուկ Աբեղյան. կյանքն ու գործը» թեմայով: 1992-2007 թթ. ինստիտուտի տնօրենի գիտական գծով տեղակալ էր, 2000 թ. ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ: Ներկայումս ղեկավարում է Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Բանահյուսության տեսության և պատմության բաժինը:

Ս. Հարությունյանն իր գիտական գործունեությունն սկսել է նշանավոր բանագետ Արամ Ղանալանյանի ղեկավարությամբ, սակայն նրա համար գիտական անառարկելի հեղինակություն և «հեռակա գիտական ուսուցիչ» էր նաև հայ մեծանուն բանասեր Մանուկ Աբեղյանը: Հետևելով վերջինիս գիտական ավանդներին՝ Սարգիս Հարությունյանը խորամուխ եղավ վիպական բանահյուսության, հատկապես հայոց ազգային հերոսավեպի, հմայական բանահյուսության տարբեր ժանրերի, առասպելաբանության, հայ հին գրականության, հայագիտության պատմության, արևելագիտության բնագավառների մեջ: Նրա բազմամյա հետազոտական աշխատանքը նշանավորվեց մի շարք կոթողային մենագրություններով, որոնք դեռ երկար տարիներ կլինեն յուրաքանչյուր բանագետի, լեզվաբանի, մշակութաբանի, լայն առումով՝ հայագետի սեղանի գրքերը (ինչպես, օրինակ՝ «Հայ ժողովրդական հանելուկներ» (1960, 1965), «Անեծքի և օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ» (1975), «Հայ հին վիպաշխարհը» (1987), «Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ» (2006) և այլն:

Հայոց հեթանոսական առասպելների և ժողովրդական հավատալիքների վերաբերյալ Ս. Հարությունյանի ուսումնասիրությունները, թեև ամփոփ, բայց խիստ տարողունակ և հարուստ շարադրանքով (ռուսերեն) տեղ գտան Մոսկվայում լույս տեսած «Мифы народов мира» երկհատոր հանրագիտարանում (1981, 1982), որը վերահրատարակվեց 1990-ին: Այս հոդվածաշարը հետագայում թարգմանվեց գերմաներեն ու հունգարերեն՝ հեղինակին բերելով համաշխարհային ճանաչում: Հայ առասպելների քննությանը նվիրված նրա հիմնարար աշխատությունը՝ «Հայ առասպելաբանություն» վերնագրով, արժանացավ Համազգային հայ կրթական և մշակութային միության մրցանակին

(1994) և նույն հաստատության միջոցով հրատարակվեց Բեյրութում՝ 2000 թ.: Հետագայում լույս տեսավ նաև «Հին հայոց հավատալիքները, պաշտամունքը, կրոնն ու դիցարանը» գրքույկը (2001):

Ս. Հարությունյանի բանագիտական գործունեության մյուս բնագավառը ներառում է հմայական բանահյուսության գրեթե բոլոր կարևոր ժանրերը՝ անեծքները, օրհնանքները, աղոթքները: Իր աշխատություններով նա հիմք է դրել հայ ժողովրդական հանելուկների և հայ հմայական բանահյուսության գիտական ուսումնասիրությանը:

Ս. Հարությունյանի բանագիտական գործունեության ամենաընդգրկուն և ծանրակշիռ ոլորտը, սակայն, հայ բանահյուսության վիպական ժանրերն են, հատկապես ազգային հերոսավեպը (էպոսը): Ըստ էության, նա զարգացրեց և նոր մակարդակի բարձրացրեց Գ. Սրվանձտյանցի, Մ. Աբեղյանի, Կ. Մելիք-Օհանջանյանի վիպագիտական տեսություններն ու գաղափարները: Անուրանալի է Ս. Հարությունյանի ներդրումը «Սասնա ծռեր» հերոսավեպի նոր պատումների հայտնաբերման, գրառման, հրատարակման ու հանրայնացման գործում: 1971-1973 թթ. նրա գլխավորած գիտական արշավախումբը ՀԽՍՀ 205 բնակավայրից գրառել է մեր օրերը հասած այս դիցավեպի 81 նոր պատումներ, որոնց մի մասը հրատարակվեց «Սասնա ծռերի» Գ (1979) և Դ (1999) հատորներով՝ Սարգիս Հարությունյանի և Արուսյակ Սահակյանի համատեղ աշխատակցությամբ: Ս. Հարությունյանի գործուն մասնակցությամբ են կյանքի կոչվել «Հայկական էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը» վերտառությամբ միջազգային շարունակական գիտաժողովները (2003-2017):

Գիտնականը հայ վիպական բանահյուսությունը դիտարկել ու լուսաբանել է հարևան ժողովուրդների (պարսիկների, քրդերի) հետ ունեցած փոխառնչությունների համապատկերում: Այս առումով հատկապես հիշատակության են արժանի «Սասնա ծռերի» արձագանքները «Շարաֆ նամեում» (1975, Հր. Բարթիկյանի հեղինակակցությամբ), «Իրանական հոգևոր մշակույթի արտացոլումները հայ հին ավանդության մեջ» (1994) հոդվածները: Ս. Հարությունյանը նաև հայ բանագիտության պատմությանն առհասարակ և մասնավորապես նրա երախտավորներին նվիրված բազմաթիվ աշխատանքների հեղինակ է:

Գիտական և գիտակազմակերպչական աշխատանքին զուգահեռ՝ Ս. Հարությունյանը նաև բազմափորձ ու խորագետ խմբագիր է, երկար տարիներ գլխավորել է «Պատմաբանասիրական հանդեսի» խմբագրական խոր-

հուրդը (2006-2018): Նրա խմբագրած մենագրությունների թիվն անցնում է քսանից:

Նշանավոր հայագետը նաև երկար տարիներ դասավանդել է պետական համալսարանում և Հայաստանի այլ բուհերում («Բանագիտություն», «Հայ բանահյուսություն», «Հայ հին գրականության պատմություն»), բազմիցս եղել է պետական քննական հանձնաժողովի նախագահ ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետում: Դասախոսական աշխատանքը թողնելուց հետո էլ նախանձախնդիր կերպով օգնում է երիտասարդ մասնագետներին: Նրա ղեկավարությամբ են պաշտպանել իրենց ատենախոսությունները գիտության շատ թեկնածուներ և դոկտորներ:

Սարգիս Հարությունյանը իր համեստ և ադինքնող բնավորության շնորհիվ վայելում է թե՛ տարեկիցների, թե՛ միջին ու երիտասարդ սերնդի սերն ու հարգանքը, սիրում է մարդկային ջերմ շփումները, օժտված է սեղանապետի բացառիկ տաղանդով: Նա իմաստուն խորհրդատու է, սրտացավ ավագ ընկեր:

Սիրելի Սարգիս Հարությունյանին մաղթում ենք առողջություն և արևշատություն, բազմաթիվ ուրախ պահեր հարազատների ու մտերիմների ջերմ շրջապատում:

ԴԱԼԱԼՅԱՆ Տ.Ս.

Բանասիրական գիտությունների թեկնածու

«Լրաբերի» անձնակազմը նույնպես շնորհավորում է մեծանուն գիտնականին, որի կյանքի ուղին վկայում է ինչպես նրա հայրենանվեր գործունեության, այնպես էլ զտարյուն մտավորական լինելու մասին, քանզի Սարգիս Հարությունյանին միշտ հուզել են ժողովրդի ճակատագիրն ու ապագան:

«Լրաբեր հասարակական գիտությունների» հանդես

ԱԿԱՆԱՎՈՐ ԳԻՏՆԱԿԱՆԸ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԸ (Յուրի Սուվարյանի ծննդյան 75-ամյակի առթիվ)



Լրացավ հայ նշանավոր գիտնական, Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանի 75 տարին:

Յու. Սուվարյանը քաջածանոթ անուն է Հայաստանի գիտական հասարակայնությանը, հատ-

կապես բուհական մտավորականությանը, ինչպես և ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի շրջանակներին: Հիրավի՝ զարմանալի, բովանդակալից և արգասաբեր կյանքով է ապրում ակադեմիկոս Յու. Սուվարյանը, կարողանում է համատեղել գիտական և մանկավարժական լարված աշխատանքը վարչականի հետ, բեղուն գրչով կյանքի է կոչում մեկը մյուսից խոր և արժեքավոր հետազոտություններ, նպաստում բազմաթիվ ասպիրանտների ու հայցորդների գիտական աճին, խորհրդատվություն իրականացնում ինչպես ՀՀ պետական զանազան մարմինների, այնպես էլ Հայաստանում գործող միջազգային կազմակերպությունների համար:

Յու. Սուվարյանը ծնվել է 1943 թ. ԼՂՀ Ասկերանի շրջանի Սղնախ գյուղում, 1965 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետը, ապա՝ ասպիրանտուրան: 1970 թ. պաշտպանել է թեկնածուական, իսկ 1983 թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1987-1994 թթ. պրոֆեսոր Սուվարյանը, որպես Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, ինչպես նաև տնտեսագիտական աստիճաններ շնորհող խորհրդի նախագահի տեղակալ, ապա՝ նախագահ, մեծապես նպաստել է բուհում գիտահետազոտական աշխատանքների արդյունավետ կազմակերպմանը: 2006 թ. դառնալով հարազատ բուհի ռեկտոր՝ Յու. Սուվարյանը մեծ եռանդով ձեռնամուխ եղավ կրթահամակարգի բովանդակային և կառուցվածքային արմատական վերափոխումների՝ համա-

հունչ միջազգային պահանջներին: Նրա ղեկավարության շրջանում Տնտեսագիտական համալսարանն անցավ հանրապետության օրինակելի բուհերի առաջին շարքը: 2006 թ. Յու. Սուվարյանն ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, 2010 թ.՝ իսկական անդամ, 2011 թ.՝ ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար: Բարեխղճորեն կատարելով իր պարտականություններն այդ պաշտոնում՝ նա որոշակի ավանդ է ներդրել «Հայագիտության զարգացման հայեցակարգի» և «2012-2025 թթ. հայագիտության զարգացման ռազմավարության» մշակման, Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող հիմնադրամի ստեղծման գործում:

Յու. Սուվարյան քաղաքացու կերպարը հասկանալու համար կարևոր է նշել նաև 1991-1992 թթ. նրա աշխատանքը՝ որպես ՀՀ վարչապետի խորհրդական (համատեղության կարգով): Երկրի տնտեսության համար օրհասական այդ պայմաններում առավելագույնս պիտանի եղան Յու. Սուվարյանի համակարգային մտածելակերպը, արագ կողմնորոշվելու և վճռելու փորձը, տնտեսական և սոցիալական հիմնախնդիրների ներքին կապն զգալու և դրանք համադրված լուծելու կարողությունը: 1994 թվականից Յու. Սուվարյանը ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչն է: Նրա ջանքերով ամբիոնը վերածվել է գիտամանկավարժական հզոր կենտրոնի: Պատկառելի է հենց իր՝ ակադեմիկոս Սուվարյանի գիտական հրատարակությունների ցանկը. շուրջ 270 աշխատություն, որոնցից 40-ը՝ մենագրություններ, դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ: Նրա գիտահետազոտական աշխատանքի կարևորագույն արդյունքներից են՝ արտադրության արդյունավետության և ամբողջական աշխատանքի արտադրողականության գնահատման ու կառավարման նոր մեթոդաբանության մշակումը, գիտության կառավարման կարևորագույն հիմնախնդիրների նոր լուծումների, հանրային կառավարման տեսության յուրօրինակ հայեցակարգի հիմնավորումը, ՀՀ վարչատարածքային նոր բաժանման և տեղական ինքնակառավարման երկաստիճան համակարգի մշակումը, հայ կառավարչական մտքի զարգացման ընթացքի և միտումների բնութագրությունը, հանրապետության տնտեսական զարգացման վրա կրթության և գիտության ներազդեցության գնահատումը, գիտակրթական համակարգի կառավարման նոր հայեցակարգի առաջադրումը:

Յու. Սուվարյանի ղեկավարությամբ ու խմբագրմամբ լույս է տեսել «Մենեջմենթ»՝ հայերեն բուհական առաջին դասագիրքը (1999, 2002, 2009, 2016), որը եղավ վերջին շրջանի հայ տեսական-մանկավարժական մտքի նվաճումներից մեկը: Բուհական ուսուցման համակարգի արդիականացման մեջ արոճեսոր Յու. Սուվարյանի և նրա համախոհների ծանրակշիռ ներդրումը եղան «Ձեռնարկության արդյունավետ կառավարում» և «Ծառայությունների ոլորտի արդյունավետ կառավարում» էլեկտրոնային համակարգչային գործարար խաղերի մշակումն ու ներդրումը:

Յու. Սուվարյանի գիտական ղեկավարությամբ մշակվել են մի շարք գործնական ուղղվածության, մասնավորապես՝ ԼՂՀ սոցիալ-տնտեսական զարգացման (1994 թ.), ՀՀ երկաթուղային տրանսպորտի բարեփոխումների (1998 թ.) ծրագրերը, որոնք ընդունվել են հանրապետության գործադիր իշխանությունների կողմից և իրագործվել: Դժվար է գերազնահատել Յու. Սուվարյանի դերը տնտեսագիտական բարձրորակ կադրերի, գիտական հերթափոխի պատրաստման ասպարեզում:

Անցած տարիներին նրա ղեկավարությամբ տնտեսագիտության թեկնածուի և դոկտորի աստիճան են ստացել բազմաթիվ ասպիրանտներ ու հայցորդներ: Ակադեմիկոս Յու. Սուվարյանի մասնագիտական բարձր կարողությունները, գիտամանկավարժական վաստակը գնահատվել են «Անանիա Շիրակացի» (2000), ԼՂՀ «Մայրական երախտագիտություն» (2007), «Վաչագան Բարեպաշտ» (2013), Միջազգային փիլիսոփայական ակադեմիայի «Դավիթ Անհաղթ» (2010), Հայրենիքին մատուցած ծառայությունների համար 1-ին աստիճանի (2011) մեդալներով և «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ (2017) աստիճանի շքանշանով: 2014-ին արժանացել է Հայաստանի Հանրապետության գիտության վաստակավոր գործչի կոչման: Նա «Հանրային կառավարում», «Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա», «Բանբեր հայագիտության» և այլ հայրենական ու միջազգային գիտական հանդեսների խմբագրական խորհուրդների անդամ է, ՀՊՏՀ գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի նախագահն է, Դոնի Ռոստովի պետական տնտեսագիտական, Արցախի պետական և այլ համալսարանների պատվավոր արոճեսոր:

Իր հարուստ փորձը Յու. Սուվարյանը տրամադրել է նաև Ռուս-հայկական (սլավոնական) համալսարանի և ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կառավարման ամբիոնների կայացմանը: Այժմ 75-ամյա մեր գործընկերը լի է եռանդով, նոր գաղափարներով ու ծրագրերով: Նրան

մաղթում ենք քաջառողջություն և ստեղծագործական նորանոր հաջողություններ:

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Ռ.Մ.

ՀՀ ԳԱԱ նախագահ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Վ.Լ.

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

«Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է վաստակաշատ ու անաչառ գիտնականին, հայրենանվեր քաղաքացուն՝ ակադեմիկոս Յու. Սուվարյանին՝ մաղթելով գիտական անթիվ հաջողություններ ի նպաստ հայ ժողովրդի:

«Լրաբեր հասարակական գիտությունների» հանդես

ԳԻՏՆԱԿԱՆԻ ՈՒՂԻՆ (Վահան Բայբուրդյանի ծննդյան 85-ամյակին)



Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, արտակարգ և լիազոր դեսպան, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Իրանի բաժնի վարիչ Վահան Բայբուրդյանի գիտահետազոտական գործունեությունը տասնամյակներ շարունակ գերազանց կերպով ներդաշնակել է հայագիտության, արևելագիտության և միջազգային հարաբերությունների բնագավառները: Վ. Բայբուրդյանը պատկանելի գիտական ժառանգություն է

թողել իրանագիտության, քրդագիտության, թուրքագիտության, իսլամագիտության, Հայկական հարցի դիվանագիտական պատմության, հայ գաղթօջախների պատմության ոլորտներում՝ այդպիսով ծանրակշիռ ներդրում ունենալով արևելագիտության և հայագիտության մի շարք ռազմավարական ուղղությունների ձևավորման ու զարգացման գործում, որոնց առնչվող մեծածավալ մենագրություններն ու հետազոտությունները հրատարակվել են տարբեր լեզուներով՝ գիտնականին բերելով նաև միջազգային ճանաչում: Մեծանուն, բազմաշնորհ գիտնականն ավելի քան կես դար շարունակվող արգասավոր գործունեության արդյունքներն ամփոփել է Հայաստանում և արտասահմանում հրատարակված 16 մեծածավալ մենագրություններում, ավելի քան 120 գիտական հոդվածներում և իր խմբագրությամբ լույս տեսած երկու տասնյակի հասնող գիտական աշխատություններում:

Միջազգային գիտական հանրության կողմից բարձր գնահատականի են արժանացել «Նոր Զուլայի հայ գաղթօջախը XVII դարում (Նոր Զուլայի դերը իրանա-եվրոպական քաղաքական և տնտեսական հարաբերություններում)» մենագրությունը (ռուսերեն), «Համաշխարհային առևտուրը և իրանահայությունը XVII դարում» ծավալուն ուսումնասիրությունը (պարսկերեն), «Միջազգային առևտուրը և հայ վաճառականները XVII դարում» բացառիկ աշխատությունը (անգլերեն): Գիտնականը պատկանելի թվով խորքային ուսումնասիրություններ է հրատարակել Իրանի և Օսմանյան կայսրության պատմութե-

յան տարբեր հիմնախնդիրների վերաբերյալ: Նա առաջինն էր, որ հայ արևելագիտության պատմության մեջ նախաձեռնեց Իրանի («Իրանի պատմություն. հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը», 2005 թ., 2006 թ.) և Օսմանյան կայսրության («Օսմանյան կայսրության պատմություն», 2011 թ.) ամբողջական պատմության շարադրանքը:

Վ. Բայբուրդյանի քրդագիտական հետազոտությունների բնագավառում առանձնանում են քուրդ ժողովրդի քաղաքական պատմության, հայ-քրդական հարաբերությունների պատմության վիճելի կամ առհասարակ չհետազոտված շատ հիմնախնդիրների ուսումնասիրությունները: Նրա բացառիկ աշխատություններից է «Քրդերը, Հայկական հարցը. հայ-քրդական հարաբերությունները պատմության լույսի ներքո» (2008 թ.) մենագրությունը, որը հիմնված է հսկայաձավալ փաստագրական նյութի վրա, թարգմանվել է նաև անգլերեն՝ արժանանալով միջազգային լայն արձագանքի ու պարգևների: Բեղմնավոր գրչի տեր գիտնականի տեսադաշտում մշտապես եղել են Հայկական հարցի, Հայոց ցեղասպանության հիմնախնդիրները, որոնց վերաբերյալ հետազոտությունները շարադրվել են հայրենասեր մտավորականին հարիր բարձր պատասխանատվությամբ:

Պրոֆեսորի անսպառ եռանդն ու աշխատասիրությունը դրսևորվել են նաև մանկավարժության և գիտակազմակերպչական գործունեության բնագավառներում: Նա զբաղեցրել է ակադեմիական ու բուհական բարձր պաշտոններ՝ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտնական քարտուղար, Աղբյուրագիտության պրոբլեմային խմբի ղեկավար, Իրանի բաժնի վարիչ, ԵՊՀ համաշխարհային պատմության ամբիոնի վարիչ, գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, ռեկտորի պաշտոնակատար, ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի վարիչ:

Գրեթե կես դար դասավանդելով տարբեր բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ մեծանուն գիտնականը մինչ օրս իր հարուստ գիտելիքներն անմնացորդ փոխանցում է ապագա մասնագետներին: Իր գիտական բեղուն գործունեության համար նա արժանացել է տարատեսակ շքանշանների և մրցանակների՝ Ֆրիտյոֆ Նանսենի հուշամեդալի, ԵՊՀ ոսկե մեդալի, Իրանի Իսլամական Հանրապետության «Հեղափոխության արշալույսը» ոսկե մեդալի, «ՀՀ դիվանագիտության ասպարեզում ունեցած ակնառու ձեռքբերումների համար» ՀՀ արտաքին գործերի նախարարություն հուշամեդալի, «Մանկավարժական համալսարան» մեդալի և այլն: Պրոֆեսորը շարունակում է գործուն մասնակցություն ունենալ հայագիտության, արևելագիտության բնագավառներում գիտական հրատարակությունների գործում,

կոլեկտիվ աշխատանքների համահեղինակ է, գիտական պարբերականների խմբագիր, մի շարք գիտական և խմբագրական խորհուրդների անդամ է և փայլուն գրախոս:

Որպես Մերձավոր և Միջին Արևելքի գերազանց գիտակ՝ Վահան Բայբուրդյանն իր տաղանդը դրսևորել է նաև դիվանագիտության ասպարեզում՝ Իրանի Իսլամական Հանրապետությունում դառնալով Հայաստանի Հանրապետության գործերի առաջին հավատարմատարը (1992-1994 թթ.), այնուհետև առաջին արտակարգ և լիազոր դեսպանը (1994-1998 թթ.): Հատկանշական է, որ իր դիվանագիտական առաքելությունն Իրանում Վ. Բայբուրդյանն իրականացրեց Հայաստանի համար ծանր ու դժվարին տարիներին՝ շրջափակման, տնտեսական ճգնաժամի պայմաններում, և Արցախյան ազատամարտի թեժ ժամանակահատվածում, երբ Իրանը Հայաստանի համար արտաքին աշխարհին կապող կարևորագույն և միակ երկիրն էր: Հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ՝ շնորհաշատ դիվանագետը, բարձր դասելով հայրենիքի պետական շահը մեծ նպաստ բերեց հայ-իրանական բազմուղի հարաբերությունների կայացմանն ու վերընթաց զարգացման գործին:

Վ. Բայբուրդյանին՝ լայն մտահորիզոնով, մտքի ճկունությամբ, արտասովոր աշխատասիրությամբ օժտված գիտնականին, բնորոշ են մարդկային ազնիվ նկարագիրը և հայրենասեր մտավորականի կերպարը:

Ծննդյան 85-ամյակի առթիվ սիրելի պրոֆեսորին, վաստակաշատ պատմաբանին մաղթում ենք արևշատություն, գիտական նորանոր ձեռքբերումներ ու նվաճումներ:

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ

Վահան Բայբուրդյանի՝ ապրելու և արարելու տաղանդը վառ արտացոլում է գրել նրա ողջ՝ ինչպես գիտական, այնպես էլ դիվանագիտական գործունեության մեջ: Շնորհավորում ենք մեր բազմամյա հեղինակին և մաղթում արևաշող լուսաբացներ, սեր ու ջերմություն:

«Լրաբեր հասարակական գիտությունների» հանդես

**ՀԱՅ ՆՇԱՆԱՎՈՐ ԱԶԳԱԳՐԱԳԵՏԸ. ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՍՏԵՓԱՆՅԱՆ**



Ազգագրագետ Արմենուհի Արմենակի Ստեփանյանը, 70-ամյակը չբոլորած, գնաց հավերժի ճամփով: Արմենուհին ծնվել է 1948 թ. նոյեմբերի 7-ին Երևանում, ծառայողի ընտանիքում: Մայրը շիրակցի էր, հայրը՝ Արևմտյան Հայաստանից. ցեղասպանության զոհ ընտանիքի զավակ էր: 1966 թ. ավարտել է Ն. Կրուպսկայայի անվան միջնակարգ դպրոցը, 1966-1971 թթ. սովորել ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի հայոց լեզու և գրականություն բաժնում: Ա. Ստեփանյանը ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ է ընդունվել 1972 թ. փետրվարից՝ որպես ազգագրության բաժնի

ավագ լաբորանտ: 1987 թ. ստացել է կրտսեր գիտաշխատողի կոչում:

Ինստիտուտում աշխատել է մինչև իր երկրային կյանքի ավարտը՝ 2018 թ. ապրիլի 27-ը՝ 46 տարի: Հիանալի տիրապետում էր հայերենին և ռուսերենին, գիտեր անգլերեն: Բազմահմուտ էր հայոց լեզվի բարբառներում և որ շրջանում էլ գիտական հետազոտություն իրականացնե՝ աշխատում էր խոսել բանասացի լեզվով՝ ձեռք բերելով վստահություն և ապահովելով անմիջական հաղորդակցում, արժանանալով գրուցակցի համակրանքին: Մասնակցել է բազմաթիվ ազգագրական արշավախմբերի աշխատանքների, հավաքել ուշագրավ և հանգամանալի նյութեր ուսումնասիրվող թեմաների վերաբերյալ:

Կրոնական փոքրամասնությունների հետ հետազոտություն իրականացնելիս գրանցում էր ազգագրական ուշագրավ նյութեր, որոնք ամփոփված են հաշվետվության մեջ¹:

1996 թ. պաշտպանել է թեկնածուական թեզ՝ «Հայ ժողովրդական տարազային զարդանախշերի խորհրդիմաստը»: 2004 թ. մրցույթով արժանացել

¹ Գույան Ա., Պողոսյան Ս., Ստեփանյան Ա., Կրոնական փոքրամասնությունները ՀՀ-ում, Ե., 2007, անտիպ:

է ավագ գիտաշխատողի պաշտոնի: 1997-ից Երևանի գեղարվեստի ակադեմիայի արվեստի պատմության և տեսության ամբիոնում դասավանդել է «Հայ ազգագրություն» և «Հագուստի պատմություն» առարկաները: 2012 թ. ստացել է դոցենտի գիտական կոչում՝ պատմագիտություն մասնագիտացմամբ:

Ա. Ստեփանյանն օժտված էր հարուստ գրական-մասնագիտական լեզվով, խոսքը հստակ էր և համոզիչ: Կատարում էր համեմատական մանրագնին և խոր վերլուծություններ: Հավատարիմ էր ազգագրագետի պատվիրաններին և սրբորեն պահպանում էր դրանք: Կուռք չէր դարձնում իր ժողովրդին, իր կրոնն ու մշակույթը: Երբեք չէր խեղում գիտությունը՝ փաստերը կեղծելով, մակերեսային, թույլ դիտարկումներով, վաղաժամ հետևություններով: Հարգալից էր երախտավորների, ուսուցիչների նկատմամբ: Այլեթնիկ ընդհանրությունների բնավորության, ծեսերի, սովորույթների, բարքերի մասին խոսում էր բացառապես հարգանքով: Եվս երկու գիտաշխատողի հետ ձեռնամուխ է եղել «Արդիականության ազգաբանություն» ներկա բաժնի ստեղծմանը:

Հեղինակ է երկու մենագրության, բազմաթիվ հոդվածների ու հրապարակումների: Կազմել է անվանի արվեստագետ-ազգագրագետ Սերիկ Դավթյանի կենսամատենագիտությունը²՝ ներկայացնելով նրա գիտական ժառանգությունը, մանկավարժական ու հասարակական գործունեությունը:

2007 թ. «Հայ ազգագրություն և բանահյուսություն» մատենաշարի 22-րդ հատորում լույս է տեսել Ա. Ստեփանյանի «Հայ ժողովրդական տարազի զարդանախշերը (ծիսական, գունային և նախշային համակարգեր)» աշխատությունը, որտեղ ուսումնասիրված են ժողովրդական տարազի զարդանախշման ծիսագործառնական նշանակությունը, տարազի զարդանախշերի գունային համակարգը, զարդանախշման ձևերը, միջոցները և նյութը³: Ա. Ստեփանյանի համակարգային հետազոտության է ենթարկել երկրաչափական, բուսական և կենդանական զարդանախշերը, ինչպես նաև կարևորվել է տարազային զարդանախշերի տեղայնացման և տարածվածության խնդրի լուծումը:

2010 թ. լույս տեսած «XX դարի հայրենադարձությունը հայոց ինքնության համակարգում» ուշագրավ մենագրության մեջ հեղինակը ներկայացրել է հայոց հայրենադարձության, ներգաղթի երևույթները, որոնք առաջին անգամ ուսումնասիրել է ազգաբանական տեսանկյունից: Հանգամանորեն քննել են ներգաղթի ընթացքը, փուլային առանձնահատկությունները, ներգաղթածների և տեղաբնակների լեզվական, կենցաղային փոխըմբռնումները և ընկա-

² Դավթյան Ա., Կենսամատենագիտություն (կազմող՝ Ա. Ստեփանյան), Ե., 1999:

³ Հայ ժողովրդական տարազի զարդանախշերը (ծիսային, գունային, նշանային համակարգեր), Հայ ազգագրություն և բանահյուսություն (ՀԱԲ), պ. 22, Ե., 2004:

լումները, առնչությունները, կենցաղային փոխներթափանցումները, նորեկների հարմարվողականության և ինտեգրման հիմնախնդիրները⁴, ազգաբանորեն դիտարկել է հագուստի և ուտեստի առանձնահատկությունները: Ներգաղթը դիտարկվել է ըստ փուլերի՝ 1919-1920-ական թթ., 1930-ական թթ., 1946-1948 թթ. և սփյուռքահայերի ներգաղթը՝ 1960-1970-ական թթ.: Հատուկ ուշադրություն է դարձվել նոր միջավայրում ներգաղթածների ինքնության և վարկանիշի փոփոխություններին: Ամփոփել է ներգաղթի դասերը, արժևորվել դրա դերն ու նշանակությունը:

Մեծ և գործուն մասնակցություն է ունեցել հայոց ոչ նյութական մշակութային ժառանգության դասակարգման և չափորոշիչների որոշարկման աշխատանքներին և հեղինակել է ժողովրդական տոներ և հավատալիքներ բաժինները: Ռուսալեզու «Հայեր» գրքում (2012 թ.) զարդանախշերին նվիրված մասի հեղինակը այս հարցի խորագիտակ Ա. Ստեփանյանն է: Շուրջ հինգ տարի կանոնավոր դաշտային ազգագրական նյութեր է գրառել և կատարել ազգագրական դիտարկումներ Արցախի Հանրապետության բազմաթիվ բնակավայրերում: Արցախում՝ «Այայի երկրում», իրեն հատուկ ջերմեռանդությամբ իրականացնում էր խորացված հարցազրույցներ և խմբային հարցումներ: Հայկական ազգային ատլասի երկրորդ հատորում ներկայացված են Ա. Ստեփանյանի (Ս. Պողոսյանի համահեղինակությամբ) կազմված «Հայոց ավանդական ուտեստները» (174-175) և «Ձարդարանք և զարդանախշ» պատկերազարդ քարտեզները (182-183):

Գիտական հետաքրքրությունների շրջանակը բավական լայն էր՝ հավատալիքներ, տոներ, զարդարվեստ, ներէթնիկ և կրոնական խմբերի ազգաբանական դիտարկում և ուսումնասիրում: Հեղինակ է շուրջ 50 հոդվածի, որոնք միշտ առանձնացել են հարցադրումների ինքնատիպությամբ, թարմությամբ և նյութի վերլուծությամբ: Ընդդիմախոսել է մի շարք ատենախոսական աշխատանքների՝ մշտապես հանդես գալով խոր վերլուծություններով և առաջարկներով, դիտարկումներով և դիտողություններով:

Վերջին տարիներին Ա. Ստեփանյանի գիտական հետազոտության առարկան Հայաստան տեղափոխված սիրիահայերն էին: Դիտարկելով նոր միջավայրին հարմարվելու գործընթացը՝ առանձնահատուկ քննության է ենթարկել նորեկների ինքնընկալման մեջ տեղի ունեցած փոփոխությունները և հայաստանաբնակների հետ փոխհարաբերությունների շարժընթացը: Զուգահեռ անցկացնելով XX դարի հայրենադարձության տարիների և ներկա օրերում իրա-

⁴ XX դարի հայրենադարձությունը հայոց ինքնության համակարգում, Ե., 2010:

կանացող սիրիահայերի տեղափոխության ընթացքում տեղի ունեցող գործընթացներին՝ նկատել է փոխադարձ հանդուրժողականություն և միմյանց ավելի լավ ճանաչելու և ինտեգրվելու ցանկություն: Ա. Ստեփանյանը կարևորում էր այն փաստը, որ յուրաքանչյուր հարց, մշակութային տարր և երևույթ մշտապես ու շարունակաբար փոփոխվող և զարգացող փուլում է, ուստի հետազոտական առումով անելիքները շատ են:

Վերջին երկու տարին գործուղման մեկնելու հնարավորություն չունենալը, որը մեծապես խանգարում էր թեմայի իրականացմանը և սահմանափակում հնարավորությունները, քանի որ յուրաքանչյուր ազգագրական ուսումնասիրության համար դաշտային հետազոտության միջոցով ձեռք բերված նյութերն անփոխարինելի են: Ա. Ստեփանյանի վերջին գեկուցումները եղել են 2017 թ. հոկտեմբերի 25-ին և 26-ին Երևանում կայացած «Քաղաքական բռնաճնշումները Հարավային Կովկասում խորհրդայնացումից մինչև 1950-ական թթ. (պատմություն, մշակույթ, հիշողություն)» գիտաժողովում՝ «Հայրենադարձությունը և ստալինյան բռնաճնշումները» խորագրով, և նոյեմբերի 27-ին և 28-ին իր սիրելի աշխատավայրում՝ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում, «Հայ ժողովրդական մշակույթ» 18-րդ հանրապետական գիտաժողովում՝ («Հյուսիս և ասեղնագործության ծիսական դերը հայոց ժողովրդական մշակույթում» վերնագրով):

Որպես մարդ՝ բարի էր, լուսավոր, բարյացակամ և նրբազգաց: Արմենուհի Ստեփանյան մարդու, գիտնականի, ընկերոջ, դասախոսի, ինքնատիպ անհատականության պակասը կզգան նրա հետ շփված գործընկերները, ուսանողները, բանասացները, ընթերցողներն ու ունկնդիրները:

ՊՈՂՈՍՅԱՆ Ս.Հ.

Պատմական գիտությունների թեկնածու

Հայերեն բաժնի խմբագիրներ՝ **Մելանիա Միքայելյան**
Սեդա Քուիեյան
Ռուսերեն բաժնի խմբագիր՝ **Գայանե Հարությունյան**

Редакторы армянского отдела – **Меланья Микаелян**
Седа Купелян
Редактор русского отдела – **Гаянэ Арутюнян**

Համակարգչային ձևավորումը և էջադրումը՝ **Արմինե Պետրոսյանի**
Компьютерный дизайн и пагинация – **Армине Петросян**

Հրատ. պատվեր N 893
Ստորագրված է տպագրության 10.X.2018 թ.:
Տպագրական 23.68 մամուլ: Տպաքանակը՝ 180:
ՀՀ ԳԱԱ տպարան, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:
Խմբագրության հասցեն՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24 գ:
Հեռ.՝ 581902:

Подписано к печати 20.X.2018 г.
23.68 печатных листов. Тираж – 180. Типография НАН РА,
Ереван, пр. Маршала Баграмяна 24.
Адрес редакции: 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24г
Тел. 581902

Հանդեսի պաշտոնական կայքէջը՝ <http://Iraber.sci.am>
Հանդեսի էլեկտրոնային հասցեն՝ Iraber@sci.am
Официальный сайт журнала: <http://Iraber.sci.am>
Электронная почта журнала: Iraber@sci.am